ԱՆՈՒՇ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան
դեղագործության կառավարման ամբիոն
դասախոս
anushikbarseghyan@gmail.com

ԼՈՒՍԻՆԵ ՆԱԶԱՐՅԱՆ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան
դեղագործության կառավարման ամբիոն
դասախոս
lusinazaryan@mail.ru

ՄԱՐԹԱ ՍԻՄՈՆՅԱՆ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան
դեղագործության կառավարման ամբիոն, դոցենտ
դեղագործական գիտությունների թեկնածու
marta.simonyan@gmail.com

Համառոտագիր

Տարատեսակ ցավերը մեղմելու համար սպառողները բավականին հաճախ են դիմում դեղատոն, իսկ ցավերի մեջ առավել մեծ տեղ են զբաղեցնում գլխացավերը: Դեղատան աշխատողները պետք է բավականաչափ պատրաստված լինեն, որպեսզի կարողանան կառավարել գլխացավերի ինքնաբուժումը. սպառողներին տրամադրել տեղեկատվություն ցավի վերաբերյալ, ճանաչել կարմիր դրոշները և ցուցաբերել օգնություն առանց դեղատոմսի տրվող (ԱԴՏ) դեղերով:

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել և գնահատել գլխացավի կառավարման գործընթացը դեղատան աշխատողների կողմից:

Նյութը և մեթոդները: Հետազոտությունը իրականացվել է ՀՀ-ի լիցենզավորված դեղատների 285 աշխատողների շրջանում, հարցաթերթիկների օգնությամբ, որոնց քանակը որոշվել է՝ ըստ «The Survey System Version 11.0»-ի: Հետազոտության տվյալները մուտքագրվել և վերլուծվել են՝ օգտագործելով SPSS ծրագրային փաթեթը:

Արդյունքները: Ըստ հետազոտության արդյունքների դեղատան աշխատողների ընդամենը 16%-ն է գլխացավի դեպքում խորհուրդ տալիս պացիենտին դիմել բժշկի, մնացած դեպքերն են՝ հողացավը (41%), մկանացավը (18%), ցանկացած տիպի ցավը (10%), ատամնացավը (8%), դաշտանային ցավը (5%), այլ տարբերակներ (2%): Գլխացավը դիֆերենցելու և կարմիր դրոշները հայտնաբերելու համար տրվող ստուգիչ հարցերը դասակարգվեցին հետևյալ ձևով՝ զարկերակային ճնշում (51%), ցավի հաճախություն (32%), ցավի ուժգնություն (13%), սեղմող ցավի առկայություն (4%): Դեղատան աշխատողները կարող են որոշ գլխացավերի դեպքում սպառողներին խորհուրդ տալ առանց դեղատոմսի դեղեր, այսպիսով՝ նրանց 67%-ը կարծում է, որ լարվածության գլխացավերի ժամանակ պետք է բաց թողնի ԱԴՏ ցավազրկողներ, 15%-ը՝ դեղորայքի հետևանքով առաջացած գլխացավերի, 14%-ը՝ միգրենի, և 4%-ը՝ տրավմաների արդյունքում առաջացած գլխացավերի դեպքում:

Քննարկում: Դեղագետները համարվում են առողջապահության ոլորտի առաջնագծում գտնվող մասնագետներ և պետք է կարողանան արդյունավետ կառավարել սպառողների ինքնաբուժումը, տարբերակել վտանգավոր ախտանիշները թեթև հիվանդություններից, դիֆերենցել անհապաղ

բուժօգնության դեպքերը: Գլխացավը, լինելով շատ հաճախ հանդիպող ցավ, կարիք ունի համուղղված ինքնաբուժման՝ դեղատան աշխատողի հսկողությամբ:

Եզրակացություններ: ՀՀ-ում դեղատան աշխատողները ունեն թերի գիտելիքներ և պատկերացումներ գլխացավի կառավարման վերաբերյալ: Դեղագետների շարունակական և բազիսային կրթության ծրագրերում անհրաժեշտ է ներառել գլխացավի կառավարման վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն, ինչպես նաև պետք է զարգացնել նրանց պրակտիկ հմտությունները:

Բանալի բառեր և բառակապակցություններ. գլխացավ, ինքնաբուժում, դեղատան աշխատող, դեղագործական հոգածություն, դեղ, կողմնակի ազդեցություն, կրթություն:

УПРАВЛЕНИЕ ГОЛОВНОЙ БОЛЬЮ В АПТЕКЕ

АНУШ БАРСЕГЯН

Ереванский государственный медицинский университет имени Мхитара Гераци
кафедра управления фармации
преподаватель
anushikbarseghyan@gmail.com

ЛУСИНЕ НАЗАРЯН

Ереванский государственный медицинский университет им. Мхитара Гераци
кафедра управления фармации
преподаватель
lusinazaryan@mail.ru

МАРТА СИМОНЯН

Ереванский государственный медицинский университет им. Мхитара
Гераци кафедра управления фармации
кандидат фармацевтических наук, доцент
marta.simonyan@gmail.com

Аннотация

Потребители довольно часто обращаются в аптеку за облегчением различных болей, а головная боль - самый распространенный вид боли. Персонал аптеки должен быть надлежащим образом обучен, чтобы уметь управлять самолечением от головной боли, предоставлять потребителям, информацию о боли, распознавать тревожные сигналы и оказывать помощь с лекарствами, отпускаемыми без рецепта.

Целью исследования является изучение и оценка процесса управления головной боли персоналом аптеки.

Материал и методы. Опрос проводился среди 285 работников лицензированных аптек Армении с помощью анкет, количество которых определялось согласно “Системе опроса, версия 11.0”. Данные опроса были введены и проанализированы с использованием программного пакета SPSS.

Результаты. По результатам исследования, только 16 % сотрудников аптеки советуют пациенту обратиться к врачу при головной боли, остальные случаи - при болях в суставах (41 %), мышечных болях (18 %), любых видах болей (10 %), зубной боли (8%), менструальных болях (5%), другие варианты (2%). Контрольные вопросы для дифференциации головной боли и красных флажков были классифицированы следующим образом: артериальное давление (51%), частота боли (32%), интенсивность боли (13%), наличие сдавливающей боли (4%). Фармацевты могут рекомендовать безрецептурные лекарства для определенных типов головной боли, поэтому 67% из них считают, что им следует отпустить безрецептурные обезболивающие при головной боли, 15% - от головных болей при злоупотреблении медикаментами и 14% - от врем мигрени и 4% - при головных болях, вызванных травмами.

Обсуждение. Фармацевты считаются специалистами передовой линии сектора здравоохранения должны уметь эффективно управлять самолечением потребителей, отличать опасные симптомы от легких заболеваний, решать, требуется ли немедленная медицинская помощь или можно ли лечить пациентов безрецептурными лекарствами. Головная боль, которая является очень распространенной болью, должна сопровождаться самолечением только под наблюдением фармацевта.

Выводы. Работники аптек в Республике Армения имеют неполные знания и представления о лечении головной боли. В программы повышения квалификации и в основных образовательных программах фармацевтов следует включить всестороннюю информацию о лечении головной боли, а также развить практические навыки.

Ключевые слова и словосочетания: головная боль, самолечение, работник аптеки, фармацевтическая помощь, лекарства, побочные эффекты, образование.

HEADACHE MANAGEMENT IN PHARMACY

ANUSH BARSEGHYAN

Yerevan State Medical University after Mkhitar Heratsi
Department of Pharmaceutical Management, Lecturer
anushikbarseghyan@gmail.com

LUSINE NAZARYAN

Yerevan State Medical University after Mkhitar Heratsi
Department of Pharmaceutical Management, Lecturer
lusinazaryan@mail.ru

MARTA SIMONYAN

Yerevan State Medical University after Mkhitar Heratsi
Department of Pharmaceutical Management
PhD in Pharmaceutical Sciences, Associate Professor
marta.simonyan@gmail.com

Abstract

Consumers often go to the pharmacy to alleviate various pains, and headaches are the most common type of pain. Pharmacy staff must be adequately trained to manage self-medication for headaches, provide pain information to consumers, recognize red flags, and provide assistance with over-the-counter (OTC) medications.

The goal of the investigation is to study and evaluate the process of headache management by pharmacy staff.

Material and method: The survey was conducted among 285 employees of licensed pharmacies in Armenia with the help of questionnaires, the number of which was determined according to "The Survey System Version 11.0". Survey data were entered and analyzed using the SPSS software package.

Results. According to the results of the research, only 16% of the pharmacy employees advise the patient to see a doctor in case of headache, the rest are joint pain (41%), muscle pain (18%), any type of pain (10%), toothache (8%), menstruation pain (5%), other options (2%). The test questions for differentiation of headache and recognition of red flags were classified as follows: arterial pressure (51%), pain frequency (32%), pain intensity (13%), and presence of compressive pain (4%). Pharmacists may recommend over-the-counter medicines for certain types of headaches, so 67% of them think they should advise OTC painkillers for tension headaches, 15% for medication overuse headaches, and 14% for migraine, 4% in case of headaches caused by injuries.

Discussion: Pharmacists are considered to be at the first line of the healthcare sector, they must be able to effectively manage consumers' self-medication, distinguish dangerous symptoms from mild illnesses, decide whether immediate medical attention is needed or whether patients can be treated with OTC drugs. Headache is a very common pain, it can be self-medicated only under the supervision of a pharmacy employee.

Conclusion: Pharmacy employees in the Republic of Armenia have incomplete knowledge and ideas about headache management. Comprehensive information on headache management as well as the development of practical skills should be included in continuing education programs for pharmacists.

Keywords and phrases: headache, self-medication, pharmacy employee, pharmaceutical care, medicines, side effects, education.

Ներածություն

«Ցավը տհաճ զգայական և հուզական փորձառություն է, որը կապված է կամ նման է հյուսվածքների իրական կամ հավանական վնասմանը» [1]: Այն, հանդիսանալով տհաճ զգացողություն, իջեցնում է մարդկանց կյանքի որակը, նպաստում նրանց աշխատունակության անկմանը՝ դանդաղեցնելով պետության արտադրողականությունը և տնտեսական աճը, ինչպես նաև շատ հաճախ այն բեռ է դառնում պետության առողջապահական համակարգի համար [2]: Կլինիկական պրակտիկայում բավականին հաճախ են հանդիպում տարբեր ցավային համախտանիշներով հիվանդներ, և ցավը ամենատարածված ախտանիշն է, որը ստիպում է հիվանդներին դիմել բժշկի [3, 4]: Շատ տարածված ցավային համախտանիշներ ներառում են ծայրամասային և կենտրոնական մեխանիզմներ, բուժումը հաճախ ենթադրում է միջոցի սխալ ընդհանուր ցավային համախտանիշներ՝ գլխացավ, որովայնի ցավ, մեջքի ստորին հատվածի ցավ և այլն [3]:

Գլխացավերը բավականին տարածված են առաջնային բուժօգնության պրակտիկայում՝ ցավային համախտանիշների շարքում զբաղեցնելով իրենց ուրույն դիրքը [5]: Առաջնային գլխացավերն են միգրենը, լարվածության գլխացավը, կլաստերային գլխացավերը, առաջնային գլխացավի այլ խանգարումներ: Երկրորդային գլխացավերի պատճառներն են ներգանգային պաթոլոգիաները, անոթային հիվանդությունները [4, 5]: Դեղորայքի չարաշահման գլխացավերը դասվում են երկրորդային գլխացավերի շարքին և ի հայտ են գալիս դեղորայքի սահմանված դեղաչափից ավելի օգտագործման դեպքում՝ երեք ամիս կամ ավելի ժամկետում, նախապես գոյություն ունեցող գլխացավը մեղմելու համար: Ոչ ստերոիդային հակաբորբոքային դեղամիջոցների (ՈԱՀԴ-ի) և պարացետամոլի օգտագործումը ամսական 15 օր կամ ավելի, իսկ տրիպտանի և/կամ օփիոիդների օգտագործումը ամսական 10 օր կամ ավելի համարվում է գերօգտագործում [4, 5, 6]:

Լարվածության գլխացավը գլխացավերից ամենատարածվածն է, բնութագրվում է ընդհատվող կամ մշտական երկկողմանի ցավով, որը սովորաբար նկարագրվում է որպես սեղմող ճնշում կամ ժապավենի նման զգացողություն գլխի շուրջը. շատ հիվանդներ զգում են ախտանշանները ճակատային, քունքային և ծոծրակային հատվածներում: Ցավի տեղը, կախված նոպայի ուժգնությունից, կարող է փոխվել, թեպետ պարանոցի և ուսի ցավերը ավելի տարածված են և հաճախ հանդիպող: Նոպան կարող է տևել մի քանի ժամից մինչև օրեր, իսկ որոշ դեպքում՝ ամիսներ: Լարվածության գլխացավերին բնորոշ չեն աուրա, սրտխառնոց, ֆոտոֆոբիա և ձայնավախություն [3, 4, 5]: Այս գլխացավերը սովորաբար առաջանում են հուզական անհանգստության, սթրեսի ժամանակ և հաճախ ուղեկցվում են անհանգստությամբ, վատ հարմարվողական հմտություններով և դեպրեսիայով: Ֆիզիկական պատճառներ, ինչպիսիք են՝ անոթների դեգեներատիվ հիվանդությունը, գլխի կամ պարանոցի վնասվածքը, պարանոցի անհարմար դիրքը, վատ կեցվածք, դիմա-ձնոտային հոդերի դիսֆունկցիան, բրուքսիզմը նույնպես կարող է արագացնել նոպաները [3]:

Միգրենը ընտանեկան հիվանդություն է, որը բնութագրվում է միակողմանի կամ երկկողմանի պարոքսիզմալ գլխացավով, որը տևում է ժամերից մինչև օրեր: Հասուն կանայք ավելի շատ նոպաներ են ունենում, քան տղամարդիկ՝ 3:1 հարաբերակցությամբ: Նոպաները տեղի են ունենում տարեկան մեկ կամ երկու անգամից շաբաթական մի քանի անգամ: Սովորաբար միգրենը ընթանում է համակցված ախտանիշներով, որոնք ներառում են բաբախյուն (պուլսացիա) գլխում, սրտխառնոց, փսխում, լուսավախություն, ձայնավախություն և տրամադրության փոփոխություն: Միգրենի երկու հիմնական տեսակներն են աուրայով և առանց աուրայի: Աուրայով միգրենին նախորդում է աուրան՝ անցողիկ նյարդաբանական ախտանիշը, որը սովորաբար տեսողական է,

օրինակ՝ սկոտոմա, թունելային տեսողություն կամ տեսողական դաշտի դեֆիցիտ, որը տևում է 5-ից 30 րոպե [3, 4, 5, 7]: Միգրենը գլխացավի ամենատարածված տեսակներից է, որի դեպքում օգնության համար շատ հաճախ են դեղատուն դիմում: Եթե ցավը պայմանավորված չէ լուրջ պաթոլոգիայով, այսինքն՝ «կարմիր դրոշներ» չկան, ապա առողջապահության մատակարարը պետք է պարզի, թե արդյոք ցավը բավականաչափ անհանգստացնող է, որպեսզի պահանջվի ցավազրկող դեղամիջոց օգտագործել: Առողջապահության մատակարարի հաջորդ մարտահրավերը հիվանդի համար ամենահարմար ցավազրկող առաջարկելն է՝ հաշվի առնելով նրանց տարիքը, սեռը, ուղեկցող հիվանդությունները և ընթացիկ օգտագործվող դեղերը [8]: Բացի դեղաբանական բուժումից՝ նշանակվում է նաև դիետա՝ բացառելով նոպա հրահրող խմիչքները և սնունդը [3, 9]: Լարվածության և միգրենի դեղաբանական սուր բուժումները բավականին նման են և ներառում են ինչպես ԱԴՏ, այնպես էլ դեղատոմսով դեղեր՝ Ացետամինոֆեն, Իբուպրոֆեն, Կետոպրոֆեն, Ասպիրին, Նապրոքսեն Դիկլոֆենակ, սակայն քրոնիկ բուժումները արմատապես տարբերվում են միմյանցից. իրականացվում են դեղատոմսով տրվող դեղերով՝ բացառապես բժշկի նշանակմամբ [5, 4, 9]:

Կլաստերային գլխացավի պատճառն անհայտ է, առաջարկվում են տարբեր տեսություններ և այն համարում են մարդկությանը հայտնի ամենաձանր ցավը: Կլաստերային գլխացավը հիմնականում ազդում է տղամարդկանց վրա՝ 6:1 հարաբերակցությամբ կանանց հետ [3]: Նոպաները տեղի են ունենում ամեն օր կամ գրեթե ամեն օր՝ շաբաթներ կամ ամիսներ շարունակ, և առեղծվածային կերպով անհետանում են ամիսներով կամ տարիներով՝ անկախ բուժումից, հետո նորից կրկնվում են [3, 4]: Կլաստերային գլխացավերի կասկածի դեպքում պացիենտին պետք է ուղղորդել նյարդաբանի մոտ, թեպետ լինելով առաջնային գլխացավ չի կարող ենթարկվել առաջնային բուժօգնության [6]: Սուր բուժումը ներառում է թթվածնային բուժում ինչպես նաև տրիպտաններ՝ տարբեր դեղաձևերով, իսկ կանխարգելիչ բուժումը իրականացվում է վերապամիլի, մետիսերգիդի, լիթումի, գլյուկոկորտիկոիդների օգնությամբ: Կլաստերային ժամանակահատվածներում պետք է խուսափել ալկոհոլից և դադարեցնել ծխելը [4]:

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել և գնահատել գլխացավի ինքնաբուժման կառավարումը դեղատան աշխատողների՝ դեղագետների և դեղագործների կողմից:

Նյութը և մեթոդներ

Պարզելու և գնահատելու համար դեղատան աշխատողների մասնակցությունը և գիտելիքները գլխացավի ինքնաբուժման կառավարման գործընթացում իրականացրել ենք հարցաթերթիկային հարցում: Հարցաթերթիկը պարունակել է մասնագիտական գործունեության վերաբերյալ հարցեր ցավային համախտանիշի ինքնաբուժման կառավարման վերաբերյալ, սույն հոդվածում մասնավորապես քննարկվում է գլխացավին վերաբերող հարցերը: Հետազոտվող նյութի ծավալը դեղատան աշխատողների շրջանում հաշվարկվել է ըստ հետևյալ բանաձևի:

$$n = \frac{N \times z^2 \times p(1-p)}{d^2 \times N + z^2 \times p(1-p)}$$

N- Երևանում լիցենզավորված դեղատների քանակն է

z – ստանդարտ միավոր է տվյալ վստահության մակարդակին համապատասխան (95% վստահության մակարդակի դեպքում z = 1,96)

p – սպասվող տարածվածության մեծությունն է

Սույն աշխատանքում դիտարկվել է ամենավատ դեպքի տարբերակը՝ $p=0.5$ (հարցաթերթիկների ընդամենը 50%-ի լրացումը), քանի որ Հայաստանում իրականացված նմանատիպ ուսումնասիրությունների արդյունքներ չեն հայտնաբերվել:

d – ցուցիչի սահմանային սխալն է, երբ սխալի հավանականությունը 5% է, ապա այն հավասար է լինում 0,05:

Դեղատան աշխատողների համար հարցաթերթիկների քանակը հաշվարկվել է ըստ Առողջապահության նախարարության տրամադրած տեղեկանքի («Առողջապահության նախարարի հրամաններ N 548-Ա, N 559-Ա, N 562-Ա, 03.07.18, N ՎՀ/14.2/8551-18»), Երևանի 1069 լիցենզավորված դեղատան հաշվարկով: Վստահելիության աստիճանը 95%, սխալի հավանականությունը 3 դիտարկելով՝ դեղատան աշխատողների ծավալը ստացվում է 285:


$$n = \frac{1096 \times 2,17^2 \times 0,5(1-0,5)}{1096 \times 0,03^2 + 2,17^2 \times 0,5(1-0,5)}$$

n= 285

Դեղատները ընտրվել են պատահականության սկզբունքով Երևանի տարբեր վարչական շրջաններում. յուրաքանչյուր դեղատանը լրացվել է մեկ հարցաթերթիկ:


Արդյունքներ

Հարցմանը մասնակցել են դեղագետներ (40%), դեղագործներ (48%) և ուսանողներ (12%), որոնք ունեին հետևյալ աշխատանքային փորձը՝ մինչև 1 տարի (26%), 2-3 տարի (37%), 4-7 տարի (22%), 8- 10 տարի (9%), 11-ից ավելի տարի (6%): Հարցաթերթիկի միջոցով պարզաբանվեց նաև թե **ո՞ր ցավի դեպքում են խորհուրդ տալիս պացիենտին դիմել բժշկի:** Հարցված դեղատան աշխատողների 41%-ը նշել է հողացավը, 18%-ը՝ մկանացավը, 16%-ը՝ գլխացավը, 10%-ը՝ ցանկացած տիպի ցավը, 8%-ը՝ ատամնացավը, 5%-ը՝ դաշտանային ցավը, 2%-ը՝ սեփական տարբերակը (տես նկար 1):




Նկար 1. Դեղատան աշխատողի կողմից պացիենտին բժշկի ուղղորդելու հիմնական պատճառները:

Տրամադրված հարցաթեթիկի միջոցով գնահատվեց դեղատան աշխատողների գիտելիքների կարմիր դրոշների վերաբերյալ՝ «Գլխացավի դեպքում ի՞նչ ստուգիչ հարցեր եք տալիս» հարցի օգնությամբ: Դեղատան աշխատողների պատասխանները դասակարգվեցին հետևյալ ձևով՝ զարկերակային ճնշում՝ 51%, ցավի հաճախություն՝ 32%, ցավի ուժգնություն՝ 13%, սեղմող ցավի առկայություն՝ 4% (տես նկար 2):



Նկար 2. Ստուգիչ հարցեր գլխացավի ժամանակ:

Հետազոտության ընթացքում քննարկվեց նաև թե գլխացավի ո՞ր տեսակների դեպքում է բաց թողնվում առանց դեղատոմսի տրվող ցավազրկողներ: Պարզվեց, որ դեղատան աշխատողների 67%-ը կարծում է, որ լարվածության գլխացավերի ժամանակ պետք է բաց թողնի ԱԴՏ ցավազրկողներ, 15%-ը՝ դեղորայքի հետևանքով առաջացած գլխացավերի, 14%-ը՝ միգրենի, և 4%-ը՝ տրավմաների արդյունքում առաջացած գլխացավերի դեպքում (տես նկար 3):



Նկար 3. Գլխացավի տեսակներ, որոնց դեպքում կարելի է բաց թողնել առանց դեղատոմսի տրվող ցավազրկողներ:

Քննարկում

Այս ուսումնասիրության արդյունքները հիմնավորում են դեղագործության ոլորտի առկա և արդիական խնդիրները՝ կապված գլխացավի կառավարման գործընթացում դեղագետի ոչ նշանակալից դերի հետ, ինչպես նաև ապացուցվում է դեղատան աշխատողների թերի պատրաստվածությունը այս ոլորտում:

Դեղագետները առողջապահության ոլորտի ամենահասանելի մասնագետներից են, գտնվում են սպառողի հետ սերտ շփման գոտում և անփոխարինելի դեր ունեն թեթև հիվանդությունները բուժելու և ինքնաբուժումը կառավարելու համար, ինչպիսին է գլխացավը, սակայն ըստ որոշ

ուսումնասիրությունների արդյունքների՝ դեղատների աշխատողները ցույց են տվել շատ վատ և անբավարար հմտություններ գլխացավի կառավարման գործընթացում **[10]**, որը հաստատվեց նաև Հայաստանի Հանրապետությունում իրականացված հետազոտությամբ: ՀՀ-ում դեղատան աշխատողների միայն 16%-ն է կարծում, որ գլխացավի դեպքում պացիենտին կարելի է խորհուրդ տալ դիմել բժշկի՝ չկարևորելով վտանգավոր ախտանիշների՝ կարմիր դրոշների առկայությունը, որոնց դեպքում պացիենտին անհապաղ պետք է ուղղորդել բժշկի **[11, 12]**: Վտանգավոր ախտանիշների ժխտման դեպքում առաջնային գլխացավերը մասնավորապես լարվածության և միգրենային գլխացավերի ինքնաբուժումը կարող են հսկվել դեղատան աշխատողի կողմից **[5, 8]**: Դեղատան աշխատողների 10%-ը կարծում է, որ ցանկացած տիպի ցավի դեպքում պացիենտին պետք է ուղղորդել բժշկի՝ չկարևորելով իրենց դերը որպես առողջապահության ոլորտի մասնագետի, խուսափելով ստանձնել որևէ պարտականություն և մասնագիտական հմտությունների կիրառում. սա փաստում է, որ ՀՀ-ում դեղագետների դերի վերաբերյալ պատկերը համընկնում է գրականության տվյալների հետ, ըստ որի՝ դեղագետները ունեն անբավարար ներգրավվածություն ինքնաբուժման գործընթացում, չեն տրամադրում դեղերի մասին անհրաժեշտ տեղեկատվություն հիվանդներին, ինչն էլ փաստում է, որ նրանք պետք է կանոնավոր վերապատրաստվեն ինքնաբուժման կառավարման ոլորտում **[13]**:

Գլխացավի դեպքում ստուգիչ հարցերի իմացության միջոցով գնահատվեց դեղատան աշխատողների գիտելիքը գլխացավի տեսակի որոշման և վտանգավոր ախտանիշների բացահայտման գործընթացում: ՀՀ-ում դեղատան աշխատողների զգալի մասը (51%) որպես գլխացավի տեսակի որոշման ցուցիչ և վտանգավոր ախտանիշ է համարում զարկերակային ճնշումը, այնուհետև՝ ցավի հաճախությունը (32%), ցավի ուժգնությունը (13%), սեղմող ցավի առկայությունը (4%): Վտանգավոր ախտանիշները կամ այլ կերպ ասած կարմիր դրոշները հուշում են, որ գլխացավը երկրորդային է և բժշկական անհապաղ օգնության կարիք կա: Կարմիր դրոշները մեկնաբանվում են որպես երկրորդային գլխացավի սքրինինգ թեստեր, որոնք նույնացնում են այն հիվանդներին, որոնց գլխացավի ախտորոշումը դեռ հայտնի չէ **[14]**: Գլխացավերի դասակարգումը որպես առաջնային (միգրեն, լարվածության տիպ կամ կլաստեր) կամ երկրորդային կարող է հեշտացնել գլխացավի գնահատումը և կառավարումը: Զարկերակային ճնշման գլխացավը համարվում է երկրորդային գլխացավ, որը պետք է հսկվի բժշկի կողմից: Ցավի հաճախությունն ու ուժգնությունը համարվում են կարմիր դրոշներ գլխացավի ժամանակ, երկրորդային գլխացավերի այլ «կարմիր դրոշները» ներառում են գլխացավի հանկարծակի սկիզբ, գլխացավի սկիզբ 50 տարեկանից հետո, ուղեկցող համակարգային հիվանդությամբ գլխացավ, սուր նյարդաբանական նշաններ կամ ախտանիշներ, պապիլեդեմա և գլխացավ՝ գլխի վնասվածքից հետո: Այս գանգատներով սպառողներին պետք է ուղղորդել բժշկի՝ նյարդաբանական հետազոտության, երկրորդային գլխացավերը սովորաբար պահանջում են շտապ, հրատապ օգնություն համապատասխան մասնագետների կողմից **[15, 6]**: Գլխացավի ժամանակ սեղմող ցավի առկայությունը (առանց բաբախյունի) հիմնականում հուշում է լարվածության գլխացավի մասին: Էպիզոդիկ լարվածության գլխացավերի համար պարզ ցավազրկողներ, ինչպիսիք են՝ Պարացետամոլը և ոչ ստերոիդային հակաբորբոքային դեղերը (ՈՍՀԴ) ընդհանուր առմամբ բավարար են: Օփիոիդների օգտագործման դեպքում, ինչպիսին է՝ Կոդեինը, պետք է զգույշ լինել՝ հաշվի առնելով հնարավոր անբարենպաստ ազդեցությունները, ինչպիսիք են՝ կախվածությունը և դեղորայքի չարաշահման գլխացավը **[6, 16]**:

Հետազոտության ընթացքում քննարկվեց նաև, թե գլխացավի ո՞ր տեսակների դեպքում են բաց թողնվում առանց դեղատոմսի տրվող ցավազրկողներ: Պարզվեց, որ դեղատան

աշխատողների 67%-ը կարծում է, որ լարվածության գլխացավերի ժամանակ պետք է բաց թողնի ԱԴՏ ցավազրկողներ, 15%-ը՝ դեղորայքի հետևանքով առաջացած գլխացավերի, 14%-ը՝ միգրենի, և 4%-ը՝ տրավմաների արդյունքում առաջացած գլխացավերի դեպքում: Դեղորայքի չափից ավելի օգտագործման հետևանքով առաջացած գլխացավի դեպքում առաջնային խորհրդատվությունը դեղեր չի ընդգրկում, այլ բոլոր ցավազրկողների կիրառման ընդհատում, իսկ ավելի ծանր դեպքերում՝ ստացիոնար բուժում **[6]**: Տրավմաների արդյունքում առաջացած գլխացավը երկրորդային գլխացավ է, սակայն կարող է նման լինել լարվածության տիպի գլխացավին կամ միգրենին, չունենա հստակ տեղակայում: Վնասվածքից անմիջապես հետո Ացետամինոֆենը կարող է նախընտրելի լինել Ասպիրինից և որոշ այլ ոչ ստերոիդային հակաբորբոքային միջոցներից, որոնք մի փոքր մեծացնում են հեմոռագիկ ինսուլտի ռիսկը: Ցավազրկողների հաճախակի կիրառությունը հետտրավմատիկ գլխացավերը կարող են վերածել քրոնիկ գլխացավերի, համապատասխանաբար, կարևոր է հստակ ցուցումներ տալ օրական առավելագույն թույլատրելի դեղաչափի վերաբերյալ **[17, 18]**: Այս պացիենտները կարող են ունենալ բազմաթիվ համակցված ախտանիշներ, օրինակ՝ դեպրեսիա, անհանգստություն, քնի խանգարումներ **[19]**, և ավելի նպատակային և արդյունավետ բուժման համար, պետք է մանրամասն զննում անցնեն:

Ներկայումս ամենալայն հասանելի թերապևտիկ տարբերակները պարզ ցավազրկման համար առանց դեղատոմսի ոչ ստերոիդային հակաբորբոքային դեղամիջոցներն են (ՈԱՀԴ), որոնք լավագույն ցավազրկող տարբերակներն են ցավի սկզբնական, ինքնուրույն բուժման համար **[8]**:

Այսպիսով՝ ակնհայտ է, որ անհրաժեշտ են ուղեցույցներ, ալգորիթմեր, պացիենտների համար նախատեսված տեղեկատվական թերթիկներ, որոնց օգնությամբ հնարավոր է իրականացնել գլխացավի ապացույցների վրա հիմնված կառավարում և համապարփակ բուժում՝ ներգրավվելով հիվանդին տվյալ գործընթացում **[9]**: Դեղագետները պետք է համագործակցեն հիվանդների հետ և ապահովեն, դեղերի օպտիմիզացված և անվտանգ կիրառությունը՝ որպես քրոնիկ ցավի և համակցված հիվանդությունների կառավարման ընդհանուր մոտեցման մաս: Դեղագետները կարող են սպառողին տրամադրել տեղեկատվություն ցավի վերաբերյալ, ցուցաբերել օգնություն և աջակցել ցավով ապրող անձանց: Այսպիսով՝ կարևորվում է ցավի ուսուցումը դեղագետ ուսանողների և շարունակական կրթության անհրաժեշտությունը դեղագործության պրակտիկ մասնագետների համար **[20]**:

Եզրակացություն

Հետազոտությունից կարելի է եզրակացնել, որ դեղատան աշխատողների կողմից գլխացավի կառավարումը պատշաճ չի իրականացվում: Դեղագետների և դեղագործների վերապատրաստման (շարունակական կրթության) ծրագիրը պետք է ուղղված լինի դեղագործական հոգածության ներդրմանը, հատկապես՝ առավել հաճախ հանդիպող ախտաբանական վիճակների կառավարման գործընթացում: Մասնագիտական հմտությունների զարգացումը, կարմիր դրոշների գերազանց իմացությունը թույլ կտա դեղատան աշխատողներին կայանալ որպես առողջապահության ոլորտի մասնագետ: Գլխացավի գրագետ հսկումը սպառողներին զերծ կպահի դեղերի անհարկի, իռացիոնալ կիրառումից, անցանկալի զուգորդումներից, գերդեղաչափավորումից, ինչպես նաև կնպաստի ծանր հիվանդությունների վաղ բացահայտմանը:

Գրականության ցանկ

1. Raja, Srinivasa N.a,*; Carr, Daniel B.b; Cohen, Miltonc; Finnerup, Nanna B.d,e; Flor, Hertaf; Gibson, Stepheng; Keefe, Francis J.h; Mogil, Jeffrey S.i; Ringkamp, Matthiasj; Sluka, Kathleen A.k; Song, Xue-Junl; Stevens, Bonniem; Sullivan, Mark D.n; Tutelman, Perri R.o; Ushida, Takahirop; Vader, Kyleq The revised International Association for the Study of Pain definition of pain: concepts, challenges, and compromises, PAIN: September 2020 - Volume 161 - Issue 9 - p 1976-1982 doi: 10.1097/j.pain.0000000000001939
2. Yam MF, Loh YC, Tan CS, Khadijah Adam S, Abdul Manan N, Basir R. General Pathways of Pain Sensation and the Major Neurotransmitters Involved in Pain Regulation. *International Journal of Molecular Sciences*. 2018; 19(8):2164. <https://doi.org/10.3390/ijms19082164>
3. Kellerman, Rick D., and David Rakel. *Conn's Current Therapy* 2020. 2020. <https://www.clinicalkey.com/dura/-browse/bookChapter/3-s2.0-C20180046599>
4. David Longnecker, Mark Newman, Warren Zapol, Warren Sandberg, Sean Mackey *Anesthesiology*, Third Edition. McGraw-Hill In 2017. ISBN10 0071848819. ISBN13 9780071848817 1696 pages (1455)
5. McNeil M. Headaches in Adults in Primary Care: Evaluation, Diagnosis, and Treatment. *Med Clin North Am*. 2021 Jan;105(1):39-53. doi: 10.1016/j.mcna.2020.09.005. PMID: 33246522.
6. Lee VME, Ang LL, Soon DTL, Ong JJY, Loh VWK. The adult patient with headache. *Singapore Med J*. 2018 Aug;59(8):399-406. doi: 10.11622/smedj.2018094. PMID: 30175370; PMCID: PMC6109828.
7. Guyton and Hall *Textbook of Medical Physiology* 14th Edition ISBN: 978-0-323-59712-8 ISBN: 978-0-323-67280-1, pp1028, 2021 by Elsevier. P583
8. Hagen M, Alchin J. Nonprescription drugs recommended in guidelines for common pain conditions. *Pain Manag*. 2020 Mar;10(2):117-129. doi: 10.2217/pmt-2019-0057. Epub 2019 Dec 20. PMID: 31858875.
9. Becker WJ, Findlay T, Moga C, Scott NA, Harstall C, Taenzer P. Guideline for primary care management of headache in adults. *Can Fam Physician*. 2015 Aug;61(8):670-9. PMID: 26273080; PMCID: PMC4541429.
10. Netere AK, Erku DA, Sendekie AK, Gebreyohannes EA, Muluneh NY, Belachew SA. Assessment of community pharmacy professionals' knowledge and counseling skills achievement towards headache management: a cross-sectional and simulated-client based mixed study. *J Headache Pain*. 2018 Oct 16;19(1):96. doi: 10.1186/s10194-018-0930-7. PMID: 30326826; PMCID: PMC6755542.
11. Lowth, Mary. (2016). Recognising red flags. *Practice Nurse*. 46.
12. Welch E. (2011). Red flags in medical practice. *Clinical medicine (London, England)*, 11(3), 251–253. <https://doi.org/10.7861/clinmedicine.11-3-251>
13. Škrbo, S., Mehović, S., Omerović, N., Trnka, A. H., Smajić, N. Žiga, Pehlivanović, B. and Lagumdžija, D. (2021) “Role of a Pharmacist in the Safe Self-medication – A Questionnaire-based Survey”, *Journal of Pharmaceutical Research International*, 33(41B), pp. 280-294. doi: 10.9734/jpri/2021/v33i41B32367.
14. Pohl, H. Red flags in headache care. *Headache*. 2022; 00: 1– 2. doi:10.1111/head.14273
15. Clinch CR. Evaluation of acute headaches in adults. *Am Fam Physician*. 2001 Feb 15;63(4):685-92. PMID: 11237083.
16. Bendtsen, L. & Evers, Sophia & Linde, Mattias & Mitsikostas, Dimos-Dimitrios & Sandrini, Giorgio & Schoenen, Jean. (2011). Treatment of Tension-Type Headache. *European Handbook of Neurological Management*. 2. 225-238. 10.1002/9781444346268.ch16.
17. Silverberg ND, Iaccarino MA, Panenka WJ, Iverson GL, McCulloch KL, Dams-O'Connor K, Reed N, McCreary M; American Congress of Rehabilitation Medicine Brain Injury Interdisciplinary Special Interest Group Mild TBI Task Force. Management of Concussion and Mild Traumatic Brain Injury: A Synthesis of Practice Guidelines. *Arch Phys Med Rehabil*. 2020 Feb;101(2):382-393. doi: 10.1016/j.apmr.2019.10.179. Epub 2019 Oct 23. PMID: 31654620.
18. Marshall S, Bayley M, McCullagh S, Berrigan L, Fischer L, Ouchterlony D, Rockwell C, Velikonja D, et al. *Guideline for Concussion/Mild Traumatic Brain Injury and Persistent Symptoms: 3rd Edition (for Adults 18+ years of age)*. Toronto, ON: Ontario Neurotrauma Foundation, 2018.
19. Larsen EL, Ashina H, Iljazi A, Al-Khazali HM, Seem K, Ashina M, Ashina S, Schytz HW. Acute and preventive pharmacological treatment of post-traumatic headache: a systematic review. *J Headache Pain*. 2019 Oct 21;20(1):98. doi: 10.1186/s10194-019-1051-7. PMID: 31638888; PMCID: PMC6802300.
20. Murphy L, Ng K, Isaac P, Swidrovich J, Zhang M, Sproule BA. The Role of the Pharmacist in the Care of Patients with Chronic Pain. *Integr Pharm Res Pract*. 2021 Apr 30;10:33-41. doi: 10.2147/IPRP.S248699. PMID: 33959490; PMCID: PMC8096635.

ՊՇՌ-Ի ԱԽՏՈՐՈՇԻՉ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ COVID-19-Ի ԿԱՍԿԱԾՈՎ ՊԱՑԻԵՆՏՆԵՐԻ ՄՈՏ

ԱՐՇԱԿ ՂԱԶԱՐՅԱՆ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան
ինֆեկցիոն հիվանդությունների ամբիոն, ասպիրանտ
ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն
բաժանմունքի վարիչ
arshak1979@yahoo.com

ՎԻԳԵՆ ԱՍՈՅԱՆ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան
ինֆեկցիոն հիվանդությունների ամբիոն, ամբիոնի վարիչ
բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ
vigenasoyan@gmail.com

ԱՐԵՎԿԱՏ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան
ինֆեկցիոն հիվանդությունների ամբիոն
ասիստենտ
arevikkarapetyan11@mail.ru

ՆԱԻՐԱ ԳՅՈՒԼԱԶՅԱՆ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան
ինֆեկցիոն հիվանդությունների ամբիոն
բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
n.gyulazyan@gmail.com

Համառոտագիր

Նոր կորոնավիրուսով (SARS-CoV-2) պայմանավորված համավարակը աշխարհում ներկայումս առաջացրել է առողջապահական գերակա խնդիր: ԱՀԿ-ն հիվանդությանը տվել է պաշտոնական անվանում՝ COVID-19: Հիվանդության դրսևորումները բազմազան են՝ վերին շնչուղիների ախտահարման նշաններ, թոքաբորբ, գաստրոինտեստինալ սիմպտոմներ, պոլիօրգանային անբավարարություն և այլն, բայց առավել հաճախ հանդիպող սիմպտոմներն են՝ տենդը, ընդհանուր թուլությունը, չոր հազը և դժվարացած շնչառությունը: Հայաստանի Հանրապետությունում SARS-CoV-2 վարակի վերջնական ախտորոշումը հիմնված է քթնմանից վերցված քունկի ՊՇՌ հետազոտության դրական արդյունքի հիման վրա: ԱՀԿ-ի կողմից առաջարկվել է օգտագործել ICD-10 U07.2 կոդը այն դեպքերում, երբ նմանատիպ COVID-19-ին կլինիկական նշաններով անձանց մոտ վիրուսը չի իդենտիֆիկացվում, սակայն առկա է համաճարակաբանական, կլինիկական և ռադիոլոգիական ախտորոշում:

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել և վերլուծել COVID-19-ի կասկածով հոսպիտալացված պացիենտների շրջանում հիվանդության կլինիկական ընթացքի և լաբորատոր ցուցանիշների առանձնահատկությունները:

Ուսումնասիրության մեթոդներ

Հետազոտության մեջ ընդգրկվել են ստացիոնար բուժման մեջ գտնվող այն պացիենտները (n=50), որոնց մոտ կրծքավանդակի ՀՇ-ով ախտորոշվել է COVID-19 ասոցացված թոքաբորբի պատկեր, սակայն քթնմանից վերցված նմուշի ՊՇՌ կրկնակի հետազոտությունը SARS-CoV-2-ի վերաբերյալ եղել է բացասական: Վերջնական ախտորոշումը «ՊՇՌ բացասական COVID-19» հիմնվել է համաճարակաբանական և կլինիկոլաբորատոր տվյալների վրա և հաստատվել է ՀՀ տիպիկ պատկերի արդյունքում:

Արդյունքներ

Պացիենտների կեսից ավելին դիմել է հիվանդության պրոգրեսիվ փուլում. այդ պահին 86%-ի մոտ ընդհանուր վիճակը գնահատվել է ծանր կամ ծայրահեղ ծանր ($SpO_2 < 93\%$, շնչառության հաճախականությունը $> 30/ր$): Հիվանդների գերակշռող մեծամասնության գանգատներն են եղել ընդհանուր թուլությունը և ջերմության բարձրացումը, կեսից ավելին նշել է դժվարացած շնչառություն և հազ: Պացիենտների 62%-ը ունեցել է զարկերակային գերճնշում: Ընդունման պահին հիվանդների 86%-ի մոտ արձանագրվել է դեսատուրացիա (SpO_2 -ի միջին ցուցանիշը կազմել է $85,88 \pm 1,13\%$) թոքերում, կեսից ավելի մոտ լսվել է թուլացած շնչառություն և կրեպիտացիա: Լաբորատոր հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ մեծամասնության մոտ առկա է՝ լիմֆոպենիա, թրոմբոցիտոզ, գլյուկոզայի, C ռեակտիվ սպիտակուցի, ֆերիտինի և պրոկալցիտոնինի մակարդակների բարձրացում:

Կոագուլոգրամայի ցուցանիշների փոփոխություններն են եղել՝ պրոթրոմբինային ինդեքսի իջեցում, D-դիմերի և ֆիբրինոգենի մակարդակների բարձրացում:

Պացիենտների 96%-ի մոտ ՀՇ արդյունքով ախտորոշվել է երկկողմանի պոլիսեզմենտար ինտերստիցիալ թոքաբորբ, «անթափանց ապակու» պատկերով:

Ըստ ԱՀԿ-ի կողմից մշակված COVID-19 դրական հիվանդների վարման ուղեցույցերի՝ բոլոր պացիենտներին նշանակվել է համապատասխան դեղորայքային բուժում և օքսիգենոթերապիա: Հոսպիտալացման միջին տևողությունը կազմել է $6,86 \pm 0,5$ մահճակալ/օր: Բոլոր հիվանդները, բացառությամբ մեկ պացիենտի, դուրս են գրվել հիվանդանոցից կլինիկոլաբորատոր ցուցանիշների լավացումով:

Եզրակացություն

Այսպիսով՝ COVID-19 կրկնակի ՊՇՌ բացասական պացիենտների մոտ արձանագրված կլինիկոլաբորատոր համալիր փոփոխությունները առավել հաճախ դիտվում են հենց COVID-19 ՊՇՌ դրական պացիենտների շրջանում, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ, երբ COVID-19-ի ժամանակ ախտաբանական պրոցեսի առաջնային, դոմինանտ օջախը գտնվում է ստորին շնչուղիներում, և թոքաբորբը հանդիսանում է հիվանդության կլինիկական ձև, այդ դեպքում վերին շնչուղիներից (քթըմպան) վերցված նմուշի ՊՇՌ հետազոտությունը SARS-CoV-2 նկատմամբ հիվանդության պրոգրեսիայի փուլում կարող է լինել բացասական:

Բանալի բառեր և բառակապակցություններ. COVID-19, քթըմպանի ՊՇՌ բացասական թեստ, թոքաբորբ, կրծքավանդակի ՀՇ:

ДИАГНОСТИЧЕСКАЯ ЗНАЧИМОСТЬ ПЦР У ПАЦИЕНТОВ С ПОДОЗРЕНИЕМ НА COVID-19

АРШАК КАЗАРЯН

Ереванский государственный медицинский университет имени Мхитара Гераци
кафедра инфекционных болезней, аспирант
Национальный центр инфекционных болезней, заведующий отделением
arshak1979@yahoo.com

ВИГЕН АСОЯН

Ереванский государственный медицинский университет имени Мхитара Гераци
кафедра инфекционных болезней, заведующий кафедрой
кандидат медицинских наук, доцент
vigenasoyan@gmail.com

АРЕВАТ КАРАПЕТЯН

Ереванский государственный медицинский университет имени Мхитара Гераци
кафедра инфекционных болезней, ассистент
arevikkarapetyan11@mail.ru

НАИРА ГЮЛАЗЯН

Ереванский государственный медицинский университет имени Мхитара Гераци
кафедра инфекционных болезней
доктор медицинских наук, профессор
n.gyulazyan@gmail.com

Аннотация

В настоящее время во всем мире новая коронавирусная инфекция (SARS-CoV-2) вызвала большие проблемы в сфере здравоохранения. Официальное название болезни принятое ВОЗ - COVID-19. Проявления болезни разнообразны: симптомы поражения верхних дыхательных путей, пневмония, гастроинтестинальные нарушения, полиорганная недостаточность и др., однако чаще больные жалуются на повышение температуры тела, общую слабость, сухой кашель и затрудненное дыхание. В Республике Армения окончательная диагностика SARS-CoV-2 основана на положительном ответе ПЦР диагностики материала из носоглотки. ВОЗ предлагает ICD-10 U07.2 код для тех случаев, когда у пациентов со схожими с COVID-19 клиническими симптомами, вирус не идентифицируется, однако имеется эпидемиологическая, клиническая и радиологическая диагностика.

Цель работы – изучить и проанализировать особенности клинического течения и лабораторных показателей больных, госпитализированных с подозрением на COVID-19.

Материал и методы. В исследование были включены больные с подозрением на COVID-19 (n=50), находящиеся на стационарном лечении, у которых при КТ-исследовании легких выявлены поражения, ассоциированные с картиной пневмонии при COVID-19, однако двукратный ПЦР анализ материала на SARS-CoV-2 из носоглотки, был отрицательный. Окончательный диагноз «ПЦР негативный COVID-19» был основан на эпидемиологических, клиничко-лабораторных данных и подтвержден при КТ-исследовании обнаружением типичных для COVID-19 поражений легких.

Результаты. Более половины пациентов обратились за лечением в поздние сроки болезни, уже в фазе прогрессии. На момент обращения общее состояние 86% больных оценено как тяжелое или очень тяжелое ($SpO_2 < 93\%$, частота дыхания $> 30/в\ мин.$). В преобладающем большинстве больные жаловались на общую слабость и повышение температуры тела, больше половины – на затрудненное дыхание и кашель. У 62% пациентов констатирована гипертоническая болезнь. На момент обращения в стационар 86% больных были десатурированы (средние значения SpO_2 составили $85,88 \pm 1,13\%$), при аускультации легких (у $> 50\%$) выслушивались ослабленное дыхание или крепитация.

При анализе лабораторных показателей у большинства больных выявлены лейкопения и тромбоцитоз, а также обнаружены повышение в крови уровней глюкозы, С-реактивного белка, ферритина и прокальцитонина. Нарушения выявлены и в коагулограмме: снижение протромбинового индекса, повышение уровней Д-димера и фибриногена.

С помощью КТ исследования легких у 96% пациентов диагностирована полисегментарная интерстициальная пневмония: картина «матового стекла».

Все больные получали кислородотерапию и соответствующее медикаментозное лечение по протоколам ВОЗ, разработанным для больных COVID-19. Средняя длительность госпитализации составила $6,86 \pm 0,5$ койко/дней. Все больные выписаны из стационара с улучшением, кроме одного пациента.

Заключение. Таким образом, у пациентов с подозрением на COVID-19 с двукратным отрицательным анализом ПЦР, комплексные изменения клинико-лабораторных показателей идентичны с таковыми у COVID-19 ПЦР положительных больных. Можно предположить, что, если при COVID-19 первичный доминантный очаг находится в нижних дыхательных путях и пневмония является клиническим вариантом течения болезни, то материал для ПЦР исследования, взятый из носоглотки в фазе прогрессии болезни, может быть отрицательным на SARS-CoV-2.

Ключевые слова и словосочетания: COVID-19, отрицательный ПЦР тест из носоглотки, пневмония, КТ грудной клетки.

DIAGNOSTIC SIGNIFICANCE OF PCR AMONG PATIENTS SUSPECTED WITH COVID-19

ARSHAK GHAZARYAN

Yerevan State Medical University after Mkhitar Heratsi
Department of Infectious Diseases, PhD student
National Center of Infectious Diseases
arshak1979@yahoo.com

VIGEN ASOYAN

Yerevan State Medical University after Mkhitar Heratsi
Head of the Department of Infectious Diseases
PhD in Medical Sciences, Associate Professor
vigenasoyan@gmail.com

AREVHAT KARAPETYAN

Yerevan State Medical University after Mkhitar Heratsi
Department of Infectious Diseases
Assistant
arevikkarapetyan11@mail.ru

NAIRA GYULAZYAN

Yerevan State Medical University after Mkhitar Heratsi
Department of Infectious Diseases
Doctor of Medicine, Professor
n.gyulazyan@gmail.com

Abstract

Currently, the novel coronavirus infection (SARS-CoV-2) has caused great public health problems worldwide. The official name of the disease adopted by WHO is COVID-19. The manifestations of the disease are varied: symptoms of upper respiratory tract infection, pneumonia, gastrointestinal disorders, multiple organ failure, etc., however, more often patients complain of fever, weakness, dry cough and shortness of breath. In the Republic of Armenia the final diagnosis of SARS-CoV-2 is based on a positive PCR test of the nasopharynx. WHO proposes the ICD-10 U07.2 code for those cases when the virus is not identified in patients with similar clinical symptoms to COVID-19, but there is an epidemiological, clinical and radiological diagnosis.

The aim of the work is to study and analyze the features of the clinical course and laboratory parameters of patients hospitalized with suspected COVID-19.

Methods: The study included patients with suspected COVID-19 (n=50) who are hospitalized, in whom chest CT revealed lesions associated with the picture of pneumonia in COVID-19, however, a double PCR test for SARS-CoV-2 from the nasopharynx was negative. The final diagnosis of "PCR negative COVID-19" was based on epidemiological, clinical and laboratory data and confirmed by chest CT examination with the detection of typical COVID-19 lung lesions.

Results: More than half of the patients were admitted to the hospital in the late stages of the disease, already in the progression phase. At the time of admission, 86% of patients were assessed as severe or at critical (SpO₂<93%, breathing rate> 30/min.). The vast majority of patients complained of weakness and fever, more than half complained of shortness of breath and cough. 62% of patients were diagnosed with hypertension. At the time of admission to the hospital, 86% of patients were desaturated (mean SpO₂ values were 85.88 ± 1.13%), auscultation of the lungs revealed weakened breathing or crepitus in more than 50% of cases.

When analyzing laboratory parameters, most patients had leukopenia and thrombocytosis, as well as an increase in blood levels of glucose, C-reactive protein, ferritin and procalcitonin. Deviations were also revealed in the coagulogram: a decrease in the prothrombin index, an increase in the levels of D-dimer and fibrinogen.

Chest CT demonstrated polysegmental interstitial pneumonia in 96% of patients: ground glass opacity pattern.

All patients received oxygen therapy and appropriate medical treatment according to the WHO guidelines for patients with COVID-19. The average duration of hospitalization was 6.86 ± 0.5 beds/days. All patients were discharged from the hospital with improvement, except for one patient.

Conclusion: Thus, in patients with suspected COVID-19 with a double negative PCR test, complex changes in clinical and laboratory parameters are identical to those in COVID-19 PCR positive patients. It can be assumed that if with COVID-19 the primary dominant focus is in the lower respiratory tract, and pneumonia is a clinical variant of the course of the disease, then the material for PCR research taken from the nasopharynx in the phase of disease progression may be negative for SARS-CoV-2.

Keywords and phrases: COVID-19, negative PCR test from the nasopharynx, pneumonia, chest CT.

Ներածություն

Նոր կորոնավիրուսով (SARS-CoV-2) պայմանավորված՝ համավարակը ներկայումս աշխարհում մոտ 450 մլն հիվանդության և ավելի քան 6 մլն մահվան դեպքերի պատճառ է հանդիսացել: SARS-CoV-2-ը, որի գենետիկ հաջորդականությունը առնվազն 70%-ով նման է SARS-CoV-1-ին, առաջին անգամ ի հայտ է եկել 2019 թ. Չինաստանի Հուբեյ նահանգում անհայտ ծագման թոքաբորբով պացիենտների մոտ: Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) 2020 թ-ին հիվանդությանը տվել է պաշտոնական անվանում՝ COVID-19: SARS-CoV-2-ը, կապվելով օրգանիզմում անգիոտենզին փոխակերպող ֆերմենտ-2 (ԱՓՖ-2) ընկալիչներ պարունակող քիչների հետ, առաջացնում է ինչպես շնչուղիների և թոքահյուսվածքի ախտահարում, այնպես էլ համակարգային դրսևորումներ **[3]**: Ստորին շնչուղիներում ԱՓՖ-2 ընկալիչների առավելագույն էքսպրեսիայի պատճառով հիվանդության ավելի ուշ շրջանում վիրուսը բազմանում է թոքերում **[14,23]**: Կլինիկական դրսևորումները բազմազան են՝ վերին շնչուղիների ախտահարման նշաններ, թոքաբորբ, գաստրոինտեստինալ սիմպտոմներ, պոլիօրգանային անբավարարություն, սեպսիս, ինֆեկցիոն-տոքսիկ շոկ և այլն: COVID-19-ի առավել հաճախ հանդիպող սիմպտոմներն են տենդը, ընդհանուր թուլությունը, չոր հազը և դժվարացած շնչառությունը, որոնք առավել բնորոշ են SARS-CoV-2-ի ալֆա, բետա, գամմա և դելտա տարբերակներին, իսկ օմիկրոն տարբերակը թոքահյուսվածքում տասնապատիկ դանդաղ է զարգանում, և դրանով պայմանավորված կլինիկական պատկերում գերակշռում են կատառալ նշանները **[8,10,12,18]**: Գիտական աշխատանքներով ապացուցվել է, որ COVID-19-ով պացիենտների մոտ կլինիկական նշանները կախված են տարիքից և ուղեկցող հիվանդությունների առկայությունից **[21]**: Ախտորոշման համար ԱՀԿ-ն հիվանդության թեստավորման մի քանի ուղեցույցեր է հրապարակել: Թեստավորումն իրականացվում է շնչուղիների կամ արյան նմուշներում տվյալ ժամանակում հետադարձ տրանսկրիպցիոն պոլիմերազային շղթայական ռեակցիայով (ՊՇՌ) SARS-CoV-2-ի ՌՆԹ-ի հայտնաբերմամբ: Հայաստանի Հանրապետությունում SARS-CoV-2 վարակի վերջնական ախտորոշումը հիմնված է քթնմանից վերցված քսուկի ՊՇՌ հետազոտության դրական արդյունքի հիման վրա: Անհրաժեշտ է նշել, որ ՊՇՌ թեստավորման զգայունությունը կախված է հիվանդության վաղեմությունից, նմուշառման տեխնիկայից և նմուշի աղբյուրից **[22]**: Ընդ որում, ԱՀԿ-ի կողմից առաջարկվել է օգտագործել ICD-10 U07.2 կոդը այն դեպքերում, երբ նմանատիպ կլինիկական նշաններով անձանց մոտ վիրուսը չի իդենտիֆիկացվում, սակայն առկա է համաճարակաբանական, կլինիկական և ռադիոլոգիական ախտորոշում: COVID-19-ի ռադիոլոգիական ախտորոշման հիմնական մեթոդ է համարվում կրծքավանդակի համակարգչային շերտագրումը (ՀՇ), որն ունի բարձր զգայունություն և հնարավորություն է տալիս հայտնաբերելու COVID-19-ին բնորոշ թոքային փոփոխությունները ՊՇՌ կրկնակի բացասական պատասխան ունեցող պացիենտների շրջանում **[9,19,24]**: Չնայած ՀՇ պատկերը COVID-19-ով պայմանավորված թոքաբորբով պացիենտների մոտ ոչ սպեցիֆիկ է, սակայն այն ունի բնորոշ առանձնահատկություններ, որի հիման վրա փորձառու ռադիոլոգները կարող են ախտորոշել հիվանդությունը: Առավել հաճախ և վաղ նշանը «անթափանց ապակու» պատկերն է, որը սովորաբար բազմաօջախային է, երկկողմանի, ծայրամասային տեղակայմամբ և ընդգրկում է թոքերի ստորին բլթերի առավելապես հետին հատվածները **[11]**: ՀՇ-ն կարող է հայտնաբերել COVID-19-ը հիվանդության վաղ փուլում, կլինիկական առաջին նշանների ի հայտ գալուց 0-4 օրերի ընթացքում: Այնուհետև, հիվանդության պրոգրեսիվ փուլում (5-8 օրեր) անթափանց ապակու օջախներում միջբլթակային և ներբլթակային գծեր են ի հայտ գալիս (crazy paving), որը բնորոշ չէ այլ վիրուսային ծագման թոքաբորբերին, հետևաբար այն կարող է նպաստել ՊՇՌ բացասական, բայց միանման կլինիկական ընթացքով պացիենտների մոտ COVID-19-ի ախտորոշմանը **[16]**: COVID-19 համավարակի ընթացքում երկկողմանի թոքաբորբով SARS-CoV-2 ՊՇՌ դրական և բացասական պացիենտների հոսպիտալային և հետհոսպիտալային մահաբերության վերլուծությունը ցույց է տվել, որ ՊՇՌ դրական պացիենտները, ի տարբերություն ՊՇՌ բացասական պացիենտների, ունեցել են մահաբերության վիճակագրորեն հավաստի ($p < 0,01$) կրկնակի բարձր ռիսկ **[4]**: Հետևաբար ՀՇ-ով COVID-19 վարակին բնորոշ թոքաբորբով և SARS-

CoV-2 ՊՇՌ բացասական արդյունք ունեցող պացիենտների մանրակրկիտ ուսումնասիրման անհրաժեշտություն է առաջանում:

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել և վերլուծել COVID-19-ի կասկածով հոսպիտալացված պացիենտների շրջանում հիվանդության կլինիկական ընթացքի և լաբորատոր ցուցանիշների առանձնահատկությունները:

Ուսումնասիրության մեթոդներ

Հետազոտության մեջ ընդգրկվել են 2020-2021թթ. ընթացքում «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնում» ստացիոնար բուժման մեջ գտնվող այն պացիենտները, որոնց մոտ կրծքավանդակի ՀՇ-ով ախտորոշվել է COVID-19 ասոցացված թոքաբորբի պատկեր, սակայն քթնմայանից վերցված նմուշի ՊՇՌ կրկնակի հետազոտությունը SARS-CoV-2-ի վերաբերյալ (ստացիոնար ընդունման օրը և մեկ օր անց) տվել է բացասական արդյունք: Հետազոտվել են ընդհանուր թվով 50 COVID-19-վարակի կասկածով հոսպիտալացված պացիենտներ. ստացիոնար ընդունման պահին գնահատվել է հիվանդների ընդհանուր վիճակը, կատարվել է օբյեկտիվ զննում, կլինիկական տվյալների բնութագրում, լաբորատոր հետազոտություններ, ինչպես նաև՝ կրծքավանդակի ՀՇ: Հիվանդության ծանրության աստիճանը գնահատվել է՝ ըստ ԱՀԿ-ի կողմից մշակված ուղեցույցերի: Լաբորատոր հետազոտություններից կատարվել են արյան ընդհանուր և բիոքիմիական քննություններ, կոագուլոգրամա, ինչպես նաև քթնմայանի քսուկի ՊՇՌ հետազոտություն SARS-CoV-2-ի Ռ-ՆԹ-ն հայտնաբերելու նպատակով (ՀՀ-ում SARS-CoV-2-ի հայտնաբերման համար կատարվում է միայն քթնմայանի քսուկի ՊՇՌ): Վերջնական ախտորոշումը՝ «ՊՇՌ բացասական COVID-19», հիմնվել է համաճարակաբանական և կլինիկոլաբորատոր տվյալների վրա և հաստատվել է ՀՇ տիպիկ պատկերի արդյունքով:

Հետազոտությունից ստացված արդյունքները մշակվել են վարիացիոն վիճակագրության մեթոդով. Ստյուդենտ-Ֆիշերի գործակցի կիրառմամբ և կորելացիոն վերլուծությամբ:

Արդյունքներ

Հետազոտության մեջ ընդգրկված պացիենտների 58%-ը իգական սեռի հիվանդներ են, 42%-ը՝ արական: Հիվանդների միջին տարիքը կազմել է 60.16 ± 1.7 : Հաշվարկվել է, որ գանգատների ի հայտ գալուց հետո բժշկական օգնության դիմելու միջին տևողությունը կազմել է $10,58 \pm 0,8$ օր, ընդ որում, նրանց 60%-ը դիմել է հիվանդության 10 և ավելի օրերին, 28%-ը՝ 6-10-րդ օրը, և միայն 12%-ն է դիմել մինչև 5-րդ օրը: Ստացիոնար ընդունման պահին պացիենտների 76%-ի մոտ ընդհանուր վիճակը գնահատվել է ծանր ($SpO_2 \leq 93\%$, շնչառության հաճախականությունը $>30/ր$, առկա են շնչառական դիսթրեսի նշաններ), 10%-ի մոտ՝ ծայրահեղ ծանր (վերակենդանացման միջոցառումների անհրաժեշտություն, սուր շնչառական դիսթրես համախտանիշ, սեպսիս կամ սեպտիկ շոկ), 14%-ի մոտ՝ միջին ծանրության:

Աղյուսակ 1-ում ներկայացված է ստացիոնար ընդունման պահին պացիենտների գանգատների հանդիպման հաճախականությունը: Ինչպես երևում է աղյուսակից, առավել հաճախ հանդիպող գանգատներն են եղել ընդհանուր թուլությունը (98%) և ջերմության բարձրացումը (92%): Պացիենտների կեսից ավելին գանգատվել է դժվարացած շնչառությունից (60%) և հազից (54%): Հարկ է նշել, որ առանձին տարիքային խմբերում գանգատների հանդիպման հաճախականությունը հավաստի տարբերվել է՝ 65 տարեկանից բարձր հիվանդների գերակշռող մեծամասնությունը (89,47%) ունեցել է դժվարացած շնչառություն, սակայն հազից գանգատվել է նրանց միայն 42,10%-ը, ինչը կարող է վկայել շնչուղիների ախտահարման արդյունքում հազային ռեֆլեքսի ընկճման մասին: Մինչև 65 տ. անձինք հակառակը՝ առավել հաճախ գանգատվել են հազից (61,29%), քան դժվարացած շնչառությունից (41,93%):

COVID-19 ՊՇՌ կրկնակի բացասական հիվանդների շրջանում ընդունման պահին գանգատների հանդիպման հաճախականությունը.

Գանգատներ	Ընդհանուր խումբ		Մինչև 65տ. N=31		65տ.բարձր N=19		P-ի արժեքը
	N	%	N	%	N	%	
Ջերմության բարձրացում	46	92	30	96,77	16	84,21	<0,05
Հազ	27	54	19	61,29	8	42,10	<0,05
Խորխարտադրություն	3	6	2	6,45	1	5,26	>0,05
Ընդհանուր թուլություն	49	98	31	100	18	94,73	<0,05
Ախորժակի անկում	10	20	8	25,80	2	10,52	<0,05
Գլխացավ	5	10	3	9,67	2	10,52	>0,05
Մկանացավեր	13	26	7	22,58	6	31,57	<0,05
Սրտխառնոց, փսխում	8	16	7	22,58	1	5,26	<0,05
Դիարեա	2	4	2	6,45	0	0	<0,05
Փռշտոց, քթահոսություն	0	0	0	0	0	0	
Ցավ ըմպանում	2	4	2	6,45	0	0	<0,05
Դժվարացած շնչառություն	30	60	13	41,93	17	89,47	<0,05
Ցավ կրծքավանդակում	4	8	3	9,67	1	5,26	>0,05
Համի և հոտառության կորուստ կամ աղավաղում	3	6	2	6,45	1	5,26	>0,05

Հաջորդիվ ուսումնասիրվել է ուղեկցող հիվանդությունների տարածվածությունը: Առավել հաճախ հանդիպող ուղեկցող հիվանդություններն են եղել զարկերակային գերճնշումը (62%), սիրտ-անոթային հիվանդությունները (22%) և շաքարային դիաբետը (20%): Ավելի հազվադեպ է արձանագրվել ճարպակալում (10%), ուռուցքային հիվանդություններ (8%) և հիպոթիրեոզ (6%):

Անամնեստիկ տվյալների վերլուծությամբ պարզվել է, որ պացիենտների 74%-ի մոտ հիվանդությունը աստիճանաբար է սկսվել, իսկ 26%-ը նշել են սուր սկիզբ: Մինչ ստացիոնար բուժման դիմելը 56%-ը տնային պայմաններում ստացել է հակաբակտերիալ բուժում, 22%-ը՝ հորմոնալ դեղամիջոցներ (դեքսամետազոն): Օբյեկտիվ գննմամբ պացիենտների 64%-ը ունեցել է ֆերրիլ թվերի հասնող ջերմության բարձրացում, 28%-ի մոտ եղել է սուբֆերրիլ ջերմություն: Ընդունման պահին հիվանդների 86%-ի մոտ արձանագրվել է դեսատուրացիա (SpO₂-ի միջին ցուցանիշը կազմել է 85,88±1,13%): Հիվանդների 40%-ի մոտ զարգացել է սուր շնչական դիսթրես համախտանիշ, 6%-ի մոտ՝ հոգեշարժական գրգռվածություն (դելիրիում), 14%-ի մոտ՝ սրտի ռիթմի խանգարումներ: Հիվանդների 90%-ի մոտ դիտվել է մաշկի գունատություն, 16%-ի մոտ՝ ակրոցիանոզ և կենտրոնական ցիանոզ, 72%-ի մոտ գրանցվել է լեզվի չորություն: Թոքերի աուսկուլտատիվ տվյալներով կեսից ավելի պացիենտների մոտ լսվել է թուլացած շնչառություն և կրեպիտացիա, մեկ քառորդի մոտ՝ միայն թուլացած շնչառություն, 14%-ի մոտ՝ բրոնխիալ շնչառություն:

Վերլուծության են ենթարկվել նաև զարկերակային ճնշման, սրտի կծկման և շնչառության հաճախականության արժեքները: Միստոլիկ ճնշման միջին արժեքը կազմել է 131,8±2,83մմ/սս., դիաստոլիկը՝ 80,1±1,88մմ/սս, սրտի կծկման հաճախականությունը կազմել է 93,68±2,29գ/ր, շնչառության հաճախականությունը՝ 22,12±0,44/րոպե:

Լաբորատոր հետազոտությունների արդյունքում ստացված պարամետրերի միջին արժեքները ներկայացված են աղյուսակ 2-ում: Ինչպես երևում է, լիմֆոցիտների միջին ցուցանիշը ավելի քան երկու անգամ ցածր է եղել նորմայի ստորին սահմանից, ինչը բնորոշ է COVID-19 ՊՇՌ

դրական պացիենտներին և համընկնում է գրականության տվյալների հետ **[5,6,8,20]**: Հիվանդների 64%-ի մոտ թրոմբոցիտների միջին ցուցանիշը գերազանցել է նորմայի վերին սահմանը, ինչը նույնպես կարող է դիտվել նաև COVID-19 ՊՇՌ դրական պացիենտների շրջանում **[15]**: Արյան ընդհանուր քննության մնացած ցուցանիշները տատանվել են նորմայի սահմաններում:

Աղյուսակ 2.

COVID-19 ՊՇՌ բացասական պացիենտների արյան ընդհանուր և բիոքիմիական քննության ցուցանիշները:

Ցուցանիշներ	Միջին արժեք	Ստանդարտ շեղում	Նորմա
Հեմոգլոբին	137,12	3,83	120-170գ/լ
Էրիթրոցիտներ	4,77	0,12	4,2-6,2x10 ¹² /լ
Թրոմբոցիտներ	523,9	42,83	150-400x10 ⁹ /լ
Լեյկոցիտներ	8,74	0,58	4,00-10,00x10 ⁹ /լ
Լիմֆոցիտներ	11,5	1,05	25-40%
Սոնոցիտներ	3,5	0,292	4-12%
ԷՆԱ	20,5	1,41	2-15մմ/ժ
Հեմատոկրիտ	0,407	0,012	0,310-0,520
ԱԼՏ	25,5	3,11	<40Մ/լ
ԱՍՏ	25,7	4,52	<35Մ/լ
Միզանյութ	5,8	0,59	2,5-8,3մմոլ/լ
Կրեատինին	83,22	7,86	53-115մկմոլ/լ
Գլյուկոզա	7,25	0,6	4,2-6,4մմոլ/լ
Na ⁺	132,8	0,56	135-155մմոլ/լ
K ⁺	3,5	0,07	3,5-5,2մմոլ/լ
Ca ⁺	0,9	0,02	1,15-1,35մմոլ/լ
C-ռեակտիվ սպիտակուց	91,72	9,59	<5գ/լ
Ֆերիտին	529,66	64,7	13,0-350,0նգ/մլ
Պրոկալցիտոնին	0,859	0,346	<0,05նգ/մլ

Արյան բիոքիմիական քննության ցուցանիշների վերլուծությունից պարզվել է, որ K⁺-ը գտնվել է նորմայի ստորին սահմանում, Ca⁺-ի ցուցանիշը ցածր է եղել նորմայի հետ համեմատ, իսկ գլյուկոզայի միջին մակարդակը՝ բարձր նորմայի վերին սահմանից, ինչը որոշ պացիենտների մոտ հավանաբար կապված է մինչև հոսպիտալացումը հորմոնալ դեղամիջոցների ընդունման հետ: Հիպերգլիկեմիան կարող է պայմանավորված լինել նաև վիրուսի՝ պանկրեատիկ β բջիջների վրա (վերջիններս պարունակում են ԱՓՖ-2 ընկալիչներ) ուղղակի ցիտոպաթիկ ազդեցությամբ **[7]**: Առանձնահատուկ ուշադրություն է գրավում C ռեակտիվ սպիտակուցի (C reactive protein՝ CRP) միջին մակարդակի նորմայից ավելի քան 18 անգամ բարձրացումը, որը դիտվել է բոլոր պացիենտների մոտ: Գիտական տվյալները վկայում են, որ CRP- ի բարձրացումը համարվում է հիվանդության ծանրության պրեդիկտիվ ցուցանիշ **[13,17]**: Ավելին, մի շարք գիտական կոլեկտիվների կողմից CRP-ի բարձրացումը առաջարկվել է որպես «ցիտոկինային հողմի» ախտորոշիչ ցուցանիշ **[1,2]**: Այդ պատճառով մեր կողմից կորելացիոն վերլուծության է ենթարկվել COVID-19 ՊՇՌ բացասական պացիենտների մոտ CRP-ի քանակության և թոքահյուսվածքի ախտահարման մակերեսի միջև եղած կապը, որի նպատակով նախապես ընտրված ինտերվալով կազմվել է վարիացիոն շարք և կորելացիոն ցանց: Արդյունքում ստացված կորելացիոն գործակիցը կազմել է 0,2, որը վկայում է այն մասին, որ CRP-ի և թոքահյուսվածքի ախտահարման մակերեսի միջև չկա կորելացիոն կապ: Ֆերիտինի միջին արժեքը նորմայի վերին սահմանից բարձր է եղել 1,5 անգամ, իսկ պրոկալցիտոնինը՝ 17 անգամ, վերջինս կարող է վկայել երկրորդային բակտերիալ բարդությունների զարգացման վտանգի մասին:

Կոագուլոգրամայի միջինացված ցուցանիշների վերլուծությունը ցույց է տվել, որ COVID-19 ՊՇՌ բացասական պացիենտների մոտ դիտվում է պրոթրոմբինային ինդեքսի իջեցում, միջազգային նորմալացված հարաբերության, D-դիմերի և ֆիբրինոգենի մակարդակների բարձրացում:

Աղյուսակ 3.

COVID-19 ՊՇՌ բացասական պացիենտների շրջանում կոագուլոգրամայի տվյալները:

Ցուցանիշներ	Միջինը	Ստանդարտ շեղում	Նորմա
Պրոթրոմբինային ժամանակ	15,3	0,3	12-16վրկ
Պրոթրոմբինային ինդեքս	66,5	1,82	80-105%
Ֆիբրինոգեն	472,4	18,6	200-400մգ/դլ
Ակտիվ մասնակի թրոմբոպլաստինային ժամանակ	38,19	0,48	25-43վրկ
Միջազգային նորմալացված հարաբերություն	1,34	0,03	0,85-1,2
D-դիմեր	3,15	0,5	<0,55FEU/մլ

Պացիենտների 96%-ի մոտ ՀՇ արդյունքով ախտորոշվել է երկկողմանի պոլիսեզմենտար ինտերստիցիալ թոքաբորբ՝ «անթափանց ապակու» պատկերով:

Ըստ ԱՀԿ-ի կողմից մշակված COVID-19 դրական հիվանդների վարման ուղեցույցերի՝ բոլոր պացիենտներին նշանակվել է համապատասխան դեղորայքային բուժում և օքսիգենոթերապիա: Հոսպիտալացման միջին տևողությունը կազմել է 6,86±0,5 մահճակալ/օր: Բոլոր պացիենտները դուրս են գրվել ստացիոնարից կլինիկոլաբորատոր ցուցանիշների լավացումով՝ բացառությամբ մեկի, որի մոտ արձանագրվել է մահ՝ պայմանավորված պոլիօրգանային անբավարարությամբ:

Եզրակացություն

Ամփոփելով կատարված աշխատանքի արդյունքները՝ կարելի է անել հետևյալ եզրահանգումները:

COVID-19-ի կասկածով ստացիոնարում հոսպիտալացված պացիենտների մի մասի մոտ SARS-CoV-2 ՊՇՌ կրկնակի հետազոտությունը տվել է բացասական պատասխան, սակայն ՀՇ-ով առկա է եղել COVID-19-ին բնորոշ թոքաբորբի պատկեր: Նրանց կեսից ավելին բուժօգնության է դիմել հիվանդության պրոգրեսիվ փուլում՝ 10-րդ և ավելի օրերին: Գերակշռող մեծամասնության մոտ ստացիոնար դիմելիս ընդհանուր վիճակը գնահատվել է ծանր և ծայրահեղ ծանր: Առավել հաճախ հանդիպող գանգատներն են եղել ընդհանուր թուլությունը և ջերմության բարձրացումը, պացիենտների կեսից ավելին ունեցել է նաև դժվարացած շնչառություն: 65 տարեկանից բարձր անձանց միայն 42,1% է գանգատվել հազից, մինչդեռ նրանց մեծամասնությունն ունեցել է դժվարացած շնչառություն: Ընդունման պահին պացիենտների 86%-ը եղել է դեսատուրացված, իսկ 40%-ի մոտ զարգացել է սուր շնչական դիսթրես համախտանիշ: Արձանագրված լաբորատոր հիմնական փոփոխություններն են եղել լիմֆոպենիան, թրոմբոցիտոզը, հիպերգլիկեմիան, CRP-ի, ֆերիտինի, պրոկալցիտոնինի, ֆիբրինոգենի, D-դիմերի մակարդակների բարձրացումը:

Այսպիսով՝ COVID-19 կրկնակի ՊՇՌ բացասական պացիենտների մոտ արձանագրված կլինիկոլաբորատոր համալիր փոփոխությունները առավել հաճախ դիտվում են նաև ՊՇՌ դրական պացիենտների շրջանում, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ COVID-19 վարակի ժամանակ, երբ ախտաբանական պրոցեսի առաջնային, դոմինանտ օջախ համարվում են ստորին շնչուղիները, և թոքաբորբը հանդիսանում է կլինիկական ձև, այդ դեպքում վերին շնչուղիներից (քթոմայան) վերցված նմուշի ՊՇՌ հետազոտությունը SARS-CoV-2-ի նկատմամբ հիվանդության պրոգրեսիայի փուլում կարող է լինել բացասական: Հանրապետությունում ախտորոշիչ այլ մեթոդների բացակայության պարագայում, այս հիվանդների վարումը իրականացվում է COVID-19 վարակի ուղեցույցերով:

Գրականության ցանկ

1. Bhaskar S., Sinha A., Banach M., et al. Cytokine Storm in COVID-19-Immunopathological Mechanisms, Clinical Considerations, and Therapeutic Approaches: The REPROGRAM Consortium Position Paper. *Front Immunol.* 2020; 11. 1648.- Published online.
2. Caricchio R., Gallucci M., Dass C., et al. Preliminary predictive criteria for COVID-19 cytokine storm. *Annals of the Rheumatic Diseases.* 2021; 80(1).-p.88–95.
3. Cui J., Li F., Shi ZL. Origin and evolution of pathogenic coronaviruses. *Nat Rev. Microbiol.* 2019, 17(3).-p.181-192
4. Gaipov A., Gusmanov A., Abbay A. et al. SARS-CoV-2 PCR-positive and PCR negative cases of pneumonia admitted to the hospital during the peak of COVID-19 pandemic: analysis of in-hospital and post-hospital mortality.2021 May 20;21(1):458.- Published online
5. Goyal P., Choi J., Pinheiro L. et al. Clinical characteristics of COVID-19 in New York city. *N. Engl. J. Med.*2020.382.- p. 2372-2374
6. Guan WJ, Ni ZY, Hu Y. et al. China Medical Treatment Expert Group for COVID-19. Clinical characteristics of coronavirus disease 2019 in China. *N. Engl. J. Med.*2020;382(18).- p. 1708-1720
7. Gupta A. Madhavan M., Sehgal K. et al. Extrapulmonary manifestations of COVID-19. *Nat. Med.* 2020.- 26(7).-p. 1017-1032
8. Huang C., Wang Y., Li X. et al. Clinical features of patients infected with 2019 novel coronavirus in Wuhan, China. *Lancet* 2020; 395.- p.497-506
9. Huang P., Liu T., Huang L. et al. Use of chest CT in combination with negative RT-PCR assay for the 2019 novel coronavirus but high clinical suspicion. *Radiology* 2020: 295(1). p. 22-23
10. Jansen L., Tegomoh B., Langet K. et al. Investigation of a SARS-CoV-2 B.1.1.529 (Omicron) Variant Cluster - Nebraska, November-December 2021. //MMWR.-2021 Dec 31.-70(5152).-p.1782-1784.
11. Kanne JP, Little BP, Chung JH et al. Essentials for radiologists on COVID-19: an update. *Radiology* 2020;296(2).- p. E113-E114
12. Kotfis K., Skonieczna-Zydecka K. COVID-19: gastrointestinal symptoms and potential sources of 2019-nCoV transmission. *Anaesthesiol Intensive Ther.* 2020; 52(2).- p.171-172
13. Laillegrand J. R., Garnier M., Spaeth A. et al. Elevated plasma IL-6 and CRP levels are associated with adverse clinical outcomes and death in critically ill SARS-CoV-2 patients: inflammatory response of SARS-CoV-2 patients. *Ann Intensive Care.* 2021.11,9. Published online
14. Leung G. M., Hedley A. J., Ho L. M. et al. The epidemiology of severe acute respiratory syndrome in the 2003 Hong Kong epidemic: an analysis of all 1755 patients. *Ann. Intern. Med.*2004; 141.-p.662–673
15. Lucijanac M., Krecak I., Soric E., Thrombocytosis in COVID-19 patients without myeloproliferative neoplasms is associated with better prognosis but higher rate of venous thromboembolism. *Blood Cancer J.* 2021.- 11(11).-Published online
16. Pan F., Ye T., Sun P. et al. Time course of lung changes on chest CT during recovery from 2019 novel coronavirus (COVID-19) pneumonia. *Radiology* 2020;295(3).-p. 715-721
17. Potempa L. A., Rajab I. M., Hart P. C., et al., Insights into the use of C-reactive protein as a diagnostic index of disease severity in COVID-19 infections. *AM J Trop Med Hyg.* 2020. 103(2).- p.561-563
18. Singhal T. A review of coronavirus disease -2019 (COVID-19). *Indian J Pediatr.* 2020;87.- p.281-286
19. Tao A., Zhenlu Y., Hongyan H. et al. Correlation of Chest CT and RT-PCR Testing for Coronavirus Disease 2019 (COVID-19) in China: A Report of 1014 Cases. *Radiology.*2020; 296(2).- p.E32-E40
20. Terpos E., Ntanasis-Stathopoulos I., Elalamy I. et al. Hematological findings and complications of COVID-19. *Am. J. Hematol.* 2020. 95.- p. 834-847
21. Wang D., Hu B., Hu C. et al. Clinical characteristics of 138 hospitalized patients with 2019 novel coronavirus-infected pneumonia in Wuhan, China. *JAMA* 2020; 323(11).- p.1061-1069
22. Wang W, Xu Y, Gao R, et al. Detection of SARS-CoV-2 in different types of clinical specimens.// *JAMA.*- 2020.-323(18).-p.1843-1844.
23. Wolfel R., Corman V., Goggemos W. et al. Virological assessment of hospitalized patients with COVID-19. *Nature.* 2020. 581.-p. 465-469.
24. Xie X., Zhong Z., Zhao W. et al. Chest CT for typical 2019-nCoV pneumonia: relationship to negative RT-PCR testing. *Radiology* 2020: 296(2).- p. E41-E45.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՇՆՁԱՌԱԿԱՆ ՕՐԳԱՆՆԵՐԻ
ՀԻՎԱԴՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ԱՂՏՈՏՎԱԾՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՎՈՂ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ**

ԳԱՅԱՆԵ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան
Գիտահետազոտական կենտրոն
Շրջակա միջավայրի հիգիենայի և թունաբանության լաբորատորիա
բժշկական գիտությունների թեկնածու, գիտաշխատող
gayane.kirakosyanvladimir@gmail.com

ՍՈՒՍԱՆՆԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան
Գիտահետազոտական կենտրոն
Շրջակա միջավայրի հիգիենայի և թունաբանության լաբորատորիա
կրտսեր գիտաշխատող
susannamuradyan5555@gmail.com

ՍՈՒՍԱՆՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան
Գիտահետազոտական կենտրոն
Շրջակա միջավայրի հիգիենայի և թունաբանության լաբորատորիա
բժշկական գիտությունների թեկնածու, գիտաշխատող
spoghosyan9@gmail.com

ԲԱՎԱԿԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան
Գիտահետազոտական կենտրոն
Շրջակա միջավայրի հիգիենայի և թունաբանության լաբորատորիա
կրտսեր գիտաշխատող
bavakan.khachatryan@mail.ru

Համառոտագիր

Ներկայումս «Մարդու առողջություն և շրջակա միջավայր» խնդիրը գիտնականների ուշադրության կենտրոնում է, քանի որ աճում են հիվանդացության ցուցանիշները, այդ թվում շնչառական, սիրտ-անոթային, նյարդային, ուռուցքային և այլ հիվանդությունների թիվը: Վերջին տարիներին բազմաթիվ ուսումնասիրություններ կան, որոնք փաստում են շնչառական համակարգի զարգացման և հիվանդությունների առաջացման մեջ շրջակա միջավայրի ազդեցության դերի մասին: Հաշվարկվել են ինտենսիվ ցուցանիշները ընդհանուր շնչառական օրգանների հիվանդությունների և ասթմայի համար: Հիվանդացության դինամիկ պատկերը ստանալու համար կատարվել է նաև միջին քրոնոլոգիական ցուցանիշների հաշվարկ՝ 2005-2010 թթ. և 2011-2016 թթ. համար: Ուսումնասիրությունները կատարվել են հետազոտման տարբեր մեթոդների օգտագործմամբ՝ հիգիենիկ, սանիտարաքիմիական, վիճակագրական և այլն: Արագաճողի և Արարատի մարզերում ընդհանուր շնչառական օրգանների հիվանդությունների հիվանդացության միջին քրոնոլոգիական ցուցանիշների համեմատությունից պարզ է դառնում, որ երեք տարածաշրջաններում՝ Աշտարակում, Ապարանում և Արտաշատում, դրանք աճել են, ընդ որում ամենաբարձր աճ գրանցվել է Աշտարակում՝ 63%: Մնացած երկու տարածաշրջաններում՝ Թալինում և Մասիսում տեղի է ունեցել միջին քրոնոլոգիական ցուցանիշի

նվազում՝ համապատասխանաբար 21.4%-ով և 19,2%-ով: Ասթմայի հիվանդացության միջին քրոնոլոգիական ցուցանիշների վերլուծությունը ցույց է տվել, որ դրանք աճի միտում ունեն Աշտարակի և Մասիսի տարածաշրջաններում՝ համապատասխանաբար 32.4%-ով և 3,2%-ով: Արագածոտնի մարզի տարածաշրջանների հողի նմուշներում հայտնաբերվող քլորօրգանական միացությունների գումարային միջին տարեկան կոնցենտրացիաների նշանակալի բարձր մակարդակներ գրանցվել են մարզի երեք տարածաշրջաններում էլ: Ընդհանուր շնչառական օրգանների հիվանդությունների և ասթմայի հիվանդացության միջին քրոնոլոգիական ցուցանիշների ամենաբարձր աճ գրանցվել է Աշտարակում՝ համապատասխանաբար 63% և 32.4%: Արարատի մարզում նույնպես ՔՕԹ-երի մնացորդային քանակները հայտնաբերվում են բարձր մակարդակներով, բայց Մասիսում՝ ավելի բարձր՝ ի համեմատ Արտաշատի (համապատասխանաբար ԴԴՏ 0.168×10^{-2} մգ/կգ և 0.028×10^{-2} մգ/կգ): Մասիսում գրանցվել է ասթմայի հիվանդացության միջին քրոնոլոգիական ցուցանիշի աճ 3.2%-ով: Մասիսում նաև բուսական գյուղատնտեսական մթերքների նմուշներում են հայտնաբերվել ՔՕԹ-երի մնացորդային քանակներ. ԴԴԵ-ի կոնցենտրացիաները տատանվել են $0,00035 \times 10^{-2}$ մգ/կգ - $0,0076 \times 10^{-2}$ մգ/կգ (հայտնաբերման հաճախականությունը՝ 33-100%): Ձեռք բերված տվյալների հիման վրա չի կարելի բացառել շրջակա միջավայրում շրջանառվող ՔՕԹ-երի հնարավոր խթանիչ ազդեցությունը շնչառական հիվանդությունների հաճախականության ստացված պատկերի վրա: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ բազմաթիվ գործոններ կարող են ազդել հիվանդացության մակարդակի վրա: Քսենոբիոտիկների դերն առավել մանրամասն գնահատելու, համապարփակ պատկեր ստանալու և վերջնական եզրակացություններ անելու համար անհրաժեշտ է շարունակել աշխատանքը և կատարել լրացուցիչ ուսումնասիրություններ:

Բանալի բառեր և բառակապակցություններ. շնչառական համակարգի հիվանդություններ, շրջակա միջավայր, միջին քրոնոլոգիական ցուցանիշներ, քլորօրգանական թունաքիմիկատներ:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ РАСПРОСТРАНЕННОСТИ РЕСПИРАТОРНЫХ ЗАБОЛЕВАНИЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ И ЗАГРЯЗНЕНИЯ ОКРУЖАЮЩЕЙ СРЕДЫ

ГАЯНЕ КИРАКОСЯН

Ереванский государственный медицинский университет имени Мхитара Гераци
Научно-исследовательский центр
лаборатория гигиены окружающей среды и токсикологии
кандидат медицинских наук, научный сотрудник
gayane.kirakosyanvladimir@gmail.com

СУСАННА МУРАДЯН

Ереванский государственный медицинский университет имени Мхитара Гераци
Научно-исследовательский центр
лаборатория гигиены окружающей среды и токсикологии
младший научный сотрудник
susannamuradyan5555@gmail.com

СУСАННА ПОГОСЯН

Ереванский государственный медицинский университет имени Мхитара Гераци
Научно-исследовательский центр
лаборатория гигиены окружающей среды и токсикологии
кандидат медицинских наук, научный сотрудник
spoghosyan9@gmail.com

БАВАКАН ХАЧАТРЯН

Ереванский государственный медицинский университет имени Мхитара Гераци
Научно-исследовательский центр
лаборатория гигиены окружающей среды и токсикологии
младший научный сотрудник
bavakan.khachatryan@mail.ru

Аннотация

В настоящее время проблема «здоровье человека – окружающая среда» находится в центре внимания ученых, так как растет заболеваемость, в том числе респираторными, сердечно-сосудистыми, неврологическими, онкологическими и другими заболеваниями. В последние годы многочисленными исследованиями была показана роль окружающей среды в развитии заболеваний дыхательной системы. Нами были рассчитаны интенсивные показатели для общей заболеваемости болезнями органов дыхания и астмы в марзах Арагацотн и Арарат. Для получения динамической картины заболевания были также рассчитаны средние хронологические показатели (СХП) за 2005-2010 и 2011-2016 годы. Исследования проводились с использованием различных методов исследования: гигиенических, санитарно-химических, статистических и др. Сравнение средних хронологических показателей общей заболеваемости респираторными заболеваниями в марзах Арагацотн и Арарат показало, что в трех районах: Аштаракском, Апаранском и Арташатском, эти показатели повысились, причем наибольший прирост был зарегистрирован в Аштараке - 63%. В двух других районах – в Талине и Масисе, СХП снизились на 21,4 % и 19,2 %, соответственно. Анализ СХП заболеваемости бронхиальной астмой выявил тенденцию к увеличению в Аштаракском и Масисском районах на 32,4% и 3,2%, соответственно. Во всех районах марза Арагацотн регистрировались высокие уровни среднегодовых концентраций хлорорганических пестицидов (ХОП) в пробах почвы. Наибольший прирост СХП заболеваемости общими респираторными заболеваниями и бронхиальной астмой был отмечен в Аштараке, соответственно 63,0% и 32,4%. В Масисе по сравнению с Арташатам также были обнаружены более высокие уровни

содержания ХОП в почве (соответственно ДДТ $0,168 \times 10^{-2}$ мг/кг и $0,028 \times 10^{-2}$ мг/кг), как и повышение СХП для бронхиальной астмы - на 3,2%. Остаточные количества ХОП в Масисе были обнаружены и в образцах растительной сельхозпродукции – концентрации ДДЕ колебались в пределах $0,00035 \times 10^{-2}$ мг/кг – $0,0076 \times 10^{-2}$ мг/кг (частота обнаружения 33-100%). На основании полученных данных нельзя исключить возможный триггерный вклад ХОП, циркулирующих в окружающей среде, в полученную картину заболеваемости респираторными заболеваниями. Однако следует отметить, что многие факторы могут влиять на показатели заболеваемости. Для того чтобы более детально оценить роль ксенобиотиков, получить комплексную картину и сделать окончательные выводы, необходимо продолжить работу и провести дополнительные исследования.

Ключевые слова и словосочетания: заболевания дыхательной системы, окружающая среда, средние хронологические показатели, хлорорганические пестициды.

SOME ISSUES OF THE RESPIRATORY DISEASES PREVALENCE AND ENVIRONMENTAL POLLUTION IN THE REPUBLIC OF ARMENIA

GAYANE KIRAKOSYAN

Yerevan State Medical University after Mkhitar Heratsi
Scientific Research Center
Laboratory of Environmental Hygiene and Toxicology
PhD in Medical Sciences, Researcher
gayane.kirakosyanvladimir@gmail.com

SUSANNA MURADYAN

Yerevan State Medical University after Mkhitar Heratsi
Scientific Research Center
Laboratory of Environmental Hygiene and Toxicology
Junior Researcher
gayane.kirakosyanvladimir@gmail.com

SUSANNA POGHOSYAN

Yerevan State Medical University after Mkhitar Heratsi
Scientific Research Center
Laboratory of Environmental Hygiene and Toxicology
PhD in Medical Sciences, Researcher
spoghosyan9@gmail.com

BAVAKAN KHACHATRYAN

Yerevan State Medical University after Mkhitar Heratsi
Scientific Research Center
Laboratory of Environmental Hygiene and Toxicology
Junior Researcher
bavakan.khachatryan@mail.ru

Abstract

At present, the issue of human health - the environment is in the focus of scientists as the morbidity is growing, including respiratory, cardiovascular, neurological, oncological, and other diseases. Recently, there have been numerous studies proving the role of the environment in the development of diseases of the respiratory system. Prevalence rates (per 100 000 population) of total respiratory diseases and asthma, as well as average chronological indicators (ACh) for 2005-2010 and 2011-2016, were calculated to get the dynamic picture of these diseases in Aragatsotn and Ararat provinces. The study was carried out using different research methods: hygienic, sanitary-chemical, statistical, etc. Comparison of the ACh total respiratory diseases in Aragatsotn and Ararat provinces showed increasing tendency in three studied areas: Ashtarak, Aparan, and Artashat, with the highest values in Ashtarak - 63%. In Talin and Masis regions the ACh decreased by 21.4% and 19.2%, respectively. The analysis of the ACh calculated for asthma showed an increasing tendency in Ashtarak and Masis regions by 32.4% and 3.2%, respectively. Significantly high levels of average annual concentrations of organochlorine pesticides (OCPs) were found in the soil samples of Aragatsotn province. The highest values of the ACh of total respiratory diseases and asthma were also registered in Ashtarak, respectively 63% and 32.4%. In Ararat province, the OCPs residues in soil were also found at high levels, but in Masis compared to Artashat they were higher: DDT 0.168×10^{-2} mg/kg and 0.028×10^{-2} mg/kg, respectively. In line with this, Masis ACh of asthma increased by 3.2%. Residual amounts of OCPs in agricultural plant production samples were as follows: DDE ranged from 0.00035×10^{-2} mg/kg to 0.0076×10^{-2} mg/kg (detection frequency 33-100%). Based on data obtained, a possible trigger contribution of OCPs circulating in the environment to the pattern of morbidity of respiratory diseases cannot be ruled out. However, it should be noted that many factors can affect morbidity rates. In order to evaluate the role of xenobiotics in more depth, get a comprehensive picture, and make conclusions, the work should be continued and further studies should be carried out.

Keywords and phrases: respiratory diseases, environment, average chronological indicators, pollution, organochlorine pesticides.

Ներածություն

Մարդու առողջության ուսումնասիրումը շրջակա միջավայրի գործոնների ազդեցությունների տեսանկյունից արդիական հարցերից մեկն է: Ինչպես հայտնի է, շրջակա միջավայրը այն ամենի ամբողջությունն է, ինչը շրջապատում է մարդուն ողջ կյանքի ընթացքում իր նշանակալի բաղադրիչներով՝ հող, օդ, ջուր: Առավել կարևոր նշանակություն ունեն տեխնաձին բաղադրիչները, որոնք ներառում են մարդկային քաղաքակրթության բոլոր դրսևորումները: Շրջակա միջավայրի տարրերը կարելի է դիտարկել որպես հանրային առողջության ձևավորման պայման, որը բնութագրվում է հիմնական պարամետրերով՝ հիվանդացություն, հաշմանդամություն, ժամանակավոր անաշխատունակություն, կյանքի միջին տևողություն և այլն **[1,2,7,12,13,19,20]**: Մարդու առողջության վրա անմիջական կամ անուղղակի ազդեցություն ունեն շրջակա միջավայրի տարբեր գործոնները, որոնք օժտված են բազմաբնույթ հատկություններով: Արդյունքում այդ բացասական երևույթները բերում են էկոկենսաբանական համակարգերի խախտմանը՝ հանգեցնելով բնակչության առողջության վատթարացմանը, կյանքի միջին տևողության նվազեցմանը և այլ անբարենպաստ ազդեցությունների դրսևորմանը **[3,8,14]**: Մարդկային ցանկացած գործունեություն ավելի հաճախ է դառնում շրջակա միջավայրի աղտոտման աղբյուր: Նման պայմաններում հիվանդացության ցուցանիշները ոչ միայն չեն նվազում, այլև ի հայտ են գալիս նոր՝ նախկինում անհայտ հիվանդություններ, որոնց առաջացման պատճառները շատ դժվար է հայտնաբերել, և դրանց մեծ մասն ավելի դժվար է բուժվում, քան նախկինում: Այդ պատճառով ներկայումս «Մարդու առողջություն և շրջակա միջավայր» խնդիրը գիտնականների ուշադրության կենտրոնում է, երբ աճում են հիվանդացության ցուցանիշները, այդ թվում շնչառական, սիրտ-անոթային, նյարդային, ուռուցքային և այլ հիվանդությունների թիվը **[10,16]**: Վերջին տարիներին բազմաթիվ ուսումնասիրություններ կան, որոնք փաստում են շնչառական համակարգի զարգացման և հիվանդությունների առաջացման մեջ շրջակա միջավայրի ազդեցության դերի մասին: Ըստ այդ հետազոտությունների արդյունքների՝ ԱՄՆ-ի չափահաս բնակչության 24 միլիոնն ունի քրոնիկ օբստրուկտիվ թոքային հիվանդություններ, 23 միլիոնը տառապում է ասթմայով, ստորին շնչուղիների քրոնիկ հիվանդությունները մահվան պատճառների մեջ չորրորդ տեղն են զբաղեցնում **[14,17]**: Արևմտյան Մակեդոնիայի մի շարք քաղաքներում կատարված հետազոտությունների արդյունքները վկայում են շնչառական համակարգի վրա շրջակա միջավայրի աղտոտման վնասակար ազդեցության մասին, որն արտահայտվում է ռինիտների և ինֆեկցիոն բրոնխիտների թվի ավելացմամբ **[11,18]**: Վաղուց ապացուցված է, որ բացի վարակային պատճառներից (վիրուսներ, բակտերիաներ)՝ շրջակա միջավայրի տարբեր ոչ վարակային գործոններ ևս կարող են առաջացնել կամ սրել շնչառական համակարգի տարբեր քրոնիկ հիվանդությունները: Այժմ լավ հայտնի են շրջակա միջավայրի շատ ռիսկային գործոններ, ինչպիսիք են՝ ալերգենները, ծխախոտի ծուխը, օդը աղտոտող բազմազան նյութեր և, իհարկե, քիմիական միացությունները, որոնց մեջ իրենց ուրույն տեղն ունեն թունաքիմիկատները **[21,22]**: Դրանց ազդեցության կարևոր առանձնահատկությունն այն է, որ միտումնավոր ներմուծվում են արտաքին միջավայր և բացասական ազդեցություն կարող են ունենալ ինչպես գյուղաբնակների, այնպես էլ ընդհանուր ազգաբնակչության վրա, ինչը դրսևորվում է տարբեր նոզոլոգիաների տարածվածության աճով: Թունաքիմիկատները մարդու օրգանիզմ կարող են թափանցել տարբեր ուղիներով՝ շնչառական համակարգով, արյան միջոցով, մաշկով կամ էլ պարենտերալ ներմուծման միջոցով **[4,5,6,9]**: Շրջակա միջավայրում շրջանառվող բազմաթիվ քսենոբիոտիկներ, ներառյալ թունաքիմիկատները, կարող են դրսևորել պոլիտրոպ հատկություններ՝ այդ թվում ունենալ նաև հեռահար ազդեցություններ: Էկոլոգիական անբարենպաստ իրավիճակի ազդեցությունը կարող է

լինել անմիջապես կամ կուտակային, որն արտահայտվում է ամիսներ, տարիներ, երբեմն՝ նույնիսկ տասնամյակներ անց: Բազմաթիվ գիտական ուսումնասիրություններ են նվիրված էկոլոգիական գործոնների և հիվանդությունների տարբեր տեսակների միջև փոխկապակցությունների ուսումնասիրությանը: Առողջության ցուցանիշների և շրջակա միջավայրի վիճակի պատճառաբանական հարաբերությունների վերլուծության ժամանակ հետազոտողները նախ և առաջ ուշադրություն են դարձնում առողջության ցուցանիշների կախվածությանը շրջակա միջավայրի առանձին բաղադրիչների հնարավոր բացասական ազդեցություններից [13, 15]:

Անհրաժեշտ է նշել, որ Հայաստանի Հանրապետության համար նույնպես արդիական են շրջակա միջավայրի տարբեր քսենոբիոտիկներով աղտոտվածության մակարդակների և դրանց հետ կապված առողջության ուսումնասիրման հարցերը, ինչին նվիրված են ՀՀ տարբեր մարզերում կատարվող համալիր ուսումնասիրությունները:

Տեսամեթոդական հիմքեր

Ներկայումս հիվանդացության ընդհանուր կառուցվածքում նկատվում է շնչառական օրգանների հիվանդությունների քանակի ավելացման միտում: Այդ պատճառով կատարվել է այդ համակարգի հիվանդությունների հիվանդացության ցուցանիշների վերլուծություն Հայաստանի Հանրապետության որոշ մարզերում՝ ինտենսիվ ցուցանիշների հիման վրա: Հիվանդացության ինտենսիվ ցուցանիշը տարբեր ազդակների, այդ թվում նաև շրջակա միջավայրի գործոնների ազդեցության նկատմամբ մարդու օրգանիզմի կողմից տրվող արձագանքի առավել բնորոշ և վիճակագրորեն հավաստող ցուցանիշ է, ճշգրիտ արտացոլելով այդ ազդեցությունը, թույլ է տալիս բացահայտել դրա վրա ազդող հնարավոր գործոնները:

Երկու մարզերում՝ Արագածոտնի (Աշտարակի, Ապարանի, Թալինի տարածաշրջան) և Արարատի (Արտաշատի, Մասիսի տարածաշրջան) կատարվել է շնչառական օրգանների հիվանդությունների հիվանդացության ինտենսիվ ցուցանիշների վերլուծություն՝ հետհայաց (ռետրոսպեկտիվ) հետազոտության ձևով (2005-2016 թթ.): Հետազոտության նյութ է ծառայել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության վարչական վիճակագրական տարեկան հաշվետվություն «Առողջության առաջնային պահպանման հաստատությունների սպասարկման տարածքում բնակվող անձանց մոտ գրանցված հիվանդությունների մասին» №3 ձևը: Վերջինիս տվյալների վերլուծությունը հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու այդ համակարգի հիվանդությունների տարածվածության մասին: Ինտենսիվ ցուցանիշները հաշվարկվել են ընդհանուր շնչառական օրգանների հիվանդությունների և ապամայի համար: Հիվանդացության դինամիկ պատկերը ստանալու համար մեր կողմից հաշվարկվել են միջին քրոնոլոգիական ցուցանիշները՝ 2005-2010 թթ. և 2011-2016 թթ. համար:

Ուսումնասիրության մեթոդներ

Ուսումնասիրությունները կատարվել են հետազոտման տարբեր մեթոդների օգտագործմամբ՝ հիգիենիկ, սանիտարաքիմիական, վիճակագրական և այլն: Հետազոտությունները կատարվել են Երևանի պետական բժշկական համալսարանի գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի ամրապնդման և զարգացման ծրագրի շրջանակներում, ինչպես նաև՝ ՀՀ կրթության գիտության նախարարության և գիտության պետական կոմիտեի ֆինանսական աջակցությամբ 15T-3D142 գիտական ծրագրի շրջանակներում:

Ստացված արդյունքները

Արագածոտնի մարզի երեք տարածաշրջանների՝ Աշտարակի, Ապարանի և Թալինի բնակչության համար ստացել ենք հետևյալ պատկերը: Հիվանդացության ինտենսիվ ցուցանիշների տվյալները բերված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.

Արագածոտնի մարզում ընդհանուր շնչառական օրգանների հիվանդությունների և ասթմայի հիվանդացության ինտենսիվ ցուցանիշները 2005-2016 թթ. (ձև №3):

Տարի	Աշտարակ		Ապարան		Թալին	
	Ընդհանուր շնչ. օրգ-երի հիվ-եր	Ասթմա	Ընդհանուր շնչ. օրգ-երի հիվ-եր	Ասթմա	Ընդհանուր շնչ. օրգ-երի հիվ-եր	Ասթմա
2005	3153	70	2083.6	27.2	2301.8	11.9
2006	3428.4	70	2719.1	27.2	6905.4	104.4
2007	4041.2	80.9	2878	31.8	6899.4	83.5
2008	3653.9	79.3	2583	31.8	7412.7	92.4
2009	4464.3	82.4	2533	345	8396.2	74.5
2010	4921.7	62.2	2632.9	31.8	7489.8	71.6
2011	4406.8	76.2	2614.7	31.8	5647.2	74.5
2012	4525	79.3	2328.7	31.8	4705	65.6
2013	4917	80.9	2351.4	31.8	5018	59.6
2014	5421	112	2401.4	31.8	5411.6	50.7
2015	5620.1	79.3	2460.4	36.3	4618.5	56.6
2016	18596.3	222.4	13940.7	217.9	14726.1	113.3

Այս մարզում հիվանդացության դինամիկ պատկեր ստանալու և ինտենսիվ ցուցանիշների բնութագրման համար հաշվարկվել են միջին քրոնոլոգիական ցուցանիշները՝ 2005-2010 թթ. և 2011-2016 թթ., ու կատարվել է համեմատական վերլուծություն՝ ըստ տարիների: Պատկերն այսպիսին է (աղ. 2)

Աղյուսակ 2.

Արագածոտնի մարզում ընդհանուր շնչառական օրգանների հիվանդությունների և ասթմայի հիվանդացության միջին քրոնոլոգիական ցուցանիշները (ձև №3):

Տարածաշրջան		2005-2010 թթ.	2011-2016 թթ.
Աշտարակ	Ընդհանուր շնչառական օրգ-երի հիվ-եր	3925	6396.9
	Ասթմա	75.7	100.2
Ապարան	Ընդհանուր շնչառական օրգ-երի հիվ-եր	2614.3	3563.9
	Ասթմա	93.1	51.3
Թալին	Ընդհանուր շնչառական օրգ-երի հիվ-եր	6901.9	5423.2
	Ասթմա	79.3	65.3

Ինչպես երևում է աղյուսակից, Թալինի տարածաշրջանում ընդհանուր շնչառական օրգանների հիվանդությունների համար գրանցվել է միջին քրոնոլոգիական ցուցանիշի նվազում 21.4%-ով, իսկ մյուս երկու տարածաշրջաններում՝ Աշտարակում և Ապարանում, այն աճել է համապատասխանաբար 63%-ով և 36.3%-ով: Ըստ Արագածոտնի մարզի համար հաշվարկված միջին քրոնոլոգիական ցուցանիշների՝ ասթմայի դեպքում ստացել ենք հետևյալ պատկերը: Մարզի մեկ տարածաշրջանում՝ Աշտարակում, նկատվել է ցուցանիշի աճ 32.4%-ով: Մնացած երկուսում՝ Ապարանում և Թալինում այն նվազել է համապատասխանաբար 44.9 %-ով և 17.6 %-ով:

Երկրորդ մարզը, որտեղ կատարվել է շնչառական օրգանների հիվանդությունների հիվանդացության ինտենսիվ ցուցանիշների վերլուծություն, Արարատն է՝ Արտաշատի և Մասիսի տարածաշրջաններով (աղ.3):

Աղյուսակ 3.

Արարատի մարզում ընդհանուր շնչառական օրգանների հիվանդությունների և ասթմայի հիվանդացության ինտենսիվ ցուցանիշները 2005-2016թթ. (ձև N°3):

Տարի	Մասիս		Արտաշատ	
	Ընդհանուր շնչ. օրգ-երի հիվ-եր	Ասթմա	Ընդհանուր շնչ. օրգ-երի հիվ-եր	Ասթմա
2005	5062.3	67.6	3032.9	145.2
2006	6068.2	75.2	4129.5	170.9
2007	7369.8	84.1	4357.4	161.3
2008	8773.4	108.4	3880.1	153.7
2009	9173.7	108.4	4680	153.7
2010	7080.4	110.9	4766	86
2011	4996	88	4081.1	58.1
2012	4569	81.6	4009.1	63.4
2013	4673.5	80.3	3616.7	67.7
2014	5100.6	86.7	3022.2	71
2015	6671.2	86.7	2960.9	73.1
2016	13469.8	202.7	16152.5	232.2

Այս մարզում ևս հաշվարկվել են միջին քրոնոլոգիական ցուցանիշները՝ 2005-2010 թթ. և 2011-2016 թթ. համար ու կատարվել է համեմատական վերլուծություն՝ ըստ տարիների: Տվյալները ներկայացված են աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4.

Արարատի մարզում ընդհանուր շնչառական օրգանների հիվանդությունների և ասթմայի հիվանդացության միջին քրոնոլոգիական ցուցանիշները (ձև N°3):

Տարածաշրջան		2005-2010	2011-2016
Մասիս	Ընդհանուր շնչառական օրգ-երի հիվ-եր	7491.3	6049.4
	Ասթմա	93.1	96.1
Արտաշատ	Ընդհանուր շնչառական օրգ-երի հիվ-եր	4190.5	4745.1
	Ասթմա	151	84.1

Ինչպես երևում է աղյուսակից, Մասիսի տարածաշրջանում ընդհանուր շնչառական օրգանների հիվանդությունների հիվանդացության միջին քրոնոլոգիական ցուցանիշը նվազել է 19.2 %-ով, իսկ մյուսում՝ Արարատում, այն աճել է 13.2 %-ով: Ասթմայի համար ստացված տվյալներն այսպիսին են: Ցուցանիշի աճ գրանցվել է Մասիսում՝ 3.2 %-ով, իսկ Արտաշատում այն նվազել է 44.3 %-ով:

Երկու մարզերի՝ ընդհանուր շնչառական օրգանների համար ստացված միջին քրոնոլոգիական ցուցանիշների համեմատությունից պարզ է դառնում, որ դրանք աճել են երեք տարածաշրջաններում՝ Աշտարակում, Ապարանում և Արտաշատում, իսկ ամենաբարձր աճ գրանցվել է Աշտարակում՝ 63 %: Մնացած երկու տարածաշրջաններում՝ Թալինում և Մասիսում տեղի է ունեցել միջին քրոնոլոգիական ցուցանիշի նվազում՝ համապատասխանաբար 21.4 %-ով և 19.2%-ով:

Ուսումնասիրված ցուցանիշների գնահատման ժամանակ առավել կարևորվել է ասթմայի հիվանդացության ցուցանիշների համեմատական վերլուծությունը, քանի որ այն համարվում է էկոկախյալ հիվանդություն, և այդ ցուցանիշները կարող են հանդիսանալ միջավայրի քիմիական աղտոտման մակարդակների գնահատման չափանիշ: Երկու մարզերի ցուցանիշների վերլուծության արդյունքները համեմատելուց պարզ է դառնում, որ աճ գրանցվել է երկու տարածաշրջաններում՝ Աշտարակում և Մասիսում՝ համապատասխանաբար 32,4 %-ով և 3,2%-ով: Մնացած երեք տարածաշրջաններում՝ Ապարանում, Թալինում և Մասիսում, գրանցվել է ցուցանիշների նվազում, որից ամենաշատը Ապարանում՝ 44,9 %:

Եզրակացություն

Այս հետազոտության նպատակն է Հայաստանի Հանրապետության Արագածոտնի և Արարատի մարզերում շնչառական օրգանների հիվանդությունների, ասթմայի հիվանդացության ցուցանիշների և քսենոբիոտիկների շրջանառվող մակարդակների միջև եղած հնարավոր կապի հայտնաբերումը և համապատասխան ռիսկերի դիտարկումը: Արագածոտնի մարզի Աշտարակի և Ապարանի տարածաշրջաններում դիտարկվել է ընդհանուր շնչառական օրգանների հիվանդությունների հիվանդացության միջին քրոնոլոգիական ցուցանիշների աճ, իսկ Թալինում դրանք նվազել են: Ասթմայով հիվանդացության միջին քրոնոլոգիական ցուցանիշներն Ապարանում և Թալինում նվազել են, իսկ Աշտարակում՝ աճել: Արարատի մարզի Արտաշատի տարածաշրջանում ընդհանուր շնչառական օրգանների հիվանդությունների հիվանդացության միջին քրոնոլոգիական ցուցանիշն աճել է, իսկ Մասիսում՝ նվազել: Ասթմայի դեպքում հակառակ պատկեր է գրանցվել միջին քրոնոլոգիական ցուցանիշն աճել է Մասիսում և նվազել Արտաշատում:

Վերը նշված տարածաշրջանների շրջակա միջավայրի վիճակի համալիր ուսումնասիրությունների արդյունքները քիմիական աղտոտվածության տեսակետից ցույց են տվել, որ Արարատի մարզի Մասիսի տարածաշրջանում հողի նմուշներում հայտնաբերվում են ՀՔՑՀ-ի, ԴԴՏ-ի և նրա արգասիքների մնացորդային քանակներ: ՀՔՑՀ-ը հայտնաբերվել է $0,526 \times 10^{-2}$ մգ/կգ քանակով (հայտնաբերումը 100%): ԴԴԵ-ի քանակը $0,41 \times 10^{-2}$ մգ/կգ է (հայտնաբերումը 100 %), ԴԴՏ-ն միջինում $0,168 \times 10^{-2}$ մգ/կգ (հայտնաբերումը 53,3%): Արտաշատի տարածաշրջանում հողի նմուշներում հայտնաբերված ՔՕԹ-երի մնացորդային քանակներն հետևյալն են. ՀՔՑՀ-ը $0,194 \times 10^{-2}$ մգ/կգ (հայտնաբերումը 100%), ԴԴԵ-ն $0,44 \times 10^{-2}$ մգ/կգ (հայտնաբերումը 100%), ԴԴՏ-ն $0,028 \times 10^{-2}$ մգ/կգ (հայտնաբերումը 67%): ՔՕԹ-երի մնացորդային քանակներ հայտնաբերվում են նաև սննդամթերքի նմուշներում. Մասիսի տարածաշրջանում ԴԴԵ $0,00035 \times 10^{-2}$ մգ/կգ-ից մինչև $0,0076 \times 10^{-2}$ մգ/կգ սահմաններում (հայտնաբերումը 33-100%), Արտաշատում ԴԴՏ-ն հայտնաբերվում է $0,002 \times 10^{-2}$ մգ/կգ մակարդակով:

Արագածոտնի մարզի տարածաշրջանները քիմիական աղտոտվածության տեսակետից գնահատելու համար շրջակա միջավայրի օբյեկտներում կատարված համալիր ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տվել, որ մարզի Աշտարակի տարածաշրջանում հողի նմուշներում հայտնաբերվել են կայուն քլորօրգանական միացությունների (ԿՔՄ) գումարային կոնցենտրացիաների հետևյալ մակարդակները. ՀՔՑՀ-ը $0,169 \times 10^{-2}$ մգ/կգ (հայտնաբերումը 100%), ԴԴԵ-ն $0,0199 \times 10^{-2}$ մգ/կգ (հայտնաբերումը 80%), ԴԴՏ-ն $0,0154 \times 10^{-2}$ մգ/կգ (հայտնաբերումը 90%): Ապարանի տարածաշրջանում պատկերն այսպիսին է. ՀՔՑՀ-ը $0,348 \times 10^{-2}$ մգ/կգ (հայտնաբերումը 100%), ԴԴԵ-ն $0,0094 \times 10^{-2}$ մգ/կգ (հայտնաբերումը 80%), ԴԴՏ-ն $0,0154 \times 10^{-2}$ մգ/կգ (հայտնաբերումը 90%): Թալինի տարածաշրջանում ԿՔՄ գումարային կոնցենտրացիաների հայտնաբերված մակարդակներն հետևյալն են. ՀՔՑՀ-ը $1,68 \times 10^{-2}$ մգ/կգ (հայտնաբերումը 100%),

ԴԴԵ-ն $0,284 \times 10^{-2}$ մգ/կգ (հայտնաբերումը 50%), ԴԴՏ-ն $0,0359 \times 10^{-2}$ մգ/կգ (հայտնաբերումը 30%): Գյուղատնտեսական մթերքներում ՔՕԹ-երի մնացորդային քանակների հայտնաբերված մակարդակներն հետևյալն են. Աշտարակում գումարային ԴԴՏ-ն՝ $0,0097 \times 10^{-2}$ մգ/կգ, Ապարանում՝ $0,065 \times 10^{-2}$ մգ/կգ, Թալինում՝ $0,00012 \times 10^{-2}$ մգ/կգ:

Ինչպես տեսնում ենք Արագածոտնի մարզի ուսումնասիրված տարածաշրջանների հողի նմուշներում հայտնաբերվող քլորօրգանական միացությունների գումարային միջին տարեկան կոնցենտրացիաների նշանակալի բարձր մակարդակներ գրանցվել են մարզի երեք տարածաշրջաններում էլ: Ընդհանուր շնչառական օրգանների հիվանդությունների և ասթմայի հիվանդացության միջին քրոնոլոգիական ցուցանիշների ամենաբարձր աճ գրանցվել է Աշտարակում՝ համապատասխանաբար 63% և 32,4%: Արարատի մարզում նույնպես ՔՕԹ-երի մնացորդային քանակները հայտնաբերվում են բարձր մակարդակներով, բայց Մասիսում՝ ավելի բարձր՝ ի համեմատ Արտաշատի: Մասիսում գրանցվել է ասթմայի հիվանդացության միջին քրոնոլոգիական ցուցանիշի աճ 3,2%-ով:

Ձեռք բերված տվյալների հիման վրա չի կարելի բացառել շրջակա միջավայրում շրջանառվող ՔՕԹ-երի հնարավոր խթանիչ ազդեցությունը շնչառական հիվանդությունների հաճախականության ստացված պատկերի վրա: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ բազմաթիվ գործոններ կարող են ազդել հիվանդացության մակարդակի վրա: Քսենոբիոտիկների դերն առավել մանրամասն գնահատելու, համապարփակ պատկեր ստանալու և վերջնական եզրակացություններ անելու համար անհրաժեշտ է շարունակել աշխատանքը և կատարել լրացուցիչ ուսումնասիրություններ:

Գրականության ցանկ

1. Zanobetti A., Schwartz J., Samoli E., Gryparis A., Touloumi G., Peacock J. et al. The temporal pattern of respiratory and heart disease mortality in response to air pollution. *Environmental Health Perspectives*, 2003; 111(9):1188-1193.
2. Belyaev E.N., Chiburaev V.I., Fokin M.V. Social and hygienic monitoring in solving strategic problems of habitat and public health. *Hygiene and sanitation*, 2002; 3: 9-12.
3. Bornehag C.G., Sundell J., Weschler C.J., Siggaard T., Lundgren B., Hasselgren M., et al. The association between asthma and allergic symptoms in children and phthalates in house dust: a nested case-control study. *Environ Health Perspect*, 2004;112:1393–1397.
4. Burri P.H. Structural aspects of postnatal lung development-alveolar formation and growth. *Biol Neonate*, 2006;89:313–322.
5. Canoy D., Pekkanen J., Elliott P., Pouta A., Laitinen J., Hartikainen A., et al. Early growth and adult respiratory function in men and women followed from the fetal period to adulthood. *Thorax*, 2007; 62:396–402
6. Cardoso W.V., Lu J. Regulation of early lung morphogenesis: questions, facts and controversies. *Development*. 2006;133(9):1611–1624.
7. Chang-Po Zhao, Xiao-Jing Zhou and Kun Dong, Jie Fu, Di-Di Zhu, Shu-Qing An and Hai-Liang Zhu. Potential ecological risk and speciation analysis of heavy metals in sediments from the Jialu River, China. *Int. J. Environment and Pollution*, 2017; 61(1):72-88.
8. Galizia A., Kinney P.L. Long-term residence in areas of high ozone: associations with respiratory health in a nationwide sample of nonsmoking young adults. *Environ Health Perspect*. 1999;107:675–679.
9. Gauderman W.J., Avol E., Gilliland F., Vora H., Thomas D., Berhane K., et al. The effect of air pollution on lung development from 10–18 years of age. *N Engl J Med*. 2004; 351:1057-1067.
10. Haland G., Lodrup Carlsen K.C., Sandvik L., Devulapalli C.S., Munthe-Kaas M.C., Pettersen M., et al. Reduced lung function at birth and the risk of asthma at 10 years of age. *N Engl J Med*. 2006;355:1682–1689.
11. Harding R., Pinkerton KE, Plopper CG, editors. *The Lung: Development, Aging, and the Environment*. London: Elsevier; 2004.
12. Jack R. Harkema, Kristen J. Nikula, Wanda M. Haschek. *Respiratory System. Fundamentals of Toxicologic Pathology*, 2018; 351-393.
13. Khachatryan B.G., Tadevosyan A.E., Tadevosyan N.S., Hayrapetyan A.A., Gukasyan A.G. The role of higher plants as bioindicators in assessing the mutagenic background of the environment. *Proceedings of the international anniversary conference dedicated to the 80th anniversary of the founding of the Yerevan Botanical Garden*, 2015; 239-246.
14. Miller Mark D. and Marty Melanie A. Impact of Environmental Chemicals on Lung Development. Environmental Health Perspectives. 2010; 118(8): 1155–1164.
15. Merkov A.M., Polyakov L.E., *Sanitary statistics*, 1974; 384 p.
16. Onishchenko G.G., Novikov S.M., Rakhmanin Yu.A., Avaliani S.L., Bushtuyeva K.A. Basics of risk assessment for public health when exposed to chemicals that pollute the environment. M.: NII ECH and GOS, 2002. - 408 p.
17. Rob McConnell, Kiros Berhane, Frank Gilliland, Stephanie J. London, Hita Vora, Edward Avol, W James Gauderman, Helene G. Margolis, Fred Lurmann, Duncan C. Thomas and John M. Peters. Air Pollution and Bronchitic Symptoms in Southern California Children with Asthma. *Environmental Health Perspectives*, 1999; 107(9):757-760.
18. Sichletidis L., Tsiotsios I., Gavriilidis A., Chloros D., Gioulekas D., Kottakis I., Pataka A. The effects of environmental pollution on the respiratory system of children in western Macedonia, Greece. J Investig Allergol Clin Immunol. 2005; 15(2):117-123.
19. Tadevosyan A.E., Tadevosyan N.S., Poghosyan S.B., Muradyan S.A., Khachatryan B.G., Guloyan A.A. The complex impact of environmental factors and lifestyle on the health of the population: diagnosis, correction, prevention. *Modern aspects of rehabilitation in medicine. Proceedings of the VII International Conference*, Yerevan 2015;260-273.
20. Tadevosyan N.S., Khachatryan B.G., Muradyan S.A., Hayrapetyan A.A., Guloyan A.A. Analysis of the status mutagenic activity of the environmental in Ararat and Lori marzes. *The New Armenian Medical Journal Supplement*, 2017;11(3):141.
21. Ming Ye, Jeremy Beach, Jonathan W. Martin, Ambikaipakan Senthilselvan. Occupational Pesticide Exposures and Respiratory Health. *International Journal of Environmental Research and Public Health*. 2013 Dec; 10(12): 6442–6471. 2013 Nov 28;10(12):6442-71. doi: 10.3390/ijerph10126442.
22. Ali Mamane, Chantal Raheison, Jean-François Tessier, Isabelle Baldi, Ghislaine Bouvier. Environmental exposure to pesticides and respiratory health. *European Respiratory Review* 2015 24: 462-473.

ДИНАМИКА ИЗМЕНЕНИЙ ФОСФОЛИПИДНОГО СПЕКТРА МЕМБРАН ЭРИТРОЦИТОВ ПРИ ХРОНИЧЕСКОМ ГЕПАТИТЕ С

СОНА САРГСЯН

Ереванский государственный медицинский университет имени Мхитара Гераци
кафедра инфекционных болезней, аспирант
sona.sargsyan30@gmail.com

ВИОЛЕТА САРГСЯН

главный врач медицинского центра “Виолета”
кандидат медицинских наук
violetasargsyan@mail.ru

ЦОГИК НАВОЯН

Ереванский государственный медицинский университет им. Мхитара Гераци
кафедра инфекционных болезней
кандидат медицинских наук, доцент
tsoghik2013@gmail.com

РИПСИМЕ МАГДЕСИЕВА

Ереванский государственный медицинский университет им. Мхитара Гераци
кафедра инфекционных болезней
кандидат медицинских наук, доцент
hripsime.borisowna@gmail.com

АРЕГНАЗАН МХИТАРЯН

Ереванский государственный медицинский университет им. Мхитара Гераци
кафедра инфекционных болезней
кандидат медицинских наук, доцент
mkhitaryanaregnazan@gmail.com

ЛУСИНЕ АТОЯН

Ереванский государственный медицинский университет им. Мхитара Гераци
кафедра инфекционных болезней
кандидат медицинских наук, лектор
atlus@list.ru

НАИРА ГЮЛАЗЯН

Ереванский государственный медицинский университет им. Мхитара Гераци
кафедра инфекционных болезней
доктор медицинских наук, профессор
n.gyulazyan@gmail.com

Аннотация

Наращение интенсивных показателей заболеваемости отдельными формами вирусных гепатитов в Республике Армения в последнее десятилетие, с учетом резкого несоответствия реального и регистрируемого числа больных, обуславливают актуальность изучения проблемы. По-прежнему далеки от разрешения вопросы, связанные с полноценной оценкой функционального состояния печени доступными клиническим условиям неинвазивными методами, уточнение биохимических механизмов нарушения метаболизма гепатоцитов, в частности, мембранного повреждения.

Целью работы явилось изучение динамики изменений фосфолипидного (ФЛ) спектра мембран эритроцитов (МЭ) при хроническом гепатите С (ХГС).

Материал и методы. В динамике болезни (0, 12, 24 и 48 неделя) наблюдались пациенты ХГС, диагноз верифицирован, в том числе обнаружением РНК вируса методом ПЦР. Больные были разделены на 2 группы:

пациенты, не получившие лечение (n=68) и получившие Роферон А (n=23). Определение спектра ФЛ основано на принципе фракционирования индивидуальных ФЛ посредством тонкослойной хроматографии с использованием системы растворителей.

Результаты и обсуждение. Годовая динамика наблюдений показала: в начале исследования в группе, пациентов получивших лечение Роферон А, показатели трансаминаз были умеренно повышены, но уже на 12 неделе и в конце лечения (24 неделя) наблюдалось их достоверное снижение ($p < 0,05$). Однако к концу года выявлено некоторое повышение их активности, что вероятно связано с прекращением лечения (низкий устойчивый вирусологический ответ). В группе не получивших лечение к концу года наблюдалось достоверное повышение активности трансаминаз ($p < 0,05$).

При ХГС констатированы следующие изменения ФЛ спектра в МЭ: повышение относительного содержания лизофосфатидилхолинов (ЛФХ), моноинозитидфосфатидов МИФ, фосфатидилсеринов (ФС) и кардиолипинов (КЛ) за счет снижения уровней фосфатидилхолинов (ФХ), фосфатидилэтаноламинов (ФЭ) и сфингомиелинов (СМ), что привело к снижению соотношения нейтральных и кислых ФЛ. Межфракционная корреляция ФЛ при ХГС оказалась очень тесной ($r > 0,89$): выявлена прямая зависимость показателей ЛФХ и ФС и обратная – с ФХ, ФЭ и СМ. За исключением МИФ и КЛ, все фракции ФЛ высоко коррелировали с активностью трансаминаз ($r > 0,92$).

При отдельном рассмотрении показателей ФЛ спектра в группах, получивших лечение и без него, очевидно воздействие антивирусного лечения и на фракционный состав ФЛ в МЭ. Динамика нормализации показателей ФЭ, ФС и КЛ достигала достоверности по сравнению с группой пациентов, не получивших Роферон А, уже на 12 неделе, а различия в содержании ЛФХ, ФХ, МИФ и СМ регистрировались, начиная с 24 недели от начала лечения.

Заключение. Результаты проведенных исследований обнаруживают взаимообусловленность выявленных нами изменений ФЛ. Очевидна причинно-следственная связь дефицита антиоксидантов с накоплением продуктов наиболее подверженных перекисидации фракций ФЛ: ФХ, ФЭ, КЛ и ЛФХ, что неминуемо сказывается на проницаемости клеточных оболочек, на процессах трансмембранного переноса веществ, в частности, проявляется солубилизацией ферментов. Такая очередность сопряженных друг с другом процессов логически вытекает из полученных результатов.

Ключевые слова и словосочетания: хронический гепатит С, фосфолипиды, мембраны эритроцитов, Роферон А.

**ԷՐԻԹՐՈՑԻՏՆԵՐԻ ԹԱՂԱՆԹՆԵՐԻ ՖՈՍՖՈԼԻՊԻԴԱՅԻՆ ՍՊԵԿՏՐԻ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ ՔՐՈՆԻԿ ՀԵՊԱՏԻՏ Ց-Ի ԺԱՄԱՆԱԿ**

ՍՈՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան
վարակային հիվանդությունների ամբիոն, ասպիրանտ
sona.sargsyan30@gmail.com

ՎԻՈԼԵՏԱ ՍԱՐԳՍՅԱՆ

«Վիոլետա» բժշկական կենտրոն, գլխավոր բժիշկ
բժշկական գիտությունների թեկնածու
violetasargsyan@mail.ru

ՑՈՂԻԿ ՆԱՎՈՅԱՆ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան
վարակային հիվանդությունների ամբիոն
բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ
tsoghik2013@gmail.com

ՀՌԻՓՍԻՄԵ ՄԱԳԴԵՍԻԵՎԱ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան
վարակային հիվանդությունների ամբիոն
բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ
hripsime.borisowna@gmail.com

ԱՐԵԳՆԱԶԱՆ ՄԻՏԻԹԱՐՅԱՆ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան
վարակային հիվանդությունների ամբիոն
բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ
mkhitaryanaregnazan@gmail.com

ԼՈՒՍԻՆԵ ԱԹՈՅԱՆ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան
վարակային հիվանդությունների ամբիոն
բժշկական գիտությունների թեկնածու, դասախոս
atlus@list.ru

ՆԱԻՐԱ ԳՅՈՒԼԱԶՅԱՆ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան
վարակային հիվանդությունների ամբիոն
բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
n.gyulazyan@gmail.com

Համառոտագիր

Վերջին տասնամյակում ՀՀ-ում վիրուսային հեպատիտների առանձին ձևերով հիվանդացության ինտենսիվ ցուցանիշների աճը, հաշվի առնելով հիվանդների իրական և գրանցված թվի կտրուկ անհամապատասխանությունը, պայմանավորում է խնդրի ուսումնասիրման արդիականությունը: Ինչպես և նախկինում, դեռևս հեռու են լուծումից կլինիկական պայմաններին հասանելի ոչ ինվազիվ մեթոդներով լյարդի ֆունկցիոնալ վիճակի լիարժեք գնահատման, հեպատոցիտների մետաբոլիզմի խանգարման,

մասնավորապես թաղանթային վնասման բիոքիմիական մեխանիզմների իրականացման հետ կապված հարցերը:

Աշխատանքի նպատակն է՝ էրիթրոցիտների թաղանթների (ԷԹ) ֆոսֆոլիպիդային (ՖԼ) սպեկտրի փոփոխությունների դինամիկայի ուսումնասիրությունը քրոնիկ հեպատիտ Ց-ի (ՔՀՑ) ժամանակ:

Նյութն ու մեթոդները

Հիվանդության դինամիկայում (0, 12, 24 և 48 շաբաթներ) հսկվել են ՔՀՑ-ով պացիենտներ, ախտորոշումը հաստատված է եղել, այդ թվում և ՊՇՌ մեթոդով վիրուսի ՌՆԹ-ի հայտնաբերմամբ: Հիվանդները բաժանված են եղել 2 խմբի՝ բուժում չստացած ($n=68$) և Ռոֆերոն A-ով բուժված ($n=23$): ՖԼ-ի սպեկտրի որոշումը հիմնված է լուծիչների համակարգերի օգտագործմամբ, բարակ շերտային քրոմատոգրաֆիայի միջոցով առանձին ՖԼ-ի կոտորակավորման սկզբունքի վրա:

Արդյունքներ և քննարկում

Դիտարկումների տարեկան դինամիկան ցույց տվեց՝ հետազոտության սկզբում Ռոֆերոն A-ով բուժված պացիենտների խմբում տրանսամինազների ցուցանիշները եղել են չափավոր բարձրացած, բայց արդեն 12 շաբաթում և բուժման ավարտին (24 շաբաթ) նկատվել է դրանց հավաստի իջեցում ($p<0.05$), սակայն տարեվերջին հայտնաբերվել է դրանց ակտիվության որոշակի բարձրացում, ինչը հավանաբար կապված է բուժման ավարտի հետ (ցածր կայուն վիրուսաբանական պատասխան): Բուժում չստացած պացիենտների խմբում տարեվերջին նկատվել է տրանսամինազների ակտիվության հավաստի բարձրացում ($p<0.05$):

12. Ali Esmail Al-Snafi Medical importance of *Cichorium intybus*. IOSR Journal Of Pharmacy. ISSN: 2250-3013, (p)-ISSN: 2319-4219, Volume 6, Issue 3 (March 2016), PP. 41-56. [www.iosrphr.org\(e\)](http://www.iosrphr.org(e)).
13. Street RA, Sidana J., Prinsloo G. *Cichorium intybus*: Traditional Uses, Phytochemistry, Pharmacology, and Toxicology. National library of medicine. doi: 10.1155/2013/579319.

ՄԻԿՐՈԻԶԱՅԻՆ ՍՆԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆՍԱԾԱՌ ԱՐԵՎԵԼՅԱՆԻ ՍԵՐՄՆԱԲՈՒՍԱԿՆԵՐԻ ԱՃՄԱՆ ՎՐԱ ԲԱՑՕԹՅԱ ՀԻԴՐՈՊՈՆԻԿԱՅՈՒՄ

ԱՐԹՈՒՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
Գ. Ս. Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտ
կրտսեր գիտաշխատող
arturmatevosyan12@.com

ԱՆՆԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
Գ. Ս. Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտ
առաջատար գիտաշխատող
կենսաբանական գիտությունների թեկնածու
anntadevosyan.hydrop@gmail.com

ՍՏԵՓԱՆ ՄԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
Գ. Ս. Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտ
բույսերի սննդառության և արդյունավետության լաբորատորիայի վարիչ
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
hydropinstitute@gmail.com

Համառոտագիր

Միկրոբիոգեն բույսերի և սնկերի միջև կարևորագույն սիմբիոզ է: Ցամաքային բույսերի 80 %-ից ավելին սիմբիոզի մեջ են մտնում տարբեր միկրոբիոգեն սնկերի հետ: Միկրոբիոգենները, գործնականում, հանդիպում են բոլոր բուսական խմբավորումներում և էական ազդեցություն են թողնում ինչպես բույս-ֆիտոբիոտի, այնպես էլ ամբողջ կենսաերկրացենոզի վրա:

Արբուսկուլային միկրոբիոգեն սնկերի (ԱՄՍ), հիմնական նպատակն է բազմակի անգամ բարձրացնել սննդանյութերի փոխանակության մակերեսը: ԱՄՍ-ով ինոկուլացումը ավելացնում է չոր նյութի կուտակումը և ուժեղացնում ջրի կլանումը, հետևաբար՝ բարելավելով բույսերի հանդուրժողականությունը երաշտի և սուբստրատի աղակալման նկատմամբ:

ԱՄՍ-ով ինոկուլացումը կարող է զգալիորեն բարձրացնել տարբեր մակրո- և միկրո-սնուցիչների խտությունները, որը հանգեցնում է ֆոտոսինթեզի արգասիքների արտադրության ավելացմանն ու, հետևաբար, նաև կենսազանգվածի կուտակման ավելացմանը:

ԱՄՍ-ը մոտ ապագայում կարող է դիտարկվել որպես անօրգանական պարարտանյութերի փոխարինող, քանի որ դրա կիրառումը կարող է արդյունավետորեն նվազեցնել (մինչև 50 %-ով) քիմիական պարարտանյութերի՝ հատկապես, ֆոսֆորականների, քանակական օգտագործումը:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել արբուսկուլային միկրոբիոգեն սնկերի ազդեցությունը կենսաձառ արևելյանի – *Platyclus orientalis* L. բուսակների աճման և զարգացման վրա հիդրոպոնիկայի պայմաններում:

ՀՀ – ում առաջին անգամ բացօթյա հիդրոպոնիկայի պայմաններում ուսումնասիրվել է «Aegis» միկրոհատիկավորված պատրաստուկի ազդեցությունը կենսաձառ արևելյանի վրա՝ բացօթյա հիդրոպոնիկայի պայմաններում: Աշխատանքի համար նյութ են ծառայել «Aegis» միկրոհատիկավորված միկրոբիոգեն պատրաստուկը և ինստիտուտում աճեցված սերմնաբուսակները:

Հաշվի առնելով այն փաստը, որ ֆոսֆորի բարձր պարունակությունն արգելակում է միկորիզային սնկերի սպորերի ծլումն ու աճը, ինչպես նաև հետևելով միկորիզային պատրաստուկներ արտադրողի խորհուրդին, որոշվել է Դավթյանի լուծույթում ֆոսֆորի պարունակությունը նվազեցնել, համապատասխանաբար, 92 և 88 %-ով:

Փորձերը դրվել են 3 կրկնողությամբ՝ հետևյալ սխեմայով. 1. ստուգիչ, բույսերը սնուցվել են Դավթյանի նորմալ սննդալուծույթով; 2. Փորձ 1, «Aegis» պատրաստուկի 2 գ ավելացում բույսերի արմատամերձ շրջանում, սննդալուծույթից բացառվել է 92 % ֆոսֆոր; 3. Փորձ 2, «Aegis» պատրաստուկի 2 գ ավելացում բույսերի արմատամերձ շրջանում, սննդալուծույթից բացառվել է 88 % ֆոսֆոր:

Պարզվել է, որ կենսաձառի արմատամերձ միջավայրում «Aegis» միկրոհատիկավորված միկորիզայի կիրառումը սննդալուծույթում ֆոսֆորի պարունակության 92 % և 88 % նվազեցման պայմաններում, ստուգիչի համեմատ, նպաստել է բույսերի բարձրության (1.3-1.6 անգամ) և տարեկան աճի (1.4-1.7 անգամ) ավելացմանը:

Կենսաձառի ինոկուլացված և ստուգիչ սերմնաբուսակների տերևներում ֆոտոսինթեզող գունանյութերի (քլորոֆիլ a և b, կարոտինոիդներ) կուտակման էական տարբերություն չի արձանագրվել: Մանրադիտակային մեթոդի կիրառմամբ ինոկուլացված սերմնաբուսակների արմատներում միկորիզային սնկերի գաղութացման առկայությունը բացթողա հիդրոպոնիկայում հաստատվել է:

Բանալի բառեր և բառակապակցություններ. *Platyclusus orientalis* L., արբուսկուլային սնկեր, ինոկուլացում, գաղութացում, բույսերի անհող մշակույթ:

ВЛИЯНИЕ МИКОРИЗНЫХ ГРИБОВ НА РОСТ СЕЯНЦЕВ ТУИ ВОСТОЧНОЙ В ОТКРЫТОЙ ГИДРОПОНИКЕ

АРТУР МАТЕВОСЯН

Национальная академия наук республики Армения
Институт проблем гидропоники им. Г.С..Давтяна
Младший научный сотрудник
arturmatevosyan12@com

АННА ТАДЕВОСЯН

Национальная академия наук республики Армения
Институт проблем гидропоники им. Г.С..Давтяна
Ведущий научный сотрудник,
кандидат биологических наук
anntadevosyan.hydrop@gmail.com

СТЕПАН МАЙРАПЕТЯН

Национальная академия наук республики Армения
Институт проблем гидропоники им. Г.С..Давтяна
руководитель лаборатории питания и продуктивности растений
член-корреспондент НАН РА
hydropinstitute@gmail.com

Аннотация

Микориза — важный симбиоз растений и грибов. Более 80 % наземных растений вступают в симбиоз с различными микоризными грибами. Микоризы встречаются практически во всех группах растений и оказывают значительное влияние как на растения-фитобионты, так и на весь биоценоз.

Основное значение арбускулярных микоризных грибов (АМГ) — многократное увеличение поверхности обмена питательных веществ. Инокуляция АМГ увеличивает накопление сухого вещества и водопоглощение, тем самым повышая устойчивость растений к засухе и засолению субстрата. Инокуляция АМГ позволяет значительно повысить концентрацию различных макро- и микроэлементов, что приводит к увеличению продукции продуктов фотосинтеза и, как следствие, увеличению накопления биомассы.

В ближайшем будущем АМГ можно рассматривать, как заменитель неорганических удобрений, поскольку его применение позволяет эффективно (до 50 %) сократить количественное использование химических удобрений, особенно фосфатов.

Целью исследования было изучение влияния арбускулярных микоризных грибов на рост и развитие растений *Platycladus orientalis* L. в условиях гидропоники.

Впервые в Армении в условиях открытой гидропоники было исследовано действие микрогранулированного препарата «Эджис» на тую восточной. Материалом для изучения послужили микрогранулированный микоризный препарат «Эджис» и сеянцы туи, выращенные в институте.

Принимая во внимание тот факт, что высокое содержание фосфора угнетает прорастание и рост спор микоризных грибов, а также по рекомендации производителя микоризных препаратов, было принято решение снизить содержание фосфора в растворе Давтяна на 92 и 88 %, соответственно.

Опыты ставили с 3-кратной повторностью по следующей схеме. 1. Контроль - растения подпитывались нормальным питательным раствором Давтяна; 2. Опыт 1 - внесение 2 г препарата «Эджис» в прикорневую зону растений, из питательного раствора исключено 92 % фосфора; 3. Опыт 2 - внесение 2 г препарата «Эджис» в прикорневую зону растений, из питательного раствора исключено 88 % фосфора.

Установлено, что внесение микрогранулированной микоризы «Эджис» в ризосферу туи в условиях снижения содержания фосфора в питательном растворе на 92 и 88 %, способствовало увеличению высоты растений (в 1.3- 1.6 раза) и годового прироста (в 1.4-1.7 раза), по сравнению с контролем.

В накоплении фотосинтетических пигментов (хлорофиллы а и b, каротиноиды) в листьях инокулированных и контрольных сеянцев туи достоверной разницы не наблюдалось.

В условиях открытой гидропоники микроскопическим методом подтверждено наличие колоний микоризных грибов в корнях инокулированных сеянцев.

Ключевые слова и словосочетания. *Platycladus orientalis* L., арбускулярные грибы, инокуляция, колонизация, беспочвенная культура растений

THE EFFECT OF MYCORRHIZAL FUNGI ON GROWTH OF BIOTA SEEDLINGS IN OUTDOOR HYDROPONICS

ARTUR MATEVOSYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
G.S. Davtyan Institute of Hydroponics Problems
Junior Scientist
arturmatevosyan12@.com

ANNA TADEVOSYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
G.S. Davtyan Institute of Hydroponics Problems
Leading Researcher
PhD in Biology
anntadevosyan.hydrop@gmail.com

STEPAN MAIRAPETYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
G.S. Davtyan Institute of Hydroponics Problems
Head of Laboratory of plants nutrition and productivity
Corresponding member of NAS RA
hydropinstitute@gmail.com

Abstract

Mycorrhiza is an important symbiosis between plants and fungi. More than 80 % of terrestrial plants enter into symbiosis with various mycorrhizal fungi. Mycorrhizae are found in practically all plant groups and have a significant effect on both plant-phytobiont and the whole biocenosis.

The main purpose of arbuscular mycorrhizal fungi (AMF) is a multiple increase of the surface of the nutrient metabolism. The inoculation with AMF increases the accumulation of dry matter and water absorption, thereby improving the resistance of plants to drought and salinity of the substrate.

The inoculation with AMF can significantly increase the concentration of various macro- and microelements, which leads to an enhance in the production of photosynthesis products and, as a result, an increase in biomass accumulation. AMF can be considered as a substitute for inorganic fertilizers in the near future, since its use can effectively reduce (up to 50 %) the quantitative use of chemical fertilizers, especially phosphates.

The aim of this study is to investigate the effect of arbuscular mycorrhizal fungi on the growth and development of *Platycladus orientalis* L. under hydroponic conditions.

For the first time in Armenia the effect of "Aegis" micro-granulated preparation on Biota was investigated in the conditions of outdoor hydroponics. The material for the work was "Aegis" micro-granulated mycorrhizal preparation and seedlings grown at the Institute.

Taking into account the fact that a high phosphorus content inhibits the germination and growth of spores of mycorrhizal fungi, as well as following the advice of the manufacturer of mycorrhizal preparations, it was decided to reduce the phosphorus content in Davtyan's solution by 92 and 88 %, respectively.

The experiments were carried out with 3 repetitions according to the following scheme. 1. Control - the plants nourishment was done with the normal concentrations of Davtyan's nutrient solution. 2. Test 1 - 2 g addition of "Aegis" preparation in the rhizosphere of plants, 92 % of phosphorus was excluded from the nutrient solution; 3. Test 2 - 2 g addition of "Aegis" preparation in the rhizosphere of plants, 88 % of phosphorus was excluded from the nutrient solution.

It was found that the applying of microgranular mycorrhiza "Aegis" into the rhizosphere of Biota under conditions of a decrease in P content in the nutrient solution by 92 % and 88 % contributed to an increase in plant height (1.3-1.6 times) and annual growth (1.4- 1.7 times), compared with the control.

In the accumulation of photosynthetic pigments (chlorophyll a and b, carotenoids) in the leaves of inoculated and control Biota seedlings, no significant difference was observed.

The presence of the colonization of mycorrhizal fungi in the roots of inoculated seedlings was confirmed by microscopic method in outdoor hydroponics.

Keywords and phrases. *Platycladus orientalis* L., arbuscular fungi, inoculation, colonization, plants soilless culture.

Ներածություն

Միկրոբիզնեսի և սնկերի միջև կարևորագույն սիմբիոզ է: Ցամաքային բույսերի 80 %-ից ավելին սիմբիոզի մեջ են մտնում տարբեր միկրոբիզային սնկերի հետ: Միկրոբիզաները գործնականում հանդիպում են բոլոր բուսական խմբավորումներում և էական ազդեցություն են թողնում ինչպես բույս-ֆիտոբիոտի, այնպես էլ ամբողջ կենսատեսակների վրա: Գոյություն ունեն միկրոբիզայի բազմաթիվ տարատեսակներ, սակայն ամենից տարածվածը արբուսկուլայինն է **[1]**: Արբուսկուլային միկրոբիզային սնկերը՝ այսուհետ ԱՄՍ, միկրոբիոտներ են, որոնք առաջացնում են չսեպտավորված, բազմակորիզ միցելիում: Միկրոբիոտները գտնվում է տեր-բույսի միջբջջային տարածությունում և բջջիջների ներսում առաջացնում է արբուսկուլներ (սիմբիոտների շփման զոնան, որի միջոցով իրականանում է սննդանյութերի փոխանակությունը) և վեգիկուլներ (պաշարային գոյացություններ) **[2, 3]**: Արբուսկուլների հիմնական նպատակն է բազմակի անգամ բարձրացնել սննդանյութերի փոխանակության մակերեսը: ԱՄՍ -ը արմատներից դուրս ձևավորում են խիտ հիֆային ցանց, որը կարող է ձգվել արմատների սննդանյութերի ներծծման գոտու սահմաններից դուրս՝ երկար տարածությունների վրա, որի շնորհիվ էլ մինչև 10 անգամ մեծանում է ներծծման մակերևույթն ու սնուցման մակերեսը **[3, 4, 5]**: Հայտնի է, որ արբուսկուլային միկրոբիզայի հետ սիմբիոզը միանշանակ խթանում է ֆոսֆորի փոխադրիչների էքսպրեսիան: Փորձերը ցույց են տվել, որ սունկը կարող է բույսին փոխանցել բույսի ֆոսֆորի ընդհանուր պահանջարկի մինչև 80 %-ը և ազոտի պահանջարկի մինչև 20 %-ը **[6]**: ԱՄՍ-ը կարող է զգալիորեն բարելավել բույսերի կողմից սննդանյութերի կլանումը և դիմադրողականությունը մի շարք աբիոտիկ՝ ոչ կենսածին սթրեսային գործոնների նկատմամբ **[7]**: Դրանք օբլիգատ բիոտրոֆներ են և կլանում են բույսերի ֆոտոսինթետիկ արտադրանքներն ու լիպիդներն՝ իրենց կյանքի շրջափուլն իրականացնելու նպատակով: ԱՄՍ – միջնորդավորված աճի խթանումն իրականացվում է ոչ միայն ջրի ու հանքային սննդանյութերի կլանման բարելավմամբ, այլև սնկային պաթոգեններից պաշտպանելու շնորհիվ: ԱՄՍ-ները կենսական էնդոսիմբիոտներ են, որոնք արդյունավետ դեր են խաղում բույսերի արտադրողականության և էկոհամակարգի գործունեության մեջ: Դրանք առանցքային նշանակություն ունեն մշակաբույսերի կայուն բարելավման համար: ԱՄՍ-ով ինոկուլացումը բարելավում է չոր նյութի կուտակումը և ուժեղացնում ջրի կլանումը, հետևաբար՝ բարելավվելով բույսերի հանդուրժողականությունը երաշտի և սուբստրատի աղակալման նկատմամբ: Տարբեր կենսաբանական էկոհամակարգերում բույսերի աճի համար ԱՄՍ-ի օգտագործումը կարող է մեծապես նպաստել օրգանական մշակաբույսերի աճի խթանմանն ու առավելագույն բերքատվության ստացմանը **[8]**: Տարածված կարծիք կա, որ ԱՄՍ-ը մոտ ապագայում կարող է դիտարկվել որպես անօրգանական պարարտանյութերի փոխարինող, քանի որ դրա կիրառումը կարող է արդյունավետորեն նվազեցնել քիմիական պարարտանյութերի՝ հատկապես, ֆոսֆորականների, քանակական օգտագործումը **[9]**, սակայն այս գնահատականը կախված է բույսի տեսակից և գերակշռող սթրեսային ռեժիմներից **[8]**: Անօրգանական պարարտանյութերի, թունաքիմիկատների և ֆունգիցիդների շարունակական օգտագործումը տարբեր խնդիրներ է առաջացրել հողի, բույսերի և մարդու առողջության համար, սննդամթերքի որակի, հողի առողջության և օդային և ջրային համակարգերի վրա դրանց վնասակար ազդեցության պատճառով: Ակնհայտ է, որ ԱՄՍ-ով ինոկուլացումը կարող է զգալիորեն բարձրացնել տարբեր մակրո- և միկրո-սնուցիչների խտությունները, որը հանգեցնում է ֆոտոսինթեզի արգասիքների արտադրության ավելացմանն ու, հետևաբար, նաև կենսազանգվածի կուտակման ավելացմանը: ԱՄՍ-ը կարող է խթանել անօրգանական սննդանյութերի կլանումը գրեթե բոլոր բույսերում, մասնավորապես՝ ֆոսֆատի **[8, 10]**: Հաղորդվում է, որ ԱՄՍ-ի հետ

ասոցիացիան մեծացնում է միկրոէլեմենտների ֆիտո հասանելիությունը, ինչպիսիք են ցինկը և պղինձը [7]:

Աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել արբուսկուլային միկորիզային սնկերի ազդեցությունը կենսաձառ արևելյանի – *Platyclus orientalis* L. բուսակների աճման և զարգացման վրա հիդրոպոնիկայի պայմաններում:

Ուսումնասիրության մեթոդներ

ՀՀ – ում առաջին անգամ բացօթյա հիդրոպոնիկայի պայմաններում ուսումնասիրվել է «Aegis» միկրոհատիկավորված պատրաստուկի ազդեցությունը կենսաձառ արևելյանի վրա՝ բացօթյա հիդրոպոնիկայի պայմաններում: Աշխատանքի համար նյութ են ծառայել «Aegis» միկրոհատիկավորված միկորիզային պատրաստուկը և ինստիտուտում աճեցված սերմնաբուսակները՝ միջինում 2.9 - 3.4 սմ բարձրությամբ:



Նկ. 1. «Aegis» միկորիզային պատրաստուկը:

Որպես ներկման ազեմտներ կիրառվել են տրիպան կապոյտն ու թթվային ֆուքսինը:

Միկորիզային սնկերի առկայությունը հաստատվել է Carl Zeiss Jena Biols 450X լուսային մանրադիտակի օգնությամբ:

Ինոկուլացված արմատների ուսումնասիրությունը, արմատների մաքրումն ու ներկումն իրականացվել են 2 մեթոդով՝ ըստ Կորմանիկի, Բրայանի և Շուլցի [11], ըստ Կոսկեի և Ջեմմայի [12]: Քլորոֆիլ a-ի, b-ի և կարոտինոիդների պարունակությունը որոշվել է ըստ Վեթթթեյնի [13], իսկ հաշվարկները կատարվել են ըստ Վերնոնի ու Վեթթթեյնի բանաձևերի [14]: Ստացված արդյունքները ենթարկվել են մաթեմատիկական մշակման:

Հաշվի առնելով այն փաստը, որ ֆոսֆորի բարձր պարունակությունն արգելակում է միկորիզային սնկերի սպորերի ծլումն ու աճը, ինչպես նաև հետևելով միկորիզային պատրաստուկներ արտադրողի խորհուրդին, որոշվել է Դավթյանի լուծույթում ֆոսֆորի պարունակությունը նվազեցնել, համապատասխանաբար, 92 և 88 %-ով [15]:

Փորձերը դրվել են 3 կրկնողությամբ՝ հետևյալ սխեմայով.

1. Ստուգիչ - բույսերը սնուցվել են Դավթյանի նորմալ սննդալուծույթով;
2. Փորձ 1 - «Aegis» պատրաստուկի 2 գ ավելացում բույսերի արմատամերձ շրջանում, սննդալուծույթից բացառվել է 92 % ֆոսֆոր:
3. Փորձ 2 - «Aegis» պատրաստուկի 2 գ ավելացում բույսերի արմատամերձ շրջանում, սննդալուծույթից բացառվել է 88 % ֆոսֆոր:

Տարբերակները սնուցվել են Դավթյանի 1 Ն լուծույթով և դրա մոդիֆիկացված տարբերակներով՝ օրը 2, հոկտեմբերից՝ օրը 1 անգամ [16]:

Բույսերի կենսաչափումն իրականացվել է 15 օրը մեկ: Փորձերի սկիզբը դրվել է մարտ ամսին: Սկզբնական շրջանում (սենյակային պայմաններում), մոտ 1 ամիս տևողությամբ, ջրի կամ սննդալուծույթի կողմից միկորիզային պատրաստուկի լվացումից խուսափելու համար որպես սուբստրատ ընտրվել է սև խարամը: Անոթներն ու սուբստրատը լվացվել և այնուհետև ախտահանվել են կալիումի պերմանգանատի 0.05 % լուծույթով:

Սկզբնական շրջանում սերմնաբուսակները ջրվել են ջրով, այնուհետև մեկ շաբաթից բույսերի սնուցումն իրականացվել է Դավթյանի 0.1 %- ոց լուծույթով: Ջրումն իրականացվել է ցնցուղի միջոցով:

Ապրիլ ամսվա վերջին բոլոր սերմնաբուսակները տեղափոխվել են բացօթյա հիդրոպոնիկական փորձադաշտ՝ 0.04 մ² մակերեսով հիդրոպոնիկ անոթներ, իսկ որպես լցանյութ է ընտրվել 3-15 մմ մասնիկների տրամագիծ ունեցող հրաբխային խարամ + գլաքար խառնուրդը՝ 1/1 հարաբերակցությամբ (նկ. 2):




Նկ. 2. Կենսաձառ արևելյանի սերմնաբուսակը:

Քլորոֆիլ a-ի, b-ի և կարոտինոիդների պարունակությունը որոշելու համար բուսահումքի հավաքը կատարվել է օգոստոս ամսվա վերջին՝ բույսի ակտիվ վեգետացիայի շրջանում: Արմատների ուսումնասիրությունը կատարվել է վեգետացիայի վերջում՝ հոկտեմբերին:

Ստացված արդյունքներ

Նկ. 3-ում ներկայացված է կենսաձառի աճման դինամիկական վեգետացիայի ընթացքում, ինչից ակնհայտ է, որ բոլոր տարբերակներում բույսերն աճել են նույն համաչափությամբ, սակայն տարբեր ինտենսիվությամբ:




Նկ. 3. Կենսաձառ արևելյանի տարեկան աճի կորը:

Պարզվել է, որ կենսաձառի արմատամերձ միջավայրում «Aegis» միկրոհատիկավորված միկորիզայի կիրառումը սննդալուծույթում ֆոսֆորի պարունակության 92 % նվազեցման պայմաններում՝ Փորձ 1, նպաստել է բույսերի բարձրության և տարեկան աճի ավելացմանը Փորձ 2-ի համեմատությամբ՝ 20 և 25 %-ով, համապատասխանաբար: Միևնույն ժամանակ, ստուգիչ տարբերակի բույսերի մոտ դիտվել է նվազագույն աճ 1.4 և 1.7, իսկ բույսերի բարձրությունը զիջել է փորձնական տարբերակներին 1.3-1.6 անգամ (աղ. 1, նկ. 4):

Աղյուսակ 1.

Կենսաձառ արևելյանի կենսաչափական տվյալները վեգետացիայի վերջում:

Տարբերակները	Բարձրություն, սմ	Տարեկան աճ, սմ
1. ստուգիչ	12.8 ± 1.1	9.6 ± 0.8
2. Փորձ 1	20.0 ± 1.1	16.7 ± 1.1
3. Փորձ 2	16.5 ± 1.3	13.4 ± 1.3



Նկ. 4. Կենսաձառի սերմնաբուսակները սեպտեմբերին
ա/ ստուգիչ; բ/ Փորձ 1; գ/ Փորձ 2

Վերլուծությունները ցույց են տվել, որ կենսաձառի միկորիզայով ինոկուլացված և ստուգիչ սերմնաբուսակների տերևներում ֆոտոսինթեզող գունանյութերի կուտակման էական տարբերություն չի արձանագրվել (աղ. 2):

Աղյուսակ 2.


Կենսաձառ արևելյանի տերևներում քլորոֆիլ a-ի, b-ի և կարոտինոիդների պարունակությունը (մգ %):

Ֆոտոսինթեզող գունանյութեր	Ստուգիչ	Փորձ 1	Փորձ 2
Քլորոֆիլ a	104.0 ± 10.1	101.8 ± 9.5	92.2 ± 7.8
Քլորոֆիլ b	49.8 ± 4.4	48.9 ± 3.8	42.5 ± 3.0
Կարոտինոիդներ	44.3 ± 3.7	44.0 ± 3.4	39.8 ± 3.3

Արբուսակույային միկորիզային սնկերի առկայությունը հաստատելու համար, լաբորատոր պայմաններում իրականացվել է միկորիզայով ինոկուլացված տարբերակների արմատների մանրադիտարկում:

Պարզվել է, որ բույսերի արմատների մաքրման և ներկման համար կիրառված 2 մեթոդներն էլ արդյունավետ են կենսաձառի միկորիզայով ինոկուլացված արմատների ուսումնասիրության

դեպքում, և մանրադիտակային մեթոդի համատեղ կիրառմամբ Փորձ 1 և Փորձ 2 տարբերակների բույսերի արմատներում հայտնաբերվել են արբուսկուլային միկորիզային սնկեր, դրանց սպորներ, հիֆեր, արբուսկուլներ և վեզիկուլներ (նկ. 5): Փաստորեն, ինոկուլացված սերմնաբուսակների արմատներում միկորիզային սնկերի գաղութացման առկայությունը բացօթյա հիդրոպոնիկայում հաստատվել է:



Նկ. 5. Մանրադիտակային նկար. միկորիզայի առկայությունը բույսերի արմատներում:
ա/ Փորձ 1, բ/ Փորձ 2

Եզրակացություն

1. Պարզվել է, որ կենսաձառի արմատամերձ միջավայրում «Aegis» միկրոհատիկավորված միկորիզայի կիրառումը սննդալուծույթում ֆոսֆորի պարունակության 92 և 88 % նվազեցման պայմաններում, ստուգիչի համեմատ, նպաստել է բույսերի բարձրության (1.3-1.6 անգամ) և տարեկան աճի (1.4-1.7 անգամ) ավելացմանը:
2. Կենսաձառի միկորիզայով ինոկուլացված և ստուգիչ սերմնաբուսակների տերևներում ֆոտոսինթեզող գունանյութերի կուտակման էական տարբերություն չի արձանագրվել:
3. Մանրադիտակային մեթոդի կիրառմամբ ինոկուլացված սերմնաբուսակների արմատներում միկորիզային սնկերի գաղութացման առկայությունը բացօթյա հիդրոպոնիկայում հաստատվել է:

Գրականության ցանկ

1. Brundrett M.C., Coevolution of roots and mycorrhizas of land plants, *New Phytol*, 154, 2002, 275-304.
2. Воронина Е. Ю., Микоризы и их роль в формировании сообществ, *Вестник Московского университета*, Серия 16: Биология, № 4, 2006, С. 17–26.
3. Brundrett, M. C., Diversity and classification of mycorrhizal association / M. C. Brundrett, *Biol. Rev.*, . Vol. 79, 2004, p. 473–495.
4. Read, D. J., The structure and function of the vegetative mycelium of mycorrhizal roots / D. J. Read, D.H. Jennings, A.D.M. Rayner (eds.). *The ecology and physiology of the fungal mycelium*, Cambridge, Cambridge University Press, 1984, P. 215–240.
5. Friesen M. I., Microbially mediated plant functional traits, *Annual Review of Ecology, Evolution, and Systematics* / M. I. Friesen, Vol. 42, 2011, P. 23–46.
6. Buscot F., Recent advances in exploring physiology and biodiversity of ectomycorrhizas highlight the functioning of these symbioses in ecosystems / F. Buscot, *FEMS Microbiol. Rev.*, Vol. 24, 2000, 601– 614.
7. Begum N., Qin C., Ahanger M.A., Raza S., Khan M.I., Ashraf M., Ahmed N. and Zhang L., Role of Arbuscular Mycorrhizal Fungi in Plant Growth Regulation: Implications in Abiotic Stress Tolerance, *Front. Plant Sci.* 10: 1068, 2019, p. 15.
8. Sun Z., Song J., Xin X., Xie X., and Zhao B., Arbuscular mycorrhizal fungal proteins 14-3-3- are involved in arbuscule formation and responses to abiotic stresses during AM symbiosis, *Front. Microbiol.* 5, 2018, p. 9–19.
9. Ortas I., The effect of mycorrhizal fungal inoculation on plant yield, nutrient uptake and inoculation effectiveness under long-term field conditions, *Field Crops Res.*, 125, 2012, p. 35–48.
10. Smith S. E., Smith F. A., and Jakobsen I., Mycorrhizal fungi can dominate phosphate supply to plants irrespective of growth responses, *Plant Physiol.* 133, 2003, p. 16–20.
11. Kormanik P.P., Bryan W.C., Schultz R.C., Procedures and equipment for staining large numbers of plant root samples for endomycorrhizal assay, *Can J Microbiol*, 26, 1980, p. 536 – 538.
12. Koske, R.E. and Gemma, J.N., A Modified Procedure for Staining Roots to Detect VA Mycorrhizas. *Mycological Research*, 92, 1989, p. 486-488.
13. Weffstein D., Chlorophyll lefle und der submicroptsche formwishe der plastiden. “*Exp. Cell Research*”, N 12, 1957, p. 427.
14. Гавриленко В. Ф., Большой практикум по фотосинтезу, Жигалова Т.В., Под ред. Ермакова И.П., Москва, Издательский центр "Академия", 2003, 256 с.
15. Микориза ЭДЖИС (AEGIS Microgranules, Италия) инновационный биостимулятор растений, <https://www.ozon.ru/product/mikoriza-edzhis-aegis-microgranules-italiya-innovatsionnyy-biostimulyator-rasteniy-50-ml-211058225/?sh=NeHW46-A>, 07.03.2021.
16. Давтян Г.С., Гидропоника как производственное достижение агрохимической науки. XVIII научное чтение, посвященное памяти академика Д.Н. Прянишникова, Изд. АН Арм. ССР, 1969, 85 с.

ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՇՎԱՐԿԸ

ԳՈՀԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հայաստանի ազգային ագրարային համալսարան
տվյալագիտության ամբիոն
տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր
vardgohar@yandex.ru

Համառոտագիր

Հոդվածում հեղինակի կողմից վեր են բարձրացվել և մշակվել են պարենային ապահովության վիճակագրական գնահատման մեթոդաբանության հարցերը: Ուսումնասիրելով հայրենական և արտասահմանյան հեղինակների աշխատությունները և միջազգային փորձը՝ հեղինակի կողմից մշակվել է պարենային ապահովության գնահատման վիճակագրական ցուցանիշները և տրվել է դրանց հաշվարկման կարգը: Պարենային ապահովության մեթոդաբանությունը հեղինակի կողմից ներկայացվել է՝ հաշվի առնելով հինգ հիմնական սոցիալական պարամետրերը. ժողովրդագրական իրավիճակը, սպառողների կենսամակարդակի բարձրացումը (իջեցումը), առողջապահությունը, աշխատանքային ռեսուրսների առկայությունը և աշխատուժի հաշվեկշիռը և սոցիալական պաշտպանությունը: Պարենային ապահովության հիմնախնդրի լուծման ժամանակ հեղինակը հիմնվել է պարենային անվտանգության ցուցանիշների վրա և այն բնութագրելու նպատակով առանձնացրել է հետևյալ հինգ ասպեկտները, որոնցից յուրաքանչյուրը իրենից ներկայացնում է տվյալ երկրի պարենային իրավիճակի և մակարդակի ցուցանիշները, դրանք են՝ պարենային-սպառողական, գյուղատնտեսական, արդյունաբերական, արտաքին առևտրային և էկոլոգիական ասպեկտները: Ելնելով վեր բարձրացրած հիմնախնդրի կարևորությունից՝ հեղինակի կողմից մշակվել է պարենային ապահովության վիճակագրության ցուցանիշների համակարգ, որը, նրա կարծիքով, միևնույն ժամանակ պետք է լրացնի սոցիալ-տնտեսական վիճակագրության դասընթացը՝ նախատեսելով առանձին բաժին «Պարենային ապահովության վիճակագրություն» վերնագրով:

Պարենային-սպառողական ասպեկտը բնութագրող հինգ ցուցանիշները պայմանականորեն բաժանելով երկու խմբի՝ քանակականի և որակականի, հեղինակը ներկայացրել է դրանց հաշվարկման վիճակագրական գահատման մեթոդաբանությունը: Քանակական ցուցանիշներին են վերագրվել. բնակչության մեկ շնչին ընկնող հիմնական սննդամթերքների սպառման մակարդակը (կիլոգրամներով), բնակչության վճարունակ պահանջարկի մակարդակը (այն արտացոլում է ապրանքների և ծառայությունների ձեռք բերման գծով բնակչության ներուժային հնարավորությունները), ինչպես նաև պարենի ինքնաբավության աստիճանի ցուցանիշը (այն բնութագրում է երկրում արտադրված և սպառված գյուղատնտեսական արտադրանքի արժեքների միջև եղած տոկոսային հարաբերությունը), ինչպես նաև պարենի մատչելիության և բավականաչափության ցուցանիշները:

Ըստ հեղինակի՝ որակական ցուցանիշներին են վերագրվում՝ ֆիզիոլոգիական պահանջմունքի մակարդակի ցուցանիշը, կիրկալորիաներով, որը բնութագրում է պարենի սպառման միասեռությունը կամ տարասեռությունը, նաև սննդամթերքի տարբեր տեսակներից ստացված կիրկալորիաների մասը, ինչպես նաև նվազագույն սպառողական զամբյուղը (պարենային հավաքածուն), որը բնութագրում է սննդամթերքների բնական հավաքածուն՝ հաշվի առած սննդակարգային սահմանափակումները և ապահովում է կալորիաների նվազագույն անհրաժեշտ քանակությունը: Այս համատեքստում հեղինակի կողմից ներկայացվել է նաև պարենամթերքի սպառման բավականաչափության ընդհանուր գործակիցների և պարենի մատչելիության ցուցանիշի հաշվարկման կարգը և տվել է դրանց մեկնաբանությունը, որպես բնակչության կենսամակարդակը գնահատող կարևորագույն ցուցանիշների:

Բանալի բառեր և բառակապակցություններ. պարենային անվտանգություն, պարենային ապահովության վիճակագրություն, քանակական և որակական ցուցանիշներ, պարենային ապահովության մեթոդաբանություն, պարենի ինքնաբավություն:

МЕТОДОЛОГИЯ СТАТИСТИЧЕСКОЙ ОЦЕНКИ ПРОДОВОЛЬСТВЕННОЙ БЕЗОПАСНОСТИ: ИНДИКАТОРЫ И ИХ РАСЧЕТ

Г О А Р В А Р Д А Н Я Н

Национальный аграрный университет Армении
кафедра Даталогии,
кандидат экономических наук, профессор
vardgohar@yandex.ru

Аннотация

В статье автором были подняты и разработаны вопросы методологии статистической оценки продовольственной обеспеченности. Изучая труды отечественных и зарубежных авторов, также и зарубежный опыт, автор разработал систему статистических показателей оценки продовольственной обеспеченности, указывая порядок их исчисления. Методология продовольственной обеспеченности автором представлена с учетом пяти основных социальных параметров: демографическая ситуация, повышение (понижение) уровня жизни потребителей, здравоохранение, наличие трудовых ресурсов и баланс рабочей силы, так же и социальная защита. При решении проблемы продовольственной обеспеченности автор опирался на показатели продовольственной безопасности, и для его характеристики выделяло следующие пять аспекты, каждый из которых представляет из себя показатели продовольственной ситуации и уровня потребления населением данной страны, это и есть продовольственно-потребительский, сельскохозяйственный, промышленный, внешнеторговый и экологический аспекты.

Исходя из важности поднятой проблемы, автором разработана система показателей статистики продовольственной обеспеченности, которая, по ее мнению, должна дополнять курс социально-экономической статистики, с выделением в нее отдельного раздела «Статистика продовольственной обеспеченности». Автор, условно разделив пять показателей, характеризующие продовольственно-потребительский аспект на две группы- на количественные и качественные, представил методику расчета их статистической оценки. К количественным показателям относятся: уровень потребления основных продуктов питания на душу населения (в килограммах), уровень платежеспособного спроса населения (оно отражает уровень потенциальных возможностей приобретения товаров и услуг населением), а так же показатель уровня самообеспеченности продовольствием (который характеризует процентное соотношение произведенных и потребленных сельскохозяйственных продуктов в данной стране), а так же показатели доступности и достаточности продовольствия. По мнению автора, к качественным показателям относятся: показатель уровня физиологической потребности, в килокалориях, характеризующий однородность или неоднородность потребления пищи, доля килокалорий, полученных от разных видов пищи, а также минимальная потребительская корзина (продуктовый набор), характеризующая естественный набор продуктов с учетом диетических ограничений и обеспечивает минимально необходимое количество калорий. В этом контексте автором представлена методика расчета общих коэффициентов достаточности потребления продуктов питания, коэффициент доступности продовольствием и интерпретированы их как важнейшие показатели для оценки уровня жизни населения.

Ключевые слова и словосочетания: продовольственная безопасность, статистика продовольственной безопасности, количественные и качественные показатели, методология продовольственной безопасности, самообеспечение продовольствия.

FOOD SAFETY STATISTICAL ASSESSMENT METHODOLOGY: INDICATORS AND THEIR CALCULATION

GOHAR VARDANYAN
Armenian National Agrarian University
Department of Data Science
PhD in Economic Sciences, Professor
vardgohar@yandex.ru

Abstract

In the article, the author raised the issues of the methodology of statistical evaluation of food security. Studying the works of domestic and foreign authors, international experience, the author developed the statistical indicators of food security assessment, gave the order of their calculation. The methodology of food security was presented by the author taking into account the five main social parameters: demographic situation, raising (lowering) the living standards of consumers, healthcare, availability of labor resources and workforce balance and social protection. In addressing the issue of food security, the author relied on food security indicators to identify the following five aspects: each of which is an indicator of the level of food situation in the country, that is: food-consumer, agricultural, industrial, foreign trade and ecological aspects.

Based on the importance of the issue raised, the author has developed a system of food security statistics indicators, which, in his opinion, should complement the course of socio-economic statistics, with a separate section entitled "Food Security Statistics".

The author conditionally divided the five indicators characterizing the food-consumption aspect into two groups, quantitative and qualitative, and presented the methodology of statistical estimation of their calculation. Quantitative indicators attributed to the level of consumption of basic foodstuffs per capita (in kilograms), the level of solvent demand of the population (it reflects the potential of the population in terms of goods and services), such as the food self-sufficiency index (which describes the percentage of the value of agricultural products produced and consumed in the country) as well as the food availability and sufficiency indicators. According to the author, they are attributed to qualitative indicators: physiological requirement level, in kilocalories, which characterizes homogeneity or heterogeneity of food consumption; the portion of calories received from different types of food, such as the minimum consumption basket (food set), which characterizes the natural collection of food, taking into account dietary restrictions; it provides the minimum required number of calories. In this context, the author presented the procedure for calculating the total coefficients of food consumption adequacy, the food availability index, and interpreted them as the most important indicators for assessing the living standards of the population.

Keywords and phrases: food security, food security statistics, quantitative-qualitative indicators, food security methodology, food self-sufficiency.

Ներածություն

Գաղտնիք չէ, որ պարենային անվտանգության հիմնական նպատակը բնակչությանը պարենամթերքով քանակական և որակական ապահովումն է՝ նրանց համար արժանապատիվ կենսամակարդակի ապահովման և պետականության պահպանման համար: Պարենային անվտանգության ձեռք բերման չափանիշ է համարվում տվյալ տարածաշրջանի (երկրի, մարզի, քաղաքի) ինքնաապահովման մակարդակը, ինչը իրենից ներկայացնում է պարենի անհրաժեշտ քանակը համեմատած արդյունքային ցուցանիշների հետ: Ընդ որում, պարենի ծավալը, որակը և տեսականին պետք է բավարար և մատչելի լինեն մարդու նորմալ ֆիզիկական և սոցիալական զարգացման համար, որպես հետևանք նաև՝ ազգաբնակչության վերարտադրության և առողջության պահպանման համար:

Պարենային ապահովության գործում դրսևորված միտումների վերլուծությունը հնարավորություն է տալիս դատելու, թե որքանով և ինչ չափով է տվյալ հասարակությունը վճռում գոյություն ունեցող խնդիրները:

Սննդի նկատմամբ բնակչության պահանջարկի մշտապես աճը ռեսուրսների սահմանափակության և բնակչության թվաքանակի աճման պայմաններում պահանջում է տվյալ խնդիրը դնել առավել կարևորների շարքը և գտնել առաջնահերթ և ռազմավարական լուծումներ, հատկապես մեր տարածաշրջանում՝ 44-օրյա Արցախյան Երկրորդ պատերազմից հետո և համավարակի պայմաններում:

Տեսա-մեթոդաբանական հիմքեր

Մեր կարծիքով՝ պարենային ապահովության մեթոդաբանությունը հարկավոր է մշակել՝ հաշվի առնելով ներքոհիշյալ սոցիալական պարամետրերը.

1. Ժողովրդագրական իրավիճակը, քանի որ դրա ցուցանիշները սերտորեն կապված են պարենային անվտանգության հիմնախնդրի հետ: Պարենային անվտանգության կորուստը ժողովրդագրական իրավիճակի վատթարացման պատճառ կարող է հանդիսանալ, բերելով կյանքի երկարատևության կրճատման, ծնելիության և մահացության մակարդակների, ինչպես նաև միգրացիոն գործընթացների կտրուկ տատանումների:

2. Սպառողների կենսամակարդակի բարձրացումը (իջեցումը), քանի որ տնային տնտեսությունների եկամուտների համեմատությամբ սննդի վրա կատարված ծախսերի աճը վկայում է կյանքի արժեքի բարձրացման և բնակչության կենսամակարդակի իջեցման մասին:

3. Առողջապահությունը, քանի որ բնակչության առողջությունը կարևորագույն սոցիալական պարամետր է և առօրյա պահանջումն է, իսկ մարդու առողջական վիճակի բարելավումը ապրանքների արտադրության և ծառայությունների մատուցման գործընթացում դիտվում է որպես նրա ֆիզիկական զարգացման և աշխատունակության բարձրացման գործոն:

4. Աշխատանքային ռեսուրսների առկայությունը և աշխատուժի հաշվեկշիռը, քանի որ պարենային անվտանգության հիմնախնդրի լուծումը բնակչությանն ապահովում է անհրաժեշտ ֆիզիոլոգիական նորմերով՝ նրանց աշխատունակության պահպանման և բարձրացման համար:

5. Սոցիալական պաշտպանությունը, այն է. բնակչության սակավ ունևոր շերտերին սննդամթերքով ապահովումը:

Պարենային անվտանգության հիմնախնդիրների լուծումը նպաստում է երկրի սոցիալ-տնտեսական շահերի պահպանմանը, տարածաշրջաններում հնարավորությունների հաշվին տնտեսական նախադրյալների ստեղծմանը, առավելապես վատ մեկնարկային պայմաններ ունեցող տարածաշրջաններին օգնության ցուցաբերմանը, գործազրկության, տարածաշրջանային

բանավեճերի, բնակչության միգրացիոն տեղաշարժերի, բնական աղետների հետ կապված գործընթացների կարգավորմանը:

Պարենային ապահովության հիմնախնդրի լուծման ժամանակ հարկավոր է հիմնվել պարենային անվտանգության ցուցանիշների վրա: Ընդհանրապես պարենային ապահովությունը բնութագրելու նպատակով առանձնացվում են հետևյալ հինգ ասպեկտները, որոնցից յուրաքանչյուրը իրենից ներկայացնում է տվյալ երկրի պարենային իրավիճակի և մակարդակի ցուցանիշները [1, էջ 23-46].

I. Պարենային-սպառողական ասպեկտ: Այն իրենից ներկայացնում է պարենային անվտանգության որակական և քանակական ցուցանիշ, ցույց է տալիս սննդամթերքների հանդեպ բնակչության ունեցած ֆիզիոլոգիական պահանջմունքների մակարդակները, նրա վճարունակ պահանջարկը և պարենի ինքնաբավության աստիճանը:

II. Գյուղատնտեսական ասպեկտ: Այն բնութագրում է տվյալ երկրի (տարածաշրջանի) ագրոներուծի փաստացի վիճակը, նրա արդյունավետությունը, եկամտաբերությունը, ներդրումների մակարդակը:

III. Արդյունաբերական ասպեկտ: Այն վերլուծում է արտադրանքի արտադրության գործընթացը, նրա նյութատեխնիկական բազան, ծախսերի և վնասների մակարդակը:

IV. Արտաքին առևտրային ասպեկտ: Այն արտացոլում է գյուղատնտեսական արտադրանքի ներքին և համաշխարհային շուկաների փոխադարձ կապը:

V. Էկոլոգիակենսաբանական ասպեկտ: Այն բնութագրում է թողարկվող գյուղատնտեսական արտադրանքի որակը, դրա համապատասխանությունը որակի անհրաժեշտ նորմերին և ստանդարտներին, ինչպես նաև շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության աստիճանը: Պարենային անվտանգության վերոնշյալ ասպեկտներից յուրաքանչյուրն ունի իր ցուցանիշներ-ինդիկատորները, որոնք բնութագրում են տվյալ երկրում պարենային իրավիճակի դրությունը և մակարդակը: Այսպես, պարենային-սպառողական ասպեկտը իր մեջ ներառում է բնակչության մեկ շնչին ընկնող հիմնական սննդամթերքների սպառման մակարդակը (կիլոգրամներով), բնակչության վճարունակ պահանջարկի մակարդակը, ֆիզիոլոգիական պահանջմունքի մակարդակի ցուցանիշը (կիլո-կալորիաներով), պարենի ինքնաբավության աստիճանի ցուցանիշը, նվազագույն սպառողական զամբյուղը: Գյուղատնտեսական ասպեկտը ներառում է երկրի ագրոներուծի ցուցանիշը, գյուղատնտեսության տնտեսական արդյունավետության ցուցանիշները (1 հա-ից ստացված համախառն արտադրանքը, զուտ եկամուտը, մեկ աշխատողին ընկնող համախառն արտադրանքը, մեկ աշխատողին ընկնող զուտ եկամուտը, հացահատիկային մշակաբույսերի բերքատվությունը 1 հա-ի հաշվով, անասնաբուծության մթերատվությունը 1 կերամիավորի հաշվով, ֆոնդահատույցը գյուղատնտեսության մեջ. արտադրական ֆոնդերի մեկ դրամական միավորին ընկնող համախառն արտադրանքը և զուտ եկամուտը, 100 հա գյուղատնտեսական հողատեսքերին ընկնող հիմնական արտադրական ֆոնդերը, արտադրության և ձեռնարկությունների շահութաբերությունը, մարդկանց թվաքանակը, որոնց կարող է կերակրել մեկ գյուղատնտեսական աշխատողը (քանի մարդ է կերակրում գյուղացին, արտադրողի սպառողական զամբյուղը, արտադրողի եկամտաբերության մակարդակը, գյուղատնտեսությանը տրամադրված դոտացիաների չափը, գյուղատնտեսությունում աշխատավարձի մակարդակի հարաբերությունը երկրում միջին աշխատավարձի նկատմամբ): Արդյունաբերական ասպեկտը ներառում է արտադրանքի արտադրության ծախսերի մակարդակը (նյութական, աշխատանքային, ամորտիզացիա և այլն), արտադրանքի արտադրության հաշվեկշիռը, ապրանքայնության գործակիցը, կորուստների մակարդակը, գնային հարաբերակցությունների մակարդակը: Արտաքին առևտրային ասպեկտը ներառում է պարենամթերքի սպառման մեջ ներմուծման տեսակարար

կշիռը, գյուղատնտեսական արտադրանքի ներմուծման և արտահանման հաշվեկշիռը, սննդամթերքի ներմուծման և արտահանման հաշվեկշիռը, գյուղատնտեսական մեծածախ և մանրածախ գների հարաբերակցությունը հայրենական և ներմուծվող համադրելի արտադրանքի հաշվով, գների ամենամյա տատանման ցուցանիշները: Էկոլոգիակենսաբանական ասպեկտը ներառում է բնակչության սպառման համար պիտանի բերքի տեսակարար կշիռը, էկոլոգիապես մաքուր արտադրության տեսակարար կշիռը ընդհանուր արտադրության ծավալում, հումքի նկատմամբ հիգիենիկ պահանջներ (թույլատրվող թունավոր պարունակությունների առկայությունը տոկոսներով), էկոլոգիապես մաքուր և ավանդական արտադրության պայմաններում արտադրանքի մեջ անհրաժեշտ բաղադրիչների պարունակության հաշվեկշիռը, գյուղատնտեսական արտադրանքի մեջ անհրաժեշտ բաղադրիչների պարունակության համապատասխանությունը. ստացված արտադրության տարբեր գործընթացներում, պիտակների և փաթեթների վրա, էկոլոգիապես մաքուր արտադրանքի և ավանդական ճանապարհով ստացված արտադրանքի արժեքների հարաբերակցությունը, գյուղատնտեսական արտադրության շրջակա միջավայրի վրա ունեցած ներազդեցության գնահատականը. հողի, օդի, գրունտային և մակերեսային ջրերի և այլն:

Կարծում ենք վերոհիշյալում բերված պարենային անվտանգության ասպեկտների չափանիշ-ցուցանիշները նպատակահարմար է կիրառել որպես բաղադրիչներ՝ ագրարային քաղաքականության մշակման ժամանակ, իսկ ստացված արդյունքները կարելի է դարձնել վիճակագրական ժողովածուի մակետ:

Ուսումնասիրության մեթոդներ

Ելնելով վեր բարձրացրած հիմնախնդրի կարևորությունից՝ մեր կողմից մշակվել է պարենային ապահովության վիճակագրության ցուցանիշների համակարգ, որը կներկայացնենք ստորև, ինչը միևնույն ժամանակ պետք է լրացնի սոցիալ-տնտեսական վիճակագրության դասընթացը՝ նախատեսելով առանձին բաժին «Պարենային ապահովության վիճակագրություն» վերնագրով:

Առաջին՝ պարենային-սպառողական ասպեկտը բնութագրող հինգ ցուցանիշները պայմանականորեն կարող ենք բաժանել երկու խմբի. քանակական և որակական: Քանակական ցուցանիշներին կարող ենք վերագրել. բնակչության մեկ շնչին ընկնող հիմնական սննդամթերքների սպառման մակարդակը (կիլոգրամներով), բնակչության վճարունակ պահանջարկի մակարդակը (այն արտացոլում է ապրանքների և ծառայությունների ձեռք բերման գծով բնակչության ներուժային հնարավորությունները), ինչպես նաև պարենի ինքնաբավության աստիճանի ցուցանիշը (այն բնութագրում է երկրում արտադրված և սպառված գյուղատնտեսական արտադրանքի արժեքների միջև եղած տոկոսային հարաբերությունը), ինչպես նաև պարենի մատչելիության և բավականաչափության ցուցանիշները:

« 4.4-ն պարենային հաշվեկշիռների կազմման ժամանակ կիրառում է հետևյալ բանաձևը [2, էջ 78].

Ինքնաբավության աստիճան, % = $\frac{\text{Արտադրություն}}{\text{Արտադրություն} + \text{Ներմուծում} - \text{Արտահանում}}$

Որակական ցուցանիշներին են վերագրվում.

1. Ֆիզիոլոգիական պահանջմունքի մակարդակի ցուցանիշը, կիլոկալորիաներով, այն բնութագրում է պարենի սպառման միասեռությունը կամ տարասեռությունը, նաև սննդամթերքի տարբեր տեսակներից ստացված կիլոկալորիաների մասը,

2. Նվազագույն սպառողական զամբյուղը (պարենային հավաքածուն), այն բնութագրում է սննդամթերքների բնական հավաքածուն՝ հաշվի առած սննդակարգային սահմանափակումները և ապահովում է կալորիաների նվազագույն անհրաժեշտ քանակությունը:

Հարկ է նշել, որ սպառման բավականաչափությունը և պարենի մատչելիությունը պարենային ապահովության և անվտանգության որոշիչ պահանջն է և նորմատիվային բազայի մշակման ժամանակ առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի այդ ցուցանիշների վրա: Մի շարք տնտեսագետների կողմից այդ ցուցանիշների հաշվարկման համար առաջարկվում է կիրառել հետևյալ բանաձևերը [3, էջ 25-30; 4, էջ 3-7; 5, էջ 13-14]:

Պարենամթերքի սպառման բավականաչափության ընդհանուր գործակիցը.

K_1 (բավականաչափ) = $P\phi/Pp$ = օրական (ամսական) փաստացի սնման ռացիոնի (օրապարեն) արժեք / ըստ բժշկական նորմերի օրական (ամսական) սնման ռացիոնի արժեք կամ՝ K_2 (բավականաչափ) = $P\phi / Pp$ = օրական (ամսական) փաստացի սնման ռացիոն, կկալ / ըստ բժշկական նորմերի օրական (ամսական) սնման ռացիոն, կկալ:

Ընդհանուր գործակիցներին զուգահեռ հաշվարկվում է նաև պարենամթերքի սպառման բավականաչափության մասնակի գործակիցներ՝ ըստ սննդամթերքների առանձին տեսակների, տվյալ տարածաշրջանի քաղաքային և գյուղական բնակչության համար առանձին-առանձին: Տվյալ դեպքում հարկավոր է քաղաքային բնակչության սնման ռացիոնի ճշգրտում կատարել՝ ավելացնելով դրան տնամերձից ստացված մթերքները:

Հաշվարկման այսպիսի մեթոդաբանությունն անհրաժեշտ է որոշակի կոնկրետ ժամանակահատվածում փաստացի տվյալները բժշկական նորմերի հետ համեմատելու համար: Որքան այդ նշանակությունները մոտ են ստացվում 1-ին (100%-ին), այնքան փաստացի սնման նորմերը համապատասխանում են երաշխավորվող բժշկական նորմերին և կնշանակի, որ տվյալ տարածաշրջանում սոցիալ-տնտեսական վիճակը կայուն է:

Պարենի մատչելիությունը բնութագրվում է բնակչության կողմից փաստացի սպառված պարենամթերքի մակարդակով, այն մեծապես կախված է առկա ռեսուրսներից, այդ թվում՝ տնային տնտեսությունների դրամական եկամուտներից, որոնք հանդիսանում են բնակչության կենսամակարդակը գնահատող կարևորագույն ցուցանիշներ:

Ըստ պրոֆ. Յու.Ն. Իվանովի «Նյութական բարեկեցության վերլուծությունը հիմնված է ոչ միայն վերջնական սպառման վրա կատարված ծախսերի ընդհանուր գումարի հաշվառման, նաև դրա կառուցվածքի ուսումնասիրության վրա: Մարդու առավել կարևոր և առաջին հերթին բավարարվող պահանջումներից է սնուցումը և դա է պատճառը, որ սնուցման վրա կատարված ծախսերի տեսակարար կշիռը կիրառվում է որպես բնակչության կենսամակարդակի ինդիկատոր: Որքան ցածր է դրա մասնաբաժինը, այնքան բարձր է հասարակության բարեկեցության մակարդակը» [6, էջ 619]:

Պարենի մատչելիության ընդհանուր ցուցանիշը հաշվարկվում է պարենային զամբյուղի ամսական արժեքը, դրամներով / բնակչության մեկ շնչին ընկնող միջին ամսական եկամտին կամ վերջնական սպառման վրա կատարված ծախսերին, դրամ: Տվյալ դեպքում բնակչության տարբեր խմբերի եկամուտների օրեցօր խորացող տարբերակման հետ կապված, պարենի մատչելիության մասնակի ցուցանիշները հաշվարկվում են ըստ եկամտի տարբեր մակարդակ ունեցող խմբերի: Որքան այս գործակցի նշանակությունը մոտ է ստացվում մեկի, այնքան բնակչության դրամական եկամուտների մեջ բարձր է պարենային ապրանքների վրա կատարված ծախսերի տեսակարար կշիռը և այնքան ավելի քիչ են դրանք դառնում մատչելի:

Ներքոհիշյալ աղյուսակ 1-ում ներկայացնենք 2011-2020 թթ.-ին ՀՀ-ում հիմնական

պարենամթերքների ինքնաբավության աստիճանի ցուցանիշների դինամիկան ըստ ազգային պարենային հաշվեկշռի տվյալների [2, էջ 68-76]:

Աղյուսակ 1.

Տարի	Պարենամթերքներ, ցուցանիշներ(%)																		
	Ցուցանիշ	Գարն	Վարձատր	Վաթ			Հատիկաբերություն	Միրգ և հատապտուղ					Բանջարեղեն					2ուկ	2ու
				տավարի	խոզի	թռչնի		ընդամենը	խնձոր	ծիրան	տանձ	խաղող	ընդհանուր	Կաղամբ	Վարունգ	Լոլիկ	Սոխ		
2011	36,5	98,2	82,9	78,4	43,3	12,2	47,3	90,0	95,7	116,5	99,6	101,4	98,2	100,7	98	101,1	79,5	87,2	94,1
2012	32,9	99,0	83,1	81,6	38,3	19,1	56,0	96,1	99,1	120,6	99,6	102,6	99,3	100,6	98,4	101,8	84,9	102,8	99,5
2013	46,8	102,5	85,0	86,2	46,3	19,8	54,3	99,6	100,0	134,4	100,4	102,0	99,5	99,8	100,3	101,8	86,5	130,0	96,3
2014	48,7	101,1	84,2	87,9	54,2	20,0	51,9	93,8	99,1	168,0	109,0	101,9	99,1	99,6	98,7	99,9	85,3	124,0	97,2
2015	49,5	102,1	93,0	92,3	57,8	21,8	58,2	102,1	100,6	119,3	111,8	101,2	100,3	102,1	103,5	100,5	88,3	114,2	99,5
2016	53,2	101,3	88,6	92,5	64,1	28,5	61,6	98,1	101,8	109,9	116,8	119,3	103,3	99,9	101,6	115,5	91,5	108,6	99,4
2017	33,2	102,6	91,2	91,5	58,0	22,5	49,7	109,7	99,7	165,0	101,1	106,4	102,5	99,8	100,6	113,7	90,8	101,8	98,2
2018	31,5	102,6	86,1	89,2	53,3	26,6	38,6	108,9	105,9	179,5	98,6	104,8	104,7	100,6	101,6	129	91,2	109,0	99,5
2019	25,9	101,1	84,3	90,4	55,5	21,7	38,2	104,0	114,6	183,0	100,8	103,6	102,4	100,8	117,7	111,6	86,9	113,1	100,0
2020	24,4	101,1	82,0	87,3	45,1	23,9	37,3	98,2	105,9	179,5	98,6	104,8	103,9	100,5	107,7	116,6	91,4	148,4	100,3

ՀՀ-ում հիմնական պարենամթերքների ինքնաբավության աստիճանի ցուցանիշների դինամիկան 2011-2020 թթ.-ին:

*Աղյուսակը կազմվել և հաշվարկվել է հեղինակի կողմից:

Ինչպես վկայում են աղյուսակ 1-ում բերված տվյալները, վերջին տասը տարիների ընթացքում ՀՀ-ում հիմնական պարենամթերքների ինքնաբավության աստիճանի շարժընթացը ունեցել է հետևյալ պատկերը. ցորենի ինքնաբավությունը կրճատվել է 12,1 %-ով, հատիկաընդեղենային մշակաբույսերինը՝ 10,0%-ով, իսկ մնացած պարենամթերքների ինքնաբավության աստիճանը ունեցել է աճման միտումներ: Սակայն, անհրաժեշտ է ի նկատի ունենալ, որ երկրում տիրող անկայուն իրավիճակով պայմանավորված 2020թ.-ին հաջորդող տարիներին կունենանք բոլորովին այլ պատկեր: Քանի որ, վերջինս կենթարկվի այնպիսի գլոբալ երևույթների ազդեցությանը, ինչպիսիք են՝ Արցախյան երկրորդ 44-օրյա պատերազմի հետևանքները, Քովիդ-19 համավարակը, ռուս-ուկրաինական ներկայիս ձգձգվող պատերազմը, մեր երկրի դաշնակիցների նկատմամբ կիրառվող պատժամիջոցները, միջազգային տնտեսական հարաբերությունների ապակայունացումը և այլն: Ուստի անհրաժեշտ է ձեռնարկել կայուն, ճկուն և նպատակային գործիքակազմ՝ արտաքին անբարենպաստ ազդակների դեմ համարժեք դրական գործոններով պայքարելու և ազդեցությունը մասնակի կամ լրիվ չեզոքացնելու նպատակով: Վերջինիս իրականացումը պահանջում է շարունակական ջանքեր և համակողմանի վերլուծություններ:

Ստացված արդյունքներ

Այս ցուցանիշները առանձնահատուկ նշանակություն են ստանում, երբ համեմատվում են իրենց սահմանային թվերի հետ: Սահմանային թվերի որոշման ժամանակ պարենային ասպեկտն ունի որոշակի առանձնահատկություններ: Ցուցանիշների ստորին սահմանը բնութագրում է

այնպիսի մակարդակ, որից ցածր երկիրը և իր բնակիչները կհայտնվեն աղետալի իրավիճակում, այսինքն ենթարկված կլինեն թերսնման, սովի, ինչն էլ ուղղակիորեն կվտանգի երկրի տնտեսական անվտանգությունը: Վերին սահմանը բնութագրական է սննդի հանդեպ մարդու ֆիզիոլոգիական պահանջմունքների գերազանցելուն (դրա սահմաններից դուրս գալուն), ինչը հասարակությանը սպառնում է գիրությանը, ավելցուկային քաշով, գերսնման հետ կապված հիվանդություններով: Պարենամթերքի սպառման բավականաչափության ցուցանիշի համար վերին սահման է ծառայում սնման ռացիոնի բժշկական նորմերը, իսկ պարենի մատչելիության մակարդակի հաշվարկման համար՝ պարենային զամբյուղի արժեքը:

Ստորին սահմանային նշանակություն ընդունված է համարել FAO-ի դասակարգման համաձայն սահմանված նորման՝ օրական 2150 կկալ, ինչը վերաբերում է սովի սահմանագծին գտնվող կատեգորիային և այն համարվում է ճգնաժամային սահմանային նշանակություն: Ի դեպ, սովածների կատեգորիայի ցուցանիշ է համարվում օրական 1520 կկալ սահմանը: Այս դեպքում պարենամթերքի սպառման բավականաչափության ցուցանիշի բանաձևը՝ հաշվի առած ճգնաժամային սահմանային նշանակությունը կունենա հետևյալ տեսքը. փաստացի օրական սնման ռացիոնի կկալ / 2150:

Տվյալ ցուցանիշի հաշվարկման մեթոդաբանությունն անհրաժեշտ է ուսումնասիրվող և կրիտիկական տվյալների միջև եղած ճեղքվածքի մակարդակի որոշման համար:

Եզրակացություն

Պարենի ինքնաբավության խնդիրը բացի տնտեսականից ունի նաև քաղաքական և սոցիալական ասպեկտներ: Բավականաչափ քանակությամբ պարենի սեփական ռեսուրսների առկայությունը երկրի քաղաքական անկախության երաշխիքներից է: Պարենի արտահանման և ներմուծման ծավալների միջև ռացիոնալ համամասնությունների սահմանումը և հայրենական ապրանքարտադրողի աջակցությունը տնտեսության որոշակի ճյուղերում զբաղվածության, նաև եկամտաբերության մակարդակի բարձրացման երաշխիք է, ինչից էլ կախված է բնակչության կենսամակարդակը: Սակայն, ոչ բոլոր երկրների բնական պայմաններն են հնարավորություն ընձեռում լրիվ ծավալով արտադրել պարենի կամ հումքի բոլոր անհրաժեշտ տեսակները, այդ դեպքում նրանք ստիպված են ներմուծել՝ դրանով իսկ ծածկելով արտադրանքի տվյալ տեսակներով եղած պահանջմունքը, ինչն էլ հանդիսանում է տվյալ երկիր պարենի և հումքի ներմուծման հիմնական պատճառը: Կարծիքը, որ ներմուծումը նպատակահարմար է այն դեպքում, երբ համեմատած հայրենական ապրանքի հետ առկա է բարձր որակ և ցածր գին, համապատասխանում է շուկայական տնտեսության դրոյթներին: Դա համապատասխանում է զարգացած շուկայական տնտեսություն ունեցող երկրներին և ոչ Հայաստանին, որը հայրենական ապրանքարտադրողի աջակցության ուղղություն է վերցրել:

Պարենամթերքի ոլորտում տարածաշրջանի տնտեսական անվտանգության պահպանման համար հարկավոր է հենվել համաշխարհային պրակտիկայում ընդունված հաշվարկներին համապատասխան բնակչությանը սննդամթերքներով ապահովման անհրաժեշտ և բավականաչափ մակարդակների վրա: Զարգացած երկրներում պարենամթերքով ինքնապահովումը հաշվարկվում է որպես երկրում ստեղծված և սպառված գյուղատնտեսական արտադրանքի արժեքների միջև եղած տոկոսային հարաբերություն, այդ գործակիցը նախապես հաշվարկվում է գյուղատնտեսական արտադրանքի յուրաքանչյուր տեսակի համար՝ հաշվի առնելով գների փոփոխությունները:

Անասնաբուժական արտադրանքի մեջ հաշվառվում է միայն երկրի ներսում ստեղծված ավելացված արժեքը:

Բնակչության պարենամթերքով ինքնապահովման (ինքնաբավության) գործակցի իջեցման վրա ազդում են մի շարք գործոններ, այդ թվում՝ պահանջարկի, բնակչության թվաքանակի, բնակչության մեկ շնչին ընկնող սպառման աճը, տարբեր մշակույթներում պահանջմունքների անհավասարակշռվածությունը (այստեղից էլ՝ բերքատվության նվազման տեմպերը, իսկ որոշ մշակաբույսերի գծով նաև դրա բացարձակ ծավալների կրճատումը), վերամշակվող տարածքների մշտապես կրճատման հետևանքով (հողի օգտագործումը ճանապարհների, արդյունաբերական օբյեկտների, բնակելի տների շինարարության նպատակներով) արտադրության ոչ բավարար աճման տեմպերը, վերամշակվող տարածքի օգտագործման գործակցի իջեցումը, աշխատանքային ձեռքերի պակասը, էժանագին պարենամթերքի ներկրումը, գյուղատնտեսական որոշ մշակաբույսերի բերքատվության աճման տեմպերի դանդաղումը, ինտենսիվ քիմիացման հետևանքով պտղաբերության անկումը:

Հասարակության տնտեսական անկախության ապահովումը պահանջում է հաշվեկշռված պարենային տնտեսության զարգացման մեխանիզմի ստեղծում: Պարենային ոլորտում ազգային անվտանգության հասնելու գործընթացը պահանջում է պետական քաղաքականության հիմքում դնել բնակչությանը պարենամթերքով երաշխավորված ապահովումը, թերսնման դեպքերի բացառումը, սովի վերջնականապես վերացումը, նաև՝ նորմալ և երկարատև կյանքի համար պայմանների ստեղծումը:

Ագրոպարենային ոլորտի կառավարումը ենթադրում է բնակչության պարենային ապահովության պարամետրերի մշտակայուն մոնիթորինգ, այդ ցուցանիշների ինդիկատորներ են հանդիսանում պարենամթերքի ֆիզիկական և տնտեսական մատչելիությունը, այսինքն՝ բնակչության վճարունակ պահանջարկին համապատասխան քանակով և տեսականիով սննդամթերքի առկայությունը:

Պարենային ապահովության չափանիշները իրենցից ներկայացնում են սահմանափակ անվանացանկով սննդամթերքներով բնակչության ֆիզիոլոգիական պահանջմունքների ապահովման իրավիճակի գնահատական: Կարևոր նշանակություն ունեն ոչ միայն այդ ցուցանիշները, այլ նաև դրանց սահմանային նշանակությունները, որոնց չափապանումը խոչընդոտում է ընդլայնված վերարտադրության նորմալ զարգացմանը, բնակչության առողջության և սոցիալական անվտանգության ոլորտում բերում է բացասական, ջախջախիչ միտումների ձևավորմանը: Պարենային ապահովության ինդիկատորների համակարգը կախված է տարածաշրջանների տնտեսական առանձնահատկություններից, դրանց բնական, ռեսուրսային, արտադրական, գիտատեխնիկական և այլ տեսակի ներուժից, ագրարային հատվածի վիճակից, ինչպես նաև իրական և երաշխավորված նվազագույն ստանդարտների՝ նվազագույն աշխատավարձի, կենսանվազագույնի և սպառողական զամբյուղի հարաբերակցություններից:

Գրականության ցանկ

1. Таишева Г.Р., «Состояние и стратегия продовольственного обеспечения населения на региональном уровне.», Диссертация на соискание ученой степени кандидата экономических наук. Казань., 2002, 206 стр.
2. «Պարենային ապահովություն և աղքատություն», 2021 թվականի հունվար-դեկտեմբեր, վիճակագրական տեղեկագիր, ՀՀ Վիճակագրական կոմիտե (ARMSTAT), Երևան, 2022:
3. Алексеев А.Н., «Формирование экономического механизма продовольственного обеспечения населения Северо-Восточного региона России», монография. – М., 2006, 149 стр.
4. Модебадзе Н., «Оценка продовольственной безопасности региона//АПК экономика, управление».- 1997, N12, с.3-7
5. Роднина Н.В., «Развитие системы продовольственного обеспечения населения в условиях модернизации экономики (на примере Северо-Востока РФ)», автореферат дисс. на соиск. уч. ст. д.э. н., Якутск, 2011, 41 стр.
6. «Экономическая статистика», учебник, под. ред. Ю.Н. Иванова, М.: ИНФРА – М, 2008, 640 стр.

**ՋՐԱՇԻԹԱՅԻՆ ՀԻՂՐՈՊՈՆԻԿԱՆ ՈՐՊԵՍ ՌԱԴԻՈԷԿՈՆՈԳՐԱՊԵՍ ԱՌԱՎԵԼ
ԱՆՎՏԱՆԳ ԲՈՒՍԱՀՈՒՄՔԻ ԱՐՏԱԴՐՄԱՆ ԿԵՆՍԱՏԵՆՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ**

ԼԱՌԻՐԱ ՂԱԼԱԶՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
Գ. Ս. Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտ
առաջատար գիտաշխատող
գյուղատնտեսական գիտությունների թեկնածու
lauraghalachyan@yahoo.com

ԱՆՆԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
Գ. Ս. Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտ
առաջատար գիտաշխատող
կենսաբանական գիտությունների թեկնածու
anntadevosyan@yahoo.com

ՋՈՒԼԻԵՏՏԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
Գ. Ս. Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտ
առաջատար գիտաշխատող
կենսաբանական գիտությունների թեկնածու
jouliettalex@gmail.com

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
Գ. Ս. Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտ
կրտսեր գիտաշխատող
armineasatryan@bk.ru

ԱՆԱՀԻՏ ԹՈՎՄԱՍՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
Գ. Ս. Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտ
գիտաշխատող
anahit_tovmasyan@bk.ru

ՄԱՀՍԱ ԴԱՐՅԱԴԱՐ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
Գ. Ս. Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտ
գիտաշխատող
կենսաբանական գիտությունների թեկնածու
daryadarmahsa0@gmail.com

ՌՈՒԲԵՆ ՍԻՍԵՆՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
Գ. Ս. Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտ
ավագ գիտաշխատող
կենսաբանական գիտությունների թեկնածու
dr.roupensisserian@gmail.com

Համառոտագիր

Հայտնի է, որ տեխնածին (^{90}Sr , ^{89}Sr , ^{137}Cs և այլն) և բնական (^{40}K , ^{234}Th , ^{231}Th և այլն) ռադիոնուկլիդները (ՌՆ) ագրոհամակեցությունների ոռոգիչ ջուր - հող - բույս և հիդրոպոնիկայի սննդալուծույթ - սուբստրատ - բույս շղթաների միջոցով կարող են ներթափանցել մարդու օրգանիզմ՝ հանգեցնելով վտանգավոր հիվանդությունների առաջացման: Ուստի, բուսահումքի գումարային β -ռադիոակտիվության վերահսկումը և ռադիոէկոլոգիապես անվտանգ բուսահումքի ստացումը համարվում է արդիական խնդիր:

Հաշվի առնելով, որ առանձնապես մեծ վտանգ է ներկայացնում ՌՆ-ի կուտակումը մարդու կողմից օգտագործվող մշակաբույսերում (մասնավորապես, բանջարաբույսերում), մեր կողմից փորձ է արվել բացահայտել ռադիոէկոլոգիապես առավել անվտանգ որակյալ բուսահումք ապահովող հիդրոպոնիկական համակարգը: Այդ նպատակով ուսումնասիրվել է մի շարք ոչ ավանդական, արժեքավոր, տերևավոր բանջարաբույսերի գումարային β -ռադիոակտիվությունն Արարատյան դաշտի բացօթյա հիդրոպոնիկական տարբեր համակարգերի (օրգանական, ջրաշիթային, դասական) և հողային մշակության պայմաններում:

Ռադիոքիմիական ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ Արարատյան դաշտում (ՀԱԷԿ-ի ազդեցության 30 կմ շառավղով գոտի, ք. Երևան, ՀՊԻ-ի տարածք), անկախ մշակության եղանակից (հիդրոպոնիկա՝ ջրաշիթային, դասական, օրգանական և հող) բանջարաբույսերի (եղերդակ աղցանային՝ *Cichorium endivia* L., կանաչ միզունա՝ *Brassica rapa* var. *nipposinica*, կալե՝ *Brassica oleracea* var. *sabellica* L., գլուխ հազար՝ *Butter head lettuce*, չինական կաղամբ պակ-չոյ՝ *Brassica rapa* subsp. *chinensis*) բուսահումքը ռադիոէկոլոգիապես անվտանգ է, քանի որ գումարային β -ռադիոակտիվությունը համապատասխանում է ռադիոէկոլոգիական անվտանգության չափանիշներին (1.0 Բք/գ): Ընդ որում, ռադիոէկոլոգիապես առավել անվտանգ որակյալ բուսահումք ապահովել է ջրաշիթային հիդրոպոնիկական՝ բույսերի աճեցման պայմանների ռադիոէկոլոգիական լարվածության թուլացման (սննդարար լուծույթի ծախսի կրճատում և մղման կաթիլային եղանակ) շնորհիվ:

Պարզվել է, որ բանջարաբույսերը դասական հիդրոպոնիկայում և հողում ըստ գումարային β -ռադիոակտիվության կազմում են միևնույն նվազող շարքը՝ միզունա > գլուխ հազար > պակ-չոյ > կալե > եղերդակ աղցանային: Ընդ որում, բանջարաբույսերը գումարային β -ռադիոակտիվությամբ դասական հիդրոպոնիկայում գերազանցել են ինչպես ջրաշիթային հիդրոպոնիկայի (1,1-1,5 անգամ), այնպես էլ հողային պայմաններում աճեցվածներին (1.2-1.5 անգամ), օրգանական հիդրոպոնիկայում՝ գերազանցել են ինչպես դասական հիդրոպոնիկայում (1.1-1.6 անգամ), այնպես էլ հողային պայմաններում աճեցվածներին (1.3-1.9 անգամ): Անկախ մշակության եղանակից, գլուխ հազարը գերազանցել է թե կալեին (1.1-1.6 անգամ), և թե պակ-չոյին (1.2-1.3) անգամ:

Գործնական առաջարկ

Բանջարաբույսերի ռադիոէկոլոգիապես առավել անվտանգ որակյալ բուսահումքի արտադրման համար առաջարկվում է մշակության ջրաշիթային հիդրոպոնիկ եղանակը:

Բանալի բառեր և բառակապակցություններ. բանջարաբույսեր, գումարային β -ռադիոակտիվություն, դասական և օրգանական հիդրոպոնիկա, հող:

ВОДОСТРУЙНАЯ ГИДРОПОНИКА КАК БИОТЕХНОЛОГИЧЕСКИЙ МЕТОД ПРОИЗВОДСТВА РАДИОЭКОЛОГИЧЕСКИ НАИБОЛЕЕ БЕЗОПАСНОГО РАСТИТЕЛЬНОГО СЫРЬЯ

ЛАУРА КАЛАЧЯН

Национальная академия наук республики Армения
Институт проблем гидропоники им. Г.С. Давтяна
ведущий научный сотрудник
кандидат сельскохозяйственных наук
laurahalachyan@yahoo.com

АННА ТАДЕВОСЯН

Национальная академия наук республики Армения
Институт проблем гидропоники им. Г.С. Давтяна
Ведущий научный сотрудник
кандидат биологических наук
anntadevosyan@yahoo.com

ДЖУЛИЕТТА АЛЕКСАНИЯН

Национальная академия наук республики Армения
Институт проблем гидропоники им. Г.С. Давтяна
Ведущий научный сотрудник
кандидат биологических наук
jouliettalex@gmail.com

АРМЕНИИ АСАТРЯН

Национальная академия наук республики Армения
Институт проблем гидропоники им. Г.С. Давтяна
младший научный сотрудник
armineasatryan@bk.ru

АНАИТ ТОВМАСЯН

Национальная академия наук республики Армения
Институт проблем гидропоники им. Г.С. Давтяна
научный сотрудник
anahit_tovmasyan@bk.ru

МАХСА ДАРЯДАР

Национальная академия наук республики Армения
Институт проблем гидропоники им. Г.С. Давтяна
научный сотрудник
кандидат биологических наук
daryadarmahsa0@gmail.com

РУБЕН СИСЕРЯН

Национальная академия наук республики Армения
Институт проблем гидропоники им. Г.С. Давтяна
старший научный сотрудник
кандидат биологических наук
dr.roupensisserian@gmail.com

Аннотация

Известно, что техногенные (^{90}Sr , ^{89}Sr , ^{137}Cs и т.д) и естественные (^{40}K , ^{234}Th , ^{231}Th и т.д) радионуклиды (РН) могут проникнуть в организм человека через цепь агроценозов: поливная вода - почва - растение, а в гидропонике: питательный раствор - субстрат - растение, приводящие к возникновению опасных заболеваний. Следовательно, контролирование суммарной β -радиоактивности в растительном сырье и получение радиоэкологически безопасного растительного сырья является актуальной задачей.

Учитывая, что наибольшую опасность представляет накопление РН в используемых в пищу растениях (в частности овощные культуры), Мы попытались выявить гидропоническую систему, которая обеспечивает радиоэкологически наиболее безопасное качественное растительное сырье.

С этой целью исследована суммарная β -радиоактивность некоторых нетрадиционных листовых овощных культур, выращенные в различных системах открытой гидропоники (органическая, водоструйная, классическая) и почвы Араратской долины. Данное исследование имеет практическое значение, так как предоставляет возможность получения радиоэкологически безопасного качественного растительного сырья.

В результате радиохимических исследований выяснилось, что в Араратской долине (зона влияния Армянской АЭС в радиусе 30 км), вне зависимости от способа выращивания (гидропоника – органическая, водоструйная, классическая, и почва), растительное сырье овощных растений (цикорий салатный - *Cichorium endivia* L., зеленая мизуна - *Brassica rapa* var. *sipposinica*, кале - *Brassica oleracea* var. *sabellica* L., салат кочанный - *Butter head lettuce*, китайская капуста пак-чой - *Brassica rapa* subsp. *chinensis*) радиоэкологически безопасное, так как по суммарной β -радиоактивности соответствует критериям радиоэкологической безопасности - 1.0 Бк/г. Радиоэкологически наиболее безопасное растительное сырье получено в водоструйной гидропонике. Это обусловлено значительным уменьшением радиэкологического напряжения условий выращивания растений в водоструйной гидропонике (капельная система подачи питательного раствора).

Выяснилось, что овощные культуры, в гидропонике и почве, по суммарной β -радиоактивности составили следующий убывающий ряд: зеленая мизуна > салат кочанный > пак-чой > кале > салатный цикорий, а в органической гидропонике: салат кочанный > кале > пак-чой. По суммарной β -радиоактивности овощные культуры классической гидропоники превосходили растений как водоструйной гидропоники (в 1.1-1.5 раза), так и почвы (в 1.2-1.8 раза), а растения органической гидропоники превосходили растений как классической (1.1-1.6 раза), так и растений выращенных в условиях почвы (1.3-1.9 раза). Независимо от способа выращивания, кочанный салат по суммарной β -радиоактивности превосходил как кале (1.1-1.6 раза), так и пак-чой (1.2-1.3 раза). Вероятно, по суммарной β -радиоактивности превосходство гидропонических растений над почвенными, обусловлено наибольшим поглощением количества калия (^{40}K) из питательного раствора.

Практическая рекомендация

Для производства радиоэкологически безопасного качественного растительного сырья овощных растений рекомендуется водоструйный гидропонический метод выращивания.

Ключевые слова и фразы: овощные растения, суммарная β -радиоактивность, классическая и органическая гидропоника, почва.

WATER-STREAM HYDROPONICS AS A BIOTECHNOLOGICAL METHOD FOR THE PRODUCTION OF THE RADIOECOLOGICALLY SAFER PLANT RAW MATERIAL

LAURA GHALACHYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
G.S. Davtyan Institute of Hydroponics Problems
Leading researcher
PhD in Agricultural Sciences
lauraghalachyan@yahoo.com

ANNA TADEVOSYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
G.S. Davtyan Institute of Hydroponics Problems
Leading researcher
PhD in Biology
anntadevosyan@yahoo.com

JULIETTA ALEXANYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
G.S. Davtyan Institute of Hydroponics Problems
Leading researcher
PhD in Biological Sciences
jouliettalex@gmail.com

ARMENUHI ASATRYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
G.S. Davtyan Institute of Hydroponics Problems
Junior researcher
armineasatryan@bk.ru

ANAHIT TOVMASYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
G.S. Davtyan Institute of Hydroponics Problems
researcher
anahit_tovmasyan@bk.ru

MAHSA DARYADAR

National Academy of Sciences of the Republic of Armenia
G.S. Davtyan Institute of Hydroponics Problems
researcher
PhD in Biological Sciences
daryadarmahsa0@gmail.com

RUBEN SISERYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
G.S. Davtyan Institute of Hydroponics Problems
senior researcher
PhD in Biological Sciences
dr.roupensisserian@gmail.com

Abstract

It is known that technogenic (^{90}Sr , ^{89}Sr , ^{137}Cs , etc.) and natural (^{40}K , ^{234}Th , ^{231}Th , etc.) radionuclides (RN) may enter human organism through the irrigation water – soil - plant and hydroponic nutrition solution – substrate - plant chains of the agrocenoses and lead to the development of dangerous diseases. Thus, the controlling of the total β -radioactivity of plant raw material and the receiving of the radioecologically safer plant raw material is considered a modern problem.

Taking into account that accumulation of RN in the crops used by human, especially in vegetables is a big danger, we studied total β -radioactivity of several non-traditional leafy vegetables in conditions of outdoor hydroponic different systems (water-jet, classical, organic) and soil culture of Ararat Valley. It has concrete practical meaning, since it will allow receiving of radioecologically safer qualify plant raw material.

As a result of radiochemical studies it was found that regardless from the cultivation way (hydroponics - water-jet, classical, organic and soil), the plant raw material of vegetables (*Cichorium endivia* L., green mizuna - *Brassica rapa* var. *nipposinica*, kale - *Brassica oleracea* var. *sabellica* L., Butterhead lettuce, chinese cabbage bok-choy - *Brassica rapa* subsp. *chinensis*) is radioecologically safe in Ararat Valley (ANPP influence zone with 30 km radius, Yerevan, area of IHP), because total β -radioactivity corresponds to the criteria of the radioecological safety (1.0 Bq/g). At the same time, the radioecologically safer quality plant raw material was provided by the water-jet hydroponics due to reduction of radioecological stress in plants cultivation conditions (reduction of nutrition solution consumption an drop way of pumping).

It was found that according to total β -radioactivity vegetables make the same decreasing range in classical hydroponics and in soil: mizuna > butterhead lettuce > bok choy > cichorium endivia. At the same time, in terms of the β -radioactivity in classical hydroponics vegetables exceeded plants cultivated in water-jet hydroponics (1.1-1.5 times), as well as plants cultivated in soil (1.2-1.5 times) , and in organic hydroponics plants exceeded those cultivated in classical hydroponics (1.1-1.6 times), as well as in soil conditions (1.3-1.9 times). Regardless of cultivation way the butterhead lettuce exceeded kale (1.1-1.6 times), as well as bok choy (1.2-1.3 times) in total β -radioactivity. It is possible that the excess of hydroponic plants over soil ones in total β -radioactivity is due to a larger intake of potassium (^{40}K).

Practical recommendation: The water-jet hydroponic method of cultivation is proposed for production of the radioecologically safer qualify plant raw material of vegetables.

Keywords and phrases: vegetables, total β -radioactivity, classical and organic hydroponics, soil.

Ներածություն

Հայտնի է, որ տեխնածին և բնական ռադիոնուկլիդները (ՌՆ) ագրոհամակեցությունների ոռոգիչ ջուր - հող - բույս և հիդրոպոնիկայի սննդալուծույթ - սուբստրատ - բույս փոխանցման շղթաների միջոցով կարող են ներթափանցել մարդու օրգանիզմ՝ հանգեցնելով վտանգավոր հիվանդությունների առաջացման **[6-11, 13-18]**: Ուստի, բուսահումքում β - ճառագայթող տեխնածին (^{90}Sr , ^{89}Sr , ^{137}Cs , ^{134}Cs և այլն), բնական (^{40}K , ^{234}Th , ^{231}Th , ^{210}Pb և այլն) ՌՆ-ի պարունակության վերահսկումը և ռադիոէկոլոգիապես անվտանգ բուսահումքի ստացումը համարվում է արդիական խնդիր: Հաշվի առնելով, որ առանձնապես մեծ վտանգ է ներկայացնում ՌՆ-ի կուտակումը մարդու կողմից օգտագործվող մշակաբույսերում (մասնավորապես, բանջարաբույսերում), մեր կողմից փորձ է արվել բացահայտել ռադիոէկոլոգիապես առավել անվտանգ որակյալ բուսահումք ապահովող հիդրոպոնիկական համակարգը: Այդ նպատակով ուսումնասիրվել է մի շարք ոչ ավանդական, արժեքավոր, տերևավոր բանջարաբույսերի գումարային β -ռադիոակտիվությունն Արարատյան դաշտի բացօթյա հիդրոպոնիկական տարբեր համակարգերի (օրգանական, ջրաշիթային, դասական) և հողային մշակության պայմաններում:

Սա ունի կոնկրետ գործնական նշանակություն, քանի որ հնարավորություն կտա ստանալ ռադիոէկոլոգիապես առավել անվտանգ որակյալ բուսահումք:

Նյութ և մեթոդ

Հետազոտությունները կատարվել են 2017-2021թթ. Արարատյան դաշտում գտնվող ՀՊԻ-ի փորձադաշտում (ՀԱԷԿ-ի տեխնածին ազդեցության 30 կմ շառավղով գոտի): Հետազոտություններն իրականացվել են Երևանի կիսաանապատային գոտու խիստ ցամաքային կլիմայական պայմաններում: Արարատյան դաշտը գտնվում է ծովի մակերևույթից մոտ 850-900 մ բարձրության վրա, շրջապատված է հարավ-արևմուտքից և հարավից՝ Մեծ և Փոքր Արարատներով, հյուսիս-արևմուտքից՝ Արագած լեռով և հյուսիս-արևելքից՝ Ուրցի և Գեղամա լեռնաշղթաներով: Հարկ է նշել, որ այդ տարածաշրջանում կլիման խիստ ցամաքային է, օդի ամսական միջին ջերմաստիճանը հուլիս-օգոստոս ամիսներին 25 - 26 °C է, տեղումների տարեկան միջին գումարը հասնում է մինչև 300 մմ **[2]**:

Փորձերը դրվել են օրգանական, ջրաշիթային, դասական հիդրոպոնիկայում և հողային մշակույթում: Որպես լցանյութ կիրառվել են նախօրոք KMnO_4 -ի 0.05 %-ոց լուծույթով ախտահանված, 3-15 մմ տրամագծով մասնիկներ ունեցող գլաքարը, հրաբխային խարամը և դրանց խառնուրդը (1:1՝ ըստ ծավալի): Հիդրոպոնիկայում բույսերի սնուցումը կատարվել է Դավթյանի սննդալուծույթով (աղ. 1) **[4]**, իսկ օրգանական հիդրոպոնիկայում կատարվել է գոմաղբի միջոցով: Սննդալուծույթի պատրաստման համար որպես ելային ջուր կիրառվել է արտեզյան ջուրը: Ջրաշիթային հիդրոպոնիկայում սննդալուծույթը շիթի ձևով, պարբերաբար, անվերադարձ մղվել է յուրաքանչյուր բույսի շերտ՝ օրվա ընթացքում շուրջ 6-20 անգամ 10-15 վրկ. տևողությամբ, մեկանգամյա տրվող լուծույթի չափը կազմել է 20-50 մլ: Դասական հիդրոպոնիկայում բույսերը սնուցվել են օրական 1-3 անգամ, հողային մշակույթում՝ 3-4 օրը 1 անգամ՝ պահպանելով բոլոր ագրոտեխնիկական կանոնները (հողի փխրեցում, մոլախոտերի մաքրում, պարբերաբար ջրումներ և այլն): ՀՊԻ-ի շրջակա հողերը կիսաանապատային են, ջրովի, կարբոնատային, որում հումուսը կազմել է 1.5-2.5 %, հարուստ է ֆոսֆորով և կալիումով:

ՀՀ ԳԱԱ Հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտի բացօթյա հիդրոպոնիկական տեղակայանքներում օգտագործվող Գ.Ս.Դավթյանի առաջարկած սննդարար լուծույթի կազմը՝ գ/մ³ ջրին:

Սննդատարրերի քանակությունը և սննդանյութի ձևը	Վեգետացիայի սկիզբը, ապրիլ-մայիս	Վեգետատիվ աճի շրջան, մայիս-հունիս	Պտղաբերության շրջան, հուլիս-հոկտեմբեր
N-80-200	80	175	200
Ազոտաթթվական կալիում, KNO ₃	580	580	580
Ազոտաթթվական ամոնիում, NH ₄ NO ₃	-	170	170
Ծծմբաթթվական ամոնիում, (NH ₄) ₂ SO ₄	-	175	175
Միզանյութ (կարբոմիդ), CO(NH ₂) ₂	-	-	56
P-45-65	45	65	65
Ֆոսֆորական թթու (տեխնիկական), H ₃ PO ₄	170	250	250
K- 310-350	310	310	350
Կալիումի սուլֆատ, K ₂ SO ₄	170	170	170
S-100-150	100	150	150
Ca -150	150	150	150
Կալցիումի սուլֆատ, CaSO ₄ ·2H ₂ O	640	640	640
Mg- 30-50	30	40	50
Մագնեզիումի սուլֆատ, MgSO ₄ ·7H ₂ O	300	400	500
Միկրոտարրեր			
Երկաթ քլորային, FeCl ₃ ·6H ₂ O կամ ծծմբաթթվային Fe ₂ (SO ₄) ₃ ·9H ₂ O			5-10
Բորաթթու տեխնիկական, H ₃ BO ₃			2-3
Մանգանաթթվական կալիում, KMnO ₄ կամ ծծմբաթթվական մանգան, MnSO ₄ ·4H ₂ O			1-2
Ցինկի քլորիդ, ZnCl ₂ կամ ցինկի սուլֆատ ZnSO ₄ ·7H ₂ O			0.4-0.8
Ծծրմաթթվական պղինձ, CuSO ₄ ·5H ₂ O			0.2
Նատրիումի մոլիբդատ, Na ₂ MoO ₄			0.2
Կոբալտի քլորիդ, CoCl ₂ ·6H ₂ O կամ ազոտաթթվական կոբալտ, Co(NO ₃) ₂ ·6 H ₂ O			0.1
Կալիումի յոդիդ, KI			0.2-1.0

Հետազոտությունների համար բուսական փորձանմուշներ են վերցվել հիդրոպոնիկական տարբեր համակարգերում (օրգանական, ջրաշիթային, դասական) և հողում մշակված մի շարք տերևային բանջարաբույսերի (եղերդակ աղցանային՝ *Cichorium endivia* L., կանաչ միզունա՝ *Brassica rapa* var. *nipposinica* (նկ. 1 ա, բ), գլուխ հազար՝ *Butter head lettuce* (նկ. 1, գ, դ), չինական կաղամբ պակ-չոյ՝ *Brassica rapa* subsp. *chinensis* (նկ.2), կալե՝ *Brassica oleracea* var. *sabellica* L., (նկ. 3, 4)) վերգետնյա զանգվածից, յուրաքանչյուրից 1կգ (թարմ զանգված): Արտեզյան ջրի նմուշներ են վերցվել ՀՊԻ-ի շրջակա տարածքից 3 ժամկետներում՝ մայիսին օգոստոսին և հոկտեմբերին (40): Հողի նմուշներ են վերցվել բանջարանոցային մշակույթով զբաղված վարելահողերի 0-10, 10-20 և 20-30սմ խորություններից՝ հոկտեմբերին: Սննդարար լուծույթի նմուշառում կատարվել է 3 ժամկետներում՝ մայիսին օգոստոսին և հոկտեմբերին (40):

Փորձանմուշներում ⁹⁰Sr-ի, ¹³⁷Cs-ի պարունակությունը և գումարային β-ռադիոակտիվությունը որոշվել են ռադիոքիմիական մեթոդներով փոքր ֆոնային ՄՄՓ-1500 ռադիոմետրի միջոցով [5]: Նմուշառման, նմուշների նախնական մշակման, ինչպես նաև ¹³⁷Cs ու ⁹⁰Sr-ի նմուշների ռադիոքիմիական էքստրակցիայի ու բուն տարրալուծման ընթացքը կատարվել է ըստ ГОСТ 32161-2013: Գիտափորձերի արդյունքում ստացված տվյալները ենթարկվել են վիճակագրական մշակման GraphPad Prism 5 Demo-ի միջոցով: Ստացված տվյալները համեմատվել են ԱԹԽ-ի հետ [1, 3, 17]:



ա բ գ դ
 Նկ. 1. Կանաչ միզունան ջրաշիթային հիդրոպոնիկայում (ա), հողում (բ) և գլուխ հազարն օրգանական հիդրոպոնիկայում (գ), հողում (դ):



ա բ

Նկ. 2. Պակ չոյը օրգանական (ա), դասական (բ) հիդրոպոնիկայի պայմաններում:



ա բ

Նկ. 3. Կալեն օրգանական (ա) հիդրոպոնիկայի և ջրաշիթային (բ) հիդրոպոնիկայի պայմաններում:



ա բ

Նկ. 4. Կալեն դասական (ա) հիդրոպոնիկայի և հողային (բ) մշակույթի պայմաններում:

Արդյունքներ և քննարկում

Աղ. 2-ի տվյալներից երևում է, որ հիդրոպոնիկայում կիրառվող սննդալուծույթում տեխնածին ՌՆ-ի (⁹⁰Sr, ¹³⁷Cs) պարունակությունն անհամեմատ ցածր է հողի համեմատ: Դա նշանակում է, որ ջրաշիթային և դասական հիդրոպոնիկայում բույսերի արմատաբնակ սննդամիջավայրի ռադիոլարվածությունը զգալի չափով զիջում է հողի նույն ցուցանիշին: Դրա հետևանքով, հիդրոպոնիկ սննդալուծույթում աճեցված մշակաբույսերը ⁹⁰Sr-ի, ¹³⁷Cs-ի պարունակությամբ միշտ զիջել են հողային պայմաններում աճեցվածներին՝ 1.2-2.5 անգամ: Այդ մասին են վկայում մեր բազմամյա ուսումնասիրությունների արդյունքները [12]: Օրինակ, ջրաշիթային և դասական հիդրոպոնիկայում կալեն ⁹⁰Sr-ի, ¹³⁷Cs-ի պարունակությամբ զիջել է հողային պայմաններում աճեցվածներին՝ 1.8, 1.4 և 1.5, 1.2 անգամ, համապատասխանաբար (աղ. 3): Ընդ որում, կալեն սննդալուծույթից ավելի ինտենսիվ կլանել է ¹³⁷Cs-ը, իսկ հողից՝ ⁹⁰Sr-ը: Սա հաստատվել է կալեի համար սննդալուծույթ - բույս և հող - բույս համակարգերում ⁹⁰Sr - ¹³⁷Cs զույգի դիտվող հարաբերակցությունների (ԴՀ) (⁹⁰Sr/¹³⁷Cs բույսում: ⁹⁰Sr/¹³⁷Cs սննդալուծույթում կամ հողում) [6] արժեքներով, հիդրոպոնիկայում ԴՀ < 1, իսկ հողում ԴՀ > 1: Այդ մասին են վկայում նաև մշակաբույսերի ՌՆ-ի կուտակման գործակիցների (ԿԳ) (ՌՆ-ի քանակը բույսում, Բք/կգ: ՌՆ-ի քանակը սննդալուծույթում, Բք/լ կամ հողում, Բք/կգ) արժեքները: Այսպես, կալեի համար հիդրոպոնիկայում ¹³⁷Cs ԿԳ > ⁹⁰Sr ԿԳ 12-13 անգամ, իսկ հողում ⁹⁰Sr ԿԳ > ¹³⁷Cs ԿԳ 2,0 անգամ: Բուսահումքի որակի կարևոր ցուցանիշներից է դրանում տեխնածին և բնական ՌՆ-ի քանակի համապատասխանությունը ընդունված ռադիոէկոլոգիական անվտանգության չափանիշներին՝ 1.0Բք/գ, [17]:

Աղյուսակ 2. Գումարային β-ռադիոակտիվությունը և ⁹⁰Sr-ի, ¹³⁷Cs-ի պարունակությունն արտեզյան ջրում, սննդալուծույթում, ՀՊԻ-ի շրջակա հողում և գոմաղբում:

Նմուշի տեսակը	Գումարային β-ռադիոակտիվություն	⁹⁰ Sr	¹³⁷ Cs
	Բք/լ, Բք/կգ*		
Արտեզյան ջուր /ոռոգիչ ջուր/	0.065 ± 0.002	0.044 ± 0.002	0.003 ± 0.0001
Սննդալուծույթ	3.5 ± 0.20	0.44 ± 0.030	0.030 ± 0.001
Հող /0-30 սմ/*	170.0* ± 18.0	6.9* ± 0.27	8.0* ± 0.25
Գոմաղբ*	445.0* ± 25.0	62.4* ± 2.9	24.2* ± 2.8
ՍԹԽ, խմելու ջրի, հողի համար* [1, 3, 17]	1.0	5.0, 55.0*	11.0, 185.0*


Աղյուսակ 3. Կալեի գումարային β-ռադիոակտիվությունը և տեխնածին ՌՆ-ի պարունակությունը և մասնաբաժինը գումարային β-ռադիոակտիվության մեջ մշակման տարբեր եղանակներում:

Մշակման եղանակը	Գում. β-ռադիոակտիվություն	⁹⁰ Sr	¹³⁷ Cs	⁹⁰ Sr	¹³⁷ Cs	Ուրիշ ՌՆ
	Բք/կգ			մասնաբաժինը գումարային β-ռադիոակտիվության մեջ, %		
Ջրաշիթային հիդրոպոնիկ	410±22	9.9± 0.27	8.7± 0.25	2.4	2.1	95.5
Դասական հիդրոպոնիկա	460±22	11.8±0.27	9.8± 0.25	2.6	2.1	95.3
Հող	370±22	17.6±0.27	11.9±0.25	4.7	3.2	92.1
ՍԹԽ [1, 3, 17]	1000	50	130	-	-	-

Բացահայտվել է, որ Արարատյան դաշտի բնակլիմայական և ռադիոէկոլոգիական լարվածության միևնույն գոտում, սակայն մշակման տարբեր եղանակներով ստացված բուսահումքը զգալի չափով տարբերվում է β-ճառագայթող ՌՆ-ի կուտակման չափով (նկ. 5, աղ. 3):

Ուսումնասիրված բանջարաբույսերի գումարային β-ռադիոակտիվությունը տատանվել է օրգանական հիդրոպոնիկայում 620-770 Բք/կգ, ջրաշիթային հիդրոպոնիկայում 300-790 Բք/կգ,

դասական հիդրոպոնիկայում 400-840 Բք/կգ, հողում՝ 340-710 Բք/կգ տիրույթում: Համեմատության համար նշենք, որ Նիգերիայի Նիգեր գետի ափամերձ նավթարդյունաբերական շրջանում 20 տեսակի բանջարաբույսերի գումարային β -ռադիոակտիվությունը տատանվել է 430-880 Բք/կգ տիրույթում [7]: Այսինքն, Արարատյան դաշտի հողում մշակված բանջարաբույսերը ռադիոէկոլոգիապես ավելի անվտանգ են, քան Նիգերիայի Նիգեր գետի շրջանում: Դասական հիդրոպոնիկայում բանջարաբույսերը գումարային β -ռադիոակտիվությամբ գերազանցել են ինչպես ջրաշիթային հիդրոպոնիկայում (1.1-1.5 անգամ), այնպես էլ հողային պայմաններում (1.2-1.5 անգամ) մշակվածներին, իսկ օրգանական հիդրոպոնիկայում բանջարաբույսերը՝ ինչպես դասական հիդրոպոնիկայում (1.1-1.6 անգամ), այնպես էլ հողային պայմաններում (1.3-1.9 անգամ) մշակվածներին: Պարզվել է, որ բանջարաբույսերը, ըստ գումարային β -ռադիոակտիվության, դասական հիդրոպոնիկայում և հողում կազմում են միևնույն նվազող շարքը՝ կանաչ միզունա > գլուխ հազար > պակ-չոյ > կալե > եղերդակ աղցանային, իսկ օրգանական հիդրոպոնիկայում՝ գլուխ հազար > կալե > պակ-չոյ: Պետք է նշել, որ կանաչ միզունան և կարմիր միզունան զգալի չափով չեն տարբերվում ռադիոակտիվությամբ: Ռադիոէկոլոգիապես առավել անվտանգ բուսահումքով առանձնացել է աղցանային եղերդակը, որը դասական հիդրոպոնիկայում և հողում գումարային β -ռադիոակտիվությամբ զիջել է կալեին 1.1, պակ-չոյին՝ 1.4, գլուխ հազարին՝ 1.8, կանաչ միզունային՝ 2.1 անգամ: Անկախ մշակության եղանակից (օրգանական, դասական հիդրոպոնիկա, հող), գլուխ հազարը գերազանցել է թե կալեին (1.1-1.6 անգամ), և թե պակ-չոյին (1.2-1.3 անգամ): Հավանաբար, գումարային β -ռադիոակտիվությամբ հիդրոպոնիկայում աճեցված մշակաբույսերի գերազանցումը հողում աճեցված բույսերին բացատրվում է նրանով, որ հիդրոպոնիկայում բույսերն ավելի արագ և շատ են կլանել մատչելի սննդատարրերը, օրինակ K, (^{40}K) սննդատարրերով հարուստ արմատաբնակ սննդամիջավայրից, քան հողից: Հայտնի է, որ Ռ-Ն-ից ամենամեծ β -ռադիոակտիվությամբ աչքի է ընկնում բնական Ռ-Ն ^{40}K -ը, որի հետևանքով բույսերի գումարային β -ռադիոակտիվությունը, հիմնականում, պայմանավորված է K-ի պարունակությամբ: Ընդ որում, ^{40}K -ը կազմում է K-ի 0.0119 %-ը և β -ռադիոճառագայթիչ է 89.3 %-ով [16, 18]: Դասական հիդրոպոնիկայի բույսերը գումարային β -ռադիոակտիվությամբ գերազանցել են հողային բույսերին, սակայն հիդրոպոնիկ բույսերը ռադիոէկոլոգիապես ավելի անվտանգ կարելի է համարել, քան հողային բույսերը, քանի որ գումարային β -ռադիոակտիվության մեջ վերահսկվող Ռ-Ն-ի (^{90}Sr , ^{137}Cs) մասնաբաժնով միշտ զիջել են դրանց: Այսպես օրինակ, կալեի բուսահումքում գումարային β -ռադիոակտիվության մեջ ^{90}Sr -ի և ^{137}Cs -ի մասնաբաժինը ջրաշիթային հիդրոպոնիկայում կազմում է 4.5 %, դասական հիդրոպոնիկայում՝ 4.7 %, իսկ հողում՝ 7.9 % (աղ. 3): Ըստ մեր նախկինում ստացած տվյալների, տարբեր բուսատեսակներում (դեղաբույսեր, բանջարաբույսեր, ծառապտուղներ և այլն) ^{90}Sr -ի, ^{137}Cs -ի մասնաբաժինը հիդրոպոնիկայում տատանվել է 2.3-6.8 %, իսկ հողում՝ 3.0-12.8 % սահմաններում [12]:



Նկ. 5. Բանջարաբույսերի գումարային β -ռադիոակտիվությունը հիդրոպոնիկական տարբեր համակարգերում և հողում:

Անկախ բանջարաբույսերի աճեցման եղանակից, ստացված բուսահումքը կարելի է գնահատել ռադիոէկոլոգիապես անվտանգ, քանի որ դրա գումարային β -ռադիոակտիվությունը համապատասխանում է ընդունված ռադիոէկոլոգիական անվտանգության չափանիշներին (1.0 Bq/g), (աղ. 3, նկ. 5) [17]: Ընդ որում, ռադիոէկոլոգիապես առավել անվտանգ որակյալ բուսահումք ապահովել է ջրաշիթային հիդրոպոնիկան՝ բույսերի աճեցման պայմանների ռադիոէկոլոգիական լարվածության թուլացման շնորհիվ (սննդարար լուծույթի ծախսի կրճատում, բույսերի արմատաբնակ միջավայր սննդարար լուծույթի անվերադարձ մղման ջրաշիթային եղանակ):

Եզրակացություն

Արարատյան դաշտում հիդրոպոնիկ տարբեր համակարգերի (օրգանական, ջրաշիթային, դասական) և հողային մշակության պայմաններում մշակված բանջարաբույսերի բուսահումքը ռադիոէկոլոգիապես անվտանգ է, ընդ որում, առավել անվտանգ՝ ջրաշիթային հիդրոպոնիկայում:

Գործնական առաջարկ

Բանջարաբույսերի ռադիոէկոլոգիապես առավել անվտանգ որակյալ բուսահումքի ստացման համար առաջարկվում է ջրաշիթային հիդրոպոնիկ կենսատեխնոլոգիական եղանակը:

Գրականության ցանկ

1. ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման սխեմայի կոմիտեի գործունեության հաշվետվություն, 2014թ. www.anra.am/upload/Annu.
2. Լ.Վ.Վալեսյան /խմբ./, Հայաստանի ազգային ատլաս, Ա հատոր, Ե., 2007, 232 էջ:
3. Гигиенические требования к безопасности и пищевой ценности пищевых продуктов. Санитарно-эпидемиологические правила и нормы (СанПиН 2.3.2.1078-01). М.: Минздрав РФ, 2002, 164с.
4. Давтян Г.С. Гидропоника. В кн.: Справочная книга по химизации сельского хозяйства. М., Колос, 1980, с. 382-385.
5. Павлоцкая Ф.И. Методы определения ^{90}Sr и других изотопов. В кн.: Физикохимические методы исследования почв. М., 1966, 126с.
6. Сельскохозяйственная радиоэкология. Под. ред. Р.М. Алексахина. Н.А.Корнеева. М., Экология, 1992. 400с.
7. Adewumi Alao A. Evaluation of the Gross Alpha and Beta Radioactivity Concentration in Some Agricultural Products (Vegetables and Fruits) Obtained in Two Oil Fields in the Niger Delta Region of Nigeria. *Journal of Environment Pollution and Human Health*. Vol. 4, No. 4, 2016, pp.78-82.
8. Abojassim A. A., Hady H. N., Mohammed Z. B. Natural radioactivity levels in some vegetables and fruits commonly used in Najaf Governorate, Iraq. *J. Bioen. Food Sci.*, v. 3, n.3, 2016, pp.113-123.
9. Ahmad N., Jaafar M.S., Bakhsh M., Rahim M. An overview on measurements of natural radioactivity in Malaysia. *Journal of Radiation Research and Applied Sciences.*, Vol. 8, Issue 1, 2015, pp. 136-141.
10. Biswas S., Ferdous J., Begum A., Ferdous N. Study of Gross Alpha and Gross Beta Radioactivities in Environmental Samples. *Journal of Scientific Research*, 7 (1-2), 2015, pp.35-44.
11. Chijioke M. Amakom, Chikwendu E. Orji, Benedict C. Eke, Chinedu Iroegbu and Bridget A. Ojakominor. Gross alpha and beta activity concentrations in soil and some selected Nigerian food crops. *International Journal of Physical Sciences*. Full Length Research Paper Vol. 13(11), 2018, pp. 183-186.
12. Ghalachyan L.M., Hakobjanyan A.A., Hovhannisyan L.E., Gasparyan T.S., The study of gross β -radioactivity of medicinal plants in conditions of hydroponics and soil in Ararat Valley, Biological diversity of natural and anthropogenic landscapes: study and protection. Collection of materials of the II International Scientific and Practical Conference. 04.06.2021, Astrakhan. Publishing House "Astrakhan University", 2021, pp. 22-29.
13. Islam A., Begum A., Yeasmin S., Sultana M. S. Assessment of dose due to natural radio-nuclides in vegetables of high background radiation area in south-eastern part of Bangladesh. *International Journal of Radiation Research*, 12(3), 2014, pp. 271-275.
14. Lubis S., Shibdawa M. A., Adamu H. Determination of natural radioactive elements in vegetables irrigated with water from tin mining ponds around Dorowa in BarkinLadi, Plateau State, Nigeria *Science Forum (Journal of Pure and Applied Sciences)* 16, 2019, pp. 60 – 65.
15. Tomșe Radu, Rahtă Daniela, Miere Ana - Maria, Mărcuț Crina, and G. Marcu Loredana. Radioactivity monitoring in foodstuff and drinking water in Bihor County, Romania. *AIP Conference Proceedings* 2218, 030010 (2020); <https://doi.org/10.1063/5.0001023>.
16. Tettey-Larbi L., Darko E. O., Schandorf C., Appiah A. A., Sam F., Faanu A., Okoh D. K., Lawluvi H., Agyeman B. K., Kansaana C., Amoah P. A., Osei R. K., Agalga R, Osei S. Gross Alpha and Beta Activity and Annual Committed Effective Doses due to Natural Radionuclides in some Medicinal Plants commonly used in Ghana. *International Journal of Science and Technology*, V. 3, No.4, ISSN, 2224-3577, 2013. <http://www.ejournalofsciences.org>.
17. WHO. Guidelines for drinking water quality and other screening levels of various categories of foods. 6th ed., *World Health Organization, Geneva, Switzerland*. 2008.
18. Zivkov-Balos M., Mihaljev Z., Cupic Z. Content of Trace Elements and Some Radionuclides in Lucerne (*Medicago sativa*). *Biotechnology in Animal Husbandry* 27 (3), 2011, pp. 591-598.

**ԲԱԴՐԻՋԱՆԻ՝ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ՄԻ ՔԱՆԻ ՎԱՅՐԻ ԱԶԳԱԿԻՑՆԵՐԻ
ՄՈՐՖՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

ԿԱՐԻՆԵ ՍԱՌԻԿՅԱՆ

Մորմագգի մշակաբույսերի սելեկցիայի և տեխնոլոգիայի բաժնի վարիչ
ՀՀ ԷՆ բանջարաբուստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն
գյուղատնտեսական գիտությունների թեկնածու
karuine_sarikyan@mail.ru

ՄԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Մորմագգի մշակաբույսերի սելեկցիայի և տեխնոլոգիայի բաժնի կրտսեր գիտաշխատող
ՀՀ ԷՆ բանջարաբուստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն
marine.job5@mail.ru

Համառոտագիր

Հոդվածում ներկայացվել են բադրիջանի՝ գբոմա և սկառլետ ձևերի մի քանի վայրի ազգակիցների՝ *Solanum aethropicum Gr.gilo (MM-314)*-ի, *Solanum sisymblofolium (MA-284)*-ի, *Solanum Macrocarpon (MA-134)*-ի, որոնք ներմուծվել են Ֆրանսիայից (INRA), *Solanum macrocarpon*-ի, *Solanum macrocarpon (S00052)*-ի, *Solanum aethropicum (S00005)*-ի, *Solanum insanium*-ի, *Solanum undatum*, *Subgenus Leptostemonum*-ի, որոնք ներմուծվել են Թայվանից՝ Բանջարեղենի Համաշխարհային Կենտրոնից (AVRDC) բույսերի օնտոգենեզում ընթացող ֆենոլոգիական փուլերում բացահայտված մորֆոլոգիական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունները, որոնք ստացվել են ՀՀ Արարատյան հարթավայրի պայմաններում մշակման ժամանակ: Հետազոտությունների ընթացքում ուսումնասիրել ենք բադրիջանի վայրի ազգակիցների մի շարք նմուշների զանգվածային ծլումից սկսած մինչև բաց դաշտ տեղափոխվող սածիլների մորֆոլոգիական ցուցանիշները: Պատրաստի սածիլները եղել են հավաք՝ կանգուն և թփային՝ ցրված, ունեցել են 8,7-18,4 սմ բարձրություն, 5,6-8,3 հատ տերևներ: Տերևները և ցողունը ունեցել են բաց կանաչից՝ սպիտակավուն երանգով և մուգ կանաչից՝ մանուշակագույն երանգով գունավորում: Բարձր ցուցանիշներով և մանուշակագույն ջղեր ունեցող տերևներով աչքի է ընկել *Solanum sisymblofolium (MA-284)*-ի սածիլները: Բադրիջանի ազգակիցներից *Solanum sisymblofolium (MA-284)*-ի և *Solanum undatum*, *Subgenus Leptostemonum*-ի պատրաստի սածիլների ցողունում և տերևներում առկա են փշեր: Բադրիջանի նմուշների պտղակազմակերպման փուլում գտնված բույսերի մորֆոլոգիական ցուցանիշների հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ բույսերի թփերը կանգուն են, հավաք, թփային, բարձրությունը տատանվում է 40,7-120,6 սմ-ի սահմաններում: Ամենահզոր և բարձր (120,6սմ) թուփ ունի *Solanum sisymblofolium (MA-284)*-ը, ամենացածրը (40,7սմ)՝ *Solanum insanium*-ը: Տերևների գույնը բաց կանաչից՝ սպիտակավուն երանգով և մուգ կանաչից՝ մանուշակագույն երանգով է, ձևը՝ լայն ձվաձևից մինչև երկարավուն ձվաձև, բլթակավոր եզրերով և ամբողջաեզր, փոքր և միջին մեծության՝ 15,9-22,4սմ երկարության, 9,8-15,3սմ լայնության: Պտուղների ձևը՝ կլոր, ձվաձև, գլանաձև է՝ փոքր և միջին մեծության, որը տատանվում է 1,2-15,6սմ-ի սահմաններում: Ամենափոքր (1,2-1,5սմ) պտուղներ ունեն *Solanum aethropicum Gr.gilo (MM-314)*-ը, *Solanum sisymblofolium (MA-284)*-ը, միջին մեծության (4,5-15,6սմ) պտուղներ՝ *Solanum macrocarpon (S00052)*-ը, *Solanum aethropicum (S00005)*-ը, *Solanum insanium*-ը: Պտուղները բնանի են, մեկ պտղի միջին զանգվածը տատանվում է 5,8-87,9 գ. սահմաններում: Պտուղների գույնը տեխնիկական հասունացման շրջանում կանաչ է, կանաչ՝ սպիտակավուն գծերով, սպիտակ՝ մանուշակագույն գծերով, մանուշակագույն՝ փայլուն և խավար պտղամաշկով, իսկ կենսաբանական հասունացման շրջանում՝ կարմիր, դեղին, դեղնականաչ, դարչնագույն: Պտղամիսը սպիտակավուն է՝ կանաչ գունավորմամբ և մուգ կանաչ: Մեկ պտուղը պարունակում է, ըստ նմուշների, 45,5-460,8 հատ սերմ: Մեր փորձերում ուսումնասիրել ենք բադրիջանի որոշ վայրի ազգակիցների աճի ու զարգացման

օրինաչափությունները: Կենսամետրիկ չափումները ցույց են տվել, որ վեգետատիվ և գեներատիվ օրգանների առավել մեծ քանակով աչքի են ընկել *Solanum sisymblofolium* (MA-284)-ը, *Solanum aethropicum Gr.gilo* (MM-314)-ը, *Solanum undatum*, *Subgenus Leptostemonum*-ը, *Solanun macrocarpon* (S00052)-ը: Կատարված ուսումնասիրությունները համոզիչ վկայում են, որ կլիմայի փոփոխության պայմաններում աճի և զարգացման ինտենսիվությամբ և լայն հարմարվողականությամբ աչքի են ընկել բադրիջանի՝ *Solanum sisymblofolium* (MA-284)-ը, *Solanum aethropicum Gr.gilo* (MM-314)-ը, *Solanum undatum*, *Subgenus Leptostemonum*-ը, *Solanum Macrocarpon* (MA-134)-ը *Solanun macrocarpon* (S00052)-ը, *Solanum insanium*-ը:

Բանալի բառեր և բառակապակցություններ. բադրիջան, վայրի ազգակիցներ, մորֆոլոգիական ցուցանիշներ, սածիլների բնութագրում, թուփ, տերև, պտուղ, աճ, զարգացում:

ИЗУЧЕНИЕ МОРФОЛОГИЧЕСКИХ ОСОБЕННОСТЕЙ НЕКОТОРЫХ ИНТРОДУЦИРОВАННЫХ ДИКИХ РОДИЧЕЙ БАКЛАЖАНА В АРМЕНИИ

КАРИНЕ САРИКЯН

заведующая отделом селекции и технологии возделывания пасленовых культур
Научный центр овощебахчевых и технических культур МЭ РА
кандидат сельскохозяйственных наук
karuine_sarikyan@mail.ru

МАРИНЕ ГРИГОРЯН

младший научный сотрудник, соискатель отдела селекции и технологии возделывания пасленовых культур
Научный центр овощебахчевых и технических культур МЭ РА
marine.job5@mail.ru

Аннотация

В данной статье представлены данные о морфологических показателях, выявленных при выращивании в условиях Араратской долины РА, на фенологических стадиях онтогенеза растений у некоторых диких родичей баклажанов, принадлежащих в формам грома и скарлет, в частности, *Solanum aethropicum Gr.gilo (MM-314)*, *Solanum sisymblofolium (MA-284)* и *Solanum macrocarpon (MA-134)* интродуцированных из Франции (INRA), *Solanum macrocarpon*, *Solanum macrocarpon (S00052)*, *Solanum aethropicum (S00005)*, *Solanum insanium*, *Solanum undatum*, *Subgenus Leptostemonum*, интродуцированных из Всемирного центра овощеводства (AVRDC) в Тайване. В ходе исследований изучали морфологические показатели рассады ряда дикорастущих родичей баклажанов в период от массового прорастания до перемещения в открытый грунт. Готовая рассада была прямостоячей и кустистой, рассеянной, высотой 8,7-18,4 см, с количеством листьев 5,6-8,3 см. Листья и стебель имели окраску от светло-зеленой с беловатым оттенком до темно-зеленой с фиолетовым оттенком. Рассада *Solanum sisymblofolium (MA-284)* выделялась высокими показателями и листьями с пурпурными жилками. В стеблях рассады *Solanum sisymblofolium (MA-284)* и *Solanum undatum подпада Leptostemonum* имеются шипы. Результаты исследования морфологических показателей растений в фазе плодоношения у образцов баклажанов показали, что кусты растений прямостоячие, собранные, кустистые, высота варьировала в пределах 40,7-120,6 см. Самый крепкий (120,6 см) куст у *Solanum sisymblofolium (MA-284)*, самый низкий (40,7 см) - у *Solanum insanium*. Окраска листьев светло-зеленая с беловатым оттенком, темно-зеленая с фиолетовым оттенком, форма от широко - яйцевидной до продолговато-яйцевидной, с закругленными краями, округлая, мелкая, среднего размера, длиной 15,9-22,4 см, шириной 9,8-15,3 см. Форма плодов округлая, яйцевидная, цилиндрическая, мелких и средних размеров, от 1,2 до 15,6 см. Самые мелкие (1,2-1,5 см) плоды у *Solanum aethropicum Gr. gilo (MM-314)*, *Solanum sisymblofolium (MA-284)*, средние плоды (4,5-15,6 см): *Solanum macrocarpon (S00052)*, *Solanum aethropicum (S00005)*, *Solanum insanium*. Плоды полые, средняя масса одного плода колеблется от 5,8 до 87,9 г. Окраска плодов в период технической спелости зеленая, зеленая с беловатыми линиями, белая с фиолетовыми линиями, фиолетовая с блестящей и матовой кожицей плодов, а в период биологического созревания красная, желтая, желто-зеленая, коричневая. Мякоть беловатая, зеленая с темно-зеленым оттенком. В одном плоде содержится 45,5-460,8 семян, в зависимости от образца.

В наших экспериментах мы изучали закономерности роста и развития некоторых дикорастущих баклажанов. Биометрические измерения показали, что наибольшее количество вегетативно-генеративных органов имели *Solanum sisymblofolium (MA-284)*, *Solanum aethropicum Gr.gilo (MM-314)*, *Solanum undatum*, *Subgenus Leptostemonum*, *Solanum macrocarpon (S00052)*. Исследования убедительно показывают, что баклажаны *Solanum sisymblofolium (MA-284)*, *Solanum aethropicum Gr.gilo (MM-314)*, *Solanum undatum*, *Subgenus Leptostemonum*, *Solanum macrocarpon (MA-134)*, *Solanum macrocarpon (S00052)*, *Solanum insanium* в условиях изменения климата отличаются интенсивностью роста и развития и широкой адаптивностью.

Ключевые слова и словосочетания: баклажан, дикие родичи, морфологические показатели, описание рассады, куст, лист, плод, рост, развитие.

THE STUDY OF MORPHOLOGICAL FEATURES OF CERTAIN INTRODUCED WILD RELATIVES OF EGGPLANT IN ARMENIA

KARINE SARIKYAN

Head of the Department of Solanaceae Crop Section and Technology
Scientific Center of Vegetable and Industrial Crops ME RA
PhD in Agricultural Sciences
Researcher
karuine_sarikyan@mail.ru

MARINE GRIGORYAN

Head of the Department of Solanaceae Crop Section and Technology
Scientific Center of Vegetable and Industrial Crops ME RA
PhD Student
marine.job5@mail.ru

Abstract

This article presents data on morphological indicators revealed during the cultivation in the conditions of the Ararat valley of RA on the phenological stages of the ontogeny of plants in some of the wild relatives of eggplants of gboma and scarlet forms, in particular, *Solanum aethropicum* Gr.gilo (MM-314), *Solanum sisymblofolium* (MA-284), *Solanum Macrocarpon* (MA-134) introduced from France (INRA), and *Solanum macrocarpon*, *Solanun macrocarpon* (S00052), *Solanum aethropicum* (S00005), *Solanum insanium*, *Solanum undatum*, Subgenus *Leptostemonum*, introduced from World Vegetable Center(AVRDC) in Taiwan. During the research, we studied the morphological indicators of seedlings of a number of wild eggplant relatives in the period from mass germination to transferring to the open field. The ready seedlings were upright, shrubby, scattered, 8.7-18.4 cm high, with 5.6-8.3 leaves. The leaves and stem were light green with a whitish tinge and dark green with a purple tint. The seedlings of *Solanum sisymblofolium* (MA-284) are notable for high indexes and leaves with purple veins. There are thorns on the stems of seedlings of *Solanum sisymblofolium* (MA-284)'s *Solanum undatum* and Subgenus *Leptostemonum*. The results of the examination of the morphological indicators of the plants observed during the fruiting stage of the eggplant accessions showed that the bushes of the plants were erect, gathered, bushy, the height varied in the range of 40.7-120.6 cm. The strongest (120.6 cm) shrub has *Solanum sisymblofolium* (MA-284), the lowest (40.7 cm) - *Solanum insanium*. The color of the leaves is light green with a whitish tinge, dark green with a purple tinge, the form is from broad egg to oblong-ovate, with rounded edges, round, small, medium size, 15.9-22.4 cm long, 9.8-15.3 cm wide. Fruit shape is round, ovate, cylindrical, small to medium in size, ranging from 1.2 to 15.6 cm. The smallest (1.2-1.5 cm) fruits are in *Solanum aethropicum* Gr.gilo (MM-314), *Solanum sisymblofolium* (MA-284), medium-sized fruits (4.5-15.6 cm): *Solanun macrocarpon* (S00052), *Solanum aethropicum* (S00005), *Solanum insanium*. The fruits are hollow, the average mass of one fruit varies from 5.8 to 87.9 g. The color of the fruits in the period of technical ripening is green, green with whitish lines, white with purple lines, purple with shiny-dark fruit skin, and in the biological maturing period - red, yellow, yellow-green, brown. The flesh is whitish, green with dark green. One fruit contains 45.5-460.8 seeds depending on accession. In our experiments, we have studied the growth and development of some wild eggplants. Biometric measurements showed that *Solanum sisymblofolium* (MA-284), *Solanum aethropicum* Gr.gilo (MM-314), *Solanum undatum*, Subgenus *Leptostemonum*, *Solanun macrocarpon* (S00052) had the highest number of vegetative-generative organs. Studies show convincingly that eggplant *Solanum sisymblofolium* (MA-284), *Solanum aethropicum* Gr.gilo (MM-314), *Solanum undatum*, Subgenus *Leptostemonum*, *Solanum macrocarpon* (MA-134), *Solanun macrocarpon* (S00052), *Solanum insanium* under the climate change conditions are notable for the intensity of growth and development and their wide adaptability.

Keywords and phrases: eggplant, wild relatives, morphological indicators, seedling description, shrub, leaf, fruit, growth, development.

Ներածություն

Բադրիջանը (*Solanum melongena* L.) *Solanaceae* ընտանիքի երրորդ ամենակարևոր բույսն է: Նրա մշակության պատմությունը շատ հին է: Մեր դարաշրջանի սկզբին բադրիջանները Չինաստանում և Արաբիայում մշակվում էին հիմնականում որպես բուժիչ մշակաբույսեր [7]:

Տեխնիկական հասունության փուլում բադրիջանի պտուղները պարունակում են շաքարեր, օսլա, պեկտին, օրգանական թթուներ, C, B1, B2, B6, PP վիտամիններ, կարոտին և այլն, մակրո և միկրոէլեմենտներ, անփոխարինելի ամինաթթուներ [8, 16]:

Ժամանակակից բժշկությունը հաստատել է, որ բադրիջաններն ունեն հիպոքոլեստերոլեմիկ ազդեցություն, ուստի դրանք խորհուրդ են տրվում որպես դիետիկ միջոց աթերոսկլերոզի, լեղաքարի և երիկամների հիվանդությունների բուժման և կանխարգելման համար: Բադրիջաններում կալիումի բարձր կոնցենտրացիայի առկայությունը բարելավում է սրտի աշխատանքը և մեծացնում մեզի արտանետումը, ուստի, որպես դիետիկ միջոց, դրանք առաջարկվում են սրտանոթային համակարգի հիվանդությունների, սրտանոթային և երիկամային ուռուցքների ու լյարդի ծագման ուռուցքների դեպքում՝ պոդագրայի բուժման ժամանակ: Բադրիջանները հատկապես օգտակար են սակավարյունություն ունեցող հիվանդների համար: Եթե բադրիջանները ներառվեն դիետայի մեջ և այն դեպքերում, երբ հիվանդը սննդակարգում օրական 4 անգամ 100-200 գ բադրիջան ստանա, ապա նա կարիք չունի երկաթի, պղնձի և ցինկի պատրաստուկներ ստանալու [7, 8]:

Բադրիջանը (*Solanum melongena*) ֆենոլային միացությունների կարևոր աղբյուրներից է: Ուսումնասիրելով տեղական սելեկցիայի *S. melongena*-ի ավելի քան 100 սորտերի, տարբեր սորտերի, վայրի տեսակների և դրանց հիբրիդների մեջ ընդհանուր ֆենոլների պարունակությունը, պարզվել է, որ *S. melongena*-ի սորտերն այս ցուցանիշի զգալի տատանումներ ունեն: Սա ցույց է տալիս մշակության բարձր ներուժը ֆենոլային միացությունների կուտակման հետ կապված, ինչպես նաև ցույց է տալիս այդ մշակաբույսի բուժման կարևորությունը դրանց բարձր պարունակության համար: 120 տեսակի բանջարեղենի հակաօքսիդիչ ակտիվությունը գնահատելիս օգտագործվել են 4 տարբեր վերլուծություններ (ABTS, DPPH, ILP և SOS), որոնց արդյունքների համաձայն՝ բադրիջանը ներառվել է ամենաբարձր հակաօքսիդիչ ակտիվություն ունեցող բանջարեղենի լավագույն տասնյակում: Բադրիջանը հարուստ է նաև պեկտիններով: Ուսումնասիրելով առնետների վրա բադրիջանի դիետայի հիպոգլիկեմիկ ազդեցությունը, պարզվել է, որ նման սնուցումը հանգեցնում է արյան մեջ գլյուկոզի մակարդակի զգալի նվազման: Պեկտինով հարստացված բնական մթերքների ներմուծումը սննդակարգ թույլ է տալիս միևնույն ժամանակ լուծել բազմաթիվ խնդիրներ: Անտոցիաններով հարուստ սնունդը ընդունելը կանխում է շատ լուրջ հիվանդությունների զարգացումը [7,8]: Այդ պատճառով հատուկ ուշադրություն է դարձվում բադրիջանի սելեկցիայում վայրի ազգակիցների օգտագործմանը, բարձր դիմացկուն և ադապտիվ, կենսաբանորեն ակտիվ նյութերի բարձր պարունակություն ունեցող սորտեր և հիբրիդներ բուծելու համար: Նախքան բուն սելեկցիոն գործընթացին անցնելը կարևոր են նախասելեկցիոն աշխատանքները, որի կատարման շնորհիվ մոդելավորված սորտ կամ հիբրիդ բուծելու համար աշխարհի տարբեր գենբանկերից հավաքվում են անհրաժեշտ գենետիկական ռեսուրսները և մշակության նոր պայմաններում հետազոտվում են նրանց կենսաբանական, մորֆոլոգիական և տնտեսական արժեքավոր հատկությունները ու հատկանիշները, հարմարվողականությունը կլիմայի փոփոխության պայմաններում [1, 3, 4]: Ելնելով այս խնդրի կարևորությունից՝ մեր կողմից առաջին անգամ Հայաստան են ներմուծվել բադրիջանի մի քանի վայրի ազգակիցներ՝ գիտահետազոտական աշխատանքներ կատարելու համար:

Տեսամեթոդական հիմքեր

Ըստ սորտերի խմբերի և գենետիկական ռեսուրսների՝ բադրիջանները զանազանվում են Բրինձալ, Սկառլետ Գրոմա ձևերի: Բրինձալ բադրիջանը (*S. melongena*) ցուցաբերում է

մորֆոլոգիական մեծ բազմազանություն: Կարմիր կամ սկառլետ բադրիջանը (*S. aethiopicum*) դասակարգվում է չորս ոչ ֆորմալ սորտերի խմբերի (*Gilo, Shum, Kumba* և *Aculeatum*): Տարբերակումը հիմնված է մորֆոլոգիական բնութագրերի, բայց նաև բույսի օգտագործման վրա (*Gilo*-ն պարունակում է ուտելի պտուղներով բույսեր: Կումբան ներառվում է հարթեցված, մեծ, ուտելի պտուղներով և ուտելի տերևներով, որոնք մերկ են, դեկորատիվ, ավելի փշոտ, քան մյուս խմբերը, և պտուղները հարթ ձևավորված են: Գբոմա բադրիջանը (*S. macrocarpon*) չունի ճանաչված կուլտիվային խմբեր, չնայած այն պարունակում է լայն ֆենոտիպային բազմազանություն [2, 7, 15]:

The article is devoted to the poetry translation of the outstanding Russian poet N. Nekrasov into Armenian, where the translation activity of Armenian poets of the late 19th and early 20th centuries is studied.

Translation achievements of such poets as I. Ioannisyán, A. Tsaturyan, M. Nalbandyan, H. Tumanyan, and others, thanks to whom the Armenian readers came to know and appreciate the innovation, the highest civic pathos, the humanism of Nekrasov's poetry.

The article presents the publications of those Armenian magazines, where translations from Nekrasov's poetry were first published, not only in Armenia but also abroad.

A great deal of research in identifying the translation methods and principles of the Armenian poets-translators of the second half of the 19th century was once carried out by literary critics G. Hovnan, R. Baghdasaryan, who in their scientific works pointed to the translation achievements of Armenian authors.

The article also traces the popularization of Nekrasov's work among the Armenian public at the turn of the 20th century.

It notes that, under the influence of the progressive poetry of the Russian poet, his work began to be translated by such Armenian poets as Avetik Isahakyan, Gegham Saryan Yeghishe Charents, Rachia Hovhannisyán, Vahagn Davtyan, Gevorg Emin, and others.

The article uses the method of comparative analysis to present Nekrasov's poem "The Restless Heart Beats" in the translation of V. Davtyan, where, there are indicated the main translation achievements of the Armenian poet.

A comparative analysis of the translation with the original one showed that the translation is an analogue of the original, which corresponds to the verse in meaning and style, rhyme, and intonational content, where the thoughts and feelings of the poet have bright emotional coloring.

The translation meets all the norms and criteria of translation and is its full-fledged analogue in Armenian.

Keywords and phrases: poetry, translation, edition, original, poet-translator, comparative analysis.

Введение

Художественный перевод на протяжении веков был одной из важнейших форм литературных взаимосвязей. Благодаря ему происходит сближение и взаимообогащение культур разных народов. Еще в древности переводчиков называли пророками, которые развивали и обогащали прежде всего свою национальную литературу, внося в нее новые, прогрессивные идеи и высказывания из литературы других народов.

С конца XIX века армянские поэты-переводчики проявляли большой интерес к русской культуре, литературе, которая не только вдохновляла их на прекрасные переводы, но и имела большое влияние на формирование их мировоззрения, нравственные и эстетические ценности.

Большую лепту в развитие русско-армянских литературных связей внесли Ов. Туманян, М. Налбандян, Е. Чаренц, В. Терьян, П. Севак, В. Давтян, С. Капутикян, Г. Эмин и многие другие, которые стали не только переводить произведения русских авторов, но и посвящать им свои лирические стихотворения [1, с.24].

В конце XIX века поэзия Н. Некрасова наряду с лирикой таких выдающихся русских поэтов, как А. Пушкин, М. Лермонтов, В. Жуковский, Е. Баратынский и др., вызвала большой переводческий интерес у армянских поэтов-переводчиков, таких как Смбаг Шахазиз, Рафаэл Паткян, Иоаннес Иоаннисян, Александр Цатурян, Микаел Налбандян, Ованес Туманян и др., которые, находясь под большим воздействием новаторства, гражданской лирики русского поэта, стали переводить ее на армянский язык.

Поэзия Некрасова была близка армянским поэтам по духу. Она вдохновляла их своим проникновенным лиризмом, глубокой любовью к человеку, к его труду, достижениям, высшим проявлением которой являются гуманизм и сострадание.

Посредством лирики Некрасова армянский читатель познал дух и нравы русского народа, что позволило читателям окунуться в духовный мир русского крестьянства, ощутить его чувства, стремления, идеалы. В них также с особым эмоциональным чувством отразилась глубочайшая любовь поэта к своей родине, ее величавой и самобытной природе, к русской деревне с ее традиционным укладом и бытом.

Актуальность поэзии Некрасова в кругу армянской общественной мысли заключалась в ее социальном значении. В ней поднимались острые вопросы общественного устройства и человеческих отношений, где доминантой являлась прогрессивная, передовая гражданская позиция поэта.

Находясь под непосредственным влиянием поэзии Некрасова, армянские поэты И. Иоаннисян, А. Цатурян, М. Налбандян, Ов.Туманян и другие в своих стихотворениях поднимали темы, созвучные лирике русского поэта, выступая против устоев и тирании самодержавия. В поэтической форме они воссоздавали собирательный образ армянского крестьянина-труженика с их тяжелыми, полными лишений буднями, призывая его к свободе, к новой созидательной жизни.

Отметим, что впервые стихотворения Некрасова на армянском языке были напечатаны в журнале “Айкакан ашхар” (“Армянский мир”) в переводе поэта-переводчика Хорена Степанэ, который являлся активным популяризатором русской литературы в армянской среде [6, с.61].

Несколько позже, в 1882 г., Иоаннес Иоаннисян со всем усердием перевел стихотворение “Что ни год – уменьшаются силы”, где мысли и чувства поэта, его гражданская позиция были воссозданы равнозначно оригиналу. Однако перевод стихотворения из-за нападков цензуры не был издан в России, а был опубликован за ее пределами в армянской газете “Армения” в Марселе [6, с. 66].

Отметим, что вышеперечисленные переводы армянских поэтов были исследованы в работах Г. Овнана, [6, с.62], Р. Багдасаряна [2, с.79], указывающих на высокую культуру переводческого мастерства армянских поэтов, которым удалось с максимальной точностью приблизиться к подлинникам, воссоздать стилистическое и рифмическое богатство стихотворений русского поэта.

Основная часть

На рубеже XX века поэтическое наследие Некрасова объединило вокруг себя таких известных мастеров поэзии, как Аветик Исаакян, Егише Чаренц, Гегам Сарьян, Рачия Ованесян, Ваагн Давтян, Геворк Эмин и др.

Армянским поэтам-переводчикам посредством своих переводов удалось воссоздать богатый и

самобытный мир «самого крестьянского» поэта, посвятившего свою музу верному служению своей родины.

Отметим, что В. Давтян был большим пропагандистом в Армении русской культуры и литературы, о чем свидетельствуют его многочисленные переводы стихотворений А.С. Пушкина и, в частности, С. Есенина, которые он переводил из его разных поэтических циклов.

В армянской литературе Давтян известен как певец своей древнейшей, сакральной страны. Поэт воссоздал образ Армении в самых ярких красках природы, где свое воплощение нашли глубокие утесы, величественные скалы, быстротекущие горные реки, тополя. Ему удалось показать истинную красоту и самобытность природы родного края.

Лучшими поэтическими сборниками Давтяна являются “Первая любовь” (1947), “Утро мира” (1950), “Лирика” (1956), “Свет как хлеб” (1981), “Сказание о любви” (1984) и др.

Чувство к родине, глубокая народность связали творчество Давтяна с лирикой Н. Некрасова, которая была близка армянскому поэту своей сердечной искренностью, гуманизмом, одухотворенностью.

Из произведений Некрасова Давтян перевел не большое количество стихотворений, как, например, “Бьется сердце беспокойное...”, “Пророк”, «М. Е. Салтыкову (О нашей родине унылой...)» и другие.

Рассмотрим перевод стихотворения из любовной лирики поэта «Бьется сердце беспокойное», где лирический герой всем сердцем мечтает о встрече с возлюбленной в той обетованной стране, “где венчала их любовь”. Перевод стихотворения звучит на армянском языке так же лирично и выразительно, мысли и чувства поэта имеют идентичную ярко-экспрессивную окраску.

Сравним:

Подлинник:

Бьется сердце беспокойное,
Отуманились глаза.
Дуновенье страсти знойное
Налетело, как гроза.

Перевод:

Խփում է սիրտս անհանգիստ,
Աչքերիս ամպ է սահել,
Շարտտի շունչը ջերմ ու խիստ
Փչեց հողմի սհեղ:

Вспоминаю очи ясные
Дальней странницы моей,
Повторяю стансы страстные,
Что сложил когда-то ей.

Հիշում եմ աչքերը ջինջ
Իմ սիրածի հեռավոր,
Այն երգերն են կրկնում դյուրթիջ,
Որ հյուսել եմ ես մի օր:

Я зову ее, желанную:
Улетим с тобою вновь
В ту страну обетованную,
Где венчала нас любовь!

Կանչում եմ ես նրան՝ արի՛,
Թռչենք նորից մենք քեզ հետ
Այն երկիրը երազանքային,
Ուր սերն է մեզ պսակել:

Розы там цветут душистые,
Там лазурней небеса,
Соловьи там голосистее,
Густолиственной леса... [4, с. 82]
1874

Այնտեղ վարդերն են խնկարկում,
Զինջ է երկինքն ավելի,
Սոխակն այնտեղ լավ է երգում,
Խիստ է անտառը վայրի: [5. с. 93]

Сравнивая перевод с подлинником видно, что он с предельной точностью передает смысл и форму подлинника. Перевод также состоит из четырех столбцов с четырехстишиями, с перекрестной рифмовкой абаб.

Сравним:

Подлинник: *беспокойное- знойное, глаза – гроза, ясные – страстные, и т.д.*

Перевод: *անհանգիստ – խիստ, սահել – սհեղ, ջինջ- դյուրթիջ, и т.д.*

С предельной точностью Давтян воссоздал также яркие метафоры оригинала:

Подлинник: *Отуманились глаза, /Дуновенье страсти знойное, /Вспоминаю очи ясные, / В ту страну обетованную, / Где венчала нас любовь!// и т.д.*

Перевод: Աչքերիս ամպ է սահել, / Կարոտի շունչը ջերմ ու խիստ, / Հիշում եմ աչքերը ջինջ, / Այն երկիրը երազանքային, / Ուր սերն է մեզ պսակել/ и др.

Перевод, как и подлинник, имеет яркую интонационную окраску, в нем верно воссозданы восклицания, логические ударения подлинника:

Сравним:

Подлинник: Я зову ее, желанную:/ Улетим с тобою вновь / В ту страну обетованную, / Где венчала нас любовь!

Перевод: Կանչում եմ ես նրան՝ արի՛, / Թռչենք նորից մենք քեզ հետ / Այն երկիրը երազանքային, / Ուր սերն է մեզ պսակել/:

Перевод всецело передает настроение поэта, его оптимизм и надежду.

Сравним:

Подлинник: Розы там цветут душистые, / Там лазурней небеса/, Соловьи там голосистее, / Густолиственной леса...

Перевод: Այնտեղ վարդերն են խնկարկում, / Ջինջ է երկինքն ավելի, / Սոխակն այնտեղ լավ է երգում, / Իհիտ է անստոր վայրի:

Итак, сравнительный анализ перевода и подлинника показал, что перевод является эквивалентом подлинника, где мысли и чувства Некрасова на армянском языке звучали с новой впечатляющей силой. Перевод соответствует всем нормам и критериям перевода и является его полноценным аналогом на армянском языке.

К этому переводу можно соотнести определение о совершенном переводе Л. Бархударова, который писал: “Переводом называется процесс преобразования речевого произведения на одном языке в речевое произведение на другом языке при сохранении неизменного плана содержания, то есть значения. ... Всегда следует помнить о том, что перевод - это нечто гораздо большее, чем наука. Это также и умение, а вполне качественный перевод, в конечном счете, всегда является и искусством” [3, с. 8].

Заключение.

Из вышепредставленного перевода следует, что переводческая задача была решена Давтяном на высоком профессиональном уровне. В смысловом и структурном отношении он выступает в качестве полноправной замены подлинника.

В переводе ощущается поэтическая индивидуальность русского поэта, его мироощущения, мечты, для него чувство любви является смыслом его жизни.

Перевод не уступает подлиннику своим лиричным звучанием, в нем верно воссоздана эстетика, красота стиха, что также свидетельствует о глубоком проникновении армянского поэта в поэтическое мастерство русского поэта.

Список литературы

1. З. Айрян. Искусство поэтического перевода в творчестве русских поэтов II пол. XX — нач. XXI века (на примере армянской поэзии) / З. Айрян. — Ереван: GSM STUDIO, 2012. — 300 с.
2. Р. Багдасарян. Некрасовская муза в армянских переводах //Н.А. Некрасов:Русская и национальные литературы /Материалы Международной научно-практической конференции. Ереван, 19-20 ноября 2011г. 260 с.
3. Л. Бархударов. Язык и перевод. М.: Международные отношения. 1975. 320 с.
4. Н. Некрасов. Полное собрание сочинений. В 3 томах. Т 1- М.: Государственное издательство художественной литературы. 1953. 320 с.
5. Н. Некрасов. Стихотворения. Ереван. Айастан. Ереван 1971. 125 с. (на арм. яз.).
6. Г. Овнан. Русско-армянские литературные связи в XIX-XX вв. В 2-х кн.- Ереван, 1960-1961. Кн.1- 270 с. (на арм. яз.).

ՀՈԼԴԵՆԻ ԿԵՐՊԱՐԸ ՍԵԼԻՆՋԵՐԻ «ՓՐԿԻՉԸ ՏԱՐԵԿԱՆԻ ԱՐՏՈՒՄ» ՎԵՊՈՒՄ

ՍՈՒՍԱՆՆԱ ՆԱՆՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
գիտակրթական միջազգային կենտրոն
օտար լեզուների ամբիոնի դասախոս
Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ
հայցորդ
susanna.nanyan@isec.am

Համառոտագիր

Սույն աշխատանքում վերլուծվել է քսաներորդ դարի հայտնի ամերիկյան գրող Ջերոմ Սելինջերի միակ «Փրկիչը տարեկանի արտում» վեպի հերոս՝ Հոլդեն Քոլֆիլդի կերպարը: Վեպը նվիրված է գլխավոր հերոսի՝ դպրոցական Հոլդեն Քոլֆիլդի կյանքի վերլուծությանը: Հոլդենը փորձում է գտնել իր տեղը կյանքում և ամեն ինչից առավել վախենում է դառնալ բոլոր մեծահասակների նման:

«Փրկիչը տարեկանի արտում» վեպը թարգմանվել է աշխարհի գրեթե բոլոր լեզուներով: Այն նախատեսված էր մեծահասակների համար, սակայն լայն տարածում գտավ հատկապես երիտասարդների շրջանում և մեծ ազդեցություն ունեցավ 20-րդ դարի երկրորդ կեսի համաշխարհային մշակույթի վրա: 2005 թ. «Թայմ» (“Time”) ամսագիրը վեպը ներառեց 1923 թվականից գրված անգլալեզու վեպերի լավագույն 100-ի մեջ, մինչդեռ ԱՄՆ-ում վեպը հաճախ քննադատության առարկա էր դառնում կոպիտ լեզվի և դեռահասի մտավախությունների մանրամասն նկարագրության պատճառով:

Երբ Հոլդենին հարցրին, թե ինչ է ցանկանում դառնալ, նա պատասխանեց. «Հասկանում եք, ես պատկերացնում էի, թե ինչպես են փոքր երեխաները խաղում երեկոյան տարեկանի հսկայական դաշտում. հազարավոր երեխաներ, շուրջը՝ ոչ մի մեծահասակ՝ բացի ինձանից: Եվ ես կանգնած եմ ժայռի հենց եզրին՝ անդունդի վրա: Եվ իմ գործը երեխաներին բռնելն է, որպեսզի նրանք անդունդ չընկնեն»: Հոլդենը երագում է փրկել երեխաների մաքուր, անմեղ հոգիները բարոյականության և հոգատարության բացակայության անդունդն ընկնելուց:

Սելինջերի վեպը հիմնված է «սեղմված ժամանակի» սկզբունքի վրա: Պատմությունը սկսվում է այն պահից, երբ Հոլդենին հեռացնում են հերթական հեղինակավոր դպրոցից, որտեղ նրան ընդունել էին իր սիրելի ծնողները: Մանկամտորեն հետաձգելով նրանց հետ հանդիպումը և չափահասների նման ձգտելով ինքնուրույն ապրել, ինչպես որ ինքն է ցանկանում՝ Հոլդենը չի շտապում վերադառնալ տուն և երեք օր թափառում է ցուրտ և սառը Նյու Յորքում՝ լի նախաամանորյա եռուզեռով:

Մեկ այլ հանգամանք, որի շնորհիվ Սելինջերի աշխարհը գրավում է ընթերցողներին, երգիծանքի օգտագործումն է վեպում: Նա երգիծանքով է խոսում ոչ միայն աշխարհի հանդեպ հերոսների ունեցած վերաբերմունքի մասին, այլև երբեմն ծաղրում է նաև հերոսներին: Նրա վեպի հերոս Հոլդեն Քոլֆիլդի վեճը Մորիսի «Էդմոնդյան» հյուրանոցի վերելակի մկանուտ աշխատողի հետ ցույց է տալիս ոչ միայն հակառակորդի անմտությունը, այլև Հոլդենի հիմարությունը, քանի որ նա փորձում է տրամաբանելով ընդհանուր հայտարարի գալ Մորիսի հետ: Հոլդենը անում է շատ բաներ, որոնք ինքը քննադատում էր և որոնց մասին ընթերցողին ասում էր, որ ատում է:

Բանալի բառեր և բառակապակցություններ. Նյու Յորք, Հոլդեն Քոլֆիլդ, ԱՄՆ, Սելինջեր:

ПЕРСОНАЖ ХОЛДЕНА В РОМАНЕ ДЖ. СЭЛИНДЖЕРА "НАД ПРОПАСТЬЮ ВО РЖИ"

СУСАННА НАНЯН

Международный научно-образовательный центр Академии наук РА

преподаватель кафедры иностранных языков

Институт литературы имени Манука Абеяна

соискатель

susanna.nanyan@isec.am

Аннотация

В этом исследовании проанализирован характер Холдена Колфилда, единственного героя романа американского писателя XX века Джерома Сэлинджера «Над пропастью во ржи». Роман посвящен анализу жизни главного героя, студента Холдена Колфилда. Он пытается найти свое место в жизни и больше всего боится стать таким, как все взрослые.

Роман «Над пропастью во ржи» переведен почти на все языки мира. Он предназначался для взрослых, но стал популярным особенно среди молодежи, и оказал значительное влияние на мировую культуру во второй половине XX века. Журнал Time в 2005 году назвал роман одним из 100 лучших англоязычных романов, написанных с 1923 года. Между тем произведение было резко осуждено в США за грубый язык и тщательное изображение подростковых забот.

Когда его спросили, кем он хотел бы быть, Холден ответил: «Видите ли, я представил маленьких детей, играющих ночью на огромном поле. Тысячи детей, ни одного взрослого вокруг, кроме меня. А я стою на самом краю обрыва, в бездну. А моя работа — ловить детей, чтобы они не упали в бездну.» Холден мечтает спасти чистые, невинные души детей от падения в бездну отсутствия нравственности и заботы.

Роман Дж. Д. Сэлинджера построен на концепции «сжатого времени». Холдена исключают из другого элитного учреждения, куда были приняты его обожаемые родители. Холден не торопится домой, поэтому три дня скитается по холодному, промозглому Нью-Йорку, полному предрождественской суеты, по-детски продлевая встречу с ними.

Еще один фактор, привлекающий читателей в мир Сэлинджера — использование сатиры. Он не только высмеивает отношение героев к миру, но и иногда издевается над героями. Главный герой его романа Холден Колфилд, споря с мускулистым лифтером в отеле «Эдмонд» в Моррисе, показывает не только глупость противника, но и глупость Холдена, так как пытается прийти к общему знаменателю с Моррисом. Холден делает много вещей, которые он критиковал и говорил читателю, что ненавидел.

Ключевые слова и словосочетания: Нью-Йорк, Холден Колфилд, США, Сэлинджер.

HOLDEN'S CHARACTER IN SALINGER'S NOVEL "THE CATCHER IN THE RYE"

SUSANNA NANYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
International Scientific-Educational Center
Department of Foreign Languages, Lecturer
Institute of Literature after Manuk Abeghian
PhD Applicant
susanna.nanyan@isec.am

Abstract

In this study, I analyzed the character of Holden Caulfield, the only hero of the twentieth-century American writer Jerome Salinger's novel "The Catcher in the Rye". The novel is dedicated to the analysis of the main character's life, student Holden Caulfield. He is trying to find his place in life, and he is most afraid of becoming like all adults.

"The Catcher in the Rye" novel has been translated into almost every language in the world. It was meant for adults, but it became popular, particularly among young people, and had a significant impact on world culture in the second half of the twentieth century. Time magazine named the novel one of the best 100 English-language novels written since 1923 in 2005. Meanwhile, the work has been heavily condemned in the United States for its rude language and thorough depiction of teenage worries.

When asked what he wanted to be, Holden replied, "You see, I imagined young children playing in the huge field at night. Thousands of children, no adults around except me. And I'm standing on the very edge of the cliff, on the abyss. And my job is to catch the kids, so they don't fall into the abyss." Holden dreams of saving the pure, innocent souls of children from falling into the abyss of lack of morality and care.

The novel of J.D. Salinger is built on the concept of "compressed time." Holden gets expelled from another elite institution where his adored parents were accepted. Holden is in no rush to get home, so he wanders for three days in frigid, chilly New York, full of pre-Christmas hustle and bustle, childishly prolonging the meeting with them.

The use of satire is another feature that draws readers into Salinger's world. He not only satirizes heroes' attitudes toward the world, but he also mocks them at times. Holden Caulfield, the protagonist of his novel, fighting with a strong elevator worker at the Edmond Hotel in Morris demonstrates not just the enemy's foolishness, but also Holden's, as he seeks to find a common denominator with Morris. Holden performs a lot of things he criticizes and tells the reader he despises.

Keywords and phrases. New York, Holden Caulfield, USA, Salinger.

Ներածություն

Տասնիններորդ դարի վերջին Ամերիկայում ավարտվեց արևմտյան հողերի զարգացման շրջանը: ԱՄՆ-ն գյուղատնտեսական երկրից վերածվեց արդյունաբերական և տեխնոլոգիական բարձր մակարդակ ունեցող երկրի: Քսաններորդ դարի առաջին կեսին ամերիկյան գրականությունը սկսեց արագորեն զարգանալ: Գրական ասպարեզում հանդես եկան այնպիսի վառ անհատականություններ, ինչպիսիք են՝ Թեոդոր Դրայզերը, Սինքլեր Լյուիսը, Էռնեստ Հեմինգուեյը, Ուիլյամ Ֆոլկները, Աքոթ Ֆիցջերալդը, Ջերոմ Սելինջերը: Նրանց գրական վաստակը համաշխարհային մեծ ճանաչման ու սիրո արժանացավ:

1910-1945 թվականների ամերիկյան գրականությունը ներկայացված է տարբեր ուղղություններով: Պահպանելով տասնիններորդ դարի գրական ավանդույթը՝ քսաներորդ դարում քննադատական ռեալիզմը զարգացում է ապրում, ի հայտ են գալիս մոդեռնիզմի միտումները [6]:

Տեսական մաս

1920-30-ականներին ԱՄՆ-ը համարվում էր Արևմուտքի առաջատար երկրներից մեկը: Այդ տարիներին Ամերիկայի տնտեսությունը սկսեց զգալիորեն զարգանալ: Գրող Աքոթ Ֆիցջերալդը այն անվանել է «ջագի դարաշրջան», և այս սահմանումը լայն կիրառում է ստացել գրականագետների և գրողների առօրյա կյանքում:

1929 թվականին Նյու Յորքի ֆոնդային բորսայում տեղի է ունենում արժեթղթերի մեծ անկում, որի պատճառով երկիրը ցնցվում է տնտեսական ծանր ճգնաժամից, ինչն էլ հանգեցնում է զանգվածային գործազրկության: Սկսվում է «մեծ ճգնաժամի» շրջանը: 1930-ականները իրենց սոցիալական և քաղաքական բողոքների բնորոշ սրությամբ անվանվում են «կարմիր երեսնականներ»: Այդ տարիների գրականության մեջ գերակշռում էին երկու թեմաներ: Նախ՝ ճգնաժամի և ամերիկացիների կյանքի վրա դրա ազդեցության թեման, որն առավել հստակ արտահայտվեց ԱՄՆ գրողների լրագրողական և գեղարվեստական աշխատանքներում: Դրա վառ օրինակներն են Թ. Դրայզերի «Ողբերգական Ամերիկա» (1933) վավերագրական գիրքը և Ջ. Ստայնբեքի «Ցասման ողկույզները» (1939) վեպը:

Երկրորդ՝ Ամերիկայում ֆաշիզմի սպառնալիքի թեման, որն արտացոլվեց առաջին հերթին Է. Հեմինգուեյի աշխատություններում («Իսպանական ժամանակաշրջան»): Այդ ժամանակաշրջանում է ամերիկյան և եվրոպական գրականության մեջ արագորեն ձևավորվում և լայն տարածում ստանում գրական մոդեռնիզմը:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Միացյալ Նահանգներում գրական գործընթացը որոշվում էր երկրի պատմության մեջ ամենակարևոր իրադարձություններով, ճիշտ այնպես, ինչպես 1920-ականներին, երբ ամերիկյան գրականության մեջ սերնդափոխություն տեղի ունեցավ: Միջպատերազմական ժամանակաշրջանի դասականները շարունակում էին ստեղծել իրենց գործերը, սակայն միևնույն ժամանակ հայտնվեց գրողների մի երիտասարդ սերունդ, որ ստեղծագործում էր 1940-ականների վերջին և 1950-ականների սկզբին: Նոր սերնդի առավել ցայտուն ներկայացուցիչներից էին Ջ. Սելինջերը, Ի. Շոուն, Թ. Կապոտեն [5]:

Ջ. Սելինջերը 20-րդ դարի ԱՄՆ գրականության ամենաազդեցիկ դեմքերից մեկն է: Նա ստեղծագործել է 20-րդ դարի կեսերին, սակայն նրա աշխատանքները առ այսօր երիտասարդների համար հարազատ և հասկանալի են: Սելինջերին մտահոգում էր երիտասարդների ԵՍ-ի կազմավորման բարդ ճանապարհը:

Նրա կյանքի մասին շատ քիչ բան է հայտնի. գրողը հիմնականում հարցազրույցներ չէր տալիս և թաքնվում էր լրագրողներից: Նա ծնվել է Նյու Յորքում՝ հարուստ ընտանիքում, ավարտել է Փենսիլվանիայի ռազմական դպրոցը, որոշ ժամանակ հաճախել է Նյու Յորքի և Կոլումբիայի

համալսարանները, 1942-ին զորակոչվել է բանակ և հետևակային զորքերի կազմում մասնակցել է Երկրորդ համաշխարհային պատերազմին մինչև 1945 թվականը, հետագայում նյարդային խանգարումով հայտնվել է հիվանդանոցում [1]:

Սելինջերը սկսել է տպագրվել 1940 թվականից, սակայն նրա գրական գործունեության ամենաբեղուն ժամանակահատվածը 1950-1965 թվականներն են: 1940-ականներին նա նյույորքյան տարբեր ամսագրերում հրատարակում է մի շարք պատմվածքներ: Հետագայում այդ պատմվածքների հատվածներից շատերը ներառվել են «Փրկիչը տարեկանի արտում» վեպի մեջ: Վեպի վերջնական տարբերակը լույս է տեսել 1951 թ-ին: Չնայած բուռն գրական հաջողությանը՝ 1965 թ. նա լքեց Նյու Յորքը և հաստատվեց Նյու Հեմփշիր նահանգի Քորնիշ քաղաքում, որտեղ ապրեց մինչև կյանքի վերջ: Նրա երկարատև լուրջությունը և լիակատար մեկուսացումը չխանգարեցին փառքին և համբավին ԱՄՆ-ում:

50-ականների գրական երիտասարդության ինքնաբուխ բողոքն ընդդեմ իրենց ժառանգած աշխարհի ոչ միշտ էր ունենում այնպիսի ցուցադրական ձևեր, ինչպիսիք էին բիթնիկների ստեղծագործություններում, և երբեմն դա տալիս էր ավելի նշանակալի գեղարվեստական արդյունքներ: Այս առումով առավել ցայտուն է Սելինջերի միակ «Փրկիչը տարեկանի արտում» վեպը (1951)՝ հետպատերազմյան երիտասարդների «Աստվածաշունչը»: 2009 թ. լույս է տեսել Ֆրեդերիկ Քոլտինգի «60 տարի անց՝ տարեկանի միջով անցնելիս» վեպը, որը սյուժեով շատ նման է Սելինջերի վեպին [3]:

«Փրկիչը տարեկանի արտում» վեպը թարգմանվել է աշխարհի գրեթե բոլոր լեզուներով: Այն նախատեսված էր մեծահասակների համար, սակայն լայն տարածում գտավ հատկապես երիտասարդների շրջանում և մեծ ազդեցություն ունեցավ 20-րդ դարի երկրորդ կեսի համաշխարհային մշակույթի վրա: 2005 թ. «Թայմ» (“Time”) ամսագիրը վեպը ներառեց 1923 թվականից գրված անգլալեզու վեպերի լավագույն 100-ի մեջ: Մինչդեռ ԱՄՆ-ում վեպը հաճախ քննադատության առարկա էր դառնում կոպիտ լեզվի և դեռահասի մտավախությունների մանրամասն նկարագրության պատճառով:

«Փրկիչը տարեկանի արտում» վեպը նվիրված է գլխավոր հերոսի՝ դպրոցական Հոլդեն Քոլֆիլդի կյանքի և գործերի վերլուծությանը: Հոլդենը փորձում է գտնել իր տեղը կյանքում և ամեն ինչից առավել վախենում է դառնալ բոլոր մեծահասակների նման:

Վեպը Հոլդեն անունով տասնյոթամյա մի տղայի պատմություն է, ամերիկյան իրականության ընկալման և ժամանակակից հասարակության ընդհանուր նորմերի և էթիկայի մերժման մասին: Հոլդենն իրական է, նա հասարակ տղա է, որը նայում է աշխարհին ուրիշ անկյան տակ և տեսնում է դրա էությունը: Նրա լեզուն համապատասխանում է իր տեսակետներին և տարիքին. այն զարդարուն, հորինված և արհեստական չէ: Նա տեսնում և ներկայացնում է կյանքն այնպես, ինչպես կա: Հոլդենն ունի մի երազանք՝ կանգնել տարեկանի արտում և փրկել երեխաներին, երբ նրանք խաղալով հայտնվում են անդունդի եզրին [4]:

Հոլդենը հիմա էլ գտնվում է անդունդի եզրին, սակայն վտանգը սպառնում է ոչ թե երեխաներին, այլ հենց իրեն: Այն անդունդը, որտեղ նա ընկնում է, սարսափելի և վտանգավոր է: Այնտեղ ընկնելիս չես զգում դրա վերջը... Դա այն անդունդն է, որտեղ ընկնում են մարդիկ, որոնք կյանքի ինչ-որ հատվածում սկսում են փնտրել այն, ինչը չի կարող տալ նրանց շրջապատը: Ավելի ճիշտ՝ նրանք կարծում են, որ շրջապատում ոչինչ չեն կարող գտնել: Եվ նրանք դադարեցնում են որոնումը՝ նույնիսկ ինչ-որ բան գտնելու փորձ չկատարելով...

Տասնյոթ տարեկան Հոլդեն Քոլֆիլդը պատմում է իր կյանքի շրջադարձային իրադարձությունների մասին: Նախ՝ տղային հեռացնում են արդեն երրորդ դպրոցից, և նրան ոչ

այնքան ուրախ հանդիպում է սպասվում ծնողների հետ: Երկրորդ՝ Հոլդենը խայտառակել է իրեն՝ որպես դպրոցի սուսերամարտի թիմի ավագ. նա մետրոյում մոռացել էր իր մարզագույքը և դրանով խայտառակել ամբողջ դպրոցը: Երրորդ՝ գլխավոր հերոսը չի կարող որևէ կերպ ընդհանուր լեզու գտնել և համակերպվել իր ընկերների հետ: Նրա պահվածքը երբեմն սարսափելի է. նա շատ կոպիտ է, նեղացկոտ, մարդկանց հետ Հոլդենի հարաբերություններում կարելի է նկատել, թե ինչպես է ուրիշներին ծաղրում: Դա նկատում են ծնողները, ուսուցիչները և նրա ընկերները: Այնուամենայնիվ, նրանցից ոչ մեկի մտքով երբեք չի անցնում պարզել, թե ինչու է Հոլդենն իրեն այդպես պահում:

Կարդալով վեպը՝ տեսնում ենք, թե ինչպես է միայնակ դեռահասը պայքար մղում իր հոգում: Իհարկե, Հոլդենը ծնողներ ունի, և նրանք սիրում են իրենց որդուն, բայց չեն կարող հասկանալ նրան: Ծնողների կարծիքով՝ երեխաները պետք է լավ կերակրվեն, լավ հագնվեն և արժանապատիվ կրթություն ստանան, և հենց դրան էլ նրանք նվիրել են իրենց կյանքը, սակայն Հոլդենի համար դա բավարար չէ [7]:

Հոլդենը առաջիններից էր, որ տեսավ ամերիկյան հասարակության այլասերվածությունը: Նրան ճնշում էին մարդկանց խաբեությունն ու անվստահությունը միմյանց հանդեպ: Տղան վրդովվում էր իրեն շրջապատող «ցուցամոլությունից» և «կեղծիքից»: Հոլդենը դժվարությամբ էր դիմադրում սոփ դեմ միայնակ պայքարում, նա տառապում էր, քանի որ արդարության օրենքներով ապրելու նրա բոլոր հույսերը դատապարտված էին ծախողման: Հոլդենին տհաճ էր «գրասենյակում աշխատելու, մեծ գումար վաստակելու և Մեդիսոն պողոտայում գտնվող մեքենայով կամ ավտոբուսով աշխատանքի գնալու, թերթեր կարդալու և ամբողջ գիշեր բրիջ խաղալու և կինոթատրոն գնալու» գաղափարը:

Հոլդենին զայրացնում էր առավել հարուստ ամերիկացիների կյանքը: Նա հստակ տեսնում էր, որ այս կյանքը իրական է և պատրանքային չէ: Պատանին շատ էր կարդում՝ փորձելով գրքերի մեջ գտնել իր հարցերի պատասխանները: «Իրականում ես շատ անկիրթ եմ, բայց շատ եմ կարդում», - ասում է Հոլդենը, բայց, այսպես թե այնպես, իրական կյանքի հետ բախումից հնարավոր չէ խուսափել, և Հոլդենը բախվում է ուսուցիչների, ծնողների, դասընկերների հետ:

Գլխավոր հերոսին առանձնացնում է իր ամաչկոտ, հուզիչ կերպարը: Նա անբարյացակամ է, հաճախ անտեղի կոպտում է մարդկանց: Սրա պատճառը թերևս, հոգեկան մեղմությունն է. նրա կյանքի արժեքները չեն համընկնում մեծահասակների չափանիշների հետ: Հոլդենին վրդովեցրել էր «շոուն» ու կյանքում ամենատարրական մարդկայնության բացակայությունը: Խաբեությունն ու երեսպաշտությունը տիրում են շուրջբոլորը: Դպրոցի ուսուցիչները ստում են, երբ ասում են, որ լավ մարդկանց են դաստիարակում: Հոլդենը հիշում է մասնավոր դպրոցներից մեկի տնօրենին, որտեղ սովորել էր: Տնօրենը քաղցր ժպտում էր բոլորին, բայց իրականում նա շատ լավ գիտեր, թե ինչքան մեծ է տարբերությունը հարուստ և աղքատ երեխաների ծնողների միջև:

Երբ Հոլդենին հարցրին, թե ինչ է ցանկանում դառնալ, նա պատասխանեց. «Հասկանում եք, ես պատկերացնում էի, թե ինչպես են փոքր երեխաները խաղում երեկոյան տարեկանի հսկայական դաշտում. հազարավոր երեխաներ, շուրջը՝ ոչ մի մեծահասակ՝ բացի ինձանից: Եվ ես կանգնած եմ ժայռի հենց եզրին՝ անդունդի վրա: Եվ իմ գործը երեխաներին բռնելն է, որպեսզի նրանք անդունդ չընկնեն»: Հոլդենը երազում է փրկել երեխաների մաքուր, անմեղ հոգիները բարոյականության և հոգատարության բացակայության անդունդն ընկնելուց [2]:

Հոլդենի կերպարը բացահայտելու գործում հսկայական դեր խաղաց տղայի՝ մի քանի օր Նյու Յորքում անցկացնելը Փենսիլից փախչելուց հետո: Նախ՝ նա բախվեց բռնության հետ և հայտնաբերեց կյանքի ամենասարսափելի և ստոր կողմը, երկրորդ՝ Հոլդենը ճանաչեց շատ բարի և

զգայուն մարդկանց, ինչը նրան ավելի հանդուրժող և ավելի խոհեմ դարձրեց: Օրինակ՝ երկու միանձնուհիները, որոնց Հոլդենը հանդիպեց գնացքում: Նրանք ոչ միայն երեխաներին ուսուցանելով են զբաղվում, այլև ողորմություն հավաքելով՝ օգնում են աղքատներին: Հոլդենը սրա մասին շատ էր մտածում՝ աստիճանաբար գիտակցելով, թե որքան կարևոր է իմաստալից կյանքով ապրելը: «Այդ երկու միանձնուհիները դուրս չէին գալիս իմ մտքից: Ես անընդհատ հիշում էի այդ ծղոտե հին զամբյուղը, որով նրանք գնում էին՝ իրենց լուսան հավաքելու, երբ դասեր չունեին»: Այժմ նման մտքերն են զբաղեցնում Սելինջերի հերոսին: Եվ եթե ավելի վաղ տղան պարզապես ցանկանում էր փախչել մարդկանցից, ապա հիմա նա հասկանում է, որ դժվարություններից փախչում են միայն թույլերը, և ինքը պետք է մնա և շարունակի պայքարել ամերիկյան հասարակության արատների դեմ:

Նյու Յորքում հետաքրքիր արկածների շնորհիվ նա հոգեպես աճում է: Նա աստիճանաբար սկսում է գիտակցել իր շուրջ եղած «կեղծիքն» ու իրեն անընդհատ ճնշող խառնաշփոթը: Նա դատապարտում է ինքն իրեն որոշ կեղծ գործողությունների, հատկապես՝ ստելու համար, հասկանում է, որ իր արածը սխալ է: Այս ամենը նրան վեր է դասում իր ընկերներից. նա գիտի, թե ինչ է անում: Հոլդենը երբեք ոչ ոքի չի վնասում. նրա ստերը աննշան են և անվնաս: Ընդհակառակը, կեղծ աշխարհը նույնպես ստեր է ստեղծում, բայց դա վտանգավոր է, քանի որ վնասում է մարդկանց: Օրինակ՝ Հոլդենը նշում է, որ Փենսիլն գովազդում է, իբրև թե ձևավորում է քաղաքկիրթ երիտասարդություն, բայց դա ամենևին էլ այդպես չէ: Տղային զայրացնում են ֆիլմերը, քանի որ դրանք կեղծ իդեալներ և հույսեր են ներկայացնում: Վեպի ավարտին Հոլդենը երազում է փախչել քաղաքակրթությունից և արևմուտքում տնակ կառուցել, ինչը հակասում է նրա՝ ավելի վաղ դրսևորած քաղաքային վարքին:

Ցավոք, ոչ ոք չի ցանկանում հասկանալ Հոլդենին, և մեծահասակները նրանից ազատվելու ամենադյուրին ճանապարհն են գտնում. նրան բուժման են ուղարկում նյարդային հիվանդների առողջարան, սակայն իրականում բուժվելու կարիք ունի ոչ թե Հոլդենը, այլ՝ այն բոլոր մեծահասակները, որոնք շրջապատում են նրան, և որոնց պատճառով տղան այդքան վաղ տարիքում դժբախտ է դարձել:

Վեպում Հոլդենին մշտապես մտահոգում են մահվան մասին մտքերը: Նրան անհանգստացնում են եգիպտական մումիաները, ծմռանը Կենտրոնական զբոսայգու լճում լողացող բադերը ու նրա մահացած եղբայրը՝ Էլին: Նա խնդրում է Էլին թույլ չտալ, որ ինքը անհետանա: Սա խորհրդանշում է Հոլդենի՝ հասարակության մեջ իր դեմքը չկորցնելու ցանկությունը: Տղայի համար անցումը մանկությունից մեծահասակ կյանք ենթադրում է մահ, որից նա վախենում է այն համոզման պատճառով, որ ինքը կփոխվի և կկորցնի իր ինքնությունը: Գրքի ավարտին այս վախն անհիմն է թվում: Նրա անունը նույնպես հուշում է այդ մասին. **Հոլդեն** անգլերենից թարգմանաբար նշանակում է **դիմացի՛ր**: Նրա նպատակն է մնալ դեռահաս և փրկել այլ երեխաների մեծահասակ դառնալուց: Նրա որոնումները ձախողվում են, սակայն կարեկցանքն ու բարությունը նրան ավելի լավ ելքեր են առաջարկում:

Սելինջերը «Փրկիչը տարեկանի արտում» վեպում գալիս է ոչ այնքան ուրախ եզրահանգման. Ամերիկայի երիտասարդ սերունդը գտնվում է ժայռի եզրին, որի մի կողմում կա կյանք՝ արդարության և բարության օրենքների համաձայն, իսկ մյուս կողմում՝ կեղծավորության ու չարի անդունդ: Հոլդենը այն քերից է, որոնք չեն թողնում, որ ամերիկացիների մի ամբողջ սերունդ ընկնի անբարոյականության այդ անդունդը:

Հոլդենին դժվար է անվանել արժանավայել պատանի: Նա ծույլ է, անհարկի խաբող, թափթփված և եսասեր: Այնուամենայնիվ, հերոսի անկեղծությունն իր մասին արված

պատմություններում թույլ է տալիս ավելի մեղմ վերաբերվել նրա չկարգավորված բնավորության շատ թերություններին: Վեպի վերջին գլուխներում նա արդեն շատ ավելի հանդուրժող ու խոհեմ է: Հոլդենը սկսում է նկատել և գնահատել այնպիսի դրական հատկություններ, ինչպիսիք են՝ ընկերասիրությունը, հյուրընկալությունը, որոնք բավականին տարածված են իր համաքաղաքացիների ամենօրյա շփման մեջ:

Հոլդենի երիտասարդական ըմբոստությունը տրամաբանական ավարտին է հասնում, երբ որոշում է մեկնել արևմուտք և ամեն ինչ սկսել զրոյից: Նամակ է գրում քրոջը, որի մեջ տեղեկացնում է իր որոշման մասին և խնդրում է հանդիպել պայմանավորված տեղում, որպեսզի կարողանա վերադարձնել պարտքով վերցրած գումարը, սակայն քույրը գալիս է իր ճամպուկով և հայտարարում է, որ ցանկանում է մեկնել եղբոր հետ: Քրոջ մեջ Հոլդենը տեսնում է իրեն, այսինքն՝ նրան, ով չի ցանկանում դպրոց հաճախել, և առհասարակ հոգնել է ամեն ինչից: Հոլդենը ստիպված է լինում մի պահ մոռանալ իր ամենամերժության մասին: Սկսում է համոզել քրոջը, որ անհրաժեշտ չէ ինչ-որ տեղ գնալ, և ինքն էլ ոչ մի տեղ մեկնել չի ցանկանում: Նա տանում է քրոջը Նյու Յորքի մի զբոսայգի, որտեղ Ֆիբին կարուսել է նստում, իսկ ինքը հիացմունքով նայում է աղջկան:

Գրքի ավարտին Հոլդենը որդեգրում է մի նոր դիրքորոշում՝ սիրել ամբողջ մարդկությանը առանց խտրականության: Նա նույնիսկ հայտնում է, որ կարոտում է բոլոր այն մարդկանց, որոնք իր հետ սխալ են վարվել: Չնայած Հոլդենը Քրիստոսի կերպարը չի մարմնավորում, բայց դրսևորում է քրիստոսավայել վարքագիծ՝ բացարձակ սեր ամբողջ մարդկության՝ չարի ու բարու հանդեպ: Նա այնքան հասուն չէ, որ իմանա՝ ինչ անել այդպիսի սիրո հետ, բայց բավականաչափ հասուն է, որ ընդունի այն: Այս աշխարհում գիտակցելը, թե ինչն է պիղծ, ինչն է լավ, ու այդ ամենը սիրելը, ինքնահաստատվելու և մարդկային արժեքներ ձեռք բերելու առաջնային քայլերից մեկն է:

Սելինջերի վեպը հիմնված է «սեղմված ժամանակի» սկզբունքի վրա: Պատմությունը սկսվում է այն պահից, երբ Հոլդենին հեռացնում են հերթական հեղինակավոր դպրոցից, որտեղ նրան ընդունել էին իր սիրելի ծնողները: Մանկամտորեն հետաձգելով նրանց հետ հանդիպումը և չափահասների նման ձգտելով ինքնուրույն ապրել, ինչպես որ ինքն է ցանկանում՝ Հոլդենը չի շտապում վերադառնալ տուն և երեք օր թափառում է ցուրտ և սառը Նյու Յորքում՝ լի նախաամանորյա եռուզեռով:

Մեկ այլ հանգամանք, որի շնորհիվ Սելինջերի աշխարհը գրավում է ընթերցողներին, երգիծանքի օգտագործումն է վեպում: Նա երգիծանքով է խոսում ոչ միայն աշխարհի հանդեպ հերոսների ունեցած վերաբերմունքի մասին, այլև երբեմն ծաղրում է նաև հերոսներին: Նրա վեպի հերոս Հոլդեն Քոլֆիլդի վեճը Մորիսի «Էդմոնդյան» հյուրանոցի վերելակի մկանուտ աշխատողի հետ ցույց է տալիս ոչ միայն հակառակորդի անմտությունը, այլև Հոլդենի հիմարությունը, քանի որ նա փորձում է տրամաբանելով ընդհանուր հայտարարի գալ Մորիսի հետ: Հոլդենը անում է շատ բաներ, որոնք ինքը քննադատում էր և որոնց մասին ընթերցողին ասում էր, որ ատում է:

Եզրակացություն

Սելինջերին հաջողվեց երիտասարդությանը հոգեհարազատ բավականին վառ կերպար ստեղծել: Չնայած գրողը ստեղծագործել է 20-րդ դարի կեսերին, նրա մտքերն ու զգացմունքները մոտ և հասկանալի են նաև ժամանակակից երիտասարդին:

Գրականության ցանկ

1. М. А. Сэлинджер. Над пропастью во Сне: мой отец Дж.Д. Сэлинджер. - СПб: Лимбус Пресс, 40 с., 2006.
2. Н.Л. Иткина. Поэтика Сэлинджера. - М: Российск. гос. гуманит. уни-т, 18 с., 2002.
3. J. D. Salinger. The Catcher in the Rye. - СПб.: Каро, 234-243 pp, 2011.
4. About _Jerome_ Salinger, http://www.lib.ru/SELINGER/sel_1.txt/.
5. Американская литература и общественно-политическая борьба. - Под ред. Г. М. Злобина. - М., 1977.
6. История американской литературы. - Под ред. Н. И. Самохвалова. - М., 1971.
7. Е. У. Bulygina & Т. А. Tripolskaya (2011). The story Catcher in the rye by J.D. Salinger and its translations into Russian and Italian: an expressive word in the structure of a literary text. Sibirskiy Filologicheskiy Zhurnal, (2), 187–196 pp. <https://doi.org/10.17223/18137083/35/26>.

**ՊՈԼԻՄԵՐԱՅԻՆ ՆԱՆՈՂԻՍՊԵՐՍ ՄԱՍՆԻԿՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՏՈՊՈԼՈԳԻԱԿԱՆ
ՄՈՆՈՄԵՐ-ՋՈՒՐ ՀԵՏԵՐՈԳԵՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ**

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն
քիմիկական գիտությունների թեկնածու, լաբորատորիայի վարիչ

ԱՐՄԵՆ ՆԱԴԱՐՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն
տեխնիկական գիտությունների թեկնածու, ավագ գիտաշխատող

ԳԱՅԱՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն
քիմիկական գիտությունների թեկնածու, ավագ գիտաշխատող

ՄԱՐԻԱՄ ՄԵԾՈՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն
ավագ լաբորանտ

ԱՌՆՈՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
գիտակրթական միջազգային կենտրոն
քիմիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
դեղագիտության ամբիոնի պրոֆեսոր

Համառոտագիր

Ուսումնասիրվել է լատեքսային մասնիկների առաջացման տոպոլոգիական մեխանիզմը մոնոմեր – ջուր հետերոգեն ստատիկ համակարգում, որը իրենից ներկայացնում է մոնոմերի կաթիլ – ջուր դիսպերս համակարգի մոդելը:

Ուսումնասիրությունները տարվել են էմուլցատորի բացակայության պայմաններում, որը հնարավորություն է տվել բացահայտելու հետերոգեն համակարգի տարբեր փուլերում ընթացող պոլիմերման ռեակցիաների դերը դիսպերս մասնիկների առաջացման և կազմավորման պրոցեսներում: Ստացվել են տվյալներ, որոնք ցույց են տալիս, որ մասնիկազոյացման մեխանիզմը բացահայտելու համար առաջնային է համարվում հետերոգեն համակարգում գնահատել տարբեր փուլերում ընթացող պոլիմերմանը ուղեկցող ֆիզիկաքիմիական ակտերը, որոնց հետևանքով համակարգում ծնվում և ձևավորվում են լատեքսային մասնիկները:

Մոնոմեր – ջուր համակարգը մոդելավորող սրվակներում տարվող փորձերում ցույց է տրվել, որ պոլիմերման ռեակցիաների բացակայության դեպքում մեխանիկական խառնումով համակարգը դիսպերգելուց հետո ժամանակի ընթացքում փուլերը տարանջատվում են և համակարգը գալիս է նախնական վիճակի, իսկ երբ համակարգում ընթանում են պոլիմերման ռեակցիաներ, մոնոմեր - ջուր-

մակրոհամակարգը վեր է ածվում կայուն էմուլսիայի, այնուհետև՝ լատեքսի: Այս փորձերը ցույց տվեցին, որ էմուլգատորը չի մասնակցում կայուն նանոդիսպերս համակարգի առաջացման պրոցեսին, և այդ համակարգի առաջացումը պայմանավորված է միջավայրում ընթացող պոլիմերման ռեակցիաներով:

Ֆոտոնկարահանման մեթոդով ուսումնասիրվել է մասնիկագոյացման տոպոլոգիան մեթիլմեթակրիլատ - ջուր հետերոգեն ստատիկ համակարգում: Ստացված արդյունքները ցույց են տվել, որ մասնիկագոյացումը միաժամանակ ընթանում է փուլերի բաժանման մակերևույթային շերտում և ջրային փուլի ծավալում:

Մոնոմեր – ջուր համակարգում սինթեզված լատեքսները ուսումնասիրվել են Prism-3 էլեկտրոնային միկրոսկոպով: Լատեքսային մասնիկների տրամագծերը գտնվում են 100-300 նանոմետրի սահմաններում և ունեն չափերի խիստ ընդգծված բիմոդալ բաշխվածություն: Այս արդյունքը վկայում է այն մասին, որ մոնոմեր – ջուր հետերոգեն համակարգում, նույնիսկ այն դեպքում, երբ մոնոմերի լուծելիությունը հնարավորություն է տալիս պոլիմերային շղթայի որոշակի աճի, ջրում առկա են մասնիկների առաջացման առնվազն երկու տոպոլոգիական մեխանիզմներ:

Բանալի բառեր և բառակապակցություններ. լատեկս, էմուլսիոն պոլիմերում, մեթիլմեթակրիլատ, ստիրոլ, հետերոգեն համակարգ:

ТОПОЛОГИЯ ОБРАЗОВАНИЯ ПОЛИМЕРНЫХ НАНОЧАСТИЦ В ГЕТЕРОГЕННОЙ СИСТЕМЕ МОНОМЕР – ВОДА

НАРИНЕ ГРИГОРЯН

Национальная академия наук Республики Армения
Научно-технологический центр органической и фармацевтической химии
кандидат химических наук, заведующая лабораторией

АРСЕН НАДАРЯН

Национальная академия наук Республики Армения
Научно-технологический центр органической и фармацевтической химии
кандидат технических наук, старший научный сотрудник

ГАЯНЕ ГРИГОРЯН

Национальная академия наук Республики Армения
Научно-технологический центр органической и фармацевтической химии
Кандидат химических наук, старший научный сотрудник

МАРИАМ МЕЦОЯН

Национальная академия наук Республики Армения
Научно-технологический центр органической и фармацевтической химии
старший лаборант

АРНОС ОГАНЕСЯН

Национальная академия наук Республики Армения
Международный научно-образовательный центр
Научно-технологический центр органической и фармацевтической химии
доктор химических наук
профессор кафедры фармакологии

Аннотация

Исследован топологический механизм зарождения латексных частиц в гетерогенной статической системе мономер – вода, моделирующую дисперсионную систему капля мономера - вода. Исследования проводились в отсутствие эмульгаторов, что позволило определить роль полимерных реакций в процессе зарождения и формирования латексных частиц. Полученные результаты показывают, что для выявления механизма частицеобразования, в первую очередь, необходимо оценить роль физико-химических процессов сопутствующих реакций полимеризации, в результате которых зарождаются и формируются латексные частицы.

Показано, что механическое перемешивание водно - мономерной системы, несмотря на присутствие эмульгатора, не приводит к получению стабильной эмульсии и что стабильная эмульсия получается только в процессе реакций полимеризации.

Методом фотонаблюдения исследовалась топология образования дисперсных частиц в статической системе метил метакрилат - вода. Показано, что генерация частиц одновременно протекает в объеме водной фазы и на границе раздела фаз.

Электронномикроскопические исследования, проведенные на микроскопе Prism-3 показали, что в гетерогенной статической системе метил метакрилат – вода синтезированные латексы имеют ярко выраженное бимодальное распределение по диаметру в интервале 100- 300нм, что является еще одним доказательством наличия двух зон протекания процесса генерации латексных частиц.

Ключевые слова и словосочетания: латекс, эмульсионная полимеризация, метил метакрилат, стирол, гетерогенная система.

TOPOLOGY OF FORMATION OF POLYMER NANOPARTICLES IN A HETEROGENEOUS MONOMER-WATER SYSTEM

NARINE GRIGORYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
Scientific Technological Center of Organic and Pharmaceutical Chemistry
PhD in Chemical Sciences, Head of Laboratory

ARSEN NADARYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
Scientific Technological Center of Organic and Pharmaceutical Chemistry
PhD in Technical Sciences, Senior Researcher

GAYANE GRIGORYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
Scientific Technological Center of Organic and Pharmaceutical Chemistry
PhD in Chemical Sciences, Senior Researcher

MARIAM METSOYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
Scientific Technological Center of Organic and Pharmaceutical Chemistry
Senior Laboratorian

ARNOS HOVHANNISYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
International Scientific-Educational Center
Scientific Technological Center of Organic and Pharmaceutical Chemistry
Chair of Pharmacology Professor
Doctor of Chemistry

Abstract

The topological mechanism of the nucleation of latex particles in a heterogeneous static monomer-water system, which simulates a monomer drop in water in water-monomer dispersions, has been studied. The studies were carried out in the absence of emulsifiers, which made it possible to determine the role of polymer reactions in the process of nucleation and formation of latex particles. The results obtained show that in order to identify the mechanism of particle formation, it is first necessary to evaluate the role of the physicochemical processes of the accompanying polymerization reactions, which result in the nucleation and formation of latex particles.

It has been shown that mechanical mixing of the water-monomer system, despite the presence of an emulsifier, does not lead to the formation of a stable emulsion and that a stable emulsion is obtained only when polymerization reactions occur.

The topology of the formation of dispersed particles in the static system methyl methacrylate - water was studied by photo observation. It is shown that the generation of particles occurs simultaneously in the bulk of the aqueous phase and at the interface.

Electron microscopic studies carried out on a microscope

Prism-3 showed that in a heterogeneous static system methyl methacrylate - water, the synthesized latexes have a pronounced bimodal diameter distribution in the range of 100-300 nm, which is another evidence of the presence of two zones of the process of generating latex particles.

Keywords and phrases: latex, emulsion polymerization, methyl methacrylate, styrene, heterogeneous system.

Տեսամեթոդական հիմքեր

Պոլիմերների ջրային դիսպերսիաների սինթեզին նվիրված աշխատանքները բազմաթիվ են և բազմաբնույթ: Սկզբնական աշխատանքները հիմնականում նվիրված են եղել բնական կաուչուկներին փոխարինող սինթետիկ լատեքսներ ստանալուն: Այդ աշխատանքներում կարևորագույն էին համարվում սինթեզվող պոլիմերների մոլեկուլյար պարամետրերի կարգավորման հարցերը, որոնք և որոշում էին կաուչուկների ֆիզիկական և մեխանիկական հատկությունները: Հետագայում լատեքսները մեծ կիրառություն գտան տեխնիկայի ամենատարբեր բնագավառներում (սոսինձներ, ներկեր, թաղանթներ և այլն) և կարևորագույն խնդիր դարձավ նրանց կոլոիդ պարամետրերի կարգավորման հնարավորությունների բացահայտումը: Այս խնդիրը մասամբ լուծվում է տարբեր տեսակի կոմպոզիտներ ներմուծելով պոլիմերման սկզբնական համակարգում և մոնոմերի բնույթը փոխելով, սակայն նման եղանակով անհնար էր լուծել լատեքսների կոլոիդ պարամետրերի կարգավորման խնդիրները և առ այսօր մոնոդիսպերս լատեքսներ սինթեզվում են միայն էմպիրիկ ճանապարհով մշակված բաղադրատոմսերով **[1-5]**:

Մոնոմեր – ջուր դիսպերս համակարգը իրենից ներկայացնում է մոնոմերի կաթիլներ ջրում, որոնք կայունացված են մակերեսային ակտիվ նյութերով: Սուսպենզիոն համակարգում պոլիմերման կինետիկ օրինաչափությունները չեն տարբերվում հոմոգեն համակարգում (զանգվածում, լուծույթում) տարվող պոլիմերման օրինաչափություններից և ստացվող լատեքսի կոլոիդ պարամետրերը շատ քիչ են տարբերվում սկզբնական սուսպենզիայի պարամետրերից: Ի տարբերություն սուսպենզիոն պոլիմերմանը՝ միցելյար էմուլսիաներում ռադիկալային պոլիմերման մեխանիզմը այն աստիճանի է փոփոխվում, որ թվում է, թե խախտվում է ռադիկալային պոլիմերման արագության և աստիճանի հակադարձ համեմատականության հիմնարար օրենքը **[6-8]**: Միցելյար էմուլսիաներում էմուլզատորի կոնցենտրացիայի մեծացումից պոլիմերման արագությունը և պոլիմերի մոլեկուլյար զանգվածը սկսում են միաժամանակ աճել **[7]**: Այս ֆենոմենը դարձել է անցած դարի խոշորագույն գիտնական ֆիզիկաքիմիկ, ջրածնային ռումբի ստեղծման հայր համարվող Հարկինսի ուսումնասիրության առարկան, և նա Չիկագոյի համալսարանում իր կյանքի վերջին տարիներին զբաղվել է միայն էմուլսիոն պոլիմերման (ԷՊ) մեխանիզմի ուսումնասիրությամբ:


Հարկինսի մոդելը հիմնված է այն էքսպերիմենտալ արդյունքների վրա, որոնք ստացված են ստիրոլը միցելիար էմուլսիայում պոլիմերելիս, երբ պոլիմերումը հարուցվում է ջրում լուծված կալիումի պերսուլֆատով **[7]**: Ըստ այդ արդյունքների՝ միցելները պոլիմերման սկզբնական փուլում անհետանում են և համակարգում հայտնվում են պոլիմեր-մոնոմերային նանոմասնիկներ, որոնք և վերածվում են լատեքսային մասնիկների:

Հիմք ընդունելով Հարկինսի առաջարկված ԷՊ մոդելը փորձեր են արվում կարգավորելու լատեքսների կոլոիդ պարամետրերը՝ փոխելով էմուլզատորի քանակությունը և բնույթը: Որոշ դեպքերում դա բերում է հաջողության, և գրականության մեջ կան աշխատանքներ, որոնցում բերված են՝ մոնոմեր – ջուր կայուն դիսպերս համակարգեր առաջացնող ամենատարբեր էմուլզատորների խառնուրդներ, որոնց կիրառումը բերում է մոնոդիսպերս լատեքսների ստացմանը **[9-13]**: Նշված աշխատանքներում բերված չէ ոչ մի որակական կամ քանակական կապ մասնիկների գեներացման և կիրառվող նյութերի հատկությունների միջև: Այս խիստ կարևոր և հետաքրքիր գիտական հարցի պատասխանը ստանալու համար **[14-16]** աշխատանքներում ուսումնասիրվել է մասնիկագոյացման տոպոլոգիական մեխանիզմը մոնոմեր-ջուր ստատիկ համակարգում, որը փաստորեն մոդելացնում է մոնոմերի կաթիլը ջրում: Այս աշխատանքներում **[14-16]** ցույց է տրված, որ հետերոգեն դիսպերս համակարգում լատեքսային մասնիկների առաջացումը հիմնականում ընթանում է միջփուլային շերտերում ընթացող ռադիկալային պոլիմերման էլեմենտար ակտերին ուղեկցող ֆիզիկաքիմիական պրոցեսների հաշվին, սակայն, մոնոմերի՝ ջրում լուծելիությունից կախված, կարող են հավանական դառնալ նաև ջրային փուլի ծավալում մասնիկագոյացման պրոցեսները, որոնք էապես կարող են փոխել սինթեզվող լատեքսի կոլոիդ պարամետրերը: Այս հարցի պատասխանը ստանալու համար ներկայացվող աշխատանքում ուսումնասիրվել է մոնոմեր – ջուր մոդելային ստատիկ համակարգում մեթիլմեթակրիլատի (ՄՄԱ) պոլիմերման ժամանակ ընթացող մասնիկագոյացման տոպոլոգիական մեխանիզմը: ՄՄԱ


ընտրությունը պայմանավորված է նրանով, որ նրա լուծելիությունը ջրում էապես բարձր է [14-16] աշխատանքներում օգտագործված մոնոմերների (ստիրոլ, քլորոպրեն, վինիլացետատ) լուծելիությունից և մասնիկագոյացման պրոցեսներ կարող են ընթանալ ջրային փուլի ծավալում:

Փորձնական մաս և արդյունքների քննարկում

Մոնոմեր-ջուր ստատիկ համակարգում պոլիմերումը տարվել է սրվակներում: Սխեմատիկորեն սրվակները պատկերված են նկ. 1-ում և 2-ում: Այս նկարներում 1 նիշով նշված է մոնոմեր փուլը, իսկ 2-ով՝ ջրային փուլը: 3-ով նշված է էմուլսիան, որն առաջանում է համակարգը ինտեսիվ թափահարելուց հետո: Նկար 1-ը համապատասխանում է այն դեպքին, երբ համակարգում բացակայում է հարուցիչը և պոլիմերման ռեակցիաներ չեն ընթանում: Երկրորդ նկարում ջրային փուլը իրենից ներկայացնում է 0.4 տոկոսանոց հարուցիչի (կալիումի պերսուլֆատի) ջրային լուծույթ: Երկու համակարգերում էլ ջրային փուլում նախապես լուծված է եղել էմուլսիոն պոլիմերման էֆեկտիվ էմուլգատոր հանդիսացող նատրիումի ալկիլ սուլֆոնատ, որի քանակությունը ջրում, ըստ սերիաների, փոփոխվել է 4%-ից մինչև 12% (տեխնոլոգիական բաղադրատոմսերում՝ այն 4% -ից չի անցնում):




Նկ.1 Ստիրոլ – էմուլգատորի ջրային լուծույթ համակարգի արտաքին վիճակը թափահարելուց առաջ և հետո պոլիմերման ռեակցիաների բացակայության դեպքում:




Նկ.2 Ստիրոլ – էմուլգատորի և հարուցիչի ջրային լուծույթ համակարգի արտաքին վիճակը թափահարելուց առաջ և մոնոմերի պոլիմերման 5 տոկոս կոնվերսիայից հետո:

Առաջին նկարից պարզ երևում է, որ պոլիմերման ռեակցիաների բացակայության դեպքում մեխանիկական խառնումով համակարգը դիսպերգելուց հետո ժամանակի ընթացքում փուլերը տարանջատվում են և համակարգը գալիս է նախնական վիճակի: Երկրորդ նկարը համապատասխանում է այն դեպքին, երբ համակարգում ընթանում են պոլիմերման ռեակցիաներ և մոնոմեր - ջուր-մակրոհամակարգը վեր է ածվում կայուն էմուլսիայի, այնուհետև՝ լատեքսի: Այս փորձերը ցույց տվեցին, որ էմուլգատորը չի մասնակցում կայուն նանոդիսպերս համակարգի առաջացման պրոցեսին և այդ համակարգի առաջացումը պայմանավորված է միջավայրում ընթացող պոլիմերման ռեակցիաներով:

Էմուլսիոն պոլիմերման ժամանակ որպես հարուցիչ սովորաբար օգտագործվում են ջրալուծ պերօքսիդային միացություններ, հիմնականում՝ կալիումի պերսուլֆատ, որի թերմիկ տրոհումից առաջանում են սուլֆատ իոն-ռադիկալներ՝




Իոն-ռադիկալների թափանցումը մոնոմերի կաթիլ քիչ հավանական է և այդ մոնոմերի կաթիլներում պոլիմերման ռեացիաներ չեն կարող հարուցվել [6,7,16]: Սուլֆատ իոն-ռադիկալները ջրային փուլում փոխազդում են լուծված մոնոմերի մոլեկուլների հետ՝ առաջացնելով աճող ռադիկալներ.



2 և 3 պոլիմերման ակտերի հավանականությունը որոշվում է ջրում մոնոմերի լուծելիությամբ: Ստիրոլի դեպքում աճող ռադիկալը ջրում խզվում է մեկ կամ երկու մոնոմերի մոլեկուլ միացնելուց հետո [16], հետևաբար ջրային փուլում պոլիմերային դիսպերս մասնիկների գեներացիան գրեթե հավասար է զրոյի:

Սրվակներում տարվող փորձերը միանշանակ ցույց են տալիս, որ լատեքսային մասնիկները ծնվում են մոնոմերի կաթիլ – ջուր միջփուլային շերտում, հետևաբար մոնոմերի կաթիլները ջրում պետք է դիտարկել առնվազն երեք՝ որակապես միմյանցից տարբերվող պոլիմերային տիրույթներ ունեցող հետերոգեն համակարգ՝ մոնոմերի ծավալ, ջրային փուլի ծավալ և միջփուլային շերտ: Սխեմատիկ մոնոմերի կաթիլը ջրում պատկերված է նկ.3 ում.



Նկ.3 Պոլիմերման տիրույթները մոնոմերի կաթիլ –ջուր հետերոգեն համակարգում:


Այն մոնոմերների դեպքում, որոնց լուծելիությունը հնարավորություն է տալիս պոլիմերային շղթայի որոշակի աճի ջրում, կարելի է ենթադրել, որ ջրային փուլի ծավալում հոմոգեն նուկլեացման մեխանիզմով կարող է տեղի ունենալ պոլիմերային դիսպերս մասնիկների առաջացում: Այս ենթադրությունը գնահատելու համար ուսումնասիրվել է մեթիլմեթակրիլատի պոլիմերումը մոնոմեր ջուր հետերոգեն ստատիկ համակարգի ջրային փուլում, մոնոմեր փուլի ներկայության և բացակայության պայմաններում:

Պոլիմերումը տարվել է թերմոստատացված սրվակներում (պոլիմերման սարքավորումը պատկերված է նկ. 4 ում): Մասնիկագոյացումը ուղեկցվում է ջրային փուլի օպտիկական խտության(պլոտրության) փոփոխմամբ, որը հնարավորություն է տալիս նկարահանելու սրվակներում ընթացող մասնիկագոյացման պրոցեսները (նկ. 4):

Մինչ պոլիմերումը ՄՄԱ – պերսուլֆատի ջրային լուծույթ համակարգը ինտեսիվ խառնվել է, այնուհետև ստատիկ պայմաններում բաժանիչ ձագարից առանձնացվել է ջրային փուլը և թերմոստատացվել: Պոլիմերման տարբեր ժամանակահատվածներում գրավիմետրիկ եղանակով չափվել է ջրային փուլի չոր մնացորդի քանակությունը: Պոլիմերման պրոցեսը դադարեցվել է այն ժամանակ, երբ վերջին երեք նմուշներում չոր մնացորդի քանակությունը մնացել է հաստատուն (նկ 5):




Նկ.4. Սրվակներում տարվող ստատիկ պոլիմերման սարքավորումը:



Նկ.5 ՄՄԱ – ջուր համակարգում ջրային փուլի չոր մնացորդի փոփոխությունը պոլիմերման ընթացքում:

Սինթեզված լատեքսները նկարահանվել են Prism-3 էլեկտրոնային միկրոսկոպով: Ֆոտոնկարը բերված է նկ. 6-ում: Ինչպես երևում է նկար 6-ից, ստատիկ պայմաններում ՄՄԱ –ի պոլիմերումը ջրի հագեցած լուծույթում էմուլգասատորի բացակայության պայմաններում բերում է ըստ տրամագծի նեղ բաշխվածություն ունեցող լատեքսի առաջացմանը:




Նկ.6 Ջրային լուծույթում սինթեզված ՄՄԱ լատեքսի էլեկտրոնամիկրոսկոպային ֆոտոնկարը:

Հաջորդ սերիական փորձերում թորած 1մլ ՄՄԱ ավեացվել է կալումի պերսուլֆատի 50մլ 0.4 տոկոսանոց ջրային լուծույթի վրա: Հինգ րոպե հետո միջֆազային շերտում նկատվել է պղտորություն, որը սյան տեսքով սկսել է թափանցել ջրային փուլի ծավալը (նկ. 7 1): Արդյունքում սինթեզվել է կայուն լատեքս (նկ. 7-2), որի էլեկտրոնամիկրոսկոպային նկարը բերված է նկ. 8 ում:



Նկ.7 Մոնոմեր ջուր ստատիկ համակարգում ջրային փուլի պղտորվելու և լատեքսի առաջանալու ֆոտոնկարները ՄՄԱ – ջուր ստատիկ համակարգում:



Նկ.8 ՄՄԱ – ջուր ստատիկ համակարգում սինթեզված ՄՄԱ լատեքսի էլեկտրոնամիկրոսկոպային ֆոտոնկարը:

Ինչպես երեվում է նկ. 8 ում բերված ֆոտոպատկերից, լատեքսային մասնիկների տրամագծերը գտնվում են 100-300 նանոմետրի սահմաններում և ունեն չափերի խիստ ընդգծված երկու բաշխվածություն: Այս արդյունքը վկայում է այն մասին, որ երկֆազ համակարգում, նույնիսկ ջրում, մոնոմերի բավարար լուծելիության դեպքում առկա են մասնիկների առաջացման առնվազն երկու տոպոլոգիական մեխանիզմ՝ ջրային փուլի ծավալում և միջփուլային շերտում:

Ստացված արդյունքից հետևում է, որ կարգավորելով ջրային փուլում և միջփուլային շերտում ընթացող պոլիմերման ռեակցիաների հավանականությունները՝ կարելի է սինթեզել տարբեր տրամագծի և բաշխվածության ՄՄԱ լատեքսային մասնիկներ:

Գրականության ցանկ

1. Шевченко Н. Н.^{*}, Панкова Г. А., Шабсельс¹Б. М., Лаишевкина¹С. Г., Байгильдин В. А. //Безэмульгаторная Эмульсионная Сополимеризация Метилметакрилата Как Метод Получения Катионных Частиц Для Диагностики Вируса Клещевого Энцефалита// Коллоидный журнал, 2020, Т. 82, № 2, стр. 252-260.
2. Меньшикова А.Ю., Панкова Г.А., Евсеева Т.Г., Шабсельс Б.М., Шевченко Н.Н. Монодисперсные полимерные частицы с молекулярными отпечатками нафталина в оболочке: chhte3 и адсорбционные свойства // Журн. прикладн. химии, 2011. - Т. 84. № 9. - С. 1517-1525.
3. Yakimansky A.V., Menshikova A.Yu., Shevchenko N.N., Shabsels B.M., Bazhenova A.G., Sel'kin A.V., Sazonov S.K., Vedernikov A.I., Gromov S.P., Sazhnikov V.A., Alfimov M.V. From polymeric nanoparticles to dye-containing photonic crystals: synthesis, self-assembling, optical features, and possible applications. // Polymers for Advanced Technologies. 2009. 20(6), 581-588.
4. Hidalgo-Alvarez. R., Martin-Rodriguez A., Fernandez A., Bastos D., Martinez F., de las Nieves F.J. Electrokinetic properties, colloidal stability and agregation kinetics of polymer colloids // - Adv. Colloid Interface Sci, 1996. V. 67. - P. 1-118
5. Kawaguchi H., Functional polymer microspheres. / - Prog. Polym. Sci., 2000. V. 25. - P. 1171 – 1210
6. Harkins, W. D. 1950. "General Theory of Mechanism of Emulsion Polymerization." J. Polymer Sci. 5: p.217-51.
7. Bovey, F. A., Kolthoff, M., Medalia, A. I., and Meehan, E. J. 1955. Emulsion Polymerization. New York, London: Interscience, p. 165.
8. Lovell, P. A., and El-Aasser, M. S. 1997. Emulsion Polymerization and Emulsion Polymers. ISBN: Hardcover, p. 218.
9. Пат. США4247434. Способ получения монодисперсных латексов с большим размером частиц. / Lovelace A. M., Vanderhoff J. W., Micale F J., El-Aasser M. S., Kornfeld D. M. - РЖ Хим., 1981, №17, С297П.
10. Пат. СРР 77091. Способ получени монодисперсного полистирольного латекса использующегося в иммунологии. /Dimonie V., Hagiopol с., Glogrescu M., Moraru G., Constantinescu G. –РЖ Хим., 1983, № 19, С467П.
11. Du, C., Zhang, N., Ding, S., Gao, X., Guan, P., and Hu, X. 2016. "Preparation of Highly Cross-Linked Raspberry-Like Nano/Microspheres and Surface Tailoring for Controlled Immunostimulating Peptide Adsorption." *Polym. Chem. V. 7*: p.4531-41.
12. Lincopan, N., and Carmona-Ribeiro, A. M. 2009. "Protein Assembly onto Cationic Supported Bilayers." *J. Nanosci. Nanotechnol.* 9: p.3578-86.
13. Naves, A. F., Palombo, R. R., Carrasco, L. D. M., and Carmona-Ribeiro, A. M. 2013. "Antimicrobial Particles from Emulsion Polymerization of Methyl Methacrylate in the Presence of Quaternary Ammonium Surfactants." *Langmuir.* 29: 9677.
14. Oganessian, A. A., Khaddazh, M., Grigoryan, G. K., and Grigoryan, N. G. 2015. "On the Mechanism of Latex Particles Formation in Polymerization in Heterogeneous Monomer—Water System." *Journal of Chemistry and Chemical Engineering* 9 (5): p.363-8.
15. Oganessian, A. A., Khaddazh, M., Gritskova, I. A., Gubin, S. P., Grigoryan, G. K., Muradyan, G. M., and Nadaryan, A. G. 2013. "Polymerization in the Static Heterogeneous System Styrene—Water in the Presence of Methanol." *Theoretical Foundations of Chemical Engineering* 47 (5): p.600-3.
16. Hovhannisyan, A. A., and Khaddazh, M. 2016. On the Theory of Emulsion Polymerization. Germ: Lambert Academic Publishing, p.47.

**ՄԱԶԱՆՈՒԹԱՅԻՆ ԷԼԵԿՏՐՈՖՈՐԵԶԻ ԵՂԱՆԱԿՈՎ ՇԻՃՈՒԿԱՅԻՆ ՍՊԻՏԱԿՈՒՑՆԵՐԻ
ՖՐԱԿՑԻՈՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՆԱԽԱՑԻՈՒՑԻԿ ՎԻՃԱԿԻ
ԿԱՆԽԱՏԵՍՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ**

ԼԻԼԻԹ ԱՐՇԱԿՅԱՆ

<< գիտությունների ազգային ակադեմիա
օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն
կրտսեր գիտաշխատող, հայցորդ
l.m.arshakyan@gmail.com

Համառոտագիր

Ցիտոզը բնութագրվում է որպես դիֆուզ պրոցես, որը դրսևորվում է ֆիբրոզով և կառուցվածքի անոմալ հանգույցների առաջացմամբ: Լյարդի ցիտոզը զարգանում է մի քանի ուղղություններով և հատկանշական է դրա նախանշանների կանխատեսումը՝ հետագա զարգացումը կանխելու համար: Թեպետ կան լյարդի ցիտոզի վերաբերյալ բազում հետազոտություններ, սակայն այն դեռևս մնում է անբուժելի և ընդգրկվում է մահացության պատճառների գլխավորների շարքում՝ ըստ Համաշխարհային առողջապահության կազմակերպության տվյալների: Դա կապված է նաև հիվանդության ոչ լիարժեք և ուշ ախտորոշման հետ: Ներկայումս լյարդի ցիտոզի բուժման արդյունավետ ռազմավարությունները դեռևս բացակայում են: Հետևաբար, լյարդի ցիտոզի պաթոգենեզի ավելի խորը ուսումնասիրումը կհեշտացնի բուժման ավելի արդյունավետ տարբերակների մշակումը:

Ներկայացված աշխատանքի նպատակն է CCl_4 -ով ինդուցված լյարդի ցիտոզի առնետային մոդելի վրա ուսումնասիրել նախացիռոտիկ լյարդի ախտահարման սուր փուլ կանխանշանների առկայությունը ԱԳՀ հաշվարկների ցուցանիշներով ժամանակակից առավել էֆֆեկտիվ և արագ մազանոթային էլեկտրոֆորեզի եղանակով՝ ստացված տվյալները համեմատելով և կորելացնելով հիստոպաթոլոգիական հետազոտություններից հետո:

Հետազոտվող առնետները բաժանվել են 2 խմբի, որոնցից յուրաքանչյուրում պարունակել է առնվազն հինգ կենդանին ($n=5-7$). առողջ կենդանիներ՝ ստուգիչ խումբ (Gr I) և հիվանդ կենդանիներ՝ ցիտոտիկ խումբ (Gr II): Լյարդի վնասումն ինդուցվել է շաբաթական երկու անգամ 2 շաբաթվա ընթացքում 2 մլ/կգ CCl_4 (30% ձիթապտղի յուղի մեջ) ներերակային (I.P) ներարկումով: Փորձի սկզբում և վերջում վերցվել է արյան նմուշ՝ սպիտակուցային ֆրակցիասների ուսումնասիրման համար: Հետազոտության ավարտից հետո իրականացվել են լյարդի հիստոպաթոլոգիական խանգարումները՝ օգտագործելով հեմատոքսիլինով և էոզինով (H&E) ներկում:

Հիստոպաթոլոգիական հետազոտության արդյունքներից պարզ դարձավ, որ լյարդում սկսվել է ինֆիլտրացիայի և բորբոքային պրոցեսի սուր ընթացք, որն էլ բերել է ԱԳՀ նվազմանը: Վերջինս ապացուցում է շիճուկայի սպիտակուցների ընդհանուր քանակի ավելացումը: Բացի այդ՝ օրգան համակարգերի ընդհանուր հետազոտության պատկերը թույլ է տալիս ենթադրել, որ թոք-երիկամային ախտաբանական կապը կարևոր է ցիտոզի նախնական ախտորոշման համար: Պետք է եզրակացնել, որ երբ քաշի նվազումը ուղեկցվում է ընդհանուր սպիտակուցների և ԱԳՀ փոխհարաբերության տատանմամբ, ապա դա կարող է համարվել նախացիռոտիկ վիճակի կանխատեսման բիոմարկեր, որը կարող է դրսևորվել ընդհանուր սպիտակուցների քանակի ավելացմամբ և ԱԳՀ-ի ցուցանիշների նվազմամբ, և ոչ պակաս խառը ձևի: Հաշվի առնելով քաշային տատանումները, վարքագծային, շիճուկային սպիտակուցների հարաբերակցության և հիստոպաթոլոգիական փոփոխությունները՝ անհրաժեշտ է դիտարկել լյարդ-թոք-երիկամ առանցքի ֆունկցիոնալ փոփոխությունների շեղումը՝ որպես կանխատեսվող զարգացող ցիտոզ:

Բանալի բառեր և բառակապակցություններ. լյարդի ցիտոզ, շիճուկային սպիտակուցներ, մազանոթային էլեկտրոֆորեզ, հիստոպաթոլոգիա, ցիտոզի ախտորոշում, ալբումին/գլոբուլին հարաբերություն (ԱԳՀ):

ФРАКЦИОНИРОВАНИЕ БЕЛКОВ СЫВОРОТКИ МЕТОДОМ КАПИЛЛЯРНОГО ЭЛЕКТРОФЕРЕЗА КАК ИНДИКАТОР ПРЕДЦИРРОТИЧЕСКОГО СОСТОЯНИЯ

ЛИЛИТ АРШАКЯН

Национальная академия наук Республики Армения

Научно-технологический центр органической и фармацевтической химии соискатель, младший научный сотрудник

I.m.arshakyan@gmail.com

Аннотация

Цирроз печени характеризуется диффузным процессом, который проявляется в виде фиброза и образования аномальных узелков в структуре печени. Цирроз печени развивается несколькими путями, и важно раннее прогнозирование его симптомов для предотвращения дальнейшего развития.

Хотя существует множество исследований цирроза печени, он по-прежнему неизлечим и является одной из основных причин смерти по данным Всемирной организации здравоохранения. В настоящее время эффективные стратегии лечения цирроза печени все еще отсутствуют. Следовательно, более глубокое понимание патогенеза цирроза печени будет способствовать разработке более эффективных вариантов лечения.

Цель настоящей работы состояла в том, чтобы исследовать наличие симптомов предцирротического состояния (острой фазы заболевания печени) на модели CC_{14} -индуцированного цирроза печени, оценивая соотношение альбумина и глобулина с помощью современного и более эффективного метода капиллярного электрофореза. Полученные данные сравнивали и коррелировали с гистопатологическими исследованиями.

Подопытные крысы были разделены на две группы: 1. контрольная группа (здоровые животные), 2. группа CC_{14} (цирроз). Повреждение печени вызывали внутрибрюшинной (ИП) инъекцией 2 мл/кг CC_{14} (30% в оливковом масле) два раза в неделю в течение 2 недель. В начале и конце эксперимента брали образец крови для исследования белковых фракций. Гистопатологические аномалии в печени изучали в конце эксперимента с использованием окрашивания гематоксилином и эозином (H&E).

Результаты гистологических исследований показали, что в печени развивается процесс инфильтрации и остро воспаления, что приводит к снижению соотношения альбумина и глобулина. Последнее доказывает увеличение общего количества сывороточного белка. Макроскопическое исследование систем органов позволяет предположить, что для предварительного диагноза цирроза печени необходима легочно-почечная патологическая взаимосвязь.

Следует заключить, что если колебания потери веса сопровождаются снижением общего белка и AGR, их можно рассматривать как биомаркер для прогнозирования предцирротического состояния печени. Колебания могут проявляться в увеличении общего белка и снижении AGR, и / или в смешанном порядке.

Учитывая колебания массы тела, поведения, соотношения белков сыворотки крови и гистопатологические изменения, необходимо рассматривать нарушения функциональных взаимоотношений оси печень-легкие-почки как прогнозируемо развивающийся цирроз печени.

Ключевые слова и словосочетания: Цирроз печени, сывороточные белки, капиллярный электрофорез, гистопатология, диагностика цирроза, отношения альбумина к глобулину (A/G).

FRACTIONATION OF SERUM PROTEINS BY CAPILLARY ELECTROPHORESIS AS AN INDICATOR OF PRE-CIRRHOTIC STATE

LILIT ARSHAKYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
Scientific Technological Center of Organic and Pharmaceutical Chemistry
Junior researcher
l.m.arshakyan@gmail.com

Abstract

Cirrhosis is characterized by a diffuse process, which is manifested by fibrosis and the formation of abnormal nodules in liver architecture. Liver cirrhosis develops in several ways, and it is important to predict its symptoms to prevent further development. Although there are many studies of liver cirrhosis, it is still incurable and is one of the leading causes of death according to the World Health Organization.

Nowadays, effective strategies to treat liver cirrhosis are still lacking. Consequently, a better understanding of the pathogenesis of liver cirrhosis would facilitate the development of more effective treatment options.

The goal of the present work was to investigate the presence of pre cirrhosis (acute phase of liver disease) symptoms of CCl₄-induced liver cirrhosis via evaluation of albumin to globulin ratios (AGR) by modern and more efficient capillary electrophoresis method. Receive data were compared and correlated with the histopathological examinations.

The experimental rats were divided into two groups: 1. control group (healthy animals), 2. CCl₄ group (cirrhotic). Liver injury was induced by the intraperitoneal (I.P) injection of 2 ml/kg CCl₄ (30% in olive oil) twice weekly for 2 weeks. At the beginning and end of the experiment, a blood sample was taken for the study of protein fractionations. Histopathological abnormalities in the liver were studied at the end of the experiment using Hematoxylin and eosin (H&E) staining.

The results of the histological examination revealed that there was an onset of acute inflammatory processes in the liver, which led to a reduced AGR. The latter proves to increase the total amount of whey protein. The gross examination of the organ systems suggests that a pulmonary-renal pathological interconnection may be necessary for a preliminary diagnosis of cirrhosis.

It should be concluded that if the reduction in weight loss is accompanied by fluctuations in total protein and AGR, it can be considered as a biomarker for predicting the pre-cirrhotic state of the liver. Fluctuations can be manifested as an increase in total protein and a decrease in AGR, or/and as a mixed pattern.

Given the fluctuations in weight, behavioral, serum proteins ratio, and histopathological changes, it is necessary to consider the abnormalities of the functional relationship of the liver-lung-kidney axis as predictable developing cirrhosis.

Keywords and phrases: liver cirrhosis, serum protein, capillary electrophoresis, histopathology, diagnosis of cirrhosis, Albumin/Globulin (A/G) Ratio.

Ներածություն

Լյարդը համարվում է օրգանիզմի վերականգնողական հատկություններով օժտված կարևորագույն օրգանը. նույնիսկ եթե վիրահատությամբ հեռացվել է նրա 2/3 մասը, ապա այն կարող է ամբողջությամբ վերականգնվել [1]: Վերականգնումն իրականանում է՝ ի հաշիվ առողջ հեպատոցիտների ռեգեներացիայի: Հետևաբար ԼՑ-ը զարգանում է, երբ խախտված են օրգանի վերականգնողական հատկությունները: Լյարդի ցիռոզ հիվանդության ախտաբանության մեջ կարևոր է նաև այլ օրգան համակարգերի շղթայական կապը, օրինակ՝ երիկամների սուր վնասումը, թոքային բարդացումները: Դրանք լյարդի ցիռոզ հիվանդության բարդացումներն են և ունեն կարևոր կլինիկական և պրոգնոստիկ նշանակություն [2,3]:

Ածխածնի քառաքլորիդը (CCl₄) ուժեղ հեպատոտոքսին է, որը լայն կիրառում ունի փորձարարական կենդանական մոդելների վրա՝ լյարդի զանազան վնասվածքների առաջացման համար, մասնավորապես՝ ցիռոզի: Հայտնի է, որ CCl₄-ը առնետների օրգանիզմում առաջացնում է լյարդի կենսաքիմիական և հյուսվածաբանական տարատեսակ փոփոխություններ, ֆիբրոզ, որոնք մակրոսկոպիապես և միկրոսկոպիապես նմանվում են մարդու լյարդի ցիռոզին: Այդ պատճառով CCl₄-ով ինդուցված լյարդի ցիռոզի առնետային մոդելը օգտագործվում է որպես ժամանակակից մեթոդ հիվանդության մորֆոլոգիական դրսևորումների ուսումնասիրման համար [4-7]:

Շիճուկային սպիտակուցների ֆրակցիոն փոփոխությունները, որոնք տեղի են ունենում լյարդի հիվանդության հետ կապված պարենխիմալ վնասման հետ, բնութագրվում են շիճուկային ալբումինի մակարդակի նվազմամբ և գամմա գլոբուլինի ավելացմամբ: Ռեգեներատիվ հանգույցների առաջացումը լյարդի ցիռոզի դեպքում բերում է հեպատոցիտների ֆունկցիոնալ առավել ախտահարման՝ պատճառ հանդիսանալով լյարդում սինթեզված ալբումինի քանակի նվազմանը արյան շիճուկում [8-10]: Սպիտակուցների էլեկտրոֆորեզը ընդհանուր հաստատված եղանակ է մարդկանց, կենդանիների և լաբորատոր կենդանիների բժշկական հետազոտական պրակտիկայում շիճուկային սպիտակուցների որոշման համար: Արյան շիճուկում ալբումինի և գլոբուլինի մակարդակի փոփոխությունը պարունակում է վաղ և կարևոր դիագնոստիկ ու պրոգնոստիկ ինֆորմացիա հիվանդությունների վերաբերյալ: Բազմաթիվ զարգացած երկրներում մազանոթային էլեկտրոֆորեզի միջոցով ուսումնասիրման մեթոդը հաստատված և արդյունավետ մեթոդ է, որը լայնորեն կիրառվում է որպես սկրինինգային եղանակ՝ սպիտակուցային փոխանակության խանգարումների հետ կապված շատ հիվանդությունների կլինիկական ախտորոշման համար՝ ընդհուպ մինչև նորածնային շրջանի հետ կապված դիսպրոտեինեմիայի կլինիկական մոնիտորինգի համար [11, 12]:

Վերը նշվածները արտացոլում են ներկայացված աշխատանքի նպատակի արդիականությունը: Այն է, ԼՑ-ի գենեզի, զարգացման և նախացիռոտիկ վիճակի կանխատեսման համար կարևոր ենք համարում և առաջարկում ենք հետազոտել շիճուկային սպիտակուցների ԱԳՀ փոփոխությունները հիվանդության զարգացման սկզբնական՝ սուր փուլերում՝ ստացված տվյալները համեմատելով և կորելացնելով լյարդի մակրոսկոպիական և միկրոսկոպիական նկարագրերի հետ:

Ուսումնասիրության մեթոդներ: Հետազոտության մոդելավորումը

Այս հետազոտության համար օգտագործվել է տասը ոչ գծային սպիտակ առնետ (200–220գ): Կենդանիների հետ վարվելաձևերը համապատասխանել են Եվրոխորհրդի կողմից հաստատված Directive 2001/20/EC պահանջներին:

Կենդանիները 1 շաբաթ հարմարեցվել են լաբորատոր միջավայրին: Առնետները պատահականորեն բաժանվել են երկու խմբի, որոնցից յուրաքանչյուրում պարունակել է առնվազն

հինգ կենդանի (n=5-7). առողջ կենդանիներ՝ ստուգիչ խումբ (Gr I) և հիվանդ կենդանիներ՝ ցիռոտիկ խումբ (Gr II):

Լյարդի ցիռոզի մոդելները առաջացվել են CCl₄-ի 30%-անոց լուծույթի ներորովայնային ներարկումներով: Այն տրվել է 2 մլ/կգ դոզաչափով 2 շաբաթ տևողությամբ շաբաթական 2 անգամ հաճախականությամբ:

Կլինիկական նշանների և քաշային տվյալների հավաքագրում

Իրականացվել է փորձարարական բոլոր կենդանիների օրգան-համակարգերի և լյարդի ընդհանուր մակրոսկոպիկ հետազոտություն և նկարահանում լուսային ֆոտոխցիկով՝ ախտորոշումը հաստատելու և հետագա մանրադիտակային հետազոտության համար համապատասխան հատվածներ ընտրելու համար: Փորձարարական առնետները մշտադիտարկվել են ցանկացած կլինիկական և վարքային աննորմալություն հայտնաբերելու նպատակով: Փորձարարական խմբերի բոլոր կենդանիների քաշային տվյալները գրանցվել են փորձի առաջին և վերջին օրերին: Փորձի վերջին օրը գրանցվել է լյարդերի քաշերը և հաշվարկվել է լյարդի ինդեքսը՝ ըստ հետևյալ բանաձևի

$$\left[\frac{\text{լյարդի քաշ}}{\text{մարմնի քաշ}} \right] * 100\%$$

Շիճուկային սպիտակուցների ֆրակցիոն բաժանումը մազանոթային էլեկտրոֆորեզով

Նմուշապատրաստում

Բոլոր կենդանիներից արյունը հավաքվել է սրտի պունկցիայի միջոցով մեկանգամյա օգտագործման ներարկիչի օգնությամբ՝ առանց կոագուլյանտի օգտագործման, փորձի առաջին և վերջին օրը: Շիճուկի անջատման համար թողնվել է +4°C ջերմաստիճանում մի քանի ժամ: Այնուհետև ցենտրիֆուգվել է 5000պտ/ր պայմաններում 10 րոպե տևողությամբ: Արյունը անջատվել է արյան ձևավոր տարրերից: Արյան շիճուկները այնուհետև նոսրացվել են 1:39 հարաբերությամբ դեիոնիզացված ջրում մազանոթային էլեկտրոֆորեզով սպիտակուցային ֆրակցիաների բաժանման համար[13]: Որպես ստանդարտ օգտագործվել է եզան շիճուկային ալբումինի (BSA) և առնետի շիճուկային ալբումինի (RSA) 0.125-1մգ/մլ ջրային լուծույթները: Բոլոր նմուշները ներարկումից առաջ ֆիլտրվել են ներարկիչի համար նախատեսված 0.45մկմ մեկանգամյա օգտագործման ֆիլտրերով:

Մազանոթային էլեկտրոֆորեզի գործիքավորում: Մազանոթային էլեկտրոֆորեզը իրականացվել է Hewlett-Packard HP3D Agilent 1600A սարքով, որը միացած է դիոդային համախմբման դետեկտորին: Օգտագործվել է 48.5սմ ընդհանուր երկարությամբ և 40սմ էֆֆեկտիվ երկարությամբ, 50մկմ լայնությամբ մերկ ձուլված կվարցային մազանոթ (bare fused silica capillary):

Ընթացքի հաջորդականություն: Որպես բաժանող էլեկտրոլիտ օգտագործվել է 30մՄ Բորատ դեկահիդրատ բուֆեր (pH=9,5), որի pH-ը կարգավորվել է 1Ն NaOH-ի ջրային լուծույթի օգնությամբ: Բաժանումն իրականացել է բարձր լարման պայմաններում: Յուրաքանչյուր բաժանումից առաջ մազանոթը լվացվել է 2ր 0.1 Ն NaOH-ի լուծույթով, 2ր դեիոնիզացված ջրով և 5ր բաժանող էլեկտրոլիտով: Ներարկումը իրականացվել է հիդրոդինամիկ եղանակով: Քրոմատոգրաման հետազոտություններն իրականացվել են դետեկտորի որոշման 200 նմ ալիքի երկարության տիրույթում:

Ալբ/Գլ (ալբումին/գլոբուլին) հարաբերության որոշումը իրականացվել է՝ ըստ էլեկտրոֆորեզամանների համապատասխան պիկերի մակերեսների:

Ընդհանուր սպիտակուցների քանակություն

Շիճուկի նմուշներում ընդհանուր սպիտակուցների քանակական հետազոտությունների

համար օգտագործվել է սպեկտրոֆոտոմետրիկ անալիզի մեթոդը *UV-VIS spectrophotometer LB-30 SSPS* սարքավորման միջոցով: Նմուշները հետազոտվել են 260 նմ և 280 նմ ալիքի երկարության տակ և քանակները հաշվարկվել են հետևյալ բանաձևով՝

Սպիտակուցի քանակ (մգ/մլ) = $(1.55 \times A_{280}) - (0.76 \times A_{260}) \times$ նոսրացման գործակից

Հերձում

Հետազոտությունների վերջին օրը արյան նմուշառումից հետո կենդանիները ենթարկվել են եթերային անզգայացման և հերձման՝ համապատասխան օրգան-համակարգերի մորֆոլոգիական հետազոտությունների և լյարդի բիոպսիոն նմուշների հավաքագրման համար հետագա հիստոպաթոլոգիական հետազոտություններ իրականացնելու նպատակով:

Հիստոպաթոլոգիա

Լյարդի և այլ հյուսվածքների նմուշները ամրագրվել են 10% բուֆերացված ֆորմալինի լուծույթում, pH 7.2, այնուհետև ներկառուցվել պարաֆինում: Լյարդի նմուշներից ստացվել են 5 մկմ հաստությամբ կտրվածքներ և ներկվել հեմատոքսիլինով և էոզինով (H&E)՝ համաձայն ընդունված ընթացակարգի[14]: H&E ներկված հյուսվածքների նմուշները հետազոտվել են լուսային մանրադիտակով (Jenaval)՝ լյարդի որակական հիստոպաթոլոգիական բնութագրման համար:

Կենդանիների օրգան-համակարգերի և լյարդի ընդհանուր վիճակի գնահատում

Հերձումից հետո իրականացվել է փորձարարական բոլոր կենդանիների օրգան-համակարգերի ընդհանուր վիճակի գնահատում: Լյարդի ընդհանուր մակրոսկոպիկ հետազոտությունից հետո այն նկարահանվել է Canon մակնիշի լուսային ֆոտոխցիկով:

Վիճակագրական վերլուծություն

Վիճակագրական վերլուծությունը իրականացվել է Exel ծրագրի և *Student's' T Test*-ի միջոցով: Տվյալները ներկայացված են որպես միջին \pm SEM (n = 5): Նշանակության մակարդակը սահմանվել է $p < 0,05$ և $p < 0,001$:

Ստացված արդյունքներ և քննարկում

Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ 2 շաբաթվա փորձի ընթացքում CCl₄ – ինտոքսիկացիայից հետո դիտվել է կենդանիների մարմնի քաշի զգալի նվազում, ինչպես նաև լյարդի հարաբերական քաշի (լյարդի ինդեքս) ավելի ցածր ցուցանիշ ստուգիչ խմբի համեմատ, որտեղ դիտվել է կենդանիների քաշի ավելացում մոտ 20գ-ով: Մեր դիտարկումներում տեսել ենք նաև, որ սեզայնայնությունը նշանակություն ունի (աղյուսակ 1): Դա ցույց է տալիս օրգանիզմում առկա պաթոլոգիկ պրոցեսների զարգացումը, որը հաստատվում է իրականացված հետազոտություններով և ներառվում մեր գիտական հետազոտության հետագա պլաններում:

Շիճուկային սպիտակուցների և դրանց էլեկտրոֆորետիկ ցուցանիշների գնահատումը մարդկանց և կենդանիների մոտ մի շարք հիվանդությունների ախտորոշման համար հայտնի, մշակված լաբորատոր մեթոդ է, որը փոխարինում է ալբումինի քանակության կենսաքիմիական հետազոտությունները ալբումին/գլոբուլին հարաբերության (ԱԳՀ) հաշվարկով [15]:

Վերջինս կարևոր բիոմարկեր է լյարդի հիվանդությունների ախտորոշման համար: Մեր կողմից նախկինում մշակվել և օպտիմալացվել է ժամանակակից մազանոթային էլեկտրոֆորեզի մեթոդը, որպես ավելի արագ և ճշգրիտ մեթոդ՝ հետազոտվող առնետի շիճուկային սպիտակուցների բաժանման համար, որը կիրառվել է ԱԳՀ /ալբումին/գլոբուլին հարաբերության/ ցուցանիշների գնահատման համար:


Մեթոդի օպտիմալացումը ցույց տվել, որ ալբումինի ստանդարտի բաժանում առավել արդյունավետ է ընթացել էլեկտրոլիտի 30մմոլ/լ կոնցենտրացիայի և հիդրոդինամիկ 45Մբար ներարկման պայմաններում (զձ. 1):

Աղյուսակ 1. Մարմնի քաշերի, լյարդի ինդեքսի ցուցանիշները փորձարարական խմբերում:



	Սկզբնական քաշ (գ)	Վերջնական քաշ (գ)	Լյարդի ինդեքս (%)	Մարմնի քաշի փոփոխություն
<i>G I (ինտակտ)</i>	208.33 ± 8.16	230.00 ± 9.47	5.5 ± 0.25	(+) 21.67
<i>G II (ստուգիչ - հիվանդ)</i>	214.40 ± 14.50	183.60 ± 14.50	4.8 ± 0.18*	(-) 30.08**
<i>G II (բուժումՖլ/Միլ-նոլ)</i>	218.12 ± 12.50	239.2 ± 11.2	5.38 ± 0.24*	(+) 21.08

Միջին թվաբանակի արժեք ±SD, n= 5 կամ 6. ** p<0.001 ինտակտ խմբի համեմատությամբ; * p<0.01 ինտակտ խմբի համեմատ.

Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ ստուգիչ (առողջ) կենդանիների մոտ փորձի առաջին և վերջին օրերին նկատվում է ընդհանուր սպիտակուցների քանակի և ԱԳՀ-ի ցուցանիշների նվազ փոփոխություն: Դա վկայում է նորմալ կենսաքիմիական և ֆիզիոլոգիական գործընթացների մասին: Ինչ վերաբերում է հիվանդ խմբի կենդանիներին (ցիռոտիկ), ապա երկու շաբաթվա անընդհատ թունավորումը հանգեցրել է սպիտակուցների ընդհանուր քանակական ցուցանիշների բարձրացման, իսկ ԱԳՀ մակարդակը իջել է, ինչը խոսում է օրգանիզմի և մասնավորապես՝ լյարդի դիսֆունկցիոնալ վիճակի մասին (Գծ. 1, 2, 3 և աղյուսակ 1): Եթե ԱԳՀ մոտ է 1-ին, ապա հավանական է ջրազրկման ֆակտորը: Եթե ԱԳՀ<<1, ապա նշմարվում է գլոբուլինի արտադրության ավելացում (ենթադրելով, որ ալբումինը նորմալ է): Այս տեսանկյունից կարող է նաև կարևոր դեր խաղալ սեռային պատկանելիությունը [16, 17]:




Գծապատկեր 1. Առնետի շիճուկային ալբումինի (RSA-ի) (0.25 մգ/մլ ջրային լուծույթ) էլեկտրոֆորեզրաման՝ բաժանված 48.5սմ/50մկմ մերկ ծուլված կվարցային մազանոթով: Մազանոթային էլեկտրոֆորեզի ընթացքի պարամետրեր. 30 մմոլ/լ pH=9.5 Բորատային բուֆեր, 15կվ լարում, 20°C ջերմաստիճան, 450 մԲար/վրկ ներարկում, 200նմ ալիքի երկարություն:



Գծ2.Ա. G1 (ստուգիչ, առողջ) կենդանիների շիճուկային սպիտակուցների բաժանումը մազանոթային զոնային էլեկտրոֆորեզի եղանակով:
Բ. GII (ցիռոտիկ) կենդանիների շիճուկային սպիտակուցների բաժանումը մազանոթային էլեկտրոֆորեզով.
I – սկզբնական, **F** – վերջնական.

Կենդանիների օրգան-համակարգերի մակրոսկոպիկ հետազոտությունները ցույց տվեցին, որ ստուգիչ խմբի (առողջ) կենդանիների մոտ նկատելի պաթոլոգիական պրոցեսներ չեն հայտնաբերվել: Ինչ վերաբերում է ցիռոտիկ խմբին, ապա մակրոսկոպիապես դիտվում է արտալյարդային ադիեզիաներ, ինդուռացիայի երևույթներ, սեռոզ բորբոքում, լյարդի հատիկավորում: Բացի այդ՝ ցիռոտիկ խմբում երիկամները ճարպակալված էին, փայծախում առկա էին էքսուդատիվ օջախներ, իսկ թոքերը կնճոռած էին:



Աղյուսակ 2. Փորձարարական խմբերի առնետներից վերցված արյան շիճուկում պարունակող ԱԳՀ (ալբումին/գլոբուլին հարաբերությունը)՝ հաշվարկված ըստ էլեկտրոֆորեզամանների պիկերի մարեաների:

	Սկզբնական		Վերջնական	
	G I	G II	G I	G II
Mean	2.246	2.53200	2.27	1.956
SD	0.24	0.157	0.17	0.139


Mean - Միջին թվաքանակ
SD - Միջին թվաքանակի արժեք

Օրգան համակարգերի ընդհանուր հետազոտության պատկերը թույլ է տալիս ենթադրել թոք-ե րիկամային ախտաբանական կապը կարևոր է ցիռոզի նախնական ախտորոշման համար (գծ. 4): Գրականության մեջ նկարագրված է լյարդաթոքային համախտանիշը և հեպատոռենալ կամ լյարդաերիկամային համախտանիշը, որոնք հիմնականում բնութագրվում են լյարդի ցիռոզի բարդացումներով՝ հիմնականում դրսևորվելով հիվանդության վերջին ստադիաներում, սակայն կարող են լինել ուղեկցող հիվանդություններ, որոնք չդրսևորվեն առաջնային պլանում [2, 3]: Դրանք պահանջում են հետազոտ ավելի խորը և համակարգված հետազոտություններ՝ առաջարկված ցիռոզի մոդելի համար, որը տեղ է գտել մեր գիտական հետազոտ պլաններում՝ ավելի մանրամասն գիտական վերլուծությամբ ներկայացնելու իմ տեսակետը:

Լաբորատորիկ եղանակով լյարդի բիոպսիոն նմուշների հետազոտումը լյարդի ցիռոզի ախտորոշման ստանդարտ մեթոդ է, սակայն այն ոչ ինվազիվ, վտանգավոր է և կիրառելի չէ հիվանդության դինամիկ ուսումնասիրություններում, ուստի հետազոտությունները ուղղված են եղել գտնելու կորեկիացիոն կապ արյան սպիտակուցային և հիստոպաթոլոգիական հետազոտությունների միջև՝ ներդնելով ավելի արագ և արդյունավետ մազանոթային զոնային էլեկտրոֆորեզի մեթոդը ԱԳՀ որոշման համար [18]:

Հյուսվածաբանական հետազոտության արդյունքները հաստատեցին, որ ստուգիչ խմբերի կենդանիների մոտ լյարդի հիստոստրուկտուրան պահպանված է, որտեղ պաթոլոգիական պրոցեսներ գրեթե չեն հայտնաբերվում: Ի տարբերություն ստուգիչ խմբի՝ հիվանդ կենդանիների (2-րդ խումբ) լյարդի սյունածն կառուցվածքը խախտված է, կտրվածքի ամբողջ հատույթով առկա են ճարպային և հատիկային (հիալինային) դիստրոֆիաներ: Մոնոցիտար բջիջները որակապես ավելի

շատ են, քան ստուգիչ խմբի մոտ: Կարելի է եզրակացնել, որ լյարդում սկսվել է ինֆիլտրացիայի և բորբոքային պրոցեսի սուր ընթացք, որն էլ բերել է ԱԳՀ նվազմանը և որն էլ ապացուցում է շիճուկային սպիտակուցների քանակի ավելացումը:



Գծ. 5. Փորձարարական կենդանիների առնետների լյարդային հյուսվածքի մորֆոլոգիական պատկերներ:

Ներկում՝ հեմատոքսիլին-էոզինով՝ a, b 100×խոշորացված;

c, d. 400×խոշորացված

a), c) ստուգիչ խումբ, b), d) ստուգիչ խումբ

- CV**-կենտրոնական երակ (Central vein)
- HC**-հեպատոցիտներ (Hepatocytes)
- FC**- ճարպային փոփոխություն(Fatty change)
- N**-նեկրոզ (necrosis)
- HD**-հիալինային կաթիլներ (hyaline droplets)

Գծ. 5. Փորձարարական կենդանիների օրգան-համակարգերի և լյարդի ընդհանուր մակրոսկոպիկ պատկերներ:

a), c) ինտակտ խումբ, b), d) ստուգիչ խումբ

Եզրակացություն

Հաշվի առնելով քաշային տատանումները, վարքագծային, շիճուկային սպիտակուցների հարաբերակցության և հիստոպաթոլոգիական փոփոխությունները՝ անհրաժեշտ է դիտարկել լյարդ-թոք-երիկամ առանցքի ֆունկցիոնալ փոփոխությունների շեղումը՝ որպես կանխատեսվող, զարգացող ցիռոզ:

Գրականության ցանկ

1. Bihari C., Anand L., Rooge S., Kumar D., Saxena P., Shubham S., Sukriti, Trehanpati N., Kumar G., Pamecha V., Sharma S., Rastogi A., Kumar A., Sarin S.K.; Bone marrow stem cells and their niche components are adversely affected in advanced cirrhosis of the liver. *Hepatolog.* (2016). 64(4):1273-88.doi: 10.1002/hep.28754.
2. Bauer, M., Fuhrmann, V. & Wendon, J. Pulmonary complications in liver disease. (2019). *Intensive Care Med* 45, 1433–1435. <https://doi.org/10.1007/s00134-019-05721-y>
3. Chanchaoenthana W, Leelahavanichkul A. Acute kidney injury spectrum in patients with chronic liver disease: Where do we stand? *World J Gastroenterol* 2019; 25(28): 3684-3703. DOI: <https://dx.doi.org/10.3748/wjg.v25.i28.3684>
4. Carbon tetrachloride-induced lethality in mouse is prevented by multiple pretreatment with zinc sulfate: Hiroki Yoshioka, Haruki Usuda, Tsunemasa Nonogaki and Satomi Onosaka: *The journal of Toxicological Sciences*: No 1, 2016. 55-63.<https://doi.org/10.2131/jts.41.55>
5. Saravanan Mani, Debratra Mondal, Kalyan Sarma, Karampal Singh (2014). Experimentally induced liver cirrhosis with ascites by carbon tetrachloride and Phenobarbital sodium in Wistar rats. *Adv. Anim. Vet. Sci.* 2 (3): 159 – 163. (3) DOI:10.14737/journal.aavs/2014/2.3.159.163
6. Gi-Ppeum Lee, Won-Il Jeong, Da-Hee Jeong, Sun-Hee Do, Tae-Hwan Kim and Kyu-Shik Jeong: Diagnostic Evaluation of Carbon Tetrachloride-induced Rat Hepatic Cirrhosis Model: *Anticancer Research* 25: 1029-1038 (2005) 1029-1038
7. Perez TR: Is cirrhosis of the liver experimentally produced by CCl4 an adequate model of human cirrhosis? *Hepatology* 3: 112-120, 1983.DOI: 10.1002/hep.1840030118
8. Teloh HA. Serum proteins in hepatic disease. *Ann Clin Lab Sci.* 1978 Mar-Apr;8(2):127-9. PMID: 637517.
9. Bataller R, Brenner D.A. Liver fibrosis; *J Clin Invest* (2005); 115(4):1100. DOI:10.1172/JCI24282.
10. Robbins and Cotran; *Pathologic basis of disease*, 2005, Elsevier Inc. Edition: 7th:868-882.
11. Tothova C., Nagy O., Kovac G. (2016): Serum proteins and their diagnostic utility in veterinary medicine: a review. *Veterinari Medicina*, 61: 475-496. <https://doi.org/10.17221/19/2016-VETMED>
12. Elkhair, N.M. Serum protein capillary electrophoretic pattern during the neonatal period in dairy calves. *Comp Clin Pathol* 30. 2021. P. 17–23. <https://doi.org/10.1007/s00580-020-03184-y>
13. Wijnen PA, van Diejen-Visser MP. Capillary electrophoresis of serum proteins. Reproducibility, comparison with agarose gel electrophoresis and a review of the literature. *Eur J Clin Chem Clin Biochem.* 1996 Jul;34(7):535-45.doi: 10.1515/cclm.1996.34.7.535.
14. Коржевский Д.Э., Гиляров А.В. Основы гистологической техники. Санкт-Петербург, СпецЛит, 2010. стр.95
15. J. Zaias, M. Mineau, C. Cray, D. Yoon and N.H. Altman “Reference Values for Serum Proteins of Common Laboratory Rodent Strains”, *Journal of the American Association for Laboratory Animal Science/ Vol 48, No 4 July 2009, Pages 387–390.*
16. He Q, Su G, Liu K, Zhang F, Jiang Y, Gao J, et al. (2017) Sex-specific reference intervals of hematologic and biochemical analytes in Sprague-Dawley rats using the nonparametric rank percentile method. *PLoS ONE* 12(12): e0189837. <https://doi.org/10.1371/journal.pone.0189837>
17. W.B. Saunders. *Clinical Veterinary Advisor*. Editor(s): David A. Wilson, 2012, Pages 934-935. ISBN 9781416099796. <https://doi.org/10.1016/B978-1-4160-9979-6.00396-2>.
18. Masatoshi K., Rong Qin Zh., Soo Ryang K. at all. //Diagnostic Accuracy of Imaging for Liver Cirrhosis Compared to Histologically Proven Liver Cirrhosis. // *Intervirolgy* 2008;51(suppl 1):17–26. DOI: 10.1159/000122595

**BREVIBACTERIUM FLAVUM ՄԱՆՐԷԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ L-ՏՐԻՊՏՈՖԱՆԻ ՇՏԱՄ-
ԱՐՏԱԴՐԻՉԻ ՍՏԱՑՄԱՆ ԳԵՆԵՏԻԿԱՍԵԼԵԿՑԻՈՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ**

ԳԱՅԱՆԵ ԱՎԵՏԻՍՈՎԱ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
«Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն
առաջատար գիտաշխատող
կենսաբանական գիտությունների թեկնածու
gavetisova@yahoo.com

ԼՈՒՍԻՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
«Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն
ավագ գիտաշխատող
կենսաբանական գիտությունների թեկնածու
Imelkonyan13@gmail.com

ԳԵՎՈՐԳ ԾԱՌՈՒԿՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
«Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն
ավագ լաբորանտ
ts.gevorg@gmail.com

ՎԱՀԵ ՂՈՉԻԿՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
«Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն
լաբորատորիայի վարիչ
կենսաբանական գիտությունների թեկնածու
vahe-ghochikyan@yandex.ru

ՍՈՒՍԱՆՆԱ ՔԵԼԵՇՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
«Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն
ավագ գիտաշխատող
կենսաբանական գիտությունների թեկնածու
susannaqeleshyan@mail.ru

ԺԱՆԵՏԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
«Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն
գիտաշխատող
zhankarapet@gmail.com

ԱՆՆԱ ԹՈՓԼԱՂԱԼՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
«Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն
կրտսեր գիտաշխատող
anna.toplaghaltsyan@gmail.com

Համառոտագիր

Ամինաթթուները կենսաբանորեն ակտիվ օրգանական միացություններ են, որոնց արտադրությունը հանդիսանում է կենսատեխնոլոգիայի առաջնային ճյուղերից մեկը: Դրանք լայն կիրառություն են գտել բժշկության, դեղագործության, գյուղատնտեսության, սննդարդյունաբերության և ժողովրդական տնտեսության այլ բնագավառներում:


Ամինաթթուները հիմք են հանդիսանում սպիտակուցների կազմավորման համար և կարևոր դեր են կատարում օրգանիզմում ընթացող գործառույթներում: Ի տարբերություն փոխարինելի ամինաթթուների՝ անփոխարինելի ամինաթթուները չեն սինթեզվում օրգանիզմում և լրացվում են սննդի միջոցով:

Դրանց ստացման տեխնոլոգիաների նկատմամբ հետաքրքրությունը պայմանավորված է օրգանիզմում և օրգանիզմ ներմուծվող սննդում սպիտակուցների պակասով, ինչը կարող է հանգեցնել տարբեր բացասական երևույթների:

Ներկայումս ամինաթթուների ստացման արտադրական եղանակները հիմնված են կենսատեխնոլոգիական (մանրէաբանական սինթեզ, կենսատրանսֆորմացիա, խառը քիմիաէնզիմատիկ սինթեզ) և քիմիական (սովորական քիմիական սինթեզ, ասիմետրիկ սինթեզ) մեթոդների վրա, որոնցից այսօր առավել շահավետ մեթոդ է ամինաթթուների մանրէաբանական սինթեզը: Վերջինիս դեպքում գլխավոր դեր են կատարում շտամ-արտադրիչները, որոնք ստացվում են մանրէական տարբեր ցեղերին պատկանող վայրի տեսակի շտամներից:

Այս աշխատանքի շրջանակներում, խնդիր է դրվել *Brevibacterium flavum* ATCC 14067 վայրի տեսակի շտամի հիման վրա ստանալ L-տրիպտոֆան սինթեզող շտամ-արտադրիչներ և ուսումնասիրել դրանց տրիպտոֆան սինթեզելու ակտիվությունը:

Հետազոտության ընթացքում, ի սկզբանե, որոշվել է *Br. flavum* ATCC 14067 վայրի տեսակի շտամի աճը ճնշող L-տրիպտոֆանի նմանակների՝ p-ֆտորֆենիլալանինի և m-ֆտորֆենիլալանինի նվազագույն կոնցենտրացիան: Քիմիական մուտագենեզի եղանակով, գենետիկայի և սելեկցիայի ճանապարհով վերը նշված վայրի շտամի հիման վրա ստացվել են p-ֆտորֆենիլալանինի և m-ֆտորֆենիլալանինի նկատմամբ կայուն մուտանտներ:



L-տրիպտոֆանի շտամ-արտադրիչների ստացման սխեման

Հաջորդիվ, մանրէաբանական եղանակով՝ կիրառելով մեր կողմից նախապես ստացված trp՝ թեստ-կուլտուրան, ընտրվել են առավել քանակով L-տրիպտոֆան սինթեզող մուտանտները, որոնց ակտիվությունը գնահատվել է խորքային ֆերմենտացիայի պայմաններում: Արդյունքում ընտրվել են առավել ակտիվ *Br. flavum* 21 (p-FP-r) և *Br. flavum* 4, *Br. flavum* 8, *Br. flavum* 18, *Br. flavum* 59 (m-FP-r) շտամները, նկարագրվել են նաև դրանց մորֆոֆիզիոլոգիական և կուլտուրալ առանձնահատկությունները:

Բանալի բառեր և բառակապակցություններ. արոմատիկ ամինաթթուներ, L-տրիպտոֆան, մուտագենեզ, *Brevibacterium flavum*, շտամ-արտադրիչներ, ֆերմենտացիա:

ГЕНЕТИКО-СЕЛЕКЦИОННЫЕ ПОДХОДЫ ПОЛУЧЕНИЯ ШТАММА-ПРОДУЦЕНТА L-ТРИПТОФАНА НА ОСНОВЕ *BREVIBACTERIUM FLAVUM*

ГАЯНЭ АВЕТИСОВА

Национальная академия наук Республики Армения
Научно-производственный центр "Армбиотехнология"
ведущий научный сотрудник
кандидат биологических наук
gavetisova@yahoo.com

ЛУСИНЭ МЕЛКОНЯН

Национальная академия наук Республики Армения
Научно-производственный центр "Армбиотехнология"
старший научный сотрудник
кандидат биологических наук
lmeikonyan13@gmail.com

ГЕВОРГ ЦАРУКЯН

Национальная академия наук Республики Армения
Научно-производственный центр "Армбиотехнология"
лаборант
ts.gevorg@gmail.com

ВАГЕ КОЧИКЯН

Национальная академия наук Республики Армения
Научно-производственный центр "Армбиотехнология"
заведующий лабораторией
кандидат биологических наук
vahe-ghochikyan@yandex.ru

СУСАННА КЕЛЕШЯН

Национальная академия наук Республики Армения
Научно-производственный центр "Армбиотехнология"
старший научный сотрудник
susannaqeleshyan@mail.ru

ЖАНЕТА КАРАПЕТЯН

Национальная академия наук Республики Армения
Научно-производственный центр "Армбиотехнология"
научный сотрудник
zhankarapet@gmail.com

АННА ТОПЛАКАЛЦЯН

Национальная академия наук Республики Армения
Научно-производственный центр "Армбиотехнология"
младший научный сотрудник
anna.toplaghaltsyan@gmail.com

Аннотация

Аминокислоты представляют собой биологически активные органические соединения, получение которых является одним из основных направлений биотехнологии. Они широко используются в медицине, фармации, сельском хозяйстве, пищевой промышленности и других областях народного хозяйства.

Аминокислоты являются основой для образования белков и играют важную роль в функционировании организма. В отличие от заменимых аминокислот, незаменимые аминокислоты не синтезируются в организме, а поступают с пищей.

Интерес к технологиям получения аминокислот обусловлен недостатком в организме и поступаемых с пищей белков, что может приводить к различным негативным явлениям.

В настоящее время способы получения аминокислот основаны на биотехнологических (микробиологический синтез, биотрансформация, смешанный химико-ферментативный синтез) и химических (обычный химический синтез, асимметрический синтез) методах, из которых наиболее выгодным на сегодняшний день является микробиологический синтез аминокислот. При этом способе основную роль играют штаммы-продуценты, которые получают из штаммов дикого типа, принадлежащих к различным родам бактерий.

В рамках данной работы была поставлена задача получения L-триптофансинтезирующих штаммов-продуцентов на основе штамма дикого типа *Brevibacterium flavum* ATCC 14067 и изучить их триптофансинтезирующую активность.

В ходе исследований первоначально была определена минимальная концентрация аналогов L-триптофана p-фторфенилаланина и m-фторфенилаланина, подавляющая рост штамма дикого типа *Brevibacterium flavum* ATCC 14067. Методом химического мутагенеза, генетико-селекционным путем, на основе выше указанного дикого штамма получены мутанты, устойчивые к p-фторфенилаланину и m-фторфенилаланину.




Схема получения штаммов-продуцентов L-триптофана

На следующем этапе микробиологическим способом, с применением заранее полученной нами тест-культуры trp⁻, отобраны мутанты, синтезирующие наибольшее количество L-триптофана, активность которых оценена в условиях глубоинной ферментации. В результате отобраны наиболее активные *Br. flavum* 21 (p-FP-r) и *Br. flavum* 4, *Br. flavum* 8, *Br. flavum* 18, *Br. flavum* 59 (m-FP-r) штаммы, также описаны их морфофизиологические и культуральные свойства.

Ключевые слова и словосочетания: ароматические аминокислоты, L-триптофан, мутагенез, *Brevibacterium flavum*, штаммы-продуценты, ферментация.

**GENETICS AND SELECTION APPROACHES FOR DERIVING
L-TRYPTOPHAN-PRODUCING STRAIN BASED
ON BREVI BACTERIUM FLAVUM**

GAYANE AVETISOVA

National Academy of Sciences of the Republic of Armenia
"Armbiotechnology" Scientific and Production Center
Leading Researcher
PhD in Biological Sciences
gavetisova@yahoo.com

LUSINE MELKONYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
"Armbiotechnology" Scientific and Production Center
Senior Researcher
PhD in Biological Sciences
lmelkonyan13@gmail.com

GEVORG TSARUKYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
"Armbiotechnology" Scientific and Production Center
Laboratory Assistant
ts.gevorg@gmail.com

VAHE GHOCHIKYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
"Armbiotechnology" Scientific and Production Center
Head of Laboratory
PhD in Biological Sciences
vahe-ghochikyan@yandex.ru

SUSANNA KELESHYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
"Armbiotechnology" Scientific and Production Center
Senior Researcher
PhD in Biological Sciences
susannaqeleshyan@mail.ru

ZHANETA KARAPETYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
"Armbiotechnology" Scientific and Production Center
Researcher
zhankarapet@gmail.com

ANNA TOPLAGHALTSYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
"Armbiotechnology" Scientific and Production Center
Junior Researcher
anna.toplaghaltsyan@gmail.com

Abstract


Amino acids are biologically active organic compounds, which production is one of the primary directions of biotechnology. They are widely used in medicine, pharmacy, agriculture, the food industry, and other fields of the national economy.

Amino acids are the building blocks for proteins and play an important role in body functions. Contrary to nonessential amino acids, the essential amino acids are not synthesized in the body and must be provided through diet.

The interest in amino acids production technologies is due to the deficiency of proteins in the body and diet since it can give rise to various negative effects.

Currently, industrial production processes of amino acids are based on biotechnological (microbial synthesis, biotransformation, mixed chemoenzymatic synthesis) and chemical (conventional chemical synthesis, asymmetric synthesis) methods. The microbial synthesis is the most profitable way for the large-scale production of amino acids. The strain-producers have the main role in this synthesis, which are derived from wild-type strains belonging to various bacterial genera.

In the framework of this work, the objective was set to derive L-tryptophan-producing strains from wild-type strain *Brevibacterium flavum* ATCC 14067 and study their producing activity. During the first stage the minimum concentration of L-tryptophan analogues p-fluorophenylalanine and m-fluorophenylalanine, inhibiting the growth of wild-type strain *Brevibacterium flavum* ATCC 14067, was determined. The mutants resistant to p-fluorophenylalanine and m-fluorophenylalanine from wild-type strain by chemical mutagenesis, genetics, and selection were derived.



Deriving schema of L-tryptophan-producing strains

At the second stage, the L-tryptophan-producing ability of the active mutants was selected by a microbiological test based on test-strain *trp*⁻, in submerged fermentation was evaluated. The test-strain we derived earlier. As a result, the most active strains *Br. flavum* 21 (p-FP-r) and *Br. flavum* 4, *Br. flavum* 8, *Br. flavum* 18, *Br. flavum* 59 (m-FP-r) were selected. Their morphophysiological and cultural characteristics were also described.

Keywords and phrases: aromatic amino acids, L-tryptophan, mutagenesis, *Brevibacterium flavum*, strain-producers, fermentation.

Ներածություն

Տրիպտոֆանը անփոխարինելի ամինաթթու է: Այն մասնակցում է մի շարք սպիտակուցների և կենսաբանական ակտիվ նյութերի, մասնավորապես՝ վիտամին B₃-ի, սերոտոնինի, մելատոնինի, L-կարնիտինի սինթեզին: Այդ ամինաթթվի կարևորությունն այն է, որ մասնակցում է նաև օրգանիզմում նուկլեինաթթուների և ածխաջրերի նյութափոխանակությանը, արագացնում է մարսողական հյութազատման պրոցեսը: Տրիպտոֆանը կարևոր դեր է կատարում նյարդային համակարգի կարգավորման գործում, հատկապես՝ հանգստի և քնի պրոցեսներում, ուստի օրգանիզմում տրիպտոֆանի պակասը կարող է հանգեցնել սերոտոնինի մակարդակի նվազմանը, ինչը բերում է ընկճախտի, ներոզի, անքնության և հիշողության վաթարացմանը, մարմնի զանգվածի նվազմանը [1, 2]:

Տրիպտոֆանը լայն կիրառություն է ստացել ժամանակակից դեղագործության բնագավառում: Այն արտադրվում է մաքուր ամինաթթվի ձևով՝ որպես կենսաբանորեն ակտիվ հավելում, և տարբեր ամինաթթվային կոմպլեքսների կազմում:

Ըստ 2012 թվականի տվյալների՝ տրիպտոֆանի համաշխարհային տարեկան արտադրությունը կազմել է 7400 տոննա, այդ թվում՝ «Ajinomoto Co. Inc» ընկերությունն արտադրել է 3400 տոննա, «Cheil Jedang» ընկերությունը՝ 2300 տոննա, «Evonik Industries AG» ընկերությունը՝ 1200 տոննա, չինական ընկերությունները («Meihua Holdings», «Shandong Lukang», «Shenghua Biok»)՝ 500 տոննա [3-5]: Ըստ 2014 թվականի տվյալների՝ «Ajinomoto Co. Inc» ընկերությունն ավելացրել է

L-տրիպտոֆանի արտադրական ծավալները՝ հասցնելով այն մինչև 14000 տոննա [4]:

Տրիպտոֆանի արտադրության կարևորագույն եղանակներից մեկը մանրէաբանական սինթեզի եղանակն է: Ուստի գենետիկայի և սելեկցիայի ճանապարհով շտամների ստացումն արդիական խնդիր է:

Աշխատանքում խնդիր է դրվել արտադրական տեսանկյունից առավել նպատակահարմար *Br. flavum* տեսակի մանրէի հիման վրա մշակել L-տրիպտոֆան սինթեզող շտամ-արտադրիչների ստացման մոտեցումները:


Տեսամեթոդական հիմքեր

Տրիպտոֆանը սինթեզվում է անտրանիլատից. վերջինիս կենսասինթեզի միջանկյալ միացություններն են շիկիմատը և խորիզմատը: Անտրանիլատից տրիպտոֆանի սինթեզն իրականանում է չորս դարձելի ռեակցիաների միջոցով: Գեները, որոնք պատասխանատու են այդ ռեակցիաների, ինչպես նաև խորիզմատից անտրանիլատի առաջացման անդարձելի ռեակցիայի համար, կոչվում են *trp* գեներ և միավորված են մեկ տրիպտոֆանային օպերոնում [6]:

Տրիպտոֆանը ստանում են քիմիական, քիմիաէնզիմատիկ և մանրէաբանական սինթեզի եղանակներով:

Քիմիական սինթեզի ժամանակ ինդոլը ամինամեթիլացվում է ֆորմալդեհիդով և դիմեթիլամինով: Ստացված 3-դիմեթիլամինամեթիլ-ինդոլը կոնդենսացնում են նիտրոքացախաթթվի մեթիլային եթերի հետ, ինչի արդյունքում ստացվում է 3-նդոլիլնիտրոպրոպիոնաթթվի մեթիլատ: Այնուհետև, նիտրո- խումբը վերականգնվում է մինչև ամինա- խումբ և եթերի հիմնային հիդրոլիզի արդյունքում ստացվում է DL-տրիպտոֆան, սովորաբար նատրիումական աղի ձևով: Այս եղանակը զիջում է մանրէաբանական եղանակին, քանի որ ստացված տրիպտոֆանում հաճախ հանդիպում են թունավոր նյութերի խառնուրդներ:

Քիմիաէնզիմադիկ սինթեզի ժամանակ օգտագործվում են մանրէներ, այդ թվում՝ *Escherichia coli*, *Bacillus albei*, *Proteus rettgeri*, որոնց մոտ առկա է տրիպտոֆան-ինդոլ-լիազ կամ այլ կերպ կոչվող տրիպտոֆանազ պիրիդօքսալ-կախյալ ֆերմենտը: Այդ ֆերմենտի ֆունկցիան հետևյալ հավասարակշռությունը պահպանելու մեջ է՝




Դրա շնորհիվ տրիպտոֆանը կարող է ստացվել ինդոլի պիրոխաղողաթթվի և ամիակի էնզիմատիկ կոնդենսացման միջոցով: Նշված բակտերիաների մոտ տրիպտոֆանի ավելացումը ռեակցիայի միջավայրին նպաստում է ֆերմենտի մակաձմանը, իսկ ինդոլի ավելացումը՝ արգելակում է ֆերմենտի սինթեզը: Այդ պատճառով տրիպտոֆանի ստացման պրոցեսն իրականացվում է ամիակի և պիրուվատի ավելցուկի պայմաններում: Այս եղանակը հումքի և ֆերմենտատիվ պրեպարատների գնային առումով զիջում է մանրէաբանական եղանակին:

Մանրէաբանական սինթեզով ամինաթթուների ստացումը հիմնված է ակտիվ շտամ-արտադրիչների ընտրության և դրանց կիրառմամբ կենսասինթեզի տեխնոլոգիաների մշակման վրա: Ամինաթթուների մանրէաբանական արտադրությունը պայմանականորեն կարելի է ստորաբաժանել երեք հիմնական փուլերի՝ ամինաթթվի ակտիվ շտամ-արտադրիչի ստացում, կենսասինթեզ և կուլտուրալ հեղուկից նպատակային ամինաթթվի անջատում և մաքրում [7]:

Ամինաթթուները ընդունակ են արտադրել միայն կենսասինթեզի կարգավորման մեխանիզմի գենետիկական փոփոխություններ կրած միկրոօրգանիզմների մուտանտ շտամները: Այդպիսի շտամներ ստանալու համար օգտագործում են գենետիկայի և սելեկցիայի բազմաթիվ մեթոդներ, որոնք հանգեցնում են նպատակային ամինաթթվի կենսասինթեզի ապակարգավորմանը և, որպես հետևանք, նպատակային ամինաթթվի գերարտադրությանը [7]:

Մանրէաբանական եղանակով L-տրիպտոֆանն առաջանում է ճյուղավորված մետաբոլիկ ուղու ընթացքում: Ֆենիլալանին և թիրոզին արոմատիկ ամինաթթուների հետ մեկտեղ տրիպտոֆանը միկրոօրգանիզմների մոտ առաջանում է ածխաջրային փոխանակության մետաբոլիտներից՝ էրիտրոզո-4-ֆոսֆատից և ֆոսֆոէնոլպիրուվատից: Պրոցեսն ընթանում է շրկիմային և խորիզմային թթուների առաջացմամբ: Տրիպտոֆանի մետաբոլիկ նախանյութը հանդիսանում է անտրանիլաթթուն, որն առաջանում է խորիզմաթթվից անտրանիլատսինթետազ ֆերմենտի մասնակցությամբ (նկ. 1):



Նկար 1. Տրիպտոֆանի սինթեզի ուղին *Brevibacterium flavum* մանրէի մոտ:

- aro* –
- aroll* – 3-դիօքսի-D-արաբինո-հեպտուլոզային թթու-7-ֆոսֆորապոսինթեզազներ
- trpE* – անտրանիլապոսինթեզազ I
- trpG* – անտրանիլապոսինթեզազ II
- trpA* – տրիպտոֆանսինթեզազ α
- trpB* – տրիպտոֆանսինթեզազ β
- trpD* – անտրանիլապոսինթեզազի տրանսֆերազ

Առկա մանրէաբանական եղանակներից ավելի արդյունավետ է համարվում տրիպտոֆանի սինթեզն այն միկրոօրգանիզմների աճեցման եղանակով, որոնք ունակ են ածխածնի, ազոտի աղբյուրներից ուղիղ ֆերմենտացիայի միջոցով սինթեզել տրիպտոֆան՝ սննդամիջավայրում առանց տրիպտոֆանի նախանյութերի (ինդոլ, անտրանիլաթթու) ավելացման:

Տրիպտոֆան սինթեզող շտամները ստացվում են դասական մուտագենեզի եղանակով և/ կամ ռեկոմբինանտ ԴՆԹ-ի տեխնոլոգիայով: Նշված շտամ-արտադրիչները հիմնականում դասակարգվում են երեք խմբերի՝

1. աուքսոտրոֆ մուտանտներ, օրինակ՝ ֆենիլալանինի և/կամ թիրոզինի նկատմամբ աուքսոտրոֆ մուտանտներ,
2. արոմատիկ ամինաթթուների նմանակների նկատմամբ կայուն (կարգավորվող) մուտանտներ,
3. գենետիկորեն ձևափոխված շտամներ, որոնք ստացվում են գեների կլոնացման արդյունքում:

Գրականության մեջ նկարագրված տրիպտոֆան սինթեզող շտամների համեմատական բնութագիրը ներկայացված է աղյուսակ 1-ում:

Տրիպտոֆան սինթեզող շտամների համեմատական բնութագիրը:

Ստացման եղանակ	Շտամ	Գենոտիպ	Աճեցման պայմաններ	Տրիպտոֆանի ելք, գ/լ
Սելեկցիայի ճանապարհով ստացված շտամ	<i>C.glutamicum</i> Ax-115-97	<i>Phe^r, Tyr^r, 5MT^r, TrpHx^r, 6FT^r, 4MT^r, PAP^r, PFP^r, TyrHx^r, PheHx^r</i>	10% կերամաթ (ըստ գլյուկոզի) 30°C, 96 ժամ	12,0
	<i>C.glutamicum</i> BPS-13	<i>6FT^r, 4MT^r, PAP^r, PFP^r, TyrHx^r, PheHx^r, 3BP, (PPC^L)</i>	6% գլյուկոզ, 30°C, 72 ժամ	7,8
	<i>C.glutamicum</i> KY9229	վնասված է արոմատիկ ամինաթթուների տրանսպորտային համակարգը	25% կերամաթ (ըստ գլյուկոզի) 30°C, 72 ժամ	35,0
	<i>Br. flavum</i> S-225	<i>Tyr^r, Met^r, PFP^r, 5FT^r, AS, SG</i>	13% գլյուկոզ, 30°C, 72 ժամ	19,0
Ռեկոմբինատ շտամ	<i>C.glutamicum</i> KY10894/pKW99	<i>կլոնացվել են aro II և trp օպերոնները</i>	22% սախարոզ 30°C, 78 ժամ	43,0
	<i>C.glutamicum</i> KY9218/pKW9901	<i>կլոնացվել են aro II, trp օպերոնները, serA գենը</i>	25% սախարոզ 30°C, 80 ժամ	50,0
	<i>C.glutamicum</i> KY9218/pIK9960	<i>կլոնացվել են aro II, trp օպերոնները, serA, tkt գենները</i>	25% սախարոզ 30°C, 80 ժամ	58,0
	<i>Br. lactofermentum</i> M247/pAJ319102	<i>ձևափոխված է trp օպերոնը tac պրոմոթորում</i>	13% գլյուկոզ, 30,5°C, 72 ժամ	7,5

- - աուքստրոֆ, ^r - կայուն, *Phe* - ֆենիլալանին, *Tyr* - թիրոզին, *Met* - մեթիոնին, *5MT* - 5-մեթիլտրիպտոֆան, *TrpHx* - տրիպտոֆանի հիդրոքսամաթ, *6FT* - 6-ֆորտրիպտոֆան, *4MT* - 4-մեթիլտրիպտոֆան, *PAP* - պարամինոֆենիլալանին, *PFP* - պարաֆորֆենիլալանին, *TyrHx* - թիրոզինի հիդրոքսամաթ, *PheHx* - ֆենիլալանինի հիդրոքսամաթ, *3BP* - 3-բրոմոպիրուվաթ, *PPC* - ֆոսֆոնոլպիրուվաթ կարբոքսիլաթ, *AS* - ազասերին, *SG* - սուլֆազուանիդին:

Վերջին տարիներին չինացի գիտնականների կողմից գենային ինժեներիայի եղանակով *E.coli* մանրէի հիման վրա ստացվել է 2 շտամ, որոնք 40 ժամվա ընթացքում սինթեզել են 37,9 գ/լ և 40,2 գ/լ L-տրիպտոֆան: Նույն տեսակի մոտ ստացվել է մեկ այլ ռեկոմբինատ շտամ-արտադրիչ, որը գլյուկոզի բարձր պարունակության պայմանում սինթեզել է մինչև 38,8 գ/լ L-տրիպտոֆան [8, 9]:

Այսպիսով՝ ամփոփելով գրական տվյալները կարելի է եզրակացնել, որ թվարկված եղանակներից յուրաքանչյուրն ունի իր առավելությունները և թերությունները: Յուրաքանչյուր մեթոդը գնահատվում է սինթեզի և տրիպտոֆանի հետագա մաքրման աշխատանքների գումարային արդյունավետությամբ: Հաշվի առնելով վերջնանյութի կիրառման բնագավառը

(բժշկություն, գյուղատնտեսություն և այլն), տրիպտոֆանի մաքրության աստիճանից ելնելով, նախընտրելի է մանրէաբանական եղանակը, որի դեպքում օգտագործվում են էժան ելանյութեր:

Ուսումնասիրության մեթոդներ

Աշխատանքում որպես ծնողական մանրէ օգտագործվել է *Br. flavum* ATCC 14067 (BKՄ B-42) վայրի տեսակի շտամը, որը բնականից աուքսոտրոֆ է բիոտինի (bio⁻) և թիամինի (thi⁻) նկատմամբ:

Շտամների մորֆոլոգիական առանձնահատկություններն ուսումնասիրվել են «Leica DM500 trinocular» (×1000) մանրադիտակի և «Digital Camera EC3 Leica Microsystem» (×10) ծրագրային ապահովման միջոցով:

Որպես լիարժեք միջավայր օգտագործվել են մսապեպտոնային արգանակը և մսապեպտոնային ազարը (ՄՊԱ):

Որպես մինիմալ սինթետիկ միջավայր օգտագործվել է հետևյալ բաղադրությամբ Գլովերի միջավայրը՝ գլյուկոզ – 1,0%, NH₄Cl – 0,5%, NH₄NO₃ – 0,1%, Na₂SO₄ – 0,2%, K₂HPO₄ – 0,3%, MgSO₄ × 7H₂O – 0,025%, KH₂PO₄ – 0,1%, մանրէաբանական ազար – 1,5%: Միջավայրին ավելացվել են միկրոհավելանյութեր՝ FeSO₄ × 7H₂O – 0,001%, MnSO₄ × 5H₂O – 0,001%, բիոտին – 200 մկգ/լ, թիամին – 200 մկգ/լ:

Որպես ֆերմենտացիայի միջավայր օգտագործվել է հետևյալ բաղադրությամբ սինթետիկ միջավայրը՝ սախարոզ – 15,0%, (NH₄)₂SO₄ – 5,5%, KH₂PO₄ – 0,1%, MgSO₄ × 7H₂O – 0,1%, CaCO₃ – 5,0%, FeSO₄ × 7H₂O – 0,001%, MnSO₄ × 5H₂O – 0,001%, բիոտին – 200 մկգ/լ, թիամին – 200 մկգ/լ:

L-տրիպտոֆանի նմանակների նկատմամբ կայուն մուտանտները ստացվել են քիմիական մուտագենեզի եղանակով՝ N-մեթիլ-N-նիտրո-N-նիտրոզոգուանիդինի (ՆԳ) միջոցով [10]: Մուտագենից լվացված բջիջներն աճեցվել են մսապեպտոնային արգանակում 1,5-2 ժամ, ապա ցենտրիֆուգվել են և ֆիզիոլոգիական լուծույթում դրանցից պատրաստված կախույթը ցանվել է ամինաթթվի նմանակ պարունակող Գլովերի պինդ միջավայրի վրա: 5-7 օր անց աճած առանձին գաղութները վերացանվել են ՄՊԱ-ի վրա՝ մաքուր կլոններ ստանալու և գենետիկական հատկությունները կրկին ստուգելու նպատակով:

Շտամների L-տրիպտոֆան սինթեզելու ակտիվությունը գնահատվել է խորքային ֆերմենտացիայի պայմաններում: Ֆերմենտացիան իրականացվել է 15 մլ միջավայր պարունակող 500 մլ տարողությամբ էրլենմեյերի կոլբաներում շրջանապտույտ թափահարիչի (*Innova 43 «New Brunswick Scientific»*) 220 պտույտ/րոպե արագության, 30°C ջերմաստիճանի, 96 ժամ տևողության պայմաններում:

Որպես ցանքանյութ օգտագործվել է շեղակում ՄՊԱ-ի մակերեսին 20-24 ժամվա ընթացքում աճած կուլտուրայից ֆիզիոլոգիական լուծույթում ստացված բջջային կախույթը: Ֆերմենտացիայի միջավայրին ավելացված ցանքանյութի քանակը կազմել է դրա ծավալի 5-7% - ը:

Ֆերմենտացիայից հետո L-տրիպտոֆանի քանակը կուլտուրալ հեղուկում (ԿՀ) որոշվել է նրբաշերտ քրոմատոգրաֆիայի եղանակով «Silufol» թիթեղներով՝ ամոնիակ : իզոպրոպիլ սպիրտ : ացետոն : ջուր (2:4:4:1) լուծիչի համակարգում և թղթային քրոմատոգրաֆիայի եղանակով՝ բութանոլ : քացախաթթու : ջուր (4:1:5) Պարտրիջի համակարգում: Ամինաթթվի քանակությունը որոշվել է ԿՖԿ-2 ֆոտոէլեկտրոկոլորիմետրի միջոցով ($\lambda=490$ նմ)՝ նախապես նինհիդրինի լուծույթով (նինհիդրին՝ 0,5գ, ացետոն՝ 95 մլ, քացախաթթու՝ 1 մլ, թորած ջուր՝ 4 մլ) դրանք երևակելուց և էթանոլ : ջուր և CdCl₂ համակարգում էլյուցիայի ենթարկելուց հետո [11]:

Արդյունքները և դրանց քննարկումը

Հայտնի է, որ ամինաթթուների կենսասինթեզը կարգավորվում է ինչպես գեների, այնպես էլ ֆերմենտների մակարդակով:

Առաջին հերթին դա վերջնական արգասիքով սինթեզի ընդհանուր ուղու առաջին փուլը կատալիզող ֆերմենտի արգելակման վերացումն է: Այս խնդիրը լուծվում է հիմնականում նպատակային ամինաթթվի կառուցվածքային նմանակի նկատմամբ կայուն մուտանտներ ստանալու ճանապարհով:

Կառուցվածքային նմանակի նկատմամբ կայուն մուտանտների մոտ նպատակային ամինաթթվի կենսասինթեզի ապակարգավորումը, այսինքն՝ վերջնանյութով սինթեզի ուղու առաջին ֆերմենտի ակտիվության արգելակման վերացումը, հանգեցնում է նպատակային ամինաթթվի գերսինթեզին:

Ինչպես հայտնի է, երբ նմանակն ավելացվում է սինթետիկ միջավայրին, որի վրա աճում է շտամը, ստեղծվում է տվյալ ամինաթթվի ավելցուկի պատկեր և ամինաթթվի սինթեզը դադարում է: Այդ պայմաններում աճել և բազմանալ կարող են միայն այն մուտանտները, որոնց մոտ խախտված է նպատակային ամինաթթվի կենսասինթեզի կարգավորումը: Այդպիսի մուտանտների մոտ նմանակի նկատմամբ կայունությունը կարող է պայմանավորված լինել, մասնավորապես, ֆերմենտների սինթեզի ռեպրեսիայի մեխանիզմի խախտմամբ կամ առանցքային ֆերմենտների ռետրոարգելակման նկատմամբ զգայունության կորստով [12, 13]:

Հաշվի առնելով, որ տրիպտոֆանի սինթեզը կապված է նաև երկու այլ արոմատիկ ամինաթթուների սինթեզի հետ, և որոշ ֆերմենտներ միաժամանակ մասնակցում են երեք ամինաթթուների սինթեզին, ուստի տրիպտոֆանի շտամ-արտադրիչներ ստանալու նպատակով կիրառվում են այդ երեք ամինաթթուների կառուցվածքային նմանակները:

Աշխատանքում L-տրիպտոֆանի շտամ-արտադրիչներ ստանալու նպատակով փորձ է արվել ստանալու ֆենիլալանինի նմանակների՝ p-ֆտորֆենիլալանինի և m-ֆտորֆենիլալանինի նկատմամբ կայուն մուտանտներ: Նախնառաջ՝ քիմիական մուտագենեզի ճանապարհով *Br. flavum* ATCC 14067 շտամի հիման վրա մեր կողմից ստացվել է տրիպտոֆանի նկատմամբ աուքսոտրոֆ *Br. flavum* 8₅ (trp⁻) շտամը, որը հետագա սելեկցիայի աշխատանքներում օգտագործվել է որպես թեստ-կուլտուրա:

Վերը նշված նմանակների նկատմամբ կայուն մուտանտներ ստանալու նպատակով նախապես որոշվել են *Br. flavum* ATCC 14067 շտամի աճն արգելակող p-ֆտորֆենիլալանինի և m-ֆտորֆենիլալանինի նվազագույն կոնցենտրացիաները (աղ. 2):

Աղյուսակ 2.

**p-Ֆտորֆենիլալանինի և m-Ֆտորֆենիլալանինի ազդեցությունը
Br. flavum ATCC 14067 շտամի աճի վրա:**

Շտամ	Գլյուկոզի սինթետիկ միջավայր						
	Ստուգիչ	p-ֆտորֆենիլալանին, մգ/մլ			m-ֆտորֆենիլալանին, մգ/մլ		
		1	2	5	1	2	5
<i>Br. flavum</i> ATCC 14067	+	±	±	-	±	±	-


(+) շտամի աճի առկայություն, (-) բացակայություն, (±) հետքային աճ

Հիմնվելով աղյուսակ 2-ում ներկայացված տվյալների վրա՝ երկու նմանակների դեպքում էլ ընտրվել է 5 մգ/մլ արգելակող կոնցենտրացիան, որը հետագայում կիրառվել է *Br. flavum* ATCC 14067 վայրի տեսակի շտամի մոտ մուտանտների ստացման համար:

Մուտագենեզից հետո աճեցված *Br. flavum* ATCC 14067 կուլտուրան ցանվել է 5 մգ/մլ ր-ֆտորֆենիլալանին պարունակող մինիմալ միջավայրի մակերեսին: Փորձերի արդյունքում առանձնացվել են 23 ՆԳ ինդուկցված կայուն մուտանտներ:


Նույն եղանակով մուտագենեզից հետո աճեցված *Br. flavum* ATCC 14067 կուլտուրան ցանվել է նաև Պետրիի թասիկներում 5 մգ/մլ m-ֆտորֆենիլալանին պարունակող սինթետիկ սննդամիջավայրի մակերեսին: 30°C ջերմաստիճանային պայմանում 48 ժամ աճեցնելուց հետո առանձնացվել են m-ֆտորֆենիլալանինի նկատմամբ 17 կայուն մուտանտներ:

Տրիպտոֆան սինթեզելու հատկությունը նախնական որոշվել է մանրէաբանական թեստի եղանակով՝ ընտրելով թեստ-կուլտուրա «կերակրող» լավագույն շտամներ (նկ. 2):




Նկար 2. Տրիպտոֆանի սինթեզի գնահատումը թեստ-կուլտուրայի կիրառմամբ:
(տր Թեստ-կուլտուրա պարունակող Գլովերի միջավայր)

Երկրորդ փուլում տրիպտոֆան սինթեզելու ակտիվությունը որոշվել է խորքային ֆերմենտացիայի եղանակով՝ 15% սախարոզ պարունակող սինթետիկ միջավայրում: Ստացված արդյունքների հիման վրա եզրակացվել է, որ *Br. flavum* ATCC 14067 վայրի տեսակի շտամի մոտ ր-ֆտորֆենիլալանինի նկատմամբ կայունության մուտացիան հանգեցնում է հետքային քանակով L-տրիպտոֆանի սինթեզին: Սելեկցիայի այս փուլում ընտրվել է տրիպտոֆան սինթեզող *Br. flavum* 21 (ր-FP-r) շտամը, որը 30°C ջերմաստիճանային պայմանում 48 ժամ աճեցնելուց հետո ՄՊԱ-ի մակերեսին (рН 7,5-7,8) առաջացնում է կլոր, 2-3 մմ տրամագծով, ուռուցիկ, հարթ մակերեսով դեղնավուն գաղութներ: Շտամը գրամդրական է, բջիջներն անշարժ, ոչ սպորավոր, օվալաձև, միջինը՝ 0,5×0,3 մկմ չափերով (նկ. 3):




Br. flavum ATCC 14067



Br. flavum 21

Նկար 3. *Br. flavum* վայրի տեսակի շտամի և L-տրիպտոֆան սինթեզող շտամ-արտադրիչի բջիջների մանրադիտակային պատկերը (×10 000, 1 պիկսելը (px) = 264,58 մկմ):

Ինչ վերաբերում է *Br. flavum* ATCC 14067 շտամի մոտ առանձնացված m-ֆտորֆենիլալանինի նկատմամբ կայուն մուտանտների, ապա դրանց սինթետիկ ակտիվության որոշումը նույնպես իրականացվել է երկու փուլով՝ մանրէաբանական թեստի եղանակով՝ թեստ-կուլտուրայի միջոցով և խորքային ֆերմենտացիայի եղանակով: Արդյունքում, ընտրվել է թեստ-կուլտուրա «կերակրող» 4 շտամ (նկ. 4):



Նկար 4. m-Ֆտորֆենիլալանինի նկատմամբ կայուն մուտանտների տրիպտոֆանի սինթեզի գնահատումը թեստ-կուլտուրայի կիրառմամբ: (trp⁻ թեստ-կուլտուրա պարունակող Գլուկերի միջավայր)

Երկրորդ փուլում տրիպտոֆան սինթեզելու ակտիվությունը գնահատելու նպատակով օպտիմալացվել են ընտրված շտամների կուլտիվացման համար նախատեսված ցանքսամիջավայրը, ֆերմենտացիայի միջավայրը, ինչպես նաև՝ կուլտիվացման պայմանները:

Արդյունքում, խորքային ֆերմենտացիայի եղանակով՝ 15% սախարոզ և 5,5% (NH₄)₂SO₄ պարունակող սինթետիկ միջավայրում, կուլքաներում, լաբորատոր թափահարիչի 250 պտույտ/րոպե արագության, 30°C ջերմաստիճանի, 96 ժամ տևողության պայմաններում չորս հետազոտվող շտամների դեպքում էլ սինթեզվել է մինչև 4 գ/լ L-տրիպտոֆան:

Ստացված տվյալների հիման վրա եզրակացվել է, որ *Br. flavum* ATCC 14067 վայրի տեսակի շտամի մոտ m-ֆտորֆենիլալանինի նկատմամբ կայունության մուտացիան հանգեցնում է որոշակի քանակով L-տրիպտոֆանի ելքի բարձրացմանը:

Այսպիսով՝ սելեկցիայի այս փուլում մեզ հաջողվել է *Br. flavum* ATCC 14067 շտամի հիման վրա ստանալ p-ֆտորֆենիլալանինի նկատմամբ կայուն *Br. flavum* 21 (p-FP-r) շտամը և m-ֆտորֆենիլալանինի նկատմամբ կայուն տրիպտոֆան սինթեզող *Br. flavum* 4, *Br. flavum* 8, *Br. flavum* 18 և *Br. flavum* 59 (m-FP-r) շտամները, որոնք կարող են կիրառվել L-տրիպտոֆան գերսինթեզող շտամների ստացման հետագա աշխատանքներում:

Աշխատանքի ընթանրացված արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ ֆենիլալանինի վերը նշված նմանակները, չնայած նպատակային ամինաթթվի ցածր ելքի, կարելի է կիրառել մանրէների սելեկցիայում՝ L-տրիպտոֆանի շտամ-արտադրիչներ ստանալու նպատակով:

Գրականության ցանկ

1. Hogenelst K., Schoevers R.A., Kema I.P., Sweep F.C.G.J., Rot M.A.H. Empathic accuracy and oxytocin after tryptophan depletion in adults at risk for depression. *Psychopharmacology*. 2016; 233(1):111-120. doi: 10.1007/s00213-015-4093-9.
2. Kohyama J. Neural Basis of Brain Dysfunction Produced by Early Sleep Problems. *Brain Sci*. 2016; 6(1). doi: 10.3390/brainsci6010005.
3. Evonik expands its L-Tryptophan capacity, 2011. Available at: <http://corporate.evonik.com/en/media-/search/pages/news-details.aspx?newsid=19022>.
4. Ajinomoto Co. Inc: FY2013 Market and Other Information, 2015. Available at: https://www.ajinomoto.com/en/ir/pdf/FY15Q2_Data_E.pdf.
5. Ajinomoto to begin tryptophan production in North America, 2016. Available at: <http://www.efeedlink.com/contents/02-04-2016/a905d716-2a1c-42aa-82594addf5d829cb-d182.html>.
6. Palego L., Betti L., Rossi A., Giannaccini G. Tryptophan Biochemistry: Structural, Nutritional, Metabolic, and Medical Aspects in Humans. *J. Amino Acids*. 2016, doi: 10.1155/2016/8952520.
7. Սաղյան Ա.Ա. Կենսատեխնոլոգիա, Երևան, ԵՊՀ հրատ.; 2013. 412 էջ:
8. Shen T., Liu Q., Xie X., Xu Q. Chen N. Improved Production of Tryptophan in Genetically Engineered *Escherichia coli* with *TktA* and *PpsA* Overexpression, *Journal of Biomedicine and Biotechnology*. 2012; doi:10.1155/2012/605219.
9. Cheng L-K., Wang J., Xu Q-Y., Xie X-X, Zhang Y-J., Zhao C-G., Chen N. Effect of feeding strategy on L-tryptophan production by recombinant *Escherichia coli*. *Ann. Microbiol*. 2012; 62: 1625-1634. doi: 10.1007/s13213-012-0419-6.
10. Миллер Дж. Эксперименты в молекулярной генетике. Москва, Мир, 1976. 103-172.
11. Микеш О. Лабораторное руководство по хроматографическим и смежным методам, Москва, Мир, 1982. 400 с.
12. Սաղյան Ա.Ա. Ամինաթթուների, պեպտիդների և սպիտակուցների քիմիա. Երևան, ԵՊՀ հրատ., 2015, 476 էջ:
13. Егорова Т.А., Клунова С.М., Живухина Е.А. Основы биотехнологии, 3-е изд., Москва, Академия, 2006. 208 с.

**ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ՀՈԳԱԾՈՒԹՅԱՆ ՍՏԱՆԴԱՐՏ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐԻ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՂԱՏԱՆ
ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ**

ԼՈՒՍԻՆԵ ՆԱԶԱՐՅԱՆ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան
դեղագործության կառավարման ամբիոն, դասախոս
lusinazaryan@mail.ru

ԱՆՈՒՇ ԲԱՐՍԵԴՅԱՆ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան
դեղագործության կառավարման ամբիոն, դասախոս
anushikbarseghyan@gmail.com

ՄԱՐԹԱ ՍԻՄՈՆՅԱՆ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան
դեղագործության կառավարման ամբիոն
դեղագործական գիտությունների թեկնածու, դոցենտ
marta.simonyan@gmail.com

Համառոտագիր

Համաձայն Առողջապահության համաշխարհային կազմակերպության՝ դեղագետները հանդիսանում են ամենահասանելի առողջապահության մասնագետները, որոնք կարող են բաց թողնել ինչպես դեղատոմսով, այնպես էլ առանց դեղատոմսի տրվող դեղեր (ԱԴՏ): Դեղատան աշխատակիցների տեղեկատվական կարիքների զարգացման ռազմավարությունները, ինչպիսին է դեղագործական հոգաժության ստանդարտ ուղեցույցների մշակումը, կարող է բարելավել նրանց կողմից տրամադրվող դեղագործական խորհրդատվության որակը:

Հետազոտության նպատակն էր ուսումնասիրել դեղագործական հոգաժության ստանդարտ ուղեցույցների անհրաժեշտությունը դեղատան աշխատողների շրջանում:

Հետազոտությունը անց է կացվել կամայական ընտրված մայրաքաղաքի 285 դեղատան աշխատակիցների շրջանում, 2019 թ-ին և 2020 թ-ի առաջին եռամսյակում: Սոցիոլոգիական հետազոտությունը իրականացվել է հարցաթերթիկների օգնությամբ, որի թիվը որոշվել է The Survey System Version 11.0 պահանջների համաձայն: Տվյալների վերլուծման նպատակով օգտագործվել է SPSS ծրագրային փաթեթը:

Այս ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ընդհանուր առմամբ դեղատան աշխատակիցները չեն տրամադրում համապատասխան խորհրդատվություն դեղերի բաց թողնման ժամանակ: Նրանց մեծ մասը ունեն միջին մասնագիտական կրթություն և քիչ աշխատանքային փորձ: Արդյունքներից պարզ է դառնում, որ դեղատան աշխատակիցները յուրաքանչյուր օր բաց են թողնում մեծ քանակությամբ ԱԴՏ դեղեր: Անհանգստության առիթ է հանդիսանում այն փաստը, որ սպառողների մեծ մասը դեղատանը չի ստանում անհրաժեշտ տեղեկատվություն դեղի օգտագործման կարգի և հնարավոր կողմնակի ազդեցությունների մասին: Շատ քիչ թվով դեղատան աշխատակիցներ են օգտվում մասնագիտական գրականությունից և ստանդարտ սխեմաներից, սակայն ցանկություն են հայտնում գործնականում ունենալու դեղագործական հոգաժության ստանդարտ ուղեցույցներ: Դեղատաների աշխատակիցների մեծ մասը կարծում է, որ նման ուղեցույցները կօգնել իրենց՝ արագ կողմնորոշվելու աշխատավայրում և ապահովելու համեմատաբար քիչ պատասխանատվություն:

Ստանդարտ ուղեցույցները կօգնեն դեղատան աշխատակիցներին՝ իրականացնելու և ապահովելու պատշաճ դեղագործական հոգածություն, որն էլ իր հերթին կնպաստի սպառողների կողմից դեղերի ռացիոնալ օգտագործմանը:

Հետազոտության արդյունքները փաստում են, որ դեղագործական խորհրդատվության որակը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է մշակել և կիրառության մեջ դնել դեղագործական հոգածության ստանդարտ ուղեցույցներ ԱԴՏ դեղերին վերաբերող: Հիվանդության պատմությունը հասկանալու, ինչպես նաև սպառնացող ախտանիշներով հիվանդների բացահայտման համար, որոնք կարիք ունեն բժշկի խորհրդատվության, անհրաժեշտ է հիվանդին ուղղել հարցերի լայն շրջանակ:

Բանալի բառեր և բառակապակցություններ. դեղեր, դեղատան աշխատակից, դեղագործական խորհրդատվություն, տեղեկատվական աղբյուր, ուղեցույց, ստանդարտ սխեմա, սպառող, առանց դեղատոմսի տրվող դեղեր:

ИЗУЧЕНИЕ НЕОБХОДИМОСТИ СТАНДАРТИЗАЦИИ ФАРМАЦЕВТИЧЕСКОЙ ОПЕКИ СРЕДИ СОТРУДНИКОВ АПТЕК

ЛУСИНЕ НАЗАРЯН

Ереванский государственный медицинский университет имени Мхитара Гераци
кафедра управления и экономики фармации
преподаватель
lusinazaryan@mail.ru

АНУШ БАРСЕГЯН

Ереванский государственный медицинский университет имени Мхитара Гераци
кафедра управления и экономики фармации
преподаватель
anushikbarseghyan@gmail.com

МАРТА СИМОНЯН

Ереванский государственный медицинский университет имени Мхитара Гераци
кафедра управления и экономики фармации
кандидат фармацевтических наук. доцент
marta.simonyan@gmail.com

Аннотация

По данным Всемирной организации здравоохранения, фармацевты являются наиболее доступными медицинскими работниками, которые могут отпускать как рецептурные, так и безрецептурные лекарства. Стратегии развития информации для сотрудников аптек, такие как разработка стандартных руководств по фармацевтической опеки, могут повысить качество фармацевтических консультаций, предоставляемых сотрудниками аптек.

Цель исследования состояла в том, чтобы изучить потребность в стандартных руководствах по фармацевтической помощи среди аптечных работников.

Опрос проводился среди сотрудников 285 случайно выбранных аптек столицы в 2019 году и в первом триместре 2020 года. Опрос проводился с помощью анкет, количество которых определялось согласно требованиям Системы опроса версии 11.0. Для анализа данных использовался программный пакет SPSS.

Это исследование показало, что работники аптек, как правило, не дают надлежащей консультации при отпуске лекарств. Большинство из них имеют среднее профессиональное образование и небольшой опыт работы.

Результаты показывают, что работники аптек ежедневно отпускают большое количество безрецептурных препаратов. Вызывает беспокойство тот факт, что большинство потребителей не получают от работника аптеки необходимой информации о том, как принимать лекарства, и о возможных побочных эффектах. Очень немногие сотрудники аптек пользуются профессиональной литературой и стандартными схемами, но на практике они хотели бы иметь стандартные руководства по фармацевтической помощи.

Большинство сотрудников аптек считают, что такие инструкции помогут им быстро сориентироваться на рабочем месте и нести относительно небольшую ответственность. Стандартные методические рекомендации помогут работникам аптек внедрить и обеспечить надлежащую фармацевтическую опеку, что, в свою очередь, будет способствовать рациональному использованию лекарственных средств потребителями.

Результаты исследования показывают, что для повышения качества фармацевтического консультирования необходимо разработать и внедрить типовые рекомендации по оказанию фармацевтической опеки в отношении безрецептурных препаратов.

Для понимания анамнеза заболевания, а также для выявления больных с угрожающими симптомами, нуждающихся в врачебной консультации, необходимо задать больному широкий круг вопросов.

Ключевые слова и словосочетания: лекарства, работники аптеки, фармацевтическая консультация, источник информации, руководящие принципы, стандартная схема, потребитель, лекарства, безрецептурные препараты.

THE STUDY OF PHARMACEUTICAL CARE STANDARD GUIDELINES REQUIREMENT AMONG PHARMACY EMPLOYEES

LUSINE NAZARYAN

Yerevan State Medical University after Mkhitar Heratsi
Department of Pharmaceutical Management, Lecturer
lusinazaryan@mail.ru

ANUSH BARSEGHYAN

Yerevan State Medical University after Mkhitar Heratsi
Department of Pharmaceutical Management, Lecturer
anushikbarseghyan@gmail.com

MARTA SIMONYAN

Yerevan State Medical University after Mkhitar Heratsi
Department of Pharmaceutical Management
PhD in Pharmaceutical Sciences, Associate professor
marta.simonyan@gmail.com

Abstract

According to the World Health Organization, pharmacists are the most accessible health professionals who can dispense both prescription and over-the-counter medicines (OTC). Pharmacy employees' information development strategies, such as the development of standard pharmaceutical care guidelines, can improve the quality of pharmaceutical consultation provided by them.

The study aimed to investigate the need for standard pharmaceutical care guidelines among pharmacy employees.

The survey was conducted among the employees of 285 randomly selected pharmacies in the capital, in 2019 and the first trimester of 2020. It was conducted using questionnaires, the number of which was determined according to the requirements of The Survey System Version 11.0. SPSS software package was used for data analysis.

This study showed that pharmacy employees generally do not provide appropriate consultation when dispensing medicines. Most of them have secondary vocational education and little work experience.

The results show that pharmacy employees dispense a large amount of OTC drugs every day. The fact that most consumers do not receive the necessary information from the pharmacy employee about how to take the medicine and possible side effects is a cause for concern. Very few pharmacy employees use the professional literature and standard schemes, but in practice, they want to have standard pharmaceutical care guidelines.

The majority of pharmacy employees believe that such guidelines will help them orient themselves quickly in the workplace and provide relatively little responsibility.

Standard guidelines will help pharmacy employees implement and ensure proper pharmaceutical care, which in turn will facilitate the rational use of medicines by consumers.

The results of the research show that to improve the quality of pharmaceutical consultation, it is necessary to develop and implement standard guidelines for pharmaceutical care regarding OTC drugs.

To understand the history of the disease, as well as to identify patients with threatening symptoms who need medical advice, it is necessary to ask the patient a wide range of questions.

Keywords and phrases: medicines, pharmacy employees, pharmaceutical consultation, information source, guidelines, standard scheme, consumer, Over-the-Counter Drugs.

Ներածություն

Դեղագործական խորհրդատվության դերը կայուն աճում է որակյալ դեղորայքային թերապիայի ապահովման հարցում, հատկապես՝ առանց դեղատոմսի տրվող (ԱԴՏ) դեղերի ռացիոնալ կիրառման դեպքում: Ամբողջ աշխարհում, այդ թվում նաև ՀՀ-ում միտում է նկատվում ԱԴՏ դեղերի քանակի ավելացման, որն իր հերթին նպաստում է դեղագործական հոգածության զարգացմանը՝ որպես ժամանակակից ԱՀ-ի մի մաս: Այս դեպքում դեղագետի առաջնային խնդիրն է՝ տրամադրել խորհրդատվություն դեղերի և դրանց ռացիոնալ կիրառման վերաբերյալ՝ ելնելով հիվանդացության ախտանիշներից և պացիենտի պաթոլոգիական վիճակից, ապահովել պատշաճ և որակյալ դեղագործական հոգածություն յուրաքանչյուր պացիենտի համար [1]: Դեղագետը ԱԴՏ դեղերի բաց թողնման ժամանակ պետք է ապահովի լիարժեք տեղեկատվություն դեղի ազդեցության, կիրառման ձևի, բուժման տևողության, հնարավոր կողմնակի ազդեցությունների, այլ դեղաձևերի և սննդի հետ համատեղելիության մասին, ինչպես նաև՝ ապահովի պացիենտի հետ հետագա մշտադիտարկումը: Նա կարող է հիվանդին տրամադրել տեղեկատվություն տարբեր ախտանիշների դեղորայքային կամ այլընտրանքային բուժման մասին, կարող է զգալի օգնություն ցուցաբերել այնպիսի «սպառնացող» ախտանիշների ճանաչման գործում, որոնք պահանջում են բժշկի հետ անհապաղ խորհրդատվություն: Այնուամենայնիվ, այս գործունեությունը դեղատան աշխատողների համար կարող է սահմանափակվել պայմանավորված մի շարք խոչընդոտող գործոններով, ինչպիսիք են՝ դեղերի մասին տեղեկատվական աղբյուրների անհամապատասխան և ոչ հասանելի լինելը, ինչպես նաև՝ դեղագործական հոգածության ստանդարտ ուղեցույցների բացակայությունը [2,3]:

ՀՀ-ում մշակված և ներդրված չէ դեղագործական խորհրդատվության որևէ ստանդարտացման համակարգ, մասնավորապես՝ առանց դեղատոմսի տրվող (ԱԴՏ) դեղերի խորհրդատվության համար կիրառվող դեղագործական հոգածության ուղեցույցներ այնպիսի իրավիճակների համար, որոնց դեպքում պարտադիր չէ դիմել բժշկի: Այսպիսի ուղեցույցների հիմնական նպատակն է՝ օգնել դեղատան աշխատակցին՝ որոշելու ախտանիշի ծանրության աստիճանը, վերջինիս ինքնուրույն բուժելու հնարավորությունը, ինչպես նաև՝ ընտրելու օպտիմալ դեղ և ռացիոնալ կիրառման պայմաններ յուրաքանչյուր հիվանդի համար: Դա նպաստում է հիվանդության ավելի վաղ ախտորոշմանը, լուրջ հիվանդությունների և ախտաբանական վիճակների բուժմանը, օգնում է ընտանեկան բժիշկներին՝ բարձրացնելու դեղորայքային թերապիայի արդյունավետությունը առանց դեղատոմսի տրվող դեղերով [4]: ԱԴՏ դեղերի բաց թողնման ժամանակ որակյալ դեղագործական խորհրդատվական ծառայության համակարգը կօգնի ոչ միայն դեղատնային կազմակերպությունների առևտրային հետաքրքրությունները ապահովելու հարցում, այլ նաև անվտանգ կդարձնի այդ ծառայությունները [5]:

Դեղագործական խորհրդատվության ստանդարտներ մշակելիս պետք է առաջնորդվել Պատշաճ դեղատնային գործունեության (GPP) պահանջներով, ըստ որի՝ դեղագետի գործունեության անբաժանելի մասն է դեղերի ռացիոնալ և ճիշտ օգտագործմանը, ինչպես նաև դեղերի խնայողաբար նշանակմանը նպաստելը [6]:

Դեղագետների ինտեգրումը հանրային առողջապահական ծրագրերում պետք է դիտարկվի որպես արժեքավոր եղանակ բնակչության առողջության օպտիմալացման համար: Հետևաբար, կարևոր է ավելի լավ հասկանալ հանրային առողջապահական գործունեության մեջ դեղատան աշխատակիցների ավելի մեծ ներգրավվածությանը խոչընդոտող գործոնները:

Հետազոտության նպատակն էր ուսումնասիրել դեղագործական հոգածության ստանդարտ ուղեցույցների անհրաժեշտությունը դեղատան աշխատողների շրջանում: Ստանդարտ ուղեցույցները կօգնեն դեղատան աշխատակիցներին՝ իրականացնելու և ապահովելու պատշաճ դեղագործական հոգածություն, որն էլ իր հերթին կնպաստի սպառողների կողմից դեղերի ռացիոնալ օգտագործմանը:

Նյութը և մեթոդները

Որպես ուսումնասիրության օբյեկտեր են դիտարկվելու սոցիոլոգիական հետազոտության արդյունքները: Սոցիոլոգիական հետազոտությունը իրականացվել է հարցման մեթոդով, հարցաթերթիկների օգնությամբ: Հարցաթերթիկը մշակվել է ԱՀԿ-ի (2006թ.) ստանդարտ հարցաթերթիկների հիման վրա՝ հաշվի առնելով աշխատանքի և հայկական դեղագործական շուկայի առանձնահատկությունները [7]:

Հետազոտությունը հատույթային է (cross-sectional), որը մշակվել է՝ գնահատելու դեղագործական հոգաճության ուղեցույցների անհրաժեշտությունը դեղատան աշխատակիցների շրջանում: Հատույթային մեթոդը պարզ է և ապահովում է հարցվողների իրական վարքագիծը և գործելաճը. այն թույլ է տալիս ընդգրկել պատասխանողների լայն շրջանակ, ինչը ապահովում է տեղեկատվության բարձր հուսալիություն ստանալը: Հատույթային մեթոդը լայնորեն կիրառվում է հանրային առողջության և սոցիալ ֆարմացիայում իրավիճակները և առողջապահական ծրագրերի արդյունավետությունը գնահատելու համար [8,9]:

Հետազոտությունը անց է կացվել կամայական ընտրված մայրաքաղաքի 285 դեղատան աշխատակիցների շրջանում 2019 թ-ին և 2020 թ-ի առաջին եռամսյակում:

Տվյալ հետազոտության անցկացման համար հարցվողների թիվը որոշվել է The Survey System Version 11.0 պահանջների համաձայն՝ հաշվի առնելով հետազոտվող դեղատների թիվը (ըստ ԱՆ տրամադրած տվյալների՝ Երևանում դեղատների ընդհանուր քանակը 1096 դեղատուն), առաջին տիպի սխալի հավանականությունը՝ 5% ($\alpha = 0.05$), գնահատման ճշգրտությունը՝ 3% ($\Delta = 3\%$):


Ուսումնասիրության էթիկական կողմը պահպանելու նպատակով հետազոտության յուրաքանչյուր մասնակցի բացատրվել է հետազոտության նպատակը և մասնակցության կամավորության սկզբունքը: Հայոց լեզվով կազմված հարցաթերթիկները հասանելի ու հասկանալի են եղել բոլոր տարիքային և կրթական մակարդակ ունեցող դեղատան աշխատակիցների համար: Տվյալների վերլուծման նպատակով օգտագործվել է SPSS (տարբերակ 12.0) ծրագրային փաթեթը:

Արդյունքները

Տարեցտարի ՀՀ-ում ավելանում են թեթև հիվանդությունների ժամանակ կիրառվող ԱԴՏ դեղերի ներմուծման և վաճառքի ծավալները, հետևաբար անհրաժեշտություն է առաջանում կառավարելի դարձնել ինքնաբուժման գործընթացը պատշաճ դեղագործական հոգաճության միջոցով: Դեղատան աշխատողները ի զորու են բաց թողնելու առանց դեղատոմսի տրվող դեղեր որոշ թեթև հիվանդությունների ժամանակ համապատասխան գանգատների դեպքում:


Գնահատելով խնդրի կարևորությունը՝ անցկացվեց հարցաթերթային հարցում դեղատան աշխատողների շրջանում, որոնց արդյունքները ներկայացվում են ստորև:

Հետազոտությանը մասնակցել են 285 դեղատան աշխատակիցներ: Նրանցից 54%-ը դեղագործներ էին, 15%-ը՝ ուսանողներ, 19% -ը՝ ԵՊՀ-ի դեղագետ որակավորմամբ շրջանավարտներ, իսկ 12% -ը՝ ԵՊԲՀ-ի շրջանավարտներ (նկ.1): Հետազոտությանը մասնակցած դեղատան աշխատակիցների 28%-ը ուներ մինչև 1 տարվա, 31%-ը՝ 2-3 տարվա, 22% -ը՝ 4-7 տարվա, շուրջ 8%-ը՝ 8-10 տարվա, իսկ 11% -ը՝ ավելի քան 11 տարվա աշխատանքային փորձ:




Նկ. 1. Դեղատան աշխատակիցների բաշխումն՝ ըստ մասնագիտության:

Սոցիոլոգիական հարցման հաջորդ խնդիրն էր՝ պարզել ԱԴՏ դեղերի օրական վաճառքի ծավալները: Ըստ հետազոտության տվյալների՝ դեղատան աշխատակիցների 31%-ը օրական բաց էին թողնում 11-15 անգամ ԱԴՏ դեղեր, 20%-ը՝ 6-10 անգամ, 17%-ը՝ 16-20 անգամ, 20%-ը՝ օրական մինչև 5 անգամ (նկ.2):




Նկ. 2 Դեղատան աշխատակիցների կողմից օրական բաց թողնվող ԱԴՏ դեղերի քանակությունը:

Հետազոտության ընթացքում ուսումնասիրվեց նաև դեղատան աշխատակիցների կողմից մատուցվող դեղագործական խորհրդատվության որակը: Հարցվածների 39%-ն է հստակ նշել, որ նախքան դեղեր բաց թողնելը տեղեկացնում են սպառողներին դեղերի կողմնակի ազդեցությունների մասին: 40%-ը նշել է, որ միայն երբեմն են տեղեկացնում, իսկ 21%-ը ընդհանրապես չեն զգուշացնում (նկ.3):




Նկ.3 Դեղատան աշխատակցի կողմից հիվանդին դեղերի կողմնակի ազդեցությունների մասին տեղեկացումը:

Դեղերի օգտագործման կարգի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրում է մասնակիցների 38%-ը, 47%-ն՝ ընդհանրապես չի տրամադրում, իսկ 15%-ը՝ երբեմն է տրամադրում (նկ.4):




Նկ.4. Դեղատան աշխատակցի կողմից հիվանդին դեղերի կողմնակի ազդեցությունների մասին տեղեկացումը:

Սոցիոլոգիական հարցման հաջորդ խնդիրն էր՝ պարզել ԱԴՏ դեղերի դեղագործական խորհրդատվության ժամանակ ստանդարտ սխեմաների օգտագործման անհրաժեշտությունը, ինչպես նաև՝ դեղատան աշխատողների կողմից դրանց օգտագործման ցանկությունը: Պարզվեց, որ դեղատան աշխատողների մեծամասնությունը (75%) չունեւ որևէ ստանդարտ սխեմա, ըստ որի՝ հենց այդ հերթականությամբ կարող են հարցեր տալ հաճախորդին, որպեսզի կողմնորոշվեն՝ ինչ դեղ առաջարկեն (նկ.5):




Նկ.5. Ստանդարտ սխեմայի առկայություն դեղատան աշխատողների շրջանում:

Հարցին «Կցանկանայի՞ք ունենալ հաստատված, ստանդարտ սխեմա, ըստ որի՝ հենց այդ հերթականությամբ եք հարցերը տալիս հաճախորդին, որպեսզի կողմնորոշվեք՝ ինչ դեղ առաջարկեք», դեղատան աշխատողների մեծամասնությունը՝ 62%-ը նշել է՝ այո, 20%-ը չի ցանկացել ունենալ, իսկ 18%-ը նշել է, որ դա կախված է տվյալ դեպքից: Գտնվեցին դեղատան աշխատողներ, որոնք պատասխանեցին, որ չեն ցանկանում ունենալ նման ստանդարտ սխեմա, բայց, այնուամենայնիվ, նրանցից որոշ մասը խոստովանում էր, որ այն կարող է առավելություններ տալ իրենց (նկ.6):



Նկար 6. «Կցանկանայի՞ք ունենալ հաստատված, ստանդարտ սխեմա, ըստ որի՝ հենց այդ հերթականությամբ եք հարցերը տալիս հաճախորդին, որպեսզի կողմնորոշվեք՝ ինչ դեղ առաջարկեք»:

Դեղատան աշխատողները նաև նշել են մի քանի առավելություններ, որոնք կարող է տալ ստանդարտ սխեման՝ արագ կողմնորոշվելու հնարավորություն (39%), քիչ պատասխանատվություն (37%), անվտանգություն (12%), պաշտպանվածություն (12%) (նկ.7):



Նկար 7. Ստանդարտ սխեմայի առավելությունները՝ ըստ դեղատան աշխատողների:

Քննարկում

Հետազոտության արդյունքները հաստատում են դեղագործական հոգածության ստանդարտ ուղեցույցների անհրաժեշտությունը դեղատան աշխատակիցների շրջանում: Ուսումնասիրության ընթացքում պարզ է դառնում, որ ընդհանուր առմամբ դեղատան աշխատակիցները չեն տրամադրում համապատասխան խորհրդատվություն դեղերի բաց թողնման ժամանակ: Նրանց մեծ մասը ունեն միջին մասնագիտական կրթություն, այսինքն՝ մասնագիտությամբ դեղագործներ են: Դեղատներում աշխատում են նաև ուսանողներ, իսկ բարձրագույն կրթությամբ աշխատակիցների թիվը շատ քիչ տոկոս է կազմում: Աշխատակիցների մեծամասնության աշխատանքային փորձը նույնպես մեծ չէ (մինչև 3 տարվա աշխատանքային փորձ): Դա հետևանք է այն բանի, որ դեղագետ մասնագետները դեղատանը վարձատրվում են բավականին ցածր, այդ իսկ պատճառով էլ դեղագիտական բարձրագույն կրթություն և որոշակի դեղատնային աշխատանքային փորձ ունենալով՝ նրանք հիմնականում նախընտրում են շարունակել իրենց աշխատանքը արտասահմանյան դեղագործական կազմակերպություններում որպես բժշկական ներկայացուցիչ: ՀՀ-ում չունենք որևէ օրենսդրական կարգավորում, որը կպահանջի, որ յուրաքանչյուր դեղատանը աշխատի նվազագույնը մեկ բարձրագույն կրթությամբ դեղագետ մասնագետ:

Արդյունքներից պարզ է դառնում, որ դեղատան աշխատակիցները յուրաքանչյուր օր բաց են թողնում մեծ քանակությամբ ԱԴՏ դեղեր: Անհանգստության տեղիք է տալիս այն փաստը, որ նախքան այդ դեղերը բաց թողնելը շատ քիչ թվով դեղատան աշխատակիցներ են պացիենտին զգուշացնում դեղի օգտագործման կարգի և հնարավոր կողմնակի ազդեցությունների մասին: Ըստ ԱՀԿ-ի՝ դա համարվում է ռիսկային գործոն՝ դեղերի օգտագործման ժամանակ: Ստացվում է, որ պացիենտների գերակշռող մեծամասնությունը կարող են կիրառել դեղերը՝ չպատկերացնելով դրանց՝ առողջությանը հասցնող իրական վնասները, ինչը կարող է բերել հետագա առողջական խնդիրների: Կարևոր է նշել, որ ՀՀ-ում կատարված մեկ այլ հետազոտության արդյունքներ ենթադրում են, որ դեղատան աշխատողների մեծամասնությունը չունի բավարար գիտելիք և ինֆորմացիա դեղերի կողմնակի ազդեցությունների վերաբերյալ [10]: Առանց կողմնակի ազդեցությունների մասին բավարար գիտելքների դեղատան աշխատողը չի կարող ապահովել

սպառողին անհրաժեշտ տեղեկատվությամբ դեղի հետ կապված ռիսկերի մասին: Նմանատիպ արդյունք է գրանցվել մի շարք զարգացող երկրներում, որտեղ դեղատան աշխատակցի դերը հիմնականում սահմանափակվում է դեղերի տրամադրման ավանդական ծառայությամբ և հազվադեպ են մատուցում այդպիսի հանրային առողջապահական ծառայություններ, ինչպիսին է դեղագործական խորհրդատվությունը [11,12]: Գերմանիայում և Կատարում կատարված հետազոտությունների ժամանակ հեղինակները նշել են թույլ խորհրդատվության մակարդակ կողմնակի ազդեցությունների վերաբերյալ: Գերմանիայում կատարված հետազոտությունը ցույց է տվել, որ հիմնական տեղեկությունը տրամադրվում է դեղաչափի վերաբերյալ, մինչդեռ դեղերի կողմնակի ազդեցությունների մասին տեղեկատվությունը թերի է, իսկ Ավստրալիայում դեղատան աշխատակիցները համարվում են առողջապահության ամենահասանելի մասնագետներ, որոնք տրամադրում են դեղագործական խորհրդատվություն և ապահովում են առաջնային առողջապահական խնամք հատկապես թեթև հիվանդությունների կառավարման դեպքում [13]:

Ըստ գրականության տվյալների՝ զարգացող երկրների համար դեղագործական խորհրդատվական ծառայությունների մատուցման խոչընդոտող գործոններից մեկը դեղագործական ստանդարտ ուղեցույցների բացակայությունն է դեղատներում [14]:

Հետազոտության արդյունքները մեզ մոտ նույնպես հաստատում են դեղագործական խորհրդատվության ստանդարտ ուղեցույցների սխեմաների անհրաժեշտությունը և այն ունենալու ցանկությունը դեղատան աշխատողների շրջանում: Դեղատան աշխատողների մեծամասնությունը (75%) չունի որևէ ստանդարտ սխեմաներ՝ որպես ուղեցույցներ, սակայն ցանկանում էին գործնականում ունենալ դեղագործական հոգաձության ուղեցույցներ՝ նշելով մի քանի առավելություններ: Դեղատան աշխատողների մեծ մասը կարծում է, որ նման ուղեցույցները կարող են օգնել՝ աշխատանքում արագ կողմնորոշվելու և ապահովելու համեմատաբար քիչ պատասխանատվություն: Նմանատիպ արդյունք է գրանցվել նաև Ռուսաստանի Դաշնությունում կատարված հետազոտությունում, որտեղ ընդհամենը դեղատան աշխատողների 23% էր նշել, որ չի տեսնում նման ուղեցույցների անհրաժեշտություն: Զարմանալի էր այն փաստը, որ գտնվել էին դեղատան աշխատակիցներ, որոնք նույնիսկ երբևէ չէին լսել նման ուղեցույցների մասին և չգիտեին, թե ինչ է դա իրենից ներկայացնում [15]:

Վերոնշյալ հետազոտությունները, ինչպես նաև մեր արդյունքները փաստում են, որ դեղագետների կողմից բժշկական և դեղերի վերաբերյալ խորհրդատվության հմտությունները կարիք ունեն բարելավման:

Եզրակացություն

Անհրաժեշտ են ձեռնարկել համապատասխան քայլեր՝ բարելավելու ինքնաբուժման ժամանակ ԱԴՏ դեղերի դեպքում սպառողին տրվող տեղեկատվության որակը և քանակը, որը հնարավորություն կտա սպառողին առավել իրատեսորեն գնահատելու դեղի առավելություններն ու ռիսկերը: Պետք է հիշել, որ սպառողի իրավունքն է ընտրված դեղի մասին ամբողջական տեղեկատվություն ստանալը, իսկ դեղատան աշխատողի պարտականությունն է հաղորդել այդ տեղեկատվությունը: Անհրաժեշտ է ձեռնարկել քայլեր, որոնք ուղղված կլինեն դեղերի և դեղագործական հոգաձության վերաբերյալ դեղատան աշխատողների մասնագիտական գիտելիքների բարելավմանը, որն էլ իր հերթին կարող է վերականգնել սպառողների վստահությունը նրանց նկատմամբ, նպաստել սպառողի կողմից ԱԴՏ դեղերի ռացիոնալ օգտագործմանը, ինչպես նաև ազդել դեղատան տնտեսական և ֆինանսական վիճակի վրա:

Արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ կա անհրաժեշտություն և ցանկություն դեղատան աշխատակիցների կողմից բարելավելու դեղերի մասին տեղեկատվական աղբյուրները և մշակելու դեղագործական հոգաձության ստանդարտ ուղեցույցներ, որոնք կօգնեն նրանց խորհրդատվության ժամանակ, կիեշտացնեն աշխատանքը, կխնայեն ժամանակը, և ի վերջո կնպաստեն դեղերի ռացիոնալ օգտագործմանը:

Գրականության ցանկ

1. Черных В.П., Зупанец И.А. фармацевтическая опека. 2006. <https://kingmed.info/media-book/4/3063.pdf>
2. Hämmerlein A, Griese N, Schulz M. Survey of drug-related problems identified by community pharmacies. *Annals of Pharmacotherapy*. 2007; 41(11), 1825-1832.
3. Kusum Kumari, Mary Sunita Toppo, Manish Kumar. The practice of self-medication in diarrhea among second year students in a tertiary care hospital in Jharkhand. *IJPSR*, 2018; Vol. 9(11): 4941-4945
4. Свищова М. Фармацевтическая опека в профессиональной деятельности провизора: Доступно по: <https://docplayer.ru/50954352-Soderzhanie-vvedenie-farmaceuticheskaya-opeka-v-professionalnoy-deyatelnosti-provizora.html>
5. Федина, Е.А. Основы системы качества фармацевтических информационно-консультационных услуг / Е.А. Федина // Новая Аптека. Эффективное управление. - 2007. - №10. - С. 70-78. - №12. - С.65-68
6. Надлежащая аптечная практика , WHO, 1996. https://apps.who.int/iris/bitstream/handle/10665/63097/-WHO_PHARM_DAP_96.1_rus.pdf?sequence=2&isAllowed=y
7. World Health Organization, Diarrheal disease, №330, 2017.
8. da Rocha CE, Bispo ML, dos Santos AC, Mesquita AR, Brito GC, de Lyra DP Jr. Assessment of Community Pharmacists' Counseling Practices With Simulated Patients Who Have Minor Illness: A Pilot Study. *Simul Healthc*. 2015 Aug;10(4):227-38.
9. J. M. Madden, J. D. Quick, D. Ross-Degnan and K. K. Kafle, "Undercover Careseekers: Simulated Clients in the Study of Health Provider Behavior in Developing Countries," *Social Science & Medicine*, Vol. 45, No. 10, 1997, pp. 1465-1482. [http://dx.doi.org/10.1016/S0277-9536\(97\)00076-2](http://dx.doi.org/10.1016/S0277-9536(97)00076-2)
10. Nazaryan L.G. Pharmacy Employees' Knowledge and Dispensing Recommendations for Treatment of Diarrhea in Republic of Armenia. *Caucasus Journal of Health Sciences and Public Health*. 2020, №5, pp. 72-77
11. Makhlof AM, Mohamed Ibrahim MI, Awaisu A, Vyas SK, Yusuff KB. Determinants of community pharmacists' information gathering and counseling practices during the management of minor ailments. *Saudi Pharm J*. 2021;29(9):992-998.
12. Seiberth J.M., Moritz K., Kucukay N., Schiek S., Bertsche T. What is the attitude towards and the current practice of information exchange during self-medication counselling in German community pharmacies? An assessment through self-report and non-participant observation. *PLoS ONE*. 2020;15(10)
13. Buss, V.H., Shield, A., Kosari, S. et al. The impact of clinical services provided by community pharmacies on the Australian healthcare system: a review of the literature. *J of Pharm Policy and Pract* 11, 22 (2018). <https://doi.org/10.1186/s40545-018-0149-7>
14. Nidal Jaradat, Waleed Sweileh. Drug Information for Community Pharmacies: Survey on Needs and Use of Drug Information with Special Focus on New Information Technology. *An-Najah Univ. J. Res. (N. Sc)*, Vol. 17(2), 2003, 288-300
15. Минапов, Линар Наильевич. Разработка методических подходов к созданию информационной системы фармацевтического консультирования при безрецептурном отпуске лекарственных средств . Пермь 2015.

ՀԱԿԱՍՆԿԱՅԻՆ ԵՎ ՊՐՈԲԻՈՏԻԿ ՊՐԵՊԱՐԱՏՆԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՀԵՇՏՈՑԱՅԻՆ ՄՈՍԻԿՆԵՐԻ ԱՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ

ՀՐԱՉՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
«Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն
գիտական ղեկավար
առաջատար գիտաշխատող
կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
hhov@sci.am

ԼՈՒՍԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
«Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն
լաբորատորիայի վարիչ
կենսաբանական գիտությունների թեկնածու
20mar02@mail.ru

ՄԱՐԻԱ ՓԱՇԱՅԱՆ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան
ավագ դասախոս, դոցենտ
դեղագործական գիտությունների թեկնածու
mariapashayan@yahoo.com

Համառոտագիր

Վուլվովագինալ կանդիդոզը (ՎՎԿ) կանանց վերարտադրողական համակարգի ամենատարածված հիվանդություններից է, որն առաջանում է, երբ հեշտոցային լակտոբացիլները փոխարինվում են անցանկալի պաթոգեն միկրոօրգանիզմներով, հատկապես *Candida albicans*-ով [1, 2]: Լակտոբացիլները հեշտոցային նորմալ ֆլորայի կարևոր բաղադրիչն են, որոնք արտադրելով կաթնաթթու, ջրածնի պերօքսիդ, բակտերիոցիններ և այլ հակամանրէային միացություններ, արգելակում են պաթոգեն միկրոօրգանիզմների բազմացումը [3]: ՎՎԿ-ն, սովորաբար բուժվում է նազոլային խմբի հակասնկային դեղամիջոցներով, որոնք սակայն չեն բացառում կրկնավարակների առաջացման մեծ հավանականությունն [4]: Կրկնավարակները կանխելու նպատակով հատուկ ուշադրություն է դարձվում հակասնկային թերապիայից հետո հեշտոցի լակտոբացիլներով վերագաղութացմանը, սակայն դրանց առանձին օգտագործումը որոշակի անհարմարություն է ստեղծում հիվանդի մոտ [5]: ՎՎԿ բուժման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով որոշվել է ստեղծել ֆլուկոնազոլ և լակտոբակտերիաներ պարունակող հեշտոցային մոմիկներ նպատկաուղղված միաժամանակ պաթոգեն միկրոօրգանիզմների հեռացման և հեշտոցի նորմալ միկրոֆլորայի վերականգնմանը: Հեշտոցի վերագաղութացման նպատակով օգտագործվել է մեր կողմից առողջ կնոջ հեշտոցից մեկուսացված լիոֆիլ եղանակով չորացված 25 մգ (~10⁹ ԳԱՄ) ջրածնի պերօքսիդի ակտիվ արտադրիչ *Lactobacillus delbrueckii* MH10 շտամը, 300 մգ ֆլուկոնազոլի փոշին և ամֆիֆիլային Suppocire AP հիմքը: Մոմիկների ֆիզիկոքիմիական հատկությունները և ակտիվ նյութերի ձերբազատման կինետիկան ուսումնասիրվել են՝ համաձայն Եվրոպական Ֆարմակոպեիայի: Մոմիկների ադիեզիան գնահատվել է 60° թեքված պոլիակրիլամիդային սուբստրատից հոսքի արագությամբ: Լակտոբակտերիաների անտագոնիզմը սնկերի նկատմամբ ուսումնասիրվել է մոդելային վագինալ հեղուկում (ՄՎՀ) համատեղ կուլտիվացման եղանակով: Ցույց է տրվել, որ ակտիվ բաղադրիչները՝

Ֆլուկոնազոլը և *L. delbrueckii* MH-10-ը չեն ազդում միմյանց ակտիվության և արտազատման վրա , բացահայտվել է նաև, որ *L. delbrueckii* MH10-ը բարձրացնում է մոմիկների հակասնկային ազդեցությունը՝ համակցվելով *C. albicans*-ի հետ և արտազատելով ջրածնի պերօքսիդը ուղղակի նրանց վրա: Մոմիկների պահպանման ժամկետը մի քանի անգամ ավելի երկար է, քան նմանատիպ կենսաբանական մոմիկներինը՝ *L. delbrueckii* MH10 հալված հիմքի հետ բարձր ջերմաստիճանում միաձուլման ժամանակ առաջացող սթրեսի նկատմամբ դիմացկունության, ինչպես նաև՝ 30 °C-ից ցածր ջերմաստիճանում աճելու անկարողության պատճառով: Suppocire AP հիմքով պատրաստված մոմիկներից կաշտությունը ավելի բարձր է, քան շուկայում առկա հեշտոցային մոմիկներինը, ինչը թույլ է տալիս նրանց ավելի երկար մնալ և ազատել ակտիվ նյութերը տեղադրման տեղում:

Բանալի բառեր և բառակապակցություններ. հեշտոցային երկֆունկցիոնալ մոմիկ, Ֆլուկոնազոլ, լակտոբակտերիաներ, *C. albicans*, ձերբազատում, լորձաթաղանթ, պահպանման ժամկետ:

СОЗДАНИЕ И ИССЛЕДОВАНИЕ ВАГИНАЛЬНЫХ СУППОЗИТОРИЕВ, СОДЕРЖАЩИХ ПРОТИВОГРИБКОВЫЕ И ПРОБИОТИЧЕСКИЕ ПРЕПАРАТЫ

ГРАЧЬЯ ОГАНЕСЯН

Национальная академия наук Республики Армения
Научно-производственный центр "Армбиотехнология"
научный руководитель
ведущий научный сотрудник
доктор биологических наук, профессор
hhov@sci.am

ЛУСИНЕ ДАНИЕЛЯН

Национальная академия наук Республики Армения
Научно-производственный центр "Армбиотехнология"
заведующий лабораторией
кандидат биологических наук
20mar02@mail.ru

МАРИЯ ПАШАЯН

Ереванский государственный медицинский университет им. Мхитара Гераци
старший преподаватель, доцент
кандидат фармацевтических наук
mariapashayan@yahoo.com

Аннотация

Вульвовагинальный кандидоз (ВВК) — одно из наиболее распространенных заболеваний женской репродуктивной системы, возникающее при замещении вагинальных лактобацилл нежелательными патогенными микроорганизмами, прежде всего *Candida albicans* [1,2]. Лактобациллы являются важным компонентом нормальной вагинальной флоры, которые, продуцируя молочную кислоту, перекись водорода, бактериоцины и другие антимикробные соединения, ингибируют рост потенциальных патогенов [3]. ВВК обычно лечат противогрибковыми препаратами группы нозола, которые, однако, не исключают возможности рецидива в связи с выраженным снижением количества вагинальных лактобацилл [4]. С целью профилактики рецидивов инфекций особое внимание уделяется повторной колонизации влагалища лактобациллами после противогрибковой терапии [5]. Комбинированное или последовательное применение двух видов суппозиториев вызывает у пациента некоторый дискомфорт. С целью повышения эффективности лечения ВВК было принято решение о создании вагинальных суппозиториев, содержащих флуконазол и лактобациллы, направленных одновременно на удаление патогенных микроорганизмов и восстановление нормальной микрофлоры влагалища.

Для приготовления вагинальных суппозиториев, предназначенных для лечения и реколонизации, 300 мг порошка флуконазола и 25 мг (~109 КОЕ) выделенного из влагалища здоровой женщины лиофилизированного порошка активного продуцента пероксида водорода штамма *Lactobacillus delbrueckii* МН10 слили с расплавленным Suproige AP. Физико-химические свойства суппозиториев и кинетика высвобождения действующих веществ были изучены в соответствии с Европейской фармакопеей. Адгезионную способность суппозиториев оценивали по скорости стекания смеси суппозиториев и искусственной вагинальной жидкости (ИВЖ) из полиакриламидной подложки, наклоненной под углом 60°. Антагонизм лактобацилл против грибов изучали в ИВЖ методами кокультуры. Срок годности вагинальных суппозиториев определяли по жизнеспособности лактобацилл, которая должна быть не менее 10⁸ КОЕ/г.

Было показано, что активные ингредиенты флуконазол и *L. delbrueckii* МН-10 не влияют на активность друг друга и на высвобождение из суппозиториев, а также показано, что *L. delbrueckii* МН10 усиливает противогрибковое действие суппозиториев за счет коагрегации с клетками *C. albicans* и прямое выделение на них перекиси водорода. Срок годности созданных суппозиториев в несколько раз больше, чем у аналогичных биологических суппозиториев, за счет устойчивости *L. delbrueckii* МН10 к стрессу, вызванному высокими температурами при слиянии с расплавленной основой и неспособностью расти при температурах ниже 30 °С. Изготовленные из Suproige AP суппозитории обладают более высокой адгезией к слизистой оболочке, чем имеющиеся на рынке вагинальные суппозитории, что позволяет им дольше оставаться и высвобождать активные вещества в месте введения.

Ключевые слова и словосочетания: свеча вагинальная бифункциональная, флуконазол, лактобактерии, *C. albicans*, высвобождение, слизистая, срок годности.

CREATION AND STUDY OF VAGINAL SUPPOSITORIES CONTAINING ANTIFUNGAL AND PROBIOTIC PREPARATIONS

HRACHYA HOVHANNISYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
"Armbiotechnology" Scientific and Production Center, Scientific Supervisor
Leading Researcher
Doctor of Biology, Professor
hhov@sci.am

LUSINE DANIELYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
"Armbiotechnology" Scientific and Production Center Scientific Supervisor
Head of Laboratory, PhD in Biological Sciences
20mar02@mail.ru

MARIA PASHAYAN

Yerevan State Medical University after Mkhitar Heratsi
Senior Lecturer
PhD in Pharmaceutical Sciences, Associate Professor
mariapashayan@yahoo.com

Abstract

Vulvovaginal candidiasis (VVC) is one of the most common diseases of the female reproductive system, occurring when vaginal lactobacilli are replaced by unwanted pathogenic microorganisms, especially *Candida albicans* [1,2]. Lactobacilli are an important component of the normal vaginal flora, which, by producing lactic acid, hydrogen peroxide, bacteriocins, and other compounds, inhibit the growth of potential pathogens [3]. VVCs are usually treated with antifungal preparations of nazol group, which, however, do not rule out the possibility of recurrence due to a severe reduction in the number of vaginal lactobacilli [4]. To prevent recurrent infections, special attention is paid to the re-colonization of the vagina with lactobacilli after antifungal therapy [5]. The combined or sequential use of both types of suppositories causes some discomfort for the patient. To increase the effectiveness of VVC treatment, it was decided to create vaginal suppositories containing fluconazole and lactobacilli, aimed at simultaneously removing pathogenic microorganisms and restoring the normal microflora of the vagina.

For preparation of vaginal suppositories intended for treatment and re-colonization, 300 mg of fluconazole powder and 25 mg (~ 10⁹ CFU) isolated from healthy woman vagina lyophilized powder of active producer of hydrogen peroxide *Lactobacillus delbrueckii* MH10 strain were fused with melted Suppocire AP. Physicochemical properties of the suppositories and kinetics of release of active substances have been studied in accordance with the European Pharmacopoeia. The adhesion ability of the suppositories has been assessed by the flow rate of the suppositories and artificial vaginal fluid (AVF) mixture from a 60 ° inclined polyacrylamide substrate. The antagonism of lactobacilli against fungi has been studied in AVF by co-culture. The shelf life of vaginal suppositories was determined by the viability of lactobacilli, which should be at least 10⁸ CFU/g.

It has been shown that the active ingredients fluconazole and *L. delbrueckii* MH-10, do not affect each other's activity and release from the suppositories and revealed that *L. delbrueckii* MH10 enhanced the antifungal action of the suppositories by co-aggregating with *C. albicans* cells and direct release of hydrogen peroxide on them. The shelf life of the suppositories is several times longer than that of similar biological suppositories due to resistance of *L. delbrueckii* MH10 to stress caused by high temperatures during fusing with melted base and inability to grow at temperatures lower of 30 °C. Made of Suppocire AP suppositories have a higher mucosal adhesion than commercially available vaginal suppositories on the market which enable them to stay longer and release active substances at site of insertion.

Keywords and phrases: vaginal bifunctional suppositories, fluconazole, lactobacilli, *C. albicans*, release, mucous membrane, shelf life.

Ներածություն

Վուլվովագինալ կանդիդոզը (ՎՎԿ) կանանց վերարտադրողական համակարգի ամենատարածված հիվանդություններից է: Այն առաջանում է, երբ հեշտոցային լակտոբացիլները որոշակի գործոնների ազդեցության արդյունքում փոխարինվում են անցանկալի պաթոգեն միկրոօրգանիզմներով, հատկապես *Candida albicans*-ով [1,2]: Լակտոբացիլները նորմալ հեշտոցային ֆլորայի կարևոր մասն են կազմում, որոնք արտադրելով կաթնաթթու, ջրածնի պերօքսիդ, բակտերիոցիններ և այլ միացություններ, արգելակում են պոտենցիալ պաթոգենների բազմացումը [3]: ՎՎԿ-ն կարող է բուժվել լայն սպեկտրի հակասնկային դեղամիջոցներով, սակայն հակամանրէային թերապիայի հիմնական խնդիրը կրկնավարակի մեծ հավանականությունն է՝ կապված հեշտոցում լակտոբացիլների փոքր քանակության հետ, որն անհրաժեշտ է վերականգնել [4]: Վերջերս հակասնկային թերապիայից հետո բուժման արդյունավետությունը բարձրացնելու և կրկնավարակները կանխելու նպատակով հատուկ ուշադրություն է դարձվում հեշտոցի լակտոբացիլներով վերագաղութացմանը [5]: Հեշտոցային էկոհամակարգերում ԿԹԲ-ները գործում են պաթոգենների դեմ մի քանի եղանակներով՝ քայքայելով գլիկոգենը՝ առաջացնում են կաթնաթթու, որը հեշտոցում ստեղծում է թթվային միջավայր (pH 4,0–4,5), որը անբարենպաստ է շատ պաթոգենների համար՝ արտադրելով հակամանրէային լակտացիններ, ջրածնի պերօքսիդ և այլ նյութեր՝ համաազրեգացվելով պաթոգենների հետ և խոչընդոտելով պաթոգենների ադիեզիան էպիթելիային բջիջների վրա [16]: Առողջ հեշտոցից մեկուսացված ջրածնի պերօքսիդ արտադրող լակտոբացիլները ամենաարդյունավետն են, սեռական ճանապարհով փոխանցվող վարակների, ներառյալ ՁԻԱՀ-ի և բակտերիալ վագինոզի կանխարգելման համար [6-10]:

Կլինիկական հետազոտությունները պարզել են, որ պրոբիոտիկ լակտոբակտերիաներ կիրառությունը զգալիորեն մեծացնում են ՎՎԿ-ի հակասնկային դեղորայքով բուժման արդյունավետությունը [11,12]:

Քանի որ վագինոզների բուժումը սովորաբար անցկացվում է տնային պայմաններում, հակասնկային դեղամիջոցների և պրոբիոտիկների առանձին-առանձին երկարատև ընդունումն անհարմարություններ է ստեղծում հիվանդի համար: Երկու ազդող գործոնների համատեղ օգտագործումը մեկ դեղամիջոցում, որը կարող է կարճ ժամանակահատվածում ապահովել միաժամանակ պաթոգենների հեռացումը, և հեշտոցային նորմալ միկրոֆլորայի վերականգնումը ավելի հարմար է և արդյունավետ:

Այս հետազոտության նպատակը, ՎՎԿ-ի բուժման և կրկնավարակների կանխարգելման համար հակասնկային և պրոբիոտիկ պարունակող երկակի ազդեցության մոմիկների պատրաստումն ու գնահատումն է:

Տեսամթերողական հիմքեր

Միկրոօրգանիզմներ և նյութեր

Պրոբիոտիկ *L. delbrueckii* MH10 շտամը, որը ջրածնի պերօքսիդի ակտիվ արտադրող է, նախկինում մեկուսացվել է առողջ կնոջ հեշտոցից [13]: *C. albicans* MDC8013-ը ստացվել է ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» մանրէների ավանդադրման կենտրոնից: Ֆլուկոնազոլի փոշին ձեռք է բերվել Pfizer-Roerig Pharmaceuticals-ից (New York, N.Y.), ամֆլիֆիլ Suppocire AP հիմքը ձեռք է բերվել Condea ChemieGmbH-ից (Գերմանիա), Serva-ից (Գերմանիա), մանրէաբանական միջավայրերը՝ Sabouraud Dextrose ազարը (Sigma Chemicals, ԱՄՆ), MRS (Merck, Գերմանիա) և Nutrient Broth-ը և ազարը (Serva, Գերմանիա), Merckoquant պերօքսիդի թեստ երիզներ [Merck, Գերմանիա]:

Մոդելացված հեշտոցային հեղուկ (ՄՀՀ)

ՄՀՀ-ը պատրաստվել է 3,51 գ/լ NaCl, 1,40 գ/լ KOH, 0,222 գ/լ Ca(OH)₂, 0,018 գ/լ տավարի շիճուկի ալբումին, 2 գ/լ կաթնաթթու, 1 գ/լ կաթնաթթու, 0,16 գ/լ գլիցերին, 0,4 գ/լ միզանյութ և 5 գ/լ գլյուկոզա: Խառնուրդի pH-ը կարգավորվել է մինչև 4,5՝ օգտագործելով 0,1 N HCl [14]:

Ենթաշերտի պատրաստում

Որպես հիմք օգտագործվել է պոլիմերային թաղանթ՝ բաղկացած պոլիակրիլամիդից (ակրիլամիդ 20%, մեթիլենբիսակրիլամիդ 0,25%, ջուր 79,75%):

Վերնստվածքային հեղուկ (ՎՆՀ) պատրաստում

L. delbrueckii-ն աճեցվել է MRS արգանակում 37°C ջերմաստիճանում մեկ գիշերվա ընթացքում, ցենտրիֆուգվել է 3000 պտ/րոպե 20 րոպե, վերնստվածքային հեղուկը լցվել է ստերիլ սրվակների մեջ՝ հետագա օգտագործման համար:

Ազարում սկավառակից դիֆուզիոն մեթոդ

C. albicans-ի և փորձնական բակտերիաների գիշերային կուլտուրաները նոսրացվել են մինչև 10^6 ԳԱՄ/մլ և 0,1 մլ տարածվել Սաբուրո կամ ՍԱ ազարների վրա, թղթե սկավառակները (5 մմ) ներծծված ՎՆՀ կամ ֆլուկոնազոլի լուծույթով, տեղադրվել են ազարի մակերեսի վրա և ինկուբացվել 30°C կամ 37°C ջերմաստիճանում 24 ժամ: Այնուհետև չափվել են աճի ճնշման գոտիները:

Ջրածնի պերօքսիդի որոշումը

Ջրածնի պերօքսիդի կոնցենտրացիան որոշվել է Merckoquant Peroxide Test երիզներով 0,5 - 2 - 5 - 10 - 25 մգ/լ H₂O₂ արտադրողի հրահանգների համաձայն:

Մանրէների համաագրացիայի որոշումը

L. delbrueckii-ի և *C. albicans*-ի գիշերային կուլտուրաներից բջիջները նստեցվել են ցենտրիֆուգման միջոցով 15 րոպե 4000 պտ/վրկ -ում, և կախույթացվել են ֆոսֆատային բուֆերում (ՖԲ)՝ հասցնելով տիտրը մոտ 10^8 ԳԱՄ/մլ: Յուրաքանչյուր կուլտուրայից 2 մլ խառնվել և հոմոգենիզացվել է 10 վայրկյան: Խառնուրդի օպտիկական խտությունը չափվել է ամեն ժամ 5 ժամվա ընթացքում 600 նմ-ի տակ: Համաագրեգացիայի տոկոսը հաշվարկվել է Հանդելի հավասարման միջոցով [20]:

***L. delbrueckii* MH10-ի հակասնկային ազդեցությունը ՄՀՀ-ում**

20 մլ ՄՀՀ պարունակող սրվակները ինկուբացվել են *C. albicans*-ով $\sim 10^5$ ԳԱՄ/մլ վերջնական տիտրով, որը համապատասխանում է սուր ՎՎԿ-ով հիվանդների մոտ հայտնաբերված միջին քանակին [8]: Այնուհետև *L. delbrueckii* MH10-ը ավելացվել է 100:1 և 1:1 հարաբերակցությամբ և ինկուբացվել 37°C ջերմաստիճանում ջրային բաղնիքում: Յուրաքանչյուր 2 ժամը մեկ վերցված նմուշները նոսրացվել են ֆիզիոլոգիական լուծույթի մեջ, ցանվել Սաբուրո ազարի վրա և 48 ժամ ինկուբացվել 28°C-ում, որում *L. delbrueckii*-ին չի աճում, այնուհետև *C. albicans*-ի քանակը որոշվել է գադոլթների հաշվարկի միջոցով: Կենդանի լակտոբացիլների քանակը ՄՀՀ-ում աճեցման ժամանակ որոշվել է 10 մկգ/մլ ֆլուկոնազոլ պարունակող MRS ազարի վրա ցանքսի միջոցով, որտեղ *C. albicans*-ը չի աճում:

Մոմիկների պատրաստումը

Մոմիկերը պատրաստվել են ակտիվ բաղադրիչների և Suppocire AP հիմքի ջերմային միաձուլման եղանակով: Յուրաքանչյուր մոմիկի (2,5 գ) մեջ ավելացվել է 25 մգ ($\sim 10^{11}$ ԳԱՄ/գ) լիոֆիլացված *L. delbrueckii* և 300 մգ ֆլուկոնազոլ: Suppocire AP հիմքը հալվել է ջրային բաղնիքում 65-70°C ջերմաստիճանում, սառեցվել մինչև 45°C, այնուհետև ավելացվել են ազդող նյութերը, և լավ խառնելուց հետո լցվել է մետաղական կաղապարների մեջ և պահվել սառնարանում մինչև մոմիկի պնդացումը:

Մոմիկների կշիռի փոփոխականության որոշումը

Յուրաքանչյուր խմբաքանակից 20-ական մոմիկ կշռվում են, որոշվում է միջին արժեքը և հաշվարկվում է միջինից տոկոսային շեղման մեծությունը, որը չափի գերազանցի 5%-ը [15]:

Մոմիկի հալման կետի որոշում

Հալման կետը որոշվել է բարակ չժանգոտվող պողպատե մետաղալարով, որը դրվում է կաղապարի մեջ հալված մոմիկի մեջ նախքան դրա պնդացումը: Պնդացումից հետո մետաղալարից բռնելով մոմիկը ընկղմվում է ջրի մեջ և աստիճանաբար բարձրացվում է ջրի ջերմաստիճանը (1°C յուրաքանչյուր 2-3 րոպե մեկ), մինչև մոմիկը պոկվի մետաղալարից: Ֆիքսված ջերմաստիճանը, երբ դա տեղի է ունենում, հանդիսանում է մոմիկի հալման կետը [15]:

Քայքայման / Դեֆորմացիայի թեստ

Քայքայման թեստը կատարվել է Բրիտանական ֆարմակոպեայի (2014) պահանջների համաձայն՝ օգտագործելով Erweka սարքը:

Ստացված արդյունքները

Նախքան հեշտոցային մոմիկների ձևավորումը ուսումնասիրվել է նրանցում ներառնվող ֆլուկոնազոլի և *L. delbrueckii* MH-10 ՎՆՀ-ի միջև փոխազդեցությունը և նրանց երկուսի ազդեցությունը *C. albicans*-ի և թեստ մանրէների վրա (Աղ. 1):


Աղյուսակ 1. *L. delbrueckii* MH-10 ՎՆՀ-ի և 50 մկգ/մլ ֆլուկոնազոլի կողմից առաջացրած թեստ կուլտուրաների աճի արգելակման գոտիները:

Թեստ կուլտուրաներ	Կուլտուրալ հեղուկ	Ֆլուկոնազոլ	ԿՀ + ֆլուկոնազոլ
<i>S.aureus</i>	23.4±0.4	ՉՀ	24.1±0.3
<i>E.coli</i>	30.3±0.3	ՉՀ	30.2±0.2
<i>Klebsiella. spp.</i>	12.1±0.6	ՉՀ	11.3±0.5
<i>C.albicans</i>	5.9±0.5	32.2 ± 0.8	30.1±0.4
<i>L. delbrueckii</i> MH 10	ՉՀ	ՉՀ	ՉՀ

n=6; p≤0.05; ՉՀ- չի հայտնաբերվում

Համաձայն աղյուսակ 1-ում ներկայացված տվյալների՝ *L. delbrueckii* -ի ՎՆՀ ուժեղ ճնշում է տեստ բակտերիաների աճը, բայց թույլ է ազդում *C. albicans*-ի վրա: Մինչդեռ ֆլուկոնազոլը ճնշում է սնկի աճը, բայց չի ճնշում պաթոգեն բակտերիաների և *L. delbrueckii* MH-10 աճը: Համատեղ օգտագործման ժամանակ կուլտուրալ հեղուկը էական ազդեցություն չի թողում ֆլուկոնազոլի հակասնկային ազդեցության վրա: *C. albicans*-ի ճնշման գոտիները ֆլուկոնազոլով առանձին և կուլտուրալ հեղուկի հետ միասին, էապես չեն տարբերվում միմյանցից: Օսետը և ուրիշները [20] ուսումնասիրել են *C. albicans*-ի աճի արգելակումը իրենց կողմից մեկուսացված LAB – երի ՎՆՀ – ներով նույնպես չեն հայտնաբերել արգելակման գոտիներ ազարում դիֆուզիայի մեթոդն, սակայն այդ նույն լակտոբացիլների ՎՆՀ -ները 35,7%-ից մինչև 41,7% ճնշել են *C. albicans*-ի աճը հեղուկ կուլտուրաներում:

Մեր կողմից ուսումնասիրվել է կենդանի լակտոբացիլների անմիջական ազդեցությունը *C. albicans*-ի կենսունակության վրա ՄՀՀ-ում համատեղ կուլտիվացման միջոցով (նկ. 1)



Նկ. 1. Կենսունակ *C. albicans*-ի քանակի անկումը *L. delbrueckii* MH 10-ի հետ համատեղ կուլտիվացման ժամանակ ՄՀՀ-ում:

(◆) *C. albicans* մենակ, (x) LAB մենակ, (■) LAB+*C. albicans* (1:1), (▲) LAB+ *C. albicans* (100:1):

Համաձայն Նկ. 1 – ում ներկայացված տվյալների՝ *C. albicans*-ի և *L. delbrueckii*-ի առանձին-առանձին կուլտիվացման ժամանակ կենդանի բջիջների անկում չի գրանցվել, սակայն համատեղ կուլտիվացիայի դեպքում նկատվում է կենսունակ սնկերի քանակի զգալի նվազեցում այն դեպքում, երբ լակտոբակտերիաների քանակը մնում է անփոփոխ: Ինկուբացիայից 6 ժամ հետո 100:1 հարաբերակցության դեպքում կենսունակ *C. albicans*-ի քանակությունը նվազում է 90% -ով, իսկ 1:1 դեպքում ընդամենը 23% -ով: Այսպիսով՝ *C. albicans*-ի անկման արագությունը կախված է լակտոբակտերայի հետ հարաբերակցությունից և կուլտիվացիայի տևողությունից: Ջրածնի պերօքսիդը, որը գործում է որպես բնական հակասեպտիկ, ՄՀՀ- ում հիմնական ակտիվ հակասնկային նյութն է, քանի որ կաթնաթթունն ու լակտոցինները չեն սինթեզվում գլյուկոզի և ակտիվ նյութափոխանակության բացակայության դեպքում: Անաէրոբ կուլտուրայում *L. delbrueckii* MH10-ն արտադրում է մոտ 10 մգ/լ H_2O_2 5 օրվա ընթացքում, իսկ անէրոբ կուլտուրայում այն կարող է հասնել 100 մգ/լ-ի 6 ժամվա ընթացքում [13]: Փորձերը ցույց են տվել *L. delbrueckii* MH 10-ի համաազրեգացիան *C. albicans*-ի հետ բավականին բարձր է ($57 \pm 1,5\%$): SVF-ում *L. delbrueckii* -ին կարող է ցուցաբերել հակասնկային ակտիվություն կանդիդայի հետ համաազրեգացիայի և H_2O_2 -ի թիրախային բջիջների վրա անմիջական արտազատման միջոցով:


Մոմիկների պատրաստումը և ֆիզիկական բնութագիրը

Մոմիկների պատրաստման համար օգտագործվել է ամֆիֆիլային Suppocire AP հիմքը, որում ներառնվել է 300 մգ ֆլուկոնազոլ և 25 մգ ($\sim 10^9$ ԳԱՄ) լակտոբակտերիաներ: Բոլոր մոմիկերը եղել են սպիտակավուն: Մոմիկների միջին կշիռը 2,48 գ է, հալման կետը՝ 37.5 ± 0.4 : Հեղուկում քայքայման ժամանակը չի գերազանցել 60 րոպեն, ինչը բավարարում է BP-ի պահանջները (Աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Մոմիկների ֆիզիկական հատկությունները:

Լուծելիությունը՝ րոպե	Կարծրությունը՝ կգ	Քայքայումը, րոպե	Հալման կետը՝ °C	Միջին կշիռը՝ գ
42 ± 0.8	2.5 ± 0.2	47 ± 1.8	37.5 ± 0.4	2.48 ± 0.1

Ակտիվ նյութերի՝ լակտոբակտերիաների և ֆլուկոնազոլի ձերբազատումը մոմիկներից ներկայացված է նկար 2-ում:



Նկ. 2. Մոմիկներից *L. delbrueckii* MH10- ի ձերբազատումը *L. delbrueckii* MH10 բջիջների առավելագույն ձերբազատումը Suppocire AP-ից կազմել է միջինը 1.6×10^9 ԳԱՄ/մլ) դիտվել է 110 րոպեում:

Ինչպես երևում է նկարից, մոմիկներից ֆլուկոնազոլի ձերբազատումը ավելի արագ է տեղի ունենում, քան լակտոբացիլների: 80 րոպեում, ձերբազատվել է ֆլուկոնազոլի մոտ 80%-ը, իսկ լակտոբացիլների 60% -ը: Կորերի համեմատությունը ցույց է տալիս, որ լակտոբացիլների և ֆլուկոնազոլի համատեղ օգտագործումը չի ազդում մոմիկից նրանց ձերբազատման վրա, սակայն լակտոբացիլների ամբողջական արտազատումը ուշանում է մոտ 15 րոպեով: Մոմիկներից ֆլուկոնազոլի և լակտոբակտերիաների արտազատման արագության նկատված տարբերությունը կարելի է բացատրել արտազատման ձևերի տարբերությամբ՝ ֆլուկոնազոլը ձերբազատվում է դիֆուզիայի և էրոզիայի միջոցներով այն դեպքում երբ լակտոբացիլները ձերբազատվում են հիմնականում էրոզիայի միջոցով [19]:

Մոմիկների ադիեզիան արհեստական լորձաթաղանթի վրա

Մոմիկների լորձաթաղանթին ադիեզիայի ունակությունը գնահատվել է մոմերի և ՄՀՀ համարժեք չափի խառնուրդի հոսքի արագությամբ՝ 60° թեքված սուբստրատի մակերեսով (Աղյուսակ 3):

Աղյուսակ 3. Մոմիկների ադիեզիան 60°-ով թեքված սուբստրատի վրայով:

Մոմիկ	Հոսքի արագությունը, մմ/վ
Suppocire AP	3.12 ± 0.17
Ացիլակտ մոմիկներ	6.15 ± 0.21

Աղյուսակ 3-ի տվյալները ցույց են տալիս, որ Suppocire AP-ից (3,12 մմ/վ) մոմիկը հոսում է թեք հիմքի երկայնքով ավելի դանդաղ, քան ստուգիչ մոմիկները (6,15 մմ/վ):

Մոմիկների պահպանման ժամանակ, ի տարբերություն հակաբիոտիկների և քիմիական նյութերի, կենդանի միկրոօրգանիզմներն ավելի արագ են չեզոքանում: Այդ պատճառով կենսաբանական մոմիկների պահպանման ժամկետը սահմանափակվում է նրան կենդանի բաղադրիչի՝ տվյալ դեպքում լակտոբացիլների կենսունակությամբ:

Պատրաստված հեշտոցային մոմիկների կայունությունը ուսումնասիրվել է սառնարանային 2-8°C և սենյակային ջերմաստիճաններում 6 ամիս պահպանման ընթացքում (Աղ. 4):

Աղյուսակ 4. *L.delbrueckii* MH-10–ի կենսունակությունը մոմիկներում սառնարանում և սենյակային ջերմաստիճանում:

Մոմիկ	Պահպանման պայմանները	ԳԱՄ մոմիկում		
		ամիս		
		0	3	6
Ստուգիչ	2-8°C	2,4±0,2x10 ⁹	4,8±0,2x10 ⁸	9,1±0,1 x 10 ⁷
	սենյակային	2.5±0,2x10 ⁹	1,1 ± 0,1x10 ⁸	4,0±0,2x 10 ⁶
Suppocire AP	2-8°C	2,5 ± 0,2 x10 ⁹	1.4 ± 0,2x10 ⁹	7,8 ± 0,2x10 ⁸
	սենյակային	2.6±0,2x10 ⁹	5,4 ± 0,1x 10 ⁸	1,1±0,1 x 10 ⁸

Ինչպես երևում է Աղ. 4 –ից, 6-ամսյա պահեստավորումից հետո կենսունակ լակտոբացիլների քանակը նվազել է ընդամենը 1 լոգով: Առողջ վերարտադրողական տարիքի կանանց հեշտոցային էկոհամակարգում կան 8.1 log լակտոբակտերիա, ուստի հեշտոցի արդյունավետ գաղութացման համար պահպանման ժամկետի ավարտին մոմիկներում կենսունակ լակտոբակտերիաների քանակը դրանից ցածր չպետք է լինի **[19]**: Վեց ամիս պահեստավորումից հետո Suppocire AP մոմիկներում հայտնաբերվել է լակտոբակտերիաների $7,8 \pm 0,2 \times 10^8$ կենսունակ քանակ, որը էապես բարձր է նորմոֆլորայի քանակից: *L. delbrueckii* MH-10-ի կենսունակությունը պահպանման համեմատաբար ավելի բարձր է եղել, քան հայտնաբերվել է այլ տեսակների լակտոբացիլների պարագայում **[4, 19]**: Հիմնական պատճառը, որ պատրաստված մոմիկները ունեն ավելի երկար պահպանման ժամկետ՝ համեմատած այլ հեշտոցային մոմիկների, այն է, որ *L. delbrueckii* -ն չի աճում 30°C-ից ցածր ջերմաստիճանում:

Հայտնի է, որ բարձր ջերմաստիճանները, որոնք օգտագործվում են հալված հիմքերի հետ ազդող նյութերի միաձուլման ժամանակ, հանգեցնում են կենդանի միկրոօրգանիզմների զգալի մասի անկման **[4]**: Համաձայն մոմիկի պատրաստումից անմիջապես հետո լակտոբացիլների կենսունակության որոշման տվյալների (Աղ. 4)՝ միաձուլման բարձր ջերմաստիճանը զգալիորեն չի ազդել *L. delbrueckii* շտամի վրա: *L. delbrueckii* MH 10-ը հաջողությամբ հաղթահարում է միաձուլման ժամանակ բարձր ջերմաստիճանի սթրեսը՝ առանց կենսունակության զգալի նվազման՝ շնորհիվ իր ներքին բարձր ջերմակայունության (>55 °C) **[13]**:

Գրականության ցանկ

1. Sobel J. Vulvovaginal candidosis. Lancet 2007; 369:1961–71.
2. Sobel J, Chaim W. Vaginal microbiology of women with acute recurrent vulvovaginal Candidiasis. Journal of clinical microbiology 1996; 34(10):2497–99.
3. Dover SE, Aroutcheva AA, Faro S, Chikindas ML. Natural antimicrobials and their role in vaginal health: A Short Review. Int. J Probiotics Prebiotics 2008; 3(4):219–230.
4. Uehara S, Monden K, Nomoto K, Seno Y, et al. A pilot study evaluating the safety and effectiveness of Lactobacillus vaginal suppositories in patients with recurrent urinary tract infection. International Journal of Antimicrobial Agents 2006; 28:30–34.
5. Slaver CM. Lactobacillus: a Review. Clin. Microbiol. Newsletter 2008; 30:23-27.
6. Klebanoff SJ, Hillier SL, Echenbach DA., Waltersdorff AM. Control of the microbial flora of the vagina by H₂O₂- Generating Lactobacilli. JID, 1991, 164: 94-100.
7. Haves S, Hillier S, et al. Hydrogen peroxide-producing lactobacilli and acquisition of vaginal infections. J. Infect. Dis 1996; 174:1058-1063.
8. Strus M, Brzychczy-Wloch M, Kucharska A, et al. Inhibitory activity of vaginal Lactobacillus bacteria on yeasts causing vulvovaginal candidiasis. Med Dosw Mikrobiol 2005; 57:7–17.
9. Vallor AC, Antonio MA, Hawes SE, Hillier SL. Factors associated with acquisition of, or persistent colonization by, vaginal lactobacilli: role of hydrogen peroxide production. J. Infect. Dis 2001;184:1431-3.
10. Heeres J, Hendrickx R, Van Cutsem J. Antimycotic azoles. Synthesis and antifungal properties of terconazole, a novel triazole ketal. J. Med. Chem 1983; 264:611-13.
11. Anukam K1, Osazuwa E, Ahonkhai I, Ngwu M, et al. Augmentation of antimicrobial metronidazole therapy of bacterial vaginosis with oral probiotic *Lactobacillus rhamnosus* GR-1 and *Lactobacillus reuteri* RC-14: randomized, double-blind, placebo controlled trial. Microbes Infect 2006; 8(6):1450-54.
12. Martinez RCR, Franceschin SA, Patta MC, Quintana SM, et al. Improved treatment of vulvovaginal candidiasis with fluconazole plus probiotic *Lactobacillus rhamnosus* GR-1 and *Lactobacillus reuteri* RC-14. Letters in applied Microbiology 2009; 48:269-386.
13. Pashayan M, Hovhannisyan H. Isolation and characterization of hydrogen peroxide producing vaginal lactobacilli. Journal of Microbiology Epidemiology and Immunobiology 2011; 6: 90-93.
14. Margareth RC, Raimar L. May A. Simulated biological fluids with possible application in dissolution testing, Dissolution Technologies 2011;15-28.
15. Allen L. Quality control of suppositories. Suppositories. 1st ed. UK: The Pharmaceutical Press 2008; 39-58.
16. Falagas M, Betsi GI, Athanasiou S. Probiotics for prevention of recurrent vulvovaginal candidiasis: J Antimicrob Chemother 2006; 58(2): 266-72.
17. Osset J, Bartolome RM, Garcia E, Andreu A. Assessment of the capacity of Lactobacillus to inhibit the growth of uropathogens and block their adhesion to vaginal epithelial cells. J Infect Dis 2001; 183:485–91.
18. Tanaka M, Kuwahara E, Takahashi M, et al. Enhanced rectal absorption of amphotericin B lyophilized with glycyrrhizinate in rabbits. Biol. Pharm. Bull 1998; 21:853-857.
19. Kaewnopparat S, Kaewnopparat N. Formulation and evaluation of vaginal suppositories Containing Lactobacillus, International Journal of Medical, Health, Biomedical, Bioengineering and Pharmaceutical Engineering 2009; 3(7):117-20.

ՆԵՐՔԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆԵԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՍՈՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան
կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոն, ասպիրանտ
sona.stepanyan96@mail.ru

Համառոտագիր

Թվային տեխնոլոգիաները ունեն մեծ ներդրում յուրաքանչյուրի կյանքում՝ բջջային ինտերնետից մինչև արհեստական ինտելեկտ: Քանի որ թվային տեխնոլոգիաները մշտապես բարելավում են կազմակերպությունները, ավելի ու ավելի են ներգրավում դրանք, բայց յուրաքանչյուր նոր ծրագրի ներդրում ունի որոշակի ռիսկ, և այդ ռիսկերը զսպելու համար անհրաժեշտ են նաև լավ մասնագետներ:

Ներքին աուդիտը՝ որպես վերահսկիչ մարմին, պետք է հետազոտի, բացահայտի, վերլուծի և գնահատի թվային ռիսկերը՝ համակարգելով դրանք: Հոդվածում նկարագրված են ներքին աուդիտում փոփոխությունները, որոնք կնպաստեն ռիսկերի կանխարգելմանը: Պարզ է դառնում, որ ներքին աուդիտում թվային նորարարությունների ներդրման ժամանակ խնդիրները բնութագրվում են իրենց ունիվերսալությամբ և բարդությամբ. խիստ ապակառուցողական են: Քանի որ ներքին աուդիտի առաջնային խնդիրն է ռիսկերի կառավարումը, առաջարկվում է նոր թվային նորարարությունների ստեղծում և ներգրավում այդ համակարգում: Տեղեկատվական անվտանգության հիմնական նպատակն է՝ ապահովել ընկերության գործնական միջավայրի, տեղեկատվական հոսքերի և տեղեկատվական գործընթացների անվտանգությունը:

Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգը ստեղծվել է՝ ապահովելու տեղեկատվական անվտանգությունը՝ վերլուծելով, պարբերաբար վերանայելով և հետևողականորեն բարելավելով դրա իրականացման համար կիրառվող միջոցները: Ընկերության կառավարման ընդհանուր համակարգի անբաժանելի մաս է կազմում տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգը:

Տեղեկատվական անվտանգությանը վերաբերող և ընկերության խորհրդի կողմից չհաստատված ներքին իրավական ակտերը հաստատվում են ընկերության գործադիր մարմնի կողմից:

Բանալի բառեր և բառակապակցություններ. թվային տեխնոլոգիաներ, արհեստական ինտելեկտ, տեղեկատվական տեխնոլոգիաները ներքին աուդիտում, ռիսկերի կառավարում:

ОСОБЕННОСТИ ИСПОЛЬЗОВАНИЯ ИНФОРМАЦИОННЫХ ТЕХНОЛОГИЙ В СИСТЕМЕ ВНУТРЕННЕГО КОНТРОЛЯ

СОНА СТЕПАНЯН

Армянский государственный экономический университет
аспирант кафедры управленческого учета и аудита
sona.stepanyan96@mail.ru

Аннотация

Цифровые технологии оказывают огромное влияние на жизнь каждого человека, от мобильного интернета до искусственного интеллекта. Поскольку цифровые технологии постоянно развиваются, организации становятся все более внедряют их, но внедрение каждой новой программы сопряжено с определенными рисками, и для устранения этих рисков нужны хорошие специалисты. Как надзорный орган он должен расследовать, выявлять, анализировать и оценивать цифровые риски, координируя их. В статье описаны изменения внутреннего аудита, которые помогут предотвратить риски. Становится понятно, что при внедрении цифровых инноваций во внутренний аудит проблемы характеризуются своей универсальностью и носят крайне деструктивный характер. Поскольку первоочередной задачей внутреннего аудита является управление рисками, предлагается создавать новые цифровые инновации и вовлекать их в систему. Основной целью информационной безопасности является обеспечение безопасности бизнес-среды компании, информационных потоков и информационных процессов. Система управления информационной безопасностью предназначена для обеспечения информационной безопасности путем анализа, регулярного пересмотра и последовательного улучшения средств, используемых для ее реализации. Система управления информационной безопасностью является неотъемлемой частью общей системы управления компанией. Внутренние правовые акты по обеспечению информационной безопасности, не утвержденные правлением общества, утверждаются исполнительным органом общества.

Ключевые слова и словосочетания: цифровые технологии, искусственный интеллект, информационные технологии во внутреннем аудите, управление рисками.

FEATURES OF THE USE OF INFORMATION TECHNOLOGIES IN THE INTERNAL CONTROL SYSTEM

SONA STEPANYAN

Armenian State University of Economics
Department of Managerial Accounting and Auditing, PhD Student
sona.stepanyan96@mail.ru

Abstract

Digital technologies have a huge impact on the life of every person, from mobile Internet to artificial intelligence. As digital technologies are constantly evolving, organizations are becoming more involved, but the introduction of each new program comes with certain risks, and good specialists are needed to address these risks. As a supervisory authority, it must investigate, identify, analyze and evaluate digital risks by coordinating them. The article describes changes to an internal audit that will help prevent risks. It becomes clear that when introducing digital innovations in internal audit, the problems are characterized by their universality and are extremely destructive. Since the primary task of internal audit is risk management, it is proposed to create new digital innovations and involve them in the system. The main goal of information security is to ensure the security of the company's business environment, information flows, and information processes. The information security management system is designed to ensure information security by analyzing, regularly reviewing, and consistently improving the means used to implement it. The information security management system is an integral part of the overall company management system. Internal legal acts related to information security are not approved by the company board but are approved by the company's executive body.

Keywords and phrases: Digital technologies, artificial intelligence, information technology in internal audit, risk management.

Ներածություն

Տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) ոլորտում նորարարությունները, ինչպես նաև դրանց կիրառությունը տնտեսության տարբեր ճյուղերում, վերջին տասնամյակներում բնորոշվում են համաշխարհային տնտեսության զարգացման կտրուկ աճով: Տեղեկատվական անվտանգության համակարգի գործունեությունը կառավարվում է ընկերության խորհրդի կողմից սահմանված տեղեկատվական անվտանգության քաղաքականությամբ, որում սահմանվում են ընկերության տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում ընկերության կողմից կիրառվող՝ տեղեկատվական ռեսուրսների և տեխնիկաձրագրային համակարգերի կառավարման, տեղեկատվության մշակման, փոխանցման և տրամադրման հիմնադրույթները:

Տեղեկատվական անվտանգության քաղաքականությունը հանդիսանում է ընկերության տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգի հիմնական ներքին նորմատիվ իրավական ակտը և կանխորոշում է ՏԱԿՀ-ի գործունեության տեսլականը:

Տեղեկատվական անվտանգությանը վերաբերող և ընկերության խորհրդի կողմից պարտադիր հաստատման ոչ ենթակա ներքին իրավական ակտերը հաստատվում են ընկերության գործադիր մարմնի կողմից:

Տեղեկատվական անվտանգության քաղաքականությունը պարտադիր է կիրառման ընկերության բոլոր աշխատակիցների, ինչպես նաև ընկերության գործարար նպատակների և գործընթացների իրականացմանն առջվող ցանկացած ֆիզիկական և իրավաբանական անձանց (ծառայություններ մատուցող անձիք, խորհրդատուներ և այլն) նկատմամբ՝ ընկերության տեղեկատվության հետ առնչվելու չափով:

Տեղեկատվական անվտանգության քաղաքականությունը պետք է կիրառվի գործարար նպատակների իրականացմանն ուղղված թղթային և էլեկտրոնային բոլոր ակտիվների, դրանց ստացման, ստեղծման, օգտագործման, պահպանման, փոխանցման, ոչնչացման գործընթացների նկատմամբ, ինչպես նաև գործարար և աշխատանքային գործընթացներին առնչվող տեղեկատվության բանավոր արտահայտման կամ փոխանցման ժամանակ:

Տեղեկատվական անվտանգության քաղաքականության կիրառման հիմնական նպատակն է ապահովել ընկերության գործնական միջավայրի, տեղեկատվական հոսքերի և տեղեկատվական գործընթացների անվտանգությունը:

Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգը (ՏԱԿՀ) կոչված է ապահովելու տեղեկատվական անվտանգությունը՝ վերլուծելով, պարբերաբար վերանայելով և հետևողականորեն բարելավելով դրա իրականացման համար կիրառվող միջոցները:

Հետազոտության մեթոդաբանությունը

Ընկերության տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգը հանդիսանում է ընկերության կառավարման ընդհանուր համակարգի անբաժանելի մաս: ՏԱԿՀ-ի գործունեությունը կարգավորվում է տեղեկատվական անվտանգության քաղաքականությամբ և ընկերության ՏԱԿՀ-ին վերաբերող այլ իրավական ակտերով:

Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգը ներառում է **[1, էջ 46-49]**՝

1. Ընկերության վարչակազմակերպական ռեսուրսները՝ տեղեկատվական անվտանգության ոլորտում հստակ բաշխված դերերով և պարտավորություններով,

2. Տեղեկատվական ակտիվները, մասնավորապես՝ «Ընկերության կողմից օգտագործվող տեղեկատվության հավաքման, ստեղծման, մշակման, պահպանման, փոխանցման և/կամ ոչնչացման գործընթացների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվական համակարգ, ցանցային սարքավորում, գործառնական ծրագրային համակարգ, տվյալների շտեմարան,

ծրագրային ապահովում, փաստաթուղթ կամ փաստաթղթերի հավաքածու, տեղեկատվության պահպանման և մշակման միջոց, ինչպես նաև՝ տարածք և օժանդակ ծառայություններ»,

3. Տեղեկատվական անվտանգության կառավարման միջոցները, մասնավորապես՝

- SU քաղաքականությունը.

- տեղեկատվական անվտանգության ռիսկերի բացահայտման, վերլուծության և գնահատման ընթացակարգերը.

- տեղեկատվական միջադեպերի կառավարման ընթացակարգերը.

- արտակարգ իրավիճակներում տեղեկատվական անվտանգության ապահովման ընթացակարգերը.

- տեղեկատվական անվտանգության համակարգի գործունեության պլանավորման, մշտադիտարկման, վերանայման և բարելավման ընթացակարգերը,.

- SUԿՀ-ի գործունեությունը կարգավորող իրավական ակտերը:

SUԿՀ-ի կարգավորման հիմնական ուղղություններն են [2, էջ 122-127]՝

- պլանավորումը,
- գործարկումը,
- մշտադիտարկումը,
- բարելավումը:

SUԿՀ-ի գործունեությունը կարգավորվում է հետևյալ սկզբունքներով՝

1. Հստակ սահմանվում և պարբերաբար վերանայվում են SUԿՀ-ի ազդեցության շրջանակները և սահմանները՝ հիմք ընդունելով SU ռիսկերի բացահայտման, վերլուծության և գնահատման արդյունքները, ինչպես նաև՝ տեղեկատվության պաշտպանության անընդհատության անհրաժեշտությունը: Տեղեկատվական անվտանգության ռիսկերի դիմագրավման և վերահսկման միջոցներն ընտրվում են այնպես, որ հնարավորինս ապահովեն տեղեկատվական անվտանգության ամբողջականությունը, միջոցների օրինականությունը, արդիականությունը, կատարելագործման հնարավորությունները:

2. Կիրառման դյուրինությունը՝ հիմք ընդունելով տեղեկատվական անվտանգության ապահովման նպատակով ծախսվող միջոցների, տեղեկատվական ռեսուրսների և հնարավոր վնասների չափի հարաբերակցության վերլուծության արդյունքները:

3. SU ապահովման միջոցների մշակման և համապատասխան միջոցառումների իրագործման, ինչպես նաև տեղեկատվական անվտանգության ապահովման միջոցների շահագործման գործընթացներում անպայման ներգրավվում են անհրաժեշտ մասնագիտացում և բավարար փորձառություն ունեցող անձինք և/կամ կազմակերպություններ:

4. SU ռիսկերի բացահայտման, վերլուծության, գնահատման, դիմագրավման և վերահսկման մեթոդները և միջոցներն ենթակա են անընդհատ կատարելագործման՝ հաշվի առնելով SUԿՀ-ի վերահսկման (այդ թվում՝ աուդիտի) արդյունքները, տեղի ունեցած միջադեպերը, հայտնաբերված խոցելիությունները, կիրառվող ուղղիչ և կանխարգելիչ գործողությունները, շահագրգիռ կողմերից ստացված հետադարձ կապը, ինչպես նաև՝ գիտատեխնիկական առաջընթացները և ժամանակակից տեխնոլոգիաների հասանելիությունը:

5. Ընկերության տեղեկատվության և այն մշակող համակարգերի անվտանգության ոլորտում ներգրավված անձանց համապատասխան իրավասությունները տրամադրվում են՝ միայն աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով, միաժամանակ հստակ սահմանելով այդ իրավասություններից բխող պատասխանատվությունները, իսկ ընկերությունը հետևողականորեն միջոցներ է ձեռնարկում տեղեկատվական անվտանգության ոլորտում իր աշխատակիցների գիտելիքի մակարդակի շարունակական բարձրացման համար:

SUԿՀ-ի արդյունավետ գործունեությունն ապահովելու նպատակով ընկերության վարչակազմակերպչական կառուցվածքը սահմանվում է այնպես, որ հնարավորին չափ համապատասխանի ընկերության առջև դրված խնդիրներին և իրավական ակտերի պահանջներին:

Ընկերության բոլոր աշխատակիցները իրենց իրավասությունների շրջանակներում պատասխանատու են ընկերության տեղեկատվական անվտանգությանը վերաբերող պահանջների կատարման և անվտանգության միջոցների պատշաճ կիրառման համար **[3, էջ 88-93]**:

SUԿՀ-ի արդյունավետ գործունեության համար հիմնական պատասխանատուներն են՝

- 1) ընկերության ղեկավարությունը.
- 2) տեղեկատվական անվտանգության գործընթացների կարգավորման համար պատասխանատու ստորաբաժանումը (անձը).
- 3) տեղեկատվական տեխնոլոգիաների կիրարկման համար պատասխանատու ստորաբաժանումը (SS ծառայությունը).
- 4) մարդկային ռեսուրսների կառավարման ստորաբաժանումը (ՄՌԿԿԶ բաժին):

Ընկերության ղեկավարությունը պետք է աջակցի SUԿՀ-ի պլանավորման, գործարկման, մոնիթորինգի, աուդիտի և բարելավման աշխատանքներին:

Հիմք ընդունելով SU ռիսկերի վերլուծության արդյունքները՝ ընկերության ղեկավարությունը պետք է ձեռնարկի անհրաժեշտ և բավարար բոլոր գործողությունները՝ SUԿՀ-ի գործունեության համար անհրաժեշտ բոլոր միջոցներն ապահովելու համար **[4, էջ 56-58]**:

Ընկերության ղեկավարությունը պարբերաբար, բայց ոչ ուշ, քան տարին մեկ անգամ, մինչև ռազմավարական ծրագրի հաստատումը (վերանայումը), պետք է վերանայի SUԿՀ-ի գործունեությունը բարելավման ուղիները բացահայտելու նպատակով:

Ընկերության ղեկավարության կողմից պարտադիր դիտարկման են ենթակա հետևյալ հարցերը՝

1. նախորդ դիտարկման ընթացքում ընդունված որոշումների կատարողականների կարգավիճակները.
2. ռիսկերի գնահատման արդյունքները և այդ ռիսկերին դիմագրավման պլանի և կատարողականների կարգավիճակները.
3. SUԿՀ-ի բարելավման վերաբերյալ առաջարկները:

Ընկերության ղեկավարությունն ապահովում է SUԿՀ-ի աուդիտորական ստուգումների անցկացումը (ներքին աուդիտ, վկայագրող մարմնի կողմից անցկացվող աուդիտ)՝ պլանավորված պարբերականությամբ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև SUԿՀ-ի անկախ վերլուծությունը մասնագիտացված ընկերությունների կողմից:

Ընկերության տեղեկատվական անվտանգության գործընթացների կարգաբերման համար պատասխանատու ստորաբաժանումը (այսուհետ նաև՝ SU պատասխանատու կամ SUՊ) կազմվում է մեկ կամ մի քանի աշխատակիցներից և իրականացնում է տեղեկատվական անվտանգության քաղաքականությամբ սահմանված գործընթացի իրականացման վերահսկումը, տեղեկատվական անվտանգության ռիսկերի կառավարումը, տեղեկատվական անվտանգության խախտման միջադեպերի վարումը և քննության իրականացումը, տեղեկատվական ակտիվների հանդեպ հասանելիությունների կառավարման գործընթացում մասնակցությունը և վերահսկումը, ինչպես նաև՝ օգտագործողների ուսուցումը և իրազեկության մակարդակի բարձրացումը **[5, 98-102]**:

SS ստորաբաժանումն իրականացնում է ընկերության տեղեկատվության մշակման ընդհանուր և առանձնացված միջոցների կարգաբերումը:

ՄՌԿ ստորաբաժանումը կարգաբերում է ընկերության ներսում և երրորդ կողմ հանդիսացող անձանց հետ հարաբերություններում տեղեկատվական անվտանգության հարցերում ընկերության աշխատակիցների իրավասությունները և պարտավորությունները, ինչպես նաև ապահովում է այդ հարցերի վերաբերյալ ընկերության աշխատակիցների իրազեկվածությունը և շարունակական ուսուցումը:

Տեղեկատվական անվտանգության ռիսկերը նվազեցնելու նպատակով ընկերությունը՝ ելնելով իր գործառնություններից, հնարավորին չափ խմբավորում և տարանջատում է իր տեղեկատվական հոսքերը և ակտիվները՝ դրանց համար ձևավորելով հնարավորին չափ նվազ փոխազդող, առանձնացված և թիրախային հասանելիության միջավայրեր (հիմնական գործառնական ծրագրերը սպասարկող միջավայր, ընդհանուր օգտագործման ներքին տեղեկատվական միջավայր, հիմնական տեխնիկածրագրային ակտիվների միջավայր, արխիվներ, ներքին ցանց, արտաքին ցանց, ֆիզիկական անվտանգության համակարգ և այլն):

Ընկերության համար երրորդ կողմ հանդիսացող անձանց հետ հարաբերություններում ընկերությունը հնարավորինս առաջնորդվում է իր SU քաղաքականությամբ՝ առանձնակի ուշադրության արժանացնելով սահմանափակ շրջանառության (գաղտնի) տեղեկատվության պահպանմանը:

Եզրակացություն

Ուսումնասիրելով ներքին վերահսկողության համակարգում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման առանձնահատկությունները՝ կարելի է ընդգծել հետևյալ առանձնահատկությունները, որ տեղեկատվական անվտանգության համակարգի գործունեությունը կառավարվում է ընկերության խորհրդի կողմից սահմանված տեղեկատվական անվտանգության քաղաքականությամբ, որում սահմանվում է ընկերության տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում ընկերության կողմից կիրառվող՝ տեղեկատվական ռեսուրսների և տեխնիկածրագրային համակարգերի կառավարմամբ. ներքին վերահսկողության համակարգում սա մեծ կարևորություն ունի, քանի որ ընկերության տեղեկատվության և այն մշակող համակարգերի անվտանգության ոլորտում ներգրավված անձանց համապատասխան իրավասությունները տրամադրվում են՝ միայն աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով. միաժամանակ հստակ սահմանվում է այդ իրավասություններից բխող պատասխանատվությունը:

Ընկերությունը հետևողականորեն միջոցներ է ձեռնարկում՝ տեղեկատվական անվտանգության ոլորտում իր աշխատակիցների գիտելիքների մակարդակի շարունակական բարձրացման համար: Ընկերության ղեկավարությունը պետք է աջակցի ՏԱԿ-ի պլանավորման, գործարկման, մոնիթորինգի, աուդիտի և բարելավման աշխատանքներին:

Հիմք ընդունելով ՏԱ ռիսկերի վերլուծության արդյունքները՝ ընկերության ղեկավարությունը պետք է ձեռնարկի անհրաժեշտ և բավարար բոլոր գործողությունները՝ ՏԱԿ-ի գործունեության համար անհրաժեշտ բոլոր միջոցներն ապահովելու համար:

Ընկերության ղեկավարությունը պարբերաբար, բայց ոչ ուշ, քան տարին մեկ անգամ, մինչև ռազմավարական ծրագրի հաստատումը (վերանայումը), պետք է վերանայի ՏԱԿ-ի գործունեությունը բարելավման ուղիները բացահայտելու նպատակով:

Գրականության ցանկ

- Khalin V.G., Chernova G.V., Digitalization and Its Impact on the Russian Economy and Society: Advantages, Challenges, Threats and Risks. Administrative Consulting. (10) (2018) 46-63. DOI: 10.22394/1726-1139-2018-10-46-63
1. Li F. C., Thoughts on Several Issues Concerning Deepening the Work of Internal Audit, China Audit Report, 008th edition
 2. COSO. Enterprise Risk Management — Integrated Framework. 2004(9)
 3. IIA. International Internal Audit Professional Practice Framework. 2011(1)
 4. Chartered Institute of Internal Auditors UK (31 August 2017), The role of internal audit in digitalization. In: <https://www.iaa.org.uk/resources/technical-blog/the-role-of-internal-audit-in-digitalisation/>.

ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ, ԴՐԱ ԿԱՊԸ ԵՎ ՓՈԽՀԱՐԱՔԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ
հայցորդ
ashothovhannisyan1998@gmail.com

Համառոտագիր

Պետության և հասարակության զարգացման պատմական բոլոր փուլերում՝ մինչև նորագույն ժամանակների սկիզբը, արտոնություններով օժտված էին բացառապես պետական, հասարակական կամ ֆինանսական որոշակի դիրք զբաղեցնող անձինք, որոնք այդ արտոնությունները ծառայեցնում էին ոչ թե պետական և հասարակական, այլ զուտ անձնական շահերին: Այդ արտոնությունների հիմնական նպատակը և փաստացի գործառույթը արտոնությամբ օժտված սուբյեկտի և հասարակ քաղաքացու անհավասար լինելու փաստը ընդգծելու մեջ էր: Այդ արտոնություններն օգնում էին ազնվականների հարուստ դասին՝ ճնշելու աղքատների՝ շահագործվողների դիմադրությունը: 19-րդ դարում սկիզբ առած իրավաքաղաքական մտքի շարունակական զարգացումը հանգեցրեց արտոնությունների նորովի ընկալմանը և արժևորմանը, որի արդյունքում պարզ դարձավ, որ իրավական արտոնությունները, որոնք ամրագրված են օրենքով և հետապնդում են իրավաչափ և հանրօգուտ նպատակ, ոչ միայն չեն հակասում իրավական հավասարության սկզբունքին, այլև նպաստում են դրա հաստատմանը: Իրավահավասարությունը նշանակում է արտոնությունների արգելում, իսկ փաստացի սուբյեկտիվ իրավունքների մեջ անձանց հավասարեցումը հնարավոր է իրականացնել միայն արտոնություններ տրամադրելու միջոցով:

Իրավական հավասարությունը և իրավական արտոնությունները ունեն պատմական խորը արմատներ. անցել են պատմական զարգացման և կատարելագործման բավականին երկար ուղի: Սույն հետազոտության մեջ հեղինակը հետազոտել է «իրավական հավասարությունը» և «արտոնությունները»՝ որպես իրավական կատեգորիաներ և իրավական արտոնությունները դասակարգել՝ ըստ հետևյալ տեսակների՝ արտոնություններ, առանձնաշնորհություններ և անձեռնմխելիություններ: Բացի վերոգրյալից՝ հեղինակը անդրադարձել է նաև իրավական արտոնությունների և իրավական հավասարության սկզբունքի միջև կապին և փոխհարաբերակցությանը:

Ամփոփելով հեղինակի կողմից իրականացված հետազոտական աշխատանքը՝ գտնում ենք, որ «իրավական հավասարության» և «արտոնությունների»՝ որպես իրավական կատեգորիաների բացահայտումը և մանրակրկիտ ուսումնասիրությունը կնպաստի հայրենական իրավաբանական գրականության մեջ այդ տերմինների ճիշտ և տեղին օգտագործմանը և իրավաստեղծ պրակտիկայում արտոնությունների համաչափ սահմանմանը՝ ելնելով դրանց նպատակներից, չխախտելով արտոնությունների և իրավահավասարության սկզբունքի միջև առկա փխրուն հավասարակշռությունը:

Բանալի բառեր և բառակապակցություններ. իրավական հավասարություն, իրավահավասարություն, իրավունք, արտոնություններ, իրավական արտոնություններ, անձեռնմխելիություն, իմունիտետ, առանձնաշնորհություն, առավելություն:

ПРИНЦИП ПРАВОВОГО РАВЕНСТВА, ЕГО СВЯЗЬ И СООТНОШЕНИЕ С ПРАВОВЫМИ ЛЬГОТАМИ

АШОТ ОГАННИСЯН

Национальная академия наук Республики Армения
Института философии, социологии и права
соискатель
ashothovhannisyanyan1998@gmail.com

Аннотация

На всех исторических стадиях развития государства и общества, до начала новейшей эры, льготами пользовались исключительно лица, занимающие определенное положение в государственной, общественной или финансовой сфере, а они использовали данные льготы не в государственных или общественных, а исключительно в личных целях. Основной целью и фактической функцией данных льгот являлось обозначение факта неравенства привилегированного субъекта и простого гражданина. Льготы помогали представителям высшего класса подавлять сопротивление низшего класса. Постоянное развитие правополитической идеи, возникшее в 19-ом веке, привело к переосмыслению и оцениванию льгот, в результате чего выяснилось, что правовые льготы, установленные законом и преследующие правомерную и благотворную цель, не только не противоречат принципу правового равенства, но и способствуют его утверждению. Правовое равенство означает запрет льгот, а уравнивание лиц в фактически субъективных правах возможно только путем предоставления льгот.

Правовое равенство и правовые льготы имеют глубокие исторические корни и прошли довольно долгий путь исторического развития и усовершенствования. В настоящем анализе автор исследовал “правовое равенство” и “льготы” как правовые категории, а правовые льготы классифицировал по следующим видам: льготы, привилегии и неприкосновенность. Помимо вышеизложенного, автор исследовал также связь и взаимоотношения между правовыми льготами и принципом правового равенства.

Обобщая выполненную автором исследовательскую работу, считаем, что выявление и подробное исследование “правового равенства” и “льготы” в качестве правовых категорий способствует точному и целесообразному применению данных терминов в отечественной юридической литературе и гармоничному определению привилегий в законодательной практике, исходя из их целей, не нарушая при этом хрупкое равновесие льгот и равноправия.

Ключевые слова и словосочетания: правовое равенство, равноправие, право, льготы, правовые льготы, неприкосновенность, иммунитет, привилегии, преимущества.

THE PRINCIPLE OF LEGAL EQUALITY, ITS CONNECTION AND RELATIONSHIP WITH LEGAL PRIVILEGES

ASHOT HOVHANNISYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia

Institute of Philosophy, Sociology and Law

PhD applicant

ashothovhannisyanyan1998@gmail.com

Abstract

In all the historical stages of the development of the state and the society till the beginning of modern era, people having certain state, public or financial positions were exclusively endowed with benefits and were applying for those benefits not for state and public, but only for personal interests. The main purpose of those benefits and the actual function was to emphasize the fact of inequality of the privileged subject and the ordinary citizen. Those benefits helped the wealthy aristocracy to suppress the resistance of the poor, the exploited people. The continuous development of legal-political thought started in the 19th century led to a new perception and appreciation of benefits, as a result of which it became clear that legal benefits, which are recorded by law and pursue a legitimate and socially beneficial purpose, not only do not contradict the principle of legal equality but also contribute to its establishment. Equality before the law means prohibition of benefits, and the equalization of people in de facto subjective rights can only be achieved by granting the benefits.

The equality before the law and the legal benefits have historically profound roots and they have undergone a rather long path of historical development and improvement. In this research, the author studied “Equality before the law” and “Benefits” as legal categories and classified the legal benefits according to the following types: benefits, priorities, and inviolabilities. Apart from the mentioned, the author also referred to the relationship between legal privileges and the principle of legal equality.

Summarizing the research work performed by the author, we have found that the revelation and detailed study of the “equality before the law” and “benefits” as legal categories will contribute to the correct and appropriate use of those terms in native legal literature and the proportional definition of benefits in law-making practice considering its objectives, without disturbing the fragile balance between privileges and the principle of equality.

Keywords and phrases: equality before the law, legal equality, law, benefits, legal benefits, inviolability, immunity, privileges, advantage.

Ներածություն

Այս թեմայի արդիականությունը, տեսական և գործնական կարևորությունն այն է, որ հայրենական իրավաբանական գրականության մեջ «իրավական հավասարությունը» և «արտոնությունները» որպես իրավական կատեգորիաներ, բավականին քիչ են ուսումնասիրված, քիչ է ուսումնասիրված նաև այդ իրավական կատեգորիաների միջև կապը և փոխհարաբերակցությունը: Արտոնությունները մեր հասարակության լայն շերտերում մինչ օրս ընկալվում են որպես բացասական երևույթներ, որոնք պայմանավորված են իրավական արտոնությունների, մասնավորապես՝ իրավունքում արտոնությունների նպատակների և գործառույթների ուսումնասիրված չլինելու հանգամանքով, ուստի այս թեմայի ուսումնասիրությունը կհանգեցնի իրավական արտոնությունների հանրագուտ նպատակների և գործառույթների բացահայտմանը՝ դրանով իսկ լույս սփռելով այդ հակասական, բայց չափազանց կարևոր և անհրաժեշտ իրավական կարգավորման միջոցներից՝ իրավական արտոնությունների վրա:

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել իրավական հավասարության և իրավական արտոնությունների առաջացման պատմական նախադրյալները և զարգացման փուլերը, նպատակները և գործառույթները, իրավական արտոնությունների տեսակները, ենթատեսակները և դրանց նմանությունները և տարբերությունները, ինչպես նաև՝ իրավական արտոնությունների և իրավական հավասարության սկզբունքի միջև կապը և փոխհարաբերակցությունը:

Տեսաճեթողական հիմքերը, ուսումնասիրության մեթոդները

Աշխատանքի համար տեսական հիմք են հանդիսացել մի շարք հայրենական և արտասահմանյան գիտնականների տարաբնույթ աշխատությունները, միջազգային և ներպետական օրենսդրությունը: Աշխատանքի համար տեղեկատվական հիմք են հանդիսացել համացանցային մի շարք կայքեր և տեղեկատվական այլ աղբյուրներ:

Սույն աշխատության համար մեթոդաբանական հիմք են հանդիսացել ինչպես համագիտական՝ մատերիալիստական, համակարգակառուցվածքային, համեմատական-իրավական, սոցիոլոգիական մեթոդները, այնպես էլ տրամաբանական մեթոդները՝ սինթեզը, անալիզը, անալոգիան, ինդուկցիա, դեդուկցիան և մի շարք այլ մեթոդներ:

Իրավական հավասարության սկզբունքը, դրա կապը և փոխհարաբերակցությունը իրավական արտոնությունների հետ

Հավասարության գաղափարներն իրենց արմատներով գնում են դեպի խորը պատմություն: Դրանք հանդիսանում են ոչ միայն իրավագիտության, այլ նաև՝ այլ սոցիալ-հումանիտար գիտությունների, մասնավորապես՝ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և այլ գիտությունների ուսումնասիրությունների օբյեկտներ: Հավասարության խնդիրները շոշափում են բոլոր քաղաքաիրավական ուսմունքները:

Հավասարության ուսումնասիրությանը նվիրված գիտական գրականության վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել այն մասին, որ այդ խնդիրը դասվում է սոցիալական, քաղաքական, իրավական և բարոյական փիլիսոփայության դասական թեմատիկայի շարքը: Նրա առարկան ընդգրկում է հասարակական աշխարհայեցողության, մարդկանց վարքագծի նորմատիվաարժեքային կարգավորման և դրանց հասարակական պրակտիկայի համապատասխան ոլորտները: Հավասարությունը դիտարկվում է և՛ որպես համահունչ կառուցված հասարակության իդեալ, և՛ որպես մարդկանց կենսագործունեության կարգավորման նորմատիվային համակարգերի ձևավորման և գործունեության հիմնաքարային, անբաժանելի սկզբունք: Իրավագիտության մեջ իրավական հավասարության խնդիրը դասվում է ավանդական խնդիրների շարքը: Հասարակությունը միատարր, դիֆուզ զանգված չէ, նրանում միշտ առկա են եղել տարբերակիչ նախանշաններ, որոնք բավականին շատ են և կարող են բացահայտվել տարբեր հիմքերով՝ ցուցադրելով իրենց դրական և բացասական գործառույթները:

Հավասարությունը անքակտելի է, օրգանապես կապված է իրավունքի էության, գոյության նրա ներքին և արտաքին ձևերի հետ: Իրավական հավասարության նկատմամբ իրավական գիտության մշտական հետաքրքրությունը պայմանավորված է ոչ միայն իրավագիտության

առարկայի գլոբալ կողմերի հետ այդ երևույթի կայուն կապվածության, այլ նաև՝ կոնկրետ պետաիրավական ինստիտուտների կայացմանը նրա մասնակցության հետ, ինչը ոչ պակաս կարևոր է: «Մեկ ֆունդամենտալ քաղաքական և իրավական սկզբունքի (օրինակ՝ օրենքի առջև հավասարության) ճանաչումը և կյանքի կոչումը, - գրում է Վ.Ն.Կուրդյավցևը, իր հերթին, համապատասխանաբար, հանգեցնում է այլ իրավական նորմերի և ինստիտուտների կառուցմանը»:

«Հավասարություն» հասկացությունը հանդիսանում է սոցիալական նորմերի և միջոցների օգնությամբ ամրագրված հավասարեցվող երևույթների ընդհանրացման արդյունք: Եթե հավասարությունն իր գոյության նորմատիվային ձևը ձեռք է բերում իրավական օրենքի օգնությամբ, ապա այն պետք է դիտարկվի որպես իրավական հավասարություն, իսկ եթե այդ գործառույթը կատարում են էթիկայի նորմերը, ապա այդ դեպքում առկա է բարոյական հավասարությունը, սակայն, ինչ տեսակի էլ պատկանի վերլուծության ենթարկվող սոցիալական հավասարությունը, բոլոր դեպքերում այն հանդես է գալիս որպես երկու կամ ավելի երևույթների միասնական հիմքով հավասարեցման արդյունք: Այդ իմաստով այն միշտ կարող է ընկալվել որպես նույնականություն: Այդ պատճառով կարելի է հաստատել, որ իրավական հավասարությունը մշտապես գոյություն ունի որպես ընդհանրացված արստրակտության նորմատիվաիրավական արտահայտություն անհատի և սոցիալական խմբերի հանրային նշանակության շահերի և ձգտումների նույնականության հարաբերություններում:

Իրավական հավասարությունն իրենից ներկայացնում է համալիր իրավական երևույթ: Այն համապատասխանում է հասարակության և պետության զարգացման մակարդակին, պրակտիկայում իրացվում է այն ծավալներով և այնպիսի պայմաններով, որոնք որոշվում են գոյություն ունեցող նորմատիվաիրավական հիմքով, իրավական համակարգերի առանձնահատկություններով, ինչպես նաև՝ ժողովրդի ձևավորված ավանդույթներով, սովորույթներով և ազգային իրավական մենթալիտետով: Լիարժեք հավասարություն գոյություն չունի: «Բոլորը բոլորի հետ՝ ամբողջովին հավասար» հասարակությունը դա միջ է, որը չի կարող իրողություն դառնալ պրակտիկայում: Դա հաստատվում է փաստացի հավասարության մասին ուտոպիական ուսմունքներով: Պոզիտիվ իրավունքի համամարդկային բնույթի ձևավորումը հանգեցրեց դասային, դասակարգային առանձնաշնորհությունների, առավելությունների բացառմանը, օրենքի առջև բոլոր մարդկանց ֆորմալ հավասարության հաստատմանը, մարդկանց իրավունքների և ազատությունների առաջնդմանը ավելի առաջնային դիրքեր իրավական համակարգում:

ՀՀ օրենսդրությունը, ճանաչելով միջազգային իրավունքի սկզբունքները, սահմանում և պաշտպանում է միանման իրավունքներ, ազատություններ, օրինական շահեր և պարտականություններ հնարավորին չափ առավել մեծ թվով իրավունքի սուբյեկտների համար: Դրա մեջ է իրավական հավասարության սկզբունքը:

«Հավասարություն» հասկացությունը՝ որպես իրավական կատեգորիա, անցել է կայացման և զարգացման երկար ճանապարհ: Անտիկ ժամանակներում գոյություն է ունեցել պատկերացում տիեզերքի ընդհանուր օրենքի, հասարակության հավասարակշռության և շրջակա միջավայրի մասին [22, էջ 18]: Այդ պատճառով հավասարությունը դիտարկվում էր որպես խախտված կարգը վերականգնելու ի վերուստ հաստատված միջոց: Ավելի ուշ քրիստոնյա մտածողները հավասարության մասին պատկերացումը ամրագրեցին «բոլոր մարդիկ հավասար են Աստծո առջև» թեզիսով: Դիմելով հարուստ մարդկանց, որոնց ենթակայության տակ կային ծառաներ, Պավել առաքյալը կոչ է անում չափից ավելի խիստ չվերաբերվել նրանց, հիշեցնելով, որ թե՛ հարուստների, թե՛ աղքատների համար «երկնքում Աստված կա, որը անաչառ է»: Արիստոտելը, Մարկոս Ավրելիոսը, Թովմա Աքվինացին պնդում էին «ընդհանուր բարօրության» հասնելու անհրաժեշտությունը, ընդգծում էին, որ բարօրությունը «հավասարապես արդարացի է բոլորի համար» [21, էջ 92]:

Որպես տալիոնի (հանցագործության համար համարժեք հատուցման) սկզբունք հավասարության կատեգորիան կարելի է տեսնել դեռ Մովսեսի հնգագրքում, Համմուրաբիի և Մանուի օրենքներում: Հին Հռոմում իրավունքը ներկայանում էր որպես «ճշմարտության և արդարության արվեստ»: Հին Հռոմում Հռոմի քաղաքացիների իրավահավասարության սկզբունքի

մասին է վկայում մեզ հասած հայտնի լատինական արտահայտությունը՝ «Primus inter pares»-ը, որը թարգմանվում է որպես «Հավասարների մեջ առաջինը»: Մի տարբերակի համաձայն՝ հռոմեացիները այդպես անվանում և մեծարում էին Հուլիոս Կեսարին՝ Հռոմի քաղաքացիների մեջ առաջինին, իսկ մեկ այլ տարբերակի համաձայն՝ այդպես դիմում էին Հռոմի առաջին կայսրին՝ Օկտավիան Ավգուստին, որին շնորհված էր Սենատի նիստերին առաջինը ելույթ ունենալու մեծ պատիվը: Այս լատինական արտահայտությունն ընդգծում էր Հին Հռոմի քաղաքացիների հավասարության սկզբունքը և այդպիսով՝ ամրագրում նրանցից յուրաքանչյուրի Կեսար դառնալու հնարավորությունն ու իրավունքը: Իրավունքի հետագա զարգացումն ընթացավ տղամարդու և կնոջ, տարբեր ռասաների, ազգությունների, կրոնների ներկայացուցիչների և այլնի միջև ֆորմալ հավասար ազատության (ֆորմալ հավասարություն) հաստատման ուղիով: Իրավական հավասարությունն իրավունքում վերջնականորեն ձևավորվել և իր պաշտոնական ամրագրումն է ստացել ֆրանսիական բուրժուական հեղափոխության արդյունքում 1789 թվականին ընդունված «Մարդու և քաղաքացու իրավունքների» հռչակագրում, ինչպես նաև՝ ԱՄՆ-ի և Ֆրանսիայի ավելի վաղ շրջանի սահմանադրությունների, առավել ուշ բուրժուական սահմանադրությունների մեջ:

Նոր ժամանակներում բոլոր անհատների հավասարությունը իրավունքի տեսակետից ամրագրվեց որպես արժեք: Այսպես՝ իրավունքի մեջ վերջնականորեն ձևավորվեց իրավական հավասարության սկզբունքը:

Հարկ է նշել, որ հավասարությունը դիտարկվել և ամրագրվել է իրավունքի մեջ որպես արդարության հասնելու միջոց: Դեռ Վերածննդի ժամանակաշրջանում ի հայտ եկավ «արդարության կերպար»-ը. աչքերը կապված կին՝ ձեռքերում սուր և կշեռք (Ֆեմիդա): Դա անաչառության, օրենքի և դատարանի առջև մարդկանց հավասարության խորհրդանիշն է:

Ժամանակակից իրավական գիտությունը պնդում է իրավունքի մեջ իրավական հավասարության գաղափարը: Պ.Ի.Նովոգորոդցևը հաստատում է, որ իրավունքը հիմնվում է որոշակի հավասարության վրա, այն չի կարող ընկալվել առանց հավասարության տարրերի, թեկուզև նրանց ամենահամեստ արտահայտությամբ **[13, էջ 70]**:

Որոշ գիտնականներ տարբերակում են «իրավական» և «իրավաբանական» հավասարության կատեգորիաները: Իրավական հավասարությունը վերագրում են հասարակության մեջ ձևավորված սոցիալական իրականությանը, իսկ իրավաբանական հավասարությունը՝ նորմատիվաիրավական ակտերի բովանդակությանը **[18, էջ 172]**:

Կարևոր է հասկանալ, որ իրավաբանական հավասարությունը դա մի կատեգորիա է, որը կրում է ֆորմալ բնույթ և չի ենթադրում հասարակության բոլոր անդամների բացարձակ հավասարություն: Այն միայն բոլորին տալիս է մեկ հիմք, միանման իրավունակություն, բոլորին տրված իրավունքների և ազատությունների ձեռքբերման և իրականացման հավասար հնարավորություններ **[15, էջ 20]**: Փաստացիորեն, սուբյեկտը ոչ միշտ և ոչ բոլոր հնարավորություններն է իրացնում, և այդ պատճառով, վերջին հաշվով տարբեր մարդկանց կարգավիճակը դառնում է անհավասար:

Հնարավոր չէ հասնել բացարձակ հավասարության, և ինչպես գտնում են շատ գիտնական իրավագետներ, անգամ դա հարկավոր չէ: «Հավասարության հասնելու ձգտումը տանում է դեպի ֆորմալ-իրավաբանական հավասարության վերացմանը, ինչի վրա հիմնված է իրավունքը»:

Ինչ վերաբերում է պատասխանատվությանը, այն կարելի է դիտարկել ոչ միայն որպես իրավահարաբերությունների պահպանության կարգավորիչ ինստիտուտ, այլ նաև որպես օրենքի առաջ բոլոր սուբյեկտների հավասարության միջոց: Իրավական հավասարությունն ինքնին որոշակի պայմանների առկայության պարագայում պատասխանատվությունը վեր է ածում սուբյեկտների հավասարեցման ինստիտուտի: Խախտողների համար օրենսդիրը սահմանում է իրավաբանական պատասխանատվություն՝ անկախ նրանց կամքից և ցանկություններից: Օրենքը և դատարանը պետք է անշահախնդիր վերաբերվեն և՛ հասարակ քաղաքացուն, և՛ պաշտոնյային: Ցանկացած սուբյեկտի համար իրավաբանական պատասխանատվությունը վրա է հասնում միայն խախտում կատարելու պարագայում, և այս դեպքում նշանակություն չունի իրավախախտողի սեռը, ազգությունը, սոցիալական դրությունը և այլ հանգամանքներ: Այսպիսով՝ իրավաբանական պատասխանատվությունն օժանդակում է հասարակության մեջ օրինականության և իրավակարգի

հիմունքների հաստատմանը, հարգանքի դաստիարակմանը իրավունքի, նրա արժեքների նկատմամբ, հանրության և անհատի իրավական զարգացմանը: Իրականացնելով իր իրավական գործառույթը՝ պատասխանատվությունն օբյեկտիվորեն հենվում է իրավաբանական հավասարության վրա և նրա օգնությամբ ձևավորում է մարդկանց միասնական, հավասար վարքագծի չափանիշ: Իր հերթին, իրավական հավասարությունը, յուրաքանչյուրի համար առանձին սահմանելով ազատության և արդարության միասնական չափանիշ, անբաժանելի է իրավաբանական պատասխանատվությունից: Պատասխանատվությունն իրավունքում թույլ է տալիս սահմանել իրավական հավասարության բովանդակությունը՝ որպես ազատության և արդարության չափանիշ՝ իրավաբանական պաշտպանվածության տեսանկյունից: Հետևաբար, իրավաբանական պատասխանատվությունը իրավաբանական հավասարության սոցիալ-իրավական հիմք է հանդիսանում: Օրենքի առջև բոլորի հավասարությունն ունի նաև դրական (պոզիտիվ) նշանակության իմաստ, այսինքն՝ հավասարությունն այս դեպքում նշանակում է նաև բոլորի հավասար պաշտպանություն օրենքով, այսինքն՝ օրենքը որպեսզի լինի իրավական (իրավունքին համապատասխան կամ որ նույնն է՝ ապահովվի իրավունքի գերակայության սկզբունքը), անհրաժեշտ է, որպեսզի տվյալ օրենքն ինչպես բոլոր մարդկանց ու քաղաքացիների, այնպես էլ մարդկանց միավորումների, տնտեսվարող սուբյեկտների և այլնի իրավունքներն ու ազատություններն ապահովի նույն կերպ՝ առանց որևէ խտրականության: Այսպիսի ըմբռնումից միաժամանակ հետևում է պատժի անխուսափելիության սկզբունքի հետևողական իրականացման անհրաժեշտությունը, հակառակ պարագայում նույն իրավախախտման դեպքում մարդիկ կհայտնվեն իրավական անհավասար պայմաններում, ինչպես նաև նույնատիպ իրավախախտումների հետևանքով տուժածները պաշտպանված կլինեն ոչ հավասարաչափ: Իրավական հավասարությունը, Վ.Ս. Ներսեսյանցի կարծիքով, իրենից ներկայացնում է իրավունքի միմյանց բովանդակող երեք էական հատկանիշների (բնութագրերի)՝ համընդհանուր հավասար կարգավորման չափանիշի, արդարության և ազատության միասնությունը: Այսպիսով՝ իրավական հավասարությունը հանդիսանում է կարգավորման ընդհանուր հավասար չափանիշ և իրավունքին բնորոշ ազատության և արդարության համընդհանուր մասշտաբ, որոնք ընկած են անհատների օրինաչափ վարքագծի հիմքում, որի խախտման պարագայում օբյեկտիվորեն հանդես է գալիս բոլորի համար հավասար և միասնական պատասխանատվությունը: Պատասխանատվությունը հասարակական հարաբերությունների կարգավորման հավասար չափանիշ է: Նշենք իրավական հավասարության այս երեք կոմպոնենտների փոխհարաբերակցությունը և իմաստային միասնությունը. մարդկանց միջև իրավական փոխհարաբերությունները այն հարաբերություններն են, որոնք կարգավորվում են միասնական աբստրակտ-համընդհանուր մասշտաբով և թույլատրելիության, արգելքների, հատուցումների և այլնի հավասար չափով:

Մարդկանց միջև փոխհարաբերությունների այս տեսակն իր մեջ ներառում է՝

1. տվյալ տեսակի փոխհարաբերությունների մասնակիցների իրավական հավասարությունը (փաստացի տարբեր մարդիկ հավասարեցված են միասնական չափով և ընդհանուր ձևով).
2. նրանց ազատությունը (ֆորմալ անկախությունը միմյանցից և դրա հետ մեկտեղ, ենթարկումը միասնական հավասար չափանիշին և գործողությունը՝ միասնական ընդհանուր ձևով և կանոններով).
3. արդարությունը՝ նրանց փոխհարաբերություններում (աբստրակտ-համընդհանուր, թույլատրելիության՝ բոլորի համար միատեսակ հավասար չափանիշ և ձև):

Իրավական հավասարությունը որոշվում է ազատությամբ և արդարությամբ, ընդ որում՝ ազատություն որոշվում է՝ հավասար չափանիշների առկայությամբ և արդարությամբ, իսկ արդարությունը՝ հավասար չափանիշների առկայությամբ և ազատությամբ: Նշանակում է, որ իրավունքի այս փոխկապակցված որակական բնութագրերը միմյանց փոխլրացնում են և չեն կարող գոյատևել իրարից անկախ: Այս որակական բնութագրերի եռամիասնությունից շեղվելու պարագայում օբյեկտիվորեն ի հայտ է գալիս բոլորի համար հավասար և միասնական

պատասխանատվությունը: Այսպիսով՝ իրավական հավասարությունը ներկայանում է որպես հասարակության մեջ ազատության, արդարության և պատասխանատվության հավասար չափանիշ:

Հասարակության մեջ մարդկանց վարքագծի իրավական կարգավորումը հիմնված է յուրաքանչյուրին՝ որպես հասարակության ինքնուրույն և ազատ անդամի ճանաչելու վրա, որն ընդունակ է գործելու և պատասխան տալու իր արարքների համար: Հասարակական հարաբերությունների համալիր, ամբողջական և ներդաշնակ կարգավորման նպատակով իրավական ինստիտուտների և երևույթների ձևավորումն իրականացվում է հասարակության մեջ յուրաքանչյուր մարդու՝ որպես հավասար արժեք ընկալելու սկզբունքի հիման վրա, սակայն մարդկանց փաստացի անհավասարության դեպքում նման իրավական մոտեցումը կարող է իրականացվել միայն իրավական հավասարության պարագայում՝ անհատներին հավասար հնարավորություն ընձեռելով իրենց իրավունքների և պարտականությունների իրականացման համար:

Արդարության հասնելու նպատակով օրենսդիրը սահմանում է այդ կանոնից բացառություններ՝ սահմանափակումների և առանձնաշնորհությունների (առավելությունների) տեսքով: Այդ բացառությունները կոչված են լավագույն ձևով բավարարելու հասարակության շահերը **[9, էջ 75]:**

Սահմանափակումը մեկնաբանվում է որպես եզր, սահման, սահմանագիծ, զսպում որոշակիորեն հայտնի շրջանակներում, սահմաններում, ցանկացած իրավունք, գործողություն սահմանափակող կանոն, սահմանափակում համապատասխան պայմաններով և այլն **[3, էջ 647-648], [4, էջ 305], [5, էջ 357]:**

Ֆ.Սելզնիկի կոնցեպցիայի համաձայն՝ հասարակության մեջ արդարադատությունը ձեռք է բերվում առաջին հերթին ոչ թե հավասարության, այլ սահմանափակումների հաստատմամբ: Կարգուկանոն հաստատելու համար իշխանությունը օգտագործում է սահմանափակող արդարություն **[20, էջ 93]:**

Պատմությունը վկայում է այն մասին, որ դեռևս նախնադարյան համայնական հասարակարգում իրավական կարգավորման համակարգն առաջին հերթին ուղղված էր սահմանափակումներին:

«Տաբու» նորմերի (արգելքների, վարքագծի շրջանակների) ի հայտ գալը բացատրվում էր մարդկանց կենսաբանական բնագծերի զսպման անհրաժեշտությամբ **[16, էջ 244,316]:** Հետագայում հասարակությունը միշտ ձգտում էր որպես օրենք ամրագրել գոյություն ունեցող դրությունը «և նրա այն սահմանափակումները, որոնք տրված էին սովորույթներով և ավանդույթներով» **[12, էջ 356]:**

Հավասարության սկզբունքից մեկ այլ բացառություն է հանդիսանում օրենսդրությամբ արտոնությունների և առանձնաշնորհությունների սահմանումը:

Արտոնությունը առավելությունների տրամադրումն է կամ մասնակի ազատումը պարտականությունների կատարումից կամ էլ դրանց կատարման պայմանների դյուրինացումը **[11, էջ 66]:**

Առանձնաշնորհությունները իրավական արտոնությունների տարատեսակներից են:

Իշխանություն ունեցող ցանկացած հասարակության մեջ առաջանում է, ի շահ հասարակության իշխանական լիազորություններ իրականացնող անձանց, իրավաբանորեն «առանձացնելու» անհրաժեշտություն **[11, էջ 69]:** Նրանց կողմից ծառայողական պարտականությունների պատշաճ կատարման համար անհրաժեշտ է սահմանել առանձնաշնորհություն կոչվող առավելություններ:

Առանձնաշնորհությունները իշխանական մարմինների և պաշտոնատար անձանց մաքսիմալ առավելություններն են, որոնք բնութագրում են նրանց սոցիալական և անհատական կարգավիճակը:

Ս. Վ. Միրոշնիկը նշում է, որ առանձնաշնորհությունները կարևոր խթան են հանդիսանում պետական ծառայողների աշխատանքի արդյունավետության համար, սակայն դրանց հիմքում միշտ պետք է ընկած լինեն օրինականության և արդարության սկզբունքները **[14, էջ 16]:**

Արտոնություններից (ռուսերեն՝ льготы) առանձնաշնորհությունների (ռուսերեն՝ привилегии) տարբերությունն այն է, որ առաջինները տարածվում են լայն շրջանակի անձանց վրա և ունեն կիրառման լայնածավալ շրջանակ, իսկ վերջիններս հանդիսանում են սպեցիֆիկ արտոնություններ, բացառությունների բացառում: Դրանց տարբերությունը նաև այն է, որ արտոնությունները ուղղված են տարբեր «թույլ» սուբյեկտների դրության դյուրինացմանը, իսկ առանձնաշնորհությունները՝ «ուժեղների» քաղաքական էլիտայի աջակցմանը:

Առանձնաշնորհությունները չպետք է լինեն շատ, հակառակ դեպքում դրանք կկորցնեն իրենց նշանակությունը, կդառնան կանոն, այլ ոչ՝ բացառություն, ինքնին ենթադրվող, և ոչ թե խթան: Խելամիտ չափաբաժինների խախտումը կհանգեցնի համակարգերի ապակայունացմանը, հետևաբար՝ այն չի կարելի թույլատրել [19, էջ 78]:

Ներկայումս իրավական հավասարությունը համարվում է իրավունքի առաջնային սկզբունքներից մեկը: Այն կանգնած է արդարության, օրինականության և այլ կարևոր համընդհանուր իրավական սկզբունքների հետ մի շարքում [20, էջ 94]:

Միջազգային իրավունքը պարունակում է բազմաթիվ նորմեր, որոնք ամրագրում են իրավական հավասարության սկզբունքը, օրինակ՝ ԱՊՀ կոնվենցիան ճանաչում է բոլոր անձանց հավասարությունը օրենքի և դատարանի առջև, նրանում հաճախ կիրառվում են այնպիսի ընդհանրացնող բառեր, ինչպիսիք են՝ «բոլորը», «յուրաքանչյուրը», «ոչ մեկը» և այլն [10, էջ 7-8]: Խոշտանգումների դեմ կոնվենցիան ընդգծում է «մարդկության ընտանիքի բոլոր անդամների» իրավունքների հավասարությունը և անբաժանելիությունը [17, էջ 1]:

Հավասարության հայկական և ռուսական, ինչպես նաև՝ արտասահմանյան ըմբռնումները ժամանակի ընթացքում փոփոխվել են: Խորհրդային ժամանակներում հասարակական կարծիքը ենթադրում էր, որ հավասարությունը այն է, երբ չկան աղքատներ և հարուստներ: Լայնորեն հայտնի է կոմունիստական պոստուլատը՝ «Յուրաքանչյուրից՝ ըստ իր հնարավորությունների, յուրաքանչյուրին՝ ըստ իր կարիքների»: Դա ենթադրում էր փաստացի հավասարություն: Իրականացված ուսումնասիրությունների արդյունքում ներկայումս ժամանակակիցները գտնում են, որ հավասարությունն արտահայտվում է հավասար իրավունքներում, օրենքի առջև հավասարության, սեռի, ռասայի, ազգության կրոնական համոզմունքների հատկանիշներով խտրականության բացակայության մեջ [7, էջ 79]:

ՀՀ և ՌԴ գործող Սահմանադրությունները ամրագրում են համընդհանուր հավասարությունը օրենքի և դատարանի առջև: Ավելին, պետության կողմից երաշխավորվում է դրա իրականացումը, ինչպես նաև սահմանված է սոցիալական հատկանիշներով ցանկացած ձևի՝ ըստ սեռի, ռասայի, ազգության, դավանանքի, գույքային կամ պաշտոնական դիրքի, ծագման և այլ հանգամանքների խտրականության արգելք:

Մասնավորապես՝

1. ՀՀ 2015 թ-ի փոփոխություններով Սահմանադրության 28-րդ հոդվածում ամրագրված է օրենքի առջև ընդհանուր հավասարության սկզբունքը, որտեղ նշված է հետևյալը՝ «Բոլորը հավասար են օրենքի առջև»: Սա առանցքային ընդհանուր իրավունք-սկզբունք է, որը համահունչ է 2005 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 14.1-ին հոդվածի 1-ին մասի ձևակերպմանը: Փոփոխված Սահմանադրության կարգավորումը տարբերվում է միայն նրանով, որ 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 14.1-ին հոդվածի 2-րդ մասը, որը սահմանում է խտրականության արգելքը, առանձնացվել է 29-րդ հոդվածում: 28-րդ հոդվածն ամրագրում է հավասարության ընդհանուր սկզբունքը, իսկ հաջորդ 29-րդ և 30-րդ հոդվածներում խոսքը հավասարության հատուկ իրավունքների մասին է: Հավասարության ընդհանուր դրույթը սուբսիդիար է հավասարության հատուկ իրավունքների նկատմամբ: Ինչպես հավասարության բոլոր իրավունքները, հավասարության ընդհանուր իրավունքը ևս իր կառուցվածքով տարբերվում է ազատության իրավունքներից: Ի տարբերություն ազատության իրավունքների՝ հավասարության ընդհանուր իրավունքը սահմանափակված չէ որևէ կոնկրետ ոլորտով և գործում է ամենուրեք: Բացի այդ՝ հավասարության ընդհանուր իրավունքը անպայման պահանջում է համեմատություն այլ անձանց հետ:

«Սահմանադրության 28-րդ հոդվածում տեղ գտած «հավասար են» հասկացությունը նշանակում է ոչ թե հավասարություն առհասարակ, ցանկացած առումով, այլ՝ միայն օրենքի առջև հավասարությունը: Այլ կերպ ասած՝ այս դեպքում ակնհայտ է, որ գործ ունենք ձևական կամ իրավական առումով հավասարության կամ որ նույնն է՝ իրավահավասարության դրսևորման հետ: Ընդ որում՝ մարդկանց ձևական (իրավական) հավասարությունը հասկացվում է, որ մարդիկ հավասար են միայն իբրև ազատ անձնավորություններ, երբ նրանք հավասար են առհասարակ իրենց ունեցած իրավունքներով ու ազատություններով:

«Սահմանադրության 28-րդ հոդվածում արտահայտված դրույթը, ընդհանուր առմամբ, իրավական ու ժողովրդավարական ցանկացած պետության կառուցման, զարգացման ու գործունեության հիմքն է և կարևորագույն պայմանը:

Տարբեր անհատների իրավահավասարությունը, սահմանադրական իրավունքների ու ազատությունների հավասարությունը նրանց համար նշանակում է իրենց հավասար իրավունքների ու ազատությունների իրացման փաստացի տարբեր հնարավորություններ: Անհրաժեշտ է նշել նաև, որ 28-րդ հոդվածում օգտագործված «օրենք» հասկացությունն անհրաժեշտ է հասկանալ ոչ միայն բուն իմաստով օրենք, այլև համապարտադիր նշանակություն ունեցող ցանկացած իրավական ակտ, այդ թվում «Սահմանադրությունը՝ որպես հիմնական օրենք, պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց որոշումները:

Օրենքի առջև հավասարության, ինչպես նաև «Սահմանադրության 29-րդ հոդվածում խտրականության արգելման վերաբերյալ այսպիսի սահմանադրական ըմբռնումը համահունչ է միջազգային իրավական չափանիշներին, որոնք արտացոլվել են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում (հոդվածներ 2, 7), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում (հոդվածներ 2, 26), Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայում (հոդված 14) և բազմաթիվ այլ փաստաթղթերում:

Օրենքի առջև հավասարության սկզբունքը վերաբերում է ոչ միայն մարդկանց իրավունքներին ու ազատություններին, այլև նրանց պարտականություններին **[1, էջ 171-172]:**

2. «2015 թ-ի փոփոխություններով Սահմանադրության 29-րդ հոդվածում ամրագրված է խտրականության արգելքը, որում նշված է հետևյալը՝ «խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»: «Սահմանադրության 29-րդ հոդվածը մեկնաբանելու համար կարևոր նշանակություն ունի «խտրականություն» հասկացության բացահայտումը: Խտրականությունը որոշակի անձանց, կազմակերպությունների կամ պետությունների իրավունքների սահմանափակումն է կամ դրանցից զրկելը՝ հիմք ընդունելով ռասայական, ազգային, սեռային, պետական պատկանելությունը, ինչպես նաև՝ գույքային դրությունը, քաղաքական և կրոնական համոզմունքները և այլն: Խտրականության տարածված ձևերից է ռասայական խտրականությունը՝ մարդու իրավունքների սահմանափակումը կամ դրանցից զրկելը ռասայական պատկանելության հիմքով, ազգային խտրականությունը, հակասեմիտիզմը (հակահրեականություն) և այլն **[1, էջ 173]:**

Խտրականության արգելքը լրացնում է ընդհանուր հավասարության իրավունքը: Ընդհանուր հավասարության և խտրականության կարգավորումը առանձին սկզբունքների տեսքով համահունչ է նաև Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիայի 20-րդ և 21-րդ հոդվածներին, ՄԻԵԿ 12-րդ արձանագրության 1-ին հոդվածին: Նման մոտեցումն ընդգծում է խտրականության արգելքի առանձնահատուկ դերն ու նշանակությունը: Փոփոխված Սահմանադրությունը, միջազգային փաստաթղթերում ճանաչված մոտեցումներին համապատասխան, թվարկում է խտրականության այն տեսակները, որոնք արգելված են սահմանադրական մակարդակում: Խտրականության այլ հնարավոր դեպքերը պետք է մեկնաբանվեն և գնահատական ստանան դատական պրակտիկայում՝ ընդհանուր հավասարության 28-րդ հոդվածի շրջանակներում:

Բովանդակային առումով խտրականության տեսակներին վերաբերող դրույթները փոփոխություն չեն կրել՝ համեմատած 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության հետ:

3. ՀՀ 2015թ-ի փոփոխություններով Սահմանադրությանը ամրագրվում է նաև տղամարդկանց և կանանց իրավահավասարության սկզբունքը, որը իր արտացոլումն է գտել ՀՀ Սահմանադրության 30-րդ հոդվածում, որտեղ նշված է հետևյալը՝ «Կանայք և տղամարդիկ իրավահավասար են»: Ամրագրելով ընդհանուր հավասարության սկզբունքը, ինչպես նաև խտրականության արգելքը՝ 2015 թ. փոփոխություններով Սահմանադրությունը, Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիային համահունչ, առաջին անգամ առանձին հոդվածով հատուկ ամրագրում է հավասարության մասնավոր տեսակ, այն է՝ տղամարդկանց և կանանց իրավահավասարությունը: Այս հոդվածը սահմանում է իրավահավասարության սուբյեկտիվ իրավունք: Միևնույն ժամանակ, նպատակ ունենալով ինտեգրել կանանց և տղամարդկանց իրավահավասարության սկզբունքը պետական քաղաքականության և գործողությունների բոլոր ոլորտներում և խթանել կանանց ու տղամարդկանց փաստացի իրավահավասարությունն ապահովելուն ուղղված միջոցառումները՝ Սահմանադրության 86-րդ հոդվածի 4-րդ կետն այն ամրագրում է որպես պետության նպատակ [2, էջ 51-52]:

Օրենքի և դատարանի առջև քաղաքացիների հավասարության սկզբունքը ենթադրում է արդարադատություն՝ միասնական, բոլորի համար միանման օրենսդրության համապատասխան, ընդ որում՝ նկատի է առնվում ոչ միայն նյութական, այլ նաև դատավարական օրենսդրությունը: Ցանկացած քաղաքացի, ցանկացած իրավաբանական անձ իրավասու է պաշտպանելու իր իրավունքները դատարանում առանց օրենքով սահմանված կարգի որևէ սահմանափակման: Բացի այդ՝ ցանկացած ֆիզիկական և իրավաբանական անձ պարտավոր է հետևել օրենքին, և ոչ ոք անգամ դատական կարգով չի կարող ազատվել այդ պարտականությունից: Դատարանի առջև բոլորի հավասարության սկզբունքը դրսևորվում է նյութական և դատավարական մոտեցումների այնպիսի զուգակցմամբ, որ ապահովվի դատարանի հետ առնչություն ունեցող բոլոր մասնակիցների իրավահավասարությունը:

Օրենքի և դատարանի առջև քաղաքացիների հավասարության սկզբունքը, բացի ՀՀ Սահմանադրությունից, ամրագրված է նաև ներպետական մի շարք նորմատիվ իրավական ակտերում, մասնավորապես՝ այդ սկզբունքը ուղղակիորեն ամրագրված է «Քրեական դատավարության» ՀՀ օրենսգրքի 8-րդ հոդվածում, որտեղ նշված է հետևյալը՝ «Բոլորը հավասար են օրենքի և դատարանի առջև /.../», «Քաղաքացիական դատավարության» ՀՀ օրենսգրքի 11-րդ հոդվածում, որտեղ նշված է հետևյալը՝ «Քաղաքացիական գործերով դատավարությունն իրականացվում է օրենքի և դատարանի առջև գործին մասնակցող բոլոր անձանց հավասարության սկզբունքի հիման վրա /.../», «Վարչական դատավարության» ՀՀ օրենսգրքի 6-րդ հոդվածում, որտեղ նշված է հետևյալը՝ «Դատարանը պարտավոր է ապահովել, որ կողմերն ունենան հավասար հնարավորություններ գործի քննության ամբողջ ընթացքում, ներառյալ՝ յուրաքանչյուր կողմին ընձեռել քննվող գործի վերաբերյալ իր դիրքորոշումը ներկայացնելու լիարժեք հնարավորություն /.../», «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 34-րդ հոդվածում, որտեղ նշված է հետևյալը՝ «Սահմանադրական դատարանն ապահովում է, որ կողմերն ունենան հավասար հնարավորություններ գործի քննության ամբողջ ընթացքում, այդ թվում՝ յուրաքանչյուր կողմի ընձեռում է քննվող գործի վերաբերյալ իր դիրքորոշումը ներկայացնելու լիարժեք հնարավորություն /.../», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասում, որտեղ նշված է հետևյալը՝ «Հայեցողական լիազորություն իրականացնելիս վարչական մարմինը պարտավոր է առաջնորդվել մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, վարչարարության իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքներով, ինչպես նաև՝ հետապնդել օրենքով կանխորոշված այլ նպատակներ», և մի շարք այլ իրավական ակտերում:

Օրենքի և դատարանի առջև քաղաքացիների հավասարության սկզբունքը բխում է ոչ միայն ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածում ամրագրված օրենքի առջև ընդհանուր հավասարության

սկզբունքից, այլ նաև ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածում ամրագրված յուրաքանչյուր մարդու՝ իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքից, քանի որ արդյունավետ և անաչառ դատական համակարգն է, որ ապահովում է մարդու խախտված իրավունքների վերականգնումը և պաշտպանությունը՝ հենվելով նաև ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածում ամրագրված որևէ հիմքով խտրականությունը բացառելու սկզբունքի վրա:

Օրենքի առջև հավասարության սկզբունքը, ըստ էության, վերաբերում է ամբողջ իրավական համակարգին, իրավունքի բոլոր ճյուղերին՝ առանց բացառության, և ենթադրում է իրավունքի կոնկրետ ճյուղի առանձնահատկություններին համապատասխան մշակել սահմանադրական այս պահանջի իրականացման անհրաժեշտ կառուցակարգեր (մեխանիզմներ): Այս սկզբունքի հիման վրա է կառուցված մարդու և քաղաքացու սահմանադրական կարգավիճակի ամբողջ հայեցակարգը և, փաստորեն, ՀՀ Սահմանադրության երկրորդ գլխում նախատեսված մարդու և քաղաքացու բոլոր իրավունքներն ու ազատությունները սահմանված են այդ սկզբունքին համապատասխան: Այս հանգամանքը վկայում է, որ սահմանադրական այս պահանջը վերածվում է ինչպես կոնկրետ իրավունքների, այնպես էլ ողջ համակարգի օրենսդրական կարգավորման գնահատման սահմանադրական չափանիշի և դրանով իսկ՝ նաև հասարակական հարաբերությունների տարբեր ոլորտները կարգավորող իրավական ակտերի սահմանադրականությունը գնահատելու միջոցի:

Առանձնաշնորհությունների վառ օրինակ է որոշ պաշտոնատար անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու հատուկ կարգի հաստատումը: Մյուս քաղաքացիների համեմատ՝ ՀՀ Սահմանադրությամբ որոշակի սուբյեկտների՝ հանրապետության նախագահի, պատգամավորների, դատավորների, սահմանադրական դատարանի անդամների համար նախատեսված են անձեռնմխելիության (իմունիտետի) այլ չափանիշներ: Այսպիսի տարբերության (անհավասարության) նպատակն է ոչ թե այդ պաշտոնները կրող քաղաքացիներին արտոնություններ տալը, այլ այդ պաշտոնատար անձանց պարտականությունների կատարման ապահովումը, այն է՝ իրենց իրավասությունների շրջանակներում ապահովել մարդկանց ու քաղաքացիների սահմանադրական իրավունքների ու ազատությունների, օրենքի առջև բոլորի հավասարության հաստատումը, մասնավորապես՝ դատավորի անձեռնմխելիության նպատակն է հանրային շահերի և, առաջին հերթին, արդարադատության շահերի պաշտպանությունը: Այդ սուբյեկտները, որպես կանոն, իրենց կարգավիճակի հետ չկապված անօրինական գործողությունների համար կարող են ենթարկվել պատասխանատվության:

Տվյալ առանձնահատկությունները բացատրվում են այն կարևոր սոցիալական դերով, որ խաղում են մեր պետության վերոնշյալ պաշտոնատար անձինք: Լրացուցիչ իրավունքների հաստատումը անհրաժեշտ է նրանց վրա դրված լիազորությունների պատշաճ կատարումն ապահովելու համար: Օրենքով ամրագրված կանոնները նրանց որևէ առավելություն չեն տալիս արդարադատություն իրականացնելիս: Դրանք ձեռք չեն բերում լրացուցիչ առանձնաշնորհություններ օրենքի և դատարանի առջև՝ կապված իրենց ծառայողական կարգավիճակի հետ: Դրա հետ կապված՝ իրավաբաններն նշում են, որ տվյալ կարգը ոչ մի ձևով չի հակասում իրավական հավասարության սկզբունքին **[8, էջ 68]**:

Որոշ գիտնականներ, ճիշտ է, հաստատում են, որ նշված առանձնաշնորհությունները ավելորդ են, և հարկավոր է դրանք վերացնել հանուն օրենքի առջև բոլորի «իսկական հավասարության» հաղթանակի **[6, էջ 18]**:

Այսպիսով՝ իրավական հավասարությունը բնութագրվում է ոչ միայն օրենսդրական մակարդակով համապատասխան իրավունքների և ազատությունների ամրագրմամբ, այլ նաև դրանց իրացման համար պետական երաշխիքների և դրանց պաշտպանության որոշակի մեխանիզմների առկայությամբ:

Իրավական հավասարությունը չի նշանակում փաստացի հավասարություն: Սուբյեկտների փաստացի հավասարությունը միշտ անհասանելի է և, ավելին, չի համապատասխանում հասարակության շահերին:

Ցանկացած իրավական համակարգում իրավունքի մեջ արդարության առավելագույնս լավ ապահովման համար գոյություն ունեն սահմանափակումներ, արտոնություններ և առանձնաշնորհություններ, ընդ որում՝ ոչ միշտ է, որ առկա են բացառություններ իրավական

հավասարության սկզբունքից, քանի որ այն կրում է ֆորմալ բնույթ: Հարկ է տարբերել հատուկ իրավունքների և ազատությունների հաստատումը իրավունքի առանձին կատեգորիաների սուբյեկտների համար՝ միջազգային և ներպետական նորմերով սահմանված խտրականության հատկանիշների (այսինքն՝ կանոնից բացառություններ) և այդ նորմերում նշված այլ հիմքերի ուժով (օրենսդրությամբ սահմանված բացառություն չհանդիսացող հատկանիշներ, որոնք հաշվի են առնվում նշված իրադրություններում): Այս առումով օրենքի առջև հավասարության սահմանադրական պահանջից շեղում չի կարելի համարել, երբ գործադրվում է դրական (պոզիտիվ) խտրականության սկզբունքը, որի նպատակն է մարդկանց որոշակի խմբերի և կատեգորիայի անձանց համար սահմանել առանձին արտոնություններ և առավելություններ, առավել ևս, որ դրանք բխում են սոցիալական պետության սահմանադրական դրույթից և համահունչ են Սահմանադրությամբ ամրագրված սոցիալական և տնտեսական իրավունքների ու ազատությունների իրականացման պահանջներին [1, էջ 175]:

Ընդհանուր առմամբ օրենքի առջև հավասարության սկզբունքին հակասում է խտրականության ցանկացած դրսևորում, ինչը փաստացիորեն դառնում է որոշ մարդկանց՝ այլ մարդկանցից տարբերելու հիմք: Օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը դառնում է ամեն տեսակի խտրականության վերացման պահանջ, ինչը ենթադրում է, որ օրենքում չեն կարող լինել որևէ տարբերության, բացառության կամ նախապատվության հնարավորություններ, որոնք հիմնված են սեռային, ռասայական, էթնիկական կամ այլ հատկանիշի վրա, որովհետև այդպիսի մոտեցումը հանգեցնում է մարդու և քաղաքացու իրավական հնարավորությունների հավասարության վերացմանը կամ խախտմանը:

Սահմանափակումները, արտոնությունները և առանձնաշնորհությունները հանդիսանում են հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման պոզիտիվ միջոցներ: Դրանք օգնում են լավագույն տարբերակով ապահովելու հասարակության կարիքները և պաշտպանելու նրա շահերը, սակայն անհրաժեշտ է հետևել կանոնի և բացառությունների միջև համաչափության պահպանմանը: Սահմանափակումները, արտոնությունները և առանձնաշնորհությունները չպետք է լինեն չափից շատ, հակառակ դեպքում կարելի է խոսել այն մասին, որ հավասարություն գոյություն չունի, անգամ իրավաբանորեն:

Այսպիսով՝ իրավական հավասարության սկզբունքը չի բացառում տարբեր իրավական կարգավիճակների հաստատման հնարավորությունը որոշակի կատեգորիայի անձանց համար, եթե այն ծառայում է հասարակության շահերին: Այդ պատճառով հայկական և արտասահմանյան օրենսդրություններով թույլատրվում են իրավունքի առանձին սուբյեկտների իրավունակության սահմանման համար կիրառել տարբեր մոտեցումներ:

Ստացված արդյունքներ

Ամփոփելով սույն հետազոտության արդյունքները՝ գտնում ենք, որ իրավական հավասարությունը և իրավական արտոնությունները ունեն պատմական խորը արմատներ և անցել են պատմական զարգացման և կատարելագործման բավականին երկար ուղի: Սույն հետազոտության մեջ իրավական արտոնությունները դասակարգել ենք՝ ըստ հետևյալ տեսակների՝ արտոնություններ, առանձնաշնորհություններ և անձեռնմխելիություններ, անդրադառնել ենք նաև իրավական արտոնությունների և իրավական հավասարության սկզբունքի միջև կապին և փոխհարաբերակցությունը:

Եզրակացություն

Իրավաբանական հավասարությունը մի կատեգորիա է, որը կրում է ֆորմալ բնույթ և չի ենթադրում հասարակության բոլոր անդամների բացարձակ հավասարություն: Այն միայն բոլորին տալիս է մեկ հիմք, միանման իրավունակություն, բոլորին տրված իրավունքների և ազատությունների ձեռքբերման և իրականացման հավասար հնարավորություններ: Փաստացիորեն, սուբյեկտը ոչ միշտ և ոչ բոլոր հնարավորություններն է իրացնում, և այդ պատճառով, վերջին հաշվով տարբեր մարդկանց կարգավիճակը դառնում է անհավասար: Ցանկացած իրավական համակարգում իրավունքի մեջ արդարության առավելագույնս լավ

ապահովման համար գոյություն ունեն սահմանափակումներ, արտոնություններ և առանձնաշնորհություններ: Այսպիսով՝ իրավական հավասարության սկզբունքը չի բացառում տարբեր իրավական կարգավիճակների հաստատման հնարավորությունը որոշակի կատեգորիայի անձանց համար, եթե այն ծառայում է հասարակության շահերին: Այդ պատճառով հայկական և արտասահմանյան օրենսդրություններով թույլատրվում են իրավունքի առանձին սուբյեկտների իրավունակության սահմանման համար կիրառել տարբեր մոտեցումներ:

Ցավոք, պետք է նշել, որ այս կամ այն կատեգորիայի սուբյեկտների համար արտոնություններ, առանձնաշնորհություններ և անձեռնմխելիություններ սահմանող ՀՀ նորմատիվ իրավական ակտերում բացակայում է այդ սուբյեկտներին արտոնություններով օժտելու նպատակների մասին ուղղակի հղումը, սակայն, ինչպես կարելի է եզրակացնել, դա ավելի շուտ իրավական տեխնիկայի խնդիր է, քան որևէ այլ մոտիվացիա, ուստի առաջարկում ենք այդ նորմատիվ իրավական ակտերում համապատասխան փոփոխություններ կատարել և ամրագրել որոշակի սուբյեկտներին արտոնություններով, առանձնաշնորհություններով և անձեռնմխելիություններով օժտելու հստակ նպատակները, որի արդյունքում հասարակությանը պարզ կդառնա իրավահավասարության սկզբունքից կատարվող այդ բացառությունների հետապնդած հանրօգուտ նպատակները:

Գրականության ցանկ

1. Գ. Հարությունյան, Ա. Վաղարշյան, ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ: «Իրավունք», 2010թ., 1085 էջ:
2. Վ. Պողոսյան, Ն. Սարգսյան, ՀՀ 2015թ. Խմբագրությամբ Սահմանադրությունը, համառոտ պարզաբանումներ, Տիգրան Մեծ, Երևան 2016թ., 447 էջ:
3. Даль В., Толковый словарь живого великорусского языка, Том второй, СП.б., 1881, 814 էջ:
4. Александрова З. Е., Словарь синонимов русского языка, М., 1986, 600:
5. Ожегов С.И., Словарь русского языка, М., 1988, 750 էջ:
6. Здравомыслов Б.В., Понятие, предмет, задачи, принципы уголовного права// Уголовное право России. Общая часть: Учебник М., 1996, 253 էջ:
7. Здравомыслова О.М., Представления о справедливости и равенстве и правовой опыт населения (по материалам российско-французских исследований)// Мир России 2004, №3, էջ` 71-87:
8. Кожевников С.Н., Кузнецов А.П., Общеправовые и отраслевые принципы: сравнительный анализ, // Юрист. - М.: Юрист, 2000, № 4., էջ` 64-70:
9. Козлихин И.Ю., У истоков правового государства: идея господства законов, а не людей// Вестник Санкт-Петербургского университета, 1993 №1, 152 էջ:
10. Конвенция СНГ о правах и основных свободах человека, 26.05.1995г.:
11. Малько А.В., Стимулы и ограничения в праве М., 2003, 250 էջ:
12. Маркс К., Энгельс Ф., Соч. 2-е изд., М., 1962, Т.25, Ч.2, 551 էջ:
13. Мартышин О.В., Метафизические концепции права // Государство и право 2006 №2, էջ` 64-71:
14. Мирошник С.В., Правовые стимулы в Российском законодательстве: Автореф. дис. канд. юрид. наук, Ростов-на Дону, 1997, 167:
15. Нерсесянц В.С., Философия права, М., 1998, 352 էջ:
16. Бромлей Ю.В., История первобытного общества. Общие вопросы. Проблемы антропосоциогенеза, М., 1983, 432 էջ:
17. Преамбула конвенции против пыток и других жестоких, бесчеловечных или унижающих достоинства видов обращения и наказания. Заключена 10.12.1984г:
18. Тилежинский Е.В., Равенство как правовая категория. Автореф. дис. канд. юрид. наук, Нижний Новгород 2006, 230 էջ:
19. Фомин А.А., Юридическая безопасность-особая разновидность социальной безопасности: понятие и общая характеристика// Государство и право 2006 №2, էջ` 72-80:
20. Хайруллин В.И. Что такое «коммунитарная справедливость»// Государство и право, 2007 №9, էջ` 93-96:
21. Чернобель Г.Т., Право как мера социального блага /Журнал Российского права. 2006 №6, էջ` 83-95:
22. Шпренгер Г., Взаимодействие: соображения по поводу антропологического понимания масштабов справедливости // Государство и право. 2004 №5, էջ` 16-23:

Միջազգային փաստաթղթեր և նորմատիվ իրավական ակտեր

- ՀՀ Սահմանադրություն .27.11.2005 թ-ի:
- ՀՀ Սահմանադրություն .06.12.2015թ-ի փոփոխություններով:
- «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների մասին» կոնվենցիա՝ ընդունված՝ 04.11.1950 թ-ին:
- «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենք՝ ընդունված՝ 17.01.2018 թ-ին:
- ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք՝ ընդունված՝ 05.12.2013 թ-ին:
- «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք՝ ընդունված՝ 18.02.2004 թ-ին:
- ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք՝ ընդունված՝ 01.07.1998 թ-ին:
- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք՝ ընդունված՝ 09.02.2018 թ-ին:

ՄԱՍՈՒԼԸ ԵՎ ՄԱՍՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ և ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՓՈԽՎԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

ԼԻԼԻԹ ԽԱՌԱՏՅԱՆ

«Վ գիտությունների ազգային ակադեմիա
գիտակրթական միջազգային կենտրոն
իրավախորհրդատու
lilit.kharatyan@isec.am

Համառոտագիր

ԶԼՄ-ները կոչված են մշտապես և նպատակաուղղված ձևավորելու հանրային կարծիք հասարակությունում առավել կարևոր հիմնահարցերի վերաբերյալ: Այդ հարցերից մեկը, որն իրենից ներկայացնում է հանրային մեծ հետաքրքրություն հայաստանյան լայն հանրության համար, հանդիսանում է դատական իշխանության գործունեությունը, քանի որ դատարանների գործունեության և դատավորների աշխատանքի մասին տեղեկատվություն ստանալը հանրության իրավունքն է և մշտական ուշադրության կենտրոնում գտնվող կարևոր հարցերից մեկը: Ահա՛, թե ինչու է այսօր այդքան կարևոր դատական իշխանության և հասարակության հետ արդյունավետ հաղորդակցության կարգավորումը, ինչը կարող է մոտեցնել «Վ արդարադատության կայացմանը և համապատասխանությանը եվրոպական չափանիշներին»: ԶԼՄ-ների և դատական իշխանության արդյունավետ փոխհարաբերակցության համակարգի ստեղծման հիմնախնդիրը ժողովրդավարական բարեփոխումների ժամանակաշրջանում այսօր Հայաստանում հրատապ հարցերից է, հետևաբար՝ նշված խնդրի կարևորությունը պետք է կարողանան հստակ և հետևողականորեն գիտակցել ինչպես դատավորները, այնպես էլ՝ ԶԼՄ-ների ներկայացուցիչները:

ԶԼՄ-ների և դատական համակարգի հաղորդակցության արդյունավետությունը կարևոր է, որպեսզի հայաստանյան քաղաքացիական հասարակության առջև ծառայած բազմաթիվ հարցեր ստանան արդյունավետ լուծումներ, մասնավորապես՝

1. դատական համակարգի անկախությունն ու պաշտպանությունը.
2. դատական իշխանության հանդեպ հասարակության վստահության ամրապնդումը.
3. դատական իշխանության դրական վարկանիշի ձևավորումը.
4. հանրային կարծիքի բավարարումը հանրային կարևոր տեղեկատվության ոլորտում.

5. դատարանների գործունեության թափանցիկության և հրապարակայնության ապահովումը՝ ուղղված դատարանների և դատավորների գործունեության մասին տեղեկատվության ստանալուն, իչպես նաև քաղաքացիների սահմանադրական իրավունքներին և պարտականություններին հանրության համար հասանելի ձևաչափով.

6. դատարանների, ԶԼՄ-ների հետևողական և համաձայնեցված հաղորդակցության ապահովում:

Հոդվածը վերաբերում է «Վ արդի ժամանակաշրջանի զանգվածային լրատվամիջոցների և դատական իշխանության փոխհարաբերակցության առանցքային հիմնախնդիրներին»: Վերլուծվել են դատական իշխանության տեղեկատվական գործառույթի կազմակերպման հետ կապված հարցեր՝ ուղղված արդարադատության հեղինակության բարելավմանը և վստահության ամրապնդմանը: Հետազոտվել և վերլուծվել են ԶԼՄ-ների կարգավիճակից բխող հիմնական ասպեկտները և ԶԼՄ-ների գործունեության կազմակերպման հարցերը:

Հոդվածում ներկայացված են նաև ԶԼՄ-ների միջոցով Հայաստանի Հանրապետությունում դատական իշխանության հանդեպ հասարակական կարծիքի ձևավորման առանձնահատկությունները: Ամփոփված են դատարանների և ԶԼՄ-երի փոխհարաբերակցության առանձնահատկությունները դռնբաց լուսման ժամանակ, այդ թվում՝ դռնփակ, ինչպես նաև՝ դատական իշխանության գործունեության այլ հարցերի լուսաբանման հարցեր: Առաջարկվել են դատական իշխանության և ԶԼՄ-ների արդյունավետ հաղորդակցության կարգավորման միջոցներ:

Բանալի բառեր և բառակապակցություններ. դատական իշխանություն, դատարան, դատավոր, հանրաին կարծիք, հրապարակայնություն, զանգվածային լրատվամիջոցներ:

ПРЕСС-СЛУЖБА КАК ИНСТРУМЕНТ ВЗАИМОДЕЙСТВИЯ СУДЕБНОЙ ВЛАСТИ И СРЕДСТВ МАССОВОЙ ИНФОРМАЦИИ

ЛИЛИТ ХАРАТЯН

Национальная академия наук Республики Армения
Международный научно-образовательный центр
юристконсульт
lilit.kharatyan@isec.am

Аннотация

СМИ постоянно и целеустремленно формируют общественное мнение по достаточно широкому кругу вопросов. Одним из таких вопросов, который представляет значительный интерес для общества в Армении, является деятельность судебной ветви власти, ведь общественность всегда хочет быть проинформированной относительно особенностей функционирования судов и работы судей. Именно поэтому сегодня крайне важным является налаживание эффективной коммуникации судебной власти с обществом, которая может приблизить процесс становления правосудия в Армении к европейским стандартам. Создание эффективной системы взаимодействия судов и СМИ является актуальным вопросом на этапе демократических преобразований в современной Армении, именно поэтому важность этого вопроса должны четко осознавать и последовательно выполнять как судьи, так и представители СМИ.

Эффективность коммуникации СМИ и судебной системы также очень важна, поскольку помогает решать многочисленные вопросы, которые стоят сегодня перед гражданским обществом в Армении. Среди таких, в частности, можно выделить; 1. укрепление и защита независимости судебной власти; 2. повышение доверия общества к судебной власти; 3. формирование позитивного имиджа судебной власти; 4. удовлетворение общественного интереса в сфере общественно важной информации; 5. обеспечение прозрачной и открытой деятельности судов, направленной на ознакомление с деятельностью судов и судей, а также с конституционными правами и обязанностями граждан в доступной для широкой общественности форме; 6. обеспечение согласованной и последовательной коммуникации судов и СМИ.

В связи с этим в статье анализируются ключевые проблемы взаимодействия судов и средств массовой информации на современном этапе. Анализируется организация судебной властью информационной работы, направленной на улучшение имиджа и повышения доверия к правосудию. Рассматриваются основные проблемы статуса пресслужбы суда и организации их деятельности.

В статье проводится также исследование особенностей формирования средствами массовой информации общественного мнения относительно судебной власти в Армении. Рассматриваются проблемы взаимодействия судов и СМИ во время проведения открытых слушаний, за пределами слушания открытых дел, а также при освещении СМИ других вопросов о деятельности судебной власти. Предлагаются способы налаживания эффективной коммуникации судебной власти и средств массовой информации.

Ключевые слова и словосочетания: судебная власть, суд, судья, общественное мнение, гласность, средства массовой информации.

PRESS SERVICE AS AN INSTRUMENT FOR INTERACTION BETWEEN THE JUDICIAL POWER AND MASS MEDIA

LILIT KHARATYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
International Scientific-Educational Center
Legal Adviser
lilit.kharatyan@isec.am

Abstract

The media constantly and purposefully form public opinion on a fair wide range of issues. One of such issues, which is of considerable interest to the society in Armenia, is the activities of the judicial power since the public always wants to be informed about the features of the functioning of courts and the work of judges. That is why today it is extremely important to establish effective communication between the judicial branch and society, which can bring the process of establishing justice in Armenia closer to European standards. The creation of an effective system of interaction between courts and the media is a topical issue at the stage of democratic transformations in modern Armenia, which is why the importance of this issue should be clearly understood and consistently implemented by both judges and media representatives.

The effectiveness of communication between the media and the judiciary is also very important, as it helps to resolve the many issues that civil society in Armenia faces today. Among these, in particular, one can single out: 1. strengthening and protecting the independence of the judicial power, 2. increasing public confidence in the judicial branch, 3. forming a positive image of the judicial branch, 4. satisfying the public interest in the field of publicly important information, 5. ensuring transparent and open activities of the courts, 6. aiming familiarization with the activities of courts and judges, as well as with the constitutional rights and obligations of citizens in a form accessible to the general public, 7. ensuring coordinated and consistent communication between courts and the media.

The article analyzes the crucial problems of interaction between the courts and the media at the present stage. The organization of the judicial power of information work aimed at improving the image and increasing trust in justice is analyzed. The main problems of the status of the press service of the court and the organization of their activities are considered.

The article also shows the research of features of mass media forming a public opinion regarding judicial power. Problems of interaction between courts and mass media during open trials, beyond trials, and also during mass media coverage of other activities of judicial power are reviewed. Ways of improving effective communications between judicial power and mass media are proposed.

Keywords and phrases: judicial branch, court, judge, public opinion, publicity, media.

Ներածություն

Հայաստանի Հանրապետության օրենսդրական բարեփոխումների պայմաններում, ի թիվս այլնի, կարևոր և առաջնային կարգավորման խնդիրներից է ՁԼՄ-ների ոլորտի և դատական իշխանության միջև փոխհարաբերությունների կարգավորումը, զանգվածային լրատվամիջոցների և լրագրողների անխոչընդոտ գործունեությունը, արդարադատության հեղինակության բարձրացումը, դատարանների աշխատանքի թափանցիկությունը, որի կարգավորման պարագայում հնարավոր կլինի ապահովել ինչպես դատական իշխանության, այնպես էլ զանգվածային լրատվամիջոցների անկախությունը: ՀՀ ներպետական օրենսդրության մեջ (ՀՀ Սահմանադրություն, ՁԼՄ-ների օրենսդրություն, իրավական ակտեր) վերջին տարիներին կատարվեցին փոփոխություններ և լրացումներ՝ կապված ՁԼՄ-ների և դատական իշխանության միջև հարաբերությունների, դատարանների գործունեության հրապարակայնության, տեղեկատվություն ստանալու, տարածելու և հրապարակելու հետ: ՀՀ լրատվամիջոցների անկախությունը և գործունեության ազատությունը սահմանված է ՀՀ Սահմանադրությամբ, ընթացիկ օրենսդրությամբ, ՁԼՄ-ների մասին օրենքով և այլ իրավական ակտերով: 2015 թ. նոր խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության մեջ ամրագրվեցին ՁԼՄ-ների անկախության երաշխիքներ, որոնք առավելապես ուղղված էին լրատվամիջոցների և պետական իշխանության մարմինների միջև հարաբերությունների կարգավորմանը:

Տեսական մաս

Դեռևս 2018 թվականի հեղափոխությունից հետո ՀՀ դատական իշխանության անկախության, արդարադատության և դատավորների անկողմնակալության, անաչառության և արդարության սկզբունքներով գործունեություն իրականացնելու մասին հանրության կողմից ձևավորվեց ծայրահեղ բացասական վերաբերմունք: Դատավորների անկողմնակալության, անաչառության և օբյեկտիվության հարցում, մասնավորապես՝ դատավորի կողմից կայացված պատճառաբանված և օրինական եզրափակիչ դատական ակտի մասին, ՁԼՄ-ներով տարածված հրապարակումներում, ինչպես նաև պետական գործիչների և պաշտոնատար անձանց կողմից արված արտահայտություններում, հաճախ կարելի է հանդիպել կոշտ քննադատության՝ ուղղված դատարաններին և դատավորներին: Բազմաթիվ հրապարակումներ վերաբերում են դատարանների կողմից արդարադատության սկզբունքների ոտնահարմանը, դատական համակարգում կոռուպցիայի առկայությանն ու նման դեպքերի բացահայտմանը, դատավորների կողմից հաճախ ոչ օրենքին համապատասխան որոշումների և վճիռների կայացման հարցերին: Այս ամենը բացասաբար է անդրադառնում դատական իշխանության հեղինակության վրա, նսեմացվում և հեղինակագրկվում են դատավորները, հետևաբար՝ քաղաքացիների օբյեկտիվ իրականության ընկալման և հասարակական կարծիքի ձևավորման տեսանկյունից այս ամենը թողնում է բացասական ազդեցություն:

Նախևառաջ՝ պետք է նշել, որ արդարադատության իրականացումը և արդարադատության հեղինակությունը դատական համակարգի անկախության հիմքն է և իրական ժողովրդավարության, սոցիալական և իրավական պետության առանցքը: Արդարադատության հանդեպ վստահության և հեղինակության անհրաժեշտ և կարևոր նախապայմաններից պետք է առանձնացնել արդարադատության սոցիալական արժեքը: Գրեթե բոլոր ժողովրդավարական պետություններում դատական իշխանության գործունեության անկախությունը նախևառաջ պայմանավորված է այն հանգամանքով, թե արդյոք որքա՞ն է համապատասխանում դատավորների գործելաճը արդարության, օրինականության, իրավունքի գերակայության սկզբունքներին, որքանով են պատճառաբանված և հիմնավորված դատավորների կողմից կայացված որոշումները և վճիռերը: Շատ կարևոր է, որ դատարանների որոշումները լինեն հասարակությանը հասանելի, քանի որ դատական իշխանության թափանցիկ և հրապարակային գործունեությունն է կանխորոշում հասարակության կողմից դատարանների նկատմամբ հարգանքի և վստահության ձևավորումը: Հենց սրանում է արդարադատության սոցիալական նշանակությունը: Մյուս կողմից՝ դատական համակարգի գործունեության հրապարակայնության տակ չպետք է հասկանալ հասարակության զուտ հետաքրքրությունը բավարարելու մեջ, այլ հակառակը՝ *արդարադատության իրականացումը պաշտպանում է դատարան դիմած անձանց իրավունքներն ու օրինական շահերը և նպատակ*

հետապնդում, որ «արդարադատությունը չհեռանա հասարակական հսկողությունից և նպաստի արդարադատության նկատմամբ վստահության պահպանմանը» [12]:

Այսպիսի իրավիճակում կարող են առաջանալ բազմաթիվ խոչընդոտներ՝ ՁԼՄ-ներով դատական իշխանության գործունեությունը լուսաբանելու՝ հրապարակայնության ապահովման տեսանկյունից: Անդրադառնանք դրանցից մի քանիսին.

Դատական իշխանության և դատական գործընթացները լուսաբանելիս ՁԼՄ-ների ներկայացուցիչների և լրագրողների աշխատանքի հիմնական խոչընդոտը՝ դատական նիստերին նրանց մուտքի սահմանափակումներն են, որի արդյունքում տուժում է հավասարաչափ ինչպես ՁԼՄ-ների և լրագրողների գործունեության ազատությունը՝ հավաստի, օբյեկտիվ տեղեկատվության տարածումը, այնպես էլ դատական անկախությունը: Դատական քննության հրապարակայնության սկզբունքը ամրագրված է բազմաթիվ իրավական ակտերում որպես արդարադատության իրականացման առաջնային սկզբունք, սակայն այն բավարար չափով չի ապահովվում պետական իշխանության մարմինների կողմից ՁԼՄ-ների գործունեության պարագայում:

Հրապարակայնության սկզբունքը ամրագրված է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին մասով (1993թ-ին), Մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով, (Արդար դատաքննության իրավունք) Մարդու իրավունքների համընդհանուր Հռչակագրով և այլ միջազգային իրավական ակտերով [8]: Հայաստանի Հանրապետությունը, վավերացնելով ՄԻԵԿ-ը, ստանձնեց պարտավորություն՝ իրականացնել դատական քննություն բացառապես **արդար և հրապարակային դատաքննության սկզբունքով** (ՄԻԵԿ 6-րդ հոդվ.): Նշված իրավական ակտերի դրույթները սահմանում են երաշխիքներ ՁԼՄ-ների և լրագրողների համար, որոնք, դատական համակարգի գործունեությունը լուսաբանելուց բացի, դատարանի հեղինակության պաշտպանության գործում ունեն չափազանց մեծ կարևորություն:

Միևնույն ժամանակ, ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածով երաշխավորված՝ արտահայտվելու ազատությունը միևնույն ժամանակ սահմանել է կարծիքի ազատության սահմանափակում «դատական մարմինների անկողմնակալության և հեղինակության պաշտպանության» նկատառումներով՝ հիմք ընդունելով գերակա հանրային շահը [7]:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի առնչությամբ [8] ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի կողմից կատարվել են մեկնաբանություններ՝ կապված լրատվամիջոցների դատական նիստերի մատչելիության և հրապարակայնության, ինչպես նաև՝ դատական քննության իրականացման մասին հասարակությանը տեղեկացնելու պարտավորության վերաբերյալ:

Վերոնշյալ միջազգային իրավական ակտերի միջոցով դատական նիստերի հրապարակայնությունն ու դատարաններում լրագրողների ներկայությունը ապահովվելով՝ երաշխավորվում է լրագրողների և ՁԼՄ ներկայացուցիչների՝ դատարաններում գործերի քննության լուսաբանման իրավունքը:

Միջազգայնորեն սահմանված և ճանաչված է նույնպես լրատվամիջոցներով քրեական դատավարության վարույթը լուսաբանելու իրավունքը: (Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտե R (2003) թիվ 13 Հանձնարարական Զանգվածային լրատվամիջոցներով քրեական վարույթի հետ կապված տեղեկատվության տրամադրման վերաբերյալ): Հանձնարարականը ամրագրել է մի շարք կարևոր սկզբունքներ, որոնք վերաբերում են լրագրողների դատական գործընթացների ազատ լուսաբանման իրավունքին և հասարակությանը քրեական արդարադատության իրականացման մասին տեղեկություններ տրամադրելուն [1]: Հանձնարարականում նաև սահմանված են լրագրողի լուսաբանման գործունեությունը սահմանափակող սկզբունքներ, երբ հարցն առնչվում է հասարակական, անձնական շահերի և այլ իրավաչափ նպատակների պաշտպանությանը, մասնավորապես՝ անմեղության կանխավարկածին, անձնական կյանքի գաղտնիության պաշտպանությանը, անչափահասների շահերի պաշտպանությանը և այլն: Լրատվամիջոցների և լրագրողների գործունեության համար առանձնակի կարևորություն ունեցող սկզբունքներ, սակայն մինչ օրս անտեսվել են և տեղ չեն գտել

տվյալ ոլորտը կարգավորող ՀՀ ներպետական օրենսդրությունում, հետևաբար նաև՝ իրավակիրառ պրակտիկայում: Այդ սկզբունքներն են՝

- **Լրագրողների մուտքի թույլտվությունը դադարական նիստերին**, համաձայն որի՝ լրագրողներն իրավունք ունեն ներկա գտնվելու դատական նիստերին առանց որևէ խտրականության և նախնական հավատարմագրման ընթացակարգի: Բացառություն է արված միայն դռնփակ նիստերի և սահմանափակումների դեպքում:

- **Լրատվամիջոցների ներկայացուցիչների համար դադարական նիստերի դահլիճների մուտքի հասանելիությունը**: Լրագրողները և ՋԼՄ-ների ներկայացուցիչների համար առանց կողմնակի բացառության և խտրականության դատարանի դահլիճում պետք է հատկացված լինեն տեղեր:

- **ՋԼՄ-ներին և լրագրողներին տեղեկատվություն տրամադրելու ձևեր և ընթացակարգեր**: Այս սկզբունքը պարտավորեցնում է իրենց իրավասության շրջանակներում համապատասխան տեղեկատվության տիրապետող իրավասու մարմիններին, անհապաղ տրամադրել ՋԼՄ-ներին գործին առնչվող տվյալներ և նյութեր: Սահմանված են ընթացակարգեր, որոնց համաձայն տեղեկատվությանը տիրապետող իրավասու պետական մարմինները, այդ թվում՝ դատական մարմինները, ինչպես և ինչպիսի տեղեկատվություն կարող են տրամադրել լրատվամիջոցներին կամ մերժել այդպիսին տրամադրելուց: Դրա հետ մեկտեղ հիմնավորելով նախաքննության գաղտնիությունը և այնպիսի տեղեկատվության առկայությունը, որը պարունակում է գաղտնիք և չի կարող ընդհանրապես հրապարակվել:

- **ՋԼՄ-ներով հաղորդումներ և ձայնագրություններ կատարելը անմիջապես դադարական նիստի դահլիճից**: Այս սկզբունքը չունի օրենսդրական ամրագրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությունում: Սկզբունքի հիմքում ընկած լրատվամիջոցների այսպիսի գործառույթները կարող են իրականացվել և թույլատրվել միայն այն դեպքերում, երբ կա երաշխիք, որ նման գործողությունների հետևանքով բարոյական վնաս չի պատճառվի քրեական վարույթի մասնակիցներին:

- **Դատավճռի կատարման վերաբերյալ ՋԼՄ-ների լուսաբանումը**: Այս սկզբունքի կիրառումը և որպես օրենսդրական նորմ ձևակերպումն ու ամրագրումը իրականացվում է միայն բարձր ժողովրդավարության պետություններում, որտեղ ՋԼՄ-ների նկատմամբ հանրության վստահությունը և անկախությունը առավել բարձր մակարդակի են: Սկզբունքի որպես օրենսդրական նորմ ամրագրելու անհրաժեշտություն ներկայումս ՀՀ-ում չկա, քանի որ այն ենթադրում է լրագրողի անմիջական կապ հաստատելու թույլտվություն ազատագրվածի հետ:

- **Լրատվամիջոցների գործունեության համար բարենպաստ պայմաններ ստեղծելը**: Այս սկզբունքը պաշտպանում է լրագրողի տեղեկությունների մատչելիությունը և նույնպես դիտարկվում որպես իրավասու մարմինների պարտավորություն՝ ապահովելու և տրամադրելու լրատվամիջոցներին բավարար տեղեկություններ կայանալիք դատական նիստերի մասին, որպեսզի լրատվամիջոցները կարողանան սահմանված ժամանակահատվածում ներկա գտնվել դատական նիստին և ստանալ հրապարակված վճիռների պատճենները՝ առանց որևէ խտրականության:

- **Ազատագրված անձի պարիժը կրելուց հետո ՋԼՄ-ների լուսաբանումը**: Այս հարցում ՋԼՄ-ները պետք է կարողանան կողմնորոշվել և հաշվի առնել երկու հանգամանք. նախ՝ որքանով է անհրաժեշտ տվյալ տեղեկության հրապարակումը հաարակությունում, և երկրորդ՝ արդյո՞ք տեղեկության հրապարակումը բխում է հանրային շահից, թե՞ ամեն դեպքում պետք է նախապատվություն տալ անձնական շահին:

Այդուհանդերձ, պետք է նշել, որ միջազգային իրավական ակտերը չեն նախատեսում լրագրողների լուսաբանման աշխատանքն իրականացնելու ձևերը: Ենթադրվում է, որ լրատվամիջոցներով դատական մարմինների գործունեության լուսաբանումը պետք է իրականացվի պետության կողմից ընդունված օրենքների պահանջների խստիվ պահպանմամբ (վերջինիս առկայության դեպքում), սակայն օրենքի բացակայության հանգամանքը թվում է, որ այն մի կողմից բարենպաստ է լրագրողի ազատ գործունեության համար և հետևաբար՝ լրագրողն ազատ է լուսաբանման միջոցի ընտրության հարցում, սակայն մյուս կողմից՝ առաջացնում է որոշակի

խոչընդոտներ առհասարակ դատարանի դահլիճում լրագրողների ներկա գտնվելու տեսանկյունից: Գործնականում առավել հաճախ է պատահում, երբ լրատվամիջոցի ներկայացուցչի կամ լրագրողի լուսանկարելու, հեռարձակելու, տեսաձայնագրելու միջնորդությունը մերժվում է դատավորի կողմից՝ պատճառաբանելով դատական գործընթացի մասնակիցների անհամաձայնությունը: Դատական պրակտիկայում ձևավորվել է սովորույթ, համաձայն որի՝ դատական նիստին կարող են թույլատրվել լրատվամիջոցների ներկայացուցիչները, սակայն լուսաբանման հարցում (տեսանկարելու կամ հեռարձակելու), պետք է առարկություն չլինի նիստին ներկա գտնվող մասնակիցներից: Հետևաբար՝ ստեղծվում է այնպիսի իրավիճակ, երբ լրագրողին թույլ են տալիս ներկա գտնվել դատական նիստերին, բայց լուսաբանելու հարցում կիրառվում են սահմանափակումներ:

Այսպիսով՝ ժողովրդավարության բարձր մակարդակ ունեցող պետություններում արդարադատությունն իրականացվում է **հրապարակայնության սկզբունքի համաձայն**: Այն **երաշխավորում է** դատական համակարգի անկախությունը, դատարանների գործունեության թափանցիկությունն ու մատչելիությունը, դատավորների անկողմնակալությունն ու օբյեկտիվությունը: Սկզբունքն ամրագրված է յուրաքանչյուր պետության ներքին օրենսդրությամբ: ՀՀ օրենսդրության համաձայն, մասնավորապես՝ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվ. 1-ին կետով սահմանված է դատական վարույթի հրապարակայնությունը, Քրեական դատավարության օրենսգրքով՝ (17-րդ հոդվ. 1-ին կետ **[5]** դատական նիստերի քննության հրապարակայնությունը, համաձայն որի՝ դատարանում քննությունն իրականացվում է դռնբաց դատական նիստում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, երբ դատական քննությունն անհրաժեշտ է իրականացնել դռնփակ նիստով:

Պետք է նշել, որ գործող **Սահմանադրությամբ** դատական նիստերի կամ դատական վարույթների հրապարակայնության սկզբունքը ամրագրված չէ: Ի տարբերություն մյուս պետությունների Սահմանադրությունների՝ (Ռուսաստանի, Մոլդովայի, Բելառուսի, Ադրբեջանի և այլն), որտեղ տվյալ սկզբունքը սահմանադրորեն ամրագրված նորմ է:

Քաղաքացիական գործերով դատավարությունները իրականացվում են դռնփակ, եթե դրանք վերաբերում են «*դատավարության մասնակիցների մասնավոր կյանքի, ներառյալ՝ առևտրային գաղտնիքի, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանությանը*», որի կապակցությամբ առկա է գործին մասնակցող անձի միջնորդությունը կամ անձնական նախաձեռնությունը՝ գործը կամ դրա մի մասը քննության առնել դռնփակ դատական նիստում **[2]**:

Քրեական դատավարության օրենսգրքը սահմանում է հանցագործությունների սպառիչ ցանկը, որոնց դեպքերում չի թույլատրվում դռնբաց դատական քննություն: Դրանք են մասնավորապես այն հանցագործությունները, որոնք պարունակում են պետական և ծառայողական գաղտնիք և վերաբերում են մասնավոր և ընտանեկան կյանքին, անձի պատվին և արժանապատվությանը, սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության պաշտպանությանը և այլն **[3]**:

Փորձը ցույց է տալիս, որ դատական համակարգի, դատարանների արդարության, դատավորների անկողմնակալության և օբյեկտիվության, դատական գործընթացների լուսաբանման հարցում լրատվամիջոցները առավելապես դրսևորում են բացասական տրամադրվածություն, քան դրական, դատարաններն էլ իրենց հերթին շահագրգռված չեն՝ համագործակցելու լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ՝ հիմնավորելով վերջիններիս աշխատանքի բուն նպատակը՝ դատական իշխանության անկախությունը նսեմացնելու փորձեր և միջամտություն դատարանների գործունեությանը: Ներկայիս պայմաններում, դատարանների և ՋԼՄ-ների արդյունավետ համագործակցության մասին խոսք գնալ չի կարող, քանի որ վերջին ժամանակաշրջանում ներքաղաքական և իրավական դաշտում տեղի ունեցող փոփոխությունները ակնհայտ վկայում են դատական իշխանության և լրատվամիջոցների խորը անջրպետվածության մասին:

ՋԼՄ-ների և դատական իշխանության ոչ արդյունավետ փոխհարաբերակցության պատճառներից է նաև այն, որ դատական մարմինների գործունեության մասին մամուլի հրապարակումներում բավականին հաճախ արտացոլվում է լրատվամիջոցների անհատական մոտեցումը (հատկապես աղմկահարույց գործերով), որն էլ, իր հերթին, ազդեցություն է ունենում

հասարակական կարծիքի ձևավորման վրա: **Սովորաբար դատական իշխանության գործունեությունը լուսաբանող լրագրողները ամենևին շահագրգռված չեն հասարակության մեջ արդարադատության հեղինակությունը պաշտպանելու հարցում, դեռ ավելին՝ որոշ լրատվամիջոցներ բավականին հաճախ հրապարակում են քննադատական հայտարարություններ, որոնք սովորաբար զուգորդվում են սեփական դատողություններով և գնահատականներով դատարանների գործունեության և դատավորների մասին:**

Հաճախ է պատահում, երբ առանձին լրագրողներ, որոնք մամուլի միջոցով լուսաբանում են դատական իշխանության գործունեության, դատական համակարգի, դատական բարեփոխումների և առհասարակ, դատավորների գործունեության մասին հայտարարություններ, որպես կանոն, հնչեցնում են դատարանի գործունեության և դատարանի որոշման օրինականությանն ուղղված քննադատություններ, կասկածի տակ դնելով ինչպես դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշման կամ վճռի օրինականությունը, այնպես էլ այդպիսի որոշում կայացրած դատավորի անկողմնակալությունը [9]: Հայաստանյան որոշ լրատվամիջոցներ իրենց («Հրապարակ», «Առավոտ», www.hetq.am) հրապարակումներում բազմիցս հնչեցնում են քննադատություններ՝ ուղղված դատավորի անաչառությանն ու անկողմնակալությանը, և արդյունքում վնաս է հասցվում արդարադատության հեղինակությանը, և ընդհանուր առմամբ՝ դատական իշխանության համակարգին: Արդարադատության և դատավորների անկողմնակալությունը ժխտող ՁԼՄ-ների բացասական հրապարակումներից հասարակությունում աստիճանաբար ձևավորվում է անվստահության մթնոլորտ դատական իշխանության անկախության նկատմամբ, որի հիմնական պատճառը հաճախ ոչ թե ՁԼՄ-ների և լրագրողների հրապարակային լուսաբանումն է, այլ վերջիններիս ոչ բավարար իրավաբանական գիտելիքի իմացությունը և մասնագիտական պատրաստվածության, իրավիճակը օբյեկտիվ և լիարժեք գնահատելու և լուսաբանելու մասնագիտական անկարողությունը: Հետևաբար՝ լրատվամիջոցների և դատարանների միջև գործընկերային հարաբերությունների հաստատումը և փոխադարձ վստահության վրա հիմնված փոխգործողությունը հնարավոր կլինի ապահովել՝ ստեղծելով արդյունավետ կառուցակարգեր և պայմաններ, որոնք հանդես կգան որպես միջնորդներ՝ ապահովելու և հաստատելու ՁԼՄ-ների և դատարանների միջև կապը և վստահությունը:

Լրատվամիջոցներով դատական իշխանության և դատավորների անկողմնակալության դեմ ուղղված ցանկացած քննադատություն, (դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշման օրինականությունն ու իրավաչափությանը վիճարկող և այլն), որպես կանոն, դատավորների կողմից ընկալվում է որպես միջամտություն դատարանների գործունեությանը և արդարադատությունը հեղինակագրկելու փորձեր [11]: Մինչդեռ լրատվամիջոցները պնդում են հակառակը, որ օրենսդրության պահանջներին համապատասխան նրանք կրում են դատարանների գործունեության մասին տեղեկատվության տարածման պարտավորություն, և բացի այդ՝ օժտված են իրավունքով՝ արտահայտելու սեփական դատողությունները և գնահատականները, այդ թվում՝ մամուլով տարածել դատարանների գործունեության վերաբերյալ հրապարակումներ:

Ինչպես հայտնի է, դատարանի որոշման վերաբերյալ լրագրողական գնահատականը որևէ պարագայում չի կարող ազդեցություն ունենալ և դիտվել որպես միջամտություն արդարադատության իրականացմանը այն պարզ պատճառով, որ լրագրողական գնահատականը չի կարող ունենալ իրավաբանական հետևանքներ, մյուս կողմից՝ դատարանի կողմից կայացված վերջնական որոշումը կամ վճիռը մամուլում հրապարակվելուց հետո կարող է հայտարարվել չեղյալ: Այստեղից կարելի է եզրակացնել, որ սույնով էլ արտահայտվում է լրագրության իրական փոխազդեցությունը դատական պրակտիկայի նկատմամբ:

Մյուս կողմից՝ ՁԼՄ-ներով դատարանների գործունեության վերաբերյալ օրենսդրական դրույթների վրա հիմնված կառուցողական և առողջ քննադատական վերլուծությունը հնարավորություն է տալիս դատարաններին կայացնելու օրինական և հիմնավորված որոշումներ՝ ամրապնդելով հանրության վստահությունը արդարադատության նկատմամբ:

Իր հերթին, դատարանները, չճանաչելով ՁԼՄ-ների և լրագրողների հայտարարությունները իրականությանը համապատասխանող, կամ գտնելով, որ լրատվամիջոցների հրապարակումները պարունակում են զրպարպություն, վիրավորանք կամ պապիվն ու արժանապատվությունը

արաբավորող տեղեկություններ, ենթարկում են վերջիններիս պարասխանավության: Այս պարագայում, սակայն, դատարանի հերթական որոշումը կրկին կարժանանա իր գնահատականին ՁԼՄ-ներում: Այսպիսի հանգամանքը դատական իշխանության և ՁԼՄ-ների փոխհարաբերության հիմնախնդրի թերևս ամենաբացասական կողմն է: Լրատվամիջոցները դատական իշխանության գործունեությունը լուսաբանելիս առաջնորդվում են դատարանների հետ գործընկերային հարաբերությունների հաստատման և փոխադարձ վստահության ձեռք բերելու, օբյեկտիվ իրականությունը հանրությանը հասցնելու և այդ կերպ՝ հասնելու իրենց գործունեության անկախության և ազատ խոսքի իրացմանը, քանի որ միայն այդ կերպ ՁԼՄ-ները հնարավորություն կունենան օբյեկտիվ լուսաբանելու դատական իշխանության գործունեությունը:

Այսպիսի տեսակետ է արտահայտում **Վ. Լեբեդևը**, որի համոզմամբ դատական իշխանության և ՁԼՄ-ների փոխհարաբերության հիմնախնդրի կարգավորման համար անհրաժեշտ է նախևառաջ՝ կարողանալ վերանայել և հաղթահարել հասարակության մեջ արմատացած հասարակական հարաբերությունների հոգեբանական կողմը, մասնավորապես՝ «*դիտարկել ՁԼՄ-ները որպես դաշնակիցներ, այլ ոչ թե որպես հակառակորդներ, քանի որ միայն դրանց միջոցով է հնարավոր հասարակությանը և հասարակության անդամներին հասցնել ճշմարտությունը արդարադատության աշխարհային մասին*» [10]:

Այսպիսով՝ որո՞նք են դատական իշխանության և ՁԼՄ-ների փոխհարաբերակցության հիմնական խնդիրները և ինչպիսի իրավական կարգավորման պեպք է ենթարկվեն լրատվամիջոցի և դատական մարմինների հարաբերությունները:

Քրեական դատավարության օրենսգրքով առաջին անգամ սահմանված է լրագրողի մասնագիտական գործունեության պաշտպանությանն ուղղված երաշխիք, լրագրողի միջնորդությամբ դռնփակ դատական նիստ անցկացնել այն դեպքում, երբ «դատարանի որոշմամբ լրատվական գործունեություն իրականացնողին կամ լրագրողին պարտադրվում է բացահայտել տեղեկատվության աղբյուրը» [4]: Միևնույն ժամանակ, քրեական դատավարության օրենսգրքով սահմանված է լրագրողի պաշտպանության դատավարական երաշխիք՝ չհարցաքննվել որպես վկա տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու իրավունքի ապահովմամբ (այս երաշխիքի ամրագրումը բխում է վերջերս Սահմանադրական դատարանի կայացրած որոշումից):

Գործող օրենսդրությամբ սահմանված չեն **լրատվամիջոցների և լրագրողների իրավունքներն ու պարտականությունները** դատական վարույթի և դատական նիստերի քննության ընթացքում: Ենթադրվում է, որ վերջիններս ունեն որոշակի գործառույթների և իրավունքների իրականացման իրավասություն՝ անկախ դրանց օրենսդրական ամրագրման փաստից: Լրագրողները դատական նիստերը լուսաբանելիս ունեն հետևյալ նվազագույն **իրավունքները**՝ ձայնագրելու կամ որևէ այլ եղանակով ամրագրելու դատարանում տեղի ունեցածը, ընդ որում՝ լրագրողն իրավունք ունի տեսաձայնագրելու կամ նկարահանելու դատական նիստը միայն դատարանի կամ դատավորի թույլտվությամբ: Դատարանի տարածքից դուրս կամ այլ տարածքներում, որտեղ ընթանում է դատական նիստը, լրագրողն իրավունք ունի տեսաձայնագրելու կամ նկարահանելու, սակայն պայմանով, որ պահպանվի անձնական կյանքի գաղտնիությունը, քաղաքացիների, այդ թվում՝ մեղադրյալի անձնական ոչ գույքային բնույթի իրավունքները:

Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված է լրագրողների և լրատվության միջոցների պարտավորություն, համաձայն որի՝ այն ՁԼՄ-ները և լրագրողները, որոնք հրապարակել են հանցագործությունների մասին հաղորդումներ, **պարտավոր են** հաղորդումների վերաբերյալ իրենց մոտ եղած նյութերը ներկայացնել հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի պահանջով [6]:

Եզրակացություն

Այսպիսով՝ ՁԼՄ-ի և դատական իշխանության փոխհարաբերակցության հիմնախնդիրը պահանջում է հստակեցում և հրատապ իրավական կարգավորում, որի լուծման համար անհրաժեշտ է անդրադառնալ հետևյալ հարցերին՝

✓ ՁԼՄ-ների և դատական համակարգի արդյունավետ փոխգործողությունն ապահովելու համար ՁԼՄ-ների և դատարանների պարտականությունների հստակեցումը.

✓ արդարադատության հեղինակության պաշտպանության հարցում առաջարկվող հիմնական ուղղությունները և խնդիրները (մամուլի ծառայությունների և մամուլ քարտուղարների ինստիտուտի ներդրումը և առկայությունը դատական համակարգում):

Գրականության ցանկ

1. Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտե R (2003) թիվ 13 Հանձնարարական https://www.moj.am/storage/files/legal_acts/legal_acts_6415873160451_Prison-Overcrowding.pdf
2. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 14-րդ հոդված, 1966 թ. <https://www.arlis.am/documentview.aspx?docID=18500>
3. ՀՀ Քրեական դատավարության օրենսգիրք, 16-րդ հոդված, կետ 2 <https://www.arlis.am/documentview.aspx?docID=68011>
4. ՀՀ Քրեական դատավարության օրենսգիրք, 16-րդ հոդված 3-րդ կետ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=68011>
5. ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգիրք, 17-րդ հոդված, կետ 2 <https://www.arlis.am/documentview.aspx?docid=120057>
6. ՀՀ Քրեական դատավարության օրենսգիրք, 179-րդ հոդված, կետ 2 <https://www.arlis.am/documentview.aspx?docID=68011>
7. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա, 1953 թ. <https://www.arlis.am/documentview.aspx?docID=20870>
8. А. С. Безнасюк. Открытость правосудия ему же на пользу. <http://www.vkks.ru/publication/178/22/03/2018>
9. В. Лебедев. Председатель Верховного Суда РФ.
10. О. В. Третьякова. Средства массовой информации и авторитет правосудия. Статья. 2012, с. 202 <http://www.gramota.net/materials/3/2012/7-3/50.html> 22/03/2016:
11. Третьякова О. В. Средства массовой информации и авторитет правосудия. Статья. 2012, с. 201

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ. ԻՏԱԼԻԱՅԻ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀԵՏ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԱՏՈՄ ՄԻԽԹԱՐՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
գիտակրթական միջազգային կենտրոն
Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ
atom.mkhitaryan@isec.am

ՄԻՔԱՅԵԼ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
գիտակրթական միջազգային կենտրոն
իրավագիտության մագիստրանտ
miqayel-hayrapetyan@bk.ru

Համառոտագիր

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված է, որ Հանրապետության նախագահի թեկնածուն առաջադրվում է պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի գրավոր դիմումով:

Հանրապետության նախագահ է ընտրվում այն թեկնածուն, որը զաղտնի քվեարկությամբ ստացել է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք քառորդը:

ՀՀ Սահմանադրության 127-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանրապետության նախագահը պաշտոնը ստանձնում է Հանրապետության նախորդ նախագահի լիազորությունների ավարտման օրը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արտահերթ ընտրության միջոցով ընտրված Հանրապետության նախագահը պաշտոնը ստանձնում է ընտրվելուց հետո՝ տասներորդ օրը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանրապետության նախագահը պաշտոնը ստանձնում է Ազգային ժողովի հատուկ նիստում՝ ժողովրդին տրված հետևյալ երդմամբ. «Ստանձնելով Հանրապետության նախագահի պաշտոնը՝ երդվում եմ՝ հավատարիմ լինել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, իմ լիազորություններն իրականացնելիս լինել անաչառ, առաջնորդվել միայն համապետական ու համազգային շահերով և իմ ողջ ուժը ներդնել ազգային միասնության ամրապնդման գործում»:

Ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում և Իտալիայի Հանրապետությունում նախագահի ընտրության կարգը շատ նմանություններ ունի: Դրանցից են՝

- նախագահի ընտրության չափանիշները.
- ընտրության անցկացման կարգը.
- ընտրողներն մասնակցում են ընտրություններին հավասար հիմունքներով:

Պետությունը հավասար պայմաններ է ապահովում ընտրողների ընտրական իրավունքի իրականացման համար:

Բանալի բառեր և բառակապակցություններ. ՀՀ նախագահ, ընտրություններ, Ազգային ժողով, կառավարություն, ընտրական համակարգ, ՀՀ քաղաքացի, օրենք, ՀՀ Սահմանադրություն, պետական կառավարման համակարգի ձևեր, խորհրդարանական կառավարման համակարգ, Գերմանիայի Դաշնային Հանրապետության հիմնական օրենք, Իտալիայի Հանրապետության Սահմանադրություն:

ПРОЦЕДУРА ВЫБОРОВ ПРЕЗИДЕНТА РА: СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ С ВЫБОРАМИ В ИТАЛИИ И ГЕРМАНИИ

АТОМ МХИТАРЯН

Национальная академия наук Республики Армения
Международный научно-образовательный центр
кандидат физико-математических наук, доцент
atom.mkhitaryan@isec.am

МИКАЕЛ АЙРАПЕТЯН

Национальная академия наук Республики Армения
Международный научно-образовательный центр
магистр права
miqayel-hayrapetyan@bk.ru

Аннотация

Конституция Республики Армения предусматривает, что кандидат в президенты выдвигается по письменному заявлению не менее четверти от общего числа депутатов.

Президентом Республики избирается кандидат, набравший не менее трех четвертей от общего числа голосов депутатов при тайном голосовании.

Согласно части 1 статьи 127 Конституции Республики Армения, Президент Республики вступает в должность в день окончания срока полномочий предыдущего Президента Республики.

Согласно части 2 той же статьи, Президент Республики, избранный на внеочередных выборах, вступает в должность на десятый день после выборов.

Согласно части 3 той же статьи, Президент Республики вступает в должность на внеочередном заседании Национального собрания, принося народу следующую присягу: «Вступая в должность Президента Республики, клянусь быть верным Конституции Республики Армения, быть беспристрастным в осуществлении своих полномочий, руководствоваться только национальными и общенациональными интересами, все свои силы вкладывать в укрепление национального единства».

Как в Республике Армения, так и в Федеративной Республике Германии и Итальянской Республике процедура выборов Президента имеет много общего. Среди них:

- критерии выборы Президента;
- порядок проведения выборов;
- избиратели участвуют в выборах на равных основаниях.

Государство обеспечивает равные условия для осуществления избирательного права.

Ключевые слова и словосочетания: президент Республики Армения, выборы, Национальное Собрание, Правительство, избирательная система, гражданин Республики Армения, закон, Конституция Республики Армения, формы правления, парламентская система правления, Основной закон Федеративной Республики Германия, Конституция Итальянской Республики.

RA PRESIDENTIAL ELECTION PROCEDURE. COMPARATIVE ANALYSIS WITH ITALY AND GERMANY

ATOM MKHITARYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
International Scientific-Educational Center
PhD in Physical and Mathematical Sciences, Associate Professor
atom.mkhitaryan@isec.am

MIKAYEL HAYRAPETYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
International Scientific-Educational Center
Master of Laws
miqayel-hayrapetyan@bk.ru

Abstract

The Constitution of the Republic of Armenia stipulates that a presidential candidate is nominated by a written application of at least a quarter of the total number of deputies.

The candidate who receives at least three-quarters of the total number of votes of the deputies by secret ballot is elected President of the Republic.

According to Part 1 of Article 127 of the Constitution of the Republic of Armenia, the President of the Republic assumes office on the day of the end of the term of office of the previous President of the Republic.

According to part 2 of the same article, the President of the Republic elected by extraordinary election assumes office on the tenth day after being elected.

According to Part 3 of the same article, the President of the Republic assumes office at a special sitting of the National Assembly, with the following oath given to the people: "Assuming the post of the President of the Republic, I swear. To be faithful to the Constitution of the Republic of Armenia, to be impartial in the exercise of my powers, to be guided only by national and pan-national interests, to invest all my strength in the strengthening of national unity. "

Both in the Republic of Armenia and the Federal Republic of Germany, the procedure for electing the President in the Republic of Italy has many similarities. Among them are.

- Criteria for electing the President
- The process for conducting the election
- Voters participate in elections on an equal basis.

The state provides equal conditions for the exercise of the right to vote.

Keywords and phrases: president of the Republic of Armenia, elections, National Assembly, Government, electoral system, citizen of the Republic of Armenia, law, Constitution of the Republic of Armenia, forms of government system, parliamentary system of government, Basic Law of the Federal Republic of Germany, Constitution of the Republic of Italy.

Ներածություն

Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է: Գործում է ընտրական համակարգ, և ընտրողը ժողովուրդն է:

Ընտրությունները ժողովրդավարական կառավարման նախապայմաններն են, քանի որ դրանց միջոցով է, որ երկրի քաղաքացիները ազատ և օրենքի հիման վրա ընտրում են այն մարդկանց, որոնք օրինականորեն կառավարում են իրենց անունից և իրենց շահերից: Հանրապետության նախագահի թեկնածուներն ունեն Հանրապետության նախագահի թեկնածուի կարգավիճակից բխող հավասար իրավունքներ և պարտականություններ:

Հայաստանի Հանրապետության նախագահը պետության գլուխն է: Հանրապետության նախագահը հետևում է Սահմանադրության պահպանմանը, ապահովում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը: Հանրապետության նախագահը Հայաստանի Հանրապետության անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորն է:

Հանրապետության նախագահին անձեռնմխելի է: Հանրապետության նախագահն իր լիազորությունների ժամկետում և դրանից հետո չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել իր կարգավիճակից բխող գործողությունների համար: Իր կարգավիճակի հետ չկապված գործողությունների համար Հանրապետության նախագահը կարող է պատասխանատվության ենթարկվել իր լիազորությունների ավարտից հետո [1]:

Տեսամեթոդական հիմքեր

Հոդվածի համար հիմք է հանդիսացել մասնագիտական գրականությունը: Հոդվածի հետազոտության համար հիմք են հանդիսացել Հայաստանի Հանրապետության, Իտալիայի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության օրենքները՝ երկրի նախագահների ընտրության կարգի վերաբերյալ:

Համեմատական վերլուծության են ենթարկվել Հայաստանի Հանրապետության, Իտալիայի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության օրենսգրքում ներկայացված նախագահի ընտրության կարգի մասին հոդվածները:

Առավել մանրակրկիտ է ուսումնասիրվել ՀՀ Սահմանադրությունը, Ազգային ժողովի կանոնակարգ սահմանադրական օրենքը, որոնցով սահմանվում են Հանրապետության նախագահի ընտրության կարգի մանրամասները:

Ուսումնասիրության մեթոդներ

Ընդհանուր առմամբ, մեթոդը կարելի է սահմանել որպես միջոց՝ հետազոտության օբյեկտի և առարկայի ճանաչողության մեջ արդյունքների հասնելու համար: Հոդվածի համեմատական վերլուծական ուսումնասիրման համար ընտրվել են հետևյալ մեթոդները՝

- աշխատանք գրականության հետ.
- փաստաթղթերի վերլուծություն (օրենսգրքի ուսումնասիրություն):

Ուսումնասիրության մեթոդները ընտրվել են՝ հաշվի առնելով թեմայի բովանդակությունը:

Ստացված արդյունքներ

Ստացված արդյունքներով պարզ է դառնում, որ 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում Հայաստանի Հանրապետությունում կիսանախագահական կառավարման համակարգից անցում կատարվեց խորհրդարանական կառավարման համակարգի: Պետական կառավարման համակարգի փոփոխությունը «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում» հիմնավորվում է կիսանախագահական կառավարման ոլորտում առկա հիմնախնդիրներով [2], այդ հիմնավորումներում հատկապես առանձնացնելով Հանրապետության նախագահի իրավական կարգավիճակի առանձնակատկություններից բխող խնդիրները:

Սահմանադրական բարեփոխումների արդյունքում պետական կառավարման համակարգի փոփոխությունը ստեղծեց ՀՀ նախագահի և Ազգային ժողովի իրավասությունների նոր ծավալ:

ՀՀ Սահմանադրության 5-րդ գլուխը վերաբերում է Հայաստանի Հանրապետության նախագահի ինստիտուտին:

Հայաստանի Հանրապետության նախագահի կարգավիճակին վերաբերող դրույթները ՀՀ Սահմանադրության մեջ տեղ են գտել 123-րդ հոդվածում:

ՀՀ Սահմանադրության 123-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանրապետության նախագահը պետության գլուխն է:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հանրապետության նախագահը հետևում է Սահմանադրության պահպանմանը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանրապետության նախագահն իր լիազորություններն իրականացնելիս անաչառ է և առաջնորդվում է բացառապես համապետական և համազգային շահերով:

ՀՀ Սահմանադրության 124-րդ հոդվածով սահմանվում է Հանրապետության նախագահի լիազորությունների ժամկետը և նրան ներկայացվող պահանջները, մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրության 124-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանրապետության նախագահն ընտրվում է յոթ տարի ժամկետով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հանրապետության նախագահ կարող է ընտրվել քառասուն տարին լրացած, վերջին վեց տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին վեց տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն անձը Հանրապետության նախագահ կարող է ընտրվել միայն մեկ անգամ:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Հանրապետության նախագահը չի կարող զբաղեցնել որևէ այլ պաշտոն, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Հանրապետության նախագահն իր լիազորությունների իրականացման ընթացքում չի կարող լինել որևէ կուսակցության անդամ:

ՀՀ Սահմանադրության 125-րդ հոդվածով սահմանվում է Հանրապետության նախագահի ընտրության կարգը, մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրության 125-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանրապետության նախագահն ընտրվում է Ազգային ժողովի կողմից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հանրապետության նախագահի հերթական ընտրությունն անցկացվում է Հանրապետության նախագահի լիազորությունների ավարտից ոչ շուտ, քան քառասուն, և ոչ ուշ, քան երեսուն օր առաջ:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանրապետության նախագահի թեկնածու առաջադրելու իրավունք ունի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդը:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Հանրապետության նախագահ է ընտրվում այն թեկնածուն, որը ստացել է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք քառորդը: Եթե Հանրապետության նախագահ չի ընտրվում, ապա անցկացվում է ընտրության երկրորդ փուլ, որին կարող են մասնակցել առաջին փուլին մասնակցած բոլոր թեկնածուները: Երկրորդ փուլում Հանրապետության նախագահ է ընտրվում այն թեկնածուն, որն ստացել է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդը: Եթե Հանրապետության նախագահ չի ընտրվում, ապա անցկացվում է ընտրության երրորդ փուլ, որին կարող են մասնակցել երկրորդ փուլում առավել ձայներ ստացած երկու թեկնածուները: Երրորդ փուլում Հանրապետության նախագահ է ընտրվում այն թեկնածուն, որն ստանում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե Հանրապետության նախագահ չի ընտրվում, ապա տասնօրյա ժամկետում անցկացվում է Հանրապետության նախագահի նոր ընտրություն:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Հանրապետության նախագահի ընտրության կարգի մանրամասները սահմանվում են Ազգային ժողովի կանոնակարգով:

ՀՀ Սահմանադրության 126-րդ հոդվածի համաձայն՝ Հանրապետության նախագահի պաշտոնանկության, լիազորությունների կատարման անհնարինության, հրաժարականի կամ

մահվան դեպքերում Հանրապետության նախագահի պաշտոնը թափուր մնալուց ոչ շուտ, քան քսանհինգ, և ոչ ուշ, քան երեսունհինգ օր հետո անցկացվում է Հանրապետության նախագահի արտահերթ ընտրություն:

Այսպիսով՝ հարկ է ընդգծել, որ Հայաստանի Հանրապետության նախագահն ընտրվում է Ազգային ժողովի կողմից՝ բացառելով նրա ուղղակի ընտրությունը ժողովրդի կողմից:

Չթվարկելով Հանրապետության նախագահի բոլոր լիազորությունները մինչև վերջին սահմանադրական բարեփոխումները և դրանից հետո, այլ ուղղակի կատարելով վերլուծություն՝ անհրաժեշտ է փաստել, որ գործող սահմանադրական կարգավորումներով հանրապետության նախագահի լիազորությունների շրջանակը բավականին նեղացված է, և նրան հնարավորություն է տրված ունենալու միայն վերահսկողական լիազորություններ, այն է՝ հետևելու Սահմանադրության պահպանմանը, ուստի կարելի է արձանագրել, որ սահմանադրական փոփոխություններից հետո հանրապետության նախագահին վերապահվել են առավելապես արարողակարգային բնույթի լիազորություններ: Նման հետևության են հանգել նաև իրավաբաններ Վ. Պողոսյանը և Ն. Սարգսյանը իրենց հեղինակած աշխատության մեջ՝ նշելով, որ Հանրապետության նախագահը ունի միայն Սահմանադրության պահպանման գործառույթ [3]:

ՀՀ Սահմանադրության փոփոխությունների վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի երկրորդ նախնական կարծիքում նույնպես տեղ է գտել այն գնահատականը, որ Հայաստանի Հանրապետությունում նախագահի ինստիտուտը շատ ավելի թույլ է, քան բազմաթիվ այլ խորհրդարանական հանրապետություններում:

Նախագահի ընտրության կարգը Գերմանիայի դաշնային Հանրապետությունում.

Գերմանիայի Դաշնային Հանրապետության հիմնական օրենքի [4, 5] 5-րդ գլուխը վերաբերում է նախագահի ինստիտուտին:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության հիմնական օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Դաշնային նախագահի ընտրություններն անցկացվում են Դաշնային ժողովի կողմից՝ առանց բանավեճի: Նախագահ կարող է ընտրվել ցանկացած գերմանացի, որը իրավունք ունի մասնակցելու Բունդեսթագի ընտրություններին, և լրացել է քառասուն տարին:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դաշնային նախագահն ընտրվում է հինգ տարի ժամկետով: Վերընտրությունը թույլատրվում է միայն մեկ անգամ:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Դաշնային ժողովը գումարվում է դաշնային նախագահի լիազորությունների ժամկետի ավարտից ոչ ուշ, քան 30 օր առաջ, իսկ նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում՝ ոչ ուշ, քան այդ պահից 30 օր առաջ: Այն հրավիրում է Բունդեսթագի նախագահը [5]:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ընտրված է համարվում այն անձը, որը ստանում է Դաշնային ժողովի անդամների ձայների մեծամասնությունը: Եթե քվեարկության երկու փուլով նման մեծամասնություն չի ստացվում, ապա ընտրված է համարվում հաջորդ փուլում առավելագույն թվով ձայներ հավաքածը:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության հիմնական օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դաշնային նախագահը չի կարող լինել ոչ կառավարության, ոչ էլ Դաշնության կամ որևէ պետության օրենսդիր մարմնի անդամ:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության հիմնական օրենքի 57-րդ հոդվածի համաձայն՝ դաշնային նախագահի կողմից իր պարտականությունների կատարման անհնարինության կամ դրանց վաղաժամկետ դադարեցման դեպքում նրա լիազորություններն իրականացվում են Բունդեսրաթի նախագահի կողմից [4]:

Նախագահի ընտրության կարգն Իտալիայի Հանրապետությունում.

Իտալիայի Հանրապետության Սահմանադրության [6, 7] 83-րդ հոդվածի համաձայն՝ հանրապետության նախագահն ընտրվում է Խորհրդարանի կողմից իր անդամների համատեղ

ժողովի ժամանակ: Ընտրություններին մասնակցում է յուրաքանչյուր մարզից երեք պատվիրակ՝ ընտրված մարզային խորհրդի կողմից: Վալլե-դ'Աուտա մարզն ունի մեկ պատվիրակ: Հանրապետության նախագահի ընտրությունն իրականացվում է գաղտնի քվեարկությամբ՝ ձայների երկու երրորդի մեծամասնությամբ: Երրորդ քվեարկությանը բավական է բացարձակ մեծամասնությունը:

Իտալիայի Հանրապետության Սահմանադրության 84-րդ հոդվածի համաձայն՝ հանրապետության նախագահ կարող է ընտրվել ցանկացած քաղաքացի, որի հիսուն տարին լրացել է, և որը օգտվում է քաղաքացիական և քաղաքական իրավունքներից: Հանրապետության նախագահի պաշտոնն անհամատեղելի է որևէ այլ պաշտոնի հետ [6]:

Իտալիայի Հանրապետության Սահմանադրության 85-րդ հոդվածի համաձայն՝ հանրապետության նախագահն ընտրվում է յոթ տարի ժամկետով: Այդ ժամկետը լրանալուց երեսուն օր առաջ պատգամավորների պալատի նախագահողը գումարում է խորհրդարանի և մարզային պատվիրակների համատեղ ժողով հանրապետության նոր նախագահ ընտրելու համար:

Իտալիայի Հանրապետության Սահմանադրության 86-րդ հոդվածի համաձայն՝ Հանրապետության Նախագահի գործառույթները բոլոր այն դեպքերում, երբ նա ի վիճակի չէ դրանք կատարելու, իրականացվում են Սենատի նախագահի կողմից: Երկարատև խոչընդոտների առկայության, մահվան կամ հանրապետության նախագահի հրաժարականի դեպքում պատգամավորների պալատի նախագահողը նշանակում է հանրապետության նոր նախագահի ընտրություններ տասնհինգ օրվա ընթացքում:

Իտալիայի Հանրապետության Սահմանադրության 87-րդ հոդվածի համաձայն՝ հանրապետության նախագահը հանդիսանում է պետության գլուխը և ներկայացնում է ազգային միասնությունը [7]:

Եզրակացություն

Հոդվածում մանրամասն վերլուծվեց Հայաստանի Հանրապետության նախագահի ընտրության կարգը, որը համեմատական ուսումնասիրության ենթարկվեց Գերմանիայի Դաշնային Հանրապետության և Իտալիայի Հանրապետության ընտրական համակարգի հետ: Արդյունքում պարզ դարձավ, որ վերը նշված երկրներում ընտրական կարգը շատ նմանություններ ունի: Դրանք են՝

- նախագահի ընտրման չափանիշները.
- ընտրության անցկացման կարգը.
- ընտրողներն մասնակցում են ընտրություններին հավասար հիմունքներով.

Պետությունը հավասար պայմաններ է ապահովում ընտրողների ընտրական իրավունքի իրականացման համար:

Ընտրական օրենսդրությունը համապարփակ է և, եթե այն իրականացվի պատշաճ կերպով, ընդհանուր առմամբ նպաստավոր է ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու համար: Մի շարք դեպքերում իշխանությունները հայտնել են իրենց մտադրությունը՝ անցկացնել ընտրությունները միջազգային չափորոշիչներին և Եվրոպայի խորհրդի և ԵԱՀԿ պարտավորություններին համապատասխան: Միևնույն ժամանակ, ընտրական գործընթացի թերությունները հիմնականում պայմանավորված էին իրավական դրույթները արդյունավետ և անաչառ կատարելու կամքի բացակայությամբ: Ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության մակարդակը մնում է ցածր:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների կողմից արդյունքների աղյուսակավորումը գնահատվել է ընդհանուր առմամբ դրական, բնութագրվել է իբրև արդյունավետ և լավ կազմակերպված:

Ընտրողների ռեգիստրի և ընտրողների ցուցակների որակը բարելավվել է իշխանությունների կողմից ձեռնարկված մի շարք միջոցների շնորհիվ, այդ թվում՝ տարբեր պետական կառույցների միջև տեղեկատվության ավելի լավ փոխանակում ապահովելու նպատակով իրականացվող փորձնական ծրագրի շնորհիվ: Թեև իշխանությունները լուրջ ջանքեր են գործադրել՝ ընտրողների ռեգիստրը տեխնիկապես բարելավելու համար, նրանց չի հաջողվել փարատել համընդհանուր անվստահությունը ընտրողների գրանցման ամբողջականության վերաբերյալ:

Այսպիսով՝ ՀՀ-ում ընտրական հանձնաժողովները գործում են օրինականության, կոլեգիալության և հրապարակայնության սկզբունքների հիման վրա:

Գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության սահմանադրություն,
<https://www.arlis.am/documentview.aspx?docID=1>:
2. «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ»,
Երևան, 2014:
3. Վ. Պողոսյան, Ն. Սարգսյան, Հայաստանի Հանրապետության 2015թ. խմբագրությամբ
Սահմանադրությունը համառոտ պարզաբանումներ, Երևան, 2016, էջ 127-128:
4. Election of the Federal President,
https://www.bundestag.de/en/parliament/function/federal_convention/federal_convention-201836
5. Election of the Federal President,
https://www.bundestag.de/en/parliament/function/federal_convention.
6. Italian Politics: How Italy Elects a President, Silvia Donati <https://www.italymagazine.com/featured-story/italian-politics-how-italy-elects-president>.
7. The Italian Constitution". The official website of the Presidency of the Italian Republic,
<https://www.quirinale.it/page/costituzione>.

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԵՎ ԷՈՒԹՅՈՒՆԸ

ՆՈՐԱՅՐ ԱՏԵՓԱՆՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ, ասպիրանտ
Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտի դատական
կարգադրիչների ծառայության վերաքննիչ քրեական դատարան
ծառայություն իրականացնող բաժնի դատական կարգադրիչ
արդարադատության ավագ սերժանտ
stepanyan-norayr@mail.ru

Համառոտագիր

Պատմականորեն դատական համակարգը և դրա նախատիպերը նախատեսված էին՝ հակամարտությունները լուծելու իրենց հայեցողությամբ: Ցանկացած իրավիճակում պետությունների կառավարման այս հատուկ ճյուղի օգնությամբ իրականացվեց արդարադատություն, բառի բուն իմաստով՝ դատարանի արդարադատություն, որն ապահովում էր շահերի դատական պաշտպանություն և խախտված իրավունքների վերականգնում, բայց գերագույն իշխանությունն ու ժողովուրդը, հակամարտությունները լուծելու պետության իրավունքով օժտելով, գերագույն իշխանությունը և ժողովուրդը տարբեր կերպ են ընկալել դրա նպատակը, արդարացի բնույթը: Իր իրավական հարցի նյութական և հոգևոր բաղադրիչների անհամապատասխանությունն արտահայտվում է պատշաճ արդարության ձևական-իրավական և հոգևոր-բարոյական սկզբունքների, նրանց դատական իշխանությունը առաջացնող և փոփոխող պատճառների պայմանականության գնահատման մեջ եղած անհամապատասխանության մեջ:

Այժմ արդարադատությունը և պետության իրավապահ գործունեությունը իրականացվում են տարբեր ձևերով: Արդարադատությունը հանդես է գալիս որպես կարևորագույն այն ձևերից մեկը, որով օբյեկտիվ գնահատում է օրենքի խախտումները, երաշխավորում դրանց կանխարգելումը և վերացումը, որն ավանդաբար դիտվում է որպես պետական ուժային կառույցի ինքնուրույն և անկախ ճյուղ: Պակաս կարևոր չէ արդարադատության ուղղվածությունը իրավունքի գործողության ապահովմանը: Այս իմաստով դա ճանաչողական բարդ գործընթաց է, որի ընթացքում վերլուծվում են փաստերն ու գործողությունները, տրվում են դրանց իրավական գնահատականն ու որակավորումները: Դրա համար կիրառվում են խիստ դատավարական միջոցներ, որոնք բնորոշ են միայն արդարությանը, ուստի հենց իրավապահ մարմինների մեխանիզմի ուսումնասիրության ընդհանուր համատեքստում է, որ կարելի է խորապես հասկանալ արդարադատության բնույթը:

Շատ գործոններ են ազդում իրավունքի իրացման վրա: Սա պայմանավորված է իրավական մոդելներից շեղումներով, որոնք առաջացել են իրավական սխալների և իրավական ակտերի ցածր որակի, պետական մարմինների և այլ կառույցների թերի աշխատանքի, քաղաքացիների ցածր իրավական մշակույթի արդյունքում: Կան նաև օբյեկտիվ գործոններ, որոնք հանգեցնում են նման շեղումների: Դա տեղի է ունենում ճգնաժամի ժամանակ, երբ ձեռնարկվում են անհետաձգելի տնտեսական, քաղաքական և իրավական միջոցառումներ: Կան նաև ավելի կայուն շեղումներ, որոնց կանխատեսումը հնարավորություն է տալիս ժամանակին արձագանքելու ազգային անվտանգության սպառնալիքների աղբյուրներին (ներքին իրավիճակի ապակայունացում, ահաբեկչություն, ծայրահեղականություն, տեխնածին և բնական աղետներ և այլն):

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ արդարադատությունը, լինելով պետական իշխանության կառուցվածքի ինքնուրույն ճյուղ, իրականացնում է երեք կարևոր գործառույթ՝ օբյեկտիվ գնահատում, օրենքի խախտումների կանխում և ուղղում:

Բանալի բառեր և բառակապակցություններ. արդարադատության հայեցակարգ և բնորոշ գծեր, արդարադատության էություն, արդարադատության իրականացման մեթոդներ և միջոցներ:

КОНЦЕПЦИЯ И СУЩНОСТЬ ПРАВОСУДИЯ

НОРАЙР СТЕПАНЯН

Национальная академия наук Республики Армения
Институт философии, социологии и права
аспирант
аппарат Высшего судебного совета,
судебный пристав-исполнитель службы судебных приставов судебного департамента,
работающий в уголовном суде
старший сержант юстиции
stepanyan-norayr@mail.ru

Аннотация

Исторически судебная власть, ее прототипы были призваны разрешать конфликты по своему усмотрению. В любом случае, с помощью этой особой ветви власти осуществлялось правосудие в подлинном смысле этого слова, судебное правосудие, которое обеспечивало судебную защиту интересов, восстановление нарушенных прав. Но верховная власть и народ, наделявшие государство правом разрешать конфликты, по-разному воспринимал ее назначение, ее справедливую природу. Несовпадение материальной и содержательной составляющих его правового вопроса отражается в несовпадении оценок условности формально - правовых и морально - психологических принципов надлежащей справедливости, причин, порождающих их изменяющуюся силу.

Сейчас правосудие государственная правоохранительная деятельность осуществляется по-разному. Одним из важнейших способов объективной оценки правонарушений, гарантирования их предупреждения и устранения является правосудие, которое традиционно рассматривается как самостоятельная ветвь государственной власти. Не менее важна ориентация на справедливость в обеспечении законности. В этом смысле это сложный познавательный процесс, в ходе которого анализируются факты и действия, дается их правовая оценка и квалификация. Для этого используются строгие юридические процедуры, характерные только для правосудия. Поэтому именно в общем контексте изучения механизма правоохранительных органов можно глубоко понять природу правосудия.

На реализацию прав влияет комплекс факторов. Это связано с отклонениями от правовых моделей, возникающими в результате правовых ошибок и низкого качества правовых актов неполноценной работы государственных и иных структур, низкой правовой культуры граждан. Есть и объективные факторы, которые приводят к таким отклонениям. Это происходит в период кризиса, когда принимаются определенные экономические, политические и правовые меры. Также известны стойкие отклонения, прогноз которых позволяет им своевременно реагировать на угрозу национальной безопасности (дестабилизация внутренних институтов, терроризм, экстремизм и др.).

Итак, мы можем сказать, что правосудие, являясь самостоятельной ветвью структуры государственной власти, выполняет три важные функции: объективную оценку, предотвращение и исправление нарушений закона.

Ключевые слова и словосочетания: концепция правосудия, сущность правосудия, методы и способы отправления правосудия.

THE CONCEPT AND ESSENCE OF JUSTICE

NORAYR STEPANYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia

Institute of Philosophy, Sociology and Law

PhD student

Bailiff Executor of the Bailiff Service of the Judicial Department Working in the Criminal Court

Staff of the Supreme Judicial Council

Senior Sergeant of Justice

stepanyan-norayr@mail.ru

Abstract

Historically, the ruling authorities, prototypes, were called to resolve conflicts according to their own observations. In any case, with the help of this particular branch of government, the judiciary, in a subordinate sense, considered it a word, a court of Justice, which failed to find a court of mutual interest, restoring the right to be violated. But the supreme authority and the people, hoping for sovereignty to resolve conflicts, the supreme authority and the people in various ways perceived an appointment, a fair nature. The inconsistency of the material and constituent components of that legal question is reflected in the inconsistent assessment of the conditions of the legal-moral-principled-moral of the competent authority, the reasons for which are justifiable.

Every hour, the judiciary's state orthodoxy activity becomes more diverse. Justice is one of the most important ways to objectively assess violations of the law, guarantee their prevention and elimination, which is traditionally seen as an independent branch of the state power structure. No less important is the direction of justice in ensuring the rule of law. In this sense, it is a complex cognitive process, during which facts and actions are analyzed, their legal assessment and qualifications are given. Strict legal procedures are used for that, which are typical only for justice. Therefore, it is in the general context of studying the mechanism of law enforcement that one can deeply understand the nature of justice.

The realization of rights is influenced by a set of factors. Many factors affect the realization of the right. This is due to deviations from the legal models, which are the result of legal errors, low quality of legal acts, insufficient work of state bodies, other structures, low legal culture of citizens. There are also objective factors that lead to such deviations. It occurs in a time of crisis when certain economic, political, and legal measures are taken. They are also known to have persistent deviations, the prognosis of which allows them to react promptly to the threat of national security (destabilization of internal institutions, terrorism, extremism, etc.)

To sum up I may state that, Justice, as an independent branch of the structure of state power, performs three important functions: objective assessment, prevention, and correction of violations of the law.

Keywords and phrases: the concept of justice, characteristics, essence of justice, methods of administering justice means.

Ներածություն

Արդարադատություն ... Ո՞րն է այս բառի հիմքը: Մարդիկ ի՞նչ գաղափարներ դրեցին այն հիմքի վրա, որի վրա կառուցվել է այս իրավական ինստիտուտը: Արդարադատության և օրենքի գաղափարներն ինչպե՞ս միավորվեցին այս սահմանման մեջ և հիմք դրեցին դատական իշխանության առաջացմանը, որն այսօր ցանկացած իրավական ժողովրդավարական պետության պատվարն է: Վերլուծելով իրավական գրականությունը՝ կարելի է նշել, որ պետականության, իրավունքի և արդարադատության վերաբերյալ հարցերը մտահոգում էին Արիստոտելին, Գ.Վ.Ֆ. Հեգելին, Գ. Գրոցիին, Է. Կանտին, Պլատոնին, Մ. Տիցերոնին, Մոնտեսքյոին և հնագույն ժամանակներից հայտնի այլ մտածողներին: Հետագայում նրանց գաղափարներն արտացոլվեցին մեր ժամանակակից Ս. Ալեքսեևի, Օ. Դանիլյանի, Դ. Իկոննիկովայի, Դ. Քերիմովի, Ա. Լևչենկովի, Վ. Ներսեսյանցի, Ա. Սաչկովի, Վ. Սմորոդինսկու, Վ. Սուխանցևայի, այլ ռուս, ուկրաինացի և հայ հեղինակների աշխատություններում: Այնուամենայնիվ, արդարության բնույթը դինամիկ է. արդարությունն անընդհատ զարգանում է հասարակության և պետության մեջ տեղի ունեցող վերափոխիչ գործընթացների ազդեցության ներքո:

Հատկանշական է, որ իրավական մոդելներից շեղումը կարող է դրական նշանակություն ունենալ՝ լինելով իրավական բացերի ազդանշաններ կամ ոչ իրավական կարգավորիչներ, նորմատիվ ինքնակարգավորման ինստիտուտներ և, ի վերջո, քաղաքացիների օրինական վարքի մեխանիզմներն օգտագործելու օգտակարությունը:

Հանրության հետաքրքրությունը նոր օրենքի նկատմամբ բոլոր կամ շատ իրավապահների ուշադրությունը հրավիրում է դրա վրա, իսկ հետո հաճախ հետաքրքրությունը մարում է: Նման կարծրատիպը, երբ իրավապահ մարմինները իջնում են դրվագային ստուգումների և օրենքների խախտումների բացահայտման, նույնպես խանգարում է: Նման ազդանշանները կարող են ծառայել միայն որպես օրինականության մակարդակի մեկ ցուցչի:

Տեսամթերողական հիմքեր

Իրավաբանական գրականության մեջ, օրենքի գործունեության նշանակության համար, ավանդաբար կիրառվում են այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ «համապատասխանությունը», «կիրառումը», «կատարումը», «օգտագործումը» և «իրականացումը»: Հաճախ վերջին հասկացությունը, որպես ընդհանրություն, պարունակում է այստեղ նշված բոլոր մյուս հասկացությունները: Ամեն դեպքում, մենք խոսում ենք իրավական նորմերի կիրառման և դրանց արձագանքի տարբեր ձևերի մասին՝ իրավունքի սուբյեկտների կողմից, բայց այս ռեժիմներն ու ձևերը չեն սպառում իրավապահ մարմինների բազմազան գործընթացի բովանդակությունը՝ ներառելով իրավական մտածողության և իրավական գիտակցության դինամիկան, իրավական ակտերը, սոցիալական ինստիտուտները և իրավունքի սուբյեկտների վարքը: Հետևաբար, իրավապահ մարմինների հիմնավոր հաստատված նպատակներն այնքան կարևոր են. օրենքների դրույթների հետևողական իրականացման ապահովում՝ ոչ միայն առանձին վերցված, այլև դրանց համակարգային հարթությունում, օրենքի խախտումների վերացում և պատասխանատվության միջոցների ձեռնարկում, աջակցություն քաղաքացիների օրինապաշտության ձևավորմանը և իրավական մշակույթի բարձրացմանը, ինչը նշանակում է հասարակության մեջ օրենքի հեղինակության բարձրացում, կայուն իրավական կարգի հաստատում և նոր իրավական պետության ձևավորում (տարբեր ոլորտներում, ասպարզերում, շրջաններում և այլն), օրենսդրական և այլ կարգավորող մարմինների շտկում՝ դրանց անարդյունավետության կամ բացերի դեպքում: Մեր կարծիքով՝ իրավունքի իրացման ձևերի վերաբերյալ կայուն գաղափարները դժվար թե համարվեն բավականին արդիական, քանի որ դրանք չեն տալիս այս երևույթի ամբողջական

մեկնաբանություն: Այն հայտնվում է ընդամենը մի քանի ստատիկ ասպեկտներով: Այս դեպքում առաջընթաց քայլ է իրավունքի հասկացությունը, որը մշակվել է այս գլխի հեղինակի կողմից, մի խումբ համախոհների հետ միասին: Դրանում, տեսական և մեթոդաբանական առումով, հնարավոր էր սահմանել իրավապահ մարմինների՝ մի կողմից որպես իրավունքի զարգացման ընդհանուր ցիկլի օրգանական փուլ, այսինքն՝ բարդ մեխանիզմ, ներառյալ իրավական, սոցիալ-հոգեբանական, տնտեսական, ինստիտուցիոնալ գործիքները, բայց որոնք ենթակա չեն իրավական ակտերի տեղաշարժի, և մյուս կողմից՝ ազգային և միջազգային իրավունքի նորմերի համաձայնեցված գործողությունն ապահովող փուլ: Հաշվի առնելով վերոգրյալը՝ մենք կարող ենք խոսել իրավապահ մարմինների՝ որպես օրենքի գործարկման մեխանիզմի և դրա տարրերի իրականացման մեխանիզմի մասին՝ իրավական զարգացման ցիկլերի շրջանակներում: Իրավական մտածողության ձևավորման, իրավական գիտակցության զարգացման, իրավական մշակույթի, կանխատեսման և իրավական ձևավորման, իրավական ակտերի նախապատրաստման և ընդունման, պետության և հասարակության հարակից ինստիտուտների ստեղծման և գործունեության հայտնի փուլերը սահուն կերպով անցնում են ցիկլի՝ իր սեփական փուլերով:

Սա իրավական տեղեկատվություն է, իրավագիտություն, մարմինների և կազմակերպությունների գործունեություն, քաղաքացիների իրական վարքագիծ, մարդու իրավունքների համակարգեր, իրավական վերահսկողություն և հաստատությունների գործունեության և իրավական ակտերի ուղղում: Այսպիսով՝ տրամադրվում է հասարակության կողմից մի տեսակ հետադարձ կապ օրենքին՝ նորացված տեսքով:

Իրավական նորմերի կիրառումը միշտ ուղեկցվում է դրանց իրական գործողությունների վերլուծությամբ և փաստերի, երևույթների և իրադարձությունների գնահատմամբ: Դրա համար կան բազմաթիվ եղանակներ և միջոցներ, բայց արդարադատությունը հատուկ դեր է խաղում: Մի կողմից՝ արդարադատությունը նախատեսում է ընդհանրացնել օրենքի խախտումները վերացնելու նախկինում կիրառված մեթոդները, այդ թվում՝ տեղեկատվությունը իր ուղեծրում, վերլուծական և այլ նյութեր, որոնք կարող են օգտագործվել որպես ապացույց և փորձագիտական եզրակացություններ: Մյուս կողմից՝ արդարադատություն՝ խիստ և հստակ հաստատված դատավարական ձևերով, որոնք բնութագրական չեն օրենքի իրականացման այլ ուղիներին՝ իրավախախտման բնույթ, օբյեկտիվ աստիճան և վերջնական իրավական գնահատում ապահովելով: Որպես վերջին իրավական ատյանի մի տեսակ՝ արդարադատությունը հաշվի է առնում այդ փաստերը, երևույթներն ու իրադարձությունները և տալիս է վերջնական իրավական գնահատական՝ դրանց համապատասխանեցման վերաբերյալ օրենքով, և դատարանների որոշումները, ասես, փակում են իրավապահ մարմինների շղթան որոշակի դեպքերում: Միևնույն ժամանակ, ընդհանրացված ձևով, դատական պրակտիկան ծառայում է որպես օրենսդրության հետագա զարգացման համար օրենսդրական գործոն: Երկու դեպքում էլ դատարանների որոշումները պարտադիր են դառնում իրավունքի բոլոր սուբյեկտների համար և հաշվի են առնվում իրավապահ մարմինների բոլոր ուղղությունների կողմից:

Թեմայի համատեքստում կարևոր է դիտարկել արդարության ծագումնաբանությունը, որն ունի շատ երկար պատմություն: Հին Հռոմում կառավարման ձևերի փոփոխության ընթացքում փոխվել են պատժի կիրառման եղանակները՝ ներառյալ հատուկ պաշտոնյաների գործունեությունը, բայց կողմերի հավասարությունը ճանաչվեց ավելի ուշ՝ Ազատությունների մեծ խարտիայի ընդունմամբ (1215թ.), որում հակառակ բանտարկության մասին օրենքի լրացվել է արդարադատության իրականացման դատարանի առջև մարդկանց հավասարության և արդար դատավճռի մասին դրույթներով: Հետագայում սահմանադրություններն աստիճանաբար համախմբեցին դատարանների համակարգը և արդարադատության մի շարք սկզբունքներ:

Այդպիսին էր ԱՄՆ Սահմանադրության 3-րդ հոդվածը դատական իշխանության մասին: Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիրը Ֆրանսիայում (1789) (փաստաթուղթ, որը հռչակեց նրա հիմնական սկզբունքները՝ ժողովրդական գերիշխանության և մարդու անկապտելի բնական իրավունքները) ընդունվում է որպես պատիժ սահմանելու և մեղադրանք առաջադրելու հիմք: Այս դրույթները մշակվել են Ֆրանսիայի Սահմանադրության «Դատական իշխանության մասին» գլխում (1791), որը վերաբերում է դատավորների ընտրությանը, դատարանների անկախությանը, ատենակալների առկայությանը, դատավորների իրավասությանը, որոշ դատավարական կանոններին և այլն:

Ռուսաստանում արդարադատությունն ընթանում էր դանդաղ, և դատական գործընթացների սկզբունքներն ու կանոնները ակնհայտորեն հետ էին մնում (1649 թվականի «Դատարանների մասին» օրենսգրքում (գլխ. 10), որն այս կամ այն չափով օգտագործվել է դատական գործերի լուծման համար): Պսկովում 17-րդ դարում գործավարների պալատում կար դատաստանի սեղան. գործերն առավել հաճախ լուծում էր ընտրովի ազնվականը: Այլուր տանտերերը դառնում էին գործերի գլխավոր արբիտր: Եվ միայն XIX դարի կեսերին ստեղծվել է դատական համակարգ՝ գործունեության իր սկզբունքներով: Ինչպես տեսնում եք, միայն աստիճանաբար դատական գործընթացները զուգորդվում են օրենքի հետ, որը սահմանում է հանցագործությունների և պատժամիջոցների համակարգերը՝ որպես դատավարության հիմքեր:

Ստացված արդյունքներ

Դատական իշխանության ձևավորումը՝ որպես պետական իշխանության տեսակ, ուղեկցվում է իրավական դատավարության սկզբունքների և կանոնների ձևավորմամբ և համախմբմամբ: Արդարադատությունը ձեռք է բերում մի կարևոր ինստիտուտի դերը, որն ապահովում է իրավունքի գերակայության կայունությունն ու օրենքի իրացումը: Այս իմաստով՝ այն հանդես է գալիս որպես պետական գործունեության անկախ հատուկ տեսակ՝ ի տարբերություն օրենսդիր և, հատկապես, գործադիր իշխանության, որի համար հարցերի լուծման ընտրության դեպքում առաջնահերթությունը նպատակահարմարության սկզբունքն է:

Արդարադատության էությունը շատ երկիմաստ է. այն դիտվում է կա՛մ որպես դատական համակարգի հոմանիշ, կա՛մ որպես դատական գործընթաց, կա՛մ որպես քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու միջոց: Արդարադատությունը վերլուծվում է դատական իրավունքի համատեքստում, բայց համապատասխան բնութագրերը գաղափար չեն տալիս հայեցակարգային շարքում դրա իրական տեղի մասին [1, էջ 2]:

Օրենքի գործողության ապահովումը և դրա սկզբունքների և նորմերի խիստ պահպանումը ներառում է օրենքի խախտումների հայտնաբերում, գրանցում և վերացում, և այստեղ արդարադատությանը հատուկ տեղ է հատկացվում: Եկե՛ք բացատրենք ասվածը: Իրավական ակտերի և դրանում պարունակվող նորմերի իրականացման ընթացքում անհրաժեշտություն է առաջանում այնպիսի փուլի, որը բնութագրվելու է հակամարտությունների, վեճերի և օրենքի խախտումների օբյեկտիվ քննարկման և լուծման հատուկ երաշխիքներով:

Այս դեպքում դատարանը գնահատվում է որպես անկախ ինստիտուտ, գործածվում են հատուկ դատավարական կանոններ, որոնք կանխորոշում են գործերի քննությանը մասնակցող անձանց վարքի առանձնահատկությունները և պաշտոնատար անձանց գործողությունների հաջորդականությունը:

Գործունեության այլ տեսակների շրջանակներում նման նորմատիվային համաձայնություն չկա, բայց հենց դա է հնարավոր դարձնում դատել օրենքի հիման վրա, գնահատել

գործողությունները (անգործությունը), իրական իրադարձությունները, երևույթները և փաստերը միայն օրենքի նորմերի ճիշտ կիրառման տեսակետից **[2, էջ 3]**:

Պետական ապարատի մեխանիզմում հատուկ տեղ են զբաղեցնում իրավապահ մարմինների համակարգերը, որոնցում՝ իրենց ամբողջ բազմազանությամբ, միավորված են պետության իրավապահ գործառույթի նպատակները:

Սրանք արդարադատության մարմիններն են, դատական մարմինները, դատախազությունը, վերահսկողական և վերահսկիչ ծառայությունները, ուժային կառույցները՝ իրենց գործունեությանը բնորոշ եղանակներով, բայց միայն դատական համակարգը գործում է իրավապահ մարմինների ավարտական փուլում՝ որպես արդարադատության իրականացման միջոցով օրենքի գերակայության ապահովման վերջին օղակ, տարբեր սուբյեկտների իրավական գործողությունները վերլուծում և գնահատում՝ ելնելով օրենքի տեսանկյունից՝ դրա ընդհանուր և սահմանադրական սկզբունքներից և կարգավորիչ դրույթներից: Միայն դատարանն իրավունք ունի և պարտավոր է գնահատելու օրենքի պահպանման աստիճանը ոչ թե գնահատված գործողությունների նպատակահարմարության տեսանկյունից, այլ միայն դրանց՝ օրենքին համապատասխանության հիման վրա: Այսպիսով՝ արդարադատությունը դատարանի գործունեությունն է, որը նախատեսված է օրենքով՝ դատական գործերը քննելու համար՝ խախտված օրինական շահերն ու իրավունքները վերականգնելու և պաշտպանելու համար: Արդարադատության հիմնական նպատակն իրականացվում է դրա հիմնական բլոկների ապահովման միջոցով:

Արդարադատությունն իրականացնում են հատուկ մարմիններ և իշխանությունների ներկայացուցիչներ՝ դատավորներ և դատարաններ, որոնք կազմված են հատուկ կարգով: Դատարաններն իրավասու են գործելու Սահմանադրության և օրենքների հիման վրա՝ անկախ այլ պետական ինստիտուտներից: Անթույլատրելի է նրանց գործունեության միջամտությունը. արդարադատության մեջ սահմանվել է դատարանների գործունեության հատուկ դատավարական ձև, որում որոշվում են դատավարության փուլերը, դրանց շրջանակներում հետևողականորեն կատարվող գործողությունները և գործընթացի մասնակիցների իրավական դերերը: Այս և այլ ընդհանուր հատկությունները բնորոշ են բոլոր տիպի գործընթացներին՝ սահմանադրական, քաղաքացիական, քրեական, վարչական **[3, էջ 1]**: Արդարադատության մեջ սահմանվում են դատական գործերի քննության և լուծման մեթոդներն ու միջոցները, որոնք նախատեսված են արդար և օրինական դատական որոշումներ ապահովելու համար **[4, էջ 4]**:

Խոսքը մասնավորապես վերաբերում է դատավարության ընթացքում օգտագործված ապացույցների համակարգին, կողմերի հակառակորդ բնույթին և հավասարությանը:

Այն ապահովում է հատուկ հաստատությունների (դատական կարգադրիչների ինստիտուտ և այլն) միջոցով կատարվելիք դատարանի որոշումների անհրաժեշտությունը և անվիճելիությունը:

Սրանք արդարադատության տարրերն են՝ որպես պետական գործունեության տեսակ՝ բնորոշ շատ նահանգների, բայց իրականում մեր կողմից տրված մոդելային բնութագրերը հաճախ փոխվում են: Պրակտիկայում թույլ են տրվում արդարադատության սկզբունքների խախտումներ (դատարանի վրա ճնշում, կոռուպցիա, կողմերի իրավունքների սահմանափակում և այլն), ինչը հասարակության մեջ դժգոհություն է առաջացնում, կտրուկ նվազեցնում է դատական գործունեության արդյունավետությունն ու դրա նկատմամբ վստահությունը՝ ինչի արդյունքում անհրաժեշտություն է առաջանում փնտրելու արդարադատության իրականացման այլ ձևեր: Սա համոզիչ կերպով հաստատվում է սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքում:

Արդարադատության բնութագրիչների փոփոխություններ են տեղի ունենում նաև դատական բարեփոխումների ընթացքում, որոնք պարբերաբար իրականացվում են տարբեր երկրներում՝

ընդհանուր կառավարման բարեփոխումների շրջանակներում կամ որպես դատական հատուկ բարեփոխումներ:

Այսպիսով՝ Հայաստանում, Ռուսաստանում և Արևելյան Եվրոպայի երկրներում 1990-ականների սկզբին բարեփոխումներ սկսվեցին դատարանների ավելի մեծ անկախության և դատական գործընթացի ժողովրդավարացման, արդարադատության քաղաքացիների լայն հասանելիության, դատական համակարգի ենթակառուցվածքների ընդլայնման համար, ինչը շոշափելի դրական արդյունքներ տվեց: Արդարադատության տեսանկյունից իրավապահ մարմինները կապված են դատարանի կողմից իրավական միջոցների համալիրի օգտագործման հետ: Դա առաջին հերթին դատարանների կողմից իրավունքի նպատակների և սկզբունքների ճիշտ և հետևողական ընկալման, իրավական կարգավորման մեխանիզմի և դրա արդյունավետության գնահատման մեխանիզմի մասին է, որը որոշվում է դատավորների աշխարհայացքով և իրավական գաղափարախոսությամբ՝ արտացոլելով արևմտյան, մահմեդական և այլ իրավական ավանդույթներն ու մշակույթը, մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների դոկտրինաները և օրենքի գերակայությունը: Տարբեր երկրներում այս տարրը տարբեր կերպ է արտահայտվում:

Միևնույն ժամանակ, նշված բազմազանությունը որոշակի չափով ձեռք է բերում նույն հիմքը՝ընդհանուր իրավունքի ընդունված սկզբունքների և արդարադատության համակարգերի միջազգային կարգավորիչների տեսքով: Պետությունների սահմանադրություններում մշակվում է այս միավորումը, որը համապատասխանում է սահմանադրության, ՄԻԵԴ-ի իրավական դիրքորոշումներին, ինչպես նաև՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի դիրքորոշումներին: Այս ամենը արդարադատությանը հասցնում է գերազանցել երկրում դատական գործերի ծավալի և բնույթի սովորական չափը: Համաշխարհային հանրությունը ճանաչում է պետության պատասխանատվությունը անհատի նկատմամբ:

Արդարադատության իրականացման գործընթացում շեշտը դրվում է ոչ այնքան քաղաքացիների և իրավաբանական անձանց որոշումների և գործողությունների նպատակահարմարության դրդապատճառների վրա, որքան օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի իմաստը ճիշտ ըմբռնելու վրա. համապատասխան հարցով դատարան է ձևավորվում: Սա օրենքի շրջանակներում դատական հայեցողություն է, և ոչ թե կամայական կոռուպցիա և այլ դրդապատճառներ: Դատական հայեցողությունը տարբերվում է վարչական հայեցողությունից՝ ավելի խստացված և ընդգրկված շրջանակներում: Որոշման ընտրանքների գիտակցված ընտրությունը դատավորի բարդ մտավոր և կամային գործունեության արդյունք է, երբ նա պետք է ճիշտ վերլուծի փաստական հանգամանքները՝ օգտագործելով ձևավորված ապացույցների համակարգ, ընտրի նորմ և ճիշտ կիրառի այն կոնկրետ դեպքում: Այստեղ մենք խոսում ենք ինչպես դատական հայեցողության իրավական սահմանների, նկատի ունենալով իրավունքի սկզբունքների և նորմերի ճիշտ արտացոլման, այնպես էլ՝ բարոյական և իրավական սահմանների մասին: Այս սահմանափակումները միաժամանակ ծառայում են որպես դատավորների օբյեկտիվ դատավճիռների և գնահատականների երաշխիքներ:

Միևնույն ժամանակ, դատական հայեցակարգը շարունակում է մնալ արդարադատության առավել շարժուն տարրը և կանխորոշում է արդյունավետ, անկախ դատական համակարգի ձևավորումը:

Եզրակացություն

Արդարադատությունն աշխարհում կառուցվում է՝ ըստ աշխարհայացքի տարբեր մոդելների, երբ ազգային մշակույթն ու ավանդույթները, կրոնական գիտակցությունը, բարոյական արժեքները տալիս են դատարանների գնահատման գործունեության որոշ առանձնահատկություններ: Այսպիսով՝ եվրոպական երկրներին բնորոշ է արևմտյան արժեքների և մարդու իրավունքների հայեցակարգի ավելի մեծ ներմուծումը դատական գործընթաց: Անհատական շեշտադրումը, չնայած վերապահումներով, ակնհայտ է, և արդարադատությունը հաճախ ծառայում է որպես օրենքի կիրառման ելակետ, որը նշվում է նաև օտարերկրյա գիտնականների աշխատություններում:

Մահմեդական աշխարհի երկրներում իսլամի սահմանադրական ճանաչումը՝ որպես օրենսդրության հիմք, տալիս է իրավական նորմերի մեկնաբանումը և կիրառումը կրոնի նորմերից մի տեսակ ածանցյալ իմաստով: Չինաստանում նկատվել է դատական իշխանության ակնհայտ գործունեություն և դատական համակարգի շրջանակների ընդլայնում՝ զուգորդված զսպվածության սկզբունքի հետ: Սա արտացոլում է երկրի համար կոնֆուցիականության ավանդական ոգին: Նայելով շատ երկրներում արդարադատության զարգացման երկար ուղուն՝ կարելի է նշել հետևյալ հիմնական միտումները. նախ՝ արդարադատության շրջանակն ընդլայնվում է՝ մասնակիցների երաշխավորված գործողությունների կանխատեսելիության պատճառով: Քրեական և քաղաքացիական իրավունքի հիմնական հոսքի մեջ զուտ հատուկ անհատական գործերի լուծումից անցում է կատարվել հասարակության և հասարակական լայն գործերի՝ ներառյալ վեճերի՝ հանրային գործողությունների և գործողությունների հետ կապված վեճերի ներառմանը արդարադատության շրջանակներում. իշխանությունները և նույնիսկ միջազգային ինստիտուտները:

Երկրորդ՝ արդարադատության ժողովրդավարական սկզբունքների անընդհատ խորացում կա, ինչը նպաստում է քաղաքացիների համար դրա ավելի մատչելիությանը և նրանց դատավարական իրավունքների երաշխիքների ամրապնդմանը: Ցավոք, այս ոլորտում խախտումները չեն վերացվել, ինչը հասարակության դժգոհությունն է առաջացնում: Դատական գործունեության որակի բարելավմանը նպաստում է դրա տեղեկատվայնացումը: Երրորդ՝ նկատվում է նախաքննական և ոչ դատական գործընթացների ծավալի զգալի աճ, ինչը հարստացնում է արդարադատությունը՝ իր առաջնային իրավասության ոլորտից հանելով համեմատաբար պարզ գործեր:

Արբիտրաժային վարույթները, միջնորդությունը, վարչական բողոքների և այլ հաստատությունների քննարկման վարչական-հասարակական հանձնաժողովները նպաստում են արդարադատության առավել նշանակալի դերի ձևավորմանը, իրավական կոնֆլիկտների լուծմանը և իրավագիտակցության և քաղաքացիների կողմից օրենսդրության պահպանման տեսակներին, որում նրանք ավելի պատրաստ են ինքնուրույն մասնակցելու բախման իրավիճակների կանխարգելմանը և վերացմանը:

Չորրորդ՝ նկատվել է դատական ակտերի հատկությունները որպես օրենք ձևավորող գործոն հարստացնելու ուշադրավ միտում: ՌԴ-ում դրա արտահայտությունը Սահմանադրության մեկնաբանությունն է, Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները և Ռուսաստանի Դաշնության Գերագույն դատարանի և Ռուսաստանի Գերագույն արբիտրաժային դատարանի պլենումների ուղեցույցը Ֆեդերացիա Նորացվում է նախադեպի կիրառման շրջանակը ընդհանուր իրավունքի երկրներում, որը փոխանցվում է նաև այլ դատական համակարգերին:

Դատական ակտերի դերը ուժեղանում է՝ ոչ միայն ընդլայնելով դրանց ավանդական գործողությունների սահմանները որոշակի դեպքում, այլև օրենսդիրին դրդելով ընդունել նոր կամ

փոփոխել գործող օրենքները: Արդարադատությունը պետական գործունեության ամենակարևոր տեսակն է, որն անմիջական կապ ունի դատավարական իրավունքներով և պարտականություններով օժտված մարդկանց հետ: Դրա և պետական գործունեության արդյունավետության ապահովումը համարվում են հասարակության և պետության ժողովրդավարության զարգացման մակարդակի ցուցիչներ:

Հնում դատավորը նույնացվում էր իշխանության հետ, հետագայում՝ դատական համակարգի անկախության անհրաժեշտության գիտակցմամբ, դատավորը սկսեց ընկալվել որպես քաղաքացիական յուրաքանչյուր անդամի իրավունքների և ազատությունների իրականացման երաշխավոր: Նրա իշխանությունն աստիճանաբար սկսեց տարածվել հասարակության վրա: Այսօր դատավորը պաշտոնական դատարանն է, պետական իշխանության ներկայացուցիչ, որը լիազորված է՝ արդարադատություն իրականացնելու՝ հիմնված անկախության, մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների առաջնահերթությունների և այլնի վրա: Մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների իրացումը կամ սահմանափակումը ներդաշնակեցնում են սոցիալական կապերը:

Այսպիսով՝ արդարադատությունը պետական գործունեության ամենակարևոր տեսակներից մեկն է, որը յուրաքանչյուր պետության ազգային անվտանգության բաղկացուցիչն է: Անվտանգության շահերը պետք է ստորադասվեն օրենքի նորմերին, քանի որ չի կարելի գործել անվտանգության անվան տակ՝ միաժամանակ խախտելով օրենքը: Ապահովելով հասարակության մեջ ծագող ցանկացած կոնֆլիկտի լուծում օրենքի հիման վրա, հասարակական կյանքի բոլոր սուբյեկտների ենթակայությունը օրենքին՝ դատական համակարգը կարևոր դեր է խաղում կառավարման այլ ճյուղերի ստուգումների և հաշվեկշռի համակարգում՝ նրանց գործունեության նկատմամբ իրավական վերահսկողությամբ: Առանց արդարադատության արդյունավետ համակարգի պետությունը չի կարող համարվել օրինական: Իհարկե, այսօր խաթարվել է ժողովրդի վստահությունը դատական իշխանություն կրողների նկատմամբ:

Այնուամենայնիվ, այս իրավական ինստիտուտը անընդհատ զարգանում և կատարելագործվում է: Անփոփոխ են մնում միայն դրա հիմքում վաղուց դրված հիմնարար սկզբունքները՝ ինչպիսիք են արդարությունը, հումանիզմը, պատասխանատվությունը և այլն: Ժամանակակից օրենսդիրները դատական համակարգի և դատական գործընթացների բարեփոխման գործընթացում ոչ մի դեպքում չպետք է մոռանան դա, քանի որ, ինչպես տեղին է նկատել ֆրանսիացի փիլիսոփա Պոլ Անրի Հոլբախը, «արդարությունը բոլոր սոցիալական առաքինությունների հիմքն է»:

Գրականության ցանկ

1. Основные принципы независимости судебных органов (одобрены Резолюциями Генеральной Ассамблеи ООН 40/32 от 29 ноября 1985 г. и 40/146 от 13 декабря 1985 г.)
2. **Абдуллоев Ф.А.** Разрешение споров в рамках СНГ и ЕврАзЭС способствует интеграционным процессам // Евразийская интеграция: экономика, право, политика // Международный научно-аналитический журнал. 2010. № 8.
3. **Безруков А.В.** Реформирование судебной власти в условиях разделения властей и обеспечения единства судебной системы России. // Конституционное и муниципальное право. 2015. № 2,
4. **Переплеснина Е.М.** Многовековое влияние зарубежного и международного права на развитие правосудия в России // История государства и права. 2011. № 13

«ՀԱԳՈՒՍ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԲԱՌԱՅԻՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ԼՈՒՍԻՆԵ ՂԱՄՈՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ
ավագ գիտաշխատող
բանասիրական գիտությունների թեկնածու
lusine.ghamoyan@isec.am

Համառոտագիր

Հագուստ-հանդերձ-զգեստ-շոր հոմանշային շարքի բաղադրիչներից *հագուստ, զգեստ, հանդերձ* բառանուններն ավելի շատ գործածվում են գրական հայերենում, *շոր* բառանունը՝ առօրյա-խոսակցականում: Արդի գրական արևելահայերենում և արևմտահայերենում *հագուստ* բառով կազմությունները քիչ են, այն սահմանափակ գործածություն ունի նաև առաձների և դարձվածքների մեջ, սակայն նորագույն շրջանում ի հայտ են եկել մի շարք նորակազմություններ ու կայուն կապակցություններ, որոնք, անշուշտ, հարստացնում են հայերենի բառապաշարը:

Հանդերձ բառանունը լայն գործածություն ունի գրաբարում. հանդիպում ենք բազմաթիվ ածանցավոր և բարդ բառերի: Արդի գրական հայերենում *հանդերձ*-ը թեև հնացած է համարվում, բայց շարունակում է մասնակցել բառակազմությանը և առավել մեծ գործածականություն ունի գեղարվեստական խոսքում: Բառակազմության մեջ առավել մեծ հաճախականություն ունեն *զգեստ* և *շոր* բաղադրիչները: Արդի հայերենի բառարանները թեև վկայում են *զգեստ*-ի «ընդհանրապես հագուստ» առաջնային իմաստը, սակայն այժմ առօրյա խոսքում *զգեստ*-ն առավելապես գործածվում է բառարաններում նշված «շրջազգեստ» երկրորդական իմաստով: Հիմնական իմաստների կողքին հատկապես գեղարվեստական լեզվում լայն գործածություն են ստացել բառի փոխաբերական՝ «բուսականություն», «ձյան սավան» և այլ իմաստներ: *Չգեստ* բաղադրիչից կազմվել են բազմաթիվ իսկական բարդություններ, որոնք առավելապես հետևյալ կաղապարներով են. ա) գոյական+գոյական. որոնք հիմնականում արտահայտում են որոշիչ-որոշյալ և հատկացուցիչ-հատկացյալ հարաբերություններ, բ) ածական+գոյական. առավել գործուն ու հաճախադեպ են այս կաղապարով իսկական բարդությունները, գ) բայահիմք+գոյական, դ) գոյական+բայահիմք: Ածանցավոր կազմությունները համեմատաբար քիչ են, արտահայտվում են հետևյալ կաղապարներով՝ նախածանց+արմատ, արմատ+վերջածանց, նախածանց+արմատ+վերջածանց: Կան նաև բարդածանցավոր բազմաթիվ կազմություններ: *Չգեստ* բառից բաղադրված նորակազմ բառերում գերակշռում են բարդությունները: *Գոյական* գերադաս անդամով նորակազմ բարդություններում *զգեստ* արմատը, որպես վերջնաբաղադրիչ, բավական հաճախադեպ է: Նորակերտ ածանցավոր կազմությունները համեմատաբար քիչ են: *Չգեստ* բաղադրիչով կազմվել են նաև փոխաբերական իմաստով բազմաթիվ նորակազմություններ, որոնք հիմնականում գործածվում են գեղարվեստական գրականության մեջ: Այս բառանունով ունենք սահմանափակ թվով դարձվածքներ:

Ինչ վերաբերում է *շոր* բառանվանը, ապա պետք է նշել, որ արևելահայերենում այն առաջին հերթին «*զգեստ*» է, «*հագուստ*», որը բնորոշ չէ արևմտահայերենին: Արևելահայերենում *շոր* բառի միայն երրորդ իմաստն է համընկնում արևմտահայերենի արտահայտած իմաստին՝ «երեխայի բարուրի կտորեղեն»: Ի տարբերություն *հագուստ-հանդերձ-զգեստ* բառերի՝ բարբառներում հանդիպել ենք միայն *շոր* բառանվանը: Արդի հայերենում *շոր* բաղադրիչով ունենք բազմաթիվ ածանցավոր և բարդ բառեր, ինչպես նաև՝ մի շարք նորակազմություններ: Քանի որ *շոր* բառն ավելի շատ բնորոշ է առօրյա-խոսակցական բառաշարին, այն իր իմաստային բազմազանությամբ բազմաթիվ դարձվածքների ու առաձների հիմք է դարձել, ունենք նաև ժողովրդական խաղի անվանում:

Վերոնշյալ բառերի հիմնական իմաստների կողքին (հատկապես գեղարվեստական լեզվում) լայն գործածություն ունեն բառերի փոխաբերական իմաստները: Հագուստ-զգեստ-հանդերձ-շոր հոմանշային շարքի անդամներից բաղադրված բարդությունների միջոցով կազմվել են բազմաթիվ ներլեզվական բառային տարբերակներ՝ *տարաբաղադրիչ համանիշներ*, որոնք ունեն իմաստային նույնություն և հնչյունական որոշ զանազանություն, առկա են լեզվի զարգացման ներկա փուլում՝ անկախ գործածականությունից, կանոնականությունից ու գործառական բնութագրից, ինչպես՝ **երկանդամ՝ սուզահագուստ-սուզազգեստ, զգեստեղեն-հագուստեղեն, հարսնաշոր-հարսնազգեստ**, եռանդամ՝ **լողահագուստ//լողհագուստ-լողազգեստ-լողաշոր, վերնահագուստ-վերնահանդերձ-վերնազգեստ, ներքնահագուստ-ներքնազգեստ-ներքնաշոր, սզազգեստ-սզահանդերձ-սզաշոր, սևահանդերձ-սևազգեստ-սևաշոր**, քառանդամ՝ **սպիտակահագուստ-սպիտակազգեստ-սպիտակահանդերձ-սպիտակաշոր** և այլն:

Բանալի բառեր և բառակապակցություններ. հագուստ, գրաբար, միջին հայերեն, արևելահայերեն, արևմտահայերեն, դարձված, առած, բառակազմություն:

ЛЕКСИЧЕСКИЕ ВЫРАЖЕНИЯ ПОНЯТИЯ "ОДЕЖДА" В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

ЛУСИНЕ ГАМОЯН

Национальная академия наук Республики Армения
Института языка им. Г. Ачаряна
старший научный сотрудник, кандидат филологических наук
lusine.ghamoyan@isec.am

Аннотация

Из компонентов синонимического ряда слов *hագստիւն-հանդերձ-զգեստ-շոր* [hagust-handerdz-zgest-shor] в литературном армянском языке в основном употребляются слова *hագստիւն* [hagust], *զգեստ* [zgest], а в бытовом разговорном употребляется слово *շոր* [shor]. В современном восточноармянском и западноармянском литературном языке образования с *hագստիւն* [hagust] немногочисленны, имеют ограниченное употребление в пословицах и фразах, но в последнее время появился ряд новых образований и устойчивых сочетаний, которые, безусловно, обогащают армянский словарный запас.

Слово *հանդերձ* [handerdz] широко используется в древнеармянском языке. Мы сталкиваемся со многими производными и сложными словами. В современном армянском языке хотя слово «*հանդերձ* [handerdz]» считается устаревшим, оно продолжает участвовать в словообразовании и больше всего употребляется в художественной литературе. Компоненты «*զգեստ* [zgest]» и «*շոր* [shor]» имеют высокую степень употребления в словообразовании. Современные армянские словари показывают первичное значение «одежда вообще» слова *զգեստ* [zgest], но сейчас в бытовом разговорном речи *զգեստ* [zgest] в основном используется во вторичном значении «платье», упоминаемом в словарях. Помимо основных значений, широкое распространение получили переносные значения слов «растительность», «снежный покров» и другие, особенно в художественном языке. Есть много собственных сложных слов с компонентом платье, которые в основном встречаются в следующих моделях: а) существительное + существительное, которые в основном выражают отношения атрибутивно-определяемое и определяемое - определяемое, б) прилагательное + существительное: наиболее распространены собственные сложные слова с этим шаблоном, в) глагольная основа + существительное, г) существительное + основа глагола. Производных относительно немного, они выражаются в следующих шаблонах: префикс + корень, корень + суффикс, префикс + корень + суффикс. Есть также много сложно-суффиксальных образований.

Сложные слова встречаются в новообразованиях, состоящих из слова платье. Для главного члена существительного в новообразованных сложных словах довольно часто в качестве завершающего компонента встречается корень *զգեստ* [zgest]. Новообразованных производных слов относительно немного.

С компонентом [zgest] также составлены многочисленные новообразования, которые в основном используются в художественной литературе. У нас есть ограниченное количество фраз с этим словом.

Что касается слова *շոր* [shor], то следует отметить, что в восточноармянском языке это прежде всего «платье», «одежда», что не характерно для западноармянского языка. Только третье значение слова *շոր* в восточноармянском языке совпадает со значением, выраженным в западноармянском языке: «детская пеленка». В отличие от слов *hագստիւն-հանդերձ-զգեստ-շոր* [hagust-handerdz-zgest-shor] в диалектах мы встречали только слово *շոր* [shor]. В современном армянском языке мы имеем много производных и сложных слов с компонентом [shor], а также ряд новообразований. Так как слово *շոր* [shor] более характерно для повседневной речи, оно стало основой многих фраз и пословиц с его смысловым разнообразием, у нас также есть название народной игры.

Наряду с прямыми значениями вышеуказанных слов (особенно в художественном языке) широко применяются их переносные значения.

С помощью комплекса, составленного из членов синонимического ряда *hագստիւն-զգեստ-հանդերձ-շոր* [hagust-handerdz-zgest-shor], составлены многочисленные внутриязыковые лексические варианты, дифференциальные синонимы, которые имеют смысловую идентичность и некоторые фонетические различия, существуют на данном этапе развития языка независимо от используемости, каноничности и функциональной характеристики, как двухсоставные: *սուզահագստիւն-սուզզգեստ* [suzahagust-suzazgest], *զգեստնդնհանդերձ* [zgesteghen-hagusteghen], *հարնշոր-հարնզգեստ* [harsnashor-harsnazgest], трехчленные: *լոհահագստ/լոհհագստ-լոհզգեստ-լոհշոր* [loghahagust/loghhagust-loghazgest-loghashor], *վերնահագստ-վերնահանդերձ-վերնզգեստ* [vernahagust-vernahanderdz-vernazgest], *ներքնահագստ-ներքնզգեստ-ներքնշոր* [nerqnahagust-nerqnazgest-nerqnashor], *սգզգեստ-սգհանդերձ-սգշոր* [sgazgest-sghanderdz-sgashor], *սեհանդերձ-սեզգեստ-սեշոր* [sevahanderdz-sevazgest-sevashor], четырехчленный-*սպիտակահագստ-սպիտակահանդերձ-սպիտակշոր* [spitakahagust-spitakahanderdz-spitakashor] и др..

Ключевые слова и словосочетания: одежда, грабар, средний армянский, восточноармянский, западноармянский, фразеологизм, пословица, словообразование.

LEXICAL EXPRESSIONS OF THE "ՀԱԳՈՒՍ [HAGUST]" CONCEPT IN ARMENIAN

LUSINE GHAMOYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
Institute of Language after Hrachya Acharian
Senior Researcher
PhD in Philological Sciences
lusine.ghamoyan@isec.am

Abstract

Of the components of the synonymic series of words հագուստ-հանդերձ-զգեստ-շոր [hagust-handerz-zgest-shor] the words հագուստ [hagust], զգեստ [zgest] are mostly used in literary Armenian, while in everyday spoken language շոր [shor] is used. In modern Eastern Armenian and Western Armenian literary language formations with հագուստ [hagust] are not numerous and have limited use in proverbs and phrases, but recently some new formations and stable combinations have appeared which certainly enrich the Armenian vocabulary.

The word "հանդերձ [handerdz]" is widely used in Old Armenian. We encounter many derivatives and complex words. In the modern Armenian language, though the word "հանդերձ [handerdz]" is considered obsolete, it continues to participate in word formation and is mostly used in fiction. The components "զգեստ [zgest]" and "շոր [shor]" are highly used in word-formation. Modern Armenian dictionaries show the primary meaning "clothes in general" of the word զգեստ [zgest], but now in everyday spoken language զգեստ [zgest] is mostly used in the secondary meaning "dress" mentioned in dictionaries. In addition to the primary meanings, the figurative meanings of the words "vegetation", "snow cover" and others, especially in fiction language, are widely spread. There are many proper compound words with the component dress, which are mainly found in the following models: a) noun + noun. which mainly express attribute-definitive and definition-definitive relations, b) adjective + noun: the most common proper compound words with this pattern, c) verb base + noun, d) noun + verb base. There are relatively few derivatives in the following patterns: prefix + root, root + suffix, prefix + root + suffix. There are also many compound-suffix formations.

Compound words are found in new formations consisting of the word dress. When the main member of a noun in newly formed compound words, the root զգեստ [zgest] is quite often found as the final component. There are relatively few newly-formed derivatives.

There are also numerous newly-formed words composed with the component [zgest], which are mostly used in fiction. We have a limited number of phrases with this word.

As for the word շոր [shor], it should be noted that in Eastern Armenian it is primarily "dress", "clothing", which is not typical for Western Armenian. Only the third meaning of the word շոր [shor] in Eastern Armenian coincides with the meaning expressed in Western Armenian: "baby diaper". Unlike the words հագուստ-հանդերձ-զգեստ [hagust-handerz-zgest-shor], we encountered only the word շոր [shor] in dialects. In modern Armenian, we have many derivatives and compound words with the component շոր [shor] as well as a number of neologisms. Since the word շոր [shor] is more characteristic for everyday speech, it became the basis of many phrases and proverbs with its semantic variety, we also have the name of a folk game.

Along with the direct meanings of the above words (especially in fiction language), their figurative meanings are widely used.

With the help of the complex composed of the members of the synonymic series հագուստ-զգեստ-հանդերձ-շոր [hagust-handerz-zgest-shor], numerous intralingual lexical variants, differential synonyms, which have semantic identity and some phonetic differences, exist at this stage of language development, regardless of usability, canonicity and functional characteristics as two-component ones, are made: սուզահագուստ-սուզազգեստ [suzahagust-suzazgest], զգեստեղեն-հագուստեղեն [zgesteghen-hagusteghen], հարսնաշոր-հարսնազգեստ [harsnashor-harsnazgest], three-members: լողահագուստ//լողհագուստ-լողազգեստ-լողաշոր [loghahagust/loghhagust-loghazgest-loghashor], վերնահագուստ-վերնահանդերձ-վերնազգեստ [vernahagust-vernahanderdz-vernazgest], ներքնահագուստ-ներքնազգեստ-ներքնաշոր [nerqnahagust-nerqnazgest-nerqnashor], սզազգեստ-սզահանդերձ-սզաշոր [sgazgest-sgahanderdz-sgashor], սևազգեստ-սևաշոր [sevahanderdz-sevazgest-sevashor], four-member-սպիտակահագուստ-սպիտակազգեստ-սպիտակահանդերձ-սպիտակաշոր [spitakahagust-spitakahanderdz-spitakashor] etc.

Keywords and phrases: Clothes, Grabar, Average Armenian, Eastern Armenian, Western Armenian, phraseologism, proverb, word formation.

Ներածություն

Հազուստ՝ զգեստ, հանդերձ, ազանելիք, մարդու մարմնի արհեստական ծածկոց: Լայն առումով ընդգրկում է նաև գլխի ծածկոց, ոտնաման, ձեռնոց և այլ հասկացություններ: Նախնադարյան մարդիկ արտաքին գործոններից պաշտպանվելու համար որպես հազուստ օգտագործել են *բույսերի տերևներ*, հետագայում՝ *գազանների մորթիներ*, շատ ավելի ուշ *բրդից ու զանազան կենդանիների մազերից գործել են նաև տարբեր զգեստներ*: 19-րդ դարում մանածագործության զարգացմանը զուգընթաց սկսվել է հազուստի մեքենայական արտադրությունը, որից հետո հազուստը ստացել է ժամանակակից տեսք:

Ա. *Սուրբհասյանը*, որպես **հազուստ** բառի հոմանիշներ, արձանագրում է՝ *զգեստ, շոր, հանդերձ, հալավ, հանդերձանք, հագնելիք, հազուստեղեն, ազանելիք* (գրք.), *սքեմ* (կրոնավորի), (հզվդ.) *սքող, թանկուզի, փորանկած* (միակտուր), *կեց* (բրք.), *հազուստ-կապուստ, հագ ու կապ* [25, էջ 349]:

Մեր ուսումնասիրության նպատակն է՝ բացահայտել «հազուստ» հասկացությունն արտահայտող վերոհիշյալ հոմանշային շարքի անդամներից մի քանիսի (*հազուստ, հանդերձ, զգեստ, շոր*) իմաստային դրսևորումները հայերենի պատմական զարգացման ընթացքում, ներկայացնել դրանց բառակազմական հնարավորություններն ու գործածությունը լեզվի տարբեր շրջաններում:

Տեսական մաս

Անդրադառնանք դրանց առանձին-առանձին:

Հազուստ

Ազանիմ «հագնիլ» բայից է: Ըստ Հ. Աճառյանի՝ հնիս. évō կամ óvō (և ոչ ávō) արմատից, որից էլ՝ **h-** նախահնչյունով, *-ուստ* վերջածանցով՝ **հազուստ** [3, **h.1, էջ 75**]:

Գրաբարում *հազուստ* իմաստն արտահայտվել է *ազանելիք, հանդերձ* բառերով: Միջին հայերենում արդեն գործածվել է *հազուստ* բառանունը՝ «հագնելու իր, զգեստ» իմաստով, ինչպես՝ «Ինքն սատաֆի պէս կենդանու վերայ կու բունի, որպէս հազուստ» (ԱԱԱԱ, 35) [10, էջ 394]:

Արդի հայերենի բացատրական բառարաններում *հազուստ* բառահոդվածի բացատրությունն է՝ «1. վրան միաժամանակ կրելու շորերի ամբողջությունը, 2. զգեստների ամբողջությունը, հազուստեղեն, 3. հագած զգեստը, 4. *փխբ.* ծածկույթ, 5. *փխբ.* որևէ բան թաքցնելու՝ քողարկելու՝ այլ տեսքով ներկայացնելու միջոց» [1, **h.1, էջ 787**]. պետք է նկատել, որ ըստ Ստ. Մալխասեանցի՝ *հազուստ* է միայն «հագնելու իր, զգեստ, վրայի շոր»-ը. «սպիտակեղէնը, կոշիկը, գլխարկը հազուստ չեն կոչվում» [12, **h.3, էջ 8**]:

Բարբառներում *հազուստ* հասկացության փոխարեն գործածվում են հետևյալ զուգաբանությունները՝ **հալավ, գեստ, գեցք, դըլըղ, կեց** և այլն:

Արդի գրական արևմտահայերենում *հազուստ*-ից կազմված բառերից արձանագրված է միայն **հազուստապահարան** «հանդերձապահարան, զգեստապահարան» բարդությունը [23, էջ 171]:

Արդի գրական արևելահայերենում *հազուստ* բառից ևս քիչ կազմություններ ունենք, ինչպես՝

ա) *վերջածանցավոր՝ հազուստացու, հազուստեղեն, բ) բարդություններ՝ բայափմբ+գոյական՝ սուզահազուստ, լողահազուստ, ածական+գոյական՝ սպիտակահազուստ, վերնահազուստ* և այլն:

Հազուստ բառով ունենք նորակազմություններ, ինչպես՝ **հազուստափոխվել** [19, էջ 97], **հազուստանախշ** [19, էջ 97], **գործահազուստ** «գործի՝ աշխատանքի ժամանակ հագնելու հազուստ» [17, էջ 34], **ծպտահազուստ** «որպես ծպտապարագա օգտագործվող հազուստ, ծպտվելու հազուստ» [17, էջ 172] և այլն:

Հազուստ բառանունից կազմվել են նաև կայուն կապակցություններ, ինչպես՝ **ազգային հազուստ, պաշտպանիչ հազուստ** կամ **հերմետիկ պաշտպանիչ հազուստ, ձմեռային հազուստ, ամառային հազուստ** և այլ:

Հազուստ բառով գտել ենք մեկ առած՝ «**Մարդու կարողությունը հազուստովը կու իմացվի**» [11, էջ 288], իսկ դարձվածքներից արևմտահայերենի բառարանում արձանագրված են՝

հագուստը վրան առնել «հագնվել», **հագուստը վրան լավ կենալ** «հագուստը վրան լավ նստել՝ հարմարվել», **հագուստը լաւ երթալ** «վայելել, սագել» [23, էջ 171]:

Հանդերձ

Ունի «զգեստ, հագուստ, շոր, լաթ, պատրաստություն, զարդ, միասին» իմաստները: Ըստ Գ. Ջահուկյանի՝ իրանական փոխառություն է. հմմտ. մ. պ. handarz (հայ. հան-«իրան. han և դերձակ<darzak) [21, էջ 446], որից ունենք հետևյալ կազմությունները՝ **հանդերձել, ոսկեհանդերձ, կանանցահանդերձ, հանդերձապահ, հանդերձապուուն, հանդերձավաճառ** և այլն [3, հ.3, էջ 39]:

Գրաբարի բառարաններում **հանդերձ** բառից ունենք հետևյալ բաղադրությունները. ա) ածանցավոր՝ **համահանդերձ** «նոյնանման՝ միատեսակ հանդերձ ունեցող կամ հագած», **հանդերձարար** «հանդերձ՝ զգեստ պատրաստող, դերձակ», **հանդերձիկ, հանդերձանի, հանդերձեղէն**, բ) բարդություններ՝ **հանդերձ** սկզբնաբաղադրիչով՝ **հանդերձագին** «հագուստի վճար՝ փող», **հանդերձակապուպ** «զգեստները վրայից բռնությամբ հանող՝ կողոպտող», **հանդերձապապառառ** «1. հանդերձները պատռող, 2. հանդերձների պատռելը», **հանդերձապաճոյճ, հանդերձապեպ, հանդերձապարած, հանդերձ** վերջնաբաղադրիչով՝ **խոշորահանդերձ, խորզահանդերձ, մաշկահանդերձ** «մաշկեղէն՝ մորթե զգեստ հագած, մաշկազգեցիկ, 2. մաշկեղէն զգեստ», **մեկնահանդերձ** «մէկ հատ՝ միայն մի հանդերձ՝ շոր վրան հագած», **միահանդերձ** «մի հանդերձ՝ մի կտոր զգեստ ունեցող, մէկ հագուստով» և այլն:

Բառաշարքը քննելիս նկատում ենք, որ երբեմն բառիմաստն արտահայտվում է ոչ թե մի առանձին բառով, այլ ամբողջական բառակապակցության միջոցով, նկարագրական եղանակով, ինչպես՝ **ցայգանոց հանդերձ** «գիշերը հագնելու զգեստ, գիշերազգեստ»:

Գրաբարում ունենք նաև **հանդերձեալ** կազմությունը՝ «1. ինչ որ գալու կամ լինելու է, ակնկալելի, առաջիկայ, ապագայ, գալիք, լինելիք, 2. լաւ սարքուած՝ պատրաստուած, յարդարուած, զարդարուած, 3. որպէս փոխնորդ պատրաստուած (զգեստ)» իմաստներով [9, հ.2, էջ 37], որը, անցնելով արդի գրական արևելահայերենին, կորցրել է իր վերջին երկու իմաստները՝ պահպանելով միայն առաջին իմաստը՝ «1. ապագա, գալիք, 2. (կրոն., սնոտ.) այն աշխարհի, մեռնելուց հետո գալիք» [7, հ.3, էջ 292]:

Միջին հայերենի բառարանում արձանագրված է միայն **օտարահանդերձ** «օտարի շոր հագած» կազմությունը [10, էջ 825]:

ՀԲԲ-ն **հանդերձ** բառի համար տալիս է հետևյալ բացատրությունները՝ «1. մարմնի վրայ հագնելու որևէ իր, կմ ինչ որ վրան հագած է. հագուստ, զգեստ, ձորձ, ագանելիք, վերարկու ևն, 2. կանացի զարդարուն զգեստ, պաճուճանք, 3. հոգևորականի զգեստ, վրան առնելու, վրան ծածկելու որևէ գործուածք, կտոր, շոր, ծածկոց, վերմակ, 5. սարք, կազմած, սպաս» [12, 3, էջ 46]:

Արդի գրական արևելահայերենում **հանդերձ** բառանունն արդեն հնացած է համարվում, սակայն այս բաղադրիչով ունենք բազմաթիվ բաղադրություններ, ինչպես՝ ա) ածանցավոր բառեր՝ **հանդերձանք, հանդերձանոց, հանդերձավորում, հանդերձեղէն, հանդերձում, հանդերձարան, հանդերձավորել, բ) բարդ բառեր՝ հանդերձագին, հանդերձագործ, հանդերձակալ, հանդերձակար, հանդերձապահ, հանդերձապեպ, հանդերձապաճոյճ** (հզվդ.), **հանդերձասենյակ, հանդերձասրահ, հանդերձավաճառ, հանդերձապուուն, շքահանդերձ, ոսկեհանդերձ գ) բարդաձանցավոր բառեր՝ հանդերձապահարան, հանդերձապահուիի, հանդերձապեպություն, հանդերձապուրք, զինահանդերձանք, զինահանդերձավորում** և այլն:

Արդի գրական արևմտահայերենում արձանագրված են միայն **հանդերձավաճառ, հանդերձել** «1. հագցնել, 2. ձևավորել, պաճուճել», **հանդերձուիլ** «1. զուգվել-զարդարվել, 2. հարդարվել, 3. մատակարարվել, պարենավորվել» կազմությունները [23, էջ 178]:

Թեև բառը հնացած է, սակայն շարունակվում է **հանդերձ** բաղադրիչով նոր բառերի կազմումը, ինչպես՝ **կարմրահանդերձ** (փխբ.) «կարմիր հանդերձով՝ իբրև խորհրդային (քարտեզի մասին)» [13, էջ 94], **մարզահանդերձանք** (սպորտ.) «մարզումներին և մրցումներին մասնակցելու համար մարզիկներին անհրաժեշտ հագուստ և իրեր» [13, էջ 135], **քրձահանդերձ** «քրձեր հագած, ցնցոտիապատ» [ԱՀՆԲ, էջ 483], այդպես նաև՝ **փարազահանդերձ** (տարազով հանդերձավորված),

կանաչահանդերձ «կանաչ զգեստներ հագած՝ կանաչազգեստ», **վերահանդերձավորվել** «նորից՝ նոր ձևով հանդերձավորել, վերահանդերձել» և այլն:

Որպես *հանդերձ* բառի հոմանիշներ՝ *Ա. Սուքիասյանը* նշում է՝ 1. *զգեստ, հագուստ, հագուստ-կապուստ, հալավ* (խսկց.), 2. *համազգեստ, պաշտոնազգեստ* (աստիճանակիրների, արհեստակիրների), *սքեմ* (կրոնավորի) [25, էջ 365]:

Չգեստ

Չգեստ բայից է, ունի «հագուստ» նշանակությունը: Բառի ծագումը Հ. Աճառյանը ստուգաբանում է հետևյալ կերպ. բնիկ հայ բառ՝ հնիս. ves արմատից. բառասկզբի v-ն տվել է գ՝ (s-ի անկումով) *գե, բայական վերջավորությամբ *գեստու, -ստ մասնիկով՝ *գեստ, որոնք գ նախդիրով դարձել են *զգեստու, զգեստ* [3, հ.2, էջ 88]: Գ. Զահուկյանը ճշգրտում է կատարում՝ հիմքի սկզբնաձևը վերականգնելով. ըստ նրա՝ բառը կազմված է գ- նախաձանցով հնդեվրոպական ues- ու- հիմքից՝ ues- «հագնել» ձևից. հմմտ. հուն. ένυσμαλ «հագն(վ)ել», այլև հ. հնդկ. vastē, ավ. vaste «հագնվում է», լատ. vestis «զգեստ», գոթ. vasjan, խեթ. ues, uaš «հագցնել» [21, էջ 235]:

Ներկայացնենք *զգեստ* բառի իմաստային դրսևորումների բառարանային վկայությունները:

«Նոր բառգիրք հայկազեան լեզուի» աշխատության մեջ *զգեստ* բառը բացատրվում է հետևյալ կերպ. «գրի և սգեստ. Որ ինչ և զգեցեալ լինի, կամ արկեալ զանձամբ. զգեսիք, ագանելիք, արկանելիք. հանդերձ. ձորձ. պատմուճան. հագուստ» [4, հ.1, էջ 727]:

«Գրաբարի բառարանում» բառը վկայված է «1. հագուստ, շոր, լաթ, 2. *փխբ.* այն, որով մի բան պատում՝ ծածկում է, ծածկոյթ» նշանակություններով [9, հ.1, էջ 437]:

Այս արմատից գրաբարում բաղադրվել են հետևյալ կազմությունները՝ ա) *ածանցավոր՝ զգեստական* «զգեստին վերաբերող», *զգեստիկ* «խղճուկ՝ աղքատիկ զգեստ», *զգեստաւորել, բ) բարդ՝ զգեստապարոյր* «զգեստի նման պարուրող, պատող», գ) *բարդածանցավոր՝ զգեստասիրութիւն* «զգեստներ՝ պաճուճանքներ սիրելը, զարդասիրութիւն, պճնասիրութիւն», *զգեստաւորացուցանել* (նույնն է՝ *զգեստավորել*) «1. հագնել տալ, հագցնել, զգեստաւորել, 2. *փխբ.* ծածկել, պատել, *փխբ.* զարդարել, զուգել» և այլն:

Գրաբարում ունենք նաև *զգեստ ուրին* հարադրավոր բարդությունը՝ «ոտնաման, կօշիկ» իմաստով [9, հ.1, էջ 437]:

Միջին հայերենի բառարանում հանդիպում ենք *սզեստ* տարբերակով, ինչպես՝ «Ամէն ցեղ կերակրոյ և զսզեստոյ հաւանի» (ՎԱԱ, 279), «Եւ փառաւորեաց թագաւորական սզեստիք (ՄՆ, 203)», «Սզեցաւ զսզեստն իւր հայրապետական» (ՄԺ, Բ, 181) [10, էջ 693]:

Նույն՝ «հագուստ, հանդերձ. ծածկոյթ» իմաստով բառանունից արևմտահայերենում ունենք՝ *զգեստող* «զգեստներ հագցնող», *զգեստակալ* «կախիչ, հանդերձակալ» կազմությունները [23, էջ 99]:

Արդի հայերենի բառարանները թեև վկայում են *զգեստ*-ի «ընդհանրապես հագուստ, հանդերձ» առաջնային իմաստը, սակայն այժմ առօրյա խոսքում *զգեստ*-ն առավելապես գործածվում է բառարաններում նշված «վերնազգեստ, շրջազգեստ» երկրորդական իմաստով:

Հիմնական իմաստների կողքին հատկապես գեղարվեստական լեզվում լայն գործածություն են ստացել բառի **փոխաբերական**՝ «բուսականություն, կանաչ, կանաչություն», «ձյան սավան», «տերևները ծառերի նկատմամբ» իմաստները [7, հ.2, էջ 25], ինչպես՝ «Դաշտը թավիշ *Չգեստ* հագավ, Կանգնեց քարին Երգեց կաքավ (Աթաբեկ Իսկոյան)» [26, էջ 13], կամ «Աշխույժ եռուզեռ է զարնանային *զգեստ* հագած Ծաղկածորի գլխավոր սպորտային բազայի բոլոր անցուղիներում, հրապարակներում (Հրազդան, 1975.04.12, հ. 44)» [26, էջ 16], «Ո՞վ կարող էր ասել, որ բնության այդ անապական *զգեստը* շուտով պիտի ներկվի մարդկային արյունով և այդ սքանչելի անտառները պիտի թնդան գնդացիների որոտից (Ուղեգրություններ և ակնարկներ հրապարակախոսական, Ա.Շիրվանզադե)» [26, էջ 13], «Քարափի քիվին մասրենին արդեն Գարուն *զգեստն* իր հագնում է կամաց (Տավուշյան էսքիզներ, Հավաքածու)» [26, էջ 13] և այլն:

Չգեստ բաղադրիչը բառակազմական մեծ ակտիվություն ունի արդի գրական արևելահայերենում, որից կազմվել են բազմաթիվ իսկական բարդություններ, որոնք առավելապես հետևյալ կաղապարներով են. ա) *գոյական+գոյական*. հիմնականում արտահայտում են *որոշիչ-*

որոշյալ և հատկացուցիչ-հատկացյալ հարաբերություններ, ինչպես՝ **հարսնազգեսուր, ուղեզգեսուր, ցերեկազգեսուր, գիշերազգեսուր, պաշտոնազգեսուր, նշանազգեսուր, լանջազգեսուր, թիկնազգեսուր, առնազգեսուր** և այլն, բ) *ածական+գոյական*. առավել գործուն ու հաճախադեպ են այս կաղապարով իսկական բարդությունները, ինչպես՝ **բրդազգեսուր, երկարազգեսուր, թավշազգեսուր, թխազգեսուր, ծյուրազգեսուր, կարճազգեսուր, կիսազգեսուր, շքեղազգեսուր, պերճազգեսուր, սպիտակազգեսուր, սևազգեսուր, ճերմակազգեսուր** և այլն, գ) *բայսահիմք+գոյական*՝ **սուզազգեսուր, լողազգեսուր**, դ) *գոյական+բայսահիմք*՝ **զգեստասեր, զգեստավաճառ, զգեստափոխ**, ե) *մակբայ+գոյական*՝ **կրկնազգեսուր** և այլն:

Ածանցավոր կազմությունները համեմատաբար քիչ են. կան հետևյալ կաղապարներով. *Նախածանց + արմատ*՝ **համազգեսուր, արմատ + վերջածանց՝ զգեստանոց, նախածանց + արմատ + վերջածանց (-ներ)**՝ **համազգեստավոր, համազգեստավորել, համազգեստավորում, արմատ + վերջածանց (-ներ)**՝ **զգեստավորում, զգեստավորվածություն զգեստարան, զգեստացու, զգեստեղեն** և այլն: Գրաբարյան **զգեստիկ** «խոճուկ՝ աղքատիկ զգեստ» իմաստով ածանցավոր կազմությունը գործածվում է նաև արդի գրական արևելահայերենում որոշ իմաստափոխությամբ. փոխվել է առաջնային իմաստը՝ ձեռք բերելով «նվազ.-փոքշ. փոքրիկ զգեստ» նշանակությունը, իսկ նախկին իմաստը հնացած է:

Բարդածանցավոր կազմություններից են՝ **զգեստասիրություն, զգեստավաճառություն, զգեստավաճառանոց, զգեստափոխություն, զգեստափոխում** և այլն:

Ջգեստ բառից բաղադրված նորակազմ բառերում գերակշռում են բարդությունները: *Գոյական* գերադաս անդամով նորակազմ բարդություններում *զգեստ* արմատը, որպես վերջնաբաղադրիչ, բավական հաճախադեպ է, ինչպես՝ **կինոզգեստ** [17, էջ 78], **հնազգեստ** [16, էջ 86], **իրիկնազգեստ** [16, էջ 53], **վերնամարզազգեստ** [13, էջ 183], **թափերազգեստ** [16, էջ 45], **սպայազգեստ** [15, էջ 130], **բոլորաշրջազգեստ** [17, էջ 25], **անկողնազգեստ** [16, էջ 11], **զինվորազգեստ** [16, էջ 43], **ներքնաշրջազգեստ** և այլն, որպես սկզբնաբաղադրիչ՝ հետևյալ նորակազմություններում՝ **զգեստանկարիչ** [6, 156], **զգեստագործ** [6, էջ 156], **զգեստափիպ** [6, էջ 156], **զգեստաճամպրուկ** [19, էջ 47] և այլն:

Նորակերտ ածանցավոր կազմությունները համեմատաբար քիչ են. *նախածանց + արմատ + վերջածանց* կաղապարով ունենք՝ **համազգեստային, արմատ + արմատ + ածանց (-ներ)** կաղապարով՝ **սպասազգեստավոր** [15, էջ 130], **տոնազգեստավորում** [17, էջ 153], **շրջազգեստավոր** [6, էջ 377]:

Ջգեստ բաղադրիչը հաճախ փոխաբերական իմաստով նորակազմությունների հիմք է դարձել, ինչպես՝ **փեփրազգեստ** «(փխբ.) փետրածածկույթ», **օտարազգեստ** «(փխբ.) ազգային նկարագրին օտար, ոչ հարազատ տեսք, կերպ, ձև ունեցող» [13, էջ 203], **ծիծաղազգեստ** (փխբ.) «իբր՝ ծիծաղով քողարկված, ծիծաղի տակ թաքնված» [13, էջ 89] և այլն:

Ջգեստ բառանունով ունենք շրջասույթներ ու դարձվածքներ, ինչպես՝ **Աղամի զգեստ** «մերկություն, մերկանդամություն, տկլորություն» [24, էջ 18], **Եվայի զգեստով** «մերկ, մերկանդամ» [5, էջ 10] և այլն:

Որպես *զգեստ* բառի հոմանիշներ՝ *Ա. Սուքիասյանն* նշում է հետևյալ բառերը՝ **հագուստ, շոր, հանդերձանք, հանդերձ, սքող** (հզվդ.), **լաթ, ձորձ** (հին, մաշված), **հալավ** (բրբ.). **տարազ** (որոշ ձևով), **համազգեստ** (միաձև), **սքեմ** (կրոնավորի), **թակալակ** (կաթուղիկ սարկավագի), **հագուստ կապուստ, հագ ու կապ** [25, էջ 198]:

Շոր

Ունի «շոր, հագուստ» նշանակությունը: Հ. Աճառյանը բառի ծագման մասին ոչինչ չի արձանագրում: Ջահուկյանը քիչ հավանական է համարում հնդեվրոպական՝ *skhor-* (s)ker- «կտրել» արմատից առաջացած լինելը: Բաղադրություններ՝ **շորեթափիլ, շորեղէն, կեղտաշոր, ոտնաշոր** և այլն [21, էջ 593]:

«Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանը բացատրում է. «ռամկականն բառիս. ձորձ, հանդերձ, զգեստ, կտաւ» [4, հ.2, էջ 489]:

4. *Ուրիշեանը* տալիս է բոլորովին նոր բացատրություն՝ «սարդի ոստայն», «մազ, աստառ, պատուհաններուն առջեւ անցուած մազէ հիւսուած ցանց, նայուածքներէ եւ նոյն ատեն մժեղներէ պաշտպանուելու համար», «մետաքս, մետաքսեայ լաթ» [20, հ.2, էջ 102]:

«Չգեստ, հագուստ հանդերձ» իմաստով գործածվում է միջին հայերենում, ԺՀԼԲԲ-ում՝ «1. Չգեստ, հագուստ, 2. կտոր, լաթ, 3. երեխային բարուրելու՝ փաթաթելու շորեր, խանձարուր» նշանակությամբ [7, հ.4, էջ 84]:

Ինչպես նկատեցինք, արևելահայերենում *շոր*-ը առաջին հերթին «*չգեստ*» է, «*հագուստ*», որը բնորոշ չէ արևմտահայերենին: Արևելահայերենում *շոր* բառի միայն երրորդ իմաստն է համընկնում արևմտահայերենի արտահայտած իմաստին՝ «*երեխայի բարուրի կտորեղեն*» [22, էջ 86-87]:

Պետք է նկատել, որ բարբառային բառարանում *հագուստ-հանդերձ-չգեստ-շոր* հոմանշային շարքից արձանագրված է միայն *շոր* բառանունը՝ «1. շոր, 2. Եվդ. երեխաների երանքին կապած լաթ, 3. Խրբ. (Բլ.) լաթի կտորներ, որոնք երեխայի տակ՝ հողի վրա են փռում, մեկն էլ փռում են փորի վրա ու նոր խանձարուրը փաթաթում, 4. Խրբ. (Բլ.) հին-մին լաթ, 5. լաթ, շորի կտոր, որով սրբում են թոնիրը՝ հաց թխելուց առաջ» իմաստներով [8, հ.4, էջ 273]: Բարբառներում *շոր* բառից ունենք հետևյալ բարդությունները՝ *շորաբալույ, շորաթափվել* «Ղրբ. շորերը մաշվել, այլևս հագնելու շոր չունենալ», *շորավորիկ* «Մշ. շորեր հագած», *շորացու/շորացու, ծնգնաշոր//ծնկնաշոր* «Կրվ. կանացի վարտիք, Լ. Բրչ. կանացի վարտիք, փոխան», *կապաշոր, կարմրաշոր//կարմրաշորիկ, մխշոր* «Դրս. (Քղ.) 1. ծխի մեջ աշխատող կանանց արտահագուստ, 2. ծխացող, 3. խոպոտ», *տրխաշոր* «Ղրբ. (Գնձ.) տրեխ», *օղաշոր* «վարտիք» և այլն:

Արդի գրական արևմտահայերենում *շոր* բառից կազմվել է *մոմշոր* բարդությունը՝ «ջրի դեմ անթափանց շոր (նորածինի, անձրևի)»: Ունենք նաև *շորիկ* ածանցավոր կազմությունը՝ «խենթուկ, մտացիր» նշանակությամբ [23, էջ 274], որը բոլորովին այլ իմաստ ունի արևելահայերենի առօրյա-խոսակցական լեզվում, ինչպես *չգեստիկ*-ը: Ի դեպ, գրաբարում *շորիկ* բառանունն ունի «քուռ, խառնակիչ» նշանակությունը [9, հ.2, էջ 321]:

Արդի հայերենում *շոր* բաղադրիչով ունենք հետևյալ ածանցավոր կազմությունները՝ *շորացու, շորեղեն*, բարդ բառերից են՝ *շորակտոր, շորահան, շորահին, շորահոտ, շորափոխ, շոր վերջնաբաղադրիչով՝ բարուրաշոր, գլխաշոր, թաթաշոր, թևաշոր, թղթաշոր, ծալաշոր, ծաղկաշոր, կեղտաշոր, հարսնաշոր, հողշոր, ոտաշոր, ուսաշոր, քուրձաշոր*, բարդածանցավոր՝ *ոտաշորացու* և այլն:

Ունենք նաև *շորափոխ լինել* «շորերը փոխել, ուրիշ շոր հագնել» բայական հարադրությունը:

Շոր բառից ունենք հետևյալ նորակազմությունները՝ *շորափեր* [19, էջ 145]), *չոչաշոր* (մանկական հագուստ) [14, էջ 156], *ազդրաշոր* «ազդրը՝ կոնքից մինչև ծունկը ծածկող շոր» [17, 7], *տերևաշոր* «(բնատ.) տերևներով շորեր հագած, տերևազարդ» [6, էջ 450] և այլն:

Քանի որ *շոր* բառն ավելի շատ բնորոշ է խոսակցական բառաշերտին, այն իր իմաստային բազմազանությամբ ծնունդ է տվել առօրյա-խոսակցական լեզվի բազմաթիվ դարձվածքների, ինչպես՝ *սև շոր հագնել* «սգի մեջ լինել», *շոր կտրել* (Ար., ՆԲ, Կր. (Շիր.) Մշ.) «նոր շոր կարել», *շորով պատիվ փալ* «արտաքին կեղծ արժանիքների համար պատիվ տալ, արտաքինը հաշվի առնել՝ էականը՝ ներքինը՝ մտավոր արժանիքները անտեսել», *շորին փորին անել* «միայն հագնելու ու ուտելու ետևից ընկնել՝ ուրիշ բանի մասին չմտածել», *շորով գիժ* «խիստ բարկացկոտ, դյուրագրգիռ», *շորե մարդ* (Մշ. (Բղշ.)) «թոյլ՝ դանդաղաշարժ մարդ», *շորերը վրայից թափվել* «1. շորը վրան շատ լայն ու կախ ընկած լինել, 2. շատ նիհար լինել» [8, հ.4, էջ 273] և այլն:

Շոր բառից ունենք նաև ժողովրդական խաղի անվանում, ինչպես՝ *շորհանելուկ* «մի տեսակ խաղ, որի ժամանակ երկու հոգի դիմաց դեմ կանգնած՝ հանում են շորերը» [12, հ.3, էջ 532]:

Դիտարկենք նաև *շոր* բառի՝ առօրյա-խոսակցական լեզվում դրսևորած պատկերացումների այն փունջը, որ հիմք է դարձել մի շարք առածների համար: Այսպես՝ 1) *խաբուսիկ արտաքին՝ «Դրսից պսպղա շորըս, սովից ղըռըռա փորս»* [11, էջ 71], *«Շորերս հին ա, խոսքս անգին ա»* [11, էջ 72], 2) *կին՝ «Կնկա իրեք բաժինը լաց է, մեկն էլ շորեղեն»* [11, էջ 67], 3) *դժվարին և անփոփոխ դրություն՝ «Շորե մարդ կրակե շապիկ»* [11, էջ 106], 4) *ամեն բան պետք է ժամանակին լինի՝ «Չծնած էրեխին շոր մի՛ կարի»* [11, էջ 136], 5) *շտապելը վնաս է՝ «Թաժա շորը հնի վրա կը ձևեն»* [11, էջ 174], *«Ման եկողը յա շորին կը ճարի, յա՛ փորին»* [11, էջ 191], 6)

պարծենկոտություն՝ «Շոր չունի հագնելու, ֆայտոնով կերթա» [11, էջ 20], գործ անողը պետք է կրի հեղուկները՝ «Ձուկ բռնողի շորերը թաց կլնի» [11, էջ 237] և այլն: Ունենք նաև՝ «Հարստի հաքին շոր տեհան, ասեցին՝ շնորհավոր. Աղքատի հաքին որ տեհան, հարցրին ո՞րտեղից ա» [11, էջ 220], «Շոր տուր՝ շնորհք տամ, հաց տուր՝ ռանգ (գույն) տամ» [11, էջ 288], «Շորն ասաց.- Դու ինձ պահի բողջամիջին (կապոցի մեջ), ես քեզ պահեմ մարդամիջին» [11, էջ 288], «Մարդին մարդ շինողը շորն է» [11, էջ 288], «Շորը շնորհքի համար է» [11, էջ 288] և այլն:

Շոր բառի հոմանիշներն են՝ 1. զգեստ, հանդերձ, հագուստ, 2. շրջազգեստ, դերիա, 3. լաթ, կտոր. լաթեղեն, 4. թաթաշոր, ուրաշոր, խորձունձ (մանկան) [25, էջ 509]:

Վերոնշյալ *հանդերձ, զգեստ, շոր* բառանուններից բացի՝ «*հագուստ*»-ը հայերենում արտահայտվում է նաև հետևյալ հոմանիշերով՝ **ազանելիք, հալավ, ձորձ, զեցք, մենթան, հանգիստ** (միջին հայերենում) և այլն:

Եզրակացություն

Քննելով *հագուստ-հանդերձ-զգեստ-շոր* հոմանշային շարքի բաղադրիչներից յուրաքանչյուրը՝ նկատում ենք, որ դրանցից *հագուստ, զգեստ* բառանուններն ավելի հաճախ գործածվում են գրական հայերենում, *շոր* բառանունը՝ առօրյա-խոսակցականում: Հանդերձ բառանունը թեև հնացած է, բայց բառակազմական մեծ ակտիվություն ունի և առավել մեծ գործածություն գեղարվեստական խոսքում: Բառակազմության մեջ առավել մեծ հաճախականություն ունեն հատկապես *զգեստ* և *շոր* բաղադրիչները:

համակարգ է տվյալ լեզվով խոսող կոլեկտիվի՝ հանրության յուրաքանչյուր անդամի գիտակցության մեջ,- այդ համակարգի կոնկրետ՝ անհատական իրացումն է, լեզվի կենդանի գոյը, դրսևորվում է խոսքային գործունեության կամ խոսողության մասնավոր իրացումներով, խոսողական ակտերով: Խոսքը կառուցվում է լեզվական նորմայի (համակարգի) թելադրանքով, նրան համապատասխան» [6, էջ 280]:

Հիմնական մաս

Լեզուն միասնական է և ընդհանուր հասարակության բոլոր անդամների համար, սակայն այդ ընդհանրությունը չպետք է հասկանալ բացարձակ ձևով, որովհետև միևնույն ժողովրդի լեզվագործածությունը այդ ժողովրդի տարբեր տարածքներում տարբեր է, ինչպես նաև միևնույն տարածքում ապրող մարդիկ խոսում են տարբեր կերպ և տարբեր չափով են օգտվում մայրենի լեզվից. անգամ նույն հասարակության մեջ հասարակական տարբեր խմբեր տարբեր կերպ են գործածում լեզուն, որի հետևանքով ստեղծվում են լեզվական տարբերակներ: Այդ տարբերակները միմյանցից տարբերվում են հնչյունական համակարգով, բառային կազմով և քերականական կառուցվածքով: Այս հանգամանքը նկատի առնելով՝ առանձնացվում են լեզվի հետևյալ տարբերակները՝ տեղական, հասարակական (կամ սոցիալական), գործառական (կամ ֆունկցիոնալ) [7, էջ 37]:

Աշխարհի քիչ թե շատ խոշոր և պատմական համեմատաբար երկարատև ուղի անցած ոչ մի լեզու միատարր չէ: Լեզուն տարբերակված է լինում վայրից վայր, գործածության բնագավառից բնագավառ, անհատից անհատ: Եթե այն գրի է առնվում և ենթարկվում գրական մշակման ու նորմավորման, ապա հիշյալ տարբերություններին գումարվում են նաև գրավոր և բանավոր խոսքի տարբերությունները, որոնք երբեմն կարող են մի քանի աստիճանի լինել:


Հայոց լեզուն որպես երկարատև պատմություն և ավելի քան մեկուկես հազարամյակի գիր և գրականություն ունեցող լեզու, աչքի է ընկնում հատկապես տարածական (բարբառային) և գրավոր ու բանավոր խոսքի նշանակալից տարբերություններով: Բարբառային խիստ մեծ տարբերությունները բացատրվում են հայոց լեզուն կրող հայ ժողովրդի պատմական ճակատագրով, նրա կազմավորման ու գոյության առանձնահատկություններով: Գրավոր և բանավոր խոսքի տարբերությունները պայմանավորված են ինչպես հայոց լեզվի տարածական մեծ տարբերակվածությամբ և նրա անցած պատմական ուղու երկարատևությամբ, այնպես էլ իր իսկ գրական լեզվի կազմավորման առանձնահատկություններով և մշակման յուրահատուկ պայմաններով:

Եթե գնահատելու լինենք հայոց լեզվի տարատեսակները, ապա կարելի է ասել, որ հաղորդակցական գործառության առումով դրանք մասամբ դրական են, անհրաժեշտ և անխուսափելի, մասամբ՝ բացասական, միայն պայմանականորեն պատճառաբանված, արդի պահանջների առումով անցանկալի: Առաջին կարգի տարատեսակները լեզվի գործառական և անհատական ոճերն են, որոնք պայմանավորված են լեզվի գործածության ոլորտներով, դրանց առաջ գնացող ընդլայնմամբ, մարդկային անհատականության զարգացման մեծացող հնարավորություններով: Այլ կերպ ասած՝ լեզվի ոճական տարատեսակների զարգացումը ընդհանուր առմամբ դրական երևույթ է: Երկրորդ կարգի տարատեսակները հիմնականում բարբառներն են. սրանք խանգարում են հաղորդակցման, մասնավորապես զանգվածային հաղորդակցման իրականացմանը, գրական լեզվի տարածմանը և նորմավորմանը, գրավոր և բանավոր խոսքերի տարբերությունների հաղթահարմանը, լեզվի դպրոցական ուսուցման հաջող իրականացմանը:

Չնայած գրական նորմավորման արդյունավետ գործընթացին և նորմավորված խոսքի տարածման համար նպաստավոր պայմանների առկայությանը՝ ժամանակակից հայոց լեզուն դեռևս աչքի է ընկնում բարբառային տարբերությունների մեծաքանակությամբ, գրական նորմավորված խոսքի կողքին մեծ թիվ են կազմում խոսքի՝ հարկ եղած չափով չնորմավորված դրսևորումները: Առօրյա-խոսակցական լեզուն հաճախ հանդես է բերում ոչ միայն ոճական բնական տարբերություններ, այլև բարբառային գծեր: Սրանով իսկ հայոց գրական նորմավորված լեզվի և

բարբառների համեմատությամբ յուրատեսակ միջին դիրք է գրավում խոսակցական լեզուն՝ հաճախ տեղական ավելի կամ պակաս երանգավորմամբ:

Ժամանակակից հայոց լեզվի տարատեսակների փոխհարաբերությունը կարելի է արտահայտել հետևյալ գծագրով.



Նկար 1. Ժամանակակից հայոց լեզվի տարատեսակների փոխհարաբերության գծապատկերը [8, էջ 3-8]:

Գրական լեզուն այս կամ այն լեզվի դրսևորման բարձրագույն ձևն է, նրա մշակված, նորմավորված, միօրինականացված և ստանդարտացված տարատեսակը, որ բավարարում է ժողովրդի մշակութային կյանքի պահանջները: Այն հանդես է գալիս որպես գեղարվեստական գրականության, գիտության, մամուլի և հապարակախոսության, դպրոցի, ռադիոյի և հեռուստատեսության, պետական գրագրության լեզու: Նույնիսկ բարբառախոս անձինք դիմում են գրական լեզվի օգնությանը հրապարակային ելույթներում, դիմումներում և ընդհանրապես այն բոլոր դեպքերում, որոնք որոշվում են գրական լեզվի գործառության շրջանակներով կամ պահանջում ընդհանուր հասկանալիություն:

Ամեն մի գրավոր լեզու դեռևս գրական լեզու չէ: Այդպիսին դառնալու համար այն պետք է մշակվի և նորմավորվի: Գրական լեզվի բառապաշարն առնվում է տվյալ ժողովրդի լեզվից հատուկ ընտրությամբ, բառերի իմաստներն ու գործածության շրջանակները հստակ որոշվում են, ստեղծվում են մասնագիտական բառերի ու տերմինների ծավալուն համակարգեր. ուղղագրությունն ու արտասանությունը կարգավորվում են հատուկ պարտադիր կանոններով, բառակազմությունը և քերականական ձևերը ըստ հնարավորին միասնականացվում են որոշակի կաղապարների ու օրինակելի նմուշների հիման վրա [8, էջ 3-8]:

Ամփոփում

Լեզուների առանձնահատկությունների քննությունը չի կարող լրիվ լինել, եթե նկատի չառնենք գրական ու խոսակցական լեզուների փոխհարաբերության և այդ բանում կատարվող տեղաշարժերի հետ միասին նաև բարբառների ու գրական լեզուների, բարբառների ու ընդհանուր լեզուների փոխհարաբերությունները և դրանցում կատարվող տեղաշարժերը: Հայտնի է, որ՝

- ✓ պատմական որոշ պայմաններում ընդհանուր լեզուն կարող է թուլանալ կամ անկման հասնել և դրա հետ կապված՝ առանձին բարբառներ կարող են ուժեղանալ՝ որոշ բարենպաստ պայմանների առկայության դեպքում հիմք տալով առանձին լեզուների.
- ✓ կարող է ուժեղանալ ընդհանուր լեզվի ազդեցությունը՝ հասցնելով բարբառների ավելի կամ պակաս միաձուլման.
- ✓ կարող է թուլանալ որևէ բարբառի հիման վրա գրական դարձած ընդհանուր լեզվի ազդեցությունը, և դրա հետ կապված բարձրանալ որևէ այլ բարբառ՝ տնտեսական և քաղաքական պայմանների առկայության դեպքում հիմք դառնալով ընդհանուր հասկանալի լեզվի, գրական նոր լեզվի համար:

Գրականության ցանկ

1. Լ. Հախվերդյան, Զրույցներ լեզվի մասին, Երևան, 1986:
2. Ա. Ղարիբյան, Հայ մանկավարժական լեզվաբանության հարցեր, Երևան, «Լույս», 1969:
3. Выготский Л.С, Собрание починений, том 2, Мышление и речь, М., Педагогика, 1982.
4. Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955:
5. О.Г.Каменская, Р.А.Кан, Е.Т.Стрекалова, М.Н.Запорожец, Русский язык и культура речи, Учебное пособие для студентов, Тольятти, 2005.
6. Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Երևան, «Հայաստան», 1987:
7. Լ. Խաչատրյան, Ընդհանուր լեզվաբանության դասընթաց, Երևան, Զանգակ, 2017:
8. Գ. Զահուկյան, Է. Աղայան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան, Հայոց լեզու, I մաս, Երևան, «Լույս», 1980:

МАРС И ВЕНЕРА
ЭССЕ ПОСВЯЩАЕТСЯ СВЕТОЙ ПАМЯТИ ДОКТОРА ПСИХОЛОГИЧЕСКИХ
НАУК ВЛАДИМИРА МИКАЭЛЯНА И КАНДИДАТА ПСИХОЛОГИЧЕСКИХ НАУК
СЮЗАН САРКИСЯН

ГАЯНЭ ШАВЕРДЯН
Доктор психологических наук, профессор

Имена эти прочно вошли в биографию ЕГУ, ибо университеты держатся на таких, как они, вне зависимости от того, ушедшие ли они или оставшиеся. Благодаря им университеты приобретают смысл, университетские здания превращаются в символ, а страны стяжают целесообразность. С их помощью студенты держат оборону против всего косного и формального, счастливы искать, познавать и рады выбору профессии. Такие как они презируют внешнее механистичное познание, дерзают знать больше, чем обыкновенный рассудок, освобождая душу-пленницу от рук тех, кто зациклен на самом поверхностном слое жизни. Именно это стремление, надеюсь, очень понадобится им сейчас, когда они заснули для одного и проснулись для другого. «Пора проснуться, то есть умереть, - говорил Л.Толстой. Избави Бог жить только для этого мира. Чтобы жизнь имела смысл, надо чтобы цель ее выходила за пределы постижимого умом человеческим» (Иван Бунин. "Освобождение Толстого").

Их уход разломал кафедру клинической и социальной психологии не на «до» и «после», не на «с ними» и «без них», а на «незнание» и «распознавание» их в нас и нас в них, но не глазом и ухом, а той частью существа, которая независима от условий на Земле.

Одним из условий их пребывания на земле было их совместное присутствие в одном пространстве, по крайней мере последние два десятилетия, а условием их убытия из этого мира была разница в два дня, когда за ним, еще не преданным земле, ушла она, как бы вдогонку... Если же они решили уйти вместе, кто я такая, чтоб их разъединить? Поэтому сначала разговор пойдет о них совместно, а уже потом - в отдельности.

Они не то, чтобы радовались друг другу при встрече, они радовались друг другом, радовались самому факту, что они есть друг для друга. «Сьюэзии...», - почти пропевал он при встрече, и они принимались за неспешный разговор, контекстом которого была какая-то особая позитивность. Они установили между собой своеобразную почву общения, при котором один - *Марс* – увлеченно говорил, другая – *Венера* – не только неизменно соглашалась, но заранее была готова согласиться. При этом разговор мог быть серьезным или смешливым, тематически сложным или ни о чем, но было видно: говорили нуждающиеся в дружественности друг друга и понимающие друг друга души, а лучшим доказательством этого понимания был их одновременный отказ от всего, что есть в этом мире. Их смерть оказалась не только пробным камнем их гармонии здесь, но и чаянием их взаимной помощи там, от возможности которой хоть немного бледнеет наше отчаяние.

Владимир Микаэлян (или, как его окрестил наш бывший декан, «Микаэл джан») был сензитивно восприимчив к идеям, в которых улавливал сколько-либо слабый луч света. Как никто ценил он живую мысль, вдохновлялся сам и зажигал ею студентов. Сколько раз я была свидетелем его восхищения по поводу тех или иных найденных им откровений в отношении психического или телесного, – вычитанных или самостоятельно добытых. «У этого автора я на такую мысль наткнулся...!!!» или «Знаете, я понял, что...!!!». Такие моменты приравнивались к чуду. И это было вдвойне утешительно и удивительно, что из мира, в котором мы живем, помимо многого необходимого для более или менее осязаемого чувства жизни, исчезло не то, чтобы благоговение перед чем-нибудь или кем-нибудь, но попросту уважение. Почти уничтожена в человеческой психике расположенность к красивой и истинной мысли, а также «значимый другой», неизменно сопровождающийся чувством благодарности к таковому, и это не банальная вера в авторитет, а этический ориентир и показатель вкуса. Для многих теперь все люди - на одно лицо, а все мысли - на один лекал, чтобы ничто не напоминало о ценностях и не отвлекало от «ценников». Последние, т. е. университетская бюрократия, выигрышные социальные роли, чины, статусы, степени (сколько труда стоило, например, уговорить его написать докторскую), были не про него, хотя он хорошо знал себе цену, но ничего не предпринимал для внешнего ее подбивания. Так, он никогда и ни при каких обстоятельствах не лизоблюдничал, и брезговал онными, а меж тем их пруд пруди в госуниверситете (последний их просто пестует!) и за ее пределами. «У них нет клаустрофобии», - хохотал он над ними, намекая на юркость влезания в узкие места нужных людей.

Иначе не могло и быть. Для «иначе» он был слишком хорошим психологом, осознающим, что любая маска в угоду социуму потрясает основы здоровья, нарушает идентичность «Я» и противоречит красоте. Вот выдержка из одной из многочисленных статей, указывающая на трезвое отношение к ролям: «Социальные роли, строго говоря, являются тем же процессом диссоциации личности, только носят они контролируемый и временный характер», а за выпячивание роли человек платит незаметной для него утратой чувства «Я», т.е. безумием (Юнгианские чтения, кафедра социальной психологии, ЕГУ, Ереван 2014, стр. 66). Стоит отметить также его оригинальный стиль письма, правда сам он не заботился о том, кто и насколько его поймет, потому

что сложнейшие вещи писались легко и часто без оглядки на эмпиризм. «Знающий не доказывает, доказывающий не знает», - соглашался он с Лао-цзы, и не дожидаясь, пока «слепая курица найдет зерно» (т. е. эмпирического исследования), обрушивал на читателя свое, несколько «сгущенное» понимание предмета. Однажды Ж. Ж. Руссо отозвался об авторе какого-то опуса следующим образом: «Когда читаешь вашу книгу, разбирает охота побегать на четвереньках» (Письмо к Ж. Ж. Руссо от 30 авг. 1755 г.). Когда читаешь В. А. Микаэляна, начинаешь больше ощущать себя прямоходящим.

Весь путь его в профессии был посвящен проблеме времени, наблюдению за его поведенческими «замашками» в норме и патологии личности. Стоит ли говорить, что время в его понимании не было синхронизировано и линейно, не было ограничено рамками биографии, и вместе с пространством представляла мистерию, и оно-таки выдернуло его из пространства туда, где пространство не препятствует ему осуществиться, и вне зависимости от последнего, ожившие воспоминания набегают, когда и где им заблагорассудится. О времени он знал, казалось бы, все, кроме того, что настало время ему уйти. В болезнь он не верил, наоборот, даже принял ее с каким-то вдохновением. «Я столько чего преосмыслил, и вправду болезнь есть учитель!», - сказал он незадолго до ухода. Осознавая воспитательные смыслы болезни и замечая, как в результате болезни усилилось его чувство жизни, тем не менее, такой энтузиазм показался мне зловещим, очевидно потому, что одни и те же вещи, в зависимости от зрения с одной и другой стороны, видятся по-разному.

Лавируя в мысли между временным и вечным и пытаясь поймать и сохранить в сознании «длящееся настоящее», он мастерски интерпретировал сновидения, откапывая в рудниках образов золотые и неслучайные параллели чувственного и сверхчувственного. Он сделал время своим интимным, личным делом, но во времени не уместился, оставшись ее пасынком. Надо было ему родиться немногим раньше или многим позже, после того как содержательное одержит победу над формальным, когда познание станет сакральным действием, когда изменится отношение к истине, которая, по выражению М. Мамардашвили, «как наша планета Земля, ни на чем не покоится, кроме нашего непосредственного опыта». И только сейчас он попал в сферу перманентной юнгианской синхронизации, где нет ничего случайного, но все выстраивается в пространственно-временную цепочку постижимой, высшей мудрости, в том числе временное местонахождение среди истиноненавистников.

Впрочем, как психоаналитик и юнгианец он мог их и многое другое объяснить еще, так сказать, при жизни. Но вопреки все объясняющим психоаналитикам, заместившим Бога Фрейдом, и от этого получившим «сдвиг по фазе», Владимир Микаэлян сохранил адекватность и разум, хотя по долгу службы застревал в фрейд-юнгианских интерпретациях. Потому что опирался только на одно: на настойчивый призыв к сознанию против множественных форм бессознательного, за что пациенты и студенты были ему признательны.

За 20 лет работы ему приходилось читать разные, подчас несовместимые курсы (например, «Психоанализ власти» и «Психосоматика», «Социальная психология» и «Аналитическая психотерапия»), но не было случая, чтобы с новым курсом он хоть сколько-либо снизил планку. Благодаря смолоду обретенному фундаменту глубоких, разносторонних и «правильных» знаний, каждый курс лекций был ему «к лицу». Прекрасный лектор и психотерапевт, потрясающий рассказчик, он, как из рога изобилия не уставал дарить, давать, преподавать, сохраняя при этом неослабевающую волю к ученичеству, благо, что на выбор учителя ему хватило нравственного чутья. Не поголовно, но многие понимающие его студенты принимали его сразу и навсегда. «Самый лучший», - говорили они, понимая, что они в отношении профессии «попали в обойму».

Но лучшие всегда неуютны и, конечно, ЕГУ здесь не исключение. Поэтому не было дефицита в завистниках, клеветниках и стукачах «наверх». Сразу после его прихода в университет властолюбивые, сребролюбивые, вороватые, жуликоватые и жадные учуяли опасность – обрисовывался неприятный фон для их дилетантизма. И надо же было этому случиться, что в это самое время среди студентов ввели регулярный соцопрос. К вящему неудовольствию многих рейтинг Владимира Акоповича оказался самым высоким (тогда в ЕГУ была одна кафедра психологии), после чего все на время притихло, чтобы с регулярной активностью обновляться - по поводу и без.

Все это - как сказал бы Ницше - «человеческое, слишком человеческое», разумеется, не ново и даже ожидаемо. Не нова также самая благодатная реакция на подобное – юмор, о котором стоило бы сказать отдельно.

Микаэляновский юмор стрелял метко и без подготовки, и мог бы быть отмечен знаком качества, если не считать пару-тройку случаев, когда его раненное эго не преодолело рубеж, за которым обида разбавляется шуткой и растворяется до десятых, а в идеале до сотых или даже тысячных потенций. Это был настоящий юмор, творческий, импровизационный, эдакий юмор-подлинник. Он был настолько живой, так точно ложился в тему, так совпадал по смыслу с ситуацией (не в пример плоским посредственностям, заранее заготовливающим свежий анекдот и начисто лишенным чувства юмора), что казалось, что он держит в уме остроумные памятки на любой случай жизни. И никаких повторов – все всегда ново, как и полагается юмору.

Студенты охотно растаскивали сказанное им на цитаты, и вообще, озарялись улыбкой от одного произнесения его имени. Он много шутил на лекциях, перемежая сложное с легким. Это были точные аналогии из истории и литературы, уместные анекдоты, байки и случаи из практики. Так изобилуют дети своими рассказами...

Ассоциации по контрасту вынуждают вспомнить двойной идиотизм гуманитарных факультетов

современных университетов. Во-первых, допускается и даже поощряется точка зрения, что лектор есть тот, кто заучивает учебник данного курса, потом идет в университет и рассказывает это студентам. Во-вторых, в наш век высоких технологий лектор есть тот, кто выводит заранее написанный текст на экран, потом его тупо вслух прочитывает для аудитории. Что и говорить, on-line обучение как нельзя приходится таким лекторам по вкусу, точнее, по безвкусию. Вы скажете: «А схемы и пр...», но не естественнее начертить их мелом, благо, что иллюстративного материала в нашей специальности не так много и это не главное.

Лектор - тот, кто умеет синхронно создавать смыслы на глазах у аудитории, и В. Микаэлян это умел. В аудитории он был явно «на своем месте», ибо его было «всего понемногу»: эксперт, нарцисс, артист, властелин, мотиватор, инспиратор, смутьян, игрец, мудрец, юнец. К тайнам Космоса относится то, что Марс юн и порывист, в отличие, например, от старого и степенного Сатурна. Именно это, думается, побудило его, молодого психолога, оставить троих маленьких детей и отправиться в Карабах в 90-е. Он прошел тяготы войны и вернулся с ранением, от которого каждую весну ныло тело, в то время как некоторые, водимые за нос отнюдь не ноющей природой своего тела, наживались на войне и землетрясении.

До конца дней своих он сохранил какой-то юношеский задор. Как положено Марсу, у него были и бойцовские качества, но он компенсировал эмоциональные реакции острым словом. Было в нем сочетание зрелости и детскости, что попеременно удивляло, а иногда и злило, поскольку при условии зрелости не хотелось верить в его наивность. А секрет был в том, что обе стороны он реализовал, и наша задача была только в том, чтобы эти стороны не спутать.

Как и для многих, семья для него была силой и слабостью одновременно. Он весь сиял, когда речь заходила о детях и внуках, и не раз благодарил судьбу за чудесную супругу. В этом ему повезло. Думаю, в остальном тоже. И нам. С ним.

Сюзи...Я застала ее зажатой между двумя а-ля авторитеты психологической науки. Ей явно не хватало воздуха и надо было скорее вырвать ее оттуда и вогнать в свежий, бодрящий и благодатный простор под названием «Психология творчества». Влюбившись в смыслы творчества и освоив приемы плавания по безграничному океану искусства, было рукой подать до арт-терапевта, а потом и до того, чтобы щедро делиться своими навыками и вдохновением со студентами, которые любили ее и которых любила она сама.

Можно считать это гуманным или антипедагогичным, но она умудрялась быть им другом. Как? Имея неослабевающий интерес не только к их учебным, но и личным проблемам. То же и в отношении коллег. Она знала о боли каждого, не забывала и не уставала поддержать и утешить. И это при условии, что работала за троих, и еще при условии со всех ног мчащихся вокруг деловых людей, которые с высунутым языком и частым дыханием догоняют и перегоняют друг друга, имея в сердце единственное все перекрывающее опасение: успеть, схватить, «не лохануться», дотянуться до степеней, званий, медалей, грантов и прочего себя возвышающего вплоть до методичных попыток рекета специальности в печально известном ВАК-е. Куда там до чих-либо личных проблем в кислотной среде экзистенциального холода и социального дарвинизма.

Ан нет! Саркисян Сюзи могла. Могла подробно расспросить, неспешно выслушать, подбодрить, восхититься чем-то в собеседнике. На комплимент а свой адрес быстро отговаривалась чем-то типа: « Да, вот так», и смеялась, как бы стесняясь принимать его очень серьезно на свой счет. Что удивляло, так это то, что ее собеседники сами раскрывались, сами делились с ней сокровенным, сами невзначай выбалтывали долго скрываемое, будучи уверены в ее конфиденциальности, в отсутствии злорадства, зависти, высокомерия, снобизма. Вот почему с ее уходом многие почувствовали зияющую пустоту, заполняемую таким другом, который всегда был на «его» стороне.

С ней было уютно. Одним своим присутствием, не произнося ни слова, способна была она создать атмосферу доверия, зону безопасности, воздушное пространство какой-то всеобщей родственности. Все происходило в соответствии с суфийской мудростью: «Человек - это не то, что он говорит, и не то, каким он кажется, а атмосфера, которая создаётся в его присутствии. Вот что является свидетельством. Ибо никто не в состоянии создать атмосферу, не принадлежащую его сущности».

Одним из свидетельств ее сущности явилось то, что она взвалила на себя больше, чем могла нести, от чего часто подводил ее «ее ослик» - так называл свое физическое тело св. Франциск Ассизский. Она «затыкала» его докучания сильными препаратами, чтобы не провалить занятие со студентами, тренинг с группой или сеанс с пациентом. Если бы смерть не была бы судьбой, можно было подумать, что тело отомстило ей за «игнор», заразившись вирусом, сразу за которым душа ее заразилась страхом, не позволившим бороться с болезнью, и она, по свойственному ей обыкновению, согласилась и приняла смерть.

Что невозможно было сделать, так это ее обидеть. На ней была какая-то защитная оболочка, и даже в очевидных случаях, вместо жалобы на обидчика, ограничивалась чем-то типа «а... очень надо». Создавалось впечатление, что при удобном стечении обстоятельств она этого обидчика еще и приголубит. И не потому, что была робкого десятка, а потому что была так мило устроена. Не зря я прозвала ее «Венерой». Как считают астрономы, у планеты Венера нет спутника потому, что она ни с кем во Вселенной не сталкивалась.

Пространным рассуждениям на научные темы она предпочла ...дело. Она постоянно что-то делала - от нарезания фруктов на кафедре до работы с глиной со студентами. Она носилась по этажу факультета и Центру прикладной психологии с гуашью и акриловыми красками, в особом настроении приподнятости, которая воздается только тем, кто имеет дело с искусством. То и дело хвалила она кого-нибудь из магистрантов,

подспудно гордясь им сама, когда показывала талантливые рисунки, например, мандал с их интерпретациями. Кому-то эти образы и их интерпретации могут показаться фантастическими и диковинными, но она знала: найти точный образ идеи – значит сделать незримое зримым, не в пример психологам, превращающим очевидное в «слепое пятно». Будучи лектором, она знала головой, будучи арт-терапевтом она узнала по-новому то, что знала - узнала красками, звуками, пальцами. Она научилась сама и обучала других не только осмысливать идеи, но и чувствовать их, не только мыслить мысль, но вращать в образный мир имажинаций.

Сюзи полюбила ваение, живопись, музыку. От нее тои дело было слышно что-то типа: «Сегодня на музыкотерапии разбирали холериков в связи с Бетховеном, я растормошила их не хуже М.Казиника!»). Она настолько тонко чувствовала цвета, что, как сказал Рильке об одной умершей художнице, «взвешивала пальцами их груз», а мы, встречая какой-то изумительный цвет, обыкновенно говорили: «Сюзин цвет»... Разве не логично предположить, что если она приучила себя к чувству цвета здесь, то они не покинут ее там, и разве главный Красильщик здесь не Тот же, что и там?

Жизнь в бытовом отношении ее не слишком баловала, но это не отражалось на ее жизнелюбии, энергичности и веселом нраве. Ничего не мешало ей быть сверхзаботливой матерью, «сверх», потому что по-матерински она себя вела со всеми детьми. В обоих случаях материнства она внешне так легко несла иго ответственности, что трудно было догадаться о ее жизненных тяготах. Они же проявлялось внезапно и невпопад. Так, года три назад, в самый разгар свадьбы младшей дочери, она с облегчением заговорила о выполненном долге по отношению к своим детям. «Все, я это сделала», - сказала она, и вдруг добавила: «Да, но если завтра я умру, кто меня на кафедре заменит?» Это внезапное беспокойство в свои какие-то 52 года было услышанным ею первым звуком погребального перезвона, а по-научному - видом околосмертного переживания, которое может наступить задолго до несчастного случая или смертельной болезни.

Принято считать, что с никем не понятым коронавирусом, который заготовил ей путь в иной мир, не справляются те, у кого отсутствует никем не понятый иммунитет. Годами имея дело с искусством, которое по природе своей сверхчувственно, как и мир, в котором живет сейчас ее душа, она приобрела мощный иммунитет против иллюзий и ловушек чувственного мира. Жизнь без образов, безобразная жизнь была бы для нее безобразной. В этом смысле ее недолгая жизнь была прекрасной, как и она сама. Как же не быть таковой самой Венере? Просто теперешняя Венера отличается от прежней лишь степенью плотности, если сравнить материальное тело и сверхчувственный световой образ.

В заключение вновь объединим Венеру с Марсом.

Среди скопа психологов, бесстрастно занимающихся душой, оба они были пассионарными личностями по отношению к профессии. Все, чем они были заняты в ней, пронизывало их изнутри. Поэтому им удавалось увлечь, заразить и зажечь страстью к специальности. Чтобы это доказать, достаточно было после них войти в аудиторию. Может быть, когда-нибудь ученые научатся определять изменения в химическом составе воздуха в зависимости от того, кто в ней находился и какие мысли имел. Но кто знал этих двоих, доказательств не нужно, и чем больше таких пассионариев в университетах, и, соответственно, чем меньше тех, кто возбуждает волю к звериной соревновательности, тем крепче будет стержень у молодых и стержень нации в целом.

Сюзи и Владимир отталкивались от практического единства тела (не случайно, что телесно-ориентированная психотерапия оказалась в руках одной, а вдумчивые духовно-научные психосоматические корреляты у другого), души и духа, и сознавали, что обязанность психолога – познавать дух, открывающийся в символах и образах. Эмпирическая конкретика последних противостояла эмпирической конкретике веры единственно в мясо и кости. Эта вера стремительно приводит к творимой в мире безлاديце, безумию и скорби. Но одновременно с этим вступает в силу закон изменения сознания и принятия иной психологической событийности.

Теоретики пассионарности утверждают, что пассионариям легче умирать, потому что они подготовили свои души для духовной реальности, создав щит против ошеломленности, растерянности и великого страха при переходе через порог этого мира.

Горе тем, кто его не создал! И, как говорили иудеи, «горе тем, кто примет одеяние Торы за саму Тору».

ԱՆՁԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ՏԱՐԵՑՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

ԳԱՅԱՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Խ. Աբովյանի անվանի հայկական պետական մանկավարժական համալսարան
քիմիական գիտությունների թեկնածու
gayanca@yahoo.com

Համառոտագիր

Սույն հոդվածում ուսումնասիրության է ենթարկվում բնաչության ծերացման և ժամանակակից քաղաքակրթության ժողովրդագրական զարգացման առաջատար միտումը: Առանձնակի ուշադրություն է դարձվում տարեց հասակում ծագող հիմնախնդիրներին, տարիքային զարգացման ընթացքում ինքնագիտակցության վերակառուցմանը և սեփական ԵՍ-ի, նոր «Ես-կոնցեպցիայի» ձևավորմանը:

Բնաչության ծերացման խնդիրն այսօր ժամանակակից քաղաքակրթության ժողովրդագրական զարգացման առաջատար միտումն է: Դրան նպաստում են մի շարք գործոններ՝ սնուցման որակի բարելավում, բժշկական օգնություն, դեղորայքի ապահովում, սոցիալական աջակցության համակարգեր, ինչը, իր հերթին, թույլ է տալիս ժամանակին հայտնաբերել և կանխել բազմաթիվ հիվանդությունների զարգացումը, բարձրացնել կյանքի տևողությունը և երկարացնել տարեց մարդկանց ակտիվությունը [4, էջ 89]:

Կենսաթոշակային տարիքում մարդիկ հաճախ իրենց միայնակ են զգում, ընկերների ու ծանոթների շրջանակը փոքրանում է, ինչը կարող է նպաստել տարբեր հիվանդությունների զարգացմանը: Հաճախ բժշկի դիմելու պատճառները ոչ թե առողջական խնդիրներն են, այլ շփման բացակայությունը և ուրիշի հոգսը զգալու, նրանց զգացմունքներն ու հույզերը կիսելու անհրաժեշտությունը:

Գիտատեխնիկական բազայի կատարելագործումը, կապի նոր մեթոդների ձևավորումը, օրինակ՝ ինտերնետը, տվյալների շտեմարանները, լուրջ խնդիր են դարձել մեծ թվով տարեցների համար և զգալիորեն սահմանափակել նրանց հնարավորությունները:

Առհասարակ, անձնավորության տարիքային զարգացման ճգնաժամերը պայմանավորված են ինքնագիտակցության որակական վերակառուցումներով, որոնց ընթացքում մարդը սկսում է ընկալել և գիտակցել իրեն որպես նոր ակտիվության սուբյեկտ: Այս ամենն ընթանում է կենսաբանական, հոգեկան և սոցիալական տարիքային նորագոյացությունների ազդեցության տակ: Ինքնագիտակցության այդ վերակառուցումն ուղեկցվում է նոր «Ես» կոնցեպցիայի ձևավորմամբ և այդ կոնցեպցիային համապատասխան՝ ինքնահաստատվելու ձգտմամբ և ջանքերով:

Ճգնաժամերի ախտանշանները պայմանավորում են սեփական Ես-ի, նոր Ես-կոնցեպցիայի ձևավորման և սեփական Ես-ին, նոր Ես-կոնցեպցիային համապատասխան՝ ինքնահաստատվելու դժվարությունները:

Համաձայն Առողջապահության համաշխարհային կազմակերպության դասակարգման՝ տարեցներն այն մարդիկ են, որոնք հասել են կենսաթոշակային տարիքի և մինչև 75 տարեկան են: Այս շրջանը բնութագրվում է կենսագործունեության նվազմամբ և համարվում է ճգնաժամային, քանի որ տարիքում փոխվում է մարդու ինքնագիտակցությունը, նվազում է ինքնագնահատականը, ի հայտ է գալիս անպաշտպանության զգացում [2 էջ 54]:

Բանալի բառեր և բառակապակցություններ. դեպերսոնալիզացիա, տարիքային զարգացում, ճգնաժամ, ինքնագիտակցություն, ծերություն:

КРИЗИС ЛИЧНОСТНОГО РАЗВИТИЯ У ПОЖИЛЫХ

ГАЯНЕ ГРИГОРЯН

Армянский государственный педагогический университет им. Х. Абовяна
кандидат химических наук
gayanca@yahoo.com

Аннотация

В данной статье рассматривается ведущая тенденция старения населения и демографического развития современной цивилизации. Особое внимание уделяется проблемам, возникающим в пожилом возрасте: перестройке самосознания, формированию собственного Я, новой “Я-концепции”.

Проблема старения населения сегодня является ведущей тенденцией демографического развития современной цивилизации. Этому способствует ряд факторов: улучшение качества питания, медицинского обслуживания, фармацевтического обеспечения, системы социальной помощи, что, в свою очередь, позволяет вовремя выявлять, предотвращать развитие многих заболеваний, увеличивать продолжительность жизни и продлевать активность пожилых [4 с 89].

В пенсионном возрасте люди часто чувствуют себя одинокими, сокращается круг друзей и знакомых, что может способствовать развитию различных заболеваний. Часто причиной обращения к врачу являются не проблемы со здоровьем, а недостаток общения, потребность чувствовать заботу окружающих, делиться своими чувствами и эмоциями.

Совершенствование научно-технической базы, развитие новых способов связи, например, Интернета, баз данных, стали серьезной проблемой для большого числа пожилых людей, существенно ограничивая их возможности.

В целом возрастные кризисы развития обусловлены качественными перестройками самосознания, в ходе которых человек начинает осознавать себя субъектом новой деятельности. Все это происходит под влиянием биологических, психических и социальных возрастных новообразований.

Эта перестройка самосознания сопровождается выработкой новой концепции «Я», стремлением к самоутверждению в соответствии с этой концепцией.

Симптомы кризисов обусловлены трудностями самоутверждения, формирования нового Я, новой Я-концепции, собственного Я в соответствии с новой Я-концепцией.

По данным Всемирной организации здравоохранения, пожилыми считаются люди, достигшие пенсионного возраста, и до 75 лет. Этот период характеризуется спадом жизнедеятельности и считается критическим, так как с возрастом у человека меняется самосознание, снижается самооценка, появляется чувство незащищенности [2 с 54].

Ключевые слова и словосочетания: обезличивание, возрастное развитие, кризис, самосознание, старость.

PERSONAL DEVELOPMENT CRISIS IN THE ELDERLY

GAYANE GRIGORYAN

Armenian State Pedagogical University after Kh. Abovyan
PhD in Chemical Sciences
gayanca@yahoo.com

Abstract

This article examines the leading trend of population aging demographic development of modern civilization. Particular attention is paid to the problems arising in old age, the reconstruction of self-consciousness during elderliness, the formation of one's self, a new "I-concept".

The problem of population aging today is a leading trend in the demographic development of modern civilization. It is facilitated by several factors: improving the quality of nutrition, medical care, medicine, social assistance systems, which, in turn, allow to detect in time prevent the development of many diseases, increase life expectancy prolong the activity of the elderly [4 p 89].

At retirement age, people often feel lonely, the circle of friends and acquaintances decreases, which can contribute to the development of various diseases. Often the reason for going to the doctor is not health problems, but the lack of communication, the need to feel the care of others, to share their feelings and emotions.

The improvement of the scientific and technical base, the development of new communication methods, for example, the Internet, databases, have become a serious problem for a large number of elderly people, significantly limiting their opportunities.

In general, age-related developmental crises are conditioned by qualitative reconstructions of self-consciousness, during which a person begins to perceive himself/herself as a subject of new activity. All this is under the influence of biological, mental, and social age neoplasms.

This reconstruction of self-consciousness is accompanied by the development of a new concept of "I", the pursuit of self-affirmation in accordance with that concept. The symptoms of crises are due to the difficulties of self-affirmation, the formation of a new self, a new self-concept, one's self, in accordance with the new self-concept.

According to the World Health Organization, the elderly are people who have reached retirement age, up to 75 years old. This period is characterized by a decline in vital activity and is considered critical, as a person's self-consciousness changes with age, self-esteem decreases, a feeling of insecurity appears [2 p 54].

Keywords and phrases: depersonalization, age development, crisis, self-awareness, old age.

Ներածություն

Անհատականության տարիքային ճգնաժամը լուրջ ցնցում է մարդու հոգեբանության համար, սակայն տարիքն այս դեպքում նախապայման չէ, քանի որ յուրաքանչյուր տարեց մարդու մոտ այս ճգնաժամը դրսևորվում է տարբեր ձևերով, բայց գրեթե միշտ ուղեկցվում է սեփական «ես»-ի վերահիմաստավորմամբ և վարքագծի փոփոխություններով:

Տարիքային ցանկացած փոփոխություն վկայում է առաջացող անկարողության մասին, քանի որ տեղի է ունենում կյանքի նպատակների և առաջնահերթությունների փոփոխություն, որն ուղեկցվում է մոտիվացիայի անկումով: Արտաքին գործոնների ազդեցության տակ մարդը ենթարկվում է մտավոր և ֆիզիկական փոփոխությունների:

Ծերության անձնական հոգեբանական ճգնաժամի հիմնական պատճառ կարելի է համարել սովորական ապրելակերպի փոփոխությունը, մասնավորապես.

- հեղինակավոր մասնագետից վերածվելը նվազ եկամուտ ունեցող հասարակության անդամի,
- սոցիալական կարգավիճակի փոփոխություն, մասնավորապես թոշակի անցնելուց հետո,
- անգործություն՝ ակտիվ մտավոր աշխատանքային գործունեության փոխարեն,
- միջավայրի փոփոխություն, որը ենթադրում է հազվադեպ հանդիպումներ գործընկերների, երեխաների և հարազատների հետ,
- նախկինում ունեցած հիվանդությունների սրացում և նորերի առաջացում:

Ակտիվ աշխատանքային գործունեության ավարտից հետո առաջին տարիներին կենսաթոշակառուներն ունենում են ծերության ճգնաժամ: Հոգեբանության մեջ այսօր առկա են տարիքային զարգացման ճգնաժամեր՝ որպես տարիքային զարգացման նոր որակական կոնկրետ փուլի անցման հատուկ, համեմատաբար կարճ ժամանակահատվածներ, որոնք բնութագրվում են սուր հոգեբանական փոփոխություններով:

Տարիքային ճգնաժամերը պայմանավորված են առաջին հերթին զարգացման սովորական սոցիալական իրավիճակի քայքայմամբ, որն ավելի համահունչ է մարդու հոգեբանական զարգացման նոր մակարդակին:

Տեսական մաս

Տարիքային զարգացման ընթացքում ինքնագիտակցությունը վերակառուցվում է չորս անգամ:

«Տեսակային» ինքնագիտակցությունը ձևավորվում է երեք տարեկանի շրջանում: Այս ժամանակ երեխան սկսում է գիտակցել իրեն որպես մարդ, այնպես, ինչպես ուրիշները:

Ինքնագիտակցության երկրորդ վերակառուցումը տեղի է ունենում 11, 12-13, 15 տարիքային շրջանում: Այս ընթացքում է տեղի ունենում սեռային ինքնագիտակցության ձևավորում, երբ աղջիկը սկսում է ընկալել իրեն որպես կին, տղան՝ որպես տղամարդ:

Ինքնագիտակցությունը վերակառուցվում է երրորդ անգամ 25, 26-30, 32 տարեկանում, երբ մարդը սկսում է գիտակցել իրեն որպես սոցիալական ակտիվության սուբյեկտ՝ ընտանեկան և աշխատանքային ակտիվության սուբյեկտ:

Վերջին վերակառուցումը տեղի է ունենում 55-65 տարիքային շրջանում: Այս ժամանակ մարդը սկսում է իրեն գիտակցել որպես մահկանացու:

«Անձնավորության տարիքային զարգացման ճգնաժամային շրջաններում մարդը սկսում է իրեն գիտակցել այն տարիքային հիմնախնդիրները, որոնց կրողը հենց ինքն է, և ակտիվորեն փորձում է կողմնորոշվել այդ հիմնախնդիրների և դրանց լուծման ուղիների մեջ, քանի որ հենց այդ հիմնախնդիրների լուծման միջոցով է նա ինքնահաստատվում որպես տվյալ ակտիվության սուբյեկտ» [1 էջ 167]:

Երբ մարդը 55-65 տարիքային շրջանում է, նա սեփական ԵՍ-ն ընկալում է որպես մահկանացու, դառնում է գերզգայուն. օրինակ՝ սեփական առողջության, կյանքը երկարեցնելու, որպես անձնավորություն իր անցած ուղու գնահատման, սեփական կյանքն ամփոփելու նկատմամբ:

Հասուն տարիքի ճգնաժամերի ընթացքում սեփական Ես-ի առումով զգայունությունը կարող է դրսևորվել խոր ինքնավերլուծությունների, անձի սոցիալական արժեքի շուրջ մշտական

մտորումների, ինքնակասկածների, հաճախ նաև սեփական ես-ի առնչությամբ անորոշ տագնապների ձևով **[1 էջ 169-170]:**

Սեփական անձի նկատմամբ գերզգայունության դրսևորումներ կարող են արձանագրվել նաև որոշ հոգեկան հիվանդությունների և սահմանային վիճակների ժամանակ: Այս դեպքում պետք է նկատի ունենալ, որ հոգեկան հիվանդությունները շատ հաճախ ի հայտ են գալիս կամ սրվում տարիքային ճգնաժամերի ընթացքում, ինչը նշանակում է, որ հիվանդագին ախտանշաններին միանում են ճգնաժամային ախտանշանները՝ փոխադարձաբար սրելով երկու գործընթացները:

Միաժամանակ հայտնի են շատ դեպքեր, երբ տարիքային ճգնաժամերն ընթանում են հիվանդագին ախտանշաններով՝ դեպերսոնալիզացիոն, դեռեալիզացիոն երևույթներով, որոնք հոգեբուժության մեջ տարիքային իրավիճակի հիման վրա գնահատվում են որպես նորմա: Հոգեկան հիվանդությունները կարող են ի հայտ գալ տարիքային ճգնաժամերի սրման և անբարենպաստ ընթացքի հետևանքով:

Կյանքի չորրորդ ցիկլի տարիքային պարբերացման զարգացման հիմքում ընկած է հիմնախնդիրի ինքնաիրացումը կամ ինքնասպառումը: Կյանքի երրորդ ցիկլի ընթացքում մարդը լիովին կայանում է որպես սոցիալական ակտիվության սուբյեկտ և յուրացնում է ծնողական, ամուսնական, աշխատանքային ֆունկցիաներն ու դերերը, ինչին, բնականաբար, պետք է հաջորդի կայացած սոցիալական ակտիվության սուբյեկտի ինքնաիրացումը **[1 էջ 215]:**

55-65 տարիքային շրջանում մարդը սկսում է իրեն գիտակցել որպես մահկանացու և նպատակաուղղված ձևով ձգտում է ավարտին հասցնել իր կյանքի նպատակները: Անշուշտ, մինչև այս շրջանն էլ մարդը գիտի, որ ինքը մահկանացու է, բայց այս շրջանում ինքնագիտակցության մեջ սկսում է հանդես գալ ոչ միայն կոգնիտիվ, այլև աֆեկտիվ բաղադրիչը, այսինքն՝ մարդը նաև զգում է, հավատում իր մահկանացու լինելուն: Սեփական ԵՍ-ի՝ որպես մահկանացուի գիտակցումը, առաջին հերթին սեփական գոյության վերջին մոտենալու զգացողություն է: Եթե մինչ այդ մահը մարդու համար շատ հեռու, իրեն չվերաբերող իրողություն էր, ապա այժմ այն սկսում է ընկալվել որպես կատարվելիք, միանգամայն իրական երևույթ:

Հետաքրքրական է, որ «մարդ» բառը հնդեվրոպական մի շարք լեզուներում նշանակում է «մահկանացու», ինչը վկայում է, որ մահվանը ենթակա լինելու հանգամանքը տեսակային ինքնագիտակցման գործընթացում ընկալվել է որպես տարբերակիչ բնութագիր» **[1 էջ 217]:**

Ցիցերոնի համոզմամբ՝ ծերության շրջանում մարդը բացահայտում է իր իրական ԵՍ-ը:

Կ. Յունգը համարում էր, որ այս տարիքում ինքնագիտակցության այնպիսի զարգացում է տեղի ունենում, որը հասու չէ երիտասարդ տարիքին:

Բ. Նյուգարտենի կարծիքով՝ այս շրջանում, մասնավորապես 6-րդ տասնյակի վերջում, աճում է ներհայեցողությունը, փոխվում է ինքնագնահատականը, ինչը վկայում է ինքնագիտակցության մեջ տեղի ունեցող վերակառուցումների մասին:

Դ. Լևինսոնը նշում է, որ ճգնաժամը տեղակայվում է 60-65 տարիքային շրջանում: Նա այդ ճգնաժամը բնութագրում է որպես կյանքի ուղու առավել շրջադարձային անցում:

Ծեր տարիքում ֆիզիկական ուժի և կենսունակության աճող անկումը, սիրելի մարդկանց և ընկերների կորուստը, թոշակի անցնելը և թուլությունը հարկադրում են ինչ-որ տեղ մտածել, որ մահվան ժամանակը մոտենում է **[6 էջ 12]:**

Այլ հեղինակներ՝ Վ. Մորգունը և Ն. Տկաչևան, ուշ շրջանի ճգնաժամը տեղակայում են 50-55 տարիքային շրջանում և նշում նրա կապը «...տարիքային վերակառուցումների գիտակցման, դրանց այս կամ այն անձնային իմաստ տալու հետ» **[5 էջ 62]:**

Մարդու ինքնագիտակցումը՝ սեփական ԵՍ-ը՝ որպես մահկանացու, առաջին հերթին, տեղի է ունենում ֆիզիկական, հոգեկան և սոցիալ - հոգեբանական երևույթների կուտակման շնորհիվ:

Տարեց հասակում ծագող հիմնախնդիրների շարքին սովորաբար դասվում է կյանքի իմաստի կորուստը, պետքական չլինելու զգացողության և առողջական խնդիրների առաջացումը, սովորական կենսակերպ վարելու անկարողությունը, մահվան վախը և հոգեբանական այլ խնդիրներ **[3, էջ 73]:**

Սոցիալական գործոնները նույնպես մեծապես նպաստում են սեփական ԵՍ-ի՝ որպես մահկանացուի գիտակցմանը: Այդ գործոններից առաջինը հարկավոր է նշել աշխատանքային

գործունեության ավարտը՝ թոշակի անցնելը, ինչը խոր հոգեբանական տեղաշարժեր է առաջ բերում մարդկանց մեջ, շատերին ճգնաժամային ապրումների մեջ գցում: Սրա հետ մեկտեղ առաջ են գալիս ֆինանսական խնդիրներ, ինչի արդյունքում տարեց անձը բավարար միջոցներ չի ունենում անհրաժեշտ ապրանքներից և ծառայություններից օգտվելու համար: Այս տեսակի խնդիրների առաջացումը հանգեցնում է նրան, որ տարեցները պատրաստակամություն են հայտնում աշխատել նույնիսկ կենսաթոշակային տարիքում, սակայն գործատուները նախընտրում են թափուր պաշտոններում հավաքագրել ավելի ակտիվ երիտասարդներին: Պետական քաղաքականությունը և առաջին հերթին դրա սոցիալական բաղադրիչը մեծ նշանակություն ունի տարեցների խնդիրների լուծման գործում: Տվյալ հիմնախնդիրը մեղմելու համար պետությունը երբեմն փոքր-ինչ բարձրացնում է կենսաթոշակների չափը, սակայն դրան հաջորդում է սննդամթերքի և դեղորայքի գների աստիճանական բարձրացումը: Մյուս կողմից ոչ բավարար սոցիալական աջակցությունը կենսաթոշակառուներին, դրա անկատարությունը, կարիքավորների հայտնաբերումն ու սոցիալական աջակցությունը դարձել են երկրի ներկայիս համակարգի արդիականացման անհրաժեշտություն:

Տարեցների մեկ այլ կարևոր սոցիալական խնդիրը նրանց միայնությունն է: Միայնակ տարեցները շատ են: Մեր երկրում կանանց կյանքի միջին տևողությունը տղամարդկանցից ավելի երկար է: Սա հանգեցնում է տարեց կանանց թվի ավելացման: Նման մարդիկ կարիք ունեն շփման և ամեն տեսակի աջակցության: Միայնակ տարեց մարդու համար սոցիալական ակտիվությունը հատկապես կարևոր է ֆիզիկական և մտավոր օպտիմալ վիճակը պահպանելու համար: Ակտիվորեն ներգրավված լինելով հասարակական գործունեության մեջ, մասնակցելով տարբեր միջոցառումների ու հանդիպումների, շփվելով երեխաների ու թոռների հետ՝ տարեց մարդիկ իրենց կյանքն ավելի հագեցած են դարձնում:

Ինվոլյուցիոն երևույթները հոգեկան և հոգեֆիզիոլոգիական ոլորտներում ավելի քիչ ակնառու են, քան ֆիզիկական ոլորտում: Բազմաթիվ հետազոտություններով հաստատվում է, որ մահվան գաղափարն այս տարիքի գլխավոր հիմնախնդիրն է, և շատ այլ պրոբլեմներ դրա շուրջն են պտտվում: Այդ կապակցությամբ հոգեթերապևտ Բուտլերը նշում է. «...Տարիքով մարդկանց հոգեթերապիայի հիմնական հարցը մահվան և կորստի պրոբլեմն է: Մահն է, որ առաջ է բերում այն հիմնական հարցերը, որոնց բախվում են թերապևտն ու տարիքով մարդը»: Հեղինակը ցույց է տալիս, որ մահվան վախն այս տարիքային շրջանում մարդկանց մեջ զանազան, հաճախ ոչ ադեկվատ պաշտպանական հակազդումներ է առաջ բերում: Որոշ հետազոտություններ վկայում են, որ մահվան վախի աճը սկիզբ է առնում հենց 55-65 տարիքային շրջանում» [1 էջ 218-219]:

Անհրաժեշտ է նշել, որ սեփական ԵՍ-ի՝ որպես մահկանացուի գիտակցումը և դրանով պայմանավորված ճգնաժամը շատերի մեջ ոչ թե դեստրուկտիվ, այլ ընդհակառակը՝ կոնստրուկտիվ փոփոխություններ են առաջ բերում: Մարդիկ առավել ակտիվորեն ներգրավվում են կյանքի և աշխատանքային գործունեության մեջ: Նրանք, կարելի է ասել, դառնում են ավելի պրոդուկտիվ:

Եզրակացություն

Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ տարեց մարդկանց խնդիրների մասին հավաստող փաստերն ու հիմնախնդիրները համընդհանուր են հասարակության համար: Կենսաթոշակային տարիքում պահանջված լինելու, սոցիալական և աշխատանքային գործունեության զգացումը կհետաձգի կյանքի ճգնաժամի սկիզբը, կօգնի խուսափել միայնությունից, պահպանել օպտիմալ ֆիզիկական և հոգեկան վիճակ, ինչպես նաև հաղթահարել մահվան վախը:

Գրականության ցանկ

1. Ս. Ս. Խուրդյան, Անձի զարգացման ճգնաժամային տարիքները.-Եր.: Զանգակ- 97, 2004.- 248 էջ:
2. Антонова И.Ю., Аджиньязова А.А., Ермолаева Е.В. Демографические проблемы в современной России // Бюллетень медицинских интернет-конференций. 2015. Т. 5. № 12. с. 151.
3. Вишневский А. Г. О мотивационной основе рождаемости. – В кн.: Демографическое развитие семьи. Под ред. А. Г. Волкова, М., ” Мысль”, 1979, с. 370
4. Гражданкина Л.Ю., Горбунова В.В. Проблема социально-экономической поддержки граждан пожилого возраста, проживающих в сельской местности//Фундаментальные исследования. 2018, №6. - с.93.
5. Моргун В. Ф., Ткачева Н. Ю. Проблема периодизации развития личности в психологии. М., МГУ, 1981, 84 с.
6. McCarthy S. Death anxiety. Gardner press, 1980, 420 p.

**ԴԱՏԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (ԿՈՄՈՒՆԻԿԱՏԻՎ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԴՀՓ)**

ԳԱՅԱՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան
բժշկական հոգեբանության ամբիոն
հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
ghazaryan.psy@gmail.com

ԱՆԱՀԻՏ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան
բժշկական հոգեբանության ամբիոն
հոգեբանական գիտությունների թեկնածու
anahitterstepanyan@gmail.com

Համառոտագիր

Հոդվածում ներկայացնում ենք կոմունիկատիվ իրավիճակի ուսումնասիրության, այլ կերպ ասած, քրեական դատավարության մասնակիցների կողմից տեսագրությունների միջոցով հաղորդված տեղեկատվության հավաստիության (անհավաստիության) հատկանիշների բացահայտման հնարավորությունը և դատահոգեբանական այս նոր տեսակի փորձաքննության անցկացման արդիականությունը ՀՀ-ում:

Դատահոգեբանական փորձաքննության անցկացման և եզրակացություն կազմելու ժամանակ դատական հոգեբան փորձագետը իր մասնագիտական իրավասության շրջանակներում կարող է կիրառել հոգեբանական հետազոտության գիտականորեն հիմնավորված մեթոդներ: Նմանատիպ մեթոդներից է գիտական դիտարկման մեթոդը, որը մշակվել է 20-րդ դարի 20-ական թվականներին Մ. Յա. Բասովի կողմից և կատարելագործվել 20-րդ դարի և 21-րդ դարերի սկզբի ընթացքում: Ժամանակի ընթացքում այս ոլորտում ավելի ու ավելի են կիրառվում տեխնիկական միջոցները, որոնք թույլ են տալիս դիտարկումն իրականացնել անուղղակի, սկզբում որպես ֆիլմի և լուսանկարչության օգնությամբ, իսկ ավելի ուշ՝ տեսանկարահանման միջոցով: Տարբեր երկրների գիտնականների կողմից բազմամյա հետազոտությունները և դիտարկման մեթոդի կիրառումը թույլ են տվել հոգեբաններին մշակել նեղ փորձագիտական մեթոդիկա՝ քրեական դատավարության մասնակիցների կողմից հաղորդված տեղեկատվության հավաստիության և անհավաստիության նշանների հոգեբանական վերլուծություն: Վ.Ֆ. Ենգալիչևի, Գ.Կ. Կրավցովայի և Ե.Ն. Խոլոպովայի մեթոդիկայում ներկայացված հոգեբանական փորձաքննության չափանիշները թույլ են տալիս էականորեն բարձրացնել հոգեբանական գործունեության, վարքի (այդ թվում նաև վերբալ վարքի) իրավաբանորեն նշանակալի իրադրությունում գտնվող անձի (քննչական գործունեության կամ օպերատիվ-որոնողական միջոցառումների տեսագրությունում պատկերված) ախտորոշման արդյունավետությունը դատահոգեբանական փորձաքննության անցկացման ընթացքում:

Կոմունիկատիվ իրավիճակի ուսումնասիրության դատահոգեբանական փորձաքննության իրականացումը ՀՀ-ում ունի իրավական, կազմակերպչական և փորձաքննչական բոլոր պայմանները: Մեր կողմից կներկայացվի Մ.Հերացու անվ. ԵՊԲՀ-ի բժշկական հոգեբանության ամբիոնի մասնագետների կողմից այս մեթոդիկայի կիրառման օրինակը: Տեսաձայնագրության հետ աշխատանքը ընթացել է երեք փուլով. նախնական, տեքստային և հետտեքստային: Հոգեբանական փորձագիտական վերլուծության գործընթացում կիրառվել են հետևյալ մեթոդները և մեթոդիկաները. քրեական գործի նյութերի փորձագիտական հոգեբանական վերլուծություն, դիտարկում, համեմատություն, տեսողական հոգեախտորոշման մեթոդներ, ցուցմունքների հոգեելեզվաբանական վերլուծություն՝ ըստ Վ.Պ.Բելյանինի, իրականության մոնիթորինգի չափանիշների մեթոդ (Սպորերի ցուցակ), «ստոպ-կադր» մեթոդ, կոնտենտ վերլուծության որակական մեթոդ, անկախ բնութագրերի ընդհանրացման մեթոդ, փորձագիտական հետազոտության մեկնաբանման մեթոդ, սինթեզ, եզրակացությունների ձևակերպում: Մեթոդիկաների կիրառման արդյունքում ստացել ենք հետևյալ արդյունքը՝ տուժող Ն.Դ-ի ցուցմունքների վերլուծությունը համաձայն «Իրականության մոնիթորինգի չափանիշների» մեթոդի թույլ է տալիս եզրակացնել, որ

փորձաքննվողի կողմից տրված քրեական կարևոր իրավիճակի մասին տեղեկատվությունը 88,88%-ով չի համապատասխանում հոգեբանական հավաստիության ցուցանիշներին:

Այսպիսով՝ հանցագործությունների կանխարգելման և բացահայտման կազմակերպման ինտեգրված մոտեցումն ապահովվում է ոչ միայն կրիմինալիստիկայի մեթոդներով, այլ նաև դատահոգեբանության մեջ մշակված և կիրառվող մեթոդների, հնարքների և գործիքների այս գործունեության մեջ ակտիվ ինտեգրման միջոցով:

Բանալի բառեր և բառակապակցություններ. դատահոգեբանական փորձաքննություն, կոմունիկատիվ իրավիճակ, վկայության հուսալիություն, համալիր մոտեցում:

ПРИМЕНЕНИЕ НОВЫХ ВИДОВ СУДЕБНО-ПСИХОЛОГИЧЕСКОЙ ЭКСПЕРТИЗЫ В АРМЕНИИ (СПЭ ИССЛЕДОВАНИЯ КОММУНИКАЦИОННОЙ СИТУАЦИИ)

ГАЯНЕ КАЗАРЯН

Ереванский государственный медицинский университет имени Мхитара Гераци,
кафедра медицинской психологии
кандидат психологических наук, доцент
ghazaryan.psy@gmail.com

АНАИТ ТЕР-СТЕПАНЯН

Ереванский государственный медицинский университет имени Мхитара Гераци,
кафедра медицинской психологии
кандидат психологических наук, доцент
anahitterstepanyan@gmail.com

Аннотация

В статье мы демонстрируем возможность выявления особенностей достоверности (недостоверности) информации, предоставленной участниками уголовного судопроизводства посредством видеозаписей при проведении судебно-психологической экспертизы, и актуальности проведения этого нового вида судебно-психиатрической экспертизы в Республике Армения.

При проведении судебно-психологической экспертизы судебный психолог вправе использовать научно-обоснованные методы психологического исследования в пределах своей профессиональной компетенции. Одним из таких методов является метод научного наблюдения, разработанный в 20-х годах XX века М. Я. Басовым и усовершенствованный в начале XXI века. С течением времени в этой области используется все больше технических средств, позволяющих вести наблюдение опосредованно, сначала в виде киноплёнки, с помощью фотографии, а позднее и с помощью видеозаписи. Многолетние исследования учеными разных стран в применении метода наблюдения позволили психологам разработать экспертный метод исследования - психологический анализ достоверности сведений, предоставляемых участниками уголовного судопроизводства по признакам достоверности/недостоверности показаний. Критерии психологической экспертизы, представленные в методике Енгальчева В.Ф., Кравцовой Г.К. и Холоповой Е.Н., позволяют значительно повысить эффективность диагностики психологической деятельности, поведения (в том числе речевого поведения) лица в юридически значимой ситуации (изображенной на видеозаписи следственных действий или оперативно-розыскных мероприятий) при проведении судебно-психиатрической экспертизы.

Проведение судебно-психологической экспертизы коммуникативной ситуации в Республике Армения имеет все правовые, организационные и экспертные условия. Приведем пример экспертизы с применением данного метода, проведенной нами на кафедре медицинской психологии ЕГМУ им.М.Гераци. Судебно-психологическая работа с видеозаписью велась в три этапа: начальный, текстовый и посттекстовый. В процессе психологической экспертизы использовались следующие методы: экспертно-психологический анализ материалов уголовного дела, наблюдение, сопоставление, методы визуальной психодиагностики, психолингвистический анализ показаний по В.П. Белянину, основанный на 10 критериях недостоверности высказывания/истинности сказанного, а также анализ показаний по методике «Критерии мониторинга реальности (список Спорера)», качественный метод контент-анализа, «стоп-кадр», метод обобщения независимых характеристик, метод интерпретации экспертного исследования, синтез, формулирование выводов.

В результате применения методик мы получили следующий результат: согласно анализу показаний потерпевшей Н.Г. по методике «Критерии мониторинга реальности» (ясность, перцептивная информация, пространственная информация, временная информация, эмоции, способность реконструировать события на основе рассказа, реализм, когнитивные действия) информация о криминальной ситуации, предоставленная испытуемой, на 88,88% не соответствует показателям психологической достоверности.

Таким образом, комплексный подход к организации предупреждения и раскрытия преступлений обеспечивается за счет не только криминалистических методов, но и активной интеграции в эту деятельность методик, приемов и средств, которые разрабатываются и используются в судебной психологии. Поэтому развитие данного направления в СПЭ в Республике Армения является востребованным и перспективным.

Ключевые слова и словосочетания: судебно-психологическая экспертиза, коммуникативная ситуация, достоверность показаний, комплексный подход.

APPLICATION OF NEW TYPES OF FORENSIC-PSYCHOLOGICAL EXPERTISE IN ARMENIA (FPE COMMUNICATION SITUATION STUDY)

GAYANE GHAZARYAN

Yerevan State Medical University after Mkhitar Heratsi,
Department of Medical Psychology
PhD in Psychological Sciences, Associate Professor
ghazaryan.psy@gmail.com

ANAHIT TER-STEPANYAN

Yerevan State Medical University after Mkhitar Heratsi,
Department of Medical Psychology
PhD in Psychological Sciences, Associate Professor
anahitterstepanyan@gmail.com

Abstract

In the article, we present the possibility of identifying the features of the reliability (unreliability) of information provided by the participants in criminal proceedings through video recordings during the forensic psychological examination, and the relevance of this new type of forensic psychiatric examination in the Republic of Armenia.

When conducting a forensic psychological examination, a forensic psychologist has the right to use evidence-based methods of psychological research within the limits of his professional competence. One of these methods is the method of scientific observation, developed in the 20s of the 20th century by M. Ya. Basov and improved at the beginning of the 21st century. Over time, more and more technical means are being used in this area, which makes it possible to observe indirectly, first in the form of film, with the help of photography, and later with the help of video recording. Many years of research by scientists from different countries in the application of observation methods allowed psychologists to develop an expert research method - a psychological analysis of the reliability of the information provided by participants in criminal proceedings based on reliability/unreliability of testimony. Criteria for psychological examination, presented in the methodology of Engalychev V.F., Kravtsova G.K., and Kholopova E.N., can significantly increase the efficiency of diagnosing psychological activity, behavior (including speech behavior) of a person in a legally significant situation (depicted on a video recording of investigative actions or operational-search measures) during a forensic psychological examination.

Conducting a forensic psychological examination of the communicative situation in the Republic of Armenia has all the legal, organizational, and expert conditions. In the article, we discuss the example of an examination using this method, which we conducted at the Medical Psychology Department in Yerevan State Medical University after M. Heratsi. Work with video recording is carried out in three stages: initial, text, and post-text. The article also discusses the forensic psychological case and the results obtained. In the process of psychological examination, the following methods were used: Expert-psychological analysis of the materials of the criminal case, observation, comparison, visual psychodiagnostic methods, "Psycholinguistic Analysis of the Testimony according to V.P. Belyanin" method, based on 10 criteria for the unreliability of the statement/reliability of testimony, as well as the analysis of testimony according to the method "Reality Monitoring Criteria (Sporer's List)", qualitative method of content analysis, stop-shot method, method of generalization of independent characteristics, method of interpretation of expert research, synthesis, formulation of conclusions.

By applying all the methods, we obtained the following result: according to the analysis of victim N.G.'s testimony and according to the "Reality Monitoring Criteria" method (clarity, perceptual information, spatial information, temporal information, emotions, the ability to reconstruct events based on a story, realism, cognitive actions), information about a criminal situation provided by subject by 88.88% does not correspond to indicators of psychological reliability.

Thus, an integrated approach to organizing the prevention and detection of crimes is ensured through not only forensic methods but also integrated into this activity of methods, techniques, and tools that are developed and used in forensic psychology. Therefore, the development of this direction in forensic psychological examination in the Republic of Armenia is in demand and promising.

Keywords and phrases: forensic psychological examination, communicative situation, reliability of testimony, integrated approach.

Ներածություն

Դատահոգեբանական փորձաքննության անցկացման և եզրակացություն կազմելու ժամանակ դատահոգեբան փորձագետը իր մասնագիտական իրավասության շրջանակներում կարող է կիրառել հոգեբանական հետազոտության՝ գիտականորեն հիմնավորված մեթոդներ: Հիմնավորվածությունն այստեղ հասկացվում է որպես գիտական աղբյուրների վրա հիմնված և պրակտիկայում փորձարկված և ոչ վերջնականապես ավարտված, քանի որ գիտական ուսումնասիրության մեթոդներից ոչ մեկը կատարելագործման սահմաններ չունի:

Այդ մեթոդներից մեկը գիտական դիտարկման մեթոդն է, որը մշակվել է 20-րդ դարի 20-ական թվականներին Մ.Յա.Բասովի կողմից և կատարելագործվել 20-րդ դարի և 21-րդ դարերի սկզբի ընթացքում: Ժամանակի ընթացքում այս ոլորտում ավելի ու ավելի են կիրառվում տեխնիկական միջոցները, որոնք թույլ են տալիս դիտարկումն իրականացնել անուղղակի սկզբում որպես ֆիլմի և լուսանկարչության օգնությամբ, իսկ ավելի ուշ՝ տեսանկարահանման միջոցով: Իրավաբանական հոգեբանության մեջ քաղաքական առաջնորդների հոգեբանական վերլուծության ինքնատիպ փորձը ֆիլմերի և նրանց վարքագծի լուսանկարչության վերլուծության մեջ ձեռք է բերվել Ա. Ռ. Ռատինովի և Մ. Մ. Կոչենովի կողմից [13]:

Տարբեր երկրների գիտնականների կողմից բազմամյա հետազոտությունները և դիտարկման մեթոդի կիրառումը թույլ են տվել հայրենական հոգեբաններին մշակել մասնավոր փորձագիտական մեթոդիկա՝ քրեական դատավարության մասնակիցների կողմից հաղորդված տեղեկատվության հավաստիության և անհավաստիության նշանների հոգեբանական վերլուծություն [8]:

Փաստորեն, խոսքը դատահոգեբանական փորձաքննության նոր ուղղության մասին է՝ ինչպես միատարր, այնպես էլ մի շարք համալիր քննությունների բաղկացուցիչ մաս: Նոր ուղղությունների, դատահոգեբանական փորձաքննության նոր տեսակների ձևավորումը գնում է այն ճանապարհով, երբ միայն իրական փորձագիտական գործունեության էմպիրիկ փորձի աստիճանական կուտակումն ու ընդհանրացումը հնարավորություն է տալիս ստեղծել դրա համապատասխան գիտական և մեթոդական ապահովումը, համապատասխան փորձագիտական հոգեբանական գործիքները [10]: Բացի այդ՝ հոգեբանության բոլոր մեթոդները բաժանվում են խիստ ֆորմալացված (թեստեր, հարցաթերթիկներ, պրոյեկտիվ մեթոդներ) և պակաս ֆորմալացված (զրույց, դիտարկում, քրեական գործի նյութերի հոգեբանական վերլուծություն և այլն) [9]:

Եվ եթե դրանցից առաջինն, իրոք, պետք է բավարարի հոգեմետրիկ պահանջներին (վալիդության, հուսալիության, անցկացման կարգի ստանդարտացման, թեստավորման նորմերին), ապա այդ պահանջները չեն տարածվում երկրորդի վրա: Պակաս ֆորմալացված մեթոդները առանձնահատուկ նշանակություն ունեն դատահոգեբանական փորձաքննության համար, քանի որ, ի տարբերություն թեստերի և հարցաշարերի, որոնք ստատիկ կերպով գրանցում են սուբյեկտների անհատական բնութագրերը՝ անկախ քննչական գործողություններից, դրանք թույլ են տալիս գնահատել անձի վիճակի դինամիկական անմիջապես քննչական գործողության ընթացքում, ինչը տալիս է անգնահատելի տեղեկատվություն քննիչի և դատավորի համար:

Արդիականություն

Նշենք, որ կոմունիկատիվ իրավիճակի ուսումնասիրության դատահոգեբանական փորձաքննության նոր տեսակի կիրառումը Հայաստանում (ԴՀՓ), այլ կերպ ասած, դատահոգեբանական փորձաքննության մեջ քրեական դատավարության մասնակիցների կողմից տեսագրությունների միջոցով հաղորդված տեղեկատվության հավաստիության (անհավաստիության) հատկանիշների բացահայտումն ունի իրավական, կազմակերպչական և փորձաքննչական բոլոր պայմանները: Մասնավորապես ՀՀ օրենսդրությունը, հատկապես ՀՀ ՔԴՕ 29 հոդված «Քրեական գործի ընթացքի արձանագրման պարտադիր լինելը» 1-ին կետում ասվում է. «Դատավարական գործողությունների իրականացման ընթացքը և արդյունքները պետք է արտացոլվեն արձանագրություններում և այլ գրավոր փաստաթղթերում, ինչպես նաև՝ որպես բաղկացուցիչ մաս դրանց կցվող լուսանկարչական նեգատիվներում ու նկարներում, դիապոզիտիվներում, ֆոնոգրամներում, տեսաժապավեններում, կինոժապավեններում, պլաններում, սխեմաներում, գծանկարներում, էլեկտրոնային փաստաթղթերում» [9]: Սա ոչ թե թույլ է տալիս, այլ ուղղակի

պարտադրում է տեսագրությունները օգտագործել քննչական գործողությունների իրականացման և օպերատիվ-որոնողական միջոցառումների ժամանակ, ինչը փաստացի արդեն արվում է: Ավելին, օպերատիվ աշխատանքի փուլերում և մինչ քննչական ստուգումների ընթացքում մասնագետ-հոգեբանները վաղուց ներգրավված են հոգեբանական գնահատման և ցուցմունքների և ողջ հեղինակավարության իրադրությանը, որոնք կազմում են կոնկրետ գործի բովանդակությունը: Անհրաժեշտ է իրավական դաշտ ներմուծել ԴՀՓ անցկացումը ցուցմունքների հավաստիության և ոչ հավաստիության հոգեբանական հատկանիշների բացահայտման մեթոդները, ինչը կարող է էականորեն բարձրացնել հանցագործությունների բացահայտումը: Սոցիալական պահանջը և՛ հետաքննության, և՛ պաշտպանության, և՛ դատական մարմինների կողմից արդեն ձևակերպված է: Հատկանշական է այն, որ մեր կողմից հարցման ենթարկված պրակտիկ փաստաբանները հայտնում են, որ չեն տեսնում մասնագետ-հոգեբանների և փորձագետ-հոգեբանների մասնագիտական կոմպետենտության սահմաններն անցնելու վտազն այդ հարցում, քանի որ հոգեբանները բացահայտում և համակարգում են ցուցմունքների հավաստիության և ոչ հավաստիության հատկանիշները իրենց մասնագիտության շրջանակներում, իսկ որոշումը դրանց ճշգրտության կամ կեղծիքի վերաբերյալ, միևնույն է, իրականացնում են նրանք, ովքեր ունեն համապատասխան իրավասություն՝ քննիչները և դատավորը [6]:

Այսպիսով՝ հանցագործությունների կանխման և բացահայտման համալիր մոտեցման կազմակերպումը ապահովվում է ոչ միայն քրեագիտական մեթոդների օգնությամբ, այլև այդ գործընթացում դատահոգեբանության ոլորտում մշակվող և օգտագործվող մեթոդիկաների, հնարքների և միջոցների ակտիվ ներդրման ճանապարհով: Այդ իսկ պատճառով Հայաստանի Հանրապետությունում ԴՀՓ տվյալ ուղղությունը համարվում է պահանջված և հեռանկարանային:

Դեռևս XX դ-ի 20-ական թ-ին Ա. Ռ. Լուրիան նշում էր, որ թեպետ ընդունված է մտածել, որ չկա ոչինչ առավել պատահական, քմահաճ և ոչ մի օրենքին չենթարկվող, քան սուտը, սակայն այդ պատկերացումը ստույգ չէ: «Սուտը, ինչպես յուրաքանչյուր մտածողություն, կառուցված է այլ հատկանիշներից, ունի իր տեսակները, իր կանոնները, իր օրինակները: Մարդը, որը ստում է, միշտ դիմում է մտածողության և տրամաբանության որոշակի ձևի: Դրանք բացահայտելը քայլ առաջ է դեպի ճշմարիտը ստից տարբերելու ճանապարհը, իսկ դա նոր, հրաշալի հնարքների հնարավորություն է քննչական գործում» [6]:

Կեղծիքի հատկանիշների բացահայտման հետաքրքիր մոտեցում է ցուցաբերում Լ.Բ.Ֆիլոնովը, որը առանձնացնում է մի քանի հատկանիշ՝ որոշակի թեմաներից խուսափում, թեմայից շեղում, խոսակցության առարկայի փոխարինում, ձևական պատրվակների կիրառում, ստանդարտ արտահայտությունների օգտագործում, խոսակցության ուղղակի խուսափում, ինքնամփոփություն, կամայական արտահայտվող հեզնանք, բացասական արտահայտություններ, սարկազմ, անցում վերացական պատմության, որոշակի գրավվածություն թեմայով, թեմայի դետալների չափազանց մանրամասնում, կրկնվում է և անընդհատ վերադառնում է նախկինում ասվածին, հաճախակի վերահարցնում է, խնդրում է կրկնել հարցը, ճշգրտում է: Լ.Բ.Ֆիլոնովը նշում է, որ կեղծ ցուցմունքներ տվող փորձաքննվողի վարքում դիտվում են պաշտպանական խոչընդոտների հետևյալ տիպերը.

1. Իմաստային խոչընդոտը արտահայտվում է նրանով, որ մարդն ընտրողաբար անընկալունակ է դառնում որոշ բառեր-գրգռիչների հանդեպ: Փորձաքննվողը չի հասկանում կամ չի ցանկանում հասկանալ, թե ինչ հարցով են իրեն դիմում: Հնարավոր է, որ մարդ չի խուսափում պատասխանից, բայց պատասխանում է այնպես, կարծես հարցն իր համար անհասկանալի է, և արդյունքում իր պատասխանները չեն համապատասխանում հարցի բովանդակությանը, ընդ որում՝ դա վերաբերում է միայն որոշակի (սուբյեկտի կողմից կոծկվող) հանգամանքներին:

2. Վերահսկող խոչընդոտը դիտվում է, երբ փորձաքննվողը անընդհատ արգելափակում է արտահայտությունների կամ առանձին բառերի արտասանումը, դիտվում է ուղղակի ձևակերպումների արտահայտման վախ: Ավելին, փորձաքննվողը փորձում է անցնել վերացական թեմաների՝ օգտագործելով իր օգտին փաստարկներ ուրիշների կյանքի օրինակներով՝ հիշելով «դատական սխալների», անմեղ դատվածների մասին:

3. Տակտիկական խոչընդոտ՝ պաշտպանության ձև կանխավ պատրաստված արտահայտությունների, «կենցաղային իմաստությունների» միջոցով, որոնք ուղղված են սեփական գործողությունների չեզոքացմանը կամ արդարացմանը: Փորձաքննվողը չի խուսափում պատժելի արարքի մասին խոսելուց, սակայն կիրառում է նախապես մտածված արտահայտություններ. «Չստող մարդ չկա», «Բոլորը ձգտում են գեղեցիկ ապրել», որոնք օգնում են չեզոքացնել խղճի խայթը կամ արդարացնել սեփական վարքագիծը:

Հարկավոր է նշել, որ պաշտպանական խոչընդոտների ժամանակ մեղադրյալի (գիտակցորեն ստողի) վարքը կարող է ուղեկցվել մի շարք արտաքին դրսևորումներով՝ ուսապարանոցային գոտու լարվածությամբ, հանգստացնող ժեստերի կիրառմամբ, հատկապես ինքնադապտերներով [5]:

Ռուսական փորձաքննական պրակտիկայում արդեն իրականացվում են վկաների ցուցմունքների դատական փորձաքննություններ՝ ուղղված հավաստիության և ոչ հավաստիության հոգեբանական հատկանիշների բացահայտմանը: Այսպես, Վ.Ֆ. Ենգալիչևը, Գ.Կ. Կրավցովան և Ե.Ն. Խլոպովան իրենց մենագրությունում նկարագրում են վկաների ցուցմունքների ստույգ լինելու մեթոդիկայի վերլուծության մեթոդաբանական հիմնավորումներ, որը իրականացվում է քննչական գործողությունների և օպերատիվ-որոնողական միջոցառումների տեսագրության միջոցով՝ առաջարկելով օգտագործել ցուցմունքների բովանդակության առանձնահատկությունների վերլուծությունը, փորձարկվողի վարքը և հուզական դրսևորումները, նրա անհատական հոգեբանական առանձնահատկությունները: Այս մոտեցումը աստիճանաբար կիրառվում է փորձաքննական պրակտիկայի տարբեր ոլորտներում [7]:

Վերը նկարագրված փորձաքննական մեթոդիկայի հիմքն է հանդիսանում ցուցմունքների վերբալ և ոչ վերբալ բաղադրիչների վերլուծությունը, որում մեթոդաբանական միջոցների կենտրոնում է «Պնդումների վալիդության գնահատումը»: Վկաների ցուցմունքների նմանատիպ փորձաքննական հետազոտություններ տեսագրության հիման վրա իրականացվում են նաև գերմանալեզու երկրներում (Գերմանիա, Ավստրիա, Շվեյցարիա, այժմ նաև՝ Հայաստան):

Վ.Ֆ. Ենգալիչևի, Գ.Կ. Կրավցովայի և Ե.Ն. Խլոպովայի մեթոդիկայում ներկայացված հոգեբանական փորձաքննության չափանիշները թույլ են տալիս էականորեն բարձրացնել հոգեբանական գործունեության, վարքի (այդ թվում նաև վերբալ վարքի) իրավաբանորեն նշանակալի իրադրությունում գտնվող անձի (քննչական գործունեության կամ օպերատիվ-որոնողական միջոցառումների տեսագրությունում պատկերված) ախտորոշման արդյունավետությունը դատահոգեբանական փորձաքննության անցկացման ընթացքում:

Նպատակ

Մեր հոդվածում մենք ներկայացնում ենք կոմունիկատիվ իրավիճակի ուսումնասիրության ԴՀՓ, այլ կերպ ասած դատահոգեբանական փորձաքննության մեջ քրեական դատավարության մասնակիցների կողմից տեսագրությունների միջոցով հաղորդված տեղեկատվության հավաստիության (անհավաստիության) հատկանիշների բացահայտման հնարավորությունը և այս դատահոգեբանական նոր տեսակի փորձաքննության անցկացման արդիականությունը ՀՀ-ում:

Մեթոդի նկարագրություն

Տեսաձայնագրության հետ աշխատանքը ընթացել է երեք փուլով՝ նախնական, տեքստային և հետտեքստային:

Նախնական փուլում կատարվել է տեսաձայնագրության նախնական դիտում, ունկնդրում և ֆրագմենտների բաժանում: Ուսումնասիրվել է տեսաձայնագրության վիզուալ և աուդիալ վերլուծություն, քննչական գործողության մասնակիցների փոխազդեցության վերլուծություն:

Տեքստային փուլում իրականացվել է տեսաձայնագրության գործիքային վերլուծություն, տեսաձայնագրության բազմակի դիտումների միջոցով, որի ժամանակ առանձնացվել են մասնակիցների արտահայտությունները/ռեպլիկները, վարքը, հուզական հակազդումները:

Հետտեքստային փուլում իրականացվել է տեսաձայնագրության համալիր հոգեբանական վերլուծություն, հարցաքննվողի հոգեհուզական վիճակի փոփոխությունների, ինչպես նաև՝ նրանից եկող տեղեկատվության հավաստիության աստիճանի մասին վկայող հոգեբանական

հատկանիշների բացահայտման նպատակով: Այս փուլում իրականացվել է հարցաքննվողի խոսքի և վարքի գնահատում, ինչպես նաև՝ ասվածի բովանդակության ինֆորմատիվ-իմաստային վերլուծություն՝ հաշվի առնելով դրանց ուղեկցող ոչ վերբալ արտահայտչամիջոցները:

Հոգեբանական փորձագիտական վերլուծության գործընթացում կիրառված մեթոդները և մեթոդիկաները.

- քրեական գործի նյութերի փորձագիտական հոգեբանական վերլուծություն,
- դիտարկում, համեմատություն,
- տեսողական հոգեախտորոշման մեթոդներ,
- ցուցմունքների հոգեվեգվաբանական վերլուծություն՝ ըստ Վ.Պ.Բեյլանինի,
- իրականության մոնիթորինգի չափանիշների մեթոդ (Սպորերի ցուցակ),
- «ստոպ-կադր» մեթոդ,
- կոնտենտ վերլուծության որակական մեթոդ,
- անկախ բնութագրերի ընդհանրացման մեթոդ,
- փորձագիտական հետազոտության մեկնաբանման մեթոդ,
- սինթեզ, եզրակացությունների ձևակերպում:

Դատական հոգեբանական դեպքի և ստացված արդյունքների քննարկում

Տեսաձայնագրության ընդհանուր տևողությունը՝ 12 րոպե 23 վայրկյան: Տեսաձայնագրության մեջ ձայնագրված է փորձաքննվողի և մեղադրյալի առերես հարցաքննությունը:

Սենյակում, որտեղ իրականացվել է տեսաձայնագրությունը, ներկա են՝ փորձաքննվողը՝ Ն.Ղ (ենթադրյալ տուժողը), մեղադրյալը՝ Ն.Ս., և քննիչը: Տեսախցիկը տեղադրված է 1,5–2 մետր հեռավորության վրա, փորձաքննվող Ն.Ղ-ն նստած է սեղանի մոտ՝ աթոռին, աջ կողմով դեպի տեսախցիկը: Տեսանկարը գունավոր է, պարզ, լուսավորությունը բավարար է, մարմնի վերին հատվածը՝ դիրքը, ձեռքերը տեսանելի են, սակայն դեմքը ամբողջությամբ չի երևում: Տեսաձայնագրության աուդյալ բնութագիրը նորմալ է, կայուն, լսելի են հստակ բոլորի ձայները:

Տեսաձայնագրության վերլուծության ընթացքում Ն.Ղ-ի մոտ ընկալման, հիշողության խնդիրներ չեն նկատվում, կարողանում է կողմնորոշվել ժամանակի և տարածության մեջ: Ընդհանուր առմամբ դուրս են բերվել Ն.Ղ-ի հետևյալ հուզական վիճակի և վարքային առանձնահատկությունները՝

- ներփակված է.
- ցուցաբերում է շփման պասիվ ձևը.
- տրամադրության հուզական ֆոնը զգոն-ընկճված է.
- ցուցաբերում է վարքի բարձր ինքնավերահսկողություն.
- ընդհանուր ռիզիկոսություն, ինչը բնորոշ չէ իր անձնային առանձնահատկություններին.
- բազմաթիվ ժեստեր-ինքնադապտերներ՝ կաչում է քթին, բերանին.
- միմիկաների աղքատություն.
- հակված չէ ինքնուրույն շարունակել շարադրանքը, կարիք ունի հուշող հարցերի.
- ցածր խոսքային ակտիվություն.
- խոսքը տրամաբանորեն պարզեցված է առանց հուզականության.
- պատասխանները կարճ են.
- ձայնի տոնը հիմնականում հարթ է, երբեմն ձայնի տոնը բարձրանում է.
- խոսքի ռիթմը կայուն է, դանդաղ:

Ամփոփելով նախնական և տեքստային փուլերի արդյունքները՝ կարող ենք ասել, որ անչափահաս փորձաքննվող Ն.Ղ-ի հարցաքննության ընթացքում զգում է շփթվածություն, տազնապ, ընկճվածություն, վարքի ռիզիկոսություն, հարցաքննությանը մասնակցելու ցանկության բացակայություն, հիմնականում մարմնի փակ դիրք (ինքն իրեն թաքցնելու միտում), որոնք վկայում են հոգեբանական սթրեսի մասին:

Իրականացվել է փորձաքննվողի **Ցուցմունքների հոգեվեգվաբանական վերլուծություն՝ ըստ Վ.Պ.Բեյլանինի**, հայտարարության/ասվածի ճշմարտացիության և կեղծիքի 10 չափանիշների հիման վրա: Հիմնական չափանիշները ենթադրում են պատմածի հետևողականություն,

տրամաբանություն, մանրամասների առկայություն, մոդալություն, դինամիկա, խոսքային արդյունքի ծավալ և տեմպ, մարմնի դիրք, վրիպակներ, տեսողական կոնտակտ, ընկալման աղբյուրը նկարագրող լեկսիկա: Համաձայն Վ.Պ.Բելյանինի կողմից մշակված Ցուցմունքների հոգեբանական վերլուծության արդյունքների՝ փորձաքննվող Ն.Ղ-ի հարցաքննության ընթացքում տված ցուցմունքները 80%-ով չեն համապատասխանում հայտարարության ճշմարտացիության հոգեբանական չափանիշներին, քանի որ հաղորդվող տեղեկատվության հաջորդականությունը, տրամաբանությունը խախտված են, դեպքի վերաբերյալ մանրամասները բացակայում են, դիտվում է տեղեկատվության դետալների փոփոխություններ, հակասություններ, խոսքը աղքատ է, նկարագրերը, մանրամասները բացակայում են, մարմնի դիրքը լարված է, կաշկանդված, ձեռքերը լարված են, մի ձեռքով փակում է բերանը, մյուսը պինդ սեղմած է կրծքին, հաճախ ձեռք է տալիս քթին, շուրթերին, տեսողական կոնտակտ չի պահում, հիմնականում աչքերը ներքև են նայում, խոսքում կինեսթետիկ ընկալման ոչ մի հիմնավորում չի ներկայացնում:

Դրա մասին է վկայում նաև տուժող Ն.Ղ-ի ցուցմունքների վերլուծությունը համաձայն **«Իրականության մոնիթորինգի չափանիշների (Սպորերի ցուցակ)» մեթոդի**, որտեղ նույնպես հաստատվել են ստացված արդյունքները: Տուժող Ն.Ղ-ի ցուցմունքների վերլուծությունը, համաձայն «Իրականության մոնիթորինգի չափանիշների» մեթոդի, թույլ է տալիս եզրակացնել, որ փորձաքննվողի կողմից տրված քրեական կարևոր իրավիճակի մասին տեղեկատվությունը 88,88%-ով չի համապատասխանում հոգեբանական հավաստիության ցուցանիշներին: «Իրականության մոնիթորինգի չափանիշների (Սպորերի ցուցակ)» մեթոդը ներառում է 8 չափանիշ. պարզություն, պերցեպտիվ տեղեկատվություն, տարածական տեղեկատվություն, ժամանակային տեղեկատվություն, աֆեկտ/հուզականություն, պատմվածքի հիման վրա դեպքերի վերակառուցման հնարավորություն, ռեալիզմ, կոգնիտիվ գործողություններ:

Այսպիսով՝ փորձաքննությանը ներկայացված տեսաձայնագրության փորձագիտական հոգեբանական վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ տվյալ տեսաձայնագրության մեջ Ն.Ղ-ի հարցաքննության մեջ հայտնաբերվել են հատկանիշներ, որոնք չեն համապատասխանում հավաստիության հոգեբանական հատկանիշներին: Տեսաձայնագրության համալիր վերլուծության արդյունքները վկայում են Ն.Ղ-ին բարձր հոգեհուզական լարվածության վիճակի, խոսքային և վարքային վերահսկողության, ցուցմունքների ինֆորմատիվ-հմաստային աղքատության, պատմվածքի սխեմատիկության, վարքային ռիզիկոյության, հուզական ապրումների աղքատության մասին: Վերոնշյալ հատկանիշները մատնանշում են Ն.Ղ-ի կողմից իրականության աղավաղման կամ տեղեկատվության քողարկման մասին:

Ամփոփում

Այսպիսով՝ հանցագործությունների կանխարգելման և բացահայտման կազմակերպման ինտեգրված մոտեցումն ապահովվում է ոչ միայն կրիմինալիստիկայի մեթոդներով, այլ նաև դատահոգեբանության մեջ մշակված և կիրառվող մեթոդների, հնարքների և գործիքների այս գործունեության մեջ ակտիվ ինտեգրման միջոցով, ուստի Հայաստանի Հանրապետությունում այս ուղղության զարգացումը դատահոգեբանական փորձաքննության մեջ պահանջված է և հեռանկարային:

Գրականության ցանկ

1. Վ.Ֆ. Ենգալիչև, Գ.Հ. Ղազարյան, Քրեական վարույթի մասնակիցների կողմից հաղորդվող տեղեկությունների հավաստիության/ անհավաստիության հոգեբանական ախտանիշների բացահայտման դատա-հոգեբանական փորձաքննության զարգացման հեռանկանրները ՀՀ-ում: Արդի հոգեբանություն գիտական հանդես, «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» VI միջազգային գիտաժողովի նյութեր, էջ 72-76, Երևան 2017:
2. Վ.Ֆ. Ենգալիչև, Գ.Հ. Ղազարյան, Դատական հոգեբանական փորձաքննության պրակտիկում: Ոստանա-մեթոդական ձեռնարկ - Եր.: ՀՀ ԱՆ ԱԱԻ, 2018 – 297 էջ:
3. Վ.Ֆ. Ենգալիչև, Գ.Հ. Ղազարյան, Քրեական վարույթի մասնակիցների կողմից հաղորդվող տեղեկությունների հավաստիության/ անհավաստիության հոգեբանական ախտանիշների բացահայտման դատա-հոգեբանական փորձաքննության զարգացման հեռանկանրները ՀՀ-ում: Արդի հոգեբանություն գիտական հանդես, «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» VI միջազգային գիտաժողովի նյութեր, էջ 72-76, Երևան 2017:
4. Багмет А.М., Гусев А.Н., Енгальчев В.Ф., Кравцова Г.К., Седин В.И., Холопова Е.Н. Методика исследования коммуникативного поведения с целью выявления психологических признаков искажения сообщаемой информации (по видеозаписям процессуальных и иных действий): научно-практическое пособие. М.: Московская академия СК России, ФГБУ ГНЦ ФМБЦ им. А. И. Бурназяна ФМБА России, 2018. 192 с.
5. Енгальчев В.Ф., Кравцова Г.К., Холопова Е.Н. Судебная психологическая экспертиза по выявлению признаков достоверности/недостоверности информации, сообщаемой участниками уголовного судопроизводства (по видеозаписям следственных действий и оперативно-разыскных мероприятий): монография. – М.: Юрлитинформ, 2016. – 328 с.
6. Казарян Г. А. О перспективах развития судебно-психологической экспертизы в Республике Армения по выявлению психологических признаков достоверности/недостоверности информации, сообщаемой участниками уголовного судопроизводства. Судебно-психологическая экспертиза и комплексные судебные исследования видеозаписей: Сб. научных статей. -М.: РГПУ, 2017, Стр. 21-24.
7. Лурия А. Р. Экспериментальная психология в судебно-следственном деле // Советское право. 1927. № 2 (26). С. 84–100.
8. Методика выявления психологических признаков достоверности/недостоверности информации, сообщаемой участниками уголовного судопроизводства (по видеозаписям следственных действий и оперативно-разыскных мероприятий): научно-практическое пособие / А.М. Багмет, А.Н. Гусев, В.Ф. Енгальчев, Г.К. Кравцова, В.И. Седин, Е.Н. Холопова. – М.: ФГБУ ГНЦ ФМБЦ им. А.И. Бурназяна ФМБА России, Академия СК России, 2017. – 130 с.
9. Психологическая диагностика: Учебное пособие. / Под редакцией М. К. Акимовой — СПб.: Питер, 2005. — 304 с.
10. Ситковская О. Д., Коньшева Л. П., Коченов М. М. Новые направления судебно-психологической экспертизы. Справочное пособие. М.:Юрлитинформ, 2000
11. Штерн В. Изучение свидетельских показаний / пер. с нем. 1902. 72 с.
12. Официальный интернет-портал правовой информации <http://www.arlis.am/>.
13. Engalytchev V. F. The Uses and Abuses of Profiling of Major Political Figures in the Soviet Union // First joint APLS-EAPL international conference «Psychology and Law». Dublin, Ireland, 1999. P. 23

**ԵՐԵՔ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՈԳԵԹԵՐԱՊԵՎՏԻԿ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՍԱՀՄԱՆԱՓՎԱԿՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՆՍՑԵՆԴԵՆՏԱԼ
ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԻ ՎՐԱ**

ԳՈՌ ԵՍԱՅԱՆ

«Հ գիտությունների ազգային ակադեմիա
գիտակրթական միջազգային կենտրոն
հոգեբանության ամբիոն, դասախոս
հոգեբանական գիտությունների թեկնածու
g.s.yesayan@mail.ru

Համառոտագիր

Աշխատանքում տրանսցենդենտալ հոգեբանության տեսա-մեթոդաբանական հիմքի վրա վերլուծության են ենթարկվում հոգեթերապիայի երեք խոշոր ուղղությունները. հոգեդինամիկ, կոգնիտիվ-վարքային և հումանիտար-էքզիստենցիալ:

Տրանսցենդենտալ հոգեբանությանը ծանոթանում ենք հայազգի գիտնական Արշակ Իսրայելի Միրաքյանի աշխատանքներում (1960-ական թվականներից սկսած). նա այդ մոտեցման հիմնադիրն էր: Նրա աշխատանքները հիմնականում նվիրված էին մեկ խնդրի՝ ընկալման ֆենոմենին: Երկարատև հետազոտությունների արդյունքում Ա.Ի. Միրաքյանը կանգնում է փակուղու առջև, քանի որ այլևս հնարավոր չէր բացատրել ծագած խնդիրներն՝ ընկալման ավանդական մոտեցումներից ելնելով: Առաջ եկած խնդիրները հաղթահարելու համար Ա.Ի. Միրաքյանը հանձն է առնում ուսումնասիրել առկա ընկալման տեսությունները, ինչը բերում է անկանխատեսելի արդյունքների. հեղինակը բացահայտում է, որ ընկալման ավանդական ուղղություններին հատուկ է ֆենոմենոլոգիական (արգասիքային) մոտեցումը: Ֆենոմենոլոգիական (արգասիքային) մոտեցում ասելով՝ Ա.Ի. Միրաքյանը նկատի ուներ այն փաստը, որ բոլոր այդ տեսությունները, ընկալման գործընթացը բացատրելիս, իբրև ելակետային տվյալներ վերցնում էին արդեն արտացոլվածը՝ գույն, համ, հոտ և այլն, սակայն նման մոտեցումը սահմանափակ է, քանի որ արդյունքում՝ արտացոլվածում, գործընթացն արդեն ավարտված է:

Այս բացահայտումն ինչքան էլ արժեքավոր էր ընկալման գործընթացի ուսումնասիրման սահմանափակումները հասկանալու համար, այնքան էլ նոր խնդիրներ էր ստեղծում հետազոտման գործում, մասնավորապես, եթե արդեն արտացոլվածից ուսումնասիրությունները թույլ չէին տալիս բացահայտել արտացոլող (ստեղծող) գործընթացի հիմնարար սկզբունքները և օրինաչափությունները, ապա ինչպիսի ելակետային տվյալներ վերցնել, որպեսզի շրջանցենք այդ սահմանափակումները: Առաջադրված հարցը հեշտ լուծելի խնդիրներից չէր. չէ՞ որ պատմության ընթացքում ընկալման գործընթացն ուսումնասիրվել էր՝ ընկալման ֆենոմեններից ելնելով, և գիտնականների կողմից այլ ճանապարհներ չէին առաջարկվել:

Որպես ստեղծված իրավիճակի լուծում Ա.Ի. Միրաքյանն առաջարկեց հրաժարվել արտացոլվածը՝ որպես ելակետային տվյալներ վերցնելու պրակտիկայից և դրանք փոխարինել բնության հիմնարար սկզբունքներով և օրինաչափություններով: Այս մոտեցումը բխում էր այն պատկերացումներից, որ հոգեկանը ծագել է (ստեղծվել է) մատերիայի (բնության) զարգացման ինչ-որ փուլում և հետևաբար, իրենում (հոգեկանը) կրում է այդ հիմնարար ստեղծող սկզբունքները և օրինաչափությունները:

Այսպիսի մոտեցումը հուշում էր, որ պետք էր սկսել հետազոտել մատերիայի (բնության) հիմնարար սկզբունքները և օրինաչափությունները, որոնց շնորհիվ հնարավոր էր դարձել հոգեկանի (իսկ հետագայում նաև հոգեկանի տարբեր գործընթացների) ծագումը: Այս մոտեցումը թույլ տվեց ընկալման ստեղծող գործընթացի հիմքում տեսնել անիզոտրոպ հարաբերությունների ստեղծման սկզբունքը, ինչը հանդիսանում է բնության հիմնարար սկզբունքներից մեկը:

Տրանսցենդենտալ հոգեբանությունն այս կետում էր կանգնած, երբ Ռուբեն Միքայելի Նաղդյանը ձեռնարկեց այդ հայեցակարգի շրջանակների մեծացման գործը: Հարստացվեցին տեսական և մեթոդաբանական հասկացությունները, փորձ ձեռնարկվեց տրանսցենդենտալ հոգեբանության հասկացությունների միջոցով վերլուծելու և մեկնաբանելու ՆԼԾ մոտեցումները:

Առաջարկվող աշխատանքը կարելի է համարել տրանսցենդենտալ հոգեբանության մեթոդաբանության կիրառման սահմանները մեծացնելու փորձ այս անգամ հոգեթերապիայի մեթոդաբանության հիմնարար խնդիրները լուծելու գործում:

Բանալի բառեր և բառակապակցություններ. տրանսցենդենտալ հոգեբանություն, հոգեթերապիա, արգասիքային մոտեցում, մեթոդաբանություն:

АНАЛИЗ ОГРАНИЧЕНИЙ ТРЕХ ОСНОВНЫХ ПСИХОТЕРАПЕВТИЧЕСКИХ НАПРАВЛЕНИЙ НА ОСНОВЕ МЕТОДОЛОГИИ ТРАНСЦЕНДЕНТАЛЬНОЙ ПСИХОЛОГИИ

ГОР ЕСАЯН

Национальная академия наук Республики Армения
Международный научно-образовательный центр
кафедра психологии, преподаватель
кандидат психологических наук
g.s.yesayan@mail.ru

Аннотация

В работе с позиций методологии трансцендентальной психологии анализируются три основных направления психотерапии: психодинамическое, когнитивно-поведенческое, гуманитарно-экзистенциальное.

Трансцендентальная психология возникла из исследований армянского ученого Аршака Исраиловича Миракяна (начиная с 1960-х годов), который и стал основоположником вышеуказанного подхода. Его работы в основном были посвящены одной проблеме – исследованию закономерностей процесса психического отражения. В результате многолетних исследований А.И. Миракян обнаружил, что возникшие при этих исследованиях проблемы невозможно решить методами традиционной психологии восприятия.

Для преодоления концептуальных проблем А.И. Миракян проводит соответствующий анализ существующих (традиционных) теорий восприятия, который позволил ему сделать неожиданный вывод: в традиционных направлениях психологии восприятия для решения проблем психического отражения неизменно применялся феноменологический (продуктный) подход. Говоря о феноменологическом подходе, А.И. Миракян имел в виду тот факт, что все исследователи, при объяснении процесса восприятия в качестве исходных данных брали уже отраженные феномены восприятия: цвет, вкус, запах и т.д. Однако такой подход был тупиковым, так как в продукте восприятия (в феномене) процесс был уже завершен, и это обстоятельство не позволяло исследовать сам процесс отражения. Это открытие, каким бы ценным оно ни было для понимания ограниченности изучения процесса восприятия, создало новые проблемы в исследовании восприятия, в частности: если исследование уже отраженного феномена не позволяло выявить принципы и закономерности процесса отражения, то какие данные необходимо брать в качестве исходных, чтобы обойти это ограничение?

Вопрос оказался не из простых, так как на протяжении всей истории философии и психологии процесс восприятия изучался на основе феноменов восприятия и никакие другие пути исследования ученым не были известны. Для выхода из сложившейся ситуации А.И. Миракян предложил отказаться от практики применения продуктного подхода и заменил его исследованием фундаментальных принципов и закономерностей природы. В основе этого подхода лежало представление о том, что психика возникла на каком-то этапе развития материи (природы). Такой подход предполагал, что следует приступить к изучению тех основных принципов и закономерностей развития материи (природы), благодаря которым становится возможным зарождение психики. Это позволило выявить основной принцип процесса восприятия - принцип образования анизотропных отношений, являющийся одним из фундаментальных принципов природы.

Дальнейшее развитие трансцендентальной психологии было осуществлено Рубеном Михайловичем Нагдяном, который направил свои усилия на расширение границ этой концепции. Р.М. Нагдян не только выявил философские основы методологии трансцендентальной психологии, но и попытался провести анализ методологии нейро-лингвистического программирования (НЛП) в русле парадигмы трансцендентальной психологии. Концепция «четырех реальностей», разработанная Р.М. Нагдяном на основе методологии трансцендентальной психологии, позволила раскрыть сущность трансформаций, осуществляемых методами НЛП.

Предлагаемая работа может быть рассмотрена как попытка расширить границы применения методологии трансцендентальной психологии, на этот раз для решения фундаментальных проблем методологии различных направлений психотерапии.

Ключевые слова и словосочетания: трансцендентальная психология, психотерапия, продуктный подход, методология.

ANALYSIS OF RESTRICTIONS ON THREE MAIN PSYCHOTHERAPEUTICS BASED ON THE METHODOLOGY OF TRANSCENDENT PSYCHOLOGY

GOR YESAYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
International Scientific-Educational Center
Department of Psychology, Lecturer
PhD in Psychological Sciences
g.s.yesayan@mail.ru

Abstract

Three major directions of psychotherapy: psychodynamic, cognitive-behavioral, and humanitarian-existential, are analyzed in the current work on the theoretical-methodological basis of transcendental psychology.

We get acquainted with transcendental psychology in the works of Armenian scientist Arshak Mirakyan (Since the 1960s), who was the founder of the approach. His works were mainly devoted to one problem - the phenomenon of perception. As a result of long-term research, Mirakyan faced deadlock as the problems that arose could no longer be explained by traditional approaches to perception. To overcome the problems that have arisen, A.I. Mirakyan undertakes to study the existing theories of perception, which leads to unpredictable results: the author reveals that the phenomenological (productive) approach is typical of traditional directions of perception. By saying a phenomenological (productive) approach, A.I. Mirakyan meant in fact, that all these theories, while explaining the process of perception, supposedly took the already reflected data as starting points: color, taste, smell, etc. However, such an approach was limited because, in reflection, the process is already over.

How valuable this discovery was for understanding the limitations of studying the process of perception, it posed new problems for research, in particular: if the studies from the already reflected did not allow to reveal the basic principles of the reflective (creative) process and patterns, then what baseline data to take to circumvent those restrictions? The question was not an easy one to solve, because throughout history the process of perception has been studied based on the phenomena of perception and no other ways have been suggested by scientists.

As a solution to the current situation, A.I. Mirakyan suggested abandoning the practice of taking the reflected data, as a baseline and replacing them with the basic principles and patterns of nature. This approach stemmed from the notion, that the psyche originated (created) at some stage in the development of matter (nature) and consequently, in itself (the psyche) carries those fundamental principles and patterns.

This approach suggested, that it have started researching basic principles and patterns of matter (nature), by which the origin of the psyche (and later the various mental processes) became possible. This approach allowed us to see the principle of anisotropic relationships at the core of the perceptual creative process, which is one of the fundamental principles of nature.

Transcendental psychology was at this point when Ruben Mikaeli Naghdyan undertook to expand the scope of that concept. Theoretical-methodological concepts were enriched, an attempt was made to analyze and interpret NLP approaches through the concepts of transcendental psychology.

The proposed work can be considered an attempt to expand the scope of application of the methodology of transcendental psychology, this time in solving the basic problems of psychotherapy.

Keywords and phrases: transendent psychology, psychotherapy, productive approach, methodology.

Ներածություն

Անտիկ ժամանակներից սկսած՝ մարդկության ամենափայլուն ուղեղները ջանքեր չեն խնայել բացահայտելու հոգեկանի առեղծվածը: Հոգեկանին վերաբերող հարցերը մշտապես եղել են նրանց ուշադրության կենտրոնում. փորձել են հասկանալ դրա էությունը, տարբեր դրսևորումները և դրա վրա ազդելու մեխանիզմներն ու ուղիները: Հոգեկանի նկատմամբ այսպիսի հետաքրքրությունն ուղղակի չէր բխում մարդկային քմահաճությունից և այն իրեն ենթարկելու պարզ ցանկությունից, այլ դրա պատճառները հիմնավոր էին և երբեմն, նույնիսկ, կենսական: Հոգեկանի գործունեությունը լավ հասկանալու և անհրաժեշտության դեպքում այն շտկելու հրամայականն առավել հրատապ էր դառնում, երբ գործ ունեին հոգեկանի այս կամ այն շեղումների (հոգեբանական խնդիրների) հետ:

Եթե նախկինում, մինչ գիտական հոգեբանության կազմավորումը, հոգեբանական խնդիրների ծագման գործընթացի բացահայտման հարցով զբաղվում էին տարբեր ոլորտները ներկայացնող մասնագետներ, և այն չուներ պատասխանատու՝ ի դեմս որևէ գիտական դիսցիպլինի, ապա հոգեբանության առանձնացումից հետո (1879) այդ պատկերը փոխվեց. մի ամբողջ հոգեբանության ոլորտ (հոգեթերապիան) իր վրա վերցրեց պատասխանատվությունը և համակարգված ձևով սկսեց լծվել վերոնշյալ (և ոչ միայն) հարցերի պատասխանները գտնելու գործին:

Տեսական մաս

Հոգեթերապիայի՝ իբրև գիտական ճյուղի ձևավորումից անցել է ավելի քան հարյուր տարի և պետք է փաստել, որ չնայած գրանցված բազմաթիվ բացահայտումների և հաջողությունների, դեռ առկա են տարատեսակ հիմնարար խնդիրներ (տեսական, մեթոդաբանական, ինչին կանդրադառնանք մեր աշխատանքում), որոնց լուծումները նոր որակի և մակարդակի կբերեն այդ ոլորտը:

Ներկայումս հոգեթերապիայի վիճակը կարելի է բնութագրել տարբեր կերպ. **զարգացող՝** հաշվի առնելով հարյուրավոր հոգեթերապևտիկ դպրոցների և ուղղությունների առկայությունը **[6, էջ 9], [9, էջ 178], մեկուսացած՝** երբ խոսքը տարբեր հոգեթերապևտիկ դպրոցների միջև ակտիվ համագործակցությանն է վերաբերում, **խոցելի՝** ելնելով նրանից, որ թերապիայի դրական արդյունքը, որոշ դեպքերում, կախված է անձի առանձնահատկություններից, այլ ոչ թե տվյալ մոտեցման տեխնիկաների գործունակությունից, **ճգնաժամային՝** հարյուրավոր հոգեթերապևտիկ դպրոցների և ուղղությունների պարագայում, բացակայում է հոգեբանական խնդիրների ծագման սկզբունքները և օրինաչափությունները մեկնաբանող խորքային, հիմնարար մոտեցում, ինչն ընդունելի կլիներ հոգեթերապևտիկ հիմնական դպրոցների կողմից: Այդուհանդերձ, վերջինս կարելի է բնութագրել նաև որպես մեթոդաբանական ճգնաժամ, ինչի հիմնական պատճառը, մեր կարծիքով, պայմանավորված է արգասիքային (ֆենոմենոլոգիական) մոտեցում ցուցաբերելու հետ. երբ հոգեբանական խնդիրների առաջացման պատճառները բացահայտելու և մեկնաբանելու համար ելակետային տվյալներ են վերցվում հոգեբանական գործընթացների արդյունքում ստեղծված արգասիքները՝ ֆենոմենները (հասկացություններ, սխալ՝ ոչ ռացիոնալ մտածելակերպ ու վարք, նախկին տրավմատիկ փորձ և այլն): Այդուհանդերձ պետք է փաստել, որ նման (արգասիքային, ֆենոմենոլոգիական) մոտեցման միջոցով հնարավոր չէ բացահայտել հոգեբանական խնդիրների ծագման հիմնարար սկզբունքները և օրինաչափությունները, քանի որ արգասիքում (ֆենոմենում), ինչպես նշում էր Հ. Հեգելը, գործընթացն արդեն ավարտված է. դադարել է **[8, էջ 180]:**

Այս իրավիճակը կարելի է դիտարկել ավելի լայն համատեքստում և չսահմանափակվել միայն հոգեթերապիայով: Տեղին է նշել հայտնի մեթոդաբաններ Վ.Վ. Կոլլովի, Վ.Ա. Մազիլովի, Վ.Ֆ.

Պետրենկոյի քննադատական մոտեցումը ներկայիս հոգեբանության վիճակի վերաբերյալ. «Հոգեբանության նախկին մեթոդաբանությունից շատ քիչ բան է մնացել: Անհրաժեշտ են նոր մոտեցումներ, նոր գաղափարներ [12, էջ 3]:

Հոգեբաններից առաջին անգամ արգասիքային (ֆենոմենոլոգիական) մոտեցման սահմանափակումների մասին խոսել է հայազգի գիտնական Արշակ Իսրայելի Միրաքյանը, որը իր ամբողջ գիտական կարիերան նվիրեց ընկալման խնդրին: Ընկալման շուրջ կատարված հետազոտությունները 1960-ական թվականներին գիտնականին կանգնեցրին փակուղու առաջ. այլևս հնարավոր չէր բացատրել ընկալման որոշ հիմնարար երևույթներ (չֆիքսված օբյեկտի չափերի վերաբերյալ արդյունքները) [16, էջ 77] գոյություն ունեցող մոտեցումների միջոցով: Անհրաժեշտ էին նոր գաղափարներ, որոնք թույլ կտային հաղթահարել ստեղծված իրավիճակը: Սա էր պատճառը, որ գիտնականը հանձն առավ ընկալման նոր հայեցակարգի մշակման գործը:

Այն, ինչ բացահայտվեց Ա.Ի. Միրաքյանի ուսումնասիրությունների արդյունքում, ոչ այլ ինչ էր, եթե ոչ նոր, հեղափոխական մոտեցում: Առաջին հերթին՝ նա փաստեց, որ ոչ միայն ավանդական ընկալման տեսությունները, այլև այդ խնդրի վերաբերյալ փիլիսոփայական և ֆիզիոլոգիական տեսությունները դրսևորել են արգասիքային (ֆենոմենոլոգիական) մոտեցում [15]. փորձել են ընկալման ֆենոմենը հասկանալ՝ իր իսկ արդյունքներից (արտացոլվածից) ելնելով, ինչը հնարավոր չէր, քանի որ արդյունքում գործընթացն արդեն ավարտված էր: Երկրորդ՝ այս սահմանափակումը հաղթահարելու համար նա առաջարկում է ընկալման հետազոտման նոր հայեցակարգ, ինչն անվանվեց տրանսցենդենտալ հոգեբանություն, որում անհրաժեշտ էր հրաժարվել հին պրակտիկայից՝ արտացոլված արդյունքներն իբրև ելակետային տվյալներ չվերցնել, և դիմել բնության հիմնարար սկզբունքներին, որոնք պետք է ծառայեին իբրև ելակետային տվյալներ:

Արդյունքները երկար սպասել չտվին: Բացահայտվեց, որ տարբեր մոդալականությունների միջոցով հոգեկան արտացոլման գործընթացի իրականացման համար անհրաժեշտ է անիզոտրոպ հարաբերությունների ստեղծման սկզբունքը [14], ինչը հանդիսանում է բնության հիմնարար սկզբունքներից մեկը:

Հետագայում Ա.Ի. Միրաքյանի աշակերտների և հետևորդների կողմից (Ռ.Մ. Նաղդյան, Վ.Ի. Պանով) ձեռնարկվեցին տրանսցենդենտալ հոգեբանության շրջանակներում նոր հետազոտություններ [17], [18], ինչը թույլ տվեց այդ հայեցակարգի դրույթները և հասկացությունները դիտարկել հոգեբանության համար ունիվերսալ դիրքերից:

Այս աշխատանքը կարելի է համարել Ա.Ի. Միրաքյանի և նշված հեղինակների հետազոտությունների շարունակությունը և հարստացումը: Տրանսցենդենտալ հոգեբանության հասկացությունների շրջանակներում այս անգամ հետազոտման առարկա են դառնում ժամանակակից հոգեթերապևտիկ երեք խոշոր ուղղությունների տեսա-մեթոդաբանական հիմքերը, ինչը կատարվում է՝ պատմական զարգացման ընթացքը հաշվի առնելով:

Կոնկրետ մատնանշել, թե պատմության որ հատվածում ենք առաջին անգամ հանդիպում ժամանակակից հոգեթերապիայի նախադրյալներին, բավականին խրթին առաջադրանք կլինի և բազմաթիվ տարակարծությունների պատճառ կդառնա (քանի որ մարդկանց հոգեբանական օգնություն է մատուցվել վաղ ժամանակներից, չնայած նրան, որ այն կրել է այլ անվանումներ ու այն մատուցել են տարբեր «մասնագիտություններ» կրող անձինք), այդ իսկ պատճառով հոգեթերապիայի պատմությունը կսկսենք այն պահից, երբ 2. Ֆրեյդն առաջարկեց հոգեվերլուծական իր հայեցակարգը և սկիզբ դրեց հոգեթերապիայի՝ իբրև առանձին գիտական ոլորտի ձևավորմանը [6, էջ 12]:

Հոգեթերապիայի պատմության մեջ Զ. Ֆրեյդն էր, որն առաջին անգամ ներկայացրեց հոգեթերապիայի ամբողջական տեսություն, որում ներառված էին մեթոդաբանությունը, մեթոդները և տեխնիկաները, ինչը, մինչ օրս, թերևս ամենավերլուծվածն ու քննադատվածն է [9, էջ 177, 178]: Հոգեվերլուծական մոտեցումը սկիզբ դրեց պատմական ժամանակացույցով առաջին հոգեթերապևտիկ մեծ ուղղության՝ հոգեդինամիկ տեսությունների կազմավորմանը:

Հետևելով պատմական ընթացքին՝ առաջինը կներկայացնենք հոգեդինամիկ տեսությունները, որից հետո կանդրադառնանք հաջորդ երկու մեծ հոգեթերապևտիկ ուղղություններին՝ կոգնիտիվ-վարքայինին և հումանիտար-էքզիստենցիալին:

Այս ձևաչափը թույլ կտա աշխատանքում ներառել շատերի կողմից ընդունված ժամանակակից հիմնական հոգեթերապևտիկ տեսությունները (իհարկե, հասկանալի պատճառներով, այդտեղ ամբողջ ցանկը ներառված չէ) [2, էջ 10], [25], [10, էջ 318], որոնցում, այս կամ այն կերպ, ամփոփված են հոգեթերապիայի հիմնական սկզբունքները և արտացոլում են հոգեթերապիայում կիրառվող տեսա- մեթոդաբանական առանձնահատկությունները:

Հոգեդինամիկ ուղղություն

Հոգեթերապիան գիտական հիմքերի վրա դնելու առաջին փորձը, ինչպես վերևում նշեցինք, պատկանում է Զ. Ֆրեյդին, և եթե փորձենք պատմականորեն արձանագրել այդ տարեթիվը, ապա պետք է նշենք 1895թ., երբ ոչ լայն հանրությանը ներկայացվեց «Նախագիծ գիտական հոգեբանության համար («Project for a Scientific Psychology»)» [28] հայտնի ձեռագիր աշխատանքը: Դրանում Զ. Ֆրեյդը փորձում է հոգեբանությունը ներառել բնագիտության շրջանակներում. հոգեկան գործընթացները ներկայացնել իբրև նյութական որոշակի քանակի մասնիկներով պայմանավորված համապատասխան վիճակներ [28, էջ 1]: Հետագա աշխատանքներում այս միտումը նվազում է. նյութական մասնիկների միջոցով հոգեկան գործընթացների մեկնաբանությունն այլևս կենտրոնական դեր չի խաղում, սակայն հիմնական սկզբունքը՝ հոգեկան տարբեր գործընթացները բացատրել մասնատման, վերլուծության միջոցով, ուղեկցում է Զ. Ֆրեյդին իր ամբողջ գիտական կարիերիայի ընթացքում:

Նևրոզի ախտանիշները (ինչպես նաև հոգեկան նորմալ ֆունկցիաները) բացատրելու համար, Զ. Ֆրեյդը հոգեկան ապարատի կառուցվածքը բաժանում է երեք մասերի. «Անգիտակցական», «Ենթագիտակցական» և «Գիտակցական» (հոգեկանի տոպոգրոֆիկ մոդել), միաժամանակ նշելով, որ այդ բաժանումը մոտավոր է, նույնիսկ ֆանտաստիկ, սակայն հույս է հայտնում, որ այն մեզ ավելի քիչ մոլորության մեջ կզցի, քան նախկինում եղած մոտեցումները [22, էջ 281]: Այսպիսի բաժանումն անհրաժեշտ էր, որպեսզի կարողանային Ի. Բրեյերի հետ համատեղ աշխատանքում բացատրել այն ֆենոմենը, ինչը նկատվում էր հիպնոսի ժամանակ. այցելուները, ի տարբերություն գիտակից վիճակի, հիպնոսի մեջ կարողանում էին հիշել մանկական տարիքում տեղի ունեցած իրադարձություններ, որոնց պատճառով, հասուն տարիքում, ծագել էին նրանց ախտանիշները [4, էջ 17]:

Հետագայում հոգեկանի տոպոգրոֆիկ մոդելի հիման վրա (անգիտակցական, ենթագիտակցական, գիտակցական) Զ. Ֆրեյդը տալիս է հոգեկանի կառուցվածքային մոդելը՝ «Իդո», «Էգո» և «Սու-Էգո», որը կրկին եռաստիճան էր և միտված էր բացատրելու հոգեկանի խորքային գործընթացները և կոնֆլիկտների առաջացման պատճառները [24]:

Զ. Ֆրեյդի հայեցակարգում իբրև հոգեկանի կենտրոնական շարժիչ ուժ դիտարկվում էին սեքսուալ պահանջումները, որով մարդն օժտված էր իր ծննդյան օրից սկսած: Այդ սեքսուալ պահանջումները, կախված տարիքից, ունենում էին տարբեր բավարարման աղբյուրներ՝ էրոգեն հատվածներ (օրալ՝ 0-ից 18 ամսական, անալ՝ 18 ամսականից 3 տարեկան, գենիտալ՝ հասունացման

շրջանից սկսած), որոնց խախտման (ֆիքսվելու) պարագայում, հետագայում կարող էին նկատվել այդ փուլին բնորոշ հոգեբանական հիվանդագին դրսևորումներ (օրինակ՝ սադիզմ, մազոխիզմ, ավկոհոլիզմ և այլն) [23, էջ 105,106]:

Հոգեվերլուծության կազմավորման սկզբնական փուլում, Զ. Ֆրեյդը հոգեբանական խնդիրների ծագումը բացատրում էր հետևյալ կերպ՝ մարդու կողմից որոշ իրավիճակներ, հոգեբանական տեսանկյունից ընդունվում են այնպիսի սրությամբ, որ նա չի կարողանում դրանք ամբողջությամբ ապրել և հաղթահարել (քանի որ այդ ընթացքում մարդը գտնվում է, մասամբ, հիպնոտիկ տրանսի մեջ և չի կարողանում դիմադրել) [4, էջ 260-268]: Այդուհետ, չհաղթահարված գրգիռը (կասեցված էներգիան), ելք չգտնելով, մնում է մարմնի մեջ և խաթարում ֆունկցիոնալությունը՝ դրսևորելով տարբեր ախտանիշներ:

Ավելի ուշ Զ. Ֆրեյդը հոգեբանական խնդիրների ծագումը փորձում է բացատրել հոգեկանի եռաստիճան մոդելի բաղկացուցիչ մասերի «Իդ», «Էգո» և «Գեր-Էգո» միջև տեղի ունեցող անհամաձայնությունների միջոցով, որտեղ «Գեր-Էգոն» հանդես էր գալիս բարոյականության դիրքերից և շատ հարցերում անհամաձայնություն էր ցուցաբերում «Իդ»-ի կողմից առաջ քաշված սեքսուալ պահանջմունքերի հետ, որի արդյունքում ծագում էին հոգեբանական տարբեր խնդիրներ:

Հոգեբանական խնդիրների ծագման հոգեվերլուծական մոտեցումը, իբրև ելակետային տվյալներ վերցնում էր հոգեբանական ֆենոմենները (սուր խնդրահարույց իրավիճակներ, սեքսուալ հակումների և գերբարոյական արգելքների միջև տարածայնություններ և այլն) և դրանց միջոցով փորձում դուրս հանել հոգեբանական խնդիրների ծագման սկզբունքները, սակայն դա սահմանափակ մոտեցում էր, քանի որ հոգեբանական ֆենոմեններն ավարտված գործընթացի արդյունքներ են և դրանցում հոգեբանական խնդիրների ծագման սկզբունքներն արդեն դադարել են:

Հետագայում, Զ. Ֆրեյդի մերձավոր շրջապատում գտնվող որոշ գիտնական հոգեվերլուծողներ անհամաձայնություն հայտնեցին հոգեվերլուծության որոշ հիմնարար հասկացությունների և մոտեցումների հետ («էդիպյան բարդույթ», «երեխայի զարգացման հոգեսեքսուալ փուլերը», «լիբիդո») ու քեցին հոգեվերլուծական դարոցը՝ առաջարկելով իրենց տեսությունները: Դրանցից էին Կ. Յունգը (Անալիտիկ հոգեբանություն) [26], Ա. Ադլերը (Անհատական հոգեբանություն) [1], Հ. Հարթմանը (Էգո հոգեբանություն) [7], Մ. Քլայնը (Օբյեկտային հարաբերություններ) [11], Ժ. Լականը (Կառուցվածքային հոգեվերլուծություն) [13] և այլք:

Նշված հոգեթերապևտիկ տեսությունները (և ոչ միայն), հոգեբանական խնդիրների ծագման հարցում ունենալով տարբեր մոտեցումներ, միևնույն ժամանակ ունեին մի շարք կոնցեպտուալ նմանություններ, որոնք փոխառվել էին հոգեվերլուծությունից: Գլխավորը դինամիկ սկզբունքն էր. թերապիայի ընթացքում կենտրոնանում էին անցյալի սուր խնդրահարույց իրավիճակների վրա և փորձում էին բացահայտել արտամղվածը, ինչով պայմանավորված էին ներկայի ախտանիշները: Այս ընդհանուր սկզբունքը թույլ տվեց նշված տեսությունները դասել հոգեդինամիկ ուղղության շրջանակներում:

Ինչպես տեսնում ենք, ընդհանուր սկզբունքը՝ այն է. գտնել (գիտակցել) արտամղվածը, ինչը ենթադրվում էր, որ ճնշվել, արտամղվել էր սուր սթրեսային հոգեվիճակով պայմանավորված և իր ազդեցությունն էր թողնում ներկա հոգեբանական վիճակի վրա, արգասիքային մոտեցում էր, քանի որ արտամղվածը, անկախ որ տեսության շրջանակներում էր մեկնաբանվում և ինչպիսի տեսք էր ստանում, արդեն հոգեբանական ֆենոմեն էր (կարելի էր այն նկարագրել, դրան վերագրել

որոշակի հոգեբանական առանձնահատկություններ, իրավիճակով պայմանավորված ուժ և այլն), իսկ ֆենոմենում (արգասիքում) գործընթացն այլևս դադարում է (կամ «թաքնվում, քողարկվում» է):

Կոգնիտիվ-վարքային ուղղություն

Հաջորդ հոգեթերապևտիկ խոշոր ուղղությունը կոգնիտիվ-վարքային մոտեցումն է, որի հիմնարար սկզբունքներն ընկած են տարբեր հոգեթերապևտիկ տեսությունների հիմքում: Այս ուղղության ստեղծումը պայմանավորված էր մի շարք հանգամանքներով, որոնք մասամբ բխում էին հոգեդինամիկ հոգեթերապիայի մոտեցումների առանձնահատկություններից:

Կոգնիտիվ-վարքային հոգեթերապիան, որը սկզբից հեղինակի՝ Ա. Բեկի կողմից կոչվեց կոգնիտիվ, իսկ հետագայում արդեն այն դարձավ կոգնիտիվ-վարքային թերապիայի հոմանիշ, ի սկզբանե միտված էր դեպրեսիվ խանգարումների հետ աշխատելու համար և ներառում էր խիստ սահմանափակ թվով թերապևտիկ հանդիպումներ (8-12 հանդիպում) [3, էջ 18]:

Ծանր դեպրեսիվ խանգարումների հետ հոգեթերապևտիկ աշխատանքը և կարճաժամկետ հանդիպումներն այն գլխավոր առանձնահատկություններից էին, որոնք բացակայում էին Զ. Ֆրեյդի հայեցակարգում և կոգնիտիվ-վարքային հոգեթերապիայի ստեղծումը դարձնում առավել պահանջված:

Այս հոգեթերապիայում համարվում է, որ ցանկացած մարդ որոշակի հոգետրավմատիկ իրավիճակի նկատմամբ խոցելի է և դա կապված է անձի կառուցվածքի առանձնահատկությունների հետ: Անձը, համաձայն Ա. Բեկի, կոգնիտիվ սխեմաների ամբողջություն է, որը ձևավորվում է կյանքի ընթացքում՝ ուսուցման և նշանակալի մարդկանց հետ նույնականանալու արդյունքում [5, էջ 264]: Այդուհանդերձ, կոգնիտիվ հոգեթերապիայում մեծ դերակատարություն է տրվում կոգնիտիվ ձևակերպումներին, համոզմունքներին և վարքային ռազմավարությանը:

Հոգեթերապիան աշխատում է այցելուի դիսֆունկցիոնալ մտածողությունը և վարքը վերափոխելու ուղղությամբ, ինչը ենթադրաբար կբերի էմոցիոնալ և վարքային փոփոխությունների: Երբ մարդիկ սովորում են իրենց սեփական մտքերն առավել իրատեսական և ադապտիվ կերպով գնահատել, լավանում է իրենց էմոցիոնալ վիճակը և վարքը:

Այս ուղղության արդյունքների վերաբերյալ դրական վերաբերմունքի անխուսափելիությունը նշելով հանդերձ, պետք է ընդգծենք, որ այն ևս արգասիքային մոտեցում էր ցուցաբերում, ինչը նկատելի էր, երբ հոգեբանական խնդրի առաջացման պայմանները նկարագրելիս, իբրև ելակետային տվյալներ էին վերցվում մտածողության և վարքի դրսևորումները: Նշվածներն արդեն որոշակի գործընթացի արդյունքներ էին (մտածողության և վարքի), որոնցում հիմնարար ստեղծող սկզբունքներն արդեն դադարել էին («թաքնվել, քողարկվել» էին):

Հումանիտար-էքզիստենցիալ ուղղություն

Հոգեթերապիայում երրորդ մեծ ուղղությունը հումանիտար-էքզիստենցիալն է: Այս ուղղության ներկայացուցիչները գտնում են, որ թե հոգեվերլուծական, և թե կոգնիտիվ-վարքային մոտեցումները մարդկային բնությանը բավարար չեն վստահում և իրենց թերապիայում անտեսում են նրա մեջ առկա հիմնարար պահեստային ուժերին՝ բարությանը, հոգեկան առողջությանը և կատարելության ձգտմանը: Այդուհանդերձ, հումանիտար-էքզիստենցիալ հոգեթերապիայում գլխավոր խնդիրն այնպիսի պայմանների ստեղծմանն է, որոնց միջոցով կբացահայտվեն մարդկային անձի սեփական պահուստները: Ի տարբերություն հոգեվերլուծության, այդ հոգեթերապևտիկ ուղղությունը չէր համարում, որ անձը և հասարակությունը գտնվում են կոնֆլիկտի մեջ: Հակառակը, անձի մեջ դրված է իր նմանի հետ միավորվելու ձգտումը, սիրո, ընկերության, փոխգործակցության պահանջը: Անհրաժեշտ է միայն այդ միտումներն ամրապնդել և

ստեղծել պաշտպանվածության և անվտանգության մթնոլորտ, որպեսզի դրսևորվեն իրենց բնական պահանջները [20, էջ 69]:

Հումանիտար ուղղություններից առաջինն ընդունված է համարել Կ. Ռոջերսի հոգեթերապիան, կամ այցելուի վրա կենտրոնացած թերապիան: Կ. Ռոջերսը գտնում էր, որ առողջ հոգեբանական վիճակի համար անհրաժեշտ է ստեղծել անհատի ինքնիրացումը ապահովող պայմաններ, ինչի բացակայությունը կարող է բերել հոգեբանական խնդիրների առաջացմանը: Ինքնիրացման համար պայմաններն անհրաժեշտ է ապահովել արդեն վաղ մանկական տարիքից: Երեխայի համար այդ տարիքում կարևոր է ծնողների կողմից իր վարքի նկատմամբ հավանությունը և, եթե նա չի ստանում դա, երեխան սկսում է իր վարքը հարմարեցնել այնպես, որ այդ հավանությունն անպայմանորեն ստանա: Հետագայում այս մոտեցումը ֆիքսվելով երեխայի «Ես» կոնցեպցիայում, ստեղծում է ինկոնգրուենտություն իրական «Ես»-ի և այն «Ես»-ի միջև, ինչպիսին ցանկանում են տեսնել նրան իր հարազատները: Մարդը հրաժարվելով իր իսկական «Ես»-ից՝ ուրիշների սպասումները բավարարելու համար, նախադրյալներ է ստեղծում ներողի առաջացման և զարգացման համար [5, էջ 163-177]:

Այցելուակենտրոն հոգեթերապիայում բնական պահանջմունքների մերժումը դիտարկվում էր իբրև ինքնիրացման պայմանների ապահովման խոչընդոտ, ինչն էլ իր հերթին համարվում էր հոգեբանական խնդիրների ծագման գլխավոր պատճառներից մեկը: Հետագայում այս ուղղության մեջ դասվեցին այնպիսի հոգեթերապևտիկ մոտեցումներ, ինչպիսիք են՝ Ֆ. Պերլզի գեշտալտ հոգեթերապիան [19], Վ. Ֆրանկլի լոգոթերապիան [21], Ի. Յալոմի էքզիստենցիալ հոգեթերապիան և ուրիշներ [27]: Չնայած այն բանին, որ նշված (և ոչ միայն) տեսություններում առկա էին մի շարք տարբերություններ (տեխնիկաներում, մեթոդներում, գործիքակազմում), այնուամենայնիվ դրանք ներառվեցին հումանիտար-էքզիստենցիալ ուղղության մեջ, քանի որ դրանց բոլորին հատուկ էին ընդհանուր հիմնարար սկզբունքներ (մարդակենտրոնությունը, ընդգծված հումանիտարիզմը, ազատ ընտրության հնարավորությունը և այլն) և օրինաչափություններ:

Պետք է նաև նշել, որ վերևում բերված տեսություններին հատուկ էր նաև մեկ այլ մոտեցում, ինչը կարելի է անվանել արգասիքային (ֆենոմենոլոգիական): Այն դրսևորվում էր հետևյալում. խնդիրների ծագման գործընթացը հասկանալու համար ելակետ էին վերցվում կրկին հոգեբանական ֆենոմենները (պահանջմունք, չավարտված գեշտալտ, իրատեսական նպատակի բացակայություն և այլն), իսկ ֆենոմենում, ինչը հոգեբանական որոշակի գործընթացի արգասիք էր (ավարտված արդյունք), իր իսկ ստեղծող գործընթացն արդեն ավարտված էր և հնարավոր չէր դրանից (հոգեբանական ֆենոմենից) դուրս հանել, բացահայտել այն հիմնարար սկզբունքները և օրինաչափությունները, որոնք ընկած էին այդ գործընթացի հիմքում:

Եզրակացություն

Ավարտելով աշխատանքը՝ նշենք, որ հոգեթերապիայի շուրջ ստեղծված ներկայիս իրավիճակը շատ բաներով հիշեցնում է նախորդ դարում Ա.Ի. Միրաքյանի կողմից մատնանշված ընկալման հոգեբանության վիճակը. երկու դեպքում էլ ցուցաբերում են արգասիքային մոտեցում, ինչը սահմանափակ մոտեցում է և թույլ չի տալիս բացահայտել ստեղծող գործընթացի սկզբունքները (հոգեթերապիայի դեպքում հոգեբանական խնդիրների): Այս դեպքում ևս, մեր կարծիքով, անհրաժեշտ է կրկին ցուցաբերել տրանսգենդենտալ մոտեցում, այն է. իբրև ելակետային տվյալներ վերցնել բնության հիմնարար օրենքները և փորձել բացահայտել այն անոմալիաները, որոնք հանդես են գալիս իբրև հոգեբանական (հոգեկան) խնդիրներ:

Գրականության ցանկ

1. Адлер А. Индивидуальная психология. СПб.: изд. Питер, 2017. – 256 с.
2. Александров А.А. Современная психотерапия. Курс лекций. СПб.: «Академический проект», 1997. - 335 с.
3. Бек Дж. Когнитивно-поведенческая терапия. От основ к направлениям. – СПб.: Питер, 2018. – 418 с.
4. Брейер И., Фрейд З. Исследования Истории. СПб.: изд. Восточно-Европейский Институт Психоанализа. 2005. - 464 с.
5. Бурлачук Л.Ф., Грабская И.А., Кочарян А.С. Основы психотерапии: Учебн. пособие для студентов вузов. — К.: Ника-Центр; М.: Алетейа, 1999. — 320 с.
6. Бурлачук Л. Ф., Жидко М. Е., Кочарян А. С., Психотерапия. Учебник для вузов: 2-е изд., СПб.: Питер, 2007. 480 с.
7. Гартманн Х. Эго-психология и проблема адаптации. М.: изд. Институт общегуманитарных исследований. 2002. – 160 с.
8. Гегель Г. Наука логики. В-3-х т. Т. 3. Изд. «Мысль», М., 1972. - 371 с.
9. Гриншпун И. Б., История психотерапии. Лекция 1. введение в историю психотерапии. Консультативная психология и психотерапия, 2015, № 2 С. 175-208.
10. Карвасарский Б.Д. Клиническая психология. Учебник для вузов. — 4-е изд. — СПб.: Питер, 2004. — 553 318 с.
11. Клайн М. Развитие в психоанализ. М.: изд. Академический Проект. 2001. 512 с.
12. Козлов В.В., Мазилев В.А., Петренко В.Ф. Методология психологии сегодня. Методология современной психологии. Вып. 7 /Сб. под ред. Козлова В.В., Карпова А.В., Мазилова В.А., Петренко В.Ф. М-Ярославль: ЯрГУ, ЛКИИСИ РАН, МАПН, 2017 - 455 с.
13. Лакан Ж. Функция и поле речи и языка в психоанализе: Пер. с франц. – М.: Гнозис, 1995. – 192 с.
14. Миракян А.И. Константность и полифункциональность восприятия. М.,1992. - 216 с.
15. Миракян А.И. Психология пространственного восприятия. Ред. А. Налчаджян. Ер., изд. «Айастан», 1990. – 206 с.
16. Миракян А.И. Эффект уменьшения нефиксированного объекта. Психологические вопросы регуляции деятельности. Под ред. Д.А. Ошанин и О.А. Конопкина. «Педагогика» М., 1973. С. 70-86.
17. Нагдян Р.М. Метафизический подход к методологии исследования психического отражения реальности. // Дисс. доктор. псих. наук. Ер., 2015. – 305 с.
18. Панов В.И. Экопсихология: Парадигмальный поиск. – М.; СПб.: Психологический Институт РАО; изд. «Нестор-История», 2014. – 304 с.
19. Перлз Ф. Теория гештальт-терапии. М.: изд. Институт общегуманитарных исследований. 2017. - 320 с.
20. Романин А.Н. Основы психотерапии: Учеб. пособие для студ. высш. учеб. заведений. - М.: Издательский центр «Академия», 1999. - 208 с.
21. Франкл В. Логотерапия и экзистенциальный анализ. Статьи и лекции. М.: изд. Альпина Диджитал. 2016. - 390 с.
22. Фрейд З. Лекции по введению в психоанализ и Новый цикл. М.: изд. «Фирма СТД», 2006. - 608 с.
23. Фрейд З. Очерки по психологии сексуальности. Мн.: из. Попурри, 2003. – 480 с.
24. Фрейд З. Я и Оно. Сборник, СПб.: изд. Азбука-классика, 2006. – 288 с.
25. Хаменя А.В. Основные направления психотерапии: учеб.-метод. пособие / Гродно: ГрГУ, 2013. – 186 с.
26. Юнг К.Г. Аналитическая психология: Теория и практика. СПб.: изд. Азбука, 2007. – 240 с.
27. Ялом И. Экзистенциальная психотерапия. М.: изд. Класс. 2015. - 576 с.
28. Freud S. Project for a Scientific Psychology (1950 [1895]). Publisher «Hogarth Press», London, 1996. – 397 p.

ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ԺՈՋԵՖԻՆԱ ԵՍԱՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
գիտակրթական միջազգային կենտրոն
հոգեբանության ամբիոնի ասպիրանտ, դասախոս
zhozefina.yesayan@isec.am

Համառոտագիր

Հոդվածում ներկայացված է հավաքագրման դերը և նշանակությունը մարդկային ռեսուրսների կառավարման համակարգում, ինչպես նաև՝ ազդեցությունը կազմակերպության արդյունավետ գործունեության իրականացման համար, քանի որ հավաքագրումը ցանկացած կազմակերպության արդյունավետ գործունեության և զարգացման հիմքն է:

Սույն հոդվածում ներկայացված է և քննարկվում է նաև կոմպետենտ հավաքագրման մասնագետի համար անհրաժեշտ գիտելիքը, հմտությունները և կարողությունները, ինչպես նաև՝ հավաքագրման ողջ գործընթացի համար կիրառվող թեկնածուների ներգրավման հիմնական մեթոդները և ուղիները, թեկնածուների որոնման փուլերը՝ սկսած թեկնածուի պրոֆիլի կազմումից մինչև հարցազրույցների իրականացում և աշխատանքի ընդունում:

Մարդկային ռեսուրսների կառավարման մասնագետը հանդիսանում է ցանկացած կազմակերպության դեմքը, իմիջի կարևոր մասը: Կազմակերպության մասին առաջին ասոցիացիան, և առաջին վատ կամ լավ տպավորությունը թեկնածուն ստանում է հենց HR մասնագետից կամ հենց հավաքագրողից:

Աշխատանք փնտրելիս և կազմակերպությունը ընտրելու ժամանակ թեկնածուն առաջին հերթին ծանոթանում է հավաքագրողի հետ: Հենց հավաքագրման մասնագետն է մերժում կամ «կանաչ լույս» տալիս թեկնածուին:

Պրոֆեսիոնալ հավաքագրողը անընդհատ «վաճառում է». կազմակերպությունը՝ թեկնածուին, իսկ թեկնածուին՝ գործատուին: Այդ պատճառով է, որ կարևոր է տիրապետել վարքաբանական հոգեբանության հիմունքներին, հասկանալ տարբեր մասնագիտությունների էությունը, նրբությունները, կռահել մոտիվները և որոշումները:

Ի սկզբանե հավաքագրումը HR բաժնի մի մասն է կազմել, բայց աստիճանաբար այն դարձել է առանձին ուղղություն, անկախ մասնագիտացում: Սովորաբար, փոքր կազմակերպություններում մարդկային ռեսուրսների կառավարման ողջ գործընթացը իրականացնում են մեկ կամ երկու աշխատակից, որոնք նաև իրականացնում են հավաքագրումը, չնայած որ իրենց հիմնական ուղղվածությունն է դեպի աշխատակիցների ադապտացիան, պարզատրումը և մոտիվացիան, նաև վերապատրաստումները, իսկ խոշոր կազմակերպություններում ընդհանուր HR բաժին է գործում, և առանձին հավաքագրման մասնագետ, որն իրականացնում է հավաքագրման ողջ գործընթացը:

Բանալի բառեր և բառակապակցություններ. մարդկային ռեսուրսներ, հավաքագրում, կառավարում, որոնում, թափուր հաստիք, հարցազրույց, ռազմավարական դեր:

СТРАТЕГИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ РЕКРУТИНГА В СИСТЕМЕ УПРАВЛЕНИЯ ЧЕЛОВЕЧЕСКИМИ РЕСУРСАМИ

ЖОЗЕФИНА ЕСАЯН

Национальная академия наук Республики Армения
Международный научно-образовательный центр
кафедра психологии, преподаватель, аспирант
zhozefina.yesayan@isec.am

Аннотация

В статье представлена роль и значение рекрутинга в системе управления человеческими ресурсами, а также влияние на эффективную деятельность организаций, так как рекрутинг является основой для эффективной работы организаций и ее развития.

В данной статье рассматриваются и обсуждаются знания, навыки и возможности, необходимые компетентному специалисту по подбору персонала, а также основные методы и пути подбора кандидатов для рекрутинга, этапы поиска кандидатов от составления анкеты до проведения собеседования и приема на работу.

Специалист по управлению персоналом-это лицо организации, важная часть имиджа, Первая ассоциация и первое плохое или хорошее впечатление про компанию, кандидат получает от HR специалиста или рекрутера. При поиске работы и при выборе организаций кандидат должен сначала познакомиться с рекрутером. Именно специалист по подбору персонала отклоняет или дает <зеленый свет> кандидату.

Профессиональный рекрутер постоянно <продает> компанию кандидату, а кандидата - заказчику. Именно поэтому важно освоить основы поведенческой психологии, понять суть, нюансы разных профессий, предугадывать мотивы и решения.

Изначально рекрутинг был частью отдела кадров, но постепенно стал отдельной самостоятельной сферой. Как правило, в небольших организациях весь процесс управления человеческими ресурсами осуществляется одним или двумя сотрудниками, которые занимаются подбором персонала, хотя их основная сфера это адаптация, вознаграждения, мотивация и обучения персонала, а в крупных организациях существует общий отдел кадров и, конечно же, отдельный специалист по подбору персонала, который осуществляет весь процесс подбора.

Ключевые слова и словосочетания: человеческие ресурсы, рекрутинг, управление, поиск, вакансия, собеседование, стратегическая роль.

STRATEGIC IMPORTANCE OF RECRUITMENT IN HUMAN RESOURCES MANAGEMENT

ZHOZEFINA YESAYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
International Scientific-Educational Center
Department of Psychology, PhD student, Lecturer
zhozefina.yesayan@isec.am

Abstract

This article presents the role and significance of recruitment in human resources management, as well as its influence on the effective operations of the organization, as recruitment serves as the basis for the effective operation and development of the organization. The article also outlines and discusses the knowledge, skills, and abilities required for a competent recruitment specialist, as well as the main methods and ways of the entire recruitment process, stages of searching for candidates from the compilation of candidates' profiles to conducting interviews and recruitment. HR specialist is the immediate representative of the company and the important part of its image: a candidate receives the first association and his/her first negative or positive impression about the company from an HR specialist or a recruiter.

While searching for a job and choosing an organization, the candidate first gets to know the recruiter. It is the recruiter who rejects or gives the "green light" to the candidate.

A professional recruiter constantly "sells" the company to the candidate and vice versa. That is why, it is important to know the basic knowledge of behavioral psychology, to understand the essences and nuances of different professions, to anticipate motives and decisions. Firstly, recruiting used to be part of the human resources department, but gradually it turned into an individual independent field. As a rule, just one or two employees carry out the entire process of human resources management in small organizations which are also engaged in recruitment. Although their main field is staff onboarding, remuneration, motivation, and training, in large organizations there is a general human resources department, moreover, there is an individual recruitment specialist, which carries out the entire recruitment process.

Keywords and phrases: human resources, recruitment, management, search, vacancy, interview, strategic role.

Բնության և հասարակության մեջ գոյություն չունեն իդեալական թեկնածուներ, այնպես որ պետք է կարողանալ հստակ առանձնացնել և առաջնահերթություն տալ ներկայացվող պահանջներին և ընտրել այն թեկնածուին, որը տվյալ թափուր հաստիքին և առհասարակ ձեր կազմակերպությանը առավել շատ է համապատասխանում:
Իվանովա Ս.

Ներածություն

Ցանկացած բիզնես գործընթացի համար աշխատակազմի համալրումը կամ հավաքագրումը հանդիսանում է կարևոր գործիք հաջողությունների հասնելու համար: Այդ պատճառով կարևոր է, որ այդ գործընթացը իրականացնեն որակավորված մասնագետները: Կախված նրանից, թե ինչ թափուր հաստիք պետք է փակենք, տարբերում ենք հավաքագրման հետևյալ տեսակները՝

- Սովորական հավաքագրում, որը իրենից ենթադրում է որակավորված աշխատակցի որոնում:
- Գծային հավաքագրում (զանգվածային աշխատանքի ընդունում). աշխատողների որոնումն է սկզբնական պաշտոնների համար, որոնք չեն պահանջում որակավորում, անընդհատ կադրերի հոսք է տեղի ունենում: Օրինակ՝ թափուր հաստիքներ վաճառողների, գանձապահների, վարորդների, զանգերի կենտրոնների աշխատակիցների և այլ հաստիքների համար:
- Headhunting, երբ մենք կոնկրետ մասնագետի այլ կազմակերպությունից բերում ենք մեզ մոտ աշխատելու: Սովորաբար, նման աշխատակիցները ունենում են բարձր որակավորում, և չեն ցանկանում փոխել իրենց աշխատանքը: Ներկա ժամանակաշրջանում շատ կիրառվում է IT կազմակերպություններում:
- Հավաքագրման ևս մեկ տեսակ է սովորող կամ արդեն ավարտած ուսանողների միջոցով համալրումը պրակտիկայի կամ սկսնակ մասնագետի թափուր հաստիքի համար:
-

Հավաքագրում եզրույթը, թեկնածուների ներգրավման հիմնական ուղիները

Հավաքագրումը թեկնածուների ընտրության գործընթացն է, իսկ հավաքագրողը կամ համաքագրման մասնագետը այն անձն է, որը պատասխանատու է համապատասխան թեկնածուների որոնման գործընթացի համար: Ցանկացած հավաքագրման մասնագետ պետք է լինի հետաքրքրասեր, շփվող, հետևի շուկայի փոփոխություններին, ճիշտ հասկանա տվյալ կազմակերպության և ղեկավարության կարիքները, այնուհետև որոշի թիրախային լսարանը և թեկնածուին գտնելու ուղիները: Շատ կարևոր է տիրապետել հաղորդակցման հմտություններին, լինել շատ լավ «բանակցող»: Հավաքագրման գործընթացում անհրաժեշտ է անընդհատ զարգացնել և ընդլայնել կապերի շրջանակը և կառուցել երկարաժամկետ հարաբերություններ: Թեկնածուների ներգրավման տարբեր ուղիներ կան, որոնցից առավել տարածված են՝

- թեկնածուների որոնումը աշխատանքային կայքերի և բաց աղբյուրների միջոցով (HeadHunter, GitHub, LinkedIn).
- թափուր հաստիքների մասին հայտարարությունների տեղադրումը սոցիալական ցանցերում (Facebook, LinkedIn) և աշխատանքային կայքերում (staff.am, job.am, careercenter.am).
- թեկնածուների որոնումը հատուկ մասնագիտացված հավաքագրման գործակալությունների (ընկերությունների) միջոցով.
- կազմակերպության կայքի և տեղեզրամ ալիքի միջոցով. այս դեպքում կարելի է ոչ միայն թափուր հաստիքները տեղադրել, այլև ներկայացնել ընկերության աշխատանքը.

- տարածված տարբերակ է նաև email մարքեթինգը (ըստ թեկնածուների բազայի՝ թափուր հաստիքների ստեղծումը և տարածումը)։
- կազմակերպությունը առաջարկում է իր աշխատակիցներին, որ ընկերություն հրավիրեն աշխատելու իրենց ընկերներին և ծանոթներին. թեկնածուի աշխատանքի ընդունվելու դեպքում հրավիրողը ևս ստանում է բոնուսներ։
- կազմակերպության HR բաժնի մասնագետները պարբերաբար մասնակցում են աշխատանքային տարբեր էքսպոների և ցուցահանդեսների, որտեղ ներկայացնում են իրենց կազմակերպությունը և թափուր հաստիքները։ Ուսանողական էքսպոների մասնակցության ժամանակ կարևոր է ներկայացնել այն հաստիքները, որի դեպքում ուսանողը կարող է համատեղել աշխատանքը և ուսումը, նաև պետք է հաշվի առնել, որ ուսանողը սկսնակ մասնագետ է, և աշխատանքային փորձ կարող է չունենալ։

Կախված ոլորտի առանձնահատկություններից, ընկերության մշակույթից և ավանդույթներից, գործատուի պահանջներից, կազմակերպության ֆինանսական հնարավորություններից, նախկին փորձից՝ հավաքագրման մասնագետը ինքն է որոշում, թե որոնման որ ուղիները կամ տեխնոլոգիաները կիրառի։

Թեկնածուների որոնման փուլերը՝

1. Թեկնածուի պրոֆիլի կազմում։ Ինչի՞ համար է սա մեզ անհրաժեշտ։ HR մասնագետը կամ հենց հավաքագրման մասնագետը պետք է հասկանա՝ արդյոք թեկնածուն համապատասխանում է ներկայացվող պահանջներին։ Այն իր մեջ ներառում է աշխատանքի նկարագրությունը, թեկնածուին ներկայացվող պահանջները։ Թեկնածուների պրոֆիլները սկսնակ և միջին մասնագետների դեպքում հաճախ կարող են ֆիքսված շաբլոններ լինել, իսկ ավագ մասնագետների դեպքում ստեղծվում են անհատական պրոֆիլներ։ Շատ կարևոր է թեկնածուին ներկայացվող պահանջները կազմելիս հասկանալ գործատուի պահանջները, ինչն է նրա համար կարևոր թեկնածուի մեջ, ի՞նչ նրբություններ կան տվյալ պաշտոնի համար և այլն **[1, էջ 15-17]**։
2. Թափուր հաստիքների տեղադրումը համապատասխան հարթակներում։ Այս փուլի մասին հողվածի սկզբում մանրամասն անդրադարձել եմ։
3. Հարցազրույցների հրավեր և իրականացում։ Հարցազրույցի ժամանակ մենք ոչ միայն որոշում ենք, թե որքանով է տվյալ թեկնածուն համապատասխանում տվյալ հաստիքին, և որքան է կազմակերպությունը համապատասխանում իրեն, այլև ստուգում ենք թեկնածուների «փափուկ» հմտությունները (Soft skills)։ Օրինակ՝ արդյո՞ք կարողանում են հեշտ հաղորդակցվել և պահպանել շփումը, առաջնորդի հատկանիշներ ունե՞ն, թե՞ ոչ, ինչպե՞ս են դրսևորում սթրեսային իրավիճակներում, ինչպե՞ս են կառավարում հոյզերը, նախաձեռնո՞ղ են, թե՞ ոչ, նպատակասլա՞ց են, թե՞ ոչ և այլն **[2]**։

Այս հմտությունների դուրս բերման համար անհրաժեշտ է իրականացնել վարքային հարցազրույց։ Այդ պատճառով էական նշանակություն ունի՝ արդյո՞ք հավաքագրման մասնագետը օժտված է մինիմալ հոգեբանական գիտելիքով։

Տարբեր կազմակերպություններում հարցազրույցի տարբեր փուլեր կարող են լինել. CV-ները ուսումնասիրելուց և ընտրություն կատարելուց հետո, սովորաբար հարցազրույցի առաջին փուլը իրականացնում է տվյալ կազմակերպության HR մասնագետը կամ հավաքագրողը։ Առաջին փուլը հաղթահարելուց հետո արդեն 2-րդ փուլը տեխնիկական մասն է, ստուգվում են թեկնածուի մասնագիտական հմտությունները և կարողությունները, սովորաբար թեկնածուին տրվում է որևէ

հանձնարարություն կատարել՝ կախված տվյալ հաստիքից, արդեն երրորդ փուլի ժամանակ տեղի է ունենում տնօրենի հետ հանդիպումը: Կազմակերպությունից կախված՝ առաջին փուլը կարող է տեղի չունենալ, այսինքն՝ հավաքագրողը կապ է հաստատում թեկնածուի հետ, վերջինիս տրվում է տեխնիկական հանձնարարությունը, և բարեհաջող իրականացնելու դեպքում թեկնածուն հանդիպում է արդեն տնօրենի և հավաքագրողի կամ միայն տնօրենի հետ:

Հարցազրույցի մեթոդների մեծ մասի դեպքում չկան հստակ ճիշտ պատասխաններ, պարզապես՝ «համապատասխան» և «ոչ համապատասխան» տվյալ հաստիքի և կորպորատիվ մշակույթի համար [1, էջ 13-15]:

Հավաքագրման մասնագետի աշխատանքի նշանակությունը և դերը կազմակերպության գործունեության մեջ

Հավաքագրման մասնագետի զանգի կամ էլեկտրոնային նամակագրության ժամանակ թեկնածուի մոտ արդեն ձևավորվում է կարծիք ամբողջ կազմակերպության մասին, և հավաքագրման մասնագետի աշխատանքը շատ կարևոր է ցանկացած կազմակերպության հեղինակության համար: Կարևոր նշանակություն ունի այն, թե ինչպես է հավաքագրման մասնագետը հաղորդակցվում թեկնածուի հետ, ինչպես է ներկայացնում կազմակերպությունը, ինչպես է հետադարձ կապը տալիս, կամ գուցե չի տալիս, կատարում է արդյոք պայմանավորվածությունները, թե ոչ: Կարևոր է նաև, թե ինչպես է մերժում թեկնածուին, որը չի համապատասխանում թափուր հաստիքին [3]:

Հավաքագրման գործընթացում կարևոր դեր է կատարում այն, թե ինչպես է մասնագետը պատասխանում թափուր հաստիքներին դիմելու դեպքում: Կան կազմակերպություններ, որտեղ ցանկացած CV ստանալու դեպքում տալիս են հետադարձ կապ: Օրինակ՝ դուք ուղարկում եք ձեր CV-ն և ստանում շաբլոն նամակ այն մասին, որ գործատուն ստացել է այն, կդիտարկի և X ժամանակահատվածում (օրինակ 2 շաբաթ) կպատասխանի: Էլեկտրոնային նամակի միջոցով դուք կամ ստանում եք մերժում, կամ հարցազրույցի հրավեր: Սակայն որոշ կազմակերպություններում CV-ն ուղարկելու դեպքում դուք որևէ ինֆորմացիա չեք ստանում, և Ձեզ հետ կապ կհաստատեն միայն այն դեպքում, եթե պատրաստվում են հրավիրել հարցազրույցի:

Իհարկե, առաջին տարբերակը ավելի նախընտրելի է կիրառել, քանի որ նման շաբլոն նամակ կազմելը հեշտ գործընթաց է, և շատ ժամանակ չի խլի մասնագետից, իսկ թեկնածուն հանգիստ կլինի, երբ իմանա որ իր դիմումը ստացել են, կդիտարկեն և կպատասխանեն: Նույնիսկ այս փոքր ժեստը (ընդամենը մեկ նամակ) ուշադրության նշան է թեկնածուի համար, և միանշանակ կարծիք է ձևավորվում կազմակերպության մասին:

Առաջին հեռախոսազրույցի ժամանակ կարևոր է ճիշտ ներկայացնել կազմակերպությունը, ընդգծել դրական կողմերը, պատասխանել թեկնածուի բոլոր հարցերին: Թեկնածուն պետք է ցանկություն ունենա ձեր կազմակերպության մի մասնիկը դառնալու: Արդեն բուն հարցազրույցի ժամանակ անհրաժեշտ է ամբողջական ինֆորմացիա տալ կազմակերպության մասին, ներկայացնել թափուր հաստիքի համար անհրաժեշտ հիմնական պահանջները, պարտադիր պետք է վերջում ժամանակ հատկացնել թեկնածուի կողմից հնչող հարցերի համար, իսկ արդեն հանդիպման ավարտին խոսել հետագա քայլերի մասին, ինչպես է պահվելու հետադարձ կապը (էլեկտրոնային նամակ կամ հեռախոսազանգ), և անպայման նշել ժամանակահատվածը:

Այս փուլում հետադարձ կապը էլ ավելի կարևոր է, եթե CV-ները ստանալու դեպքում ներելի է պատասխան չուղարկելը, ապա այս դեպքում դա կոպիտ սխալ կլինի: Անկախ նրանից՝ թեկնածուն համապատասխանում է Ձեզ, թե ոչ, նրան անհրաժեշտ է հստակ պատասխան տալ և բացատրել

պատճառները: Ինչպես հավաքագրման մասնագետն է իր ժամանակը տրամադրում հարցազրույցի իրականացման համար, այնպես էլ՝ թեկնածուն, և միանշանակ արժանի է պատշաճ վերաբերմունքի:

Եզրափակելով՝ ցանկանում եմ նշել, որ հավաքագրողի լավ և արդյունավետ աշխատանքը կազմակերպության հեղինակության և իմիջի ձևավորման գործում ահռելի դեր է խաղում, և հետագայում մեծ աջակցություն է նոր աշխատողների ադապտացիայի համար: Թեկնածուի մոտ աշխատելու մոտիվացիայի առկայությունը կամ բացակայությունը պայմանավորված չէ առաջին աշխատանքային օրով, այն ձևավորվում է դեռևս կազմակերպության ներկայացուցչի հետ առաջին հանդիպման ժամանակ:

Եզրակացություն

Չնայած նրան, որ մեր երկրում, հավաքագրումը՝ որպես առանձին ուղղություն, կարճ պատմություն ունի, բայց արդեն հասցրել է իր ուրույն տեղը գրավել մարդկային ռեսուրսների կառավարման համակարգում, և ապացուցել իր օգտակարությունը: Հատկապես արդիական է մեր օրերում, երբ կադրային սուր պայքար է ընթանում:

Հավաքագրման օգտակարությունը կարևորվում է նաև նրանով, որ շահում են բոլոր մասնակիցները և՛ գործատուն, որը հնարավորություն է ստանում գտնելու իր իդեալական աշխատակցին, և՛ թեկնածուն, որը գտնում է իրեն համապատասխան կազմակերպությունը և աշխատանքը:

Ցանկացած բիզնեսի հաջողության գաղտնիքներից մեկն այն է, որ արդյո՞ք «ճիշտ» մարդիկ գտնվում են «ճիշտ» տեղում: Շատ կարևոր է ճիշտ ընտրություն կատարել, և թիմի մի մասը դարձնել լավագույն թեկնածուին, որը կլինի մոտիվացված, կտիրապետի հաստիքի համար անհրաժեշտ հմտություններին, կարողություններին, և կունենա համապատասխան գիտելիք: Հստակ առանձնացված «լավ» կամ «վատ» թեկնածուներ գոյություն չունեն, պարզապես կան թեկնածուներ, որոնք համապատասխան են տվյալ հաստիքին, և թեկնածուներ, որոնք համապատասխան չեն:

Գրականության ցանկ

1. Иванова С., Искусство подбора персонала. Как оценить человека за час., Альпина Пабlishер, 2017, 272 стр.
2. Селюн Е.П., Блашко Г.В., Нестеренков С.Н- Роль информационных технологий в формировании softskills в период самоизоляции. Качество образовательного процесса: проблемы и пути развития. Материалы Международной научно-практической конференции, Республика Беларусь, Минск, 30 апреля 2021 года
3. Mostyn Steven, Recruiting101: The Fundamentals of Being a Great Recruiter, 2016, 198 pages

ՀՈԳԵՍՈՄԱՏԻԿԱ. ԽՈՑԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

ԼՅՈՒԴՄԻԼԱ ՆԱՆՈՒՇՅԱՆ

«Հ գիտությունների ազգային ակադեմիա
գիտակրթական միջազգային կենտրոն
հոգեբանության ամբիոն, մագիստրանտ
lyudmilanan@gmail.com

Համառոտագիր

Ներկա հոդվածը համառոտակի ուսումնասիրում է ստամոքսի խոցի և տասներկուամատնյա աղու խոցի առաջացման հոգեբանական պատճառները, որը կարող է հեշտացնել հոգեթերապևտի աշխատանքը: Առաջարկվում է դիտարկել վերը նշված երկու հիվանդությունները առանձին-առանձին, քանի որ նրանց առաջացման պատճառները տարբեր են:

Ինչպես տեսնում ենք ստամոքսի խոց ունեցող հիվանդների մոտ ագրեսիվության աստիճանը բարձր մակարդակում 25% է կազմում, իսկ միջինում՝ 66,6% է, ցածր մակարդակում ագրեսիվության աստիճանը 8.3% է կազմում:

Տասներկուամատնյա աղու խոց ունեցող հիվանդների մոտ ագրեսիվության մակարդակը ուղղված է դեպի ներս, ուստի ստամոքսի խոցով հիվանդների ագրեսիան ավելի բարձր է, որն ուղղված է արտաքին աշխարհի դեմ:

Ամփոփելով հետազոտվողների հետ զրույցի մեթոդը և մեթոդիկաները՝ կատարում ենք արդյունքների հետևյալ ամփոփումը, այն որ տասներկուամատնյա աղու խոց ու ստամոքսի խոց ունեցողների հոգեծին գործոնները տարբեր են. այդ գործոնները ունենում են տարբեր ազդեցության ձևեր:

Տասներկուամատնյա աղու խոց ունեցող հիվանդների մեծամասնությունը կազմում են տղամարդիկ՝ ի տարբերություն ստամոքսի խոց ունեցող հիվանդների, որտեղ կանանց ցուցանիշը ևս կարող է բարձր լինել:

Տասներկուամատնյա աղու խոց ունեցողներն ավելի շատ, քան ստամոքսի խոց ունեցող հիվանդները ունեն թաքնված վախեր, անվստահություններ, որի արդյունքում հիվանդն իրեն զգում է որպես անպաշտպան երեխա, որն ունի շրջապատի օգնության կարիքը, սակայն երկուսի դեպքում էլ կյանքի որակը բարձր է, որը պարզ է դառնում զրույցի մեթոդից, ինչպես նաև՝ անհանգստության և տագնապայնության մեթոդիկաները լրացնելուց: Դա կապված է նրա հետ, որ նրանք երկար ժամանակ չեն ընդունում, որ ունեն խնդիր, որն ունի ֆիզիկական և հոգեբանական բնույթ: Եվ ուշադրության են արժանացնում խնդիրը միայն այն ժամանակ, երբ ի վիճակի չեն լինում դիմանալու նույններին: Խոցային հիվանդների ռիզիկոյության մակարդակը նրանց չի թողնում որպեսզի հրաժարվեն նախկին սննդակարգից և վնասակար սովորույթներից (ծխախոտ, ալկոհոլային խմիչքներ), որն էլ ինքնաագրեսիայի դրսևորումներից է:

Բանալի բառեր և բառակապակցություններ. ստամոքսի խոց, տասներկուամատնյա աղու խոց, մեթոդ, հոգեթերապիա:

ПСИХОСОМАТИКА: ЯЗВЕННЫЕ БОЛЕЗНИ И ИХ ПСИХОЛОГИЧЕСКИЕ ФАКТОРЫ

ЛЮДМИЛА НАНУШЯН

Национальная академия наук Республики Армения
Международный научно-образовательный центр
магистрат кафедры психологии
lyudmilanan@gmail.com

Аннотация

В статье вкратце обсуждается возникновение психологических причин язвы желудка и язвы двенадцатиперстной кишки, которое может упростить работу психотерапевта. Предлагается наблюдать эти две болезни отдельно, потому что причины возникновения разные.

Больные желудочной язвой проявляют агрессивность которая на высшем уровне составляет 25%, на среднем - 66,6на низком - 8,3%:

Больные язвой двенадцатиперстной кишки направляют свою агрессивность внутрь, больные язвой желудка, наоборот, направляют агрессивность на внешний мир.

Если рассмотреть метод беседы и другие методы, мы можем понять, что психологические факторы двух болезней разные, и эти факторы имеют разные формы влияния.

Больные язвой двенадцатиперстной кишки в основном мужчины, язвой желудочной системы страдают и мужчины, и женщины.

Больные двенадцатиперстной кишки больше, чем больные язвой желудка жалуются на страхи, недоверие, при этом больной чувствует себя беззащитным ребенком и нуждается в помощи взрослых. Но качество жизни высокое. Это связано с тем, что долгое время они не допускают, что имеют проблему ни физиологическую, ни психологическую. Больные язвой обладают ригидностью и не могут отказаться от старых вредных привычек (курение, алкоголь), что и проявляется как самоагрессия.

Ключевые слова и словосочетания: двенадцатиперстная кишка, язва желудка, метод, психотерапия.

PSYCHOSOMATIC DISORDER, ULCER DISEASES AND THEIR PSYCHOLOGICAL FACTORS

LYUDMILA NANUSHYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
International Scientific-Educational Center
Department of Psychology, Master Student
lyudmilanan@gmail.com

Abstract

The article briefly examines the psychological causes of gastric ulcers and duodenal ulcers, which can facilitate the work of a psychotherapist. It is recommended to consider the two diseases mentioned above separately, as their causes are different.

As we can see, the degree of aggression in patients with a gastric ulcer is 25% at a high level and 66.6% on average, and the degree of aggression at a low level is 8.3%.

Patients with duodenal ulcers have an inward-looking aggression level, so patients with gastric ulcers have higher aggression-directed aggression against the outside world.

Thus, summarizing the method of conversation with the subjects' methodologies, we make the following summary of the results: the fact that the mental factors of people with duodenal ulcers and gastric ulcers are different, they also affect differently.

The majority of patients with duodenal ulcers are men, as opposed to patients with gastric ulcers, where the rate of women may be higher.

People with duodenal ulcers have more hidden fears and mistrust people than patients with gastric ulcers, as a result of which the patient feels like a helpless child who needs help from others. In both cases, the quality of life is high, which becomes clear from the method of conversation, as well as from the method of anxiety. It is connected to the fact that they do not admit that they have a problem that has a physical-psychological nature. And they pay attention to the problem only when they are not able to withstand the attacks. The level of rigidity of ulcerative patients does not allow them to give up the previous diet - harmful habits (tobacco, alcohol), which is a manifestation of self-aggression.

Keywords and phrases: stomach ulcer disease, duodenum, method, psychotherapy.

Ներածություն

Մարդու առողջական խնդիրները ուղղակիորեն կապված են նրա բնավորության և հոյզերի հետ: Մարդու բացասական տրամադրվածությունը առաջացնում է տարաբնույթ խանգարումներ: Ոչինչ պատահական չի լինում, ուստի ցանկացած հիվանդություն ունի իր դրդապատճառը, դրանք հասկանալու համար մարդը պետք է դիտարկի իր կյանքի այս կամ այն գործողությունները, կատարի համապատասխան հետևություններ, հասկանա պատճառահետևանքային կապը:

Հոգեսոմատիկան երկարատև պատմություն ունի: Հնագույն բժշկությունը դեռևս պնդում էր հոգեկան և մարմնական առողջության անբաժանելի լինելու մասին: Հոգեսոմատիկան ուսումնասիրում է հոգեբանական գործոնների ազդեցությունը մարմնական հիվանդությունների առաջացման վրա, ուստի այս ուսումնասիրությունները արդիական են դարձնում հոգեսոմատիկայի ուսումնասիրությունը բոլոր ժամանակների համար: Գիտական հոգվածում օբյեկտ է հանդիսանում հոգեսոմատիկա երևույթի ուսումնասիրությունը, իսկ առարկան՝ խոցային հիվանդությունների և հոգեբանական գործոնների միջև հարաբերակցության բացահայտումն է:

Աշխատանքի նպատակն է՝ փորձարարական ճանապարհով ապացուցել խոցային հիվանդությունների առաջացման հոգեժին գործոնները:

Տեսամեթոդական հիմքեր

Գիտական հոգվածի համար տեսամեթոդաբանական հիմք են հանդիսանում՝ Գեորգ Գրոդեկի, Յոհան Հայնրոտի, Ալեքսանդեր Ֆրանցի, Վիլհելմ Ռայխի, Ալեքսանդր Լոուէնի և այլոց մոտեցումները:

Ուսումնասիրության մեթոդներ

Հետազոտության մեջ ուսումնասիրության մեթոդ է հանդիսանում զրույցի մեթոդը. որպես մեթոդիկաներ ծառայել են Այզենկիի հարցարանը, Յունգի տագնապայնության թեստը, Ասինգերի ազդեցիկության թեստը:

Հոգեսոմատիկա (պատմական ակնարկ)

Մարմնային թերապիայի հիմնադիրն է Վիլհելմ Ռայխը. նա սկսել է իր աշխատանքները 1920-ական թվականներին՝ Ջ. Ֆրեյդի դեկավարության ներքո: Նրա առաջնային նորարարություններից էր այցելուի բնավորության ուսումնասիրությունը, այլ ոչ սիմպտոմիկ հետազոտությունը. դա մեծ քայլ էր կլինիկական հոգեբանության մեջ: Ռայխը գտնում էր, որ պետք է անհատին բուժել, այլ ոչ հիվանդությունը:

Դրանով հանդերձ ֆունկցիոնալ, ֆիզիոլոգիական մակարդակում ռայխյան մոտեցումը համապատասխանում է մկանային «պատյանին»: Ռայխը առաջինն էր գիտության պատմության մեջ, որ խոսեց մկանային պատյանների մասին՝ բացասական էմոցիաների դիտանկյունից նայելով: Ռայխյան համակարգի մեկ այլ կետ է՝ «բիոհոգեբանական» կամ վեգետատիվ էներգիան. ներգրգի էներգիան առաջանում է առօրյա հոգեկան կյանքի և վեգետատիվ էներգիայի դիսբալանսից:

Ռայխը առանձնացրեց մարմնի յոթ մասեր, որտեղ համապատասխան «մկանային սեղմումների» դեպքում առաջանում են արգելափակումներ, բնական վեգետատիվ էներգիայի հոսքը վերածվում է «մկանային պատյանի»: Առանձնացվում է յոթ պատյան՝ աչքերի, բերանի, վզի, կրծքի, ստոծանիի, փորի, կոնքերի:

Հատուկ վարժությունների միջոցով և հոգեթերապևտիկ ընթացակարգերի միջոցով հոգեթերապևտը իրականացնում է ազդեցություն այցելուի մարմնի վրա, որն էլ համադրվում է շնչառական վարժությունների հետ [1]: Ռայխյան տեսությունը շարունակել և զարգացրել է վերջինիս այցելուն՝ Լոուէնը, որը հետագայում դարձավ Ռայխի աշակերտը, տեսության տարածողը և զարգացնողը: Նա, ինչպես Ռայխը, ունեցել է դասական բժշկական կրթություն, սակայն Լոուէնը, իր գիտելիքը համադրել է Արևելքի իմաստության և գիտելիքների հետ, որտեղ մարդու և բնության կապը ավելի արմատական և կարևոր է եղել, քան Արևմուտքում, օրինակ՝ յոգան և տայցի-ցուան, որը մարմնի կենդանության և նրա հոգևորության կապն է: Լոուէնը, կարևորում էր նաև շնչառական

վարժությունների դերը, ըստ նրա, երբ մարդը չի ցանկանում արտահայտել որևէ միտք, պահում է իր շնչառությունը [2]:

Խոցային հիվանդության առաջացում

Խոցը՝ որպես հոգեամառիկ հիվանդություն, հարկավոր է տարբերակել աղետամոքսային խնդիրներից, որոնք առաջացել են սոմատիկ գործոնների հետևանքով: Կոնֆլիկտային իրադրությունները, վախը, հուսահատությունը, դեպրեսիվ մտքերը, կոնֆլիկտային վիճակը, խրոնիկ ագրեսիվությունը սրացնում են ստամոքսային խնդիրները, որից էլ առաջանում են էրոզիաներ: Էթիոլոգիական պատճառն այն է, որ խոցային հիվանդությունները կապված են ագրեսիվ իմպուլսների հետ և մարտդական համակարգի պաշտպանական գործոնի ակտիվության հետ [3]: Խոցային հիվանդների մոտ առկա են անձնային հետևյալ առանձնահատկությունները՝ էմոցիոնալ բարձր ֆոն, ամաչկոտություն, նեղացկոտություն, անվստահություն սեփական ուժերի նկատմամբ, բնորոշ է նաև ներասթեփիկ կոնֆլիկտը:

Հետազոտության կազմակերպումը և մեթոդները

Փորձարարական հետազոտություն իրականացնելու համար հետազոտություն է անցկացվել խոցային հիվանդություն ունեցող հիվանդների հետ: Հետազոտությունը անցկացվել է «Արմենիա» հանրապետական բժշկական կենտրոնի պոլիկլինիկայում: Հետազոտությանը մասնակցել է խոցային հիվանդություն ունեցող (ստամոքսի և տասներկուամատնյա աղու) 24 հիվանդ, որոնցից 17-ը տղամարդիկ են, իսկ 7-ը՝ կանայք: Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ստամոքսի և տասներկուամատնյա աղու խոց ունեցող հիվանդների միջև հոգեբանական խնդիրների տարբերությունը:

Հետազոտության համար տեսամեթոդաբանական հիմք են հանդիսանում՝

- ✓ Այգենկիի հարցարանը.
- ✓ Տունգի տագնապայնության թեստը.
- ✓ Ասինգերի ագրեսիվության մակարդակի ախտորոշման մեթոդիկան [4]:

1. Այգենկիի հարցարանը բաղկացած է չորս խումբ հարցերից, որոնցից յուրաքանչյուրն ունի իր արդյունքների համապատասխան բացատրությունը: Հարցարանը պարունակում է հարցեր, որոնք տարբեր հոգեվիճակների նկարագրություն են տալիս: Եթե որևէ վիճակ դիտվում է հաճախ, ապա դրվում է 2 բալ, եթե հազվադեպ է նկատվում, դրվում է 1 բալ, եթե չի համապատասխանում ընդհանրապես, ապա 0 բալ: I խմբի հարցերը վերաբերում են անհանգստությանը, II խումբը՝ ֆրուստրացիային, III խումբը՝ ագրեսիվությանը, IV խումբը՝ ռիզիդությանը:

Բալերի գնահատման մեկնաբանությունը կատարվում է հետևյալ կերպ՝

I Անհանգստություն.

0...7 հանգստություն.

8...14 միջին անհանգստություն, թույլատրելի աստիճան.

15...20 խիստ անհանգստություն, բարձր ինքնագնահատականի բացակայություն.

II Ֆրուստրացիա.

0...7 կայուն եք անհաջողությունների նկատմամբ, չեք վախենում դժվարություններից.

8...14 միջին աստիճան, կա ֆրուստրատիվ վիճակ, նկատվում է ցածր ինքնագնահատական, խուսափում դժվարություններից.

15...20 վախ անհաջողություններից, ֆրուստրատիվ վիճակ կա.

III Ագրեսիվություն.

0... 7 հանգիստ եք և զուսպ.

8... 14 ագրեսիվ և անզուսպ.

15... 20 մարդկանց հետ շփման և աշխատանքի հետ կապված դժվարություններ.

IV Ռիզիդություն.

0...7 ռիզիդություն չկա.

8... 14 միջին աստիճան, վառ արտահայտված.

15...20 վարքի, հայացքների անփոփոխություն [5]:

2. Յունգի տագնապայնության թեստը արժեքավոր է համարվում տագնապայնությունը չափելու համար: Այցելուն ինքն է լրացնում թեստը. դա նրանից քիչ ժամանակ է խլում, գործընթացը պարզ է և կարող է իրականացվել ցանկացած բժշկական իրավիճակներում:

Նախատեսված է տագնապայնությունը՝ որպես կլինիկական վիճակ գնահատելու համար:

Հետազոտվողը պետք է լրացնի երեք րոպեում, 4 բալանի սանդղակից է կատարում իր ընտրությունը, ընդհանուր հանրագումարը կազմում է 80 բալ:

5 կետ վերաբերում է հետազոտվողի հուզական ոլորտին, իսկ 15 կետ վերաբերում է սոմատիկ դրսևորմանը: Թեստը բաղկացած է 20 հարցից, այցելուն համապատասխանաբար նշում է իր տարբերակը, կա 4 աստիճան համակարգ՝ շատ հազվադեպ, հազվադեպ, հաճախ, շատ հաճախ: Համաձայն Յունգի թեստի՝ առողջ, փորձարկվող մարդկանց միջին բալը կազմում է 31.1+/- 1.3: Տագնապայնությունը տվյալ կլինիկական խմբում բաժանվում է հետևյալ կերպ՝ 20-40 բալ՝ ցածր, 41-60 բալ՝ միջին, 61-80 բալ՝ բարձր տագնապայնության աստիճան:

3. Ա. Ասինգերի թեստը հետազոտում է ագրեսիվության մակարդակը շրջապատի հետ: Հարցարանը բաղկացած է 20 հարցից: Յուրաքանչյուր հարց ունի 3 տարբերակ, 1 տարբերակը ընտրելու դեպքում տրվում է 1 բալ, II-ի դեպքում՝ 2, իսկ III-ի դեպքում՝ 3 բալ: Եթե հետազոտվողը 7 կամ ավելի հարցերից հավաքել է մեկական բալ, կամ պակաս 7-ական հարցերից 3-ական բալ, ապա նշանակում է, որ հետազոտվողը ծայրահեղ ներամիտի է, ընդունակ չէ պոռթկումների: Եթե 7 և ավելի հարցերից հավաքել է երեքական միավոր և յոթից պակաս հարցերից երեքական միավոր, ապա ագրեսիվության պոռթկումը կրում է ավելի կործանիչ, քան կառուցողական բնույթ: Նշանակում է, որ հետազոտվողը հակված է չմտածված քայլերի և սուր վեճերի: 35 և ավելի ցածր բալերի դեպքում երևում է, որ հետազոտվողը չափազանց խաղաղասեր է: 36-44 բալերի դեպքում ագրեսիվություն է նկատվում, բայց բավականին հաջողությամբ կարողանում են գնալ կյանքին համընթաց, քանի որ բավականին առողջ փառասիրություն և ինքնավստահություն ունեն: 45 և ավելի բալերի դեպքում անձը չափից ավելի ագրեսիվ է և դրա հետ մեկտեղ հաճախ է անհավասարակշռված և չափից դուրս խիստ լինում այլ մարդկանց նկատմամբ: Սովորաբար նրանք «կառավարչական» բարձունքներին են ձգտում [4]:

2.2 Հետազոտության արդյունքների հոգեբանական վերլուծություն


Այգենկիի թեստ

Տասներկուամտնյա աղու խոց ունեցող հիվանդներ

(հետազոտվողների քանակ, n=12)

Այգենկիի թեստի դիագրամ

Դիագրամ 2.2.1



Ինչպես տեսնում ենք, տասներկուամտնյա աղու խոց ունեցող հիվանդների մոտ անհանգստության աստիճանը բարձր մակարդակում 0% է կազմում, իսկ միջինում՝ 58,3% է, ցածր մակարդակում անհանգստության աստիճանը 41,6% է կազմում:


Ֆրուստրացիայի աստիճանը բարձր մակարդակում 25% է կազմում, միջինում՝ 66,6% է, իսկ ցածր մակարդակում՝ 8,3%:

Ագրեսիվության աստիճանը բարձր մակարդակում՝ 33.3%, միջին մակարդակում 50% է, ցածր մակարդակում՝ 16.6% է:

Ռիզիկոյության աստիճանը բարձր մակարդակում 16.6% է, միջինում՝ 58.3%, իսկ ցածր մակարդակում 25% է կազմում:

*Ստամոքսի խոց ունեցող հիվանդներ
(հետազոտվողների քանակ, n=12)
Այզենկիի թեստի դիագրամ*

Դիագրամ 2.2.2



Ինչպես տեսնում ենք, ստամոքսի խոց ունեցող հիվանդների մոտ անհանգստության աստիճանը բարձր մակարդակում 0% է կազմում, իսկ միջինում՝ 58,3% է, ցածր մակարդակում անհանգստության աստիճանը 41,6% է կազմում:

Ֆրուստրացիայի աստիճանը բարձր մակարդակում 8.3% է կազմում, միջինում՝ 75% է, իսկ ցածր մակարդակում՝ 16.6% է:

Ագրեսիվության աստիճանը բարձր մակարդակում՝ 41.6%, միջին մակարդակում 50% է, ցածր մակարդակում՝ 8.3% է:

Ռիզիկոյության աստիճանը բարձր մակարդակում 0% է, միջինում՝ 58.3%, իսկ ցածր մակարդակում 41.6% է կազմում:

Այսպիսով՝ մեկնաբանենք մեթոդի արդյունքները, համեմատենք ստամոքսի և տասներկուամատնյա աղու խոց ունեցող հիվանդների մոտ խոց առաջացնող հոգեծին գործոնների ազդեցությունները:

Անհանգստության աստիճան. ինչպես տեսնում ենք, անհանգստության աստիճանը ստամոքսի և տասներկուամատնյա աղու խոց ունեցող հիվանդների մոտ 0% է կազմում: Սա բնորոշվում է նրանով, որ խոցային հիվանդների մոտ կյանքի որակը բարձր է, նրանք երկար ժամանակ չեն անհանգստանում իրենց առողջական խնդրով (բժշկի այցելություն, դիետա և այլն), որն էլ հանգեցնում է խնդրի բարդեցման:

Միջին մակարդակում տասներկուամատնյա աղու խոց ունեցող հիվանդների մոտ անհանգստության մակարդակը ավելի բարձր է (58.3%), քան ստամոքսի խոցով հիվանդների մոտ (41.6%): Դա պայմանավորված է նրանով, որ տասներկուամատնյա աղու խոց ունեցող հիվանդները

ավելի շատ, քան ստամոքսի խոց ունեցող հիվանդները հակված են խուճապի մատնվելու այն ժամանակ, երբ պետք է որոշում կայացնեն կյանքի այս կամ այն կարևոր իրավիճակներում:

Ֆրուստրացիայի աստիճանը տասներկուամտնյա աղու խոց ունեցող հիվանդների մոտ (25%) ավելի բարձր է, քան ստամոքսի խոցի դեպքում (8.3%), միջին մակարդակում տասներկուամտնյա աղու խոց ունեցող հիվանդների մոտ 66.6% է, իսկ ստամոքսի խոցի դեպքում՝ 75%: Ֆրուստրացիայի բարձր աստիճանը տասներկուամտնյա աղու խոցի դեպքում բացատրվում է նրանով, որ վերջիններս ավելի շատ, քան ստամոքսի խոց ունեցող հիվանդները ունեն պասիվ պահվածք, միևնույն ժամանակ նրանք ունեն առաջ շարժվելու ձգտում, որը պահանջում է ուժերի կենտրոնացում, ուղեկցվում է էներգիայի կորստով, որն էլ հանգեցնում է ֆրուստրացիայի: Նրանք նաև դժգոհում են սեփական անձից՝ ձգտելով ապացուցել աշխարհին իրենց պիտանելի լինելը:

Ագրեսիվության աստիճանը չափելիս բարձր մակարդակում՝ տասներկուամտնյա աղու խոց ունեցող հիվանդների մոտ ագրեսիվության մակարդակը 33.3% է կազմում, իսկ ստամոքսի խոցի դեպքում՝ 41.6%, միջին մակարդակում երկուսի դեպքում էլ 50% է:

Տասներկուամտնյա աղու խոցի դեպքում ագրեսիվության մակարդակը շրջապատի հանդեպ չի դրսևորվում. վերջինիս մոտ ինքնագրեսիա է նկատվում, ինչպես նաև ինքնաքննադատություն, կամային ագրեսիա, իսկ ստամոքսի խոցով հիվանդների մոտ ագրեսիա է նկատվում շրջապատի հանդեպ:

Ռիզիկոյության աստիճանը տասներկուամտնյա աղու խոց ունեցող հիվանդների դեպքում ավելի բարձր է (6.6%), քան ստամոքսի խոց ունեցող հիվանդների դեպքում (0%): Միջինում երկուսի ցուցանիշները հավասար են (58.3%):

Խոցային հիվանդները հիմնականում չեն կայացնում սեփական որոշումներ, նրանք ակնկալում են շրջապատի կողմից հոգատարություն, ուզում են արժանանալ շրջապատի կողմից պաշտպանվածության և առանց դրա իրենց զգում են անպաշտպան, դրա հետևանքով վախենում են փոփոխություններից: Այսինքն՝ կարող ենք ասել, որ տասներկուամտնյա աղու խոց ունեցող հիվանդների մոտ ինքնուրույն դառնալու, սեփական որոշումները կայացնելու ձգտումը թաքնված է ավելի խորը՝ ռիզիկոյության արտաքին դրսևորումներով:

Ցունգի տագնապայնության թեստ


Տասներկուամտնյա աղու խոց ունեցող հիվանդներ

Ցունգի տագնապայնության թեստի աղյուսակային արտահայտություն

(հետազոտվողների քանակ, n=12)

(հետազոտվողների քանակ, n=12)

Դիագրամ 2.2.3




Ինչպես տեսնում ենք, տասներկուամտնյա աղու խոց ունեցող հիվանդների մոտ տագնապայնության աստիճանը բարձր մակարդակում 0% է կազմում, իսկ միջինում՝ 66.6%, ցածր մակարդակում տագնապայնության աստիճանը 33.3% է կազմում:

Ստամոքսի խոց ունեցող հիվանդներ

(հետազոտվողների քանակ, n=12)

Յունգի տազնապայնության թեստի դիագրամ
Դիագրամ 2.2.4



Ինչպես տեսնում ենք, ստամոքսի խոց ունեցող հիվանդների մոտ տազնապայնության աստիճանը բարձր մակարդակում 0% է կազմում, իսկ միջինում՝ 58.3% է, ցածր մակարդակում տազնապայնության աստիճանը 41.6% է կազմում:

Այսինքն՝ տազնապայնության բարձր մակարդակը տասներկուամտնյա աղու խոցի և ստամոքսի խոցի դեպքում 0% է կազմում, իսկ միջին մակարդակում տասներկուամտնյա աղու խոց ունեցող հիվանդների մոտ տազնապայնությունը ավելի բարձր է (66.6%), քան ստամոքսի խոց ունեցող հիվանդների մոտ (58.3%):


Այսպիսով՝ կարող ենք կատարել հետևյալ մեկնաբանությունը. այն, որ խոցային հիվանդների մոտ տազնապայնությունը բարձր է, սակայն այն արտաքին դրսևորում չունի, ներքին տազնապայնություն է նկատվում խոցային հիվանդությունների ժամանակ: Դա որևէ բան չհասցնելու, անօգնական մնալու և այլ երևույթներ են, որոնք տազնապայնություն են առաջացնում, սակայն տազնապայնության աստիճանը միջին մակարդակում տասներկուամտնյա աղու խոց ունեցող հիվանդների մոտ ավելի բարձր է, քան ստամոքսի խոց ունեցողների մոտ: Տասներկուամտնյա աղու խոց ունեցողները ավելի զգայուն են, ունեն ներքին վախեր, որոնք կապված են լինում կյանքի տարբեր բնագավառների հետ, որը կապված է սեփական ուժերի նկատմամբ անվստահության հետ:

Ա. Ասինգերի թեստ

Տասներկուամտնյա աղու խոց ունեցող հիվանդներ

Ասինգերի թեստի դիագրամ

Դիագրամ 2.2.5



Ինչպես տեսնում ենք, տասներկուամտնյա աղու խոց ունեցող հիվանդների մոտ ագրեսիվության աստիճանը բարձր մակարդակում 8.3% է կազմում, իսկ միջինում՝ 50%, ցածր մակարդակում ագրեսիվության աստիճանը 41.6% է կազմում:

Եզրակացություն

Ուսումնասիրելով և վերլուծության ենթարկելով խոցային հիվանդությունների հոգեծին գործոնները՝ առաջ ենք քաշել դրույթներ, որոնք ապացուցվեցին հետազոտական աշխատանք կատարելիս: Մեր հետազոտությունների արդյունքում եկանք հետևյալ եզրակացությունների և ապացուցեցինք վարկածը:

1. Ըստ Յունգի տազնապայնության մեթոդիկայի՝ խոցային հիվանդների մոտ տազնապայնության աստիճանը բարձր է (միջին մակարդակում՝ տասներկուամտնյա աղու խոց 58.3%): Նրանց մոտ առկա է տազնապայնության թաքնված դրսևորում, նրանք թաքցնում են իրենց վախերը և անվստահությունը, որի արդյունքում իրենց զգում են անպաշտպան երեխայի նման, որը ունի շրջապատի օգնության կարիքը:

2. Ըստ Այզենկի մեթոդիկայի՝ ապացուցվեց, որ խոցային հիվանդների ռիզիկոյության մակարդակի և ինքնաագրեսիայի (թե՛ ստամոքսի, թե՛ տասներկուամտնյա աղու խոցի դեպքում, միջին մակարդակում՝ հավասարապես 50% ագրեսիա, 58.3 % ռիզիկոյություն) միջև գոյություն ունի կապ, որը նրանց չի թողնում, որ հրաժարվեն նախկին սննդակարգից և վնասակար սովորություններից (ծխախոտ, ալկոհոլային խմիչքներ), որն էլ ինքնաագրեսիայի դրսևորումներից է: Ռիզիկոյության դրսևորումներից է այն, որ նրանց պարտադրում են այլոց մտքերը, իսկ նրանք չեն կարողանում պաշտպանել սեփական հայացքները:

3. Ըստ Ասինգերի մեթոդիկայի՝ եկանք այն եզրահանգման, որ տասներկուամտնյա աղու խոց ունեցողների մոտ նկատվում է ինքնաագրեսիա (բարձր մակարդակում տասներկուամտնյա աղու խոց ունեցողների մոտ 8.3%. նրանք չեն կարողանում իրենց ագրեսիան տարածել աշխարհի վրա, այն ուղղվում է սեփական անձի վրա, իսկ ստամոքսի խոցի դեպքում 25%), նրանք չեն կարողանում իրենց ագրեսիան տարածել աշխարհի վրա, այն ուղղում են սեփական անձի վրա, իսկ ստամոքսի խոցի դեպքում ագրեսիան ավելի շատ ուղղված է աշխարհի վրա:

4. Ըստ Այզենկի մեթոդիկայի՝ եկանք այն եզրահանգման, որ տասներկուամտնյա աղու խոց ունեցողները ավելի շատ, քան ստամոքսի խոց ունեցողները ունեն թաքնված վախեր, անհանգստություններ (միջին մակարդակում տասներկուամտնյա աղու խոց ունեցողների մոտ 58.3% հավասարապես, իսկ ստամոքսի խոցի դեպքում 41.6% ռիզիկոյություն):

5. Ըստ Այզենկի մեթոդիկայի՝ ապացուցվեց, որ տասներկուամտնյա աղու խոց ունեցող հիվանդների մոտ ֆրուստրացիայի ժամանակ (տասներկուամտնյա աղու խոց 25%, ստամոքսի խոց 8.3%) ավելի շատ է նկատվում ճախողվածություն, անիքնուրունություն:

Գրականության ցանկ

1. Вильгельм Райх, «Анализ характера», /Пер. с англ. Е. Поле.- «Апрель Пресс», «Эксмо-Пресс», 2000,-528стр.
2. Психология тела: биоэнергетический анализ тела / Пер. с англ. С. Коледа.- М.: Институт Общегуманитарных Исследований, 2002,-208 стр.
3. Sapolsky R.M. Why zebra don't get ulcers. New York: Oxford univ., Press. 1994
4. Ս. Արզումանյան, Ս. Մկրտչյան, Վ. Սարգսյան Կիրառական հոգեբանության պրակտիկում, հրատարակչություն «Զանգակ», 392 էջ
5. Сандоморский М. Е. Психосоматика: классика и современность или нейрофизиологическое програмирование. Интервью М. Сандомирского в Институте семейной и групповой психотерапии.

ՀՈԳԵԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ ԵՎ ԱՐՏ-ԹԵՐԱՊԵՎՏԻԿ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԱՐԻՆԵ ԱՅՎԱԶՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
գիտակրթական միջազգային կենտրոն
հոգեբանության ամբիոն, մագիստրանտ

*Նվիրվում է ՀՀ ԳԱԱ դասախոս,
հոգեբանական գիտությունների թեկնածու Սյուզան Սարգսյանի հիշատակին:*

Համառոտագիր

Ներկայումս լայն տարածում գտած «արտ-թերապիա» եզրույթը հոգեբանության մեջ ներմուծվել է 1938 թ. Ադրիան Հիլլի կողմից: Ինչպես հայտնի է, հոգեթերապիայի այս ձևը հիմնված է արվեստի ու անձի ստեղծագործական գործունեության համադրման վրա:

Արտ-թերապիայի հիմնական նպատակը անձի ներդաշնակ զարգացումն է ինքնաբացահայտման և ինքնարտահայտման միջոցով: Դասական հոգեվերլուծողների կարծիքով՝ արտ-թերապիայի հիմնական կարգավորիչ մեխանիզմը սուբլիմացիան է: Հոգեվերլուծության մեջ, այսպիսով, արտ-թերապևտիկ ներգործության միջոցով հնարավոր է դառնում ակտիվացնել երևակայության իմացական գործընթացը, որն ուղղված է անգիտակցականի և գիտակցականի աֆեկտիվ փոխներգործությանը: Դրան զուգընթաց կարևորվում է նաև անձի ստեղծագործական գործընթացը, որը միտված է ինչպես սեփական Ես-ի ինքնաբացահայտմանը, այնպես էլ շրջակա միջավայրի ճանաչողությանը, դրանում Ես-ի ինտեգրմանն ու սոցիալականացմանը: Իր զարգացման սկզբնական շրջանում արտ-թերապիան արտացոլում էր հիմնականում հոգեվերլուծական դպրոցի հայացքներ, որոնց համաձայն՝ անձի գեղարվեստական գործունեությունը գերազանցապես դիտվում էր որպես հոգեկան գործընթացների չգիտակցված արտահայտում:

Ինչպես հոգեթերապևտիկ մյուս ուղղությունները, այնպես էլ արտ-թերապիան ունի իր հետազոտական և հոգեշտկողական խնդիրները՝ ուղղված անձի ամբողջական Ես-ի, նրա զգացմունքների և մտքի միջև խաթարված կապի վերականգնմանը:

Կարևորելով արտ-թերապևտիկ ներգործության հնարավորությունները անձի Ես-ի կառուցվածքի վրա, սեփական հնարավորությունների և կարողությունների բացահայտմանը նպաստող արտ-թերապիայի հոգեշտկող մեխանիզմները, հողվածում բացահայտվում են հոգեվերլուծության ազգային արմատները և դրանց արտ-թերապևտիկ ներգործության հնարավորությունները:

Հոգեբանական գիտության ձևավորման և հետագա զարգացման շարժընթացը արդյունք է վաղ և զարգացած միջնադարյան շրջանի շատ փիլիսոփաների մտքերի համակարգմանն ու համադրման: Կարևոր է այս ընթացքում բացահայտել նաև մեր ազգային գիտական մտքի ժառանգությունը և վեր հանել առ այսօր մեծ կարևորություն ներկայացնող հոգեվերլուծության ազգային հիմքերը:

Բանալի բառեր և բառակապակցություններ. սահմանում, երևույթ, արտ-թերապիա, մետա-լեզու, հոգեվերլուծականություն:

НАЦИОНАЛЬНЫЕ КОРНИ ПСИХОЛИНГВИСТИКИ И ОСОБЕННОСТИ АРТ-ТЕРАПЕВТИЧЕСКОГО ВОЗДЕЙСТВИЯ

МАРИНЕ АЙВАЗЯН

Национальная академия наук Республики Армения
Международный научно-образовательный центр
магистрат кафедры психологии

*Посвящается памяти
кандидата психологических наук,
преподавателя МНОЦ НАН РА С. Саргсян*

Аннотация

Термин «арт-терапия», который в настоящее время широко распространен в психологической науке, был введен в психологию в 1938 году Адрианом Хиллом. Как известно, этот тип психотерапии основан на исследовании творческой деятельности личности.

Основная цель арт-терапии состоит в том, чтобы способствовать гармоничному развитию человека посредством самооценки и самовыражения. Согласно классическим психоаналитикам, основным регуляторным механизмом арт-терапии является сублимация. Таким образом, через арт-терапевтическую деятельность можно усилить когнитивный процесс воображения, который направлен на аффективное взаимодействие бессознательного и сознания личности. В то же время творческая деятельность человека, которая нацелена на самоотверженность и самостоятельность, также важна в процессе арт-терапии. Первоначально арт-терапия отражала мнение психоаналитической школы, согласно которой художественные виды деятельности человека в основном считались неосознанными психическими процессами.

Как и другие психотерапевтические направления, арт-терапия имеет свою собственную сферу исследований и соответствующую научную проблематику для восстановления связи между человеком, его чувствами и разумом.

Выделением возможностей арт-терапевтического воздействия на структуру Я-образа человека, психокоррекционных механизмов его собственных возможностей и способностей в статье выявляются национальные корни зарождения психолингвистики и ее способность к арт-терапевтическому воздействию.

Процесс формирования психологической науки и дальнейшего развития является результатом координации и соотнесения мыслей многих философов в раннем и развитом средневековье. С этой точки зрения важно изучить наследие нашего национального и научного мышления в течение этого периода времени и выявить национальные основы зарождения психолингвистики, представляющие большой интерес по сей день.

Ключевые слова и словосочетания: определение, феномен, арт-терапия, метаязык, психолингвистика.

NATIONAL ROOTS OF PSYCHOLINGUISTICS AND FEATURES OF ART-THERAPEUTIC IMPACT

MARINE AYVAZYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
International Scientific-Educational Center
Department of Psychology, Master Student

*Dedicated to PhD S. Sargsyan's memory,
a lecturer at ISEC, NAS RA*

Abstract

The term "art therapy", which is currently widespread in psychological science, was introduced into psychology in 1938 by Adrian Hill. As you know, this type of psychotherapy is based on the study of the creative activity of the personality.

The main goal of art therapy is to contribute to the harmonious development of a person through self-assessment and self-expression. According to classic psycho-analytics, the main regulatory mechanism of art therapy is sublimation. Thus, through art-therapeutic activities, it is possible to strengthen the cognitive process of imagination, which is aimed at the effective interaction of the unconscious and consciousness of the person. At the same time, the creative activity of a person who is focused on dedication and independence is also important in the process of art therapy. Initially, art therapy reflected the opinions of the psycho-analytic school, according to which the artistic activities of the person were mainly considered unconscious mental processes.

Like other psychotherapeutic directions, art therapy has its sphere of research and relevant scientific issues to restore the connection between a person, his feelings, and his mind.

Allocation of the possibilities of art-therapeutic effect on the structure of a personal I-image, psycho-correction mechanisms of his capabilities and abilities, the article detects the national roots of the initiative of psycholinguistics and its ability to art therapeutic effects.

The process of forming psychological science and further development is the result of coordination and correlation of the thoughts of many philosophers in the early and developed medieval periods. From this point of view, it is important to identify the legacy of our national and scientific thinking during this period of time and reveal the national institutions of psycholinguistics, which are of great interest to this day.

Keywords and phrases: definition, phenomena, art-therapy, meta-language, psycholinguistics.

Ներածություն

*«Սպիտակը առհասարակ գույն է՝ տեսողությունը լայնացնող,
իսկ սևը առհասարակ գույն է՝ տեսողությունը նեղացնող»
(Դավիթ Անհաղթ):*

Հոգելեզվաբանության զարգացման արդի միտումները ներկայումս բազմաբնույթ են իրենց դրսևորումներում և արտացոլում են անձի և հասարակությունների զարգացման բազմավեկտոր, գլոբալիզացիոն գործընթացները: Նման իրողություններում առանձնահատուկ կարևորություն է ներկայացնում հայ ազգային մտքի վերահիմաստավորումը և հայ մեծերի աշխատությունների հոգելեզվաբանական տեսանկյան արժևորումը:

Դեռևս վաղ միջնադարից հայ աստվածաբանները և փիլիսոփաները քննել են մարդու էությունը, մարմնական և հոգևոր պահանջումներն ու առանձնահատկությունները, ներկայացրել են անձի ռեֆլեքսիվ բնույթը և հասարակության մեջ անձի կենսագործունեության հիմնական դրսևորումները: Ստորև վերլուծվում են անձի վրա ներգործելու Դավիթ Անհաղթի և Գրիգոր Նարեկացու հոգելեզվաբանական մոտեցումները:

Տեսական մաս

Գաղտնիք չէ, որ Դավիթ Անհաղթի երկերն առ այսօր պահպանում են իրենց արդիականությունն ու հետաքրքրությունը: Թեև հայ հանճարի մտքերը բազմիցս մեկնաբանվել և ուսումնասիրվել են, այդուհանդերձ, դրանք բավարար կերպով չեն լուսաբանվել հոգեբանական գիտակարգում, չեն վերլուծվել նրա ստեղծագործությունների սոցիալ-հոգեբանական, լեզվական և մշակութային ասպեկտները: Այնինչ, Դավիթ Անհաղթի գիտական ժառանգության համեմատական և հոգելեզվաբանական վերլուծությունը թույլ է տալիս ոչ միայն պատկերացում կազմել իր ժամանակի ոգու, լեզվամտածողության և անձի կերպարի մասին, այլև ներդնելու հայտնի հայ փիլիսոփայի մտքերը ներկայիս հոգելեզվաբանության տեսական մոտեցումներում, ինչպես նաև՝ հոգեթերապիայի պրակտիկ ոլորտում [7]:

Հոգելեզվաբանական տեսանկյունից անհրաժեշտ է առանձնացնել Դավիթ Անհաղթի ներդրումն աշխարհի ճանաչելիության և աշխարհընկալման գործընթացներում: Մասնավորապես, իդեալիստական պատկերացումների ստորադասումը և աշխարհի օբյեկտիվ արտացոլումը գիտակցության մեջ հիմք է հանդիսացել հետագա բարոյագիտական և սոցիալ-իրավական նորմերի ձևավորմանն ու հայկական գիտական մտքի զարգացմանը: «Սահմանք իմաստասիրութեան» և «Մեկնութիւն ի վերլուծական Արիստոտելի» երկերը վառ օրինակ են միջնադարյան գրավոր խոսքի կառուցվածքայնացման և համակարգման, երբ փորձ է արվում աշխարհի մասին դատողությունները ներկայացնելու սահմանումների տեսքով: Աստիճանաբար հնարավոր է դառնում նաև դրա շնորհիվ բյուրեղացնել ոչ միայն ճանաչողության տեսությունների լեզվաբանական յուրահատկություններն, այլև ստեղծել լեզվագիտական տերմինաբանության ազգային հիմքերը [4]:

Չափազանց կարևոր են Դավիթ Անհաղթի գաղափարները հոգեկան երևույթների մասին, երբ կյանքի անընդհատության հարցադրումներն արտահայտվում են ոչ միայն Աստծո գոյության փաստով, այլև անձնային հատկությունների, բնավորության, հուզական աշխարհի և լեզվամտածողության միջոցով: Հենց այստեղ է հայ փիլիսոփան հանգում անձի կարողությունների և աշխարհընկալման զարգացման «պարզից բարդի» կամ «տարրականից համակարգայինի» անցնելու լեզվական և տրամաբանական գաղափարին: Զգայարանների միջոցով նյութի մասին պարզագույն տեղեկատվության ընկալումից հետո հեղինակը հնարավոր է համարում ձևի ճանաչումը որպես «առարկայորեն գոյություն ունեցող նյութ», որից հետո էլ ձևակերպում է բովանդակության «աննյութ» ճանաչման լեզվական սահմանները: Դա ոչ միայն վերացական մտածողության բնութագրման, այլև միջնադարյան գիտական մտքի համակարգման փորձ էր, որն էլ հետագա հոգելեզվաբանության տեսա-մեթոդաբանական մոտեցումների հիմքում դրվեց արդեն նորագույն ժամանակներում՝ իբրև անալիզի/սինթեզի/մենթալ բառապաշարի մեթոդական բաղադրիչներ:

Չափազանց կարևոր է Դավիթ Անհաղթի կողմից տրված «սահմանման» բովանդակային վերլուծությունը, որը հանգում է սահմանման միջոցով իրի կամ երևույթի բաղադրիչների տարբերակմանը: Այսպիսով՝ դրվեց նաև սահմանման հանդեպ ինֆորմատիվության գիտական պահանջը, որն իր մեջ միավորեց ձևը և բովանդակությունը: Արդյունքում կարող ենք փաստել բառի սեմանտիկ դաշտի ձևավորման ազգային ակունքների գոյության և սիլլոգիզմի առաջացման նախադրյալների մասին:

Հետաքրքիր է նաև Դավիթ Անհաղթի կարծիքը սահմանումների ստեղծման և կիրառման հոգեբանական ասպեկտների վերաբերյալ: Հայ փիլիսոփան երևույթների շուրջ ստեղծված սահմանումները միանշանակ կերպով կապում է անձի պահանջումների հետ, որոնց բավարարումը ենթադրում է այնպիսի իրավիճակ, երբ անձը կարողանում է երևույթների մասին խոսել հակիրճ և դիպուկ սահմանումների միջոցով, ինչի շնորհիվ սահմանման վերբալ արտահայտությունը հաղորդում է բառի էությունը և, միաժամանակ, որոշ չափով քողարկում է այն, թույլ չի տալիս, որպեսզի հաղորդակցման ընթացքում տվյալ բառը կամ երևույթը ամբողջությամբ ներկայանան իրենց իմաստով [2]:

Դավիթ Անհաղթի ողջ փիլիսոփայությունը կառուցվում է բարոյագիտական և հոգեբանական տեսանկյուններից: Նա մանրամասնորեն բնութագրում է փիլիսոփայի անձնային հատկությունները, մատնանշում փիլիսոփայի անձի կարևորագույն տարբերակիչ հատկանիշները, որոնք, ստորադասելով գիտելիքի պարզագույն կուտակումն ու փոխանցումը, ներկայանում են այնպիսի անձնային որակների շնորհիվ, ինչպիսիք են՝ հոգևոր ներդաշնակությունը, հասարակայնորեն կարևորվող վարքի դրսևորումները, «աննյութ» երևույթների բովանդակության վերաբերյալ սահմանումներով դատողություններ կազմելու կարողությունը և այլն:

Ինչպես նշել է հունաբան դպրոցի պատմության հայտնի վերլուծաբան ակադեմիկոս Հ. Մանանդյանը, Դավիթ Անհաղթի երկերը, ինչպես հունաբան դպրոցի շատ ներկայացուցիչների, այնքան արվեստական և արտասովոր են, որ անմատչելի կամ անհասկանալի են թվում անգամ ոլորտի մասնագետների համար: Այս երևույթը խոսում փաստ է այն բանի, որ դեռևս վաղ միջնադարում Դավիթ Անհաղթի կողմից փորձ է արվել ձևավորելու գիտական մտքի որոշակի մետալեզու, որն իր հոգեբանական ներգործությամբ էր թիրախավորում ընթերցողին: Երկերի մեծ մասը, լինելով երկլեզու՝ հայերեն և հունարեն, ըստ ամենայնի, միտված է եղել հայախոս և հունախոս հասարակություններին միաժամանակ, ինչն, իր հերթին, ևս մեկ հետաքրքիր հոգելեզվական նշանակություն է հաղորդում հայ փիլիսոփայի գիտական գործունեությանը [1]:

Հոգելեզվաբանության ազգային արմատների ուսումնասիրությունն անհնար է իրականացնել առանց վերլուծելու Գրիգոր Նարեկացու փիլիսոփայական, երաժշտական և աստվածաբանական ժառանգության հոգեբանական տեսանկյունները: Գաղտնիք չէ, որ Գրիգոր Նարեկացու հանրաճանաչ ստեղծագործությունը՝ «Մատեան ողբերգութեան» պոեմը մեծ տարածում է գտել թե իր ժամանակակից և թե ներկայիս հասարակություններում՝ հաճախ կրելով «Նարեկ» անվանումը: «Նարեկ»-ի հոգեբանական ներգործության մասին հետազոտությունները թերևս աչքի են ընկնում զանազան շեշտադրումներով, սակայն կարևոր ենք համարում նաև անդրադարձ կատարել Գրիգոր Նարեկացու աշխատության հոգելեզվաբանական հարցադրումներին:

Գրականության պատմության մեջ Նարեկացին առաջինն էր, որ լայնորեն գործածել է բաղաձայնայնությամբ՝ ալիտերացիան, որն առանձնահատուկ ինչեղություն է հաղորդում ամբողջ պոեմին: Այդ մեթոդի կիրառությունը ունեցավ մեծ հոգեբանական ազդեցություն և հաջորդիվ սկսեց լայնորեն կիրառվել հետագա բանաստեղծների կողմից [3]: Բաղաձայնայնության նման հմուտ օգտագործումն, անշուշտ, ունեցավ արտ-թերապևտիկ նշանակություն ևս, քանի որ մեկ ստեղծագործության մեջ միավորեց բանաստեղծական և երաժշտական տարրեր՝ շեշտակի դարձնելով այն միտքը, որը հեղինակը ցանկանում է փոխանցել կարդացողին: Նշենք նաև, որ արտ-թերապևտիկ հոգեշտկման տարրեր պարունակող հոգեբանական փորձարարական հետազոտության ժամանակ, որն իրականացվել է մեր կողմից անձի ռեֆլեքսիայի, լիցքաթափման և ինքնազնահատականի բացահայտման նպատակով, Նարեկացու Մատյանի ընթերցանության ավարտից հետո փորձարկվող անձինք, որպես կանոն, մատնանշում էին պոեմը յուրովի կամ նորովի հասկանալու հանգամանքը: Հաճախ փորձարկվողների պատասխան արձագանքը ձեռք էր բերում պոեմի

մեկնաբանման իմպերատիվ բնույթ՝ այն արժևորելու «հեղինակային իրավունքի» դրսևորումներով: Այս արդյունքներն, անկասկած, վկայում են պոեմի հոգելեզվաբանական հզոր ներուժի, անձի ներաշխարհի վրա ազդելու համակարգային հնարավորության մասին: Ներազդման համակարգայնության վերաբերյալ տվյալները, սովորաբար, հավաքագրվել են կոնտենտ-վերլուծության մեթոդի կիրառման շնորհիվ, երբ համեմատվել են պոեմի վերաբերյալ անձանց վերբալ արձագանքներն ու գնահատականները: Արդյունքում պոեմի ունկնդրման փաստը մեկնաբանվում էր ոչ միայն որպես «ես կարդացի պոեմը» բառերի միջոցով, այլև՝ «ես լսեցի այն», «ես վայելեցի այն», «ես երգի նման լսեցի», «ես ունեցա միաժամանակյա տարբեր զգացողություններ», «ես նոր գույներ պատկերացրի» և այլն: Կարող ենք փաստել, որ Նարեկացու պոեմի արտ-թերապևտիկ ներգործությունը պայմանավորված է միաժամանակ տարբեր զգայությունների ակտիվացման, դրանց համադրման արդյունքում նոր ընկալման ձևավորման գործընթացով, երբ սովորական բառերը, թվում է թե, նոր տիպի տեղեկատվություն են հաղորդում, իսկ մեղեդու նման լավող հնչյունները ձեռք են բերում նոր բառերի իմաստներ: Պատահական չէ, որ Մանուկ Աբեղյանը Նարեկացուն համարում էր առաջին հոգեբույժը, իսկ նրա *Մապեանը*՝ հոգեբուժության առաջին գիրքը [1]:

Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունների արտ-թերապևտիկ ներգործության ևս մեկ առանձնահատկություն կարելի է համարել անձի ռեֆլեքսիան, ինքնադիտման և ներհայեցողության միջոցով աշխարհընկալման ձևավորումը և ինքնաճանաչողության զարգացումը:

Եզրակացություն

Այսպիսով՝ ուսումնասիրելով հոգելեզվաբանության ազգային խորը արմատները, որոնք դիտարկել ենք Դավիթ Անհաղթի և Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունների օրինակով, կարող ենք եզրակացնել, որ արտ-թերապևտիկ ժամանակակից մեթոդները և տեխնիկաները նպատակահարմար է հարստացնել ավանդական, ազգային լեզվամտածողությամբ հարուստ գրական երկերի նմուշներով՝ նախապես մշակելով դրանց կիրառման և վերձանման որոշակի մեթոդաբանություն: Մասնավորապես, Դավիթ Անհաղթի երկերի հոգելեզվաբանական ուսումնասիրությունը թույլ է տալիս առաջ քաշել «շրջակա միջավայրի երևույթների սահմանման» մեթոդական հնարքը, որը թույլ է տալիս տրամաբանական հակիրճ ձևակերպումների միջոցով ձևավորել որոշակի վերաբերմունք և պատկերացում աշխարհի մասին: Այդ սահմանումների հետագա արժևորումը երաժշտական, նկարչական և այլ արտ-թերապևտիկ մեթոդական հնարքներին զուգընթաց հնարավորություն կընձեռի ուսումնասիրվող երևույթի բազմաբովանդակ և լիարժեք ընկալմանը:

Հոգելեզվաբանական հաջորդ մեթոդական հնարքը կարող է ձևավորվել Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունների ուսումնասիրության արդյունքներով, մասնավորապես, երևույթների, ինչպես նաև սեփական Ես-ի ճանաչողությանը միտված արտ-թերապևտիկ աշխատանքներում հնարավոր է դառնում կիրառել այնպիսի մեթոդիկաներ, որոնք թույլ կտան համադրել տարբեր զգայություններն ու իրականացնել համապատասխան հոգեշտկող աշխատանքներ [5; 6]:

Գրականության ցանկ

1. Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք 1, Ե., 1944:
2. Ս. Արևշատյան, Դավիթ Անհաղթը՝ հին Հայաստանի ականավոր փիլիսոփա, Երևան, 1980:
3. Հ. Միրզոյան, Նարեկացագիտական հետազոտություններ (հոդվածների ժողովածու), Ե., ԵՊՀ, 2010:
4. Белянин В. П., Психологическое литературоведение, М., 2006.
5. Леонтьев А. А., Основы психолингвистики, М., 1997.
6. Пищальникова В. А., История и теория психолингвистики. Курс лекций. Ч. 1-3, М., 2005-2010.
7. Рудестам К. Групповая психотерапия. — СПб.: Питер, 2000

**ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՐԱԽՈՍՈՒԹՅԱՆԸ,
ՀՐԱՊԱՐԱՐԿԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆԸ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՐԴԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

ՄԱՐԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Հայկական պետական մանկավարժական համալսարան
հոգեբանության ամբիոն, դոցենտ
հոգեբանական գիտությունների թեկնածու
marine.mikaelian@ysu.am

Համառոտագիր

Ուսանողական գիտական աշխատանքների պաշտպանության և գնահատման չափանիշների մեթոդական հիմնահարցերին իրենց ուսումնասիրություններում անդրադարձել են Ն. Ի. Սորոկինը (1986), Ի. Ն. Կուզնեցովը (1998, 2000), Գ. Խ. Վալեյևը (2002), Ա. Ֆ. Անուֆրիյևը (2002), Ա. Ա. Ուլարովը (2003), Ս. Վ. Զանևսկին (2015):

Ուսանողական գիտահետազոտական աշխատանքները գրախոսվում են գիտական ղեկավարի և պաշտոնական ընդդիմախոսի կողմից: Գրախոսությունն ունի երեք հիմնական մասեր՝ նկարագրական, գնահատողական, եզրափակիչ:

Ուսանողների աշխատանքներում հանդիպող հիմնական թերություններից են հետազոտության թեմայի չափազանց լայն ձևակերպումը, հստակ հիմնավորումների բացակայությունը, աշխատանքի բանաքաղաքական (կոմպիլյատիվ) բնույթը, մեջբերված սկզբնաղբյուրների հղումների բացակայությունը, հետազոտության արդյունքների ոչ բավարար վերլուծությունը և մեկնաբանությունը:

Հետազոտությանը ներկայացվող պահանջներից է գիտական նորույթի, աշխատանքի կիրառական նշանակության առկայությունը, ստացված արդյունքների ներդրման հնարավորությունը պրակտիկ ոլորտում:

Աշխատանքի հրապարակային պաշտպանությունը պատշաճ իրականացնելու համար երիտասարդ հետազոտողները պետք է մանրակրկիտ նախապատրաստեն իրենց ելույթը: 7-10 րոպե տևող ելույթի համար անհրաժեշտ է տպագիր շարադրանքի 5 էջ: Զեկույցի ներածական մասում անհրաժեշտ է գրավել ունկնդիրների ուշադրությունը, նրանց հետ կապ հաստատել: Ներածության մեջ բնորոշվում են աշխատանքի արդիականությունը, նպատակը, խնդիրները, հետազոտության օբյեկտը, առարկան, վարկածը, տեսամեթոդաբանական հիմքը, մեթոդները, տեսական և կիրառական նշանակությունը, աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Զեկույցի հիմնական մասում ներկայացվում են հետազոտության էությունը և արդյունքները: Եզրակացության մեջ տրվում են աշխատանքի ելքերը և պրակտիկ կիրառության վերաբերյալ առաջարկները:

Հրապարակային պաշտպանությանը գիտական նյութի մատուցման ժամանակակից պահանջներից է սահիկաշարի ներկայացումը. 7-8 րոպեանոց ելույթի սահիկաշարը ներառում է մոտավոր 14-15 սլայդ:

Ելույթի ընթացքում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում զեկուցողի խոսքին: Հանդարտ, փաստարկված և հետևողականորեն շարադրված խոսքը լավ տպավորություն է առաջացնում: Պատկերավոր համեմատությունների, անսովոր փաստերի կիրառումը խոսքն ավելի գրավիչ է դարձնում:

Ելույթն ավարտելուց հետո հանձնաժողովի անդամները հարցեր են տալիս զեկուցողին: Հաջող պատասխանելու համար կարևոր պահանջ է ընդդիմախոսի կողմից տրված հարցի ճիշտ ընկալումը:

Հրապարակային պաշտպանությունից հետո ուսանողի գիտական աշխատանքը գնահատվում է մասնագիտական հանձնաժողովի կողմից՝ սահմանված չափանիշներին համապատասխան:

Բանալի բառեր և բառակապակցություններ՝ ուսանողական գիտական աշխատանք, գրախոսություն, հրապարակային պաշտպանություն, զեկույց, սահիկաշար, հարցեր, գնահատման չափանիշներ:

СОВРЕМЕННЫЕ ТРЕБОВАНИЯ К РЕЦЕНЗИИ, ПУБЛИЧНОЙ ЗАЩИТЕ И ОЦЕНИВАНИЮ СТУДЕНЧЕСКИХ НАУЧНЫХ РАБОТ

МАРИНЕ МИКАЕЛЯН

Армянский государственный педагогический университет
кафедра психология
кандидат психологических наук, доцент
marine.mikaelian@ysu.am

Аннотация

Методологические вопросы защиты и оценивания студенческих научных работ затронуты в исследованиях Н. И. Сорокина (1986), И. Н. Кузнецова (1998, 2000), Г. Х. Валеева (2002), А. Ф. Ануфриева (2002), А. А. Уварова (2003), С. В. Заневско (2015).

Студенческие исследовательские работы рецензируются научным руководителем и официальным оппонентом. Рецензия состоит из трех основных частей: описательной, оценочной и заключительной.

К основным распространенным недостаткам, встречающимся в студенческих работах, можно отнести достаточно широкое формулирование темы исследования, отсутствие точности обоснований, компилятивный характер работы, отсутствие ссылок на цитируемые первоисточники, недостаточный анализ и интерпретация результатов исследования.

К требованиям научных исследований относятся наличие научной новизны, практической значимости работы и возможность внедрения полученных результатов в практической сфере.

Чтобы должным образом осуществить публичную защиту работы, молодые исследователи должны тщательно подготовить свою речь. Для выступления продолжительностью 7-10 минут необходимо 5 страниц печатного текста.

Во вступительной части доклада необходимо привлечь внимание слушателей, установить с ними контакт. Во введении описываются актуальность, цель, задачи работы, объект, предмет и гипотеза исследования, методологическая основа, методы, теоретическая и практическая значимость исследования, структура и объем работы. В основной части выступления затрагиваются суть исследования и результаты. В заключении даются основные выводы и рекомендации для практического применения результатов работы.

Одним из современных требований к предоставлению научного материала на публичную защиту является предъявление презентации. Презентация 7-8 минутного выступления включает примерно 14-15 слайдов.

Во время выступления особое внимание уделяется речи говорящего. Спокойная, аргументированная и последовательная речь производит хорошее впечатление. Использование наглядных сравнений, необычных фактов делает выступления более привлекательным.

После выступления члены комиссии задают вопросы докладчику. Для успешного ответа необходимо правильное понимание вопроса, заданного оппонентом.

После публичной защиты научная работа студента оценивается профессиональной комиссией в соответствии с установленными критериями.

Ключевые слова и словосочетания: студенческая научная работа, рецензия, публичная защита, доклад, презентация, вопросы, критерии оценивания.

MODERN REQUIREMENTS FOR REVIEW, PUBLIC DEFENSE AND EVALUATION OF STUDENTS' SCIENTIFIC PAPERS

MARINE MIKAELIAN

Armenian State Pedagogical University
Department of Psychology
PhD in Psychological Sciences, Associate Professor
marine.mikaelian@ysu.am

Abstract

Methodological issues of protection and evaluation of student scientific works are discussed in the studies of N. I. Sorokin (1986), I. N. Kuznetsov (1998, 2000), G. Kh. Valeev (2002), A. F. Anufriev (2002), A. A. Uvarov (2003), S. V. Zanevsky (2015).

Student research papers are reviewed by a supervisor and an official opponent. The review consists of three main parts: descriptive, evaluative, and final.

The main common shortcomings encountered in student papers include a fairly broad formulation of the research topic, the lack of accuracy of justifications, the compilation nature of the work, the lack of references to the cited primary sources, insufficient analysis, and interpretation of the research results.

The requirements of scientific research include the presence of scientific novelty, the practical significance of the work, and the possibility of implementing the results obtained in the practical field.

To properly carry out a public defense of the work young researchers must carefully prepare their speeches. For a presentation lasting 7-10 minutes, 5 pages of printed text are required.

In the introductory part of the report, it is necessary to gain the audience's attention by establishing contact with them. The introduction describes the relevance, purpose, tasks of the work, the object, subject, and hypothesis of the study, the methodological basis, methods, theoretical and practical significance of the study, the structure and scope of the work. In the main part of the speech, the essence of the study and the results are touched upon. In conclusion, the main conclusions and recommendations for the practical application of the results of the work are given.

One of the modern requirements for the provision of scientific material for public defense is the presentation. The presentation of the 7-8 minute speech includes approximately 14-15 slides.

During the speech, special attention is paid to the speech of the speaker. Calm reasoned, and consistent speech makes a good impression. The use of visual comparisons, unusual facts makes speech more attractive.

After the presentation members of the commission ask questions to the speaker. A successful answer requires a correct understanding of the question asked by the opponent.

After a public defense, the student's scientific work is evaluated by a professional commission in accordance with established criteria.

Keywords and phrases: student research paper, review, public defense, report, presentation, questions, evaluation criteria.

Ներածություն

Հոգեբանամանկավարժական գիտական աշխատանք իրականացնելիս հավասարապես կարևոր են ինչպես հետազոտության մեթոդաբանական համակարգի կառուցման տրամաբանությունը՝ պլանավորումը, անցկացումը, հետազոտական տվյալների մշակումը, ամփոփումը, արդյունքների ձևակերպումը, այնպես էլ՝ աշխատանքի հրապարակային պաշտպանությունը:

Մանկավարժական բուհի ուսանողները ներկայացնում են գիտական աշխատանքի այնպիսի ձևեր, ինչպիսիք են՝ ելույթը, թեզիսները, գիտական հաշվետվությունը, ռեֆերատը, կուրսային աշխատանքը, ավարտական աշխատանքը, մագիստրոսական թեզը:

Գիտական աշխատանքի հետազոտությունն ավարտելուց և արդյունքները ձևակերպելուց հետո ուսանողն այն հանձնում է գիտական ղեկավարին գրախոսման նպատակով:

Գրախոսությունը գրավոր վերլուծություն է, կարծիք, որում տրվում է գիտական աշխատանքի քննադատական գնահատականը: Գրախոսության մեջ գիտական ղեկավարը բնութագրում է աշխատանքը՝ ընդգծելով ուժեղ և թույլ կողմերը՝ ուշադրություն դարձնելով աշխատանքի ծավալի և օգտագործված գրականության վրա:

Գիտահետազոտական աշխատանքը գրախոսելիս հաշվի են առնվում հետևյալ չափանիշները՝ նորոյթի և արդիականության, գիտականության, հետազոտական բնույթի առկայությունը, նյութի շարադրման գրագիտությունն ու տրամաբանվածությունը, նյութին տիրապետելու խորությունը, աշխատանքի ձևավորման համապատասխանությունն առկա պահանջներին:

Գրախոսությունը պայմանականորեն ստորաբաժանվում է մի քանի մասերի:

Առաջին մասը նկարագրական է. դիտարկվում են աշխատանքի արդիականությունը, նորոյթը, հեղինակի անձնական ներդրումը ուսումնասիրվող հիմնախնդրի լուծման մեջ:

Երկրորդ մասը գնահատողական բնույթ ունի. նշվում են աշխատանքի դրական կողմերն ու թերությունները, հիմնական դրույթների և եզրակացությունների հիմնավորվածությունը, հստակությունը:

Գրախոսության եզրափակիչ մասում եզրակացություն է արվում աշխատանքի արդիականության և կիրառական նշանակության վերաբերյալ [2]:

Ավարտական և մագիստրոսական աշխատանքները նույն սկզբունքներով գրախոսվում են նաև պաշտոնական ընդդիմախոսի կողմից:

Ուսանողների գիտահետազոտական աշխատանքներում հանդիպող հիմնական թերությունները

Համաձայն Ս. Վ. Ջանևսկու [2]՝ ավարտված աշխատանքներում սովորաբար առկա են լինում հետևյալ թերությունները՝

- բացակայում է կիրառված գիտական եզրույթների մի մասի բացատրությունը.
- առկա է անհամապատասխանություն ձևական պահանջներին.
- հետազոտության թեման չափազանց ընդարձակ է ձևակերպված լինում.
- նշվում են հետազոտության՝ մեկից ավելի նպատակներ, այնինչ պետք է լինի միայն մեկ նպատակ.
- երբեմն հետազոտությունը թյուրիմացաբար ներկայացվում է որպես մեթոդ.
- հետազոտության թեմայի շուրջ տեսական մոտեցումները բավարար չափով վերլուծված չեն լինում,
- փաստարկումներն ամբողջական չեն լինում, բացակայում են հստակ հիմնավորումները.
- աշխատանքը կրում է բանաբաղաբանական (կոմպիլյատիվ) բնույթ՝ շարադրանքը կազմվում է ուրիշի հետազոտությունների հիման վրա,
- բացակայում են մեջբերված սկզբնաղբյուրների հղումները,
- չի պահպանվում գիտական ոճը,
- լինում են բովանդակության և գրականության ցանկի ձևակերպման անճշտություններ:

Հետազոտության գիտական նորույթի պահանջը

Հետազոտությանը ներկայացվող հիմնական պահանջներից է գիտական նորույթի առկայությունը: Անշուշտ, մագիստրոսական աշխատանքների գիտական նորույթն ավելի մեծ է, քան բակալավրական հետազոտություններիինը: Այդուհանդերձ, դրանք երկուսն էլ հիմնարար գիտական բացահայտումներ չեն պարունակում: Ուսանողական աշխատանքներում համեմատաբար ոչ բարդ հետազոտական ծրագրեր են իրականացվում, և պահանջ է դրվում հստակ պատկերացնելու ժամանակակից գիտության նվաճումներն ու զարգացման միտումները, այսինքն՝ կատարվում է թեկուզև տարրական, բայց և այնպես գիտական որոնում, այլ՝ ոչ թե հանրահայտ ճշմարտությունների կրկնություն:

Կան ուսանողական աշխատանքներ, որոնք կրում են ռեֆերատիվ բնույթ: Այդ աշխատանքները սովորաբար գիտական նորույթ չեն պարունակում, սակայն հեղինակից պահանջվում է տեսական մեթոդների՝ վերլուծության, համադրության, համեմատության, ընդհանրացման կիրառում:

Հետազոտությանը ներկայացվող պահանջներից է աշխատանքի կիրառական նշանակության առկայությունը, ստացված արդյունքների ներդրման հնարավորությունը պրակտիկ ոլորտում կոնկրետ խնդիրների լուծման նպատակով: Կիրառական նշանակությունը սերտորեն կապված է աշխատանքի արդիականության հետ:

Աշխատանքի հրապարակային պաշտպանությունը

Հետազոտությունն անցկացնելուց, ստացված տվյալները մշակելուց, ամփոփելուց, ձևակերպելուց, գիտական ղեկավարի և ընդդիմախոսի կողմից աշխատանքը գրախոսելուց հետո գալիս է վերջին, սակայն ոչ պակաս պատասխանատու փուլը՝ հրապարակային պաշտպանությունը: Եթե այս փուլի կարևորությունը թերագնահատվում է երիտասարդ հետազոտողի կողմից, ապա անգամ քանակական և որակական լավ հատկանիշներ ունեցող ուսումնասիրությունը հրապարակային ներկայացմանը համոզիչ չի հնչում:

Պաշտպանության ընթացքում ուսանողների կողմից թույլ տրվող սխալներից են՝

- լսարանի ընկալման համար բարդ, չափազանց մեծ ծավալի տեղեկություն:
- ամբողջ աշխատանքի վերապատմումը:
- լսարանին հետաքրքրելու անկարողությունը:
- խոսքի շարադրման տրամաբանությունը հընթացս կառուցելու փորձը:
- միապաղաղ, անարտահայտիչ խոսքը:
- ելույթին տրամադրվող ժամանակի սխալ կառավարումը:

Զեկույցի կառուցվածքը և բովանդակությունը

Վերոնշյալ սխալներից գոնե մասամբ խուսափելու նպատակով երիտասարդ հետազոտողները պետք է մանրակրկիտ նախապատրաստեն իրենց ելույթը՝ զեկույցը: Ըստ ուսանողական գիտական աշխատանքները ներկայացնելու կանոնակարգի՝ ելույթին տրվում է 7-10 րոպե: 7-8 րոպեանոց ելույթի սահմաններում «տեղավորվելու» համար անհրաժեշտ է տպագիր շարադրանքի 5 էջ (տառատեսակի մեծությունը՝ 12, միջտողային հեռավորությունը՝ 1,5):

Ներածության միջոցով, որը սովորաբար կազմում է զեկույցի 1 էջը, անհրաժեշտ է գրավել ունկնդիրների ուշադրությունը, նրանց հետ կապ հաստատել: Ներածության մեջ ներկայացվում են աշխատանքի արդիականությունը, նպատակը, խնդիրները, հետազոտության օբյեկտը, առարկան, վարկածը, աշխատանքի տեսամեթոդաբանական հիմքը, մեթոդները, տեսական և կիրառական նշանակությունը, աշխատանքի կառուցվածքը և ծավալը:

Զեկույցի հիմնական մասում, որը կազմում է մոտավորապես 3 էջ, դիտարկվում են հետազոտության էությունը և ելքերը: Ընդգծվում է գիտական որոնումների ընթացքում ձեռք բերված նոր տեղեկությունը, ուրվագծվում են թեմայի հետագա զարգացման հեռանկարները:

Եզրակացության մեջ, որը հիմնականում ընդգրկում է 1 էջ, կատարվում է ասվածի ամփոփումը, տրվում են արված աշխատանքի հակիրճ եզրակացությունները և ելքերի պրակտիկ կիրառության վերաբերյալ առաջարկները:

Ուսումնասիրության արդյունքները ներկայացնելու համար Ե. Վ. Տյազլովան [3] սկսնակ հետազոտողներին առաջարկում է մի մեթոդիկա, որտեղ նա հարցադրումների միջոցով պարզաբանում է ելույթի ամբողջ ընթացքը:

Ինչի՞ մասին խոսել: Անհրաժեշտ է առանձնացնել գեկույցի հիմնական թեզը: Այն պետք է արտահայտի ելույթի գլխավոր միտքը, լինի հստակ, հակիրճ և հակասություններ չպարունակի, իր մեջ կրի հետազոտության հիմնական հասկացությունը:

Ինչո՞ւ խոսել: Առաջարկվում է ձևակերպել այն, ինչին հետազոտողը ցանկանում է հասնել իր ելույթի միջոցով: Պետք է նախապես ծրագրել ունկնդիրների հակազդումը և դրա միջոցով գնահատել, թե ինչպես է ընկալվելու ելույթը:

Ինչքա՞ն խոսել: Ելույթի ժամանակահատվածը կարգավորվում է՝ ըստ հետազոտական աշխատանքներին ներկայացվող պահանջների: Սովորաբար տրվում է 7-10 րոպե: Ելույթի ընթացքում ներկայացվում է ամենաէականը, կարևորվում են աշխատանքի հետազոտական մասը և եզրակացությունները:

Ո՞ւմ համար խոսել: Ելույթի ոճը և եզրութաբանական համակարգի բարդությունն ուղղակիորեն կապված է լսարանի հետ:

Որտե՞ղ խոսել: Ելույթը կառուցելու մարտավարության վրա էապես ներգործում են պայմանները: Որպես կանոն, լսարանում ավելի հեշտ է ելույթ ունենալը, քան մեծ դահլիճում:

Ինչպե՞ս խոսել: Խորհուրդ է տրվում ելույթի ժամանակ խոսել ոչ շատ արագ: Մարդկանց վրա անհրաժեշտ է ներգործել հոետորական արվեստի միջոցով: Խոսքը պետք է լինի պարզ, քերականորեն հստակ, ինքնավստահ, արտահայտիչ:

Ի՞նչ խոսել: Անհրաժեշտ է փաստարկման միջոցով ներկայացնել, վերծանել աշխատանքի հիմնական և օժանդակ մտքերը: Այն հասկացությունը, որը կրում է հետազոտության հիմնական իմաստը, ելույթի ընթացքում պետք է կրկնել ոչ պակաս, քան 7 անգամ, իսկ հիմնական միտքը՝ գոնե 4 անգամ: Փաստերը, փաստարկումները, օրինակները և եզրակացությունները պետք է տպավորիչ լինեն:

Սահիկաշարի կառուցվածքը

Հրապարակային պաշտպանությանը գիտական նյութի մատուցման ժամանակակից պահանջներից է «PPT» կամ «JPG» ձևաչափերով ներկայացումը (հետայսու՝ սահիկաշար), որն ունի մի շարք առանձնահատկություններ՝

- սահիկաշարը չպետք է ելույթի տեքստի կրկնությունը լինի.

- սահիկաշարում ներկայացվում են այն եզրույթները, բնորոշումները, սահմանումները, որոնք սկզբունքային կարևորություն ունեն ուսումնասիրության համար.

- տրամագրերը, գծապատկերները, նկարները պետք է հնարավորին չափ լրացնեն, «լցնեն» էկրանը.

- սահիկաշարի ֆոնի գունային ձևավորումը չպետք աչքերը հոգնեցնի.

- սահիկաշարը չի կարելի գերբեռնել. մեկ սահիկի տեղեկույթը չպետք է գերազանցի 20-25 բառը.

- ելույթի ընթացքում կտրականապես արգելվում է կարդալ սահիկաշարի տեքստը:

Ելնելով ուսանողական գիտական աշխատանքներ ղեկավարելու սեփական փորձառությունից՝ առաջարկում ենք 7-8 րոպեանոց ելույթի սահիկաշարի մոտավոր կառուցվածք՝

- 1-ին սահիկ՝ աշխատանքի անվանում, հեղինակի անուն, ազգանուն, հայրանուն, հաստատության անվանում, գիտական ղեկավարի անուն, ազգանուն, հայրանուն, գիտական աստիճան, կոչում, աշխատավայր.

- 2-5-րդ սահիկներ՝ աշխատանքի մեթոդաբանությունը՝ հետազոտության արդիականություն, նպատակ, վարկած, օբյեկտ, առարկա, խնդիրներ.

- 6-7-րդ սահիկներ՝ աշխատանքի տեսական մասի բովանդակությունն՝ ըստ բաժինների.

- 8-11-րդ սահիկներ՝ փորձարարական աշխատանքի արդյունքներն՝ ըստ կիրառված մեթոդների.

- 12-րդ սահիկ՝ աշխատանքի կիրառական նշանակությունը.
- 13-14-րդ սահիկներ՝ հետազոտության եզրակացությունները և առաջարկները.
- 15-րդ սահիկ՝ «Շնորհակալություն ուշադրության համար»:

Չեկուցողի խոսքը

Ինչպես արդեն նշել ենք, ելույթի ընթացքում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում Չեկուցողի խոսքին: Եթե Չեկուցողը խոսում է արագ, ցածրաձայն կամ անհասկանալի՝ կույ տալով բառերի վերջավորությունները, ապա նրա ելույթի որակն ընկնում է: Հանդարտ, փաստարկված և հետևողականորեն շարադրված խոսքը լավ տպավորություն է առաջացնում լսողների մոտ: Խոսքի մեջ գիտական ոճի առկայությունը դեռևս չի ենթադրում, որ ելույթի ընթացքում պետք է անտեսել պատկերավոր համեմատությունների, անսովոր փաստերի կիրառումը, որոնք թույլ են տալիս «պահել» լսարանի ուշադրությունը:

Բանախոսին տրվող հարցերը և դրանց պատասխանելու կարգը

Ելույթն ավարտելուց հետո հանձնաժողովի անդամները հարցեր են տալիս Չեկուցողին: Հարց կարող է տալ ներկաներից յուրաքանչյուրը, և բանախոսը պետք է դրան պատրաստ լինի: Հարցերին պատասխանելը հաջող պաշտպանության կարևոր փուլ է: Գիտական ղեկավարը նախապես պետք է բացատրի, որ հարցերից չպետք է վախենալ, քանի որ հարցի պատասխանը ևս մեկ հնարավորություն է ընձեռում հանգամանալից կերպով ներկայացնելու թեման: Հաճախ ուսանողին թվում է, թե հարցերը տրվում են Չեկուցողին բացառապես «տապալելու» նպատակով: Դա թյուր կարծիք է. եթե Չեկուցողին հարց են տալիս, ուրեմն՝ թեման հետաքրքրել է ունկնդիրներին, գրավել է նրանց ուշադրությունը: Բացի այդ՝ հարցերի միջոցով աշխատանքի հետագա ուսումնասիրության նոր հեռանկարներ են բացահայտվում:

Հարցերին պատասխանելիս բանախոսը պետք է հաշվի առնի մի քանի պարզ կանոններ՝

1. Եթե տրված հարցը հետազոտության շրջանակներից դուրս է, հարկ չկա հորինելու այնպիսի պատասխան, որն ուսումնասիրության արդյունքների մեջ չկա: Լիովին ընդունելի է այն պատասխանը, որ տվյալ հարցի պարզաբանումը Ձեր հետազոտության առարկան չէ կամ էլ Դուք պլանավորում եք այն ուսումնասիրել ապագայում:

2. Հաջող պատասխանելու համար կարևոր պահանջ է ընդդիմախոսի կողմից տրված հարցի ճիշտ ընկալումը: Եթե բանախոսի համար ինչ-որ բան անհասկանալի է, անհրաժեշտ է հարցը պարզաբանել, և միայն դրանից հետո՝ պատասխանել: Հակառակ դեպքում վտանգ կա, որ բանախոսը կպատասխանի ոչ թե իրեն տրված հարցին, այլ հարցի իր տարբերակին: Կարիք չկա ընկնելու նաև մյուս ծայրահեղության մեջ՝ պարզաբանելով ակնհայտ և հասկանալի հարցերը:

3. Գիտական քննարկումներ անցկացնելու էթիկայի կանոնների համաձայն՝ նախքան հարցին պատասխանելն ընդունված է շնորհակալություն հայտնել հարցի հեղինակին, քանի որ նա հետաքրքրություն է ցուցաբերել աշխատանքի նկատմամբ:

Բանավոր ելույթն ինչ-որ առումով բեմական արվեստ է և ենթադրում է ինչպես խոսքային հարալեզվական միջոցների՝ ձայնի բարձրության, ուժգնության, արտասանության, շեշտադրության, հուզական երանգավորման, այնպես էլ մարմնային հարալեզվական միջոցների՝ դիմախաղի, արտահայտիչ շարժումների (ժեստեր), մարմնի կեցվածքի տիրապետում:

Վերոնշյալը հաշվի առնելով՝ ցանկալի է, որ գիտական ղեկավարը նախնական պաշտպանություն կազմակերպի Չեկուցողի համար: Դա կօգնի Չեկուցողին՝ ավելի լավ ելույթ ունենալու գիտաժողովին, կուրսային կամ ավարտական աշխատանքի պաշտպանությանը, լինելու ինքնավստահ, ելույթի ընթացքում զգալու և կառավարելու ժամանակը:

Ուսանողական աշխատանքների գնահատման չափանիշները

Ուսանողական գիտական աշխատանքները հրապարակային պաշտպանությունից հետո գնահատվում են մասնագիտական հանձնաժողովի կողմից: Առկա չափանիշներին

համապատասխան՝ հանձնաժողովի անդամները համատեղ քննարկման արդյունքում միավորների տեսքով գնահատում են ուսանողին:

9. Խ. Վալեյնն առանձնացնում է ուսանողական հոգեբանամանկավարժական աշխատանքների գնահատման հետևյալ չափանիշները՝ հետազոտության թեմայի և հիմնախնդրի ընտրության հիմնավորումը, թեմայի արդիականությունը, թեմայի տեսական նշանակությունը, հիմնահարցի վերաբերյալ հիմնական և լրացուցիչ գրականության ընտրության և ուսումնասիրման ինքնուրույնությունը, գիտական գրականության քննադատական վերլուծությունը, տարբեր տեսանկյունների քննարկումը, սեփական տեսակետի արտահայտումը, թեմայի կապը սովորողների ուսուցման և դաստիարակության պրակտիկայի հետ, ուսումնասիրության մեթոդաբանական հիմնավորումը, հետազոտության մեթոդիկայի համապատասխանությունը հետազոտության առարկային, բավականաչափ ծավալուն հետազոտության առկայությունը, փորձարարական աշխատանքի ինքնուրույնությունը, հետազոտության արդյունքների նորոյթը, ստացված տվյալների գրագետ մշակումն ու մեկնաբանումը, տեքստի հստակ ձևակերպումը՝ համաձայն նախատեսված չափանիշների, աշխատանքի ներկայացման գիտական ոճին տիրապետումը [1]:

Եզրակացություն

Այսպիսով՝ ուսանողական գիտական աշխատանքների իրականացումը փուլային և միաժամանակ համալիր բնույթ է կրում, որի ընթացքում կարևորվում են ուսումնասիրության պլանավորումը, տեսական աղբյուրների վերլուծությունը, հետազոտության անցկացումը, արդյունքների մշակումը և վերլուծությունը, աշխատանքի պատշաճ ձևակերպումը, հրապարակային պաշտպանության ելույթի և սահիկաշարի ներկայացումը, լսարանի կողմից բանախոսին ուղղված հարցերին գրագետ և հիմնավորված պատասխաններ տալը: Այնուհետև աշխատանքը հանձնաժողովի անդամների կողմից գնահատվում է՝ համաձայն սահմանված չափանիշների:

Գրականության ցանկ

1. Валеев Г. Х. Методология и методы психолого-педагогических исследований. Стерлитамак: Стерлитамакский государственный педагогический институт, 2002. 134 с.
2. Заневский С. В. Организация исследовательской деятельности студентов и учащихся. Инновации в российской системе образования и за рубежом: Монография [под ред. С. Д. Якушевой]. Новосибирск: СибАК, 2015. С. 122-166.
3. Тяглова Е. В. Методика апробации результатов исследовательской деятельности учащихся / Школьные технологии. 2007. N1. С. 103-118.

SOCIO-PSYCHOLOGICAL ANOMIE OVERCOMING MODELS IN A TRANSITIONAL SOCIETY

The article is published under the code 21T-5A311 within the framework of the scientific topic “The Problem of the Crisis and Anomie of the Person’s system of Values and the Methodology of its Overcoming in the Post-War Period”

NAIRA HAKOBYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
International Scientific-Educational Center
Deputy Director on Research Affairs
Doctor of Psychology, Professor
naira.hakobyan@isec.am

ANNA KHACHATRYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
International Scientific-Educational Center
Department of Psychology, Lecturer
PhD in Psychological Sciences
anna.khachatryan@isec.am

VIKTORYA SARJANYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
International Scientific-Educational Center
Assistant of the Deputy Director on Research Affairs
viktorya.sarjanyan@isec.am

Abstract

The relevance of the problems of studying the phenomenon of socio-psychological anomie increases, especially in transforming or transitional societies, wherein the result of political, economic, social, and cultural reconstructions, once stable social structures, the system of social relations, social institutions are annulled, and social groups and individuals appear in intermediate, transitional position. In a sense, anomie becomes one of the main characteristics of a transforming society.

The problems of cultural and socio-psychological identities have universal nature, i.e., they are typical of both stable and transitional, transforming societies. There are stipulating preconditions for the appearance of anomic behavior in stable societies as well. In this meaning, the problems of the emergence of socio-psychological anomie and the crisis of identities accompanying any social transformation are one of the social functions of the society, as it is impossible to imagine a society in which no changes take place at all. However, in comparatively stable societies there is a regulated net of social relations that provides a high degree of socio-cultural consolidation and cooperation of people. In such cases, people feel like an organic part of the whole. For example, in the former Soviet Union, there was created a united socio-political and moral-psychological field, the values of which were more or less general in nature. The majority of Soviet people didn't feel isolated, cut off from society: the dominating part of the population was engaged in the acting socio-economic structures in different spheres of work activities.

In transitional societies, as a rule, the volume, content, and quality of the sphere of manifestation of anomie change. The transformation of the majority into a marginal one creates a qualitatively new situation of social reality. In the social structure of a post-communal society, various social groups acquire features of anomic behavior, as a result of which the distinctions between addictive and non-addictive behavior are blurred. In fact, socio-psychological anomie is the result of the mobility of the social structure of society, the result of a state of uncertainty. This point of view is debatable since socio-psychological anomie cannot simply be identified with the mobility of the social structure. Although anomie presupposes the presence of mobility, its defining feature is the uncertainty or dysfunctionality of socialization institutions, amorphousness in determining the motivation of an individual and social groups, and the sluggishness or slowness of identification processes in society [1].

Keywords and phrases: anomie, social structure, motivation, uncertainty, model.

**ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՆՈՄԻԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՈՂ ՄՈԴԵԼՆԵՐԸ
ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻՈՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Հոդվածը տպագրվում է 21T-5A311 ծածկագրով «Հետպատերազմական շրջանում անձի արժեհամակարգի ճգնաժամի և անոմիայի հիմնախնդիրը և հաղթահարման մեթոդաբանությունը» գիտական թեմայի շրջանակներում

ՆԱԻՐԱ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
գիտակրթական միջազգային կենտրոն
գիտահետազոտական աշխատանքների գծով փոխտնօրեն
հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
naira.hakobyan@isec.am

ԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
գիտակրթական միջազգային կենտրոն
հոգեբանության ամբիոն, դասախոս
հոգեբանական գիտությունների թեկնածու
anna.khachatryan@isec.am

ՎԻԿՏՈՐՅԱ ՍԱՐՋԱՆՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
գիտակրթական միջազգային կենտրոն
գիտահետազոտական աշխատանքների գծով փոխտնօրենի օգնական
viktorya.sarjanyan@isec.am

Համառոտագիր

Սոցիալ-հոգեբանական անոմիայի ուսումնասիրման արդիականությունը հատկապես կարևորվում է փոխակերպվող կամ անցումային հասարակություններում, որտեղ քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային փոփոխությունների արդյունքում երբեմնի կայուն սոցիալական կառույցները, սոցիալական հարաբերությունների համակարգը, սոցիալական ինստիտուտները վերափոխվում են, և սոցիալական խմբերն ու անհատները հայտնվում են միջանկյալ, անցումային վիճակում: Ինչ-որ առումով անոմիան դառնում է փոխակերպվող հասարակության հիմնական բնութագրիչներից մեկը:

Մշակութային և սոցիալ-հոգեբանական ինքնության խնդիրները ունեն համամարդկային բնույթ, այսինքն՝ բնորոշ են ինչպես կայուն, այնպես էլ անցումային, փոխակերպվող հասարակություններին: Անոմիկ վարքագծի ի հայտ գալու նախադրյալներ կարող են դրսևորվել նաև կայուն հասարակություններում: Այս առումով սոցիալ-հոգեբանական անոմիայի առաջացման և ինքնության ճգնաժամի խնդիրները, որոնք ուղեկցում են ցանկացած սոցիալական փոխակերպում, դիտվում են որպես հասարակության սոցիալական գործառույթներ, քանի որ անհնար է պատկերացնել մի հասարակություն, որտեղ փոփոխություններ ընդհանրապես տեղի չեն ունենում, բայց համեմատաբար կայուն հասարակություններում գոյություն ունի սոցիալական հարաբերությունների կանոնակարգված ցանց, որն ապահովում է մարդկանց սոցիալ-մշակութային համախմբման և համագործակցության բարձր աստիճան: Նման դեպքերում մարդիկ իրենց զգում են որպես ամբողջի օրգանական մաս: Օրինակ՝ հետխորհրդային տարածքում ստեղծվեց միասնական սոցիալ-քաղաքական և բարոյահոգեբանական դաշտ, որի արժեքները քիչ թե շատ ընդհանուր բնույթ ունեին: Խորհրդային ժողովրդի մեծամասնությունը, ընդհանուր առմամբ, իրեն մեկուսացված, հասարակությունից կտրված չէր զգում. բնակչության գերակշռող մասը զբաղված էր գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական կառույցներում, աշխատանքային գործունեության տարբեր ոլորտներում:

Անցումային հասարակություններում, որպես կանոն, փոխվում են անոմիայի դրսևորման ոլորտի ծավալը, բովանդակությունը և որակը: Մեծամասնության վերափոխումը մարզինալների ստեղծում է

սոցիալական իրականության որակապես նոր իրավիճակ: Անցումային հասարակության սոցիալական կառուցվածքում տարբեր սոցիալական խմբեր ձեռք են բերում անոմիկ վարքագծի առանձնահատկություններ, ինչի հետևանքով վերանում են ադիկտիվ և ոչ ադիկտիվ վարքագծի սահմանները: Իրականում սոցիալ-հոգեբանական անոմիան հասարակության սոցիալական կառուցվածքի շարժունության, անորոշության վիճակի արդյունք է: Այս տեսակետը վիճելի է, քանի որ սոցիալ-հոգեբանական անոմիան պարզապես չի կարող նույնացվել սոցիալական կառուցվածքի շարժունության հետ: Չնայած անոմիան ենթադրում է շարժունության որոշակի առկայություն, դրա որոշիչ հատկանիշն է սոցիալականացման ինստիտուտների անորոշությունը կամ դիսֆունկցիոնալությունը, անհատի և սոցիալական խմբերի մոտիվացիան որոշելու ամորֆությունը, հասարակության մեջ նույնականացման գործընթացների ձգվածությունը կամ դանդաղությունը [1]:

Ամեն դեպքում, սոցիալ-հոգեբանական անոմիայի կամ ինքնությունների անոմիայի հիմնախնդիրները որպես երևույթ մեծ նշանակություն ունեն անցումային հասարակության պայմաններում: Եթե անոմիան զանգվածային բնույթ է ստանում, ապա դրա արժեքներն ու ուղեցույցները թափանցում են նաև այն մարդկանց գիտակցությունը, որոնք դեռևս պահպանում են իրենց նախկին կարգավիճակը սոցիալական կառույցներում:

Բանալի բառեր և բառակապակցություններ. անոմիա, սոցիալական կառուցվածք, մոտիվացիա, անորոշություն, մոդել:

МОДЕЛИ ПРЕОДОЛЕНИЯ СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКОЙ АНОМИИ В ПЕРЕХОДНОМ ОБЩЕСТВЕ

Статья публикуется под кодом 21Т-5А311 в рамках научной темы “Проблема кризиса и аномии системы ценностей личности и методология преодоления в послевоенный период”

НАИРА АКОПЯН

Национальная академия наук Республики Армения
Международный научно-образовательный центр
заместитель директора по научно-исследовательским вопросам
доктор психологических наук, профессор
naira.hakobyan@isec.am

АННА ХАЧАТРЯН

Национальная академия наук Республики Армения
Международный научно-образовательный центр
преподаватель кафедры психологии
кандидат психологических наук
anna.khachatryan@isec.am

ВИКТОРИЯ САРДЖАНЫН

Национальная академия наук Республики Армения
Международный научно-образовательный центр
помощник заместителя директора по научно-исследовательским работам
viktorya.sarjanyan@isec.am

Аннотация

Актуальность проблем изучения феномена социально-психологической аномии особенно возрастает в трансформирующихся или переходных обществах, где в результате политических, экономических, социальных и культурных изменений аннулируются некогда устойчивые социальные структуры, система социальных отношений, социальные институты, а социальные группы и индивидуумы оказываются в промежуточном, переходном положении. В некотором смысле аномия становится одной из основных характеристик трансформирующегося общества.

С XIX века, когда сформировалась научная психология, до наших дней психология как наука пережила бурное развитие. Для получения знаний использовались ряд научно-исследовательских методов, экспериментальные оборудования, математические расчеты. Было выдвинуто понятие «психика», а психические явления выводились из материальной основы психики - деятельности нервной системы. Всё это позволило специалистам данной сферы сформировать представления о структуре и проявлениях психического аппарата. Однако отсутствие места размещения психического аппарата на протяжении веков оставалось одним из самых уязвимых частей психологии. Как в предыдущие века, так и сейчас человеку, живущему в современном материальном мире, довольно сложно показать и интерпретировать психические явления или весь процесс психологических вмешательств с его конечными результатами. Поэтому мы считаем, что возникает необходимость использовать научные методы и методики, чтобы демонстрировать проявления психики человека. Это позволит до некоторой степени «материализовать» психическую деятельность.

Цель статьи – показать, что использование рисуночных тестов во время практической работы психолога позволяет пациенту в конце визита оглянуться на путь, который он прошел вместе с психологом. Это дает пациенту возможность увидеть, вспомнить душевное состояние и проблему, с которой он обратился к психологу, динамику, зафиксированную во время визитов, конечный результат, которого он добился. Такой метод работы позволит сделать видимой работу психолога, что будет способствовать развитию психологии как науки.

В ходе психологического исследования с выборкой применялся проективный метод и стандартизированная беседа. Из проективных методов был выбран проектный рисуночный тест. Исследование проводилось с контрольными и основными группами, всего 20 человек. Для обобщения результатов исследования с испытуемыми было использовано стандартизированное интервью.

Среди методик был применен рисуночный тест, т. е. рисование по заданной теме.

Результаты исследования позволяют сделать вывод о том, что:

- рисуночные тесты могут способствовать развитию психологии как науки;
- рисуночные тесты не только имеют диагностическое значение в практической работе специалистов, но и могут использоваться как обобщение всего процесса психологического вмешательства;
- использование стандартизированной беседы обеспечивает эффективную обратную связь между пациентом и психологом;
- стандартизированная беседа позволяет зафиксировать мнение пациента о важности и роли психологического вмешательства.

По результатам исследования были представлены предложения по дальнейшему совершенствованию работы практических психологов.

Ключевые слова и словосочетания: проективный метод, практическая психология, психологическое вмешательство, динамика, рисуночные тесты.

DRAWING TESTS AS A MEANS OF SUMMARIZING THE PROCESS OF PSYCHOLOGICAL INTERVENTION

SONA MELIKYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
International Scientific-Educational Center
Department of Psychology, Master Student
sona.melikyan.87@mail.ru

Abstract

From the 19th century, when scientific psychology was formed, up-to-date psychology as a science experienced a wide development. Several scientific research methods, experimental equipment, and mathematical calculations started to be used to obtain knowledge. The concept of "mental" was introduced, and mental phenomena were derived from the material basis of psychics, the activity of the nervous system. All this allowed the specialists of the field to have some notion of the structure and manifestations of the mental apparatus. However, the lack of a place for the location of the mental apparatus has been considered as one of the most vulnerable parts of psychology for centuries. As in the previous centuries, it was rather difficult to show and interpret the man living in the modern material world, the mental phenomena, or the whole process of psychological interventions with its deliverables as well. Therefore, we think it is necessary to use scientific methods and techniques to show a person's mental manifestations. This will allow it to "materialize" the mental activity to some extent.

The objective of the article is to show that the application of the drawing tests during the psychologist's practical work allows the patient to have an opportunity to take a look back at the path passed together with the psychologist. This allows the patient to see, recall the state of mind and the problem which he has consulted to the psychologist for, the dynamics recorded during the visits, and the deliverable achieved. This working method will allow the patient to make the psychologist's work visible, which will contribute to the development of psychology as a science.

In the course of the psychological research, the projective method and the standardized interview were applied with sampling. The projective drawing test was chosen among the projective methods. The research was carried out with control and main groups, 20 people in total. The standardized conversation was used with those examined to summarize the results of the research.

One of the methods applied was the drawing test, i. e. drawing on the subject given.

The results of the research allow us to conclude that:

- Drawing tests can contribute to the development of the science of psychology;
- Drawing tests not only have a diagnostic significance in the specialists' practical activity but can be applied as a summary of the whole process of psychological intervention as well;
- The application of the standardized conversation provides effective patient-psychologist feedback;
- The standardized conversation allows you to record the patient's opinion on the importance and the role of the psychological intervention made.

Based on the results of the research, suggestions were submitted for further improvement of the practical psychologists' activities.

Keywords and phrases: projective method, practical psychology, psychological intervention, dynamics, drawing tests.

Ներածություն

Հոգեբանության հիմնարար խնդիրներից է եղել այցելուի համար տեսանելի դարձնել հոգեբանական միջամտությունները, կատարված աշխատանքի դինամիկան և վերջնական արդյունքները: Իհարկե զրույցի միջոցով հնարավոր է հետադարձ կապ ձևավորել, լսել, գրանցել այցելուի կարծիքը՝ հոգեբանի հետ կատարած համատեղ աշխատանքի մասին, սակայն կարծում ենք, որ սա բավարար չէ, որպեսզի այցելուն լիարժեք կարողանա տեսնել, թե ինչ արդյունքներ են նրան տվել հոգեբանի մոտ այցելությունները: Փորձը ցույց է տալիս, որ հաճախ այցելուները հոգեբանական սեանսների ընթացքում, կամ դրանց ավարտին սկսում են կասկածի տակ դնել կատարված հոգեբանական աշխատանքի արդյունավետությունը, աղոտ են հիշում, թե իրենց հոգեբանական խնդիրը որքան էր խանգարում իրենց առօրյա կենսագործունեության ընթացքում, իսկ խնդրի հանգուցալուծումը երբեմն վերագրում են ոչ թե հոգեբանի հետ իրենց կատարած համատեղ աշխատանքին, այլ տարբեր արտաքին գործոնների ազդեցությանը, ինչպիսիք են՝ ժամանակը, իրադարձությունները և այլն: Անշուշտ, արտաքին գործոնները ևս իրենց ազդեցությունը ունենում են այցելուի խնդրի լուծմանը, սակայն մեր նպատակն է այցելուին ցույց տալ, որ հոգեբանական միջամտությունները նույնպես մեծ դեր են խաղում:

Տեսական մաս

Նախքան հետազոտությանը անդրադառնալը անհրաժեշտ ենք համարում մեկնաբանել հոգվածում կիրառված հիմնական հասկացությունները. դրանք են հոգեբանական միջամտությունը, հոգեդիագնոստիկան, պրոեկտիվ մեթոդը և ստանդարտացված զրույցը:

Հոգեբանական ազդեցությունն իրականացվում է հոգեբանական օգնության շրջանակներում: Հոգեբանական օգնությունը հոգեբանության գործնական կիրառության ոլորտներից է, որն ուղղված է մարդկանց սոցիալ-հոգեբանական կոմպետենտության բարձրացմանը և ինչպես անհատին, այնպես էլ խմբին հոգեբանական օգնության ցուցաբերմանը: Հոգեբանական օգնության տեսակներն են՝

1. հոգեբանական խորհրդատվությունը,
2. հոգեթերապիան,
3. հոգեշտկումը,
4. հոգեկանխարգելումը [3, էջ 188]:

Հոգեդիագնոստիկան հոգեբանի մասնագիտական գործունեության պարտադիր բաղադրամասն է, որի նպատակն է ճշգրիտ միջոցներով բացահայտել անհատի կամ խմբի հոգեբանական առանձնահատկությունների ներկա վիճակը: Հատուկ մշակված հարցարանների կամ հոգեբանական թեստերի միջոցով գնահատումը կամ ճանաչումը իրականացվում է մշակված նորմերին կամ հատուկ չափանիշներին համապատասխանությունը ճշգրտելու համար: Որպես հոգեբանության գիտակիրառական բնագավառ՝ հոգեդիագնոստիկան ներառում է երկու հիմնական գործառույթ՝ գիտական և կիրառական: Հոգեդիագնոստիկան ձևավորվում է մի քանի փոխկապակցված նպատակների ամբողջությունից՝

- հոգեդիագնոստիկ մեթոդիկաների մշակում.
- գնահատման չափորոշիչների հիմնավորում.
- օբյեկտի հոգեբանական և հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների հետազոտում.
- հոգեբանի և հետազոտության մասնակցի փոխգործունեություն.
- թեստերի ընտրություն և համադրում.
- հոգեբանական գնահատականի տեսական սկզբունքների մշակում և այլն:

«Դիագնոզ» (հուն.՝ διάγνωσις, diagnosis – ճանաչում, dia - առանձին, gnosis - գիտելիք) եզրույթը հունարենից բառացի թարգմանած նշանակում է ինչ-որ բանի ճանաչում, բացահայտում: «Հոգեդիագնոստիկան» որպես գիտության ինքնուրույն ճյուղ ի հայտ է եկել դեռևս 20-րդ դարի սկզբում, սակայն այն որպես հասկացություն շրջանառության մեջ է մտել միայն Ռորշախի աշխատության հրապարակումից հետո՝ 1921 թ.: Հոգեդիագնոստիկ մեթոդները կիրառվում են շուրջ 80 տարի: Ներկայումս հոգեբանության մեջ համարվում է, որ գոյություն ունեն ավելի քան 15000 հոգեդիագնոստիկ մեթոդներ, որոնք գործնականում կիրառվում են տարբեր ոլորտներում: Հոգեդիագնոստիկ մեթոդը թույլ է տալիս առանձնացնել սուբյեկտի ակտիվությունը պայմանավորող

անհատական առանձնահատկությունները, նրա վարքի իրավիճակային դրսևորումն այս կամ այն պայմաններում, ինչպես նաև որոշ սոցիալ-հոգեբանական (սոցիալական ընկալում, լիդերություն, միջանձնային հարաբերություններ) և դրդապատճառային ցուցանիշներ (նվաճումների ձգտում կամ խուսափում) և այլ առանձնահատկություններ: Հոգեդիագնոստիկայի ոլորտում բազմամյա աշխատանքային փորձը հուշում է մի քանի պարտադիր մանրուքների մասին, որոնք պետք է հաշվի առնել թեստերի արդյունքների վերլուծության և ներկայացման ժամանակ: Բացի մեթոդի մեթոդաբանական հիմքի մասին գիտելիքից, անցկացման պայմաններից, թեստի հրահանգից և մեկնաբանման բանաձևից կամ «բանալիից»՝ անհրաժեշտ է մասնագիտական ինտուիցիա ու ռեֆլեքսիա («բնագրային զգացում», «արտացոլում») [1, էջ 18-28]:

Բազմաթիվ հոգեբաններ, անդրադառնալով հոգեդիագնոստիկայի տեսական հիմունքներին, նշում են մեթոդաբանական հինգ հիմնական սկզբունք: Քանի որ ժամանակակից հոգեբանության մեթոդաբանությունում կան վիճահարույց հարցեր, որոնք նաև արտացոլվում են հոգեախտաբանման բնագավառում, այսօր նպատակահարմար է հենվել տեսական հոգեախտաբանման հետևյալ հիմնական սկզբունքների վրա՝

- արտացոլման սկզբունք – շրջապատող աշխարհի համապատասխան արտացոլումը ապահովում է մարդու գործունեության արդյունավետ կարգավորումը.
- զարգացման սկզբունք – կողմնորոշում է հոգեկան երևույթների առաջացման պայմանների ուսումնասիրումը, դրանց փոփոխման միտումները, այդ փոփոխությունների որակական և քանակական բնութագրումները.
- երևույթի և էության դիալեկտիկական կապի սկզբունք, որը թույլ է տալիս տեսնել այս փիլիսոփայական կատեգորիաների փոխադարձ պայմանավորվածությունը՝ հոգեկան իրականության հիման վրա, նրանց ոչ նույնականության պայմաններում.
- գործունեության և իմացության միասնության սկզբունք - հոգեկանը և իմացությունը ձևավորվում են մարդու գործունեությունում, միաժամանակ գործունեությունը կարգավորվում է հոգեկանով և իմացությամբ.
- անհատականության սկզբունք, ըստ որի՝ հոգեբանից պահանջվում են մարդու անհատական առանձնահատկությունների վերլուծություն, նրա կոնկրետ կյանքի իրավիճակի, նրա օնտոգենեզի հաշվառում: Այս հինգ սկզբունքների կիրառումը համապատասխանաբար թույլ է տալիս հոգեկանի իրական փոփոխությունների մասին հավաստի տվյալների ստացման համար մշակել հոգեդիագնոստիկ հատուկ մեթոդիկաներ [1, էջ 37-38]:

Պրոյեկտիվ թեստերի ծագումն ու վաղ զարգացումը սերտորեն կապված են հոգեվերլուծական մոտեցման առաջացման դեպքերի հետ: Ընդունված է համարել, որ Ֆրեյդի՝ երազների մեկնաբանման մեթոդաբանությունը տվյալ ոլորտում գերակշռող գաղափարների ամենակարևոր և միակ աղբյուրն է: Այս մոտեցմամբ մեկնաբանման ելակետ են համարվում նաև Յունգի հետազոտությունները, որոնք նույնպես մեծապես ազդել են պրոյեկտիվ թեստավորման զարգացման վրա: «Պրոյեկտիվ մեթոդիկա» եզրույթը սկսել է զուգորդվել հետևյալ գործիքների հետ, նախ և առաջ՝ շնորհիվ Հ. Ա. Մյուրրեի և Լ. Կ. Ֆրանկի աշխատությունների՝ 1930-ականներին: Պրոյեկտիվ թեստերը հիմնականում դասակարգվում են ըստ հինգ կարևոր սկզբունքների՝ զուգորդական, արտահայտչական, խաղային, նկարչական կամ պատկերավոր [1, էջ 87-89]:

Մեկ այլ դասակարգման համաձայն՝ ընդունված է տարբերակել հետևյալ խմբերը՝

- կառուցվածքավորման մեթոդիկաներ՝ խթանների ձևավորում, իմաստավորում.
- նախագծման տեխնիկան՝ ստեղծել մանրամասն իմաստալից ամբողջություն.
- մեկնաբանման մեթոդիկաներ՝ որևէ իրադարձության, իրավիճակի մեկնաբանումը.
- լրացման մեթոդիկաներ՝ անավարտ նախադասության, պատմվածքի, պատմության լրացում.
- կատարսիսի մեթոդիկաներ՝ խաղային գործունեության իրականացում հատուկ կազմակերպված պայմաններում.

- էքսպրեսիայի ուսումնասիրության մեթոդիկաներ՝ ազատ կամ հանձնարարված թեմայի շուրջ նկարելը.
- իմպրեսիայի ուսումնասիրության մեթոդիկաներ՝ որոշ խթանների նախապատվությունը (որպես առավել ցանկալի) այլ խթաններին **[4, էջ 4]:**

Մարդու անձնական առանձնահատկությունների բացահայտման համար նկարային թեստերի կիրառումը հիմնված է պրոյեկցիայի սկզբունքի վրա, այսինքն՝ մարդու փորձառությունների, պատկերացումների, ձգտումների և այլնի վրա: Նկարելով այս կամ այն օբյեկտը, մարդը ակամա, և երբեմն գիտակցաբար փոխանցում է իր վերաբերմունքը դրա նկատմամբ: Նկարային թեստերը ախտորոշման համար կիրառելը շատ կարևոր է, քանի որ նրանք արտացոլում են, առաջին հերթին, մարդու ոչ թե գիտակցված դիրքորոշումները, այլ նրա անգիտակից ազդակները և փորձը: Դա է պատճառը, որ նկարային թեստերը դժվար է «կեղծել»՝ դրանցում սեփական անձը ներկայացնելով ոչ այնպես, ինչպես այն իրականում է: Ինչպես այլ պրոեկտիվ թեստեր, նկարային թեստերի մեթոդիկաները շատ տեղեկատվական են, այսինքն՝ թույլ են տալիս բացահայտել մարդու բազմաթիվ հոգեբանական առանձնահատկությունները: Դրանք շատ հեշտ է անց կացնել, ժամանակատար չեն, և չեն պահանջում որևէ հատուկ նյութերի առկայություն. միայն մատիտ և թուղթ: Ի տարբերություն շատ այլ թեստերի՝ նկարային մեթոդիկաները կարող են իրականացվել բազմիցս և ցանկացած հաճախականությամբ՝ առանց կորցնելու իրենց ախտորոշիչ արժեքը: Դրանք կիրառելի են տարբեր տարիքի այցելուների համար՝ ինչպես նախադպրոցականների, այնպես էլ մեծահասակների հետ: Սա թույլ է տալիս դրանք օգտագործել դինամիկայի վերահսկման համար, ինչպես նաև հնարավորություն է տալիս երկարատև ժամանակահատվածում դիտարկելու անձի հոգեկան զարգացման առաջընթացը **[5, էջ 5]:**

Զրույցի մեթոդը հաղորդակցման գործընթացում նախապատրաստված հարցերի օգնությամբ անձի առանձնահատկությունների, խմբի կամ նրա անդամների վերաբերյալ նախնական տեղեկությունների ստացման միջոց է: Խմբային զրույցի ժամանակ հոգեբանին հետաքրքրում է միևնույն հարցի վերաբերյալ բոլոր անդամների կարծիքը: Սովորաբար անհատական կամ խմբային զրույցի մեթոդը կիրառվում է հետազոտվող խնդրին իրազեկ լինելու, նախնական տեղեկության հավաքագրելու, ինչպես նաև՝ սոցիալական գործընթացների վերաբերյալ հստակ նյութի գրանցման համար: Տարբերում են զրույցի մի քանի տարատեսակներ, որոնք կարող են լինել խիստ չափազրված կամ շատ ազատ ու անկաշկանդ **[2, էջ 77]:**

Զրույցի տեսակ է ստանդարտացված զրույցը: Այստեղ հարցերը հստակ ձևակերպված են և տրվում են բոլոր հարցվողներին՝ առանց փոփոխության ենթարկելու **[6, էջ 68]:**

Այսպիսով՝ հիմնվելով վերոհիշյալի վրա, անց ենք կացրել հետազոտություն:

Հետազոտական մաս

Հետազոտության նպատակն է պարզել պրոյեկտիվ մեթոդի կիրառման արդյունավետությունը՝ հոգեբանական միջամտության ընթացքը, ստացված արդյունքները ամփոփելու համար:

Հետազոտությունը անց է կացվել հոգեբանական պրակտիկ գործունեության ընթացքում՝ անհատական այցերի ժամանակ: Հետազոտվողների տարիքը՝ 20-35 տարեկան կանայք և տղամարդիկ (ընդհանուր թվով 20 անձիք): Ընտրանքը երկու խմբով է եղել՝ հիմնական և ստուգիչ:

Հետազոտության մեթոդ է ընտրվել պրոեկտիվ մեթոդը և ստանդարտացված զրույցը:

Մեթոդիկաներից կիրառվել է նկարային թեստը հանձնարարված թեմայի շուրջ նկարելը **[4, էջ 4]:**

Հիմնական ընտրանքին՝ (թվով 10 անձինք) անհատական առաջին այցի ժամանակ, անկախ այցելուի հայցից, առաջարկել ենք նկարել այն խնդիրը, որի համար նա դիմել է հոգեբանական օգնության: Այցելուին առաջարկվել է սպիտակ թուղթ, գունավոր մատիտներ, գուաշ և գրիչներ: Հրահանգը եղել է՝ նկարի՛ր խնդիրդ, ինչպես կցանկանաս, ապա երկու այցը մեկ (երկու շաբաթը մեկ անգամ) այցի սկզբում տրվել է նույն հրահանգը: Վերջին այցին ևս հրահանգը կրկնվել է: Հիմնական ընտրանքի հետ նախապես պայմանավորվածություն է ձեռք բերվել՝ նկարած պատկերների վերլուծությանը անդրադառնալ վերջին՝ ամփոփիչ այցի ժամանակ:

Ստուգիչ ընտրանքի (թվով 10 անձինք) հետ անհատական այցերի ժամանակ վերոհիշյալ հրահանգը չի տրվել: Առաջին այցի ընթացքում այցելուն բանավոր կերպով ձևավորել է իր հայցը:


Մեր նպատակն էր՝ հիմնական խմբի յուրաքանչյուր հետազոտվողին հոգեբանական աշխատանքի ավարտին ցույց տալ իր նկարած բոլոր պատկերները՝ հերթականությամբ մեկնաբանելով դրանք: Ենթադրվում էր, որ հիմնական ընտրանքի համար ակնառու կլինեին հոգեբանի հետ համատեղ արված աշխատանքը, տեսանելի կլինեին այցերի ընթացքում խնդրի լուծման դինամիկան, իսկ աշխատանքի ավարտին հնարավոր կլինեին ցույց տալ ձեռք բերված վերջնաարդյունքը: Աշխատանքային այս մեթոդը թույլ կտար հիմնական խմբին հստակ պատկերացնել հոգեբանական միջամտության արդյունավետությունը:

Ստորև ձեր ուշադրությանն ենք ներկայացնում օրինակ՝

Հետազոտվող՝ Ա. Լ., 21 տարեկան, հիմնական խումբ:


Այցերի քանակը՝ 14:

Նկար 1.




Հետազոտվող՝ Ա. Լ., 21 տարեկան, 1-ին այց:

Նկար 2.



Հետազոտվող՝ Ա. Լ., 21 տարեկան, 4-րդ այց:

Նկար 3.



Հետազոտվող՝ Ա. Լ., 21 տարեկան, 7-րդ այց:

Նկար 4.



Հետազոտվող՝ Ա. Լ., 21 տարեկան, 10-րդ այց:

Նկար 5.



Հետազոտվող՝ Ա. Լ., 21 տարեկան, 13-րդ այց:

Եզրափակիչ այցին հետազոտվողին առաջարկել ենք դիտել նկարներն՝ ըստ հերթականության, տվել ենք դրանց վերլուծությունը, ցույց ենք տվել համատեղ աշխատանքի արդյունքում գրանցած փոփոխությունների դինամիկան, ապա վերջնական արդյունքը (տե՛ս նկար 5): Բավականին տպավորիչ էր վերջին նկարը (տե՛ս նկար 5), երբ այցելուն հայտնեց, որ իր խնդիրը լուծված է, նա այլևս նկարելու ոչինչ չունի:


Այսպիսով՝ կարելի է խոսել այն մասին, որ նկարային թեստերը կարելի է կիրառել ոչ միայն դիագնոստիկ աշխատանքի, խնդրի դինամիկային հետևելու համար, այլև այցելուին հոգեբանական միջամտության արդյունքները գործնականում ցույց տալու համար:

Դիագնոստիկ ինֆորմացիայի համար նկարային թեստի վերլուծությունը կատարվել է Ա. Լ. Վենգերի՝ «Հոգեբանական նկարային թեստեր» պատկերազարդ ուղեցույցի կիրառմամբ [5, էջ 142-147]:

Հասկանալու համար, թե արդյոք բավարարվել է մեր առջև դրված նպատակը, կիրառել ենք ստանդարտացված զրույցի մեթոդը:


Զրույցի նպատակն էր՝ այցերի ավարտին, ստուգիչ և հիմնական խմբերի մոտ համեմատել, թե նրանց կարծիքով խնդրի լուծման մեջ որքան դեր ունեցավ արտաքին միջավայրը և անց կացված հոգեբանական միջամտությունը:

Արդյունքում հիմնական խմբում ունեցանք հետևյալ պատկերը՝



Աղյուսակ 1. Ստացված արդյունքները հիմնական խմբում:

- Խնդրի լուծման մեջ կարևոր դեր ունեցավ՝
- 1 – հոգեբանի հետ աշխատանքը.
 - 2 - արտաքին միջավայրը:



Աղյուսակ 2. Ստացված արդյունքները ստուգիչ խմբում:

- Խնդրի լուծման մեջ կարևոր դեր ունեցավ՝
- 1 – հոգեբանի հետ աշխատանքը.
 - 2 - արտաքին միջավայրը:

Այսպիսով՝ զրույցի արդյունքում ստացված տվյալները ցույց տվեցին, որ այցերի ավարտին հիմնական խմբի 80%-ը իր խնդրի լուծման մեջ մեծ դեր էր տալիս հոգեբանական միջամտությանը, իսկ ստուգիչ խմբում՝ միայն 40%-ը:

Եզրակացություն

Հետազոտությունը ցույց տվեց, որ եթե այցելուի հետ անհատական հոգեբանական աշխատանքների ընթացքում կիրառել նկարային թեստերը, ապա դրանք ոչ միայն կօգնեն հոգեբանին՝ հետևելու խնդրի դինամիկ զարգացումներին, այլև թույլ կտան այցելուին արժևորել հոգեբանական միջամտության դերը՝ իրենց առաջ քաշած խնդիրների լուծման հարցում:

Ամփոփելով հետազոտության արդյունքները՝ կարելի է ասել, որ մեր առջև դրված խնդիրը լուծված է:

Առաջարկում ենք պրակտիկ հոգեբաններին իրենց գործունեության ընթացքում կիրառել աշխատանքային այս մեթոդը: Այն թույլ կտա, հոգեբանական միջամտությունների շնորհիվ գրանցած հաջողությունները առավել տեսանելի դարձնել հասարակության լայն շրջանակներին:

Գրականության ցանկ

1. Հ. Մ. Ավանեսյան, Պրոյեկտիվ մեթոդների գիտակիրառական առանձնահատկությունների համակարգումը, Երևան, ԵՊՀ հրատ., 2017, 256 էջ:
2. Հ. Մ. Ավանեսյան, Փորձարարական հոգեբանություն, Ուսումնական ձեռնարկ, Երևան, Էդիթ Պրինտ, 2010, 288 էջ:
3. Ն.Գ. Ազատյան, Ք.Ս. Ավետիսյան, Տ.Ա. Առաքելյան, Ն.Ն. Գրիգորյան, Ս.Հ. Հարությունյան, Գ.Հ. Ղազարյան, Լ.Ռ. Մնացականյան, Ն.Տ. Վարդանյան, Տեր-Ստեփանյան Ա.Հ., Բժշկական հոգեբանություն, Ուսումնական ձեռնարկ, http://ijevanlib.ysu.am/wp-content/uploads/2018/04/ Բժշկական_հոգեբանության_դասագիրք_հայերեն.pdf, 17.02.2022թ. :
4. Акулов В. , Кудренко Т. , Сборник_проективных_методик, <https://dnmcp.com.ua/sites/default/files/2018-11/24/Сборник%20проективных%20тестов.pdf> 18.02.2022 թ.
5. Венгер А.Л., Психологические рисуночные тесты: Иллюстрированное руководство, Москва, Изд-во ВЛАДОС-ПРЕСС, 2003, 160 с.
6. Волков Б.С., Волкова Н.В., Губанов А.В., Методология и методы психологического исследования: Учебное пособие для вузов., Москва, Академический Проект; Фонд «Мир». 2005.— 352 с.

ԹԵԹԵՎ ԱՍՏԻՃԱՆԻ ՄՏԱՎՈՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԽՆԴԻ ՇՈՒՐՋ

ՎԱԶԳԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
գիտակրթական միջազգային կենտրոն
հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
vazgen.poghosyan@isec.am

ԳՅՈՒՆԱՐԱ ԳԱՐԻԵԼՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
գիտակրթական միջազգային կենտրոն
հոգեբանության մագիստրոս
gyulnara.gabi@mail.ru

Համառոտագիր

Կրթության և, հատկապես, ներառական կրթության համակարգում մեծ դերակատարում ունի ինքնագնահատականը: Ինքնագնահատականը մարդու ինքնագիտակցության բաղկացուցիչ մասն է, որի միջոցով անհատը գնահատում է սեփական կարողությունները, հմտությունները, արժանիքները և թերությունները: Տարիքի աճին զուգընթաց ինքնագնահատականը դառնում է առավել տարբերակված. անհատը կյանքի տարբեր ոլորտներում իրեն գնահատում է՝ անկախ մյուս ոլորտներում կրած հաջողություններից կամ անհաջողություններից:

Հատուկ և ներառական կրթություն իրականացնող դպրոցներում թեթև աստիճանի մտավոր զարգացման խանգարում ունեցող միջին դպրոցական տարիքի սովորողների ինքնագնահատականի վերաբերյալ տեղեկությունները ամբողջական չեն և դեռ անհրաժեշտություն կա բազմաթիվ ուսումնասիրությունների՝ տվյալ պարագայում ցույց տալու այդ երկու դպրոցներում իրականացվող կրթության ազդեցությունը այս երեխաների անձնային զարգացման, մասնավորապես՝ ինքնագնահատականի ձևավորման առանձնահատկությունների վրա՝ իրականացնելով համեմատական վերլուծություն: Ինքնագնահատականի ուսումնասիրությունը և առանձնահատկությունների վերլուծությունը թույլ կտան ճիշտ և հստակ կազմակերպել այս երեխաների կրթությունը՝ ելնելով այդ առանձնահատկություններից:

Հոդվածում վերլուծության են ենթարկված հատուկ և ներառական կրթություն իրականացնող դպրոցներում սովորող թեթև աստիճանի մտավոր զարգացման խանգարում ունեցող միջին դպրոցական տարիքի երեխաների ինքնագնահատականի առանձնահատկությունները, որի արդյունքում պարզ դարձավ, որ հատուկ դպրոցում սովորող դեռահասների ինքնագնահատականը առավել բարձր է, իսկ ներառական դպրոցում սովորողների ինքնագնահատականը գտնվում է նորմայի սահմաններում:

Ուսումնասիրության արդյունքները կօգնեն՝ մշակելու հստակ ուղիներ, որոնք անհրաժեշտ են տվյալ խմբի երեխաների ինքնագնահատականի առավել ադեկվատ ձևավորման, դրսևորման և զարգացման համար:

Բանալի բառեր և բառակապակցություններ. անձի զարգացում, բարոյա-հոգեբանական զարգացում, մտավոր կարողություններ, խնդիր-երկրճնտրանքներ, վարժանքներ:

К ПРОБЛЕМЕ САМООЦЕНКИ ПОДРОСТКОВ С ЛЕГКОЙ СТЕПЕНЬЮ УМСТВЕННОЙ ОТСТАЛОСТИ

ВАЗГЕН ПОГОСЯН

Национальная академия наук Республики Армения
Международный научно-образовательный центр
кандидат психологических наук Доцент
vazgen.poghosyan@isec.am

ГЮЛЬНАРА ГАБРИЕЛЯН

Национальная академия наук Республики Армения
Международный научно-образовательный центр
магистр психологии
gyulnara.gabi@mail.ru

Аннотация

В системе образования, особенно в системе инклюзивного образования, большую роль играет самооценка учащихся. Самооценка составная часть самосознания, представление индивида о самом себе, о важности собственной личности и своей деятельности среди других людей, оценивание себя и собственных качеств и чувств, достоинств и недостатков. По мере взросления самооценка становится особенно развитой: личность в разных жизненных проявлениях оценивает себя независимо от успехов и неудач в других жизненных сферах, выражение их открыто или даже закрыто. В качестве основного критерия оценивания выступает система ценностей индивида.

Информация о самооценке учеников, обучающихся в специальных инклюзивных школах, недостаточна и есть необходимость проведения большого числа исследований также с целью сравнительного анализа самооценки учащихся в таких школах. Это позволит наиболее эффективно организовать обучение школьников с легкой степенью умственной отсталости.

В статье проанализированы особенности самооценки детей с легкой степенью умственной отсталости, обучающихся как в специальных школах, так и школах, осуществляющих инклюзивное обучение. Выяснилось, что у подростков специальных школ уровень самооценки сравнительно выше. Результаты исследования могут быть использованы для адекватного формирования и развития самооценки подростков данной группы.

Ключевые слова и словосочетания: развитие личности, нравственно-психологическое развитие, умственные способности, проблемные задания, тренинги.

TO THE PROBLEM OF SELF-ESTIMATION OF ADOLESCENTS WITH MILD MENTAL RETARDATION

VAZGEN POGHOSYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
International Scientific-Educational Center
PhD in Psychological Sciences Associate Professor
vazgen.poghosyan@isec.am

GYULNARA GABRIELYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
International Scientific-Educational Center
Master of Psychology
gyulnara.gabi@mail.ru

Abstract

In education, especially in the inclusive education system, self-esteem is extremely essential. Self-esteem is an integral part of a person's self-awareness, through which an individual evaluates his abilities, skills, strengths, and weaknesses. With age, self-esteem becomes more differentiated, an individual evaluates himself in different spheres of life regardless of the successes and failures in other spheres.

Information on the self-esteem of middle-aged children with mild mental retardation in special inclusive schools is incomplete. Here more study is required through a comparative analysis to show the impact of education of these two schools on the characteristics of the children's personal development, particularly the development of self-esteem.

Self-Esteem study and character analysis will make it possible to organize the education of these children correctly and precisely, based on these features.

The article analyzes the peculiarities of self-esteem of middle-aged children with mild mental retardation in schools with special inclusive education, which showed that the self-esteem of adolescents in special schools is higher and the self-esteem of students in inclusive schools is within the normal range. The results of the study will help to develop clear ways, which are necessary for more adequate formation, expression, and development of self-esteem of children from this group.

Keywords and phrases: personal development, moral -psychological development, mental abilities, tasks-dilemmas, exercises.

Ներածություն

Այսօր կրթությունը գնում է դեպի ներառականացում: Ներառական կրթությունը գործընթաց է, որը հենվում է բոլոր երեխաների, այդ թվում՝ նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ կրթություն ստանալու իրավունքի վրա: Այն արձագանքում է բոլոր սովորողների բազմազան կարիքներին, մեծացնում է մասնակցությունը ուսումնական, մշակութային և համայնքային կյանքին և նվազեցնում է բացառումը կրթությունից, ընդգրկում է փոփոխություններ և բարեփոխումներ կրթության բովանդակության մեջ, մոտեցումներում, կառույցներում և մեթոդներում, տարածվում է համապատասխան տարիքային խմբի բոլոր երեխաների վրա և հենված է այն համոզմունքի վրա, որ բոլոր երեխաներին կրթելը հանրակրթական համակարգի պարտականությունն է:

Հատուկ և ներառական կրթություն իրականացնող դպրոցներում թեթև աստիճանի մտավոր զարգացման խանգարում ունեցող միջին դպրոցական տարիքի սովորողների ինքնագնահատականի վերաբերյալ տեղեկությունները ամբողջական չեն և դեռ անհրաժեշտություն կա բազմաթիվ ուսումնասիրությունների՝ տվյալ պարագայում ցույց տալու այդ երկու դպրոցներում իրականացվող կրթության ազդեցությունը այս երեխաների անձնային զարգացման, մասնավորապես՝ ինքնագնահատականի ձևավորման առանձնահատկությունների վրա՝ իրականացնելով համեմատական վերլուծություն:

Ինքնագնահատականի ուսումնասիրությունը և առանձնահատկությունների վերլուծությունը թույլ կտան ճիշտ և հստակ կազմակերպել այս երեխաների կրթությունը՝ ելնելով այդ առանձնահատկություններից:

Տեսական մաս

Կրթության և, հատկապես, ներառական կրթության համակարգում մեծ դերակատարում ունի ինքնագնահատականը: Ինքնագնահատականը մարդու ինքնագիտակցության բաղկացուցիչ մասն է, որի միջոցով անհատը գնահատում է սեփական կարողությունները, հմտությունները, արժանիքները և թերությունները: Տարիքի աճին զուգընթաց ինքնագնահատականը դառնում է առավել տարբերակված՝ անհատը կյանքի տարբեր ոլորտներում իրեն գնահատում է անկախ մյուս ոլորտներում կրած հաջողություններից կամ անհաջողություններից [3, էջ 73]:

Ինքնագնահատականը հուզական գնահատականն է մեր Ես-ին, այն դատողություն է սեփական արժեքի մասին: Ինքնագնահատականը, ինչպես և ինքնաճանաչողությունը, սկսվում է արտաքինից, մենք նախ գնահատում ենք մեր արտաքին տեսքը, ֆիզիկական առանձնահատկությունները, ապա սկսվում է մեր հոգեկանի ճանաչման գործընթացը, որն առավել կարևոր է: Առանց ինքնագնահատականի դժվար է ինքնորոշվել կյանքում: Ճիշտ ինքնագնահատականը ենթադրում է քննադատական վերաբերմունք իր նկատմամբ, սեփական հնարավորությունների համադրում կյանքում առաջադրված պահանջների հետ, սեփական անձի առջև ինքնուրույն իրականանալի նպատակներ դնելու կարողություն, սեփական մտքի ընթացքի և արդյունքների խիստ գնահատում, բոլոր կողմ և դեմ կարծիքների կշռադատում, անհիմն վարկածներից հրաժարում և այլն:

Ինքնագնահատականը մեծապես կախված է տվյալ մարդու սոցիալական միջավայրից և արժեքային համակարգից [2, էջ 53]:

Մտավոր զարգացման խանգարման պարագայում խանգարումների բնութագիրը, որն ընկած է այս խմբին պատկանող երեխաների ախտորոշիչ ու շտկողական օգնության կառուցման հիմքում, հաճախ հանդիսանում է ոչ ադեկվատ, քանի որ ուղղված է, առաջին հերթին, կրթական տարբերակման հիմնախնդիրների պաշտոնական լուծմանը: Այս թեմայով հոգեբանական բազմաթիվ հետազոտությունների արդյունք է հանդիսանում մտավոր զարգացման խանգարում ունեցող երեխայի առավելապես ճանաչողական ոլորտի գործառնության փաստերի հաստատումը ու որոշ միտումների սահմանումը [1, էջ 75]:

Մտավոր զարգացման խանգարման դեպքում ինքնագիտակցության ու «Ես կերպարի» հետազոտությունը ձեռք է բերում հատուկ արդիականություն այն իմաստով, որը այդ կերպարը իրականացնում է ոչ միայն և ոչ այնքան ներառող, ինքնաճանաչման

գործընթացները կազմակերպող գործառույթ, որքան ապահովում է վարքի ինքնուրույն կարգավորման, սեփական գործունեության ու հուզական դրսևորումների վերահսկողության իրականացումը: Վարքի ինքնուրույն գնահատման ու վերահսկման իրականացման հնարավորությունը, գործունեության արդյունքների անտիցիպացիայի ընդունակությունը, այդ գործողությունների բարդ, ծրագրերի կառուցումը համապատասխան են սեփական հնարավորություններին և հաշվի են առնում սոցիալական իրավիճակի համատեքստը. գործընթացներ, առանց որոնց հնարավոր չէ անձի սոցիալականացումն ու ինքնագարգացումը: Բացի այդ՝ մտավոր զարգացման խանգարման դրսևորումներից մեկը հանդես է գալիս նշանի անբավարար ներկայացումը գիտակցության կառուցվածքում, որը հանգեցնում է հոգեկանի ձևավորման անհնարինությանը՝ որպես բարձրագույն հոգեկան գործառույթների համակարգ [4, էջ 91]:

Հատուկ և ներառական կրթություն իրականացնող դպրոցներում սովորող թեթև աստիճանի մտավոր զարգացման խանգարում ունեցող միջին դպրոցական տարիքի երեխաների ինքնագնահատականի առանձնահատկությունները պարզելու համար 2020-2021 ուսումնական տարում իրականացրել ենք նպատակային հոգեբանամանկավարժական ուսումնասիրություն, որն ընդգրկել է մի քանի փուլ:

Առաջին քայլը եղել է համագործակցության հաստատումը հատուկ և ներառական կրթություն իրականացնող դպրոցներում սովորող թեթև աստիճանի մտավոր զարգացման խանգարում ունեցող երեխաների, դպրոցների տնօրենների, աշխատակազմի, երեխաների հետ աշխատող բազմամասնագիտական թիմերի անդամների՝ հատուկ հոգեբանների, հատուկ մանկավարժների, լոգոպեդների հետ: Հաջորդիվ համագործակցության ընթացքում քննարկել ենք հաստատության ներսում առկա թեթև աստիճանի մտավոր զարգացման խանգարում ունեցող երեխաներին առնչվող առաջնահերթ խնդիրները, մասնավորապես, ինքնագնահատականի ադեկվատ ձևավորմանը վերաբերող դժվարությունները: Ուսումնասիրության ընթացքում զրուցել ենք երեխաների, նրանց հետ աշխատող մասնագետների հետ՝ երեխաների անհատական առանձնահատկություններին ծանոթանալու և ինքնագնահատականի ձևավորման հնարավոր պատճառների վերհանման համար:

Թեթև աստիճանի մտավոր զարգացման խանգարում ունեցող միջին դպրոցական տարիքի հատուկ և ներառական կրթություն իրականացնող դպրոցներում համեմատական վերլուծություն կատարելու համար կիրառել ենք հետևյալ մեթոդիկաները՝

1. Վ.Գ. Շչուրի «Սանդուղք» մեթոդիկան.
2. Դեմբո-Ռուբինշտեյնի ինքնագնահատականի չափման մեթոդիկան.
3. Մ.Դե-Գրեֆեի ինքնագնահատականի ուսումնասիրման մեթոդիկան:

Ինչպես նշվեց, զրուցել ենք ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատող մասնագետների հետ, որոնք առավել լավ են տեղեկացված երեխաների խնդիրների, անձնային առանձնահատկությունների, սահմանափակումների, կարողությունների մասին, և բավարար կարող են օգնել, ուղղորդել ինքնագնահատականի առավել օբյեկտիվ գնահատմանը:

Բազմակողմանի քննարկումներից, կարծիքների ընդհանրացումներից հետո ընտրել ենք 10 երեխա ներառական կրթություն իրականացնող դպրոցից և 10 երեխա հատուկ դպրոցից, ընդհանուր առմամբ՝ 20 երեխա: Հաջորդ քայլը դիտարկումն էր, քանի որ դիտարկումը որոշակիորեն թույլ է տալիս տեսնել այն, թե անձը իրեն ինչպես է դրսևորում սոցիալական միջավայրում, և ինչը կարող է ազդել, կամ ազդում է տվյալ երեխայի ինքնագնահատականի բարձր, նորմային համապատասխանող, կամ ցածր լինելու վրա: Դիտարկումը կազմակերպվել էր մտավոր զարգացման խանգարում ունեցող երեխաների հետ հատուկ և ներառական կրթություն իրականացնող դպրոցներում, որտեղից ընտրել էինք թեթև աստիճանի մտավոր զարգացման խանգարում ունեցող երեխաներին: Այդպես առավել մանրամասն կարելի է ծանոթանալ երեխայի անձնային առանձնահատկություններին, հասակակիցների հետ շփմանը, սոցիալական միջավայրում տվյալ երեխայի ակտիվ ինտեգրմանը տարբեր միջոցառումներին: Մենք ներկա ենք գտնվել հատուկ դպրոցում գարնան գալուստի առիթով կազմակերպված միջոցառմանը և

փորձերին, և պարզել ենք, թե նրանք ինչ չափով են ներառված նմանատիպ սոցիալական խմբերում, ցուցաբերում են արդյոք նախաձեռնողականություն, թե ոչ, որքանով են ինտեգրված իրենց հասակակիցների հետ համագործակցությանը:

Դիտարկում է իրականացվել նաև ներառական կրթություն իրականացնող դպրոցում, դիտարկվել է ներառումն ու ակտիվությունը մտավոր զարգացման խանգարում ունեցող և բնականոն զարգացում ունեցող երեխաների հետ, որը իրականացվել է դերային խաղի միջոցով, այստեղ ևս շատ ակտիվ էր նրանց մասնակցությունը կազմակերպչական և իրականացվելիք գործողություններում և կրում էր շարունակական բնույթ: Այսպիսով՝ ինքնագնահատականի ուսումնասիրությունը օգնեց՝ ավելի հստակ պատկերացում կազմելու թեթև աստիճանի մտավոր զարգացման խանգարում ունեցող երեխաների ինքնագնահատականի ձևավորման, դժվարությունների, տարբերությունների և հնարավոր պատճառների մասին:

Վերոնշյալ հիմնախնդիրն առավել ամբողջական լուծում տալու նպատակով մտադիր ենք ուսումնասիրությունը շարունակել, իսկ առայժմ ներկայացնենք կատարածի նախնական եզրակացությունները:

1. Դեռահասների հետ զրուցելիս առավել ակներև դարձավ նրանցից յուրաքանչյուրի մոտ ինքնագնահատականի բարձր, նորմալ կամ ցածր լինելու պատճառը: Կրկին համոզվեցինք, որ ինքնագնահատականը առաջին հերթին կապված է ընտանեկան միջավայրի, հասակակիցների հետ շփման, ընկերների, նրանց դերի և բազմաթիվ այլ ներազդեցությունների դրական կամ բացասական ազդեցության հետ:

2. Նախքան մեթոդիկաները իրականացնելը մենք դեռահասների մոտ փորձել էինք ձևավորել դրական նախատրամադրվածություն առաջին հերթին մեր և մեր կողմից իրականացվող աշխատանքի շուրջ: Կարծում ենք, որ դա կարելի է ստացված համարել, քանի որ մեթոդիկաներն իրականացնելիս նրանց կողմից ընդվզումներ կամ այլ խոչընդոտներ չառաջացան: Այդ ամենը փաստում էին նաև բազմամասնագիտական թիմի անդամները, ինչը մեզ առավել էր պարտավորեցնում աշխատանքի արդունավետ իրականացման և ճշգրիտ տվյալների ստացման առումով:

3. Հատուկ և ներառական կրթություն իրականացնող դպրոցներում 20 երեխաների հետ իրականացված ինքնագնահատականի ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ հատուկ դպրոցում առավել բարձր է թեթև աստիճանի մտավոր զարգացման խանգարում ունեցող երեխաների ինքնագնահատականը, քան ներառական կրթություն իրականացնող դպրոցում: Հատուկ դպրոցում սովորող երեխաները իրեց չափազանց լավ և գերարժեք էին զգում տվյալ միջավայրում, իրենց հասակակիցների, նույն խնդիրն ունեցողների և հատկապես նույն դասարանում գտնվող երեխաների հետ, նրանք իրենց ուժերի ներածին չափով անկաշկանդ մասնակցում են դասապրոցեսին և տարբեր խաղերին, միջոցառումներին: Ներառական կրթություն իրականացնող դպրոցի երեխաներին կարելի է ընդգրկել ադեկվատ ինքնագնահատական ունեցող երեխաների խմբում, ինչը պայմանավորված է բնականոն զարգացում ունեցող երեխաների հետ ուսուցմամբ:

Եզրակացություն

Այսպիսով՝ հատուկ դպրոցում դեռահասների ինքնագնահատականը առավել բարձր է, քան ներառական կրթություն իրականացնող դպրոցում, որտեղ սովորողների ինքնագնահատականը նորմայի սահմաններում է:

Գրականության ցանկ

1. Алексеев В. А. Развитие самосознания на рубеже подросткового и юношеского возраста. М., 1985. 134 с.
2. Гаурилюс А. И. Возрастная динамика представлений учащихся вспомогательной школы о себе и одноклассниках в системе межличностных отношений. Дис. ... канд. психол. наук. Минск, 1998. 141 с.
3. Лубовский В. И. Психологические проблемы диагностики аномального развития детей. М., 1989. 103 с.
4. Майерс Д. Социальная психология. СПб: Питер, 2002. 1313 с.

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՆՁՆԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՆՏԵՐՆԵՏ- ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ՏԱԹԵՎԻԿ ԵՐԻՑՅԱՆ

«Հ գիտությունների ազգային ակադեմիա
գիտակրթական միջազգային կենտրոն
հոգեբանության ամբիոնի մագիստրանտ
tatev.yeritsyan@mail.ru

Համառոտագիր

Ինտերնետ հաղորդակցությունը հետզհետե ավելի է զբաղեցնում երիտասարդների ազատ ժամանակը՝ հաճախ ժամանակ չթողնելով կենդանի շփման համար: Ներկայումս ինտերնետ-հաղորդակցության ձևերի մեծ բազմատեսակություն կա, որն էլ կարող է նպաստել սոցիալական վարքի նոր մոդելների ի հայտ գալուն և կենդանի հաղորդակցման մեջ ինտեգրացվելուն: Տվյալ հիմնախնդրի ուսումնասիրման համար որպես առանձին սոցիալական խումբ հետաքրքրություն են ներկայացնում երիտասարդները, քանի որ նրանք ակտիվ փնտրում են իրենց տեղը սոցիալական կառուցվածքում, սոցիալական նորմեր, արժեքներ և վարքաձևեր են յուրացնում:

Հոգեբանական մի շարք հետազոտություններ կապված են սոցիալական ցանցերում ինքնա-ներկայացման, պրոֆիլի վերլուծության, անձնային գծերի որոշակի բնութագրերի գնահատման, անձնային առանձնահատկությունների, վիրտուալ տարբեր անձեր ստեղծելու պատճառների ուսումնասիրմանը: Ֆիզիկական չներկայացվածությունը անանունության հետ միասին անսահմանափակ տարածություն է բացում մի կողմից՝ կասկածելի տեղեկատվության ներկայացման համար, մյուս կողմից՝ զրուցակցի անձի մասին ենթադրություններ անելու համար: Տվյալ առանձնահատկության արդյունքում ինտերնետ-հաղորդակցության մեջ զրուցակիցների համար ջնջվում են սահմանները, սահմանափակումները, շփման պատնեշները, որոնք պայմանավորված են այնպիսի բնութագրիչներով, ինչպիսիք են՝ սեռը, տարիքը, սոցիալական կարգավիճակը, արտաքին գրավչությունը, ինչպես նաև՝ անձի կոմունիկատիվ կոմպետենտությունը (նրա ոչ վերբալ կողմը): Բացի այդ՝ ինտերնետ-տեխնոլոգիան հաղորդակցությունը դարձնում է տրանսսահմանային, այսինքն՝ շփումը այլևս կախված չի լինում հաղորդակցվողների գտնվելու վայրից: Սա հաշվի առնելով՝ համացանցը կարող է կատարել սոցիալ-ստեղծարար գործառույթ, այլ կերպ ասած՝ ստեղծել նոր համայնքներ՝ ամբողջական տեղեկատվական բազայով և ընդհանուր արժեքային-նորմատիվ ֆունդամենտով:

Մեր հետազոտության նպատակն է՝ դուրս բերել երիտասարդների սոցիալական վարքի և ինտերնետ-հաղորդակցման միջև փոխադարձ կապը: Հետազոտության վարկածն է՝ ինտերնետ-հաղորդակցությունների ընտրությունը փոխկապակցված է երիտասարդների սոցիալական վարքի արտահայտման առանձնահատկությունների հետ:

Հետազոտությանը մասնակցել են 18-22 տարիքային խմբին պատկանող օգտատերեր, որոնց ընդհանուր թիվն է 35. Խմբում առկա են արական և իգական սեռի ներկայացուցիչներ:

Հետազոտության ընթացքում օգտագործել ենք հետևյալ մեթոդները՝ Ա. Բասի և Ա. Դարկիի ագրեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման մեթոդիկա, Հաղորդակցման դիրքորոշումների ախտորոշման մեթոդիկա (Վ. Վ. Բոյկո), Հուզական խառնվածքի գնահատման հարցարան TEMPS-A (Akiskal H. S.), ինչպես նաև՝ «Ինտերնետ հաղորդակցությամբ պայմանավորված երիտասարդների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները» բացահայտող հարցարան:

Վերլուծելով հետազոտության արդյունքները՝ կարող ենք նշել, որ 18-22 տարեկան երիտասարդ անձինք հակված են վիրտուալ շփման. այս կամ այն չափով բոլորը շփվում են սոցիալական ցանցերի միջոցով, որոնց ընտրության հարցը պայմանավորված է հաղորդակցման շրջանակների ընդլայնման հետ մի շարք խնդիրներ հաղթահարելու նպատակով՝ երիտասարդության ժամանակահատվածում միայնության զգացողության հաղթահարում, հասակակիցների, ինչպես նաև հակառակ սեռի հասակակիցների շրջանում սեփական դիրքով անբավարարվածության զգացողություն, անբավարարվածություն սեփական արտաքին տեսքով, ցանկություն մոտեցնելու սեփական «իրական Ես-ը» «իդեալական Ես-ին»:

Բանալի բառեր և բառակապակցություններ. անձնային առանձնահատկություններ, ինտերնետ կապ, սոցիալական վարք, հաղորդակցական վերաբերմունք, հուզական խառնվածք, երիտասարդություն:

СООТНОШЕНИЕ ЛИЧНОСТНЫХ ХАРАКТЕРИСТИК МОЛОДЕЖИ И ИНТЕРНЕТ-КОММУНИКАЦИИ

ТАТЕВИК ЕРИЦЯН

Национальная академия наук Республики Армения
Международный научно-образовательный центр
магистрат кафедры психологии
tatev.yeritsyan@mail.ru

Аннотация

В связи со стремительным проникновением Интернета во все сферы социальных сетей актуальны исследования не только технических средств и возможностей виртуального пространства, но и, главное, изучения его воздействия на человека. Становится важным изучение психологических особенностей личности, которые проявляются или формируются в виртуальном мире, особенно в подростковом и юношеском возрасте, когда происходит профессиональное самоопределение, построение социальных позиций, жизненного плана, поиск личных связей.

Ряд психологических исследований связан с изучением самопрезентации в социальных сетях, анализом профиля, оценкой тех или иных характеристик личности, личностных особенностей, причин создания различных виртуальных личностей. Возможность физического отсутствия, наряду с анонимностью, открывает неограниченный простор для представления сомнительной информации, с одной стороны, и построения предположений о собеседнике, с другой. В результате этой особенности для собеседников в интернет-общении исчезают границы, ограничения, барьеры общения, которые обусловлены такими характеристиками, как пол, возраст, социальный статус, внешняя привлекательность, а также коммуникативная компетентность собеседника (его невербальная сторона). Кроме того интернет-технологии делают общение трансграничным, то есть общение больше не зависит от местонахождения коммуникаторов. С учетом этого Интернет может выполнять социально-творческую функцию, иначе говоря, создавать новые сообщества с полной информационной базой и общим ценностно-нормативным фундаментом.

Цель нашего исследования - выявить взаимосвязь между социальным поведением молодежи и «интернет-общением». Гипотеза исследования заключается в том, что выбор средств интернет-коммуникаций коррелирует с особенностями проявления молодежью социального поведения.

В ходе исследования мы использовали следующие методы: методика диагностики показателей и форм агрессии А. Басса и А. Дарки, методы диагностики коммуникативных установок В.В. Бойко, опросник оценки эмоционального темперамента TEMPS-A (Акискал С.), а также опросник, определяющий «Социально-психологические особенности молодежи, обусловленные интернет-общением».

Анализируя результаты исследования, можно сказать, что молодежь 18-22 лет склонна к виртуальному общению, более или менее все общаются через социальные сети, выбор которых связан с расширением общения, с целью преодоления ряда проблем: чувство одиночества, чувство неудовлетворенности, свое положение среди сверстников, а также сверстников противоположного пола, неудовлетворенность собственной внешностью, стремление приблизить свое «Реальное Я» к «Идеальному Я».

Ключевые слова и словосочетания: личностные характеристики, интернет-коммуникация, социальное поведение, коммуникативная установка, эмоциональный темперамент, молодежь.

THE RATIO OF YOUNG PEOPLE'S PERSONAL CHARACTERISTICS AND INTERNET COMMUNICATION

TATEVIK YERITSYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
International Scientific-Educational Center
Department of Psychology, Master Student
tatev.yeritsyan@mail.ru

Abstract

In connection with the rapid penetration of the Internet, in all spheres of social networks life, research is relevant not only to the study of the technical means and possibilities of the virtual space but also, most importantly, to the study of its impact on humans. It becomes important to study the psychological characteristics of an individual, which are manifested or formed in the virtual world, especially in adolescence and youth when professional self-determination takes place, social positions, life plan building, search for personal connections.

Several psychological types of research are related to the study of self-presentation on social networks, profile analysis, evaluation of certain characteristics of personal traits, personal characteristics, reasons for creating different virtual personalities. Physical non-representation, along with anonymity, opens up an unlimited space for presenting questionable information on the one hand and making assumptions about the interlocutor on the other. As a result of this feature, the boundaries, restrictions, barriers of communication are removed for the interlocutors in the internet communication, which are conditioned by such characteristics as gender, age, social status, external attractiveness, as well as the communicative competence of the person (his non-verbal side). In addition, Internet technology makes communication cross-border, that is, communication no longer depends on the location of the communicators. With this in mind, the Internet can perform a social-creative function, in other words, create new communities with a complete information base and a common value-normative foundation.

Our research aims to find out the interrelationships between the social behavior of young people and the "Internet communication". The research hypothesis is that the choice of Internet communications is correlated with the peculiarities of young people's expression of social behavior.

During the research, we used the following methods: A. Bass and A. Darkie Aggression Types and Methodology for Diagnosis, Communication Attitudes Diagnosis Methods VJV-Boyko, Emotional Temperament Assessment Questionnaire TEMPS-A (Akiskal H. S.), as well as a questionnaire identifying the "Socio-psychological characteristics of young people due to Internet communication".

Analyzing the results of the research, we can say that young people aged 18-22 tend to have virtual communication, more or less everyone communicates through social networks, the choice of which is connected with the expansion of communication, to overcome several problems, feeling lonely in youth, coping, feelings of dissatisfaction with one's position among peers, as well as peers of the opposite sex, dissatisfaction with one's appearance, a desire to bring one's "real self" closer to the "ideal self".

Keywords and phrases: Personal characteristics, Internet communication, social behavior, communication attitude, emotional temperament, young people.

Ներածություն

Ինտերնետային հաղորդակցությունը դարձել է սոցիալական իրականություն, արդիական է երիտասարդների միջև հաղորդակցության խնդիրը: Ինտերնետ հաղորդակցությունը հետզհետե ավելի է զբաղեցնում երիտասարդների ազատ ժամանակը՝ հաճախ ժամանակ չթողնելով կենդանի շփման համար: Ներկայումս ինտերնետ-հաղորդակցության ձևերի մեծ բազմատեսակություն կա, որն էլ կարող է նպաստել սոցիալական վարքի նոր մոդելների ի հայտ գալուն և կենդանի հաղորդակցման մեջ ինտեգրացվելուն: Տվյալ հիմնախնդրի ուսումնասիրման համար որպես առանձին սոցիալական խումբ հետաքրքրություն են ներկայացնում երիտասարդները, քանի որ նրանք ակտիվ կերպով իրենց տեղն են փնտրում սոցիալական կառուցվածքում, սոցիալական նորմեր, արժեքներ և վարքաձևեր են յուրացնում:

Համացանցը՝ որպես շփման միջոց դիտարկելու պատճառները կարող են լինել մի քանիսը [7 էջ 251, 254].

1. Իրական կյանքում շփումների ոչ բավարար մակարդակ՝ նման դեպքերում օգտատերերը արագ կորցնում են ինտերնետ-հաղորդակցության հանդեպ հետաքրքրությունը, եթե համապատասխան պահանջումները իրական կյանքում բավարարելու հնարավորություն է ստեղծվում:

2. Անձնային հատկանիշներն իրացնելու հնարավորություն, դերերի ստանձնում, հույզերի ապրում, որն իրական կյանքում այս կամ այն պատճառներով հնարավոր չէ: Նման հնարավորությունը պայմանավորված է ինտերնետ-հաղորդակցության առանձնահատկություններով՝ անանունություն, ոչ կոպիտ նորմատիվություն, օգտատիրոջ յուրատեսակ ընկալում: Այս կամ այն հույզը ապրելու ցանկությամբ է բացատրվում հավանաբար նաև այն, որ օգտատերերը ձգտում են տեքստը դարձնել լեցուն, հուզական, երանգավորված [5 էջ 32-40]:

Տեսական մաս

Մարդիկ ավելի հաճախ են օգտագործում տարբեր մեդիաալիքներ, և դրանց օգտագործման ժամանակը ևս աճում է: Գոյություն ունեն ինտերնետ-կոմունիկացիաների տարբեր ձևեր: Դրանք կարող են պարունակել ինչպես տեքստային հաղորդագրություններ, այնպես էլ՝ վիդեո և ֆոտո հաղորդագրություններ: Հաղորդագրությունները պայմանականորեն կարելի է դասակարգել որպես ակնթարթային (online-իրական ժամանակային ռեժիմով հաղորդակցություն) և ոչ ակնթարթային (offline-հետաձգված հաղորդակցություն):

Ինտերնետ-հաղորդակցության հիմնական ձևերն են՝ տեսազրուցարաններ (Skype, FaceTime և այլ ծրագրերի միջոցով). էլեկտրոնային փոստ (Mail.ru, Google.com և այլ միջոցներ), մեսենջերներ (զրուցարաններ)՝ (Messenger, WhatsApp, Viber հավելվածները), օնլայն-հեռարձակումը ցույց է տալիս օգտատիրոջը իրական ժամանակի մեջ և թույլ է տալիս ընկերներին ու հետևորդներին պատմել սեփական կյանքի մասին, Բլոգներ (հանրային օրագիր), Ֆորումներ, սոցիալական ցանցեր և այլն [3 էջ 46]:

Հոգեբանական մի շարք հետազոտություններ կապված են սոցիալական ցանցերում ինքնաներկայացման, պրոֆիլի վերլուծության, անձնային գծերի որոշակի բնութագրերի գնահատման, անձնային առանձնահատկությունների (Դ. Կլյումպեր, Դարա Ն. Գրինվուդ), համացանցում ինքնացուցադրման (Donath, Suler, Turkle), վիրտուալ տարբեր անձեր ստեղծելու պատճառների ուսումնասիրմանը (Ե. Պ. Բելինսկայա, Ա. Ե. Ժիչկինա, Ա. Ե. Վոյսկունսկի, Օ. Ն. Արեստովա, Օ. Վ. Սմիլովա, Կ. Յանգ, Զ. Սուլեր, Է. Ռեյդ, Բ. Բեկեր): Ֆիզիկական չներկայացվածությունը անանունության հետ միասին անսահմանափակ տարածություն է բացում մի կողմից՝ կասկածելի տեղեկատվության ներկայացման համար, մյուս կողմից՝ զրուցակցի անձի մասին ենթադրություններ անելու համար: Տվյալ առանձնահատկության արդյունքում ինտերնետ-հաղորդակցության մեջ զրուցակիցների համար ջնջվում են սահմանները, սահմանափակումները, շփման պատնեշները, որոնք պայմանավորված են այնպիսի բնութագրիչներով, ինչպիսիք են՝ սեռը, տարիքը, սոցիալական կարգավիճակը, արտաքին գրավչությունը, ինչպես նաև՝ անձի կոմունիկատիվ կոմպետենտությունը (նրա ոչ վերբալ կողմը) [7 էջ 132, 9 էջ 78]:

Բացի այդ՝ ինտերնետ-տեխնոլոգիան հաղորդակցությունը դարձնում է տրանսսահմանային, այսինքն՝ շփումը այլևս կախված չի լինում հաղորդակցվողների գտնվելու վայրից: Սա հաշվի

առնելով՝ համացանցը կարող է կատարել սոցիալ-ստեղծարար գործառույթ, այլ կերպ ասած՝ ստեղծել նոր համայնքներ՝ ամբողջական տեղեկատվական բազայով և ընդհանուր արժեքային-նորմատիվ ֆունդամենտով [4]:

Սոցիալական հոգեբանության մեջ մի շարք գիտական աշխատանքներ վերաբերում են միջանձնային և միջխմբային հաղորդակցությունների և համացանցային փոխազդեցության առանձնահատկությունների հիմնախնդրին, օգտատերերի մասին տպավորության ձևավորմանը և նույնականացման զգացմանը: Սոցիալական լեզվաբանության և հոգեբանական լեզվաբանության մեջ ինտերնետ-հաղորդակցությունը դիտարկվում է որպես «էլեկտրոնային դիսկուրս» և որպես միջնորդավորված խոսքային գործունեություն (Ի.Ն. Ռոզինա, Լ. Յ. Շիպիցինա, Ե. Ի. Գորոշկո, Ա. Գ. Ավրամովա, Ֆ. Օ. Սմիրնով, Ե. Ն. Գալիչկինա) [6 էջ 86]:

Հետազոտական մաս

Գրական աղբյուրների վերլուծության հիման վրա ստեղծված աշխատանքները նշանակալի չափով նպաստում են կիրառական մարդու վարքը որոշող հիմնական հոգեբանական սկզբունքների ուսումնասիրմանը:

Չնայած նրան, որ այս ուղղության շրջանակներում կատարվող հետազոտությունների աճ է նկատվում, այնուամենայնիվ, ինտերնետ-հաղորդակցությունների և երիտասարդների սոցիալական վարքի փոխադարձ կապի սպեցիֆիկան դեռևս մինչև վերջ պարզ չէ:

Մեր հետազոտության նպատակն է՝ դուրս բերել երիտասարդների սոցիալական վարքի և ինտերնետ-հաղորդակցման միջև փոխադարձ կապը: Հետազոտության վարկածն է՝ ինտերնետ-հաղորդակցությունների ընտրությունը փոխկապակցված է երիտասարդների սոցիալական վարքի արտահայտման առանձնահատկությունների հետ [10 էջ 113]:

Հետազոտությանը մասնակցել են 18-22 տարիքային խմբին պատկանող օգտատերեր, որոնց ընդհանուր թիվն է 35. Խմբում առկա են արական և իգական սեռի ներկայացուցիչներ:

Հետազոտության ընթացքում օգտագործել ենք հետևյալ մեթոդները՝ Ա. Բասի և Ա. Դարկիի ագրեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման մեթոդիկա, Հաղորդակցման դիրքորոշումների ախտորոշման մեթոդիկա (Վ. Վ. Բոյկո), Հուզական խառնվածքի գնահատման հարցարան TEMPS-A (Akiskal H. S.), ինչպես նաև՝ «Ինտերնետ հաղորդակցությամբ պայմանավորված երիտասարդների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները» բացահայտող հարցարան [1 էջ 210, 2 էջ 45]:

Ըստ Ա. Բասի և Ա. Դարկիի «Ագրեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման մեթոդիկայի»՝ հետազոտության ընթացքում ստացել ենք խմբի համար հետևյալ միջին ցուցանիշները (տե՛ս Աղյուսակ 1).

Աղյուսակ 1.

Ագրեսիայի տիպերի և ցուցանիշների արտահայտվածության չափը:

N	Ագրեսիայի տիպը	Առավելագույն հում բալ	Խմբի համար միջին ցուցանիշ/հում բալ	Արտահայտվածության չափը
1.	Ֆիզիկական ագրեսիա	10	5,31	միջին
2.	Խոսքային (վերբալ) ագրեսիա	13	7,54	միջին
3.	Մնուղղակի ագրեսիա	9	5,14	միջին
4.	Նեգատիվիզմ	5	3,23	միջին
5.	Նյարդայնություն (դժգոհություն)	11	6,29	միջին
6.	Կասկածամտություն	10	4,97	միջին
7.	Վիրավորանք	8	3,43	միջին
8.	Մեղքի զգացում	7	5,11	միջին
9.	Ագրեսիվության ինդեքս՝ («1» + «2» + «3»)/3	10,67	5,91	միջին
10.	Թշնամության ինդեքս՝ («6» + «7»)/2	9	4,22	միջին

Ինչպես տեսնում ենք Աղյուսակ 1-ից, մեր կողմից հետազոտվող խմբի համար միջին թվաբանական ցուցանիշների արտահայտվածության աստիճանը ագրեսիվության բոլոր ձևերում՝ Ֆիզիկական, Խոսքային (բանավոր), Անուղղակի, Նեգատիվիզմ, Նյարդայնություն (դժգոհություն), Կասկածամտություն, Վիրավորանք, Մեղքի զգացում, ինչպես նաև՝ Ագրեսիվության ինդեքս և Թշնամության ինդեքս, գտնվում է միջին արժեքների սահմաններում. ագրեսիվության և ոչ մի տեսակ չունի ցածր կամ բարձր ցուցանիշներ, ինչը խոսում է երիտասադների մոտ ադապտիվ վարքի մասին:

Դիտենք նաև խմբի անդամների մոտ ագրեսիվության բոլոր տեսակների բարձր, միջին և ցածր ցուցանիշների քանակը: Այսպիսով՝ Ֆիզիկական ագրեսիայի ցուցանիշները ցածր են 8 հետազոտվողների մոտ, միջին՝ 20-ի մոտ, բարձր՝ 7-ի մոտ, Խոսքային (բանավոր) ագրեսիայի ցուցանիշները ցածր են 8 հետազոտվողների մոտ, միջին՝ 17-ի մոտ, բարձր՝ 10-ի մոտ, Անուղղակի ագրեսիայի ցուցանիշները ցածր են 4 հետազոտվողի մոտ, միջին՝ 26-ի մոտ, բարձր՝ 5-ի մոտ, Նյարդայնությունը (դժգոհությունը) ցածր է 3 հետազոտվողի մոտ, միջին՝ 21-ի մոտ, բարձր՝ 11-ի մոտ, Կասկածամտությունը ցածր է 10 հետազոտվողի մոտ, միջին՝ 22-ի մոտ, բարձր՝ 3-ի մոտ, Վիրավորանքը ցածր է 10 հետազոտվողի մոտ, միջին՝ 23-ի մոտ, բարձր՝ 2-ի մոտ, Մեղքի զգացումը ցածր է 1 հետազոտվողի մոտ, միջին՝ 19-ի մոտ, բարձր՝ 15-ի մոտ, ինչպես նաև Ագրեսիվության ինդեքսը ցածր է 11 հետազոտվողի մոտ, միջին՝ 20-ի մոտ, բարձր՝ 4-ի մոտ: Առավել հետաքրքիր է Նեգատիվիզմը և Թշնամության ինդեքսի ցուցանիշները, որոնք տարբերվում են ընդհանուր պատկերից. խմբի մեծամասնության մոտ բարձր է: Այսպիսով՝ Նեգատիվիզմը ցածր է 6 հետազոտվողների մոտ, միջին՝ 13-ի մոտ, բարձր՝ 16-ի մոտ, այսինքն՝ հետազոտվողների մեծ մասի մոտ դիտվում է հեղինակությունների և ղեկավարության դեմ ընդոստ վարքի ընդդիմադիր ձև, որը պասիվ հակադրությունից կարող է վերածվել ակտիվ գործողությունների՝ ընդդեմ սահմանված պահանջների, կարգի ու օրենքների, ինչպես նաև՝ Թշնամության ինդեքսի. այս ցուցանիշը ցածր է 6 հետազոտվողի մոտ, միջին՝ 8-ի մոտ, բարձր՝ 21 հետազոտվողի մոտ, այսինքն՝ խմբի մեծ քանակով անձանց մոտ դիտվում է ընդհանուր բացասական, անվստահության դիրքորոշում շրջակա միջավայրի նկատմամբ:

Համաձայն «Հաղորդակցման դիրքորոշումների ախտորոշման (Վ.Վ. Բոյկո) մեթոդիկայի» (տե՛ս Աղյուսակ 2)՝ խմբի համար միջին թվաբանական ցուցանիշների արտահայտվածության առկա են հետևյալ կոմունիկատիվ դիրքորոշումները:

Աղյուսակ 2. Կոմունիկատիվ դիրքորոշումները և արտահայտվածության չափը:

		Խմբի միջին թվաբանական ցուցանիշները	max
1.	Մարդկանց նկատմամբ քողարկված դաժանություն նրանց մասին դատողություններում	14,77	20
2.	Մարդկանց նկատմամբ բացահայտ դաժանություն	31,43	45
3.	Մարդկանց մասին դատողություններում հիմնավորված նեգատիվիզմ	2,31	5
4.	Փնթվիթոց	4,54	10
5.	Ուրիշների հետ հաղորդակցման բացասական անհատական փորձ	10,57	20
	Բացասական կոմունիկատիվ դիրքորոշում	63,14	33-ից բարձր է

Ինչպես երևում է Աղյուսակ 2-ից, խմբի համար կոմունիկատիվ դիրքորոշումների միջին թվաբանական համարյա բոլոր ցուցանիշները՝ Մարդկանց նկատմամբ քողարկված դաժանություն, նրանց մասին դատողություններում, Մարդկանց մասին դատողություններում հիմնավորված նեգատիվիզմ, Փնթինթոց, Ուրիշների հետ հաղորդակցման բացասական անհատական փորձ, գտնվում են նորմայի սահմաններում, սակայն, ինչպես տեսնում ենք, առկա է Մարդկանց նկատմամբ բացահայտ դաժանություն ցուցանիշների միջինի բարձր դրսևորումներ, այսինքն՝ հետազոտվողները չեն թաքցնում կամ մեղմացնում իրենց բացասական գնահատականներն ու ապրումները շրջապատողներից շատերի նկատմամբ, նրանց մասին խիստ, միանշանակ անառարկելի եզրակացություններ են կատարում, ինչը երևում է նաև նախորդ թեստի տվյալներից՝ Նեգատիվիզմի և Թշնամության ինդեքսի ցուցանիշների բարձր չափանիշների խմբի մեծամասնության մոտ, սա կարող ենք բացատրել տարիքային մաքսիմալիստական դրսևորումներով, դիվանագիտական մոտեցման բացակայությամբ: Դիտվում է նաև Բացասական հաղորդակցական դիրքորոշման միջինի բարձր ցուցանիշ:

Բացասական հաղորդակցման դիրքորոշումների էներգիան հնարավոր է թաքցնել գործընկերոջ զգայահամակարգից: Ինդիքներ կարող են առաջանալ նույնիսկ այն դեպքում, եթե անձը հաջողությամբ թաքցնում է իր բացասական տրամադրվածությունը շրջապատի նկատմամբ, քանի որ երբ փորձում է զսպել իրեն, լինել զուսպ, առաջանում է մշտական լարվածություն: Էթիկայի տեսանկյունից հնարավոր է, որ ամեն ինչ շատ ճիշտ լինի, սակայն դրա համար պետք է հատուցել հոգեբանական բարձր գին, վաղ թե ուշ լարվածությունը կհանգեցնի սթրեսի, նյարդային բռնկման: Եվ բացառված չէ, որ լիցքթափումը ժամանակ առ ժամանակ կարող է լինել աշխատանքից/գործունեությունից դուրս՝ ընկերների հետ շփվելիս, ընտանիքում կամ հասարակական վայրում, որը ոչ արդյունավետ է և տհաճ:

Համաձայն «Հուզական խառնվածքի գնահատման հարցարանի (TEMPS-A)» արդյունքների (տե՛ս Աղյուսակ 3) խմբի համար միջին թվաբանական ցուցանիշների՝ առկա են հետևյալ հուզական խառնվածքի տիպերի դսրսևորումներ՝

Աղյուսակ 3. Հուզական խառնվածքի գնահատման հարցարանի տվյալներ:

Հուզական խառնվածքի տիպը	Մաքսիմալ քանակը	Խմբի միջին թվաբանական ցուցանիշները	%-ին դրսևորումը
Դիսֆորիկ կամ դիսթիմիկ	9	4,23	47
Ցիկլոիդ	17	9,54	56,11
Հիպերթիմ	13	8,09	62,23
Դյուրագրգիռ	9	3,71	41,22
Տագնապային	9	2,94	32,67

Համաձայն թեստի պահանջների՝ եթե հարցերի 65 %-ից ավելին տրվել է «այո» պատասխան, ապա տվյալ հուզական խառնվածքը նշված անձի մոտ դրսևորվում է: Անձի մոտ կարող են դրսևորված լինել մեկից ավելի հուզական խառնվածքներ:

Ինչպես երևում է Աղյուսակ 3-ից, խմբի համար հուզական խառնվածքի միջին թվաբանական բոլոր ցուցանիշները՝ Դիսֆորիկ, Ցիկլոիդ, Հիպերթիմ, Դյուրագրգիռ, Տագնապային, նորմայի սահմաններում են:

Սոցիալական վարքն իրենից ներկայացնում է բարդ գործընթաց, քանի որ դրա օբյեկտը ունի բազմաթիվ որակական առանձնահատկություններ: Անձի սոցիալական վարքի ուսումնա-

սիրությունը նրա գործունեության վերլուծության մեջ է, ինչպիսիք են՝ կենսակերպը, վարքի ռազմավարությունները, նորմայից շեղումները [11 էջ 8]:

Մարդու վարքը մեծ մասամբ իրենից ներկայացնում է գործունեության ձև, մարդու քայլերի ամբողջություն, որոնք մշտական կամ փոփոխվող պայմաններում համեմատաբար շարունակական բնույթ ունեն։ Միևնույն գործունեությանը կարող են վարքի տարբեր ձևեր համապատասխանել, ինչպես նաև, միևնույն վարքածևը կարող է դիտվել տարբեր գործունեությունների ժամանակ։ Առօրյա կյանքում մենք ամեն օր բախվում ենք այն բանի հետ, որ մարդու գիտակցված մտադրությունները միշտ չէ, որ համապատասխանում են նրա իրական վարքի հետ։ Ավելի նկատելի հակասություն է դիտվում վերբալիզացված ինֆորմացիայի(խոսքի արտահայտման) և իրական քայլերի միջև։ Այդպիսի անհամապատասխանությունը կարելի է բացատրել անհատական և հասարակական հետաքրքրությունների բովանդակության և կառուցվածքի տարբերություններով։ Հասարակության անդամները մշտապես ստիպված են գործունեության մեկ ոլորտում յուրացված արժեքները, նորմերը և դերային համաձայնեցվածությունները համապատասխանեցնել այլ որոշում գործող պահանջներին [11 էջ 11]:

Մարդու սոցիալական վարքն իրենից ներկայացնում է այնպիսի վարքային գործընթացների ամբողջություն, որոնք կապված են ֆիզիկական և սոցիալական պահանջմունքների բավարարման հետ և առաջ են գալիս որպես շրջապատող սոցիալական միջավայրին ի պատասխան ռեակցիա։ Անհատների սոցիալական վարքը կարգավորվում է՝ ըստ սոցիալական կառուցվածքի, մասնավորապես՝ ըստ հասարակության դերային կառուցվածքի [12 էջ 48]:

Անձի սոցիալական վարքի նպատակը շրջապատող իրականության վերափոխման, հասարակության մեջ սոցիալական փոփոխությունների իրականացման, խմբում սոցիալ-հոգեբանական երևույթների ձևավորման և հենց անձի վերափոխման վերջնարդյունքն է։

Որպեսզի որոշենք երիտասարդների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները և սոցիալական վարքը՝ պայմանավորված Ինտերնետ հաղորդակցությամբ, մեր կողմից կիրառվել է նաև հարցարան, որը կազմված է եղել 6 բլոկից, թվով 19 հարցից։ Հարցարանի պատասխանների վերլուծության արդյունքում ստացել ենք հետևյալ տվյալները [8 էջ 34].

Առաջին բլոկը կազմված է ընդհանուր հարցերից՝

- ✓ Ի՞նչ ցանցային սերվիսներից եք օգտվում.
- ✓ Որքա՞ն ժամանակ եք հատկացնում սոցիալական ցանցերում շփմանը.
- ✓ Սոցիալական ցանցերում ի՞նչ խմբերում եք ներառված:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ 18-22 տարեկան երիտասարդ անձինք հակված են վիրտուալ շփման. այս կամ այն չափով բոլորը շփվում են սոցիալական ցանցերի միջոցով առնվազն յուրաքանչյուր օր 1-2 ժամ :

Երկրորդ բլոկ՝ գործոններ են, որոնք ազդում են երիտասարդի կողմից շփման հիմնական միջոցներ հանդիսացող սոցիալական ցանցերի ընտրության վրա՝

- ✓ Ո՞ր միջավայրում է Ձեզ համար ավելի հեշտ ծանոթանալ երիտասարդ աղջկա/տղայի հետ,
- ✓ Ինչպե՞ս ավելի հեշտ կարտահայտելք Ձեր անհամաձայնությունը որևէ անձի,
- ✓ Պատահե՞լ է, որ սոցիալական ցանցերում տեղադրեք ուրիշի լուսանկարը կամ որևէ ստեղծված կերպարի լուսանկար (աբստրակտ, կենդանիներ, ֆիլմի հերոս և այլ):

Որպես հիմնական հաղորդակցման միջոց հանդիսացող սոցիալական ցանցերի ընտրության հարցը պայմանավորված է հաղորդակցման շրջանակների ընդլայնման հետ մի շարք խնդիրներ հաղթահարելու նպատակով՝ երիտասարդության ժամանակահատվածում միայնության զգացողության հաղթահարում, հասակակիցների, ինչպես նաև հակառակ սեռի հասակակիցների շրջանում սեփական դիրքով անբավարարվածության զգացողություն, անբավարարվածություն սեփական արտաքին տեսքով, ցանկություն մոտեցնելու սեփական «իրական Ես-ը» «իդեալական Ես-ին»:

Երրորդ բլոկ՝ Վիրտուալ ընկերության հասկացություն, վիրտուալ շփման առանձնահատկություններ՝

- ✓ Ի՞նչ ասոցիացիաներ է Ձեզ մոտ առաջացնում «վիրտուալ ընկեր» հասկացությունը.

- ✓ Վիրտուալ ընկերների ո՞ր մասի հետ եք անձնապես (իրական կյանքում) ծանոթ (%).
- ✓ Ի՞նչ եք զգում, երբ Ձեզ չեն ավելացնում ընկերների ցանկում.
- ✓ Ո՞ր դեպքում կդադարեք շփվել վիրտուալ ընկերոջ հետ:

Այս հարցերի պատասխանները հնարավորություն են տալիս մեզ հասկանալու ժամանակակից պատանիների և երիտասարդների վերաբերմունքը ընկերության նկատմամբ: Ուրախալի փաստ է այն, որ երիտասարդ հետազոտվողների մեծամասնությունը նախընտրում է ռեալ շփում:

Չորրորդ բլոկ՝ Վիրտուալ հաղորդակցման ժամանակ հաղորդակցական տարրերի ձևավորման առանձնահատկությունները՝

- ✓ Եթե իրական կյանքում մարդը շփվող է և ունի շատ ընկերներ, ապա սոցիալական ցանցերում ևս ունի շատ վիրտուալ ընկերներ.
- ✓ Եթե իրական կյանքում մարդը շփվող չէ, ապա սոցիալական ցանցերում նա կոմպենսացնում է շփման պակասը, այդ իսկ պատճառով ունի շատ վիրտուալ ընկերներ.
- ✓ Սոցիալական ցանցերում շփումն օգնո՞ւմ է Ձեզ՝ կյանքում ևս առավել ակտիվ լինել:

Կարո՞ղ է արդյոք վիրտուալ շփումը դառնալ հաղորդակցական որակները զարգացնող միջոց:

Այս հարցերի ստացված պատասխանները թույլ են տալիս մեզ ենթադրել, որ վիրտուալ շփումը կարող է նպաստել գրավոր հաղորդակցման, իսկ միջանձնային հաղորդակցման մեջ նրա դերը վիճելի է:

Հինգերորդ բլոկ՝ Երիտասարդների վերաբերմունքը վիրտուալ շփմանը ինչպես է նպաստում միայնության հաղթահարմանը՝

- ✓ Ի՞նչն է Ձեզ մոտ ասոցացվում «միայնություն» հասկացության հետ.
- ✓ Ինչպե՞ս եք կարծում, վիրտուալ շփումն օգնո՞ւմ է հաղթահարել միայնության զգացումը, թե՞ օգնում է միայն ժամանակավոր մոռանալ միայնության վիճակի մասին.
- ✓ Սոցիալական ցանցերում շփումն օգնում է ինձ..., ազատում է ...-ից:

Երիտասարդության տարիքին են վերաբերում միայնության զգացողությունը և վախը միայնությունից, ինչպես նաև՝ ինտիմության ճգնաժամը: Կապվածության զգացողությունը այդ ժամանակահատվածում կախված է անձի ընդհանուր հաղորդակցական որակներից:

Վեցերորդ բլոկի հարցերի պատասխանները կօգնեն՝ հասկանալու՝

- ✓ Արդյո՞ք հանդիսանում է վիրտուալ շփումը միայնության հաղթահարման միջոց՝ Սոցիալական ցանցերում հարկավոր է անընդհատ տեղեկություն տալ ձեր մասին (տեղադրել լուսանկար, փոխել կարգավիճակը, լայքեր դնել, հաղորդագրություններ գրել, «նվերներ» ուղարկել...), որպեսզի քեզ չմոռանան.
- ✓ Ձանձրացնո՞ւմ է դա Ձեզ.
- ✓ Հակառակ սեռի վիրտուալ ընկերոջ հանդեպ հետաքրքրվածության արտահայտման ի՞նչ միջոց եք օգտագործում.
- ✓ Անհարմարավետություն զգո՞ւմ եք, երբ չգիտեք, թե ում հետ եք շփվում սոցիալական ցանցում (անհայտ է սեռը, տարիքը, բացակայում է լուսանկարը...):

Մեր կարծիքով, սա հարցերի առավել կարևոր խումբն է:

Վերլուծելով հետազոտության արդյունքները կարող ենք նշել, որ 18-22 տարեկան երիտասարդ անձինք հակված են վիրտուալ շփման, այս կամ այն չափով բոլորը շփվում են սոցիալական ցանցերի միջոցով, որոնց ընտրության հարցը պայմանավորված է հաղորդակցման շրջանակների ընդլայնման հետ մի շարք խնդիրներ հաղթահարելու նպատակով՝ երիտասարդության ժամանակահատվածում միայնության զգացողության հաղթահարում, հասակակիցների, ինչպես նաև հակառակ սեռի հասակակիցների շրջանում սեփական դիրքով անբավարարվածության զգացողություն, անբավարարվածություն սեփական արտաքին տեսքով, ցանկություն մոտեցնելու սեփական «իրական Ես-ը» «իդեալական Ես-ին»:

Որպես հիմնական հաղորդակցման միջոց հանդիսացող սոցիալական ցանցերի ընտրության հարցը պայմանավորված է հաղորդակցման շրջանակների ընդլայնման հետ մի շարք խնդիրներ հաղթահարելու նպատակով՝ երիտասարդության ժամանակահատվածում միայնության զգացողության հաղթահարում, հասակակիցների, ինչպես նաև հակառակ սեռի հասակակիցների շրջանում սեփական դիրքով անբավարարվածության զգացողություն, անբավարարվածություն սեփական արտաքին տեսքով, ցանկություն մոտեցնելու սեփական «իրական Ես-ը» «իդեալական Ես-ին»:

Եզրակացություն

Այսպիսով՝ կապված Ինտերնետի և սոցիալական ցանցերի կյանքի բոլոր ոլորտներում արագ ներթափանցման հետ, արդիական է հետազոտությունն՝ ուղղված ոչ միայն վիրտուալ տարածքի տեխնիկական միջոցների և հնարավորությունների ուսումնասիրությանը, այլև, ամենակարևորը, ուսումնասիրություններն՝ ուղղված դրա ազդեցությանը մարդու վրա: Կարևոր է դառնում ուսումնասիրել անհատի հոգեբանական բնութագրերը, որոնք դրսևորվում կամ ձևավորվում են վիրտուալ աշխարհում, հատկապես՝ դեռահասության և երիտասարդության շրջանում, երբ տեղի է ունենում մասնագիտական ինքնորոշում, սոցիալական դիրքորոշում, կյանքի պլանների կառուցում և անձնական կապվածությունների որոնում:

Գրականության ցանկ

1. Խ. Գասպարյան, Գ. Ղազարյան և ուրիշներ. Բժշկական հոգեբանություն: Ուսումնական ձեռնարկ. Եր., 2015, - 417 էջ:
2. Վ.Ֆ. Ենգալիչև, Գ.Հ. Ղազարյան, Դատական հոգեբանական փորձաքննության պրակտիկում: Ուսումնա-մեթոդական ձեռնարկ - Եր.: ՀՀ ԱՆ ԱԱԻ, 2018 – 297 էջ:
3. Barnes J. A. Class and Committees in Norwegian Island Parish // Human Relations. New York: Hafner Press, 1975. P. 58
4. GlobalWebIndex. "Custom Market Research, Customized Surveys & Customer Research - GlobalWebIndex". www.globalwebindex.com. Retrieved 22 January 2020.
5. Бабаева Ю.Д., Войкунский А.Е., Смыслова О.В. Интернет: воздействие на личность // Гуманитарные исследования в Интернете. М.: Можайск-Терра, 2000. С. 39.
6. Войкунский А. Интернет – новая область исследований в психологической науке. Ученые записки кафедры общей психологии МГУ. Выпуск 1. – М.: Смысл, 2002, – С 101.
7. Гоффман Э. Представление себя другим в повседневной жизни. - М.: ИС РАН, 2004. - 751 с.
8. Желонкина О. К. Социально-психологические особенности юношества, обусловленные виртуальным общением. Вестник Красноярского государственного педагогического университета им. в.п. Астафьева, номер: 1 (31), 2015г., с. 224.
9. Жичкина А. Современные исследования виртуальной коммуникации: проблемы, гипотезы, результаты / А. Жичкина. – М.: ЮНИТИ-ДАНА, 2004. – 165 с.
10. Норберт Винер. Кибернетика, или управление и связь в животном и машине. С. 344
11. Самсонова Н.Н. Взаимосвязь интернет-коммуникаций и социального поведения молодежи. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата психологических наук. М.,2018, 26с.
12. Социальное поведение личности: оценки и стратегии: коллективная монография / отв. ред. А.Ю. Нагорнова. - Ульяновск: Зебра, 2016. - 276 с.
13. James W. The Principles of Psychology. N.-Y.: CreateSpaceIndependentPublishingPlatform, 2015. P. 812

**ԱՆՁՆԱԿԵՆՏՐՈՆ, ՀԵՌԱՎԱՐ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

ԱՐՄԵՆ ԱՋԱՄՕՂԵՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան
մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
ajamoghlyanarmen14@aspu.am

Համառոտագիր

Հոդվածում ներկայացված են ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումն ուսուցման գործընթացում, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ու էլեկտրոնային ուսուցման հիմնախնդիրները, ինչպես նաև՝ մեր կողմից մշակված և կիրառված հեռավար ուսուցման միջոցներն ու կիրառման եղանակները: Կրթության հիմնախնդիրների լուծման ժամանակակից առաջնահերթ ուղղությունը պետք է փնտրել ներկայում առկա, գործնականում մատչելի տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների և տեխնիկական միջոցների արդյունավետ կիրառման մեթոդաբանության մեջ: Ուսուցման էլեկտրոնային միջոցների օգտագործումը նկատելիորեն ազդում է կրթական համակարգերի վրա և նպաստավոր պայմաններ է ստեղծում ուսուցման իննովացիոն մեթոդների զարգացման համար: Համակարգչային գրաֆիկայի, անիմացիայի, կենդանի տեսապատկերման, ձայնի համակցված օգտագործումը եզակի հնարավորություն է ընձեռում ուսումնասիրվող նյութն ընկալելու առավելագույնս դիտողական տեսքով, ավելի հասկանալի ու հիշելի: Դա հատկապես կարևոր է այն դեպքում, երբ սովորողը պետք է յուրացնի մեծ ծավալի տեղեկատվություն: Ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը շատ կարևոր է ուսուցումն անհատականացնելու համար: Սովորողները պետք է կարողանան ձեռք բերել, գնահատել, արժևորել և փոխանցել տեղեկությունները: Տեխնոլոգիաների կիրառման արդյունքում զարգանում են սովորողների մտածողությունն ու համակարգչային գրագիտության հմտությունները: Մեր կողմից կատարված դիտարկումները ցույց տվեցին, որ աշխարհագրության ուսուցման գործընթացում առավելագույն դիդակտիկ արդյունքի կարելի է հասնել միայն՝ ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների համակարգված օգտագործման պայմաններում: Համակարգչային տեխնոլոգիաները, կրթական պաշարները, էլեկտրոնային ուսուցումը և տեղեկատվական կայքերն արդյունավետ չեն լինի, եթե նրանց կիրառումը կրի անջատ և ոչ նպատակամղված բնույթ:

Հեռավար ուսուցման տեխնոլոգիան հնարավորություն է ընձեռում նվազեցնելու ուսումնական գործունեությանը հատկացվող ծախսերի չափը, քանի որ չկա տեղաշարժվելու և տարածք վարձակալելու կարիքը: Ուսուցման այս եղանակով կարելի է ուսումնական գործընթացում ներգրավել անսահմանափակ քանակությամբ սովորողների՝ բարձրացնելով կրթության որակը ժամանակակից մեծածավալ էլեկտրոնային գրադարանների, տեսադարանների, ձայներիզների, տեսադասերի, տեսավարժանքների կիրառման միջոցով՝ ստեղծելով կրթական միասնական տարածք: Գործնական-կողմնորոշված տեխնոլոգիայի կիրառումն աշխարհագրության դասավանդման գործընթացում մեծապես նպաստում է սովորողների տարածական մտածողության և բնապահպանական գիտակցության ձևավորմանը, քանի որ աշխարհագրության գիտական հայեցակարգերի համակարգված և տրամաբանական շարադրման հետ մեկտեղ, ուսուցման բոլոր փուլերում, ուսումնասիրվող յուրաքանչյուր նյութի մեջ արտացոլվում են բնության, կյանքի և կենցաղի օրինաչափությունները, որոնք աշակերտի համար դառնում են կիրառելի առօրյա կյանքում: Անդրադառնալով աշխարհագրության դասավանդման արդյունավետության բարձրացման հիմնախնդիրին՝ նշենք, որ այս առարկայի ծրագրում առկա են ՏՀՏ-ների օգտագործման բազմաթիվ և անսահմանափակ հնարավորություններ, որոնք մեծապես նպաստում են սովորողների կողմից աշխարհագրական լայնածավալ տեղեկատվության դյուրին յուրացմանը:

Համակարգչային ուսուցման տեխնոլոգիաների ու տեխնիկական միջոցների կիրառումը աշխարհագրության դասավանդման գործընթացում ուսուցչին հնարավորություն է տալիս արագ անցումներ կատարել ցուցադրությունից մեկնաբանության, ուղղել հարցադրումներ, ստանալ պատասխաններ, տալ դրանց արտապատկերումը գրատախտակի վրա, խնդիրների լուծման ժամանակ հնարավոր է դառնում առավել պատկերավոր ներկայացնել առաջադրանքը՝ խթանելով սովորողների երևակայությունն ու պատկերավոր մտածողությունը՝ հնարավորություն տալով սովորողներին

առաջադրելու ինչպես տրամաբանական, այնպես էլ՝ ստեղծագործական լուծումներ: Պատրաստի վեկտորային պատկերները, որոնք ձևափոխվում են՝ ըստ լուծման փուլերի, նպաստում են թեմայի արագ յուրացմանը, խնդրի լուծման արդյունավետության բարձրացմանը: Պատկերային արտահայտմամբ լուծումներն ավելի արագ են մտապահվում, ուստի դասագործընթացում աշխարհագրության ուսուցիչը պարտավոր է համադրել ոչ միայն S<S-ներն ու ուսուցման փոխներգործուն մեթոդները, այլ այս միջոցով, աշխարհագրական գիտելիքի յուրացման առավել նպաստավոր պայմանների ստեղծման նպատակով, պետք է դրանց զուգադրվեն նաև ժամանակակից մանկավարժական այլ տեխնոլոգիաներ՝ ելնելով ստեղծված մանկավարժական իրավիճակից:

Բանալի բառեր և բառակապակցություններ. տեղեկատվական տեխնոլոգիա, հեռավար ուսուցում, ուսուցման գործընթաց, անձնակենտրոն ուսուցում, էլեկտրոնային ուսուցում:

ТЕХНОЛОГИИ ИНДИВИДОЦЕНТРИЧНОГО, ДИСТАНЦИОННОГО И КОМПЬЮТЕРНОГО ОБУЧЕНИЯ В ПРОЦЕССЕ ПРЕПОДАВАНИЯ ГЕОГРАФИИ

АРМЕН АДЖАМОГЛЯН

Армянский Государственный Педагогический Университет имени Хачатура Абовяна
кандидат педагогических наук, доцент
ajamoghlyanarmen14@aspu.am

Аннотация

В статье представлены применение современных информационных технологий в процессе обучения, проблемы информационных и коммуникационных технологий и электронного обучения, а также разработанные и примененные нами средства дистанционного обучения и способы их применения. Современное приоритетное направление решения проблем образования следует искать в существующей в настоящее время, практически доступной методологии эффективного применения информационных и коммуникационных технологий и технических средств. Использование электронных средств обучения заметно влияет на образовательные системы и создает благоприятные условия для развития инновационных методов обучения. Комбинированное использование компьютерной графики, анимации, живой видеотрансляции, звука дает уникальную возможность воспринимать исследуемый материал в максимально визуальном виде, более понятным и запоминаемым. Это особенно важно в том случае, когда учащийся должен усвоить большой объем информации. Внедрение современных технологий очень важно для индивидуализации обучения. Учащиеся должны суметь получить, оценить и передать информацию. В результате применения технологий развиваются мышление учащихся и навыки компьютерной грамотности. Проведенные нами наблюдения показали, что в процессе обучения географии максимального дидактического результата можно достичь только в условиях систематического использования современных информационных и коммуникационных технологий. Компьютерные технологии, образовательные ресурсы, электронное обучение и информационные сайты не будут эффективными, если их применение будет носить отдельный и нецелесообразный характер.

Технология дистанционного обучения дает возможность снизить размер расходов, выделяемых на учебную деятельность, так как нет необходимости передвигаться и арендовать территорию. Такая форма обучения помогает можно вовлечь в учебный процесс неограниченное количество учащихся, повышая качество образования посредством применения современных крупномасштабных электронных библиотек, фотогалерей, кассет, видеоуроков, создавая единое образовательное пространство. Применение практико-ориентированной технологии в процессе преподавания географии в значительной степени способствует формированию пространственного мышления и экологического сознания учащихся, поскольку наряду с систематизированным и логическим изложением научных концепций географии на всех этапах обучения в каждом исследуемом материале отражаются закономерности природы, жизни и быта, которые для ученика становятся применимыми в повседневной жизни. Говоря о проблеме повышения эффективности преподавания географии, отметим, что в программе этого предмета имеются многочисленные и неограниченные возможности использования ИТТ, которые в значительной степени способствуют усвоению учащимися широкомасштабной географической информации.

Применение технологий и технических средств компьютерного обучения в процессе преподавания географии позволяет учителю делать быстрые переходы: от презентации к интерпретации, задавать вопросы, получать ответы, отображать их на доске, при решении проблем становится возможным более образно представить задание, стимулируя воображение и образное мышление учащихся, давая возможность ученикам предлагать как логические, так и творческие решения. Готовые векторные изображения, которые изменяются в соответствии с этапами решения, способствуют быстрому усвоению темы, повышению эффективности решения проблемы. Решения с изобразительным выражением запоминаются быстрее. Поэтому в процессе занятия учитель географии обязан сочетать не только ИТТ и взаимодействующие методы обучения, но и посредством этого, с целью создания более благоприятных условий освоения географических знаний, к ним должны быть сопоставлены и другие современные педагогические технологии, конечно, исходя из сложившейся педагогической ситуации.

Ключевые слова и словосочетания: информационные технологии, дистанционное обучение, учебный процесс, обучение, фокусированное на индивидах, электронное обучение.

TECHNOLOGIES OF INDIVIDUAL-FOCUSED, DISTANCE AND COMPUTER LEARNING IN THE PROCESS OF TEACHING GEOGRAPHY

ARMEN AJAMOGHLYAN

Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan
PhD in Pedagogical Sciences, Associate Professor
ajamoghlyanarmen14@aspu.am

Abstract

The article presents the application of modern information technologies in the learning process, the problems of information and communication technologies and e-learning, as well as the distance learning tools and methods developed and applied by us. The current priority direction of solving the problems of education should be sought in the currently existing, practically accessible methodology for the effective use of information and communication technologies and technical means. The use of electronic learning tools significantly affects educational systems and creates favorable conditions for the development of innovative teaching methods. The combined use of computer graphics, animation, live broadcasting, and sound gives a unique opportunity to perceive the material under study in the most visual form, more understandably and memorably. This is especially important when a student has to assimilate a large amount of information. The involvement of modern technologies is very important for the individualization of training. Students should be able to receive, evaluate and convey information. As a result of the use of technology, students' thinking and computer literacy skills are developing. Our observations have shown that in the teaching process of geography, the maximum didactic result can be achieved only in the conditions of systematic use of modern information and communication technologies. Computer technologies, educational resources, e-learning, and information sites will not be effective if used separately and inappropriately.

Distance learning technology makes it possible to reduce the number of expenses allocated for educational activities since there is no need to move and rent a territory. Thus, an unlimited number of students can be involved in the educational process, improving the quality of education through the use of modern large-scale electronic libraries, photo galleries, cassettes, video tutorials, that create a single educational space. The use of practice-oriented technology in the process of teaching geography greatly contributes to the formation of spatial thinking and ecological consciousness of students, since along with a systematic and logical presentation of scientific concepts of geography at all stages of learning, each material under study reflects the laws of nature, life, and everyday life, which becomes applicable in student's everyday life. Speaking about the problem of improving the effectiveness of teaching geography, we have noted that in the program of this subject there are numerous and unlimited possibilities for using ITT, which greatly contribute to the easy mastering of large-scale geographical information by students.

The use of technologies and technical means of computer learning in the process of teaching geography allows the teacher to make quick transitions: from demonstration to interpretation, ask questions, get answers, display them on the blackboard, when solving problems it becomes possible to present the task more figuratively, stimulating the imagination and imaginative thinking of students, enabling students to offer both logical and creative solutions. Ready-made vector images, which change according to the stages of the solution, contribute to the rapid assimilation of the topic, increasing the effectiveness of solving the problem. Solutions with pictorial expression are remembered faster. Therefore, during the lesson, the geography teacher is obliged to compare not only ITT and interactive teaching methods, but also through this, to create more favorable conditions for the development of geographical knowledge, other modern pedagogical technologies should be compared to them, of course, based on the current pedagogical situation.

Keywords and phrases: Information technology, distance learning, educational process, learning focused on individuals, e-learning.

Ներածություն

Այսօր ՀՀ կրթական համակարգի հիմնական դպրոցի տեղեկատվայնացումն արտահայտվում է հիմնականում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ)՝ որպես դիդակտիկ միջոցների լայն կիրառմամբ, երբ ուսումնական գործընթացը ինքնին խթանում է սովորողների ճանաչողական ակտիվությունը, նպաստում է ուսումնական նյութի արդյունավետ յուրացմանն ու հիմնարար գիտելիքի ձեռքբերմանը: Ակնհայտ է, որ ՏՀՏ-ները կատարում են որոշակի կրթական գործառույթ, սակայն մեր խորին համոզմամբ նրանք պետք է դիտարկվեն իբրև ուսումնական գործընթացին օժանդակող և այդ գործընթացի արդյունավետությունը բարձրացնող տարր՝ համադրվելով ուսուցման մեթոդների, սկզբունքների, այլ տեխնոլոգիաների և միջոցների հետ:

Կրթության նոր հարացույցի համատեքստում առաջարկվում են նոր մոտեցումներ, կրթության նոր բովանդակություն, ձևավորվում է նոր մտածողություն, մշակվում են ուսումնական նոր ծրագրեր, վերանայվում են դասագրքերի բովանդակությունը, կատարելագործվում են ուսուցման ձևերն ու մեթոդները, ներդրվում են ուսուցման ժամանակակից տարատեսակ տեխնոլոգիաներ: Ներկայումս ՏՀՏ-ի ներդրումն ու լայնածավալ կիրառումը ուսումնադաստիարակչական գործընթացի և նրա զարգացող հնարավորությունների իրացման կարևոր պայման է:

Անձնակենտրոն ուսուցման տեխնոլոգիա

Անձնակենտրոն ուսուցման տեխնոլոգիայի նախադրյալը կրթության մարդասիրական տեսությունն է, որի վառ ներկայացուցիչներն են անտիկ փիլիսոփայության հիմնասյուները՝ Սոկրատեսը, Սենեկան, Պլատոնը, Արիստոտելը և այլք: Մարդասիրական տեսությունն իր հետագա զարգացումն ապրեց նաև Վերածննդի դարաշրջանում՝ շնորհիվ Թոմազո Կամպանելայի, Միշել Մոնտենի, Վիտտորինո դա Ֆետրեի և այլոց. հետագայում այս տեսությունը կատարելագործվեց Ժ.Ժ.Ռուսոյի, Լ.Ն.Տոլստոյի, Շացկու, Շ.Ամոնաշվիլու, հայ մանկավարժներ Խ.Աբովյանի, Ղ.Աղայանի, Հ.Հինդլյանի, Լ.Շանթի, Մ.Մամուրյանի, Տ. Ռաշմաջյանի, Ն.Ջորայանի, Ա.Թոփուզյանի և այլ մտավորականների ջանքերով: Բոլորի պնդումն այն է, որ երեխան՝ մարդը, բարձրագույն արժեք է, որ նա պետք է ստանա ազատ դաստիարակություն, որպեսզի ի գործու լինի զարգացնելու և կատարելագործելու իր բնական ընդունակությունները: Կյանքի արագընթաց պայմաններում տարբեր ժամանակներում փոխակերպվում էին մարդու՝ իբրև բացարձակ արժեքի վերաբերյալ պատկերացումները: Այս համապատկերում առանձնացվեցին մի շարք գիտնական-հետազոտողների հայեցակարգային տեսություններ, գործնական մոտեցումներ և սկզբունքներ, որոնք այսօր դրվել են անձնակենտրոն տեխնոլոգիայի հիմքում [1, էջ 25]:

Անձնակենտրոն ուսուցման հիմքում ընկած է սովորողների անձի նկատմամբ մարդասիրական մոտեցման գաղափարն, ինչն էլ իր հերթին ենթադրում է՝

- սովորողների անձնային որակների առավել լայնածավալ ու խորն ուսումնասիրումն ու դրանց բացահայտումը.
- նրանց բարոյական արժեհամակարգի ձևավորումն ու զարգացումը.
- նրանց նկատմամբ հարգալից վերաբերմունքի դրսևորումը.
- նրանց տարիքային, հոգեբանական և բնախոսական առանձնահատկությունների գիտակցումն ու հաշվառումը.
- հոգեբանական պատնեշի վերացումը.
- մանկավարժական աջակցության ցուցաբերումը.
- համագործակցությունը:

Անձնակենտրոն ուսուցման ակնհայտ առավելությունները ներկայացրել ենք ստորև աղյուսակում:

Փոխադարձ կապը	Ուսուցման մեթոդի բնութագիրը
Ուսուցիչ ↓ Աշակերտ	ՊԱՍԻՎ (որոշակի ճանաչողական ակտիվություն, վերարտադրողական բնույթի գործունեություն, ինքնուրույնության և ստեղծագործական ակտիվության բացակայություն կամ թույլ դրսևորումներ):
Ուսուցիչ ↕ Աշակերտ	ԱԿՏԻՎ (բարձր ճանաչողական ակտիվություն, ինքնուրույնության և ստեղծագործական ակտիվության դրսևորումներ, անձի բարոյահոգեբանական աճ):
Ուսուցիչ ↕ Աշակերտ ↕ Աշակերտ	ՓՈԽՆԵՐԳՈՐԾՈՒՆ (մշտական, ակտիվ, փոխադարձ կապեր սովորողների և ուսուցչի միջև, միմյանց կրթելու, համագործակցելու և փոխըմբռնման մթնոլորտ):

Հեռավար ուսուցման տեխնոլոգիա

Հեռավար ուսուցումն ենթադրում է տարածության մեջ իրականացվող, սովորողների և ուսուցչի միջանձնային փոխներգործություն, որը կազմակերպվում է յուրօրինակ կերպով, համացանցի կամ այլ փոխներգործուն տեխնոլոգիաների կիրառմամբ, որտեղ գործածվում են ուսումնական գործունեությանը ներհատուկ այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են՝ **նպատակը, կրթության բովանդակությունը, մեթոդները, կազմակերպական ձևերը, ուսուցման միջոցները, գնահատումը** և այլն: Ուսուցման այս տեխնոլոգիան ուսուցման ինքնուրույն անհատականացված եղանակ է, իսկ SCS-ները այս գործընթացում գերակշիռ դեր և նշանակություն ունեն: Արդի ժամանակաշրջանում հեռավար ուսուցման գործընթացի կառուցվածքային բաղադրիչներն են՝

- տեղեկատվության տարածման տարբեր միջավայրերը, ինչպիսիք են՝ համացանցային ռեսուրսները, հեռուստատեսությունը, ռադիոկայանները, փոստը, սոցիալական հաղորդակցական ցանցերն ու համակարգերը և այլն.
- այն մեթոդները, որոնք ուղղակիորեն կախված են տեղեկատվության փոխանակման տեխնիկական միջոցներից:

Հեռավար ուսուցման տեխնոլոգիան հնարավորություն է ընձեռում նվազեցնելու ուսումնական գործունեությանը հատկացվող ծախսերի չափը, քանի որ չկա տեղաշարժվելու և տարածք վարձակալելու կարիքը: Ուսուցման այս եղանակով կարելի է ուսումնական գործընթացում ներգրավել անսահմանափակ քանակությամբ սովորողների՝ բարձրացնելով կրթության որակը ժամանակակից մեծածավալ էլեկտրոնային գրադարանների, տեսադարանների, ձայներիզների, տեսադասերի, տեսավարժանքների կիրառման միջոցով՝ ստեղծելով կրթական միասնական տարածք [3, էջ 40]:

Հեռավար կրթական-տեղեկատվամեթոդական համալիրներից առավել հայտնի է LMS Moodle (**Modular object oriented dynamic learning environment**) համացանցային միջավայրը, որի հեղինակը Մարտին Դուգիամասն է (**Martin Dougiamas**) Ավստրալիայից: Ծրագիրը գործարկվել է 2002թ. և այսօր, հենվելով իր 20-ամյա փորձի վրա, լայն կիրառում ունի աշխարհում: Moodle ծրագիրը, սկսած 2006 թ-ց, համագործակցում է Wiki կրթական շտեմարանի հետ: Այս համագործակցության արդյունքում ձևավորված նախագիծը լուրջ խթան է կրթական համաշխարհային գործընթացում: Moodle ծրագրի օգնությամբ կարելի է ստեղծել ուսումնական կայքեր համացանցի տիրույթում գործարկելու համար, ծրագրի օգտագործումը անվճար է, օգտագործման մուտքը՝ <http://moodle.org/> կայքից, վերջին թարմացումը՝ 2016 թ-ի վերջին [<https://en.wikipedia.org/wiki/>]: Փոխարենը կանոնակարգված են սոցիալական և մանկավարժական մոտեցումները, ինչպիսիք են՝ համագործակցությունը, ակտիվ ուսուցումը, քննադատական ռեֆլեքսիվությունը, հեռավար և առկա ուսուցումը, ներկայացվող նյութերի կառուցվածքային պարզությունը, կիրառման արդյունավետությունն ու կապակցվածությունը տվյալների հայտնի

շտեմարանների հետ (հղումներ, միջհարթակային կապեր): Ծրագրի շրջանակներում հնարավոր է իրականացնել հեռավար կրթության բոլոր պահանջներն՝ ընդհուպ մինչև գիտելիքի քննումը կամ թեստավորումը: Այս ծրագրի շնորհիվ ուսուցիչը լիովին վերահսկում է հեռավար ուսուցման գործընթացը, իսկ ծրագրի հատվածային կամ մոդուլային կառուցվածքը հնարավորություն է տալիս ներբեռնելու կամ օգտագործելու պաշարի անհրաժեշտ մասը, անհրաժեշտության դեպքում մշտապես լրացնելու հնարավորությամբ [5, էջ73]: Wiki համացանցային կրթական համալիրի հետ Moodle ծրագրի համագործակցությունը հնարավորություն է տալիս միաժամանակ օգտագործելու ու խմբագրելու Wiki-ի կայքէջերը:

Գործնական-կողմնորոշված ուսուցման տեխնոլոգիա

Տեխնոլոգիական այնպիսի մոտեցումը, ինչպիսին է գործնական-կողմնորոշված տեխնոլոգիայի կիրառումը, թույլ է տալիս զգալիորեն բարձրացնել ուսուցման որակն ու արդյունավետությունը: Դրան նպաստում է ուսումնական նյութի բովանդակության ընտրության ընտրողականության համակարգը, ինչը հնարավորություն է ընձեռում սովորողին արժևորելու սովյալ նյութի նշանակալիությունն ու կարևորությունը, գիտակցելու սովյալ նյութի ուսումնասիրման արդյունքում ձեռք բերված գիտելիքի, ձևավորված կարողությունների և զարգացրած հմտությունների կիրառական պահանջվածությունն ու կիրառման ուղղվածությունը [4, էջ35]: Մանկավարժական այս տեխնոլոգիայի կիրառումն աշխարհագրության դասավանդման գործընթացում մեծապես նպաստում է սովորողների տարածական մտածողության և բնապահպանական գիտակցության ձևավորմանը, քանի որ աշխարհագրության գիտական հայեցակարգերի համակարգված և տրամաբանական շարադրման հետ մեկտեղ, ուսուցման բոլոր փուլերում, ուսումնասիրվող յուրաքանչյուր նյութի մեջ արտացոլվում է բնության, կյանքի և կենցաղի օրինաչափությունները, որոնք աշակերտի համար դառնում են կիրառելի առօրյա կյանքում:

Համակարգչային ուսուցման տեխնոլոգիա

Գործնականում համակարգչային են համարվում ուսուցման այն բոլոր տեխնոլոգիաները, որոնց իրացումն ապահովվում է տեխնիկական տեղեկատվական միջոցներով: Այս համատեքստում, երբ համակարգիչները մուտք գործեցին կրթական տարածք, սկիզբ առավ «ուսուցման նորարարական տեղեկատվական տեխնոլոգիա» եզրույթը: Հարկ է նշել, որ տրամաբանորեն յուրաքանչյուր մանկավարժական տեխնոլոգիա կարելի է համարել տեղեկատվական, քանի որ մանկավարժական ժամանակակից գործընթացն անհնար է պատկերացնել առանց տեղեկատվության առատության, իսկ ուսուցման գործընթացի տեխնոլոգիական հիմքն է կազմում տեղեկատվական շարժը կամ նրա ճկուն փոխակերպումը, ուստի և ուսուցման յուրաքանչյուր տեխնոլոգիա, որտեղ ակտիվորեն կիրառվում են համակարգիչն ու այլ թվային տեխնիկա, կարելի է անվանել համակարգչային տեխնոլոգիա [2, էջ 112]: Այս տեխնոլոգիաների կիրառմամբ մանկավարժները զարգացնում են ծրագրավորված ուսուցման գաղափարը՝ բացահայտելով ուսուցման՝ բոլորովին նոր, դեռևս չհետազոտված տարբերակներ՝ հարմարեցնելով դրանք ժամանակակից համակարգիչներին և այլ թվային տեխնիկայի անսահմանափակ հնարավորություններին: Աշխարհագրության դասագործընթացում նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումն ենթադրում է տեղեկատվության հայթայթում, համակարգում և փոխանցում համակարգչի միջոցով: Այս տեխնոլոգիան արդյունավետ է իրացնել երեք տարբերակներով՝

- «ներթափանցող» տեխնոլոգիա, երբ համակարգչային ուսուցումը օգտագործվում է աշխարհագրության առանձին թեմաների կամ բաժինների շրջանակում, տարանբնույթ դիդակտիկ կամ պրոբլեմային խնդիրների լուծման նպատակով.
- «հիմնական», երբ այն որոշիչ դեր է կատարում սովյալ դասագործընթացում կիրառվող այլ տեխնոլոգիաների կամ մեթոդների շարքում.
- «բազմատեխնոլոգիական», երբ ամբողջ դասագործընթացը հիմնվում է համակարգչային տեխնոլոգիայի կիրառման վրա:

Համակարգչային տեխնոլոգիաները, ինչպես և յուրաքանչյուր տեխնոլոգիա, որը տեխնոլոգիական բնույթ է հաղորդում այս կամ այն մանկավարժական գործընթացին, դասակարգվում են հետևյալ չափանիշներով՝

- ընդհանուր մանկավարժական, ինչը չափվում է կիրառման մակարդակով և ծավալով.
- համափիլիսոփայական, ինչը չափվում է՝ **հարմարվողականություն+ գիտականություն + սցիենտիկություն** բանաձևով.
- զարգացման հիմնական գործոններով, ինչը չափվում է՝ **սոցիոգեն գործոն+հոգեգեն գործոն** բանաձևով.
- յուրացման հայեցակարգով, ինչը չափվում է նրա ասոցիատիվ-բնազդային բնութագրիչներով.
- անձի կառուցվածքով, ինչը չափվում է **տեղեկատվական+գործունեական** բանաձևով.
- բովանդակային բնույթով, ինչը չափվում է նրա ներթափանցման մակարդակով.
- իմացական գործունեության կառավարման եղանակով, ինչը չափվում է համակարգչային տեխնոլոգիաների կիրառման ակտիվությամբ և ծավալով.
- կազմակերպչական եղանակներով, ինչը չափվում է՝ **անհատականացում+փոքրաթիվ խմբերի համակարգ** բանաձևով.
- մանկավարժական մոտեցմամբ, ինչը չափվում է համագործակցության մակարդակով.
- աշխարհագրության դասավանդման գործընթացում գերիշխող մեթոդով, ինչը չափվում է՝ **տեղեկատվական+գործունային+երկխոսական+ծրագրավորված ուսուցում** բանաձևով.
- աշխարհագրության դասագործընթացի արդիականացման ուղղվածությամբ, ինչը չափվում է **դասագործընթացի կազմակերպման և կառավարման արդյունավետության աստիճանով**:

Սահմանելով նշված չափանիշները՝ մանկավարժ-գիտնականները շեշտադրել են նաև համակարգչային տեխնոլոգիաների կիրառման նպատակային կողմնորոշիչները, ինչպիսիք համարվում են՝

- սովորողների մոտ տեղեկատվության հետ աշխատելու կարողությունների ձևավորումն ու նրանց հաղորդակցական ընդունակությունների զարգացման արդյունքում հաղորդակցական մշակույթի ձևավորումը.
- «տեղեկատվական հասարակության» ծիրում արագ կողմնորոշվող անձի ձևավորումն ու կայացումը.
- սովորողների հետազոտական կարողությունների մարզումն ու ստեղծագործական մտածողության զարգացումը:

Ասվածից կարելի է եզրակացնել, որ համակարգչային տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացվող ուսուցման գործընթացը ենթադրում է սովորողների և համակարգչային տեխնիկայի միջև սերտ շփում, հարմարվողականության սկզբունքի վրա հիմնված փոխադարձ գործողություն՝ պայմանավորված սովորողի կողմից համակարգչային տեխնիկայի գործածման առանձնահատկություններով: Ակնհայտ է, որ ուսուցման այս եղանակը կրում է երկխոսական բնույթ, այն, չնայած ճկուն և համակարգված է, բայց ամեն վայրկյան ուսուցչի կողմից ուղղորդման կարիք ունի, հետևաբար վերահսկելի և կառավարելի է, ուստի այս պարագայում սովորողի և համակարգչի փոխգործակցությունն իրականացվում է **և՛ սուբյեկտ-օբյեկտ, և՛ սուբյեկտ-սուբյեկտ, և՛ օբյեկտ-սուբյեկտ համակարգերում**, ուր արդյունավետ համատեղվում են ուսուցման անհատականացված և խմբային տեխնոլոգիաները՝ համակարգչի հետ փոխներգործության ընթացքում ապահովելով ու պահպանելով սովորողների հոգեբանական հարմարավետության վիճակը [6, էջ 38]: **Համակարգչային տեխնոլոգիաների կիրառման առավելությունն այն է, որ այն սովորողներին ընձեռում է ուսուցման, կրթության, ինքնակրթության,**

ինքնակատարելագործման անսահմանափակ հնարավորություններ, ինչպես բովանդակային, այնպես էլ ժամանակային ու աշխարհագրական-տարածքային առումներով:

Ելնելով մեր ուսումնասիրություններից՝ կարող ենք փաստել, որ ՏՀՏ-ների կիրառմամբ իրականացվող ուսուցման մեթոդական համակարգը և կրթության ամբողջ գործընթացն էապես տարբերվում են ավանդականից **հետևյալ բնորոշ առանձնահատկություններով՝**

- փոխակերպվում է ուսուցչի գործունեությունը, ինչը ենթադրում է առարկայական գիտելիքի ավելի բարձր մակարդակ, դասագործընթացի՝ տեխնոլոգիապես իրատեսական սցենարի կազմում, ՏՀՏ-ների կիրառման լիարժեք իմացություն և տեխնիկական միջոցների հետ աշխատելու կարողություն.
- փոխվում է ուսուցչի դերը, ինչը ենթադրում է դասագործընթացում ուսուցչի և աշակերտների ակտիվության համահավասարեցում, ուսուցման սուբյեկտ-օբյեկտ համակարգի փոխարինումը գործունեության սուբյեկտ-սուբյեկտ համակարգի.
- այս պարագայում համակցվում է նաև ուսուցչի առաջատար դերն ու սովորողների ուսումնական ակտիվ գործունեությունը [7, էջ 55]:

Անդրադառնալով աշխարհագրության դասավանդման արդյունավետության բարձրացման հիմնախնդրին՝ նշենք, որ այս առարկայի ծիրում առկա են ՏՀՏ-ների օգտագործման բազմաթիվ և անսահմանափակ հնարավորություններ, որոնք մեծապես նպաստում են սովորողների կողմից աշխարհագրական լայնածավալ տեղեկատվության դյուրին յուրացմանը, ուստի հաշվի առնելով տվյալ առարկայի դիդակտիկական նպատակներն ու յուրահատկությունները, ինչպես նաև՝ մեր դիտարկումները՝ առանձնացրել ենք համակարգչայն ծրագրերի այնպիսի տեսակներ, ինչպիսիք են՝

- վարժանքային ծրագրերը.
- ցուցադրական ծրագրերը.
- ուսուցողական ծրագրերը.
- տեղեկատվական ծրագրերը.
- մոդելավորման ծրագրերը.
- մուլտիմեդիա ծրագրերը:

Հայտնի է, որ աշխարհագրության գիտական և ուսումնական ճանաչողության հիմքում ընկած են մեծ մասամբ տեսողական և լսողական զգայություններն ու ընկալումները: Սովորողների կողմից փաստական գիտելիքի յուրացման ընթացքը չի կարող անջատվել դրա ըմբռնումից, քանի որ այն գիտելիքի ուղղակի փոխանցում չէ, որի ընթացքում ակտիվ է միայն ուսուցիչը: Ավելին, աշխարհագրության ուսումնական նյութը կարող է գիտակցաբար յուրացվել միայն սովորողների մտագործունեության ընթացքում, որն ակտիվ դրսևորում է ստանում ՏՀՏ-ների կիրառմամբ: Նոր նյութի հաղորդման և յուրացման գործընթացում նպատակահարմար ենք համարում համակարգչային ցուցադրական ծրագրերի կիրառումը, որոնց միջոցով առավել հասանելի, մատչելի և վառ տեսանելի ձևով է մատուցվում տեսական գիտելիքը:

Գրականության ցանկ

1. Ա. Ա. Աջամոլյան, Աշխարհագրության ուսուցման կազմակերպումը տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմամբ. Երևան-2018 թ., 152 էջ:
2. Մ. Գ. Աստվածատրյան և ուրիշներ., Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում, Երևան 2004 թ., 232 էջ:
3. Аствацатуров Г.О. Педагогический дизайн мультимедийного урока /Электронный курс/ // Электронный научно- практический журнал “ Вопросы Интернет образования”-режим доступа: http://vio.fio.ru/vio_45/cd_site/Articles/art_1_2.htm/.
4. Баранов А.С., Суслов В.Г., Шейнис А.И. Компьюторные технологии в школьной географии.Изд.дом.”Гептер”, 2004. 80 с.
5. Заславская О.Ю., Левченко И,В. Информатика и информационно-коммуникационные технологии.М.:АПК и ППРО,2005, 80с.
6. Ибрагимов И.М. Информационные технологии и средства дистанционного обучения. /Текст:/ учебное пособие для студентов вузов по специальности;”Информ.системы и технологии”/И.М.Ибрагимов: под ред. А.Н.Ковшова.-М.: Akademia, 2005, 331с.
7. Новые педагогические и информационные технологии в системе образования./Текст; учеб.пособ.для студ. высш.уч.заведений//. Е.С.Полат, М.Ю.Бухаркина, М.В.Моисеева, А.Е.Петров; под ред. Е.С.Полат.-М.; Изд.центр ”Академия”, 2008. 272с.
8. Полат Е.С. Педагогические технологии дистанционного обучения: учебное пособие/Под ред.Е.С.Полат-М.; издательский .центр”Академия”, 2006. 400с.

Էլեկտրոնային նյութեր

<http://www.ozon.ru/context/detail/id/6443098/>-Մենդանի աշխարհագրություն
<http://www.itlt.edu.nstu.ru/hotpothelp.php>-HotPotatoes
<https://otvet.mail.ru/question/> - EasyQuizzy
[http:// rgo.ru](http://rgo.ru) - Географический портал планеты Земля
[http:// geo2000.nm.ru](http://geo2000.nm.ru)-Занимательная география
[http:// geoport.ru](http://geoport.ru) - Страноведческий портал
[http:// geo.1september.ru/ urok](http://geo.1september.ru/urok)- Я иду на урок географии
[http:// wgeo.ru](http://wgeo.ru)-WGEO-Всемирная география
[http:// geo.historic.ru](http://geo.historic.ru) – Географический on-line справочник ”Страны мира”
[http:// countries.ru](http://countries.ru) –Страны мира
[http:// geograf-ru.narod.ru](http://geograf-ru.narod.ru) – Уголок географа.

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՈՂԵԼԸ ՀՀ-ՈՒՄ

ԱՐՄԵՆ ՄԻԲԱՅԵԼՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
գիտակրթական միջազգային կենտրոն
մանկավարժության ամբիոն, կրթության կառավարման մագիստրանտ
Ջամշուդի հիմնական դպրոց, անգլերենի ուսուցիչ
armen.miqayelyan.1982@mail.ru

Համառոտագիր

Արդի կրթական համակարգի հիմնախնդիրները մեր ժամանակներում ամենահրատապներից են: Մարդկային կրթության կարևորությունն ունի ինչպես անձնական, այնպես էլ սոցիալական ուղղվածություն: Անձնական ուղենիշը հիմնված է հենց անձի՝ զարգանալու, իր կարողությունները կիրառելու, հասարակության մշակութային կյանքին մասնակցելու, հաջող գործունեության համար անհրաժեշտ հմտություններ ձեռք բերելու ցանկության վրա: Սոցիալական կողմնորոշումը ենթադրում է, որ մարդիկ կրթություն են ստանում հենց պետության նպատակների և շահերի համար, դրա դրական ազդեցությունը սոցիալական գործընթացների վրա, նրա դերը ժողովրդավարական հասարակության և օրենքի գերակայության ամրապնդման գործում: Կրթությունը մարդու դաստիարակության գիտելիքին, մշակութային արժեքներին, սոցիալական նորմերին ծանոթացնելու նպատակային գործընթաց է, կրթության ընթացքում անհատը տիրապետում է տարբեր գիտությունների տեսական հիմունքներին, ինչպես նաև գործնական հմտություններին:

Կրթության նպատակը հասարակության հոգևոր վերարտադրությունն է, գիտական և մշակութային ժառանգության, բարոյական իդեալների պահպանումը: Ներկայումս հայաստանյան կրթությունը հիմնված է ժամանակակից հասարակության պայմաններին համապատասխան: Կրթությունը նպատակաուղղված է ժողովրդավարության հիման վրա հումանիստական անհատականության ձևավորմանն ու զարգացմանը՝ հաշվի առնելով կրթական գործընթացում տեխնիկական միջոցների կիրառումը և տեղեկատվության ձեռքբերման խոչընդոտների բացակայությունը, շարունակական կրթության ցանկության ձևավորումը:

Ներկայիս հասարակարգում կրթության նոր չափանիշների սահմանման համատեքստում կրթական բարձր որակների ապահովումը դարձել է առաջնահերթ խնդիրը, որը մեր երկրում հնարավորություն կտա ստեղծել գիտելիքահեռք տնտեսություն: Այս համատեքստում կարևոր է կրթության համապատասխան որակի ապահովումը և՛ տարրական դպրոցում, և՛ միջին դպրոցում: Այս ամենը ժամանակակից պայմաններին համապատասխանեցնելու համար կարևոր ենք համարում ուսուցիչների պարբերաբար վերապատրաստումը: Միանշանակ, կրթության համար պետք է առանցքային դառնա անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթացը, այն պետք է նպատակաուղղված լինի գիտելիքի պահպանմանը և մատաղ սերնդին փոխանցելու կարողությանը:

Կրթության յուրաքանչյուր ենթաոլորտ պետք է ուսումնասիրել իրեն բնորոշ առանձնահատուկություններով, պետք է դրանց տրվեն այնպիսի լուծումներ, որ ենթաոլորտների միաձուլումը դառնա ճկուն ու հեշտ գործածելի:

Տարիների ընթացքում տուժել են մեր կրթական իրավունքները, որակը, հասարակության կարևորագույն սոցիալական բաղադրիչը:

Միանշանակ փաստ է՝ առողջ հասարակություն ունենալու համար պետք է ուշադրություն դարձնել ՀՀ քաղաքացու որակյալ կրթության սահմանադրական իրավունքի անխոչընդոտ իրագործմանը:

Բանալի բառեր և բառակապակցություններ. հանրակրթություն, կրթության կառավարում, հոգևոր վերարտադրություն, ռացիոնալ բախշում, ինտեգրված կրթություն:

МОДЕЛЬ УПРАВЛЕНИЯ ОБЩИМ ОБРАЗОВАНИЕМ В АРМЕНИИ

АРМЕН МИКАЕЛЯН

Национальная академия наук Республики Армения
Международный научно-образовательный центр
магистрант кафедры социальной педагогики
средняя школа Джамашлу, учитель английского языка
armen.miqayelyan.1982@mail.ru

Аннотация

Проблемы современной системы образования в наше время являются одними из самых актуальных. Образование человека важно как в личном, так и социальном плане. В основе личностной установки лежит стремление человека развиваться, использовать свои способности, участвовать в культурной жизни общества, приобретать навыки, необходимые для успешной деятельности. Социальная направленность предполагает просвещение людей в целях и интересах государства, его положительном влиянии на социальные процессы, его роли в укреплении демократического общества и правового государства.

Образование – это целенаправленный процесс воспитания человека, приобщения к знаниям, культурным ценностям, социальным нормам, В процессе обучения личность осваивает теоретические основы различных наук, а также практические навыки.

Целью образования является бережное воспроизводство общества, сохранение научно-культурного наследия, нравственных идеалов. В настоящее время в Армении образование базируется на условиях постиндустриального общества.

Образование направлено на формирование и развитие гуманистической личности на основе демократизма с учетом использования в образовательном процессе технических средств, отсутствия барьеров для получения информации, формирования стремления к непрерывному образованию.

В условиях установления новых стандартов образования в современном обществе приоритетом стало обеспечение высокого качества образования, что позволит создать в нашей стране наукоемкую экономику. В этом контексте можно обеспечить надлежащее качество образования в начальных классах и в средней школе. Мы считаем, что регулярное повышение квалификации учителей должно привести все это в соответствие с современными условиями.

Безусловно, ключевым для образования должен быть процесс обучения и воспитания в интересах личности, общества и государства, он должен быть направлен на сохранение знаний, возможность передать их подрастающему поколению.

Каждое звено образования должна изучаться со своими особенностями, им должны быть даны такие решения, чтобы слияние звеньев стало гибким и удобным в применении.

Неоспоримый факт чтобы иметь здоровое общество необходимо уделять внимание беспрепятственной реальной реализации конституционного права гражданина РА на качественное образование.

Ключевые слова и словосочетания: общее образование, управление образованием, духовное воспроизведение, рациональное распределение, интегрированное образование.

THE MODEL OF PUBLIC EDUCATION MANAGEMENT IN RA

ARMEN MIKAYELYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
International Scientific-Educational Center
Department of Social Pedagogy, Master Student
Jamshlu Secondary School, English Teacher
armen.miqayelyan.1982@mail.ru

Abstract

The problems of the modern education system are among the most urgent in our time. The value of human education is both personal and social. The basis of the personal attitude is the desire of a person to develop, use his abilities, participate in the cultural life of society, acquire the skills necessary for successful activity. Social orientation involves educating people in the purposes and interests of the state, its positive impact on social processes, its role in strengthening a democratic society, and the rule of law. Education is a purposeful process of educating a person, familiarizing himself with knowledge, cultural values, social norms. In the process of learning, a person masters the theoretical foundations of various sciences, as well as practical skills.

The purpose of education is the careful reproduction of society, the preservation of scientific and cultural heritage, moral ideals. Currently, Armenian education is based on the conditions of a post-industrial society.

Education is aimed at the formation and development of a humanistic personality on the basis of democracy, taking into account the use of technical means in the educational process, the absence of barriers to obtaining information, and the formation of a desire for continuous education.

In the context of setting new standards of education in the current society, ensuring high-quality education has become a priority, which will enable the creation of a knowledge-based economy in our country. In this context, it is possible to ensure the appropriate quality of education in the elementary grades and secondary school. We consider regular training of teachers to bring all this in line with modern conditions.

The process of education upbringing in the interests of the individual, the society, and the interests of the state, should be the key for education, it should be aimed at preserving knowledge and the ability to pass it to the younger generation.

Each area of education should be studied with its characteristics, they should be given such solutions so that the merging of circles becomes flexible and convenient. Over the years, our educational rights, quality, the most important social component of society have suffered.

It is an unequivocal fact that in order to have a healthy society, one should pay attention to the unimpeded real implementation of the constitutional right of the RA citizen to quality education.

Keywords and phrases: School education, education management, spiritual reproduction, rational distribution, integrated education.

Ներածություն

Ժամանակակից համակարգերը՝ տնտեսական, սոցիալական, մանկավարժական և այլն, պահանջում են կառավարման բարձր արվեստ, տեսական մեթոդաբանական խոր իմացություն:

Կրթության համակարգի իրավասությունների, լիազորությունների աստիճանական փոխանցումը ենթահամակարգերին ենթադրում է կառավարման նոր սկզբունքներ, նոր գործառույթներ, նորամուծություններ, որոնք թափանցել են կրթության ոլորտ և ապահովում են դպրոցի՝ որպես կրթական համակարգի առաջին օղակի զարգացումը:

Դրա հետ միաժամանակ դպրոցից դուրս և նրա ներսում երևան է եկել կրթության կառավարման նոր համակարգ, որը պայմաններ է ստեղծում նրա աշխատանքի ձևերի և արդյունքների որակական փոփոխության համար:

Այդ բոլորը բերում են դպրոցի կառավարման խնդիրների փոփոխության և նոր՝ գիտականորեն հիմնավորված միջոցներ, տեխնոլոգիաներ ու պայմաններ են ծնում դրանց լուծման համար:

Չնայած ներդպրոցական կառավարման խնդիրների մշակումն ու վերլուծումը մանկավարժ-գիտնականների կողմից տարվում է ընդամենը մի քանի տասնամյակ, այնուամենայնիվ այդ ժամանակահատվածում կուտակված է մասնագիտական գիտելիքի ու փորձի որոշակի ծավալ, որը պետք է դառնա դպրոցի գիտական կառավարման գործընթացի կազմակերպիչների գործունեության հիմքը:

Դպրոցի կառավարման ժամանակակից տեսությունը զարգանում է որպես սոցիալական կազմակերպությունների կառավարման ընդհանուր տեսության մի մաս: Այն ունի կառավարման իր կարևոր առանձնահատկությունները, որոնք նրան առանձնացնում են մյուս տիպի սոցիալական կազմակերպությունների կառավարումից:

Մեր հանրապետությունում հասարակական հարաբերությունների կտրուկ փոփոխությունն այսօր պահանջում է կրթության նոր մակարդակ, որ ենթադրում է նոր բովանդակություն, ռեալ իրականանալի նպատակներ, հստակ ռազմավարություն, մարտավարություն և կառավարման նորագույն տեխնոլոգիաներ:

Դպրոցի ենթահամակարգերի գործունեության արդյունավետությունը մեծ մասամբ կախված է մանկավարժական կառավարման բովանդակությունից և ձևից, ղեկավարի կառավարման ոճից:

Տեսանկյունից հիմքեր

Կրթությունն այն հիմքն է, որից սկսվում է մարդու սոցիալականացումը, սկսվում է նրա անկախ կյանքը հասարակության մեջ: Թերևս կրթությունն է, որ որոշում է անհատի հետագա ճակատագիրը, նրա տեղը հասարակության մեջ, նրա առաջնահերթությունները և ներքին կանոնները: Այս առումով պետության առաջնային խնդիրը կրթության լավագույն որակի ապահովումն է: Կարծում ենք կրթության որակը բարելավելու համար չպետք է խնայել ոչ գումար, ոչ էլ ժամանակ, քանի որ սա աշխատանք է ապագայի համար: Երկրի բարեկեցությունն ուղղակիորեն կապված է նրա բնակիչների կրթված և հմուտ լինելուց [1, էջ 22]:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է: ՀՀ կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը:

Աշխարհում ամեն ինչ համակարգված է: Այդ համակարգերը տարբեր ձևերի են: Այսօր կրթության համակարգի կառավարման կատարելագործման նպատակով սոցիալ-տնտեսական նոր պայմաններում անհրաժեշտություն է կառավարման գործընթացի նկատմամբ համակարգային մոտեցման կիրառումը [7, էջ 440]:

Երկար տարիներ մանկավարժական գիտության և պրակտիկայի մեջ առաջատար էր գործառույթային մոտեցումը, որի դեպքում խորությամբ և մանրամասնորեն ուսումնասիրվում էին

կրթության համակարգի կառավարման բոլոր մակարդակների գործառույթները՝ ընդհուպ մինչև ուսուցիչը:

Կառավարման համակարգի կատարելագործամ ուղղությունների վերաբերյալ կարծիքները բազմաթիվ գիտնականների քննարկման առարկան են այսօր **[8, էջ 39]**:

Մեր կարծիքով՝ համակարգային մոտեցումը ենթադրում է օբյեկտի ուսումնասիրումն իր բոլոր արտաքին և ներքին կապերի մեջ, որը թույլ է տալիս առավել խորությամբ բացահայտել ուսումնասիրվող երևույթների էությունը:

Համակարգի կառավարում ասելով՝ հասկացվում է փոխներգործության տարրերի հանրագումարը, որը կազմում է ամբողջական գոյություն, և նրա տարրերի նկատմամբ նոր որակ է ձեռք բերվում:

Կրթական համակարգի կառավարման սկզբունքների հետ սերտորեն կապված են կառավարման գործառույթները:

Ելնելով կառավարման վերաբերյալ տեսությունների վերլուծությունից՝ մենք, «գործառույթ» ասելով, պատկերացնում ենք գործողությունների այն ամբողջությունը, որն իր մեջ բովանդակում է կառավարչական գործունեության որևէ տեսակ, և լուծվում են այդ գործունեության որոշակի խնդիրներ: Կրթական համակարգի կառավարումը՝ որպես գործունեության ընդարձակ բնագավառ, իր մեջ միավորում է գործունեության տարբեր տեսակներ, որոնք արտահայտում են կառավարման նպատակը, էությունը, նպատակաուղղվածությունը: Այս իմաստով կառավարման գործընթացը հենց այդ գործառույթների իրականացումն է:

Կրթական համակարգի գործառույթները կապված են կառավարման տարբեր ասպեկտների հետ՝ վարչակազմակերպչական, հոգեբանամանկավարժական, սոցիալ-տնտեսական և այլն **[4, էջ 42]**:

Սոցիալական կառավարման տարատեսակներից մեկը մանկավարժական համակարգերի կառավարումն է, որի էությունը այդ համակարգերի կազմակերպվածությունն է: Կրթական համակարգի կառավարումը կապված է մարդկանց հետ և ունի ընդհանուր գծեր տեխնիկական, կենսաբանական համակարգերի հետ. երբեք չի ձուլվում նրանց հետ, այլ մշտապես պահպանում է իր էությունը:

Կրթական համակարգի կառավարման հիմնական նպատակը մարդկային պաշարների, ուժերի, միջոցների, ժամանակի արդյունավետ և պլանավորված օգտագործումն է լավագույն արդյունքի հասնելու համար:

Նպատակից էլ բխում են համակարգի կառավարման խնդիրները, որոնք լուծվում են համալիր և որոշում են նպատակին հասնելու տեխնոլոգիան **[5, էջ 96]**:

Կառավարման գործառույթները կառավարող սուբյեկտի և կառավարվող օբյեկտի միջև եղած հարաբերությունների ձևերն են, որոնք կառավարող համակարգից պահանջում են որոշակի գործողությունների իրագործում, որոշակի կրթական, զարգացման, վարչատնտեսական խնդիրների լուծում:

Կառավարման գործառույթի իրականացումը ենթադրում է կառավարման խնդիրների փուլային լուծում որոշակի ժամանակահատվածում՝

- ընդհանուր կրթական համակարգում տիրող իրադրության ուսումնասիրում.
- կառավարվող ենթահամակարգերի գործունեության պլանավորում.
- ներգործությունների որոշակիացում՝ ըստ կառավարող օբյեկտի տեսակի.
- ենթահամակարգերի գործունեության վերահսկում, կարգավորում.
- արդյունքների վերլուծություն և մշակում.
- զարգացման ծրագրերի և երաշխավորագրերի մշակում:

Կրթության համակարգի կառավարման համար պահանջվում են լրացուցիչ գործառույթներ՝ պայմանավորված կրթական համակարգի առջև ծառայած բազմաբնույթ խնդիրներով:

Կառավարչական խնդիրների լուծմանն ուղղված զուգահեռաբար և հաջորդականորեն կատարվող գործողությունների հանրագումարն էլ ձևավորում է կառավարման գործընթացը: Կառավարման գործընթացը առաջին հերթին ենթադրում է կառավարչական խնդիրների որոշակիացում և նրա տեսական հիմնավորում:

Կանխատեսման գործառույթը կառավարման գործառույթներից է: Նրա շնորհիվ են կանխատեսվում համակարգի զարգացման և կառավարման ոլորտների բոլոր փոփոխությունները, բարեփոխումները, կրթության համակարգի ռազմավարության նախագծումը՝ կապված հասարակության զարգացման սոցիալ-տնտեսական պայմանների հետ:

Ցանկացած կառավարչական որոշման մշակման դեպքում անհրաժեշտ է որոշել նրա հաջող լուծման պայմանները, դնել նպատակ և մշակել գործողությունների պլան **[6, էջ 54]:**

Հանրակրթական ոլորտի կառավարման խնդրի լուծումն ավելի ու ավելի մեծ կշիռ է ստանում՝ կապված ժողովրդավարացման, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության աճող դերի ու կարևորության, շուկայական հարաբերությունների զարգացման, սոցիալական նոր կառույցների և կառավարման նոր համակարգերի ձևավորման հետ: Կառավարման գործընթացը միշտ տեղի է ունենում այնտեղ, որտեղ իրականացվում է մարդկանց ընդհանուր գործունեությունը որոշակի արդյունքների հասնելու համար: Քանի որ դպրոցը սոցիալական կազմակերպություն է և այն մարդկանց (ուսուցիչներ, աշակերտներ, ծնողներ) համատեղ գործունեության համակարգ է, ապա նպատակահարմար է խոսել դրա կառավարման մասին: Ներկայումս բիզնեսի ոլորտից կառավարման հայեցակարգն ավելի ու ավելի է տարածվում մարդկային գործունեության տարբեր ոլորտներում՝ ներառյալ կրթությունը **[6, էջ 52]:**

Կրթության դերը հասարակության զարգացման համատեքստում միշտ արդիական է: Հայաստանում կրթությունը մոտավորապես 1600 տարեկան է, որի ուսուցման տարբերականները՝ հանրակրթական դպրոցներ, ուսումնարաններ, հալասարաններ, փոխել են իրենց գործառույթները ժամանակաշրջանին համապատասխան և ըստ կառավարման ձևի:

Ներկա փուլում կրթության համակարգի ռազմավարական նպատակն է՝ ընդունելով ժամանակակից մարտահրավերները, արձանագրել հիմնախնդրի լուծման և առաջընթացի այնպիսի արդյունքներ, որոնք կնպաստեն կրթության և գիտելիքի վարկանիշի մեծացմանը, և կամրապնդեն Հայաստանի՝ որպես գիտակրթական տարածքի հեղինակությունը:

Հայաստանում կրթության բնագավառում փոփոխությունները սկսվել են իրականացվել Հայաստանի Հանրապետության անկախության ձեռքբերումից հետո: Միանշանակ կարող ենք ասել, որ այս տարիների ընթացքում իրականացված բարեփոխումները հնարավորություն տվեցին մի շարք հիմնախնդիրներ լուծել, կայունացնել վիճակը և նախադրյալներ ստեղծել հետագա զարգացման համար, սակայն հանրակրթական համակարգում դեռևս կան խնդիրներ, որոնցով պայմանավորված այս համակարգը չի կարողանում լիարժեք իրականացնել իր առջև դրված առաքելությունը, մինչդեռ այս ամենի հետ առաջ են գալիս նոր մարտահրավերներ, և դրանց հաղթահարմամբ է պայմանավորված կրթության ապագան:

Հանրակրթության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակն է՝ ապահովել հիմնական հանրակրթական ծրագրերի մատչելիությունը նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների համար և բարելավել կրթության որակը: Մասնավորապես, ապահովել 5-6 տարեկան երեխաների համար նախադպրոցական կրթության առնվազն 90 տոկոսով հասանելիություն, ապահովել ընդհանուր միջնակարգ կրթության որակի բարձրացում, դրա համապատասխանեցում միջազգային չափորոշիչներին, ներդնել կրթության որակի վերահսկողության և գիտելիքի գնահատման գործոն, եվրոպական չափանիշներին համապատասխան միասնական համակարգ:

Հանրակրթության ոլորտում իրականացվող ամենահիմնական բարեփոխումը՝ առանձին գործող եռամյան՝ ավագ դպրոցների համակարգի ձևավորումն է, որպես հիմնական ընդհանուր կրթության շարունակություն:

Հայտնի է, որ յուրաքանչյուր նոր ներդրվող համակարգ ունի իր թերությունները, բարդությունները և հասարակության կողմից ոչ միշտ է միանշանակ դրական արձագանքի արժանանում:

Տարրական դպրոցի հիմնական նպատակը սովորողի մտավոր, հոգևոր և ֆիզիկական կարողությունների, լեզվամտածողության, գրագիտության, տրամաբանության հիմքերի և աշխատանքային նախնական հմտությունների ձևավորումն է: Տարրական դպրոցն ապահովում է

ուսումնառության անհրաժեշտ պայմաններ և միջին դպրոցում ուսումը շարունակելու համար պահանջվող մակարդակ:

Միջին դպրոցի հիմնական նպատակը մարդու, բնության և հասարակության մասին գիտելիքի, դրանք կյանքում կիրառելու կարողությունների և հմտությունների, բարոյական և հոգևոր արժեքների յուրացման այնպիսի մակարդակի ապահովումն է, որն անհրաժեշտ է սովորողներին ավագ դպրոցում կամ մասնագիտական հաստատությունում ուսումը շարունակելու, ինչպես նաև՝ տարիքին համապատասխան աշխատանքային գործունեություն իրականացնելու համար: Ավագ դպրոցի հիմնական նպատակը սովորողի մասնագիտական կրթություն ստանալու, ինքնուրույն կյանքի համար անհրաժեշտ գիտելիքի, կարողությունների և հմտությունների ապահովումն է:

Հանրակրթության պետական չափորոշիչը ձևավորվում է ըստ հանրակրթական հիմնական ծրագրերի բաղադրիչների՝

- ուսումնական բնագավառներ ու կրթության բովանդակության բաղադրիչներ,
- շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջներ՝ ըստ կրթության աստիճանների և ուսումնական բնագավառների,
- հենքային ուսումնական պլան և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքներ,
- սովորողների գնահատման ձևեր, սանդղակ, հաշվառման կարգ:

Հանրակրթության պետական չափորոշիչը հաստատվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից: Առարկայական ծրագրերը և չափորոշիչները՝ որպես հանրակրթական պետական ծրագրի բաղկացուցիչ մասեր, հաստատվում են Հայաստանի Հանրապետության կրթության պետական կառավարման լիազոր մարմնի կողմից: Հանրակրթության պետական չափորոշիչը ելնում է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումից և սահմանում է շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները՝ ըստ կրթական աստիճանների (կարողունակություններ (կոմպետենցիաներ) և ըստ կրթական աստիճանների ուսումնառության՝ ակնկալվող վերջնարդյունքներ), ուսումնական բնագավառները, դրանց բովանդակությանը ներկայացվող պահանջները, հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, ուսումնական պլանի և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքները, սովորողների գնահատման ձևերը, սանդղակը, հաշվառման կարգը: Հանրակրթական հիմնական ծրագրերը (տարրական, հիմնական և միջնակարգ) մշակվում են չափորոշի նորմերի և դրույթների համաձայն **[8, 9, 10, 11]**:

Չափորոշիչը նպատակաուղղված է հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթության քաղաքականության ապահովմանը: Չափորոշիչի պահանջները պարտադիր են հանրակրթական հիմնական և այլընտրանքային ծրագրերի, այդ թվում՝ առարկայական ծրագրերի, ուսումնական պլանների, դասագրքերի և ուսումնական գործընթացի բովանդակությանն առնչվող այլ ուսումնական նյութերի համար: Նշված պահանջները պարտադիր են հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների համար՝ անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից և ենթակայությունից: Կարողունակությունները սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա, ըստ իրավիճակի, արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերն են: Կարողունակությունները ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև՝ ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով և բխում են հանրակրթության հիմնական նպատակներից:

Հանրակրթական տարրական, հիմնական և միջնակարգ ծրագրերի սովորողների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները նկարագրում են, թե հանրակրթական հիմնական ծրագրերի կրթական աստիճանների ավարտին սովորողը ինչ պիտի իմանա, կարողանա անել և հասկանա: Վերջնարդյունքներն ուղղված են կարողունակությունների ձևավորմանը:

«Հանրակրթության ոլորտի առանձնահատկությունները պայմանավորված են ոլորտի նշանակությամբ և այս ոլորտում շուկայական հարաբերությունների դրսևորմամբ: Հարկ է նշել, որ «Հանրակրթական համակարգի կառավարման վրա ազդում են նաև մի շարք արտաքին և

ներքին գործոններ: Այս համակարգում կառավարման մոդելի ընտրությունը ենթադրում է համակարգված, փոխկապակցված գործողությունների մի շարք, որոնք ուղղված են կազմակերպության նշանակալի նպատակին հասնելուն: Այս գործողությունները պետք է ներառեն կառավարման գործառույթներ, սկզբունքների իրականացում և արդյունավետ կառավարման մեթոդների կիրառում:

Կառավարչական գործունեության արդյունավետությունը մեծապես որոշվում է նրանով, թե պետական կառավարման մարմինները, այս ոլորտում որոշումներ կայացնողները ինչքանով են կոմպետենտ, որքան խորը կարող են ուսումնասիրել իրավիճակը, հանրակրթության կառավարման ոլորտում արձանագրված փաստերը և բացահայտել առկա խնդիրները:

Եզրակացություն

Այսպիսով՝ ժամանակակից դպրոցում ընթանում են կառավարվող մի շարք գործընթացներ: Այն բարեփոխումների և զարգացման ընթացքի մեջ է, և այդ համատեքստում էլ փորձել ենք եղած գիտատեսական տեսությունների, մեր՝ տարիների մանկավարժական հետազոտությունների և փորձի վրա բացահայտել դպրոցի կառավարման էությունը, առանձնահատկությունները, սկզբունքները, գործառույթները, մեթոդները, կառավարման գործընթացի արդյունավետության միջոցները և նրա վրա ազդող գործոնները:

Հայաստանում գործում է ոչ թե ներառական կրթության, այլ՝ ինտեգրված կրթության մոդելը: ՀՀ պետական կառավարման մարմինները ունեն մի շարք լիազորություններ, որոնց միջոցով կառավարում են հանրակրթության ոլորտը, սակայն մեր կողմից իրականացված վերլուծությունները վկայում են, որ այս ոլորտում բավականին մեծ բացթողումներ կան: Կարևորում ենք պետական և համայնքային բյուջեներից հատկացվող ֆինանսական միջոցների ռացիոնալ բաշխումը հանրակրթական ուսումնական հաստատությունների միջև, մշտադիտարկման միջոցով վեր հանել դպրոցներում առկա առաջնային խնդիրները և մշակել դրանց լուծման ռազմավարական պլան՝ ՀՀ-ում հանրակրթության կառավարման մոդելին համապատասխան:

Գրականության ցանկ

1. Մ. Մարտին, Է. Ստեյլա – Որակի արտաքին ապահովում, Երևան, 2009, 125 էջ:
2. Азарьева В.В., Круглов В.И., Пузанков Д.В., Е.А. Рябина, Степанов И.В., Степанов С.А., Яценко В.В. Системы качества образовательных учреждений. Лучшие практики. – СПб.: Изд-во СПбГЭТУ «ЛЭТИ», 2010, 95 с.
3. Бурдакова, И. И. Организующая роль международных стандартов качества ИСО 9001-2001 в высшем образовании / И. И. Бурлакова // Инновации в образовании. – 2009. – № 8, 79 с.
4. Барская Н.А. Самооценка в системе обеспечения качества подготовки специалистов / Н. А. Барская // Высшее образование сегодня. – 2008. – № 12, 116 с.
5. Волкогон В.А., Ревин С.А. Создание системы менеджмента качества в профессиональном образовательном учреждении: пособие для руководителей профессиональных образовательных учреждений, разработчиков систем менеджмента качества и специалистов служб качества. Калининград: Изд-во БГАРФ, 2010, 96 с.
6. В.В. Азарьева, В.И. Круглов, Е.А. Рябина, В.С. Соболев, И.В. Степанов, С.А. Степанов, В.В. Яценко. Типовая модель системы качества образовательного учреждения. Руководство по качеству. – СПб.: ООО «Технолит», 2009. 39 с.
7. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն,
<http://edu.am/index.php?id=3566&topMenu=-1&menu1=85&menu2=89&arch=0>, 20.02.2021:
8. ԿԵՀ բարձրագույն կրթության վերլուծական կենտրոն, Բուդապեշտ, հուլիս 2013թ., Բարձրագույն կրթությունը Հայաստանում այսօր. առկա խնդիրների վերլուծություն
http://www.osf.am/wp-content/uploads/2013/10/OSF_HE_report_ARM.pdf, 08.10.2021
9. Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն, ՀՀ-ում ներառական կրթության իրականացման գնահատում
http://www.osf.am/wp-content/uploads/2013/11/Inclusiveeducation-report_ARM-without-tools.pdf, 25.11.2021:
10. Հայաստանի Հանրապետության օրենքը Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2001-2005 թվականների պետական ծրագիրը հաստատելու մասին
<http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1422&lang=arm>, 11.11.2021:

INCREASING EFFICIENCY IN FOREIGN LANGUAGE EDUCATION ON THE EXAMPLE OF ISEC NAS RA ENGLISH CLUB

GOHAR GRIGORYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
International Scientific-Educational Center
Head of the Chair of Foreign Languages
PhD in Philological Sciences, Associate Professor
Gohar.grigoryan@isec.am

Abstract

In the modern world, learning a foreign language is one of the crucial moments in the life of a successful person. Nowadays, knowing a foreign language has become a must. More and more people want to learn at least one foreign language, as it broadens their spiritual world. Ideally, an educated, ambitious man should speak several foreign languages, permanently grind and improve them because studying foreign languages is not a tiresome process. This creative, fascinating activity develops the worldview and enhances critical thinking and the ability to express ideas concisely and clearly.

As a result of globalization, the role of a foreign language has thoroughly changed. In the modern educational system learning a foreign language has become a basic element of the curriculum and a means of a person's professional realization [1, 212].

Knowledge of a foreign language leads to expanded opportunities, salary increases, and improvements in living standards. Countries worldwide recognize that their citizens must learn English to remain competitive in the global community [2, 10]. Unfortunately, the academic activity sometimes is not enough to acquire the English language. Moreover, it is perceived by many as something that is not tangible. Because students have difficulty speaking English, they lack motivation, and their participation in classes is minimal.

In response to the mentioned situation, in 2017, ISEC NAS RA Department of Foreign Languages founded the English Club, a co-curricular club open to MA, PhD and other students to use English in a casual setting, away from the classroom. Lessons at the Club are formal and informal, and the students here can understand their weaknesses. Following Alexander et al [3]. Pereira et al. [4, 48-56], such clubs foster a safe, stressfree, relaxed, nurturing, non-threatening, and respectful environment in which the aim is not to demand answers or correct errors but rather, to guide those who join, and to facilitate and encourage the exchange of ideas. Simple encouragement and praise, or rewards, prove to be effective, as Goss et al [5] have noted elsewhere.

This study investigates the significance, aims and objectives, management and structure of English clubs (on the example of ISEC NAS RA English Club), reflects the effectiveness and actions involved to support the learning of English.

Keywords and phrases: Respectful environment, academic activity, casual setting, exchange of ideas, motivation, globalization.

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ ԳԿՄԿ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱԿՈՒՄԲԻ ՕՐԻՆԱԿՈՎ

ԳՈՀԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

«Հ գիտությունների ազգային ակադեմիա
գիտակրթական միջազգային կենտրոն
օտար լեզուների ամբիոնի վարիչ
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Gohar.grigoryan@isec.am

Համառոտագիր

Ժամանակակից աշխարհում օտար լեզու սովորելը հաջողակ մարդու կյանքի կարևոր ձեռքբերումներից մեկն է: Մեր օրերում օտար լեզվի իմացությունը պարտադիր է դարձել: Ավելի ու ավելի շատ մարդիկ են ցանկանում սովորել գոնե մեկ օտար լեզու, քանի որ դա հարստացնում է նրանց հոգևոր աշխարհը: Իրականում, կրթված, հաջողության ձգտող մարդը պետք է տիրապետի մի քանի օտար լեզուների, մշտապես թարմացնի գիտելիքը և կատարելագործի այն, մանավանդ որ օտար լեզուների ուսումնասիրությունը ձանձրալի գործընթաց չէ: Այն ստեղծագործական, հետաքրքրաշարժ գործունեություն է, որ զարգացնում է աշխարհայացքը, թույլ է տալիս բարելավել քննադատական մտածողությունը, մտքերը հակիրճ և հստակ արտահայտելու կարողությունը:

Գլոբալիզացիայի հետևանքով օտար լեզվի դերը հիմնովին փոխվել է: Ժամանակակից կրթական համակարգում օտար լեզվի ուսուցումը դարձել է ուսումնական ծրագրի հիմնական տարր և անձի մասնագիտական իրացման միջոց [1, 212]:

Օտար լեզվի իմացությունը հանգեցնում է հնարավորությունների ընդլայնման, աշխատավարձի բարձրացման և կենսամակարդակի բարելավման: Աշխարհի բոլոր երկրները գիտակցում են, որ համաաշխարհային համայնքում մրցունակ մնալու համար իրենց քաղաքացիները պետք է սովորեն անգլերեն [2,10]: Ցավոք, ակադեմիական գործունեությունը երբեմն բավարար չէ անգլերենի յուրացման համար: Ավելին՝ դա շատերը ընկալում են որպես մի բան, որը շոշափելի չէ: Անգլերենին լավ չտիրապետելու պատճառով ուսանողները սովորելու մոտիվացիա չեն ունենում, և դասերին մասնակցությունն իսկապես նվազում է:

Ի պատասխան նշված իրավիճակի՝ 2017 թ. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ Օտար լեզուների ամբիոնը գործող կրթական ծրագրերին համապատասխան հիմնադրեց Անգլիական ակումբը այն մագիստրանտների և ասպիրանտների համար, որոնց նպատակն անգլերենն առօրյա միջավայրում, լսարանից դուրս օգտագործելն է: Ակումբում դասերն անցկացվում են և՛ պաշտոնական, և՛ ոչ պաշտոնական ձևաչափով, և այստեղ ուսանողները կարողանում են վերհանել իրենց թույլ կողմերը: Ինչպես նշում են Ալեքսանդրը [3], Պերեյրան և այլք [4,48-56], նման ակումբները ստեղծում են ապահով, հանգիստ, սովորելուն նպաստող մթնոլորտ, որտեղ նպատակը ոչ թե պատասխաններ պահանջելն է կամ սխալներ ուղղելը, այլ ավելի շուտ՝ ակումբի անդամներին ուղղորդելը, մտքերի փոխանակումը հեշտացնելն ու խրախուսելը: Պարզ խրախուսանքն ու գովասանքը կամ պարզևները արդյունավետ են, ինչպես նշում են Գոսը և այլք [5]:

Այս աշխատությունն ուսումնասիրում է անգլերենի ակումբների նշանակությունը, նպատակներն ու խնդիրները, կառավարումը և կառուցվածքը (ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ Անգլիական ակումբի օրինակով), արտացոլում է անգլերենի ուսուցմանը աջակցելու արդյունավետությունն ու գործողությունները:

Բանալի բառեր և բառակապակցություններ. բարենպաստ մթնոլորտ, ակադեմիական գործունեություն, ոչ պաշտոնական մթնոլորտ, մտքերի փոխանակում, մոտիվացիա, գլոբալիզացիա:

ПОВЫШЕНИЕ ЭФФЕКТИВНОСТИ В ИНОЯЗЫЧНОМ ОБРАЗОВАНИИ НА ПРИМЕРЕ АНГЛИЙСКОГО КЛУБА МНОЦ НАН РА

ГОАР ГРИГОРЯН

Национальная академия наук Республики Армения
Международный научно-образовательный центр
заведующая кафедрой иностранных языков
кандидат филологических наук, доцент
Gohar.grigoryan@isec.am

Аннотация

В современном мире изучение иностранного языка является одним из важных моментов в жизни успешного человека. В настоящее время знание иностранного языка, безусловно, стало обязательным. Все больше и больше людей хотят изучить хотя бы один иностранный язык, поскольку он расширяет их духовный мир. В идеале образованный, амбициозный человек должен говорить на нескольких иностранных языках, постоянно перемалывать и улучшать их, потому что изучение иностранных языков - это не скучный процесс. Эта творческая, увлекательная деятельность развивает мировоззрение, позволяет совершенствовать критическое мышление, способность выражать идеи лаконично и ясно.

В результате глобализации роль иностранного языка коренным образом изменилась. В современной системе образования изучение иностранного языка стало основным элементом учебной программы и средством профессиональной реализации человека [1, 212].

К сожалению, академической деятельности иногда бывает недостаточно для овладения английским языком. Более того, многие воспринимают его как нечто неосозаемое. Из-за того, что студенты с трудом говорят по-английски, у них, кажется, нет мотивации, и участие в классах действительно минимальное.

Знание иностранного языка ведет к расширению возможностей, повышению заработной платы и повышению уровня жизни. Страны во всем мире признают, что для сохранения конкурентоспособности в мировом сообществе их граждане должны изучать английский язык

В ответ на упомянутую ситуацию, в 2017 году кафедрой иностранных языков ISEC NAS RA был создан Английский клуб, который является вторым по циклу клубом, открытым для магистрантов, докторантов и т.д. предназначенным для использования английского языка в повседневной обстановке, вдали от аудитории. Уроки в клубе являются как формальными, так и неформальными, и студенты здесь способны понять свои слабости. Следуя примеру Александра и др. [3], Перейры и др. [4, pp 48-56], такие клубы способствуют созданию свободной от стрессов, расслабленной, заботливой, безопасной и способствующей атмосферы, в которой цель состоит не в том, чтобы требовать ответов или исправлять ошибки, а, скорее направлять тех, кто вступает в клуб, и облегчать и поощрять обмен идеями. Простое поощрение и похвала или награды, оказываются эффективными, как Госс и др. [5] отметили в другом месте.

В этом исследовании исследуется значение, цели и задачи, управление и структура английских клубов (на примере Английского клуба ISEC NAS RA), отражает эффективность и действия, связанные с поддержкой изучения английского языка.

Ключевые слова и словосочетания: способствующая атмосфера, академическая активность, неформальная обстановка, обмен идеями, мотивация, глобализация.

Introduction

In the era of globalization, there has been a significant change in studying a foreign language. At the beginning of his presidential career in 2001, Vladimir Putin spoke within the walls of the Berlin Bundestag. It was the first time that the head of the Russian state stood at the historic podium and addressed the audience. For a speech on international security and "the mutual interest of Russia and Germany in dialogue," Putin chose the language of Schiller and Goethe. The German legislators gave him a standing ovation for the content of the message and its form. A young, energetic politician proficient in German, aroused sympathy. 2010 Vitaly Mutko became famous on the entire Internet. At a meeting of the FIFA headquarters in Zurich, the Russian sports minister took the floor in English and immediately became an occasion for ridicule. With a strong accent, errors in stress and simple grammatical constructions - Mutko was accused of having rooted the stereotype about our country as dark and dense with his example: "Our officials cannot connect two words in English! Couldn't find anyone else? Mutko's linguistic failure was not forgotten even years later: five years later, Vitaly Leontievich received a self-instruction manual in English from the hands of the President himself as a birthday present. Both cases are included in the latest Russian history. The first - as a precedent, the second - a historical anecdote. Both the one and the other add grist to the mill of understanding [6, 29]. Thus if we want to become a part of a sizeable civilized world and speak on equal terms we can't do without a foreign language. Nowadays, we need English not only to travel overseas, visit new countries and other cultures but also to communicate, share information on the professional platform, participate in conferences, and gain global worldviews and scientific prospects. Regardless of whether you started learning English communication in infancy or much later, using English language skills effectively is a significant advantage, especially in the workplace. New tasks involve changes in the requirements for foreign language proficiency.

Nowadays, many tertiary institutions internationalize their education; thus, they need to provide their students with language skills and intercultural knowledge, intercultural mindsets, and intercultural communication skills.

Traditionally, students who apply to degree and later exchange programs must reflect the depth of understanding of English to thrive in the academic setting. In addition, they need to demonstrate satisfactory proficiency to take International tests such as TOEFL, IELTS, APTIS, etc.

Some universities establish a compulsory English language instruction policy for all students from all specialities. Though the institutions claim that their programs/curricula are internationally-oriented, students have ESP/ EFL classes for a few hours per week in many institutions. This might be enough to teach grammar, vocabulary, and written part, but very little to gain confidence and fluency in communicating. Sometimes students complete the course of ESP at ISEC NAS RA with a good knowledge of specific terms and phrases, but at the same time, difficulties in fluent communication and a lack of confidence in spoken language. This is where the need for starting an English club arises.

What is an English club?

According to Collins Dictionary 1) a club is an organization of people interested in a particular activity or subject who usually meet regularly. 2) A **club** is a place where the club members meet [7].

As long as the language is best learned through natural communication, English clubs assist students in practising the English language based on 'more practice more perfect'.

The Club invites native speakers to provide an authentic environment for the club members from time to time. But for the students, the lecturers also benefit from the Club, as they practice and sustain language proficiency. Learners who join clubs and organizations have better scores and achieve more than nonmembers on many aspects such as career planning, cultural integration, and academic autonomy [8, 98–102]; additionally, participating in extracurricular activities, that can be practiced in educational clubs, fosters learners' competency and interpersonal relationships [9, 16–19]. Thus, joining the Club helps address the weaknesses and enables the students to develop their language skills, especially reading, writing, and speaking, and feel more confident during the ESP course.

Methodology; Action Plan

In order to understand the students' needs studying at ISEC NAS RA, the Chair of Foreign Languages carried out a survey to reveal the students' linguistic gaps. 45-60 students from different faculties-International Relations, Tourism Management, Oriental Studies and Law took the questionnaire. Sixty-five percent of the participants agreed that they should develop their linguistic skills and highlighted the importance of English in their future careers. They also decided that joining the Club would facilitate learning ESP (English for Specific Purposes) suggested throughout ISEC NAS RA MA and PhD courses and easily gain the terminology of the particular area of study- engineering, business. Management, Environmental Studies, etc. It would also enable them to apply for mobility programs and acquire and improve other personal skills such as teamwork, project planning, critical thinking, etc.

However, the other 35 per cent thought they should pay more attention to their major, particularly to the thesis. Nevertheless, some of the students agreed that they would also like to take some conversational courses that would cover topics related to daily life.

Founding English Club at ISEC NAS RA

After the questionnaire analysis, the head of the Chair and some lecturers conducted meetings and discussions with focus groups. They concluded that most students prefer interactive speaking and an authentic atmosphere. Besides, as far as they do English (ESP) only a few hours per week, this is not enough to gain oral language skills relevant to discussing politics, cultural norms, and different important issues.

Based on the analysis results, the lecturers came to a unanimous decision to found ISEC NAS RA English Club in 2017, with a large variety of courses.

Based on the preliminary results of the analysis, the first courses offered by the Club were:

1. Situational English, which aimed to facilitate daily interactions, provided the students with a thematic vocabulary in different situations.
2. Communicative English, which provides the students with real-life situations and accurate communication, interactive and game-like activities,
3. Grammar practice and vocabulary for different levels,
4. Preparation courses for international exams (TOEFL iBT, IELTS), etc.

The goals and objectives of ISEC NAS RA English Club are to

- ✓ Demonstrate an individual approach to the learning process that will allow each student to identify the level of language proficiency and help students with relatively low language proficiency overcome difficulties and be fully involved in the learning process.
- ✓ Provide all necessary preconditions that will contribute to the transmission of English or other culture, improve the culture of students' speech and ensure intercultural relations.
- ✓ Transfer reliable knowledge and skills of a professional foreign language;
- ✓ Provide the students of the International Scientific-Educational Center, as well as those who want to learn a foreign language, with the necessary tools for communication,
- ✓ Create multilevel courses to ensure intercultural communication, which will provide the smooth transmission of each foreign language in a club atmosphere,
- ✓ Offer up-to-date teaching methods, exciting techniques, and personal learning aids
- ✓ Balance the four foundational skills (Reading, writing, speaking and listening). Roles in English Club
- ✓ Establish, strengthen and develop relations with similar foreign language clubs
- ✓ If necessary, organize seminars, discussions on language education to provide innovative teaching methods

Club Management and Structure

The work of the Club is coordinated by the head of the Chair of Foreign Languages. The current activities of the Club are managed by the Club Coordinator (or the Head of the Chair), who is hired and dismissed by the Director.

The coordinator of the Club.

- a) pursues the professional and financial activities of the Club;
- b) organizes and manages the current activities of the Club;
- c) supervises the activities of the Club departments (upon their availability);
- d) submits a proposal to the ISEC NAS RA Director on encouraging the employees of the Club in the manner prescribed by law, imposing a disciplinary penalty;
- e) submits a proposal for the appointment of an acting coordinator in their absence;
- f) Properly organizes the clerical work in the Club.

Conclusion

The study reveals that founding an English club at the university is highly significant. Being co-curricular clubs, they allow the students to learn or develop the gaps out of the classroom without any anxiety. The clubs carry out remedial classes for students who lack speaking skills. They provide the students with an authentic atmosphere where they can immerse and enjoy the learning process. The most important thing is that the clubs encourage critical thinking and allow the students to escape the traditional English courses. They enable the students to identify their weaknesses, improve them and fill the learning process with appreciation.

References

1. И. К. Войтович, *Иностранные Языки В Контексте Непрерывного Образования*, Ижевск: Изд-во «Удмуртский университет», 2012. – 212 с.
2. Kathleen F. Malu and Bryce Smedley, *Community-Based English clubs*, *English Teaching Forum*, volume 54, 2016; p 10
3. Alexander, N., Bloch, C., Jogee, N., Guzula, X., & Mahobe, N. (2011). *Creating literate school communities: Vulindlela reading clubs*
http://www.praesa.org.za/wpcontent/uploads/2016/09/Creating_Literate_School_Communities_Vulindlela_Re-1.pdf.
4. Pereira, A. H., Ismail, K., & Othman, Z. (2013). A model for the Malaysian English language club activities. *Procedia-Social and Behavioral Sciences*, pp48-56.
5. Goss, P., Sonnemann, J., & Griffiths, K. (2017). *Engaging students: Creating classrooms that improve learning*. Grattan Institute.
6. *Journal Uno Английских клуб*, отобрено Кембриджем, Издательский дом Cher Ami, Челябинск, Осень,(2017), pp29-31 <https://ru.calameo.com/read/004793318dde8df4ffd60>, 08.04.2022
7. Collins Cobuild, <https://www.collinsdictionary.com/dictionary/english/club>
8. Cooper, D. L., Healy, M. A., & Simpson, J. (1994). Student development through involvement: Specific changes over time. *Journal of College Student Development*, 35,pp 98–102.
9. Hood, A. B. (1984). Student development: Does participation affect growth? *Bulletin of the Association of College Unions- International*, 54, pp16-19

**ՄՓՅՈՒՌՔԻ ՄԻԱԿ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԿԱԶՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

ՀԱՅԿՈՒՀԻ ՍԱՖԱՐՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
գիտակրթական միջազգային կենտրոն
սոցիալական մանկավարժության ամբիոն, մագիստրանտ
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան
պատմաբան, մանկավարժ
haykuhisafaryan97@gmail.com

Համառոտագիր

Տարբեր ժամանակաշրջաններում զարգացման տարբեր փուլեր անցնելով, հաղթահարելով բազում դժվարություններ՝ հայկական կրթօջախները կարողացել են գոյատևել և զարգանալ, հավատարիմ մնալով իրենց առաքելությանը՝ հայի ազգային դիմագծի պահպանմանը և ապագայի կերտմանը:

Հայկական սփյուռքի կրթօջախների շարքում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Հայկազյան համալսարանը, որը Լիբանանում պետական ճանաչման արժանացած հայկական միակ բարձրագույն ուսումնական հաստատությունն է և ներկայումս սփյուռքում գործող հայկական միակ համալսարանը: Բեյրութի Հայկազյան համալսարանը հիմնադրվել է 1955թ-ին՝ որպես անգլերենի ուսուցման քոլեջ: Այն իր անունը ստացել է՝ ի պատիվ Կոնիայի ճեմարանի նախկին ուսուցչապետ Արմենակ Հայկազյանի:

Հիմնադրվել է Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության (ԱՀԱԸ) և Մերձավոր Արևելքի Հայ ավետարանական եկեղեցիների միության (ՄԱՀԱԵՄ) կողմից:

Մինչև 1955 թվականը Բեյրութի հայ ավետարանական համայնքը, իր ավագ դպրոցները և ուսուցիչների վերապատրաստման կարիքները լրացնելու համար, հիմնել էր միջնակարգ կրթական երկու ծրագիր՝ ուսուցիչների պատրաստման ինստիտուտը, որը տեղակայված էր Կենտրոնական ավագ դպրոցի գրադարանում և գործում էր 1948-1951թթ., ու Հայ Ավետարանական քոլեջը, որն անցկացրեց առաջին անգամ արվեստ և գիտություն կրթական ծրագիր Բեյրութի առաջին հայ Ավետարանական եկեղեցու հովանավորությամբ: Այս երկու կազմակերպությունները միաձուլվեցին 1951 թվականին և շարունակեցին ծառայել հայ համայնքին մինչև 1955 թվականը, երբ հիմնադրվեց Հայկազյան վարժարանը:

1955-1989թթ. Հայկազյան վարժարանը եղել է քոլեջ, 1990-1996թթ.՝ քոլեջ (համալսարանական), իսկ 1996-ից՝ համալսարան: Ուսումնառությունն իրականացվում է անգլերենով, բայց հայկական և արաբական մշակույթներին վերաբերող առարկաները դասավանդվում են համապատասխանաբար հայերենով և արաբերենով: Համալսարանում ուսանում են Լիբանանի և Մերձավոր Արևելքի այլ երկրների բազմաթիվ հայ և օտարազգի ուսանողներ: Առաջին տարում ուսանողների թիվը կազմում էր 43, 1975-1976թթ.՝ 650, 2003թ.՝ 534 հոգի:

Համալսարանը ապահովում է որակյալ, անհատականացված կրթություն բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների համար: Ուսումնական ծրագիրը ներառում է քննադատական մտածողություն, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման գիտելիք և հմտություններ՝ խրախուսելով հետազոտությունների ուսուցումը:

Բանալի բառեր և բառակապակցություններ. Սփյուռք, Արմենակ Հայկազյան, քոլեջ, համալսարան, Բեյրութ, Հայ Ավետարանական եկեղեցի, հայագիտություն:

ИСТОРИЯ И СТРУКТУРА УНИВЕРСИТЕТА АЙКАЗЯН, ЕДИНСТВЕННОГО ВЫСШЕГО УЧЕБНОВО ЗАВЕДЕНИЯ ДИАСПОРЫ

АЙКУИ САФАРЯН

Национальная академия наук Республики Армения
Международный научно-образовательный центр
магистрант кафедры социальной педагогики
Национальный политехнический университет Армении,
историк, педагог
haykuhisafaryan97@gmail.com

Аннотация

Проходя в разное время разные этапы развития, преодолевая множество трудностей, армянские школы смогли выжить и развиваться, оставаясь верными своей миссии сохранения национального облика армянина и построения будущего.

Особое место среди учебных заведений армянской диаспоры занимает Университет Айказян, в настоящее время единственный армянский университет, действующий в диаспоре.

Университет Айказян был основан в 1955 году в учителях как колледж английского языка. Он назван в честь Арменака Айказяна, бывшего учителя Конийского лицея.

К 1955 году Армянская евангелическая община Бейрута, училищем для пополнения потребностей своих средних школ, учредила две программы среднего образования: Институт подготовки учителей, расположенный в Центральной библиотеке средней школы, действовавший с 1948 по 1951 год, и Армянский евангелический колледж, который впервые реализовал образовательную программу по искусству и науке под эгидой первой Армянской евангелической церкви в Бейруте. Две организации объединились в 1951 году и продолжили служить армянской общине до 1955 года, когда было основано училище Айказян.

В 1955-1989 гг. колледж Айказяна был училищем, в 1990-1996 годах - колледжем (университетский), а с 1996 года - университетом.

Обучение ведется на английском языке, но предметы, связанные с армяно-арабской культурой, преподаются соответственно на армянском и арабском языках. В университете учится много армянских и иностранных студентов из Ливана и других стран Ближнего Востока. Количество студентов в первом году составляло 43, в 1975-1976 годах - 650, в 2003 году - 534 человека.

Университет предоставляет качественное индивидуальное образование для студентов и аспирантов. Учебная программа развивает критическое мышление, а также предоставляет знания и навыки в области ИТ, поощряя исследовательскую направленность обучения.

Ключевые слова и словосочетания: Диаспора, Арменак Айказян, колледж, университет, Бейрут, Армянская евангелистская церковь, арменоведение.

HISTORY AND STRUCTURE OF HAIGAZIAN UNIVERSITY, THE ONLY ARMENIAN HIGHER EDUCATION INSTITUTION IN DIASPORA

HAYKUHI SAFARYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
International Scientific-Educational Center
Department of Social Pedagogy, Master Student
National Polytechnic University of Armenia
Historian- Pedagogue
haykuhisafaryan97@gmail.com

Abstract

Going through different stages of development at different times, overcoming many difficulties, Armenian schools have been able to survive and develop, staying true to their mission of preserving the Armenian national image and building the future.

A special place among the schools of the Armenian Diaspora is occupied by Haigazian University, which is the only Armenian higher education institution in Lebanon, the only Armenian University operating in the Diaspora. The Haigazian University of Beirut was founded in 1955 as a college teaching English. It is named after Armenak Haykazyan, a former teacher at the Konya Lyceum.

Founded by the Armenian Evangelical Association of America (AMAA) and the Union of Armenian Evangelical Churches of the Middle East (UAECNE).

By 1955, the Armenian Evangelical Community of Beirut, in order to supplement its high schools and teacher training needs, had established two secondary education programs: the Teacher Training Institute, located in the Central High School Library, operating from 1948-1951, and the Armenian Evangelical College, which for the first time, it conducted an art-science educational program under the auspices of the First Armenian Evangelical Church in Beirut. The two organizations merged in 1951 and continued to serve the Armenian community until 1955 when the Haigazian College was founded.

1955-1989 Haigazian College was a college, in 1990-1996 it was a college (university), and from 1996 it was a university. Education is conducted in English, but subjects related to Armenian-Arabic cultures are taught in Armenian and Arabic, respectively. Many Armenian and foreign students from Lebanon and other Middle Eastern countries study at the university. The number of students in the first year was 43, in 1975-1976 - 650, in 2003 - 534.

The University provides quality, personalized education for undergraduate and graduate students. The curriculum includes critical thinking, as well as knowledge of IT, encouraging research teaching.

Keywords and phrases: Diaspora, Armenak Haykazyan, College, University, Beirut, Armenian Evangelical Church, Armenology.

Ներածություն

Սփյուռքի գործող միակ համալսարանը աջակցում է լիբանանահայ բնակչությանը, և ստեղծվել է՝ հիմնականում տեղի հայության կրթական կարիքները բավարարելու համար, սակայն համալսարանը բաց է բոլոր ուսանողների համար՝ անկախ ազգությունից և դավանանքից:

Շրջանավարտներն ստանում են արվեստի պսակավորի (բակալավր) և գիտության պսակավորի, արվեստի մագիստրոսի տիտղոսներ, որոնք 1971 թվականից պետականորեն հավասարազոր են Լիբանանի պետական համալսարանի շնորհած աստիճաններին: Ունի հայագիտական ամբիոն: Համալսարան հաճախող յուրաքանչյուր հայ ուսանող, անկախ ընտրած մասնագիտությունից, ուսման ընթացքում պարտավոր է հետևելու հայագիտական առնվազն 2 առարկայի դասընթացի: Համալսարանն ունի հայագիտական հարուստ գրադարան, հրատարակում է Դամասկոսի Ազգային Թարգմանչաց ճեմարանը (1898 թվականից), «Հայկազյան հայագիտական հանդեսը» (1970 թվականից) և այլ պարբերականներ [1]:

Հայկազյան համալսարանի հիմնադրման նախապատմությունը

Հայկազյան համալսարանն անվանվել է՝ ի պատիվ դոկտոր Արմենակ Հայկազյանի, որը նախկինում եղել է Կոնիայի Առաքելական ճեմարանի (նաև հայտնի է որպես Ջենանյան վարժարան) նախագահ: Հայ աստվածաբան, մանկավարժ, գիտնական, լեզվաբան և երաժիշտ դոկտոր Հայկազյանը, որը համարվում է «Մերձավոր Արևելքի ամենահայտնի հայ մանկավարժը» The New York Times-ի կողմից, ծնվել է Հարություն Հայկազյանի և Մերի Թավոնկյանի ընտանիքում 1870թ. սեպտեմբերի 22-ին Կիլիկիայի Հաճըն քաղաքում: 1885-ին հայրենի Հաճընում իր միջնակարգ ուսումը ավարտելուց հետո տեղափոխվել է Այնթապ և հաճախել Թուրքիայի Կենտրոնական վարժարանը, ապա ընդունվել է Մարաշի հոգևոր ճեմարանը, որը ավարտել է 1892 թվականին որպես Հայ ավետարանական եկեղեցու քարոզիչ: 1892-1894 թվականներին աշխատել է որպես մաթեմատիկայի և ֆիզիկական աշխարհագրության ուսուցիչ Տարսոնի Սուրբ Պողոսի ինստիտուտում [2, էջ 549]:

1894 թվականին նա տեղափոխվել է Ամերիկայի Միացյալ Նահանգներ՝ ուսումը շարունակելու: Մեկ տարի Չիկագոյի համալսարանում սեմական և համեմատական կրոն ուսումնասիրելուց հետո, ասորական հնագիտության վրա կենտրոնանալով, նա ասպիրանտուրա է անցել Հարթֆորդի աստվածաբանական ճեմարանում, որտեղ ուսումնասիրել է մերձավորարևելյան հին լեզուներ: 1896 թ. Հայկազյանին շնորհվել է գիտական աստիճան՝ ի նշան հիմնավոր գիտական աշխատանքի և բարձր ակադեմիական դիրքի:

Ավարտելուց հետո կարճ ժամանակահատվածում նա երաժշտություն և հարմոնիա է սովորել Տորոնտոյի համալսարանում: 1899 թվականին նա վերադարձավ Չիկագո, որտեղ ստացավ նախարարական ձեռնադրություն Համալսարանական միաբանության եկեղեցում: Նույն թվականին նա վերադարձավ Թուրքիա և որպես ակադեմիական դեկան ընդունվեց Կոնիայի Առաքելական ինստիտուտի ֆակուլտետը, որը հայտնի է նաև որպես Ջենանյան վարժարան (հիմնադրվել է 1892 թվականին):

1913-1914 թվականներին նա տասներեք ամիս անցկացրեց ԱՄՆ-ում՝ միջոցներ հայթայթելով ինստիտուտի նոր շենքերի համար: Նա վերադարձավ Կոնիա 1914 թվականին՝ Առաջին համաշխարհային պատերազմի պաշտոնապես հայտարարվելուց երկու օր առաջ: Ինստիտուտը փակվել է 1915 թվականին՝ Հայոց ցեղասպանության սկզբին Կոնիայից հայ բնակչության զանգվածային տեղահանությունից հետո: Նույն թվականի մայիսի 9-ին բժիշկ Հայկազյանը և իր ընտանիքը աքսորվեցին Կոնիայից և վերապրեցին Օսմանյան կայսրության կատարած վայրագությունները՝ մի քանի շաբաթ անց վերադառնալով: Ծնողների պնդմամբ ինստիտուտը վերաբացվեց 1919 թվականի սեպտեմբերին, որտեղ ընդունվեցին երեք հարյուր ուսանողներ [3]:

Հայկազյանը 1902թ. հուլիսի 14-ին ամուսնացել է Մաթիլդա Սուրպուհի Կարապետյանի (1879-1968թթ.) հետ: Նա հայ ականավոր ավետարանական հովիվ վերապատվելի Տիգրան Դազար Կարապետյանի և Աննա Կապրիելյանի դուստրն էր: Նրանք ունեին վեց դուստր՝ Մերին (1903-2002), Դեյզին (1905-1987), Լիլին (1907-1970), Նելլին (1909-2006), Պանսին (1911-2010) և Արմինեն (1917-2002): 1920թ. փետրվարի 18-ին, նախքան Թուրքիայում քեմալական

կառավարության իշխանության գալը, բժիշկ Հայկազյանը Կոստանդնուպոլիս ուղարկեց իր կնոջն ու երեք դուստրերին՝ Նելլին, Պանսին և Արմինենին [4, էջ 550]: Նրանց անվտանգության և կրթության համար նրա կինը հինգ դուստրերի հետ միասին մեկնել է Նյու Յորք և ժամանել 1921 թվականի փետրվարի 28-ին:

Դոկտոր Հայկազյանը ձերբակալվեց քեմալական ուժերի կողմից 1921թ. մայիսի 22-ին և մայիսի 31-ին ուղարկվեց Խարպուտ: Մի խումբ ազդեցիկ հայերի ու հույների հետ տարագրվելիս նա վարակվել էր տիֆով: Հունիսի 29-ին թույլտվություն են տվել նրան ընդունելու Մեզերեհի Ամերիկյան հիվանդանոց, որտեղ մահացել է 1921թ. հուլիսի 7-ին [5]:

Տարիներ անց՝ 1955թ-ին, իր դստեր՝ Մերիի և փեսայի՝ Ավակ (Սթիվեն) Մեհազյանի 25000 ԱՄՆ դոլարի նվիրատվությամբ և Ստեփան Փիլիպոսյանի օգնությամբ՝ Մերձավոր Արևելքի Հայ ավետարանական եկեղեցիների միությունը, (JAECNE) և Ամերիկայի Հայ ավետարանական ընկերակցությունը (AMAA) հիմնադրեցին որպես ամերիկյան ոճի ազատական արվեստի քոլեջ՝ աջակցելու ուսուցիչների և հովիվների պատրաստմանը: Քոլեջն անվանակոչվել է՝ ի պատիվ Հայկազյանի՝ ի նշան հայ կրթության մեջ ունեցած ավանդի:

Համալսարանի կառուցվածքը: Համալսարանի ինստիտուցիոնալ կազմակերպման և կառավարման **տեսամեթոդական հիմքերը** ներկայացնելով՝ անդրադառնում ենք բուհի ձևավորման գործընթացին, առաջացած խոչընդոտներին, արդիականացման գործընթացներին և հայրենական ու միջազգային կապերի հաստատմանը:

Մինչև 1955 թվականը Բեյրութի հայ ավետարանական համայնքը, իր ավագ դպրոցները և ուսուցիչների վերապատրաստման կարիքները լրացնելու համար, հիմնել էր միջնակարգ կրթական երկու ծրագիր՝ ուսուցիչների պատրաստման ինստիտուտը, որը տեղակայված էր Կենտրոնական ավագ դպրոցի գրադարանում և գործում էր 1948-1951թթ., ու Հայ ավետարանական քոլեջը, որն անցկացրեց առաջին անգամ արվեստ և գիտություն կրթական ծրագիր Բեյրութի առաջին Հայ ավետարանական եկեղեցու հովանավորությամբ: Այս երկու կազմակերպությունները միաձուլվեցին 1951 թվականին և շարունակեցին ծառայել հայ համայնքին մինչև 1955 թվականը, երբ հիմնադրվեց Հայկազյան վարժարանը:

Հայկազյանը գործել է իր սկզբնական անվանմամբ՝ «Քոլեջ» մինչև 1991 թվականը: 1996թ. դեկտեմբերի 28-ին Լիբանանի մշակույթի և բարձրագույն կրթության նախարարությունը հրապարակել է թիվ 9657 հրաման, որը լիազորել է հաստատությանը փոխել իր անունը Հայկազյան համալսարանի: Համալսարանի առաջին նախագահ դոկտոր Ջոն Մարգարյանը պաշտոնավարել է մինչև 1966թ. հունիսը: Այնուհետև դոկտոր Մարգարյանը պաշտոնավարեց: Դոկտոր Ջոն Խանջյանը զբաղեցրել է նախագահի պաշտոնը 1995թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2002թ. օգոստոսի 1-ը: 2002թ. սեպտեմբերի 1-ին վերապատվելի դոկտոր Փոլ Հայդոստյանը դարձել է նախագահ:

Հետագայում ավելացվել է յոթհարկանի շենք, որը կոչվել է Մեհազյան ակադեմիական կենտրոն: Բոստոնից պարոն Սթիվեն Մյուզարից ստացած դրամաշնորհը հնարավորություն տվեց համալսարանին ձեռք բերելու մի գեղեցիկ պատմական կառույց՝ լիբանանյան ճարտարապետական ժառանգության նմուշ, որը հետագայում կոչվեց Մուզարի շենք՝ ի հարգանք նվիրատուի ծնողներին:

1987-ին լիբանանյան պատերազմի պատճառով համալսարանը փոխադրվեց Աշրաֆիե թաղամասի Քրիստոնեական բժշկական կենտրոնը, և դասերը շարունակվեցին սովորականի պես: 1996 թվականի մարտի 27-ին Կառավարիչների խորհուրդը որոշեց, որ համալսարանը պետք է վերադառնա իր սկզբնական շենքը, որը գտնվում է Կանտարի Մեքսիկ փողոցում: 1997 թվականի փետրվարի 16-ին սկսվեց համալսարանի նախկին շենքի վերանորոգումը: 1997թ. հոկտեմբերի 6-ին դասերը վերսկսվեցին վերանորոգված և վերակենդանացված Կանտարի համալսարանում՝ ի ուրախություն ուսանողների և ողջ համայնքի:

2001 թվականի հուլիսի սկզբին Մյուզարի սեփականությունում սկսվեց չորրորդ շենքի կառուցումը, որն ունի մեդիա կենտրոն, նիստերի դահլիճ և ֆակուլտետի գրասենյակներ: Այս նոր հաստատությունը սկսեց գործել 2001 թվականի հոկտեմբերից [6]:

1955 թվականին համալսարան ընդունվել էր 43 ուսանող: Մինչև 1975 թվականի՝ Լիբանանում քաղաքացիական անկարգությունների սկիզբը ուսանողների թիվը հասել է 650-ի: Մինչ այժմ համալսարանը շնորհել է արվեստի բակալավր, բիզնեսի կառավարման բակալավր, գիտության բակալավր, արվեստի մագիստրոսի և բիզնեսի կառավարման մագիստրոսի կոչումներ տարբեր ոլորտներում մոտ 4500 ուսանողների համար: Ուսումնառությունն անգլերենով է, հայկական և արաբական մշակույթներին վերաբերվող առարկաները դասավանդվում են հայերենով և արաբերենով: Համալսարանում ուսանում են Լիբանանից և Մեծավոր Արևելքի այլ երկրներից բազմաթիվ հայ և օտարազգի երկսեռ ուսանողներ:

1960թ. նոյեմբերին Հայկազյան քոլեջի մի խումբ ուսանողներ Մանուկ Մանուկյանի (մաթեմատիկայի և ֆիզիկայի ուսուցիչ) ղեկավարությամբ հիմնեցին Հայկազյան քոլեջի հրթիռային ընկերությունը: Քոլեջում ընկերության անդամներն էին՝ Համբարձում Կարազեզյանը, Հրայր Այնթաբյանը, Հրայր Սահակյանը, Ժիրայր Զենյանը և Ժան Զեք Գուվլեքջյանը: 1964 թվականին Լիբանանի փոստային ծառայության կողմից թողարկվեց փոստային նամականիշ՝ ի հիշատակ Լիբանանի Անկախության 21-րդ տարեդարձի, որի վրա պատկերված էր Հայկազյան քոլեջի «Սիդար» հրթիռներից մեկը [6]:

Հայկազյան համալսարանն ունի ուսուցման երկու ուղղություններ (դպրոցներ)՝ 1. արվեստների և գիտության, 2. բիզնեսի կառավարման և տնտեսագիտության: Արվեստների և գիտության դպրոցն ընդգրկում է երեք ֆակուլտետներ՝ գիտությունների ֆակուլտետ (բնական գիտություններ, բժշկագիտական լաբորատորիա, քիմիա, կենսաբանություն) և մաթեմատիկական գիտություններ (ֆիզիկա, համակարգչային գիտություններ, մաթեմատիկա): Մյուսը հասարակական գիտությունների ֆակուլտետն է, որտեղ ներառվում են սոցիոլոգիան, հոգեբանությունը, հասարակական աշխատանքը, քաղաքագիտությունը և կրթությունը: Հոգեբանության և կրթության բնագավառներում տրվում են արվեստի մագիստրոսի, ինչպես նաև բակալավրի կոչումներ, իսկ հումանիտար գիտությունների ֆակուլտետն ընդգրկում է արաբերենի և հայերենի ուսումնասիրություններ, անգլերեն, անգլիական գրականություն, պատմություն, երաժշտություն, փիլիսոփայություն, կրոն, արվեստ և միջմշակութային ուսումնասիրման ծրագիր:

Կարևոր նշանակություն ունի նաև բիզնեսի կառավարման և տնտեսագիտության ֆակուլտետը՝ որպես բիզնեսի կրթության և ուսումնասիրության կենտրոն: Ֆակուլտետի առաջարկած բոլոր ծրագրերը լիազորված են Լիբանանի կրթության նախարարության կողմից: Ներկայումս ֆակուլտետը շնորհում է արվեստի և բիզնեսի կառավարման բակալավրի աստիճան՝ շեշտը դնելով հաշվապահության, տուրիզմի և ինֆորմացիոն համակարգի կառավարման, ֆինանսների, գովազդի և հաղորդակցության վրա [7]:

Համալսարանն ունի հայագիտական ամբիոն, որի անխափան գործունեությունն ապահովելու հարցում տարիների ընթացքում մեծ ավանդ են ներդրել վերապատվելի Տիգրան Խրլոպյանը, Տիգրան Գույումճյանը, Վահե Օշականը, Երվանդ Քասունին, Լևոն Վարդանը և ուրիշներ: Ներկայումս համալսարան հաճախող բոլոր հայազգի ուսանողները անկախ իրենց մասնագիտությունից, պարտավոր են ուսման ընթացքում հետևելու հայագիտական առնվազն երկու առարկաների: Համալսարանն ունի առանձին հայագիտական գրադարան (տեղավորված է 1972 թվականին բարերար Ստեփան Մյուզարի նվիրատվությամբ ձեռք բերված շենքում), որն ամեն տարի հարստացվում է Հայաստանից և այլ երկրներից ձեռք բերված հայերեն և օտարալեզու գրքերով և հրատարակություններով:

Համալսարանը հրատարակում է «Հայկազյան հայագիտական հանդեսը» (1970 թվականից), որի առաջին խմբագրականում ասվում է. «ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ հրատարակութիւնը վստահօրէն առաւել եւս պիտի հրահրէ հայագիտութեան հանդէպ վերջերս ցոյց տրուած հետաքրքրութիւնն ու խանդավառութիւնը, ինչպէս և պիտի խթանէ ոմանք՝ ձեռնարկելու նոր պրպտումներու եւ հետազոտութեանց, իրենց մասնագիտութեան գծով»[1]: Համալսարանն հրատարակում է անգլերենով «Հայկազյան հերալդ» ուսանողական պարբերաթերթն ու «Ֆոկուս» ուսանողական տարեգիրքը: Համալսարանում գործում են մի շարք ուսանողական ակումբներ և ընկերություններ:

Հայկազյան համալսարանը հավակնում է լինել նախընտրելի հաստատություն տարբեր ծագում ունեցող ուսանողների համար, որոնք փնտրում են անհատականացված, որակյալ ակադեմիական փորձ, որը նրանց պատրաստում է ծառայելու իրենց համայնքներում և հասարակական տարբեր ոլորտներում:

Ոգեշնչված հայ ավետարանական ժառանգությունից և հետևելով ամերիկյան ազատական արվեստի կրթական մոդելին՝ Հայկազյան համալսարանի առաքելությունն է՝ խթանել ակադեմիական գերազանցությունը և պատրաստել այնպիսի շրջանավարտներ, որոնք զլոբալ համատեքստում կարող են դիմակայել 21-րդ դարի մարտահրավերներին: Լիբանանի հայ համայնքն արդի փուլում նույնպես կանգնած է հայկական սփյուռքին բնորոշ մարտահրավերների առջև՝ ազգային ինքնությանը սպառնացող վտանգներին դիմակայելուց բացի, Լիբանանի հայ համայնքը ստիպված է դիմագրավել նաև մերձավորարևելյան տարածաշրջանի իրադարձություններից բխող վտանգներին: Ազգային ինքնության պահպանման խնդիրներին այստեղ գումարվել են համայնքի ֆիզիկական անվտանգության ապահովման և արտագաղթի խնդիրները:

Համալսարանը ապահովում է որակյալ, անհատականացված կրթություն բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների համար: Ուսումնական ծրագիրը ներառում է քննադատական մտածողություն, ինչպես նաև՝ տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման գիտելիք և հմտություններ՝ խրախուսելով հետազոտությունների ուսուցումը:

Համալսարանի կյանքն արտացոլում է Լիբանանի հարուստ, կոսմոպոլիտ և բազմակարծիք հասարակությունը: Այն նպաստում է երկխոսությանը, ներդաշնակությանը և ինտեգրմանը լիբանանյան համայնքի բոլոր հատվածների միջև [8]:

Կարևոր նշանակություն ունի Հայկազյան համալսարանի և սփյուռքահայ տարբեր կրթօջախների փոխհարաբերությունների զարգացումը, ինչը կարող է նպաստել ոչ միայն տվյալ կրթական հաստատությունների, այլև միջհամայնքային կապերի սերտացմանը: Բնականաբար, դժվար կլինի գերազնահատել համալսարանի ակտիվ համագործակցության հաստատումը հայաստանյան կրթական ու գիտական հաստատությունների հետ: Հայկազյան համալսարանի կուտակած փորձը կարող է օգտակար լինել ինչպես սփյուռքահայ տարբեր համայնքներում կրթական գործի կազմակերպման, այնպես էլ հայաստանյան կրթական համակարգի զարգացման տեսանկյունից: Չնայած Լիբանանի հայկական համայնքի աստիճանական թուլացմանն ու նվազմանը՝ Հայկազյան համալսարանն այսօր էլ ունի թե՛ կրթական, թե՛ հետազոտական ուղղություններով զարգացման ներուժ:

Յուրահատուկ նշանակություն ունեն հայաստանյան կառույցների հետ հարաբերությունները: Հատկանշական է Հայկազյան համալսարանի համագործակցությունը Երևանի պետական համալսարանի հետ: 2009թ. հոկտեմբերի 3-ին Բեյրութի Հայկազյան համալսարանի նախագահ Փոլ Հայդոսյանի և ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանի միջև ստորագրվեց գործակցության համաձայնագիր. «Երկու համալսարաններն ընդունելով, որ ակադեմիական և գիտական հետազոտական նպատակների համար գործակցությունը անփոխարինելի ազդակ է երկուստեք զարգացման համար, հանձն են առնում, ըստ կարիքի և հնարավորության, պայմաններ ստեղծել իրենց աշխատակիցների, մասնագետների, ուսանողների և հրատարակությունների փոխանակության համար» [7]:

2012թ. հունվարի 25-ին տեղի ունեցավ Հայկազյան համալսարանի Հայկական սփյուռքի ուսումնասիրության կենտրոնի բացումը: Իրադարձության կարևորության մասին է վկայում արարողության մասնակիցների ներկայացուցչական կազմը: Մասնավորապես, ներկա էին Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեղամ արք. Խաչերյանը, Լիբանանում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան Աշոտ Քոչարյանը, Լիբանանի համալսարանի նախագահ, նախկին նախարար, դոկտոր Ատնան Սեյիտ Հուսեյնին, խորհրդարանի պատգամավորների, ազգային, կուսակցական, միությունների ներկայացուցիչները և մշակութասեր հանրությունը:

2021 թ. նոյեմբերի 26-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը՝ ի դեմս համալսարանի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Խոնեցյանի, և Բեյրութի Հայկազյան համալսարանը՝ ի դեմս համալսարանի

նախագահ դոկտոր վերապատվելի Փոլ Հայդոթյանի, կնքեցին սույն համագործակցության հուշագիրը:

Հուշագրի հիմնական նպատակը երկու համալսարանների միջև ակադեմիական և գիտական համագործակցությունն է, որը կարող է կարևոր ազդակ հանդիսանալ երկուստեք զարգացման:

Հուշագրի համաձայն՝ բուհերը կիրականացնեն գիտնականների, դասախոսական կազմի և ուսանողների, գիտական հրատարակությունների փոխանակում (հումանիտար գիտություններ, հայագիտություն, մանկավարժություն, տնտեսագիտություն և կառավարում), գիտական ամբիոնների գործակցություն: Նախատեսվում է նաև համատեղ գիտական հետազոտությունների, գիտաժողովների, սեմինարների, հանրային դասախոսությունների, տարատեսակ միջոցառումների կազմակերպում և անցկացում [8]:

Ուսումնասիրության մեթոդները

Ուսումնասիրման ենթակա են եղել պատմական և ընթացիկ արխիվային ու էլեկտրոնային նյութերը, որոնք բովանդակում են հաշվետվություններ, արձանագրություններ, ելույթների տղագրություններ, զեկուցումներ, կառավարության որոշումներ, կրթության ոլորտին վերաբերող օրենսդրական և նորմատիվային փաստաթղթեր, կրթական համակարգի զարգացման որոշակի փուլում հետազոտվող հիմնախնդրի վերաբերյալ տարաբնույթ փաստաթղթեր:

Հոդվածում անդրադառնում ենք Հայկազյան համալսարանի հնգամյա ռազմավարական պլանին 2017-2022 թթ.(տեսլականը և նպատակները):

Հայկազյան համալսարանի տեսալականն է՝

- ամրապնդել ֆինանսական հնարավորությունները՝ դիվերսիֆիկացնելու կրթաթոշակային առաջարկները, ընդլայնելու ակադեմիական ծրագրերը և ստեղծելու կայուն ինստիտուցիոնալ աջակցության համակարգ.
- ներգրավել տաղանդավոր ուսանողների՝ անկախ նրանց սոցիալ-տնտեսական դիրքից.
- զարգացնել լավագույն մտքերը.
- առաջարկված համալսարանական ծրագրերը համապատասխանեցնել ամերիկյան բարձրագույն կրթության հավատարմագրման չափանիշներին, միևնույն ժամանակ խթանել անձնակազմի մեջ որակյալ աշխատանքը.
- պահպանել համալսարանի համբավը, որպես ամենաբարձր գնահատված համալսարաններից մեկը Լիբանանի Բարձրագույն կրթության նախարարության կողմից, երկրի առաջատար հաստատությունների շարքում.

Համալսարանի առաքելությունն է՝

- խթանել ակադեմիական գերազանցությունը, որը ոգեշնչված է հայ Ավետարանական ժառանգությունից և հետևել ամերիկյան ազատական ոճի կրթական մոդելին,
- համալսարանը հավակնում է լինել նախընտրելի հաստատություն տարբեր ծագում ունեցող ուսանողների համար, ովքեր փնտրում են անհատականացված, որակյալ ակադեմիական փորձ, որը նրանց պատրաստում է ծառայելու իրենց համապատասխան համայնքներում և հասարակական տարբեր ոլորտներում,
- կարևորել առաջնորդության զարգացումն ուսանողների մասնագիտական ոլորտներում,
- ստեղծել վստահության, հարգանքի և ոչ խտրականության միջավայր,

Համալսարանի նպատակներն են՝

- տարեկան բյուջեն ավելացնել 20%-ով,
- ունենալ 1000 ուսանող,
- միջազգային ուսանողական կազմը (ներառյալ օտարերկրյա ուսանողների պրակտիկան) ավելացնել մինչև 10%,

- Հայկազյան համալսարանի կողմից կազմակերպվող միջազգային գիտաժողովների թիվը հասցնել 3-ի,
- հրատարակել տարեկան 10 գիրք,
- կազմակերպել կրկնակի վերապատրաստում դպրոցների և կազմակերպությունների համար,
- բարձրացնել ուսանողների բավարարվածության (ակադեմիական) մակարդակը 22%-ից մինչև 30% «շատ գոհ եմ», և 52% -ից մինչև 55% «բավարարված եմ»,
Համալսարանի ռազմավարությունն է՝
- բավարարել վաղվա ուսանողի կրթական կարիքները,
- պահպանել ամուր հարաբերություններ Լիբանանի կառավարության, ԱՄՆ ՄԶԳ-ի և Եվրամիության հետ,
- հետևել շուկայի միտումներին և արդիականացրել ներկայիս ստանդարտները (ԱՄՆ).
- տարածաշրջանային հավատարմագրման պահանջներին համապատասխանեցնելու համար[9]:
-

Եզրակացություն

Այսպիսով՝ Բեյրութի Հայկազյան համալսարանը Սփյուռքի ամենանշանակալի կրթական հաստատություններից է: Լինելով Սփյուռքի հայկական միակ բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ այն առանձնանում է ինչպես Լիբանանի ու ընդհանրապես սփյուռքահայ համայնքերի կրթական կառույցների, այնպես էլ հայ ավետարանական կրթօջախների մեջ: Կարևոր նշանակություն ունի Հայկազյան համալսարանի և սփյուռքահայ տարբեր կրթօջախների փոխհարաբերությունների զարգացումը, ինչը կարող է նպաստել ոչ միայն տվյալ կրթական հաստատությունների, այլև՝ միջհամայնքային կապերի սերտացմանը:

Փաստական նյութի աղբյուր են ծառայել ուսումնական հաստատության ընթացիկ բազմաբնույթ փաստաթղթերը՝ ուսումնական ծրագրերը, հնգամյա ռազմավարական պլանը, հաշվետու փաստաթղթերը, հրամանները, վերահսկողություն իրականացնող կառույցների փաստաթղթերը, և այլն:

Գրականության ցանկ

1. «Հայկազեան հայագիտական հանդես», Պեյրուֆ, 1970:
2. Համագործակցության հուշագիր՝ ՀՊՄՀ-ի և Բեյրութի Հայկազյան համալսարանի միջև, https://aspu.am/hy/content/hamagortsakcutyan_hushagir_hpmhi_ev_beyruti_haykazyan_hamalsarani_mijev/#sthash.vnKEqMsh.BMZQsaNr.dpbs:
3. Տ. Ղանալանյան, Բեյրութի Հայկազյան համալսարանը, «Գլոբուս» վերլուծական հանդես, թիվ 2, 07.03.2013, http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENTID=6-947#6_b:
4. BBC World Service, By Richard Hooper, Lebanon's forgotten space programme, <https://www.bbc.com/news/magazine-24735423>:
5. Obituary Records of Graduates of Yale University Deceased During the Years 1920-1925, http://digital.library.yale.edu/digital/collection/1004_8/id/13601/rec/4:
6. Համալսարանի պաշտոնական կայքը. Մեր պատմությունը և ժառանգությունը, <http://www.haigazian.edu.lb/about-haigazian/our-history-heritage/>:
7. Համալսարանի պաշտոնական կայքը. Մեր առաքելությունը և տեսլականը, <http://www.haigazian.edu.lb/about-haigazian/our-mission-vision/>:
8. Հայկական սփիւռքի ուսումնասիրութեան կեդրոնի բացում Լիբանանի մէջ, <http://hayernaysor.am/1327564076>:
9. Համալսարանի պաշտոնական կայքը. Համալսարանի ռազմավարական պլանը 2017-2022թթ., <http://www.haigazian.edu.lb/wpcontent/uploads/2018/01/Strategicplanoverallnew.pdf>:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԵՐ

ՆԱԻՐԱ ԱՐԱՀԱՄՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
գիտակրթական միջազգային կենտրոն
սոցիալական մանկավարժության ամբիոնի մագիստրանտ
abrahamyan-naira@bk.ru

Համառոտագիր

Այսօր գրադարանները վճռորոշ դեր կարող են խաղալ կրթության, գիտության և մշակույթի զարգացման գործում, դառնալ կրթամշակութային կենտրոն ոչ միայն ուսուցանողների, այլև ուսումնառողների համար, հետևաբար կարևոր է նրանց տալ նոր տեսք՝ համարժեք ժամանակի պահանջներին: Այստեղ գլխավորը գրադարանների նյութական բազան ամրապնդելն է, ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցնելը:

Տեխնոլոգիաների վերընթաց զարգացման և դպրոցականների կողմից դրանց զանգվածային օգտագործման համատեքստում գրադարանը դառնում է նաև տեղեկատվական գրագիտության և մշակույթի ձևավորման աղբյուր:

Գրադարանային կրթամշակութային միջավայրը նպաստում է սովորողների ստեղծագործական-հետազոտական աշխատանքների իրականացմանը, գիտելիքի աճին, ինքնակրթությանը, բազմակողմանի զարգացմանը, ունեցած գիտելիքների պաշարն ավելացնելուն, անհրաժեշտ տեղեկատվությունն առավել արդյունավետ ստանալուն, դասերի ընթացքում ստացած գիտելիքներն ու առարկայական տեղեկատվությունը համալրելուն:

Դպրոցի գրադարանավարը պետք է դառնա դպրոցի տեղեկատվական առաջատարը, տեղեկատվական մշակույթի ձևավորման մասնագետը, ինչպես նաև երեխաների ընթերցանության մանկավարժն ու հոգեբանը:

Այսօր՝ տեղեկատվական զարգացման դարում, գրադարանների կողմից կազմակերպվող մշակութային, կրթական և գիտական գործունեության հիմնական նպատակը պետք է լինի գրադարանային հավաքածուների, մասնագետների ու նյութատեխնիկական բազայի միջոցով մարդու՝ տեղեկատվություն ստանալու և ազատորեն արտահայտվելու իրավունքի իրականացմանը նպաստելը: Տեղեկատվական միջոցների հեղափոխության մեր ժամանակներում գրադարաններն այլևս սոսկ «գրապահոցներ» չեն, այլ՝ տեղեկատվության տարածող:

Ելնելով այդ տեսանկյունից՝ մասնավորապես դպրոցական գրադարանները պետք է կարողանան դառնալ ավելի ընդարձակ՝ գլոբալ տեղեկատվական և գրադարանային ցանցերի մի օղակ, ոչ միայն մուտք՝ դեպի բազմազան ու բազմաբնույթ տեղեկատվության աշխարհ, այլ նաև՝ ուղեցույց այդ աշխարհում չմոլորվելու համար:

Սա հնարավոր է ապահովել՝ գրադարանային համապատասխան բարենպաստ միջավայր ստեղծելով ու կատարելագործելով:

Բանալի բառեր և բառակապակցություններ. դպրոցական գրադարան, տեղեկատվություն, զարգացման ուղիներ, կրթություն, ընթերցող, ֆինանսական միջոցներ:

ШКОЛЬНЫЕ БИБЛИОТЕКИ КАК ОБРАЗОВАТЕЛЬНАЯ, КУЛЬТУРНАЯ И ИНФОРМАЦИОННАЯ СРЕДА

НАИРА АБРААМЯН

Национальная академия наук Республики Армения
Международный научно-образовательный центр
магистрант кафедры социальной педагогики
Национальный политехнический университет Армении
Историк – педагог
abrahamyan-naira@bk.ru

Аннотация

Сегодня библиотеки могут сыграть важную роль в развитии образования, науки и культуры, могут стать культурно - образовательным центром не только для обучающихся, но и для обучающихся. Следовательно, им надо придать новый облик, который бы соответствовал веяниям времени. Основная цель заключается в укреплении финансовой базы библиотек, в оснащении современными технологиями.

Развитие технологий и массовое использование их школьниками в совокупности приводит к тому, что библиотека может стать источником информационной грамотности и формирования организационной культуры.

Библиотечная культурно - образовательная среда способствует развитию и осуществлению творческо-исследовательских работ учащихся, росту знаний, самообразования. всестороннему развитию, обогащению накопленных знаний, получению необходимой информации, более плодотворному пополнению знаний, полученных во время уроков, и дополнительной информации к предмету.

Школьный библиотекарь должен стать информационным лидером школы, специалистом в формировании информационной культуры, педагогом и психологом по чтению для учащихся.

Сегодня, в век развития информационных технологий, основной целью библиотек, которые развивают культурную, образовательную и научную деятельность, должно стать осуществление получения информации и свободное ее использование, благодаря библиотечным собраниям, специалистам и логистической базе. В эпоху информационной революции библиотеки не должны быть "книгохранилищами", а должны стать разносчиками информации.

Исходя из этой точки зрения, школьные библиотеки должны расширяться, становясь своеобразным центром глобальной информации и школьных сетей, не только допуском в многочисленный и многофункциональный мир, но и гидом, чтобы не затеряться в этом мире. Все это можно получить благодаря созданию и усовершенствованию благоприятной библиотечной среды.

Ключевые слова и словосочетания: школьная библиотека, информация, пути развития, образование. читатель, финансовые средства.

SCHOOL LIBRARIES AS AN EDUCATIONAL, CULTURAL AND INFORMATION ENVIRONMENT

NAIRA ABRAHAMYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
International Scientific-Educational Center
Department of Social Pedagogy, Master Student
National Polytechnic University of Armenia
Historian- Pedagogue
abrahamyan-naira@bk.ru

Abstract

Today, libraries can play an important role in the development of education, science, and culture, becoming an educational and cultural center not only for teachers but also for students. And, therefore, we can give them a new look that meets the requirements of the time. The main thing here is to strengthen the material base of libraries and equip them with modern technologies.

Moreover, in the context of the rapid development of technologies and their mass use by schoolchildren, the library is also becoming a source of information literacy and culture.

The library's educational and cultural environment contributes to the creative research work of students, the growth of knowledge, self-education, diversified development, an increase in the stock of knowledge, more efficient obtaining of the necessary information, replenishment of knowledge and subject information obtained in the process of lessons.

The school librarian should become the information leader of the school, a specialist in the development of information culture, as well as a teacher of children's reading, and a psychologist.

Today, in the age of information development, the main goal of cultural, educational, and scientific activities organized by libraries should be to promote the realization of the human right to information and freedom of speech through library collections, specialists, and logistics.

In our time of the information revolution, libraries are no longer just "bookstores" but distributors of information. From this point of view, school libraries, in particular, should be able to become a wider chain of global library information networks, not only access to a world of diverse and varied information but also as a guide not to get lost in that world.

Consequently, this can be ensured by creating and improving an enabling environment for libraries.

Keywords and phrases: school library, information, ways of development, education, reader, financial resources.

Ներածություն

Գրադարանները ստեղծվել են մարդկանց կողմից՝ ծառայելով իրենց իսկ ստեղծողների մշակութային, հասարակական, հոգևոր կյանքի զարգացմանն ու կատարելագործմանը: Այն իր դերով ու նշանակությամբ եղել ու մնում է անփոխարինելի: Չէ՞ որ գիրն ու գրականությունն է համարվել տեղեկատվության փոխանցման մնայուն ու կայուն միջոցը՝ հնագույն ժամանակներից սկսած: Գրադարաններն էլ միտված են դառնալու այդ ամենի պահպանության ու մատաղ սերնդին փոխանցելու արդյունավետ եղանակ:

Մարդկության պատմության ընթացքում գրադարանների սոցիալական գործառույթները ենթարկվել են բազմաթիվ ու բազմապիսի փոփոխությունների:

Հասարակական-քաղաքական կյանքի զարգացմանը զուգընթաց՝ գրադարանները լոկ փաստաթղթերի ու գրքերի պահոց լինելուց զատ՝ վերածվել են պատմամշակութային, կրթական, տեղեկատվական, հաղորդակցական, տեխնոլոգիական, վիճակագրական, սպասարկման ոլորտի, դարձել են հասարակական կապերի ու հարաբերությունների կայունության պատվար:

Այսօր էլ գրադարանները շարունակում են զարգանալ նոր սոցիալական-մշակութային մոտեցումներին համապատասխան՝ հիմքում անխախտ պահելով ամենակարևոր գործառույթը՝ ստեղծագործական դերը:

Ինչ վերաբերում է մեր երկրի գրադարաններին՝ դրանք ևս անքակտելիորեն կրում են հնագույն մշակութային դրոշմը, ինչը մեր ազգային դիմագծի կարևոր արտացոլումն է [1]: Ի հակադրումն ժամանակակից հասարակության՝ մեր՝ հատկապես դպրոցական գրադարանների զարգացման քայլերը երերուն են, դանդաղընթաց:

Այսօր դպրոցական գրադարանները փորձում են ապահովել ոչ միայն տեղեկատվություն ու գաղափարներ տարածելը, որոնք առանցքային են ժամանակակից տեղեկատվական հասարակությանը հաջողությամբ ինտեգրվելու համար, այլև որոշ չափով նկատվում է խթանման միտումը ընթերցողի շարունակական զարգացման անհրաժեշտության համար:

Հոդվածում կանդիդատնանք ժամանակակից կրթական միջավայրում դպրոցական գրադարանների դերի, նկատելի խնդիրների, զարգացմանն ու առաջընթացին միտված՝ ուղիների առաջադրմանը:

Տեսամեթոդական հիմքեր

Գրադարանը տեղեկատվական, մշակութային, գիտական և կրթական գործունեություն իրականացնող կազմակերպություն է, որն ունի համակարգված հավաքածու, և այն տրամադրում է ֆիզիկական և իրավաբանական անձանց ժամանակավոր օգտագործման համար [2]:

Գրադարան բառը ծագել է հունարեն biblion «գիրք» և theke «գրապահոց» բառերից և բառացի նշանակում է bibliotheca «գրապահոց»:

Հնում գրադարանները եղել են վանքերին ու մենաստաններին կից, տեղակայվել են առանձին շինություններում կամ վանքամերձ քարայրներում: Յուրաքանչյուր գրադարան կոչված է եղել իրականացնելու իրեն հատուկ գործառույթներ՝ պատմամշակութային, տեղեկատվական, հաղորդակցական, տեխնոլոգիական, մանկավարժական, վիճակագրական, սպասարկման և այլն:

Գրադարանները, լայն իմաստով, կենսամշակութային, ուսումնական, տեղեկատվական վայրեր են, որոնք նպաստում են տեղեկատվության, գիտելիքների ձեռք բերմանը՝ գրքային և տեխնոլոգիական միջոցների իրագործմանը:

Գրադարանը մի համակարգ է, որը կարևոր դեր և նշանակություն ունի կրթության և հասարակական կյանքի բազմակողմանի զարգացման գործում:

Գրադարանն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1. հավաքում, կազմակերպում, պահպանում և օգտագործման է տրամադրում գրադարանային փաստաթղթերը, դրանց վերաբերյալ և այլ բնույթի տեղեկույթ.
2. ցուցակագրում, դասակարգում և կազմում է գրադարանի հավաքածուի գրացուցակը և մատենագիտությունը.
3. ապահովում է գրադարանի հավաքածուի և տեղեկատվական համակարգերի մատչելիությունը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի.

4. ապահովում է գրադարանից օգտվողների համար որակյալ ծառայությունների մատուցումը.
5. նպաստում է կրթությանը, խթանում է ընթերցանությանը, ինքնակրթությանը եւ քաղաքացիների սոցիալական հաղորդակցման գործընթացներին.
6. տրամադրում է գրադարանի հավաքածուի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկույթ՝ Հայաստանի Հանրապետության գրադարանային հավաքածուի պետական գրացուցակի համար.
7. ապահովում է գրադարանային հավաքածուում գտնվող գրավոր հուշարձանների պահպանումը և վերականգնումը.
8. ներդնում է նոր տեղեկատվական տեխնոլոգիաներ [2]:

Դպրոցական գրադարաններն էլ նույն գործառույթն են կատարում՝ ավելացնելով դասավանդողների ու սովորողների կողմից հեղինակային ծրագրերի և բազմազան ուսումնական-հետազոտական նախագծերի իրագործումը: Դպրոցում գրադարանը հանդիսանում է բազմատարողունակ հիմնարար աղբյուր հատկապես սովորողների համար:

Դպրոցական գրադարանը դպրոցի մի մասն է, նրա ամբողջական կառուցվածքային միավորը [3]: Մեր երկրի բոլոր դպրոցներն էլ ունեն գրադարաններ՝ մեծ կամ փոքր, անհարմարավետ կամ նյութատեխնիկական միջոցներով հագեցած, կրթամշակութային ակտիվ գործառույթ իրականացնող, կամ էլ՝ տարեսկզբին դասագրքերը սովորողներին բաժանելու և ուստարվա ավարտին այն հետ վերցնելու նպատակով՝ գոցված դուռը բացող:

Դպրոցական բոլոր գրադարանների պահանջները, գործառույթներն իրականացնելու ֆունկցիաները նույն են, սակայն ոչ բոլորն են բարեխղճորեն կյանքի կոչվում: Պատճառները կարող են ունենալ տրամաբանական հիմնավորում կամ համարվել լոկ անիրատես:

Ի վերջո, պետք է հասկանանք՝ գրադարանը պարզապես վայր չէ մեր հոգուն հարազատ կամ ծրագրային գրքեր վերցնելու համար, ինչպես նախկինում էր:

Գրադարանը պետք է դառնա սովորողների մոտ ընթերցանության նկատմամբ սեր արթնացնող վայր, ընթերցանության հմտություններին ծանոթանալու, ինքնակրթություն ձեռք բերելու, դպրոցական կրթության համար անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու աղբյուր: Այն պետք է հնարավորինս ճիշտ ներգրավվի դպրոցի բոլոր աշակերտներին, այլապես սեփական կամքով գրադարանի դուռ թակողները սակավաթիվ կլինեն:

Գրադարանը պետք է միտված լինի անհատի դաստիարակության՝ գրագիտության, ինտելեկտուալ ստեղծագործական, բարոյական, գեղագիտական մակարդակի բարձրացմանը:

Այդ գործընթացում կարևոր դերը վերապահված է դպրոցում գտնվող գրադարանին ու գրադարանավարին, որը նաև համարվում է ուսուցիչ՝ լիովին մասնակցելով դպրոցի ողջ ուսումնակրթական գործընթացին: Գրադարանավարը պետք է նպաստի սովորողների կրթության ու դաստիարակության, ուսուցիչների, ծնողների ու դպրոցի փոխգործընթացի կայունացման կարևորագույն գործի իրականացնողը:

Ուսումնասիրության մեթոդներ

Ժամանակակից դպրոցական գրադարանը չի կարող ստեղծվել՝ առանց գրադարանի կողմից լուծված խնդիրների բուն ընկալման: Հետևաբար, դպրոցի գրադարանի արդիականացման վերաբերյալ հարց է առաջանում. «Գրադարանն ինչու՞ և ինչի՞ համար է պետք»: Եվ միայն պատասխանը գտնելուց հետո պարզ կդառնա, թե կոնկրետ ինչպես պետք է իրականացնել գրադարանի արդիականացումը և ինչ պետք է անել այդ ամենի համար:

Դպրոցի գրադարանը պետք է իրականացնի հետևյալ գործառույթները՝

- մշակութային
- կրթական
- գրադարանային

Մշակութային գործառույթ

Մշակույթը քաղաքացիական հասարակության հիմնական հենասյուներից է: Այնտեղ, որտեղ մշակույթն իր տեղը զիջում է տգիտությանը, այնտեղ ծաղկում է հանցագործությունը, կոռուպցիան, հակաազգայնական գաղափարների ընկալումը: Արդյունքում խոչընդոտվում է երկրի տնտեսական

և գիտական զարգացումը: Հետևաբար, երիտասարդ սերնդի մշակութային կրթությունը դառնում է նաև ժամանակակից դպրոցական գրադարանի հիմնական խնդիրներից մեկը:

Ինչպես հանրային գրադարանի հիմնական խնդիրն է դառնալ իր տարածաշրջանի մշակութային կենտրոնը, այնպես էլ դպրոցական գրադարանի խնդիրն է դառնալ իր դպրոցի մշակութային կենտրոնը, պատանիների օգնականն ու աջակիցը:

Կրթական գործառույթ

Դպրոցական գրադարանի համար չկա ավելի կարևոր խնդիր, քան աշակերտին սովորեցնել աշխատել տեղեկատվության հետ, ուսուցանել տեղեկատվության վերլուծություն, սովորեցնել ստեղծագործական մտածողություն, իսկ այդ ամենը դպրոցի գրադարանի առջև ծառայած հիմնական խնդիրներից է:

Գրադարանային գործառույթ

Գրադարանի աշխատանքը կենտրոնացած է գրքերի խնդրի և միջոցների պահպանման ապահովման վրա:

Ստացված արդյունքներ

Այսօր հայաստանյան դպրոցների գրադարանները կարճ ժամանակահատվածում դժվար կլինի մերձեցնել եվրոպական կամ ամերիկյան զարգացած դպրոցների գրադարանների նույն չափորոշիչներին:

Ի՞նչ գործառույթներ պետք է իրականացնի դպրոցական կրթամշակութային այս կարևորագույն օղակը:

Կարծում եմ՝ հնարավոր կլինի առանձնացնել մի շարք նախագծեր ու առաջարկներ, որոնք իրականացվում են կամ միանգամայն հնարավոր է իրականացնել դպրոցի գրադարանի պատերի ներքո:

Այսօր մեր դպրոցական գրադարաններն ինչքանով և ինչպիսի՞ քայլեր են կատարում, որոնք կմոտեցվեն արդիական պահանջներին. չէ՞ որ կյանքի զարգացումը հասնում է անչափելի սահմանների: Այսինքն՝ հասարակության առաջադիմական զարգացումը պահանջ է դնում դպրոցի մշտական կատարելագործմանը:

Նախ գրադարանը պետք է դարձնել ամբողջ դպրոցի համար տեղեկատվական հիմնական ու կարևորագույն կենտրոն:

Կարևոր է գրադարանի աջակցությունն ու մասնակցությունն ուսումնական գործընթացին՝ ուսուցանողներին և ուսումնառողներին տրամադրելով համապատասխան գրականություն և ուսումնադիդակտիկ նյութեր:

Ամեն տարի իրականացնել ֆոնդի շարժ:

Սպասարկելի դարձնել գրադարանի գրքային ունեցվածքը: Դա նշանակում է՝ ստեղծել տեղեկատվություն, որոնցով հնարավոր կլինի ընթերցողներին տեղյակ պահել գրադարանի ունեցած գրականության մասին՝ նրանց ապահովելով անհրաժեշտ տեղեկատվությամբ:

Պետք է ամեն տարի ցուցակագրել գրքերը: Դուրս գրել և խուսափել մաշված ու քայքայված գրքերի գործածումից. դրանք կարող են ընթերցողների մոտ մաշկային կամ շնչառական հիվանդությունների առաջացման պատճառ դառնալ:

Ցանկալի է ունենալ առանձին գրանցամատյան՝ նշելով կորցրած գրքերը փոխարինված գրքերով համալրման մասին: Պարտադիր սահմանել դրույթ՝ փոխարինումը կատարել չվերադարձրած գրքի արժեքին համապատասխան, որպեսզի դրանից չտուժի գրաֆոնդը:

Դպրոցի տնօրենը և ուսուցչական կազմը պետք է ակտիվ աջակցեն դպրոցի գրադարանի դերի բարձրացման խնդրին և պետք է համագործակցեն դպրոցի գրադարանավարի ու գրադարանից օգտվողների հետ, որպեսզի սովորողների մոտ զարգացնեն ինքնուրույն ուսումնառության և տեղեկատվության որոնման հմտությունները:

Դպրոցի գրադարանի ռեսուրսները պետք է պարունակեն տարբեր տեղեկատվական աղբյուրներ. գրքեր, ժողովածուներ, ամսագրեր և ամենօրյա թերթեր, համակարգչային ծրագրեր, տեսաերիզներ, աուդիոնյութեր, ինտերնետային կապ և այլն [4]:

Գրադարանում որակյալ ինտերնետ կապը պարտադիր պայման պետք է լինի, ՏՀՏ սարքավորումները՝ նույնպես, որոնց շնորհիվ սովորողների համար մատչելի կդառնա առցանց

գրքերի ձեռքբերումը, որոնք հասանելի կլինեն audio/video տարբերակով մի շարք հանրահայտ կայքերից, ինչպիսիք են՝ «LibrDrive», «BBC Learning Center», «Librivox», «Lit2Go» և այլն: Միջազգային շատ հեղինակավոր գրքեր այսօր առկա են հայերեն, իսկ audio/video գրքերը մեծապես կօգնեն այն աշակերտներին, որոնք ուսումնասիրում են օտար լեզուներ: Բացի այդ՝ audio գրքերը կարդում են հատուկ մասնագետներ, որոնց մատուցմամբ նյութը ավելի հետաքրքիր և մատչելի կլինի օտար լեզվի առողջանության, ճիշտ արտասանության և ժամանակաձևերի գրագետ օգտագործման տեսակետից:

Ցանկալի կլինի նաև ստեղծել մեդիա գրադարան: Դպրոցի կայքում ստեղծել գրադարանի էլկայք:

Կատարել դպրոցական գրադարանի ինտերիերի փոփոխություն:

Ասենք՝ տարիներով նույն տեղում կախված՝ անգամ ամենագեղեցիկ ցուցապաստառը կամ նկարը ժամանակի ընթացում կորցնում է շունչը, դառնում անկենդան՝ խամրեցնելով գրադարանի կանչող գույները:

Գրադարանը պետք է լինի ընդարձակ, ամենակարևորը՝ լուսավոր ու մաքուր: Այնտեղ ամեն օր պետք է իրականացնել օդափոխություն, իսկ թաղարներով բույսերի առկայությունը թարմ ու կենդանի շունչ կհաղորդի գրադարանային միջավայրին:

Կարևոր է գրադարանում ունենալ անվտագության համակարգ:

Գրքերը պետք է ունենան ազատ դասավորություն: Կարևոր է տեխնիկայի միջոցներից օգտվելու համար համապատասխան ու հարմարավետ կահույքի առկայությունը: Իրերի դասավորությունը պետք է կամայական չլինի:

Ինչ խոսք, նման միջավայրում հաճելի և արդյունավետ կլինի գրադարանային դասերի ու միջոցառումների կազմակերպումը՝ ներդնելով ու կիրառելով նոր տեխնոլոգիաներ:

Ամիսը մեկ կամ երկու անգամ դպրոցի գրադարանում կազմակերպել ժամանակակից գրողների, արվեստի ոլորտի ճանաչված մարդկանց հրավերք: Կենդանի շփումը, արվեստի ու գրականության մասին զրույց-քննարկումները կնպաստեն գիրքը՝ որպես գրադարակի դատարկ զարդ ընդունելու կարծրատիպից ազատվելուն:

Կարելի է կազմակերպել ձեռքբերված նոր գրքերի ու պատկերագրքերի, ամսագրերի ցուցադրություններ՝ աշակերտներին հաղորդակից դարձնելով համայրված նոր գրաֆոնդին:

Ավելի ակտիվ, գրականությամբ հետաքրքրվող աշակերտների հետ կազմել և տպագրել նոր գրքույկներ. ասենք՝ կանանց տոների կապակցությամբ՝ «Մայրերգությունն արդի պոեզիայում» խորագրով, Բանակի, Անկախության տոների նախաշեմին հավաքագրել հայրենասիրական պատումների հետաքրքիր շարք, տաղավար տոների առիթով՝ եկեղեցական նյութեր և այլն:

Լուսաբանել և հայաստանյան մանկա-պատանեկան մամուլի հրապարակմանն առաջարկել դպրոցի ստեղծագործող երեխաների աշխատանքները: Գրադարանի կողմից շնորհաշատ սովորողներին շնորհել պատվոգրեր կամ ընտրել խրախուսման այլ ձևեր:

Ներկայումս մուլտիմեդիա ռեսուրսներն օգտագործվում են կրթական գործունեության գրեթե բոլոր ոլորտներում: Այդ առումով կարելի է այլ դպրոցների հետ (հետաքրքիր կլինի՝ գյուղական և քաղաքային) կազմակերպել վիրտուալ կոնֆերանսներ, ֆիլմերի դիտում և քննարկումներ, փոքրիկ տեսանյութերի ու հաղորդումների նկարահանումներ:

Շատ հավանական է՝ մոտալուտ ապագայում գրադարաններն աշխատեն ամեն տեսակի փաստաթղթերի հետ: Յուրաքանչյուր գրադարանային ֆոնդի հարաբերակցությունն այդ փաստաթղթերի հետ կլինեն տարբեր և զանազան:

Դպրոցական գրադարանը պետք է ունենա առանձնացված արխիվային բաժին՝ դպրոցի արխիվային փաստաթղթերի և այլ կարևոր տեղեկատվությունն այնտեղ պահելու համար: Արխիվացված նյութերը պետք է ունենան էլեկտրոնային պահոց՝ այնտեղ գրանցելով պահվող փաստաթղթի, գրքի կամ այլ նյութի անվանումը, տարեթիվն ու քանակը:

Կարծում եմ՝ գրադարանում արխիվացման ստեղծումը ոչնչացումից կփրկի դպրոցի տարբեր սենյակների դարակների ու պահարանների անհիշելի խորքերում, տամուկ ու խոնավ պահոցներում պահվող փաստաթղթերը: Չէ՞ որ այն մի ողջ ուսումնական հաստատության կյանքի, անցած ուղու՝ տասնամյակների, նույնիսկ հարյուրամյակի հասնող պատմության վկայությունն է, իսկ բարեխիղճ

գրադարանավարուհու կողմից արխիվացման կառավարումը կլինի արդյունավետ ու օգտակար որոշում:

Իհարկե, կարելի է երկար շարունակել արդյունավետ նախագծերի ու հետաքրքիր առաջարկների շարքը, սակայն հարց է առաջանում՝ այս ամենն իրականացնելու համար գրադարանը որտեղի՞ց պետք է ձեռք բերի պատշաճ նյութական ու ֆինանսական աջակցություն, ինչն այս ամենի համար առաջավոր է ու հրատապ:

Բոլորս էլ քաջատեղյակ ենք դպրոցների ֆինանսական սուղ միջոցներից, նաև շատ լավ պատկերացնում ու գիտակցում ենք՝ ֆինանսական ռեսուրսները մինչև գրադարանին հասնելը ծառայում են տվյալ ուսումնական հաստատության կարևորագույն ու հրատապ լուծում պահանջող կարիքների ու պահանջների օգտագործմանը:

Դպրոցական գրադարանների դերի առավել կարևորման պայմաններում ինչպե՞ս ստեղծել, հայթհայթել ու ձեռք բերել ֆինանսական միջոցներ, ո՞րն է աղբյուրը:

Ստորև բերվում են ընդհանուր չափորոշիչներ, որոնք իրատեսորեն պետք է ներառվեն գրադարանների զարգացման պլաններում, իհարկե, դրանցից մի քանիսի իրականացումը կպահանջի ավելի երկար ժամանակահատված [5]:

Նախ դպրոցական բյուջեի բաշխումը պետք է լինի կանոնակարգված և ճիշտ հաշվարկված՝ հնարավորին չափ մաս հատկացնելով նաև գրադարանի կարիքներին:

Դպրոցական գրադարանը պետք է իր ակտիվ ու նախաձեռնող գործունեությամբ մնա պետական օղակների՝ քաղաքային, մարզային, համայնքային ղեկավարների ուշադրության կենտրոնում՝ հնարավորին չափ առանձին հատկացումներ ստանա առաջարկվող ծրագրերի, իրականացվելիք միջոցառումների կամ գրադարանային ֆոնդի համալրման համար:

Փոխհամագործակցային պայմանագրեր կնքել հրատարակչությունների հետ՝ ուսուցիչներին և ծնողներին ուղղորդել օգտվելու տվյալ հրատարակչության արտադրանքից, իսկ հրատարակչությունն էլ պարտավորվի որոշակի քանակով գրքեր, քարտեզներ կամ տպագիր այլ նյութեր տրամադրի դպրոցին:

Փորձել գտնել գրքի դերն ու արժեքը կարևորող բարերարներ, ֆինանսական աջակիցներ, մասնակցել տարբեր դրամաշնորհային ծրագրերի մրցույթներին:

Տարվա ընթացքում բարեխղճորեն հավաքել դպրոցի թղթե թափոնները, վաճառել և ձեռք բերել նոր գրքեր կամ գրադարանի կարիքների համար անհրաժեշտ այլ պարագաներ:

Դպրոցում սահամանել բարի ավանդույթ՝ յուրաքանչյուր տարի՝ Գրքի տոնին մեկ կամ երկու դասարանի բոլոր աշակերտները միմյանց գրքեր նվիրելու փոխարեն՝ գնած գրքերը նվիրեն դպրոցական գրադարանին, իհարկե, նախապես մակագրելով գրքի տիտղոսաթերթին: Ենթադրելի է՝ այդ գիրքն ընթերցող մեկ այլ աշակերտ, կարդալով մակագրությունը, կոգևորվի. առիթի դեպքում ինքն էլ որևէ գիրք կնվիրի գրադարանին:

Կարծում են՝ պետք է հաշվի առնվեն բոլոր առկա պահանջները: Առաջարկվող կետերը միմիայն առաջին հայացքից կարող է թվալ անհավանական, բայց փոքրիկ քայլերով հնարավոր կլինի հասնել սպասելի արդյունքի:

Եզրակացություն

Կրթությունը 21-րդ դար մուտք գործեց՝ զինված արդի ծրագրերի բազմազանությամբ, տարաբնույթ նպատակադրումներով, դրանց ապահովումն իրագործելու բազմաֆունկցիոնալ խնդիրների առաջադրմամբ, իսկ ամենի հիմքում անձի ներդաշնակ զարգացումն է, կրթության, ինքնակրթության մոտիվացիայի ձևավորումը:

Այսինքն՝ դեռահաս դպրոցականը պետք է կարողանա ոչ միայն տեղեկատվություն ստանալ, այլև փորձի հասկանալ՝ ամբարած գիտելիքի հետ ի՞նչ անել և ինչպե՞ս կիրառել այն կյանքում:

Տեղեկատվական տեխնոլոգիաների մատչելիությունը դպրոցականներից շատերի համար կրթաուսումնական գործառույթի իրականացման վրա դրեց ախտածին դրոշմ:

Ցավալի է տեսնել, թե ինչպես ավագ դպրոցի սանը չգիտի որոնած տեղեկությունն ինչպես դուրս բերել, ասենք՝ տպագիր Հանրագիտարանից, գաղափար չունի էլեկտրոնային գրադարաններից:

Իհարկե, այս ամենի համար անհիմն կլինի ողջ մեղքը բարդել դպրոցի գրադարանի վրա, բայց չենք էլ հերքի, որ այս գործում իրենք ևս ունեն իրենց բացթողումները:

Կրթական ոլորտին մոտ լինելը՝ ինձ թույլ տվեց հանգել այն համոզման, որ դպրոցի գրադարանը, համարվելով կարևոր օղակ, կարող է լուծել սովորողների տեղեկատվական մշակույթի բարձրացման խնդիրները: Ի վերջո, տեղեկատվական համակարգերի գործածումն էլ է պահանջվում գիտելիք, կարողություն ու հմտություն:

Ինչ խոսք, հատկապես նախորդ դարավերջին գրեթե խարխուլվեց, կորացավ դպրոցի մեջքը: Հարվածի մեծ բաժինը կրեց հենց դպրոցական գրադարանը, սակայն այս տարիների ընթացքում տարաբնույթ խոչընդոտներ հարթելով՝ առաջ շարժվեցինք ու դեռ շարունակում ենք:

Պետք է հմուտ լինենք ավերածը շտկելու, նորը ճիշտ և արհեստավարժորեն գործածելու կարողությամբ՝ իրականություն դարձնելով մատաղ սերնդի կրթության և դաստիարակության համակողմանի գործընթացի իրագործումը:

Համարձակ պետք է լինենք նորարարական մոտեցումները կիրառելիս, վեցնենք կրթական բարեփոխումներ իրականացնող լավագույն երկրների փորձը, հարմարեցնելով մեր պահանջներին, մարտահրվերներին և խնդիրներին տանք արդյունավետ պատասխան:

Դպրոցական գրադարանի հիմնական այցելուն աշակերտն է. նա պետք է գրքեր սերտելուց զատ դառնա խելամիտ մտածող, ստեղծագործ սան, պրպտող անձնավորություն:

Մենք պետք է ձգտենք կրթական առաքելության իրականացմանը. չէ՞ որ գալիքը մեր առջև գրագետ քաղաքացիներ ունենալու պահանջ է դրել:

Գրականության ցանկ

1. Տ. Զարգարյան, Թվային գրադարաններ: Ե. Հեղինակային հրատարակություն, Երևան, 2002, 166 էջ:
2. Գրադարանների և գրադարանային գործի մասին ՀՀ օրենք, Հոդված 4. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններ: <http://www.parliament.am> Հոդված 7. Գրադարանի պարտադիր գործառույթները ընդունված՝ 21.03.2012:
3. Շ. Ս. Նալբանդյան, Աշխատանքային դաստիարակությունը և մասնագիտական կողմնորոշումը գրադարանում, Երևան, 1986, 62 էջ:
4. Հայաստանի դպրոցների գրադարանների ձեռնարկ, Երևան, հունիս 2011, ՀՀ ԿԳՆ, 75 էջ:
5. Գ. Գևորգյան, Գրադարանների դերը կրթական բարեփոխումների համատեքստում, ՇՊՀ տեղեկագիր 2019, հ1, <http://shsu.am/media/journal/2019n1b/7.pdf>:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲՈՒՀԵՐՈՒՄ

ՎԱՀԱՆ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
գիտակրթական միջազգային կենտրոն
մանկավարժության ամբիոն, դասախոս
մանկավարժական գիտությունների թեկնածու
vmeliqsetyan0077@mail.ru

Համառոտագիր

Բարձրագույն ուսումնական հաստատությունները պարբերաբար բախվում են սեփական ուժերն ու կարողությունները վերագնահատելու և վերջնարդյունքները գնահատելու խնդիրներին՝ աշխատաշուկայի հարափոփոխ պահանջները հնարավորին չափ բավարարելու և բարձրագույն կրթության ոլորտի մարտահրավերներին դիմակայելու անհրաժեշտությամբ: Բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացում առանցքային դեր է վերապահված մարդկային ռեսուրսներին և նրանց հմտություններին, կարողություններին, որոնց կառավարումը բարձրագույն ուսումնական հաստատության ռազմավարական պլանավորման կարևորագույն խնդիրներից է: Բուհերի միջև մրցակցային դաշտի առկայության պայմաններում հաջողության կարող են հասնել այն ուսումնական հաստատությունները, որոնք կիրառում են մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետ համակարգ և սկզբունքներ:

Մարդկային ռեսուրսները ցանկացած բարձրագույն հաստատության զարգացման կարևորագույն ուժերն են, և նրանցից յուրաքանչյուրի խնդիրը մարդկային ռեսուրսների կառավարման գործունե համակարգ ստեղծելն է, որը կներառի նոր աշխատատեղերի կանխատեսումը, անձնակազմի ընտրությունը, շարունակական ուսուցումն ու մասնագիտական զարգացումը, կազմակերպչական կարգապահությունը և աշխատողների բավարարվածության զգացողության ուժեղացմանը միտված և նպաստող կառուցակարգերի մշակումը և այլ գործառույթներ: Ինչպես պարզվում է արդի ուսումնասիրություններից, ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ՄՌԿ արդի համակարգը հիմնականում գործում է ավանդական մոտեցումներով, սակայն գործունեության արդյունավետության կայունությունն ու շարունակական զարգացումն ապահովելու համար ՄՌԿ ավանդական և ժամանակակից մոտեցումների հավասարակշռումը կարևոր նախապայման է: Այս առումով՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում այն նաև ռազմավարական նշանակություն ունի, քանի որ աշխատողների մտավոր ներուժը, անձնային որակներն ու մասնագիտական կարողություններն են ապահովում բարձրագույն ուսումնական հաստատությունների գործունեության շարունակական բարելավումն ու զարգացումը:

Սույն ուսումնասիրության շրջանակներում համապատասխան տեսական հիմքերի վերլուծության միջոցով քննության ենք առել ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների մարդկային ռեսուրսների կառավարման արդի համակարգը: Ուսումնասիրությունը միտված է նպաստելու բուհերի կատարողականների և զարգացման բարելավմանը և միաժամանակ հնարավորություն է ընձեռում դրանց տիրույթում ծանոթանալու մարդկային ռեսուրսների կառավարման և ռազմավարական սկզբունքներին:

Բանալի բառեր և բառակապակցություններ. մարդկային ռեսուրսների կառավարում, անձնակազմի կառավարում, հոգեբանական, մասնագիտական գնահատում, ռեսուրս, պլանավորում, բարձրագույն կրթության որակի ապահովում:

ОСОБЕННОСТИ ПРОЦЕССА УПРАВЛЕНИЯ ЧЕЛОВЕЧЕСКИМИ РЕСУРСАМИ В ВУЗАХ

ВАГАН МЕЛИКСЕТЯН

Национальная академия наук Республики Армения
Международный научно-образовательный центр
преподаватель кафедры педагогики
кандидат педагогических наук
vmeliqsetyan0077@mail.ru

Аннотация

Высшие учебные заведения периодически сталкиваются с проблемами переоценки собственных сил и возможностей, а также оценки конечных результатов с точки зрения необходимости удовлетворения переменчивых требований на рынке труда и противостояния вызовам в сфере высшего образования. В процессе обеспечения качества высшего образования ключевая роль отводится человеческим ресурсам, их умениям, возможностям, управление которыми является важнейшей проблемой стратегического планирования высшего учебного заведения. В условиях существования конкурентного поля между вузами успеха добиваются те учебные заведения, которые применяют эффективные системы и принципы управления человеческими ресурсами.

Человеческие ресурсы являются важнейшим импульсом в развитии любого высшего учебного заведения и задачей каждого из них становится создание действенной системы управления человеческими ресурсами, которая включает в себя прогнозирование новых рабочих мест, выбор персонала, профессиональное развитие и непрерывное обучение, организационную дисциплину и усиление чувства удовлетворенности сотрудников, разработку целенаправленных и позитивных структурных подразделений и другие функции. Как видно из современных исследований, модернизированная система УЧР в высших учебных заведениях РА действует, в основном, в рамках традиционного подхода, однако для стабильности эффективной деятельности и обеспечения развития мобильности баланс традиционных и инновационных подходов УЧР является главным условием. В этом плане в высших учебных заведениях данная модель приобретает и стратегическое значение, потому что интеллектуальный потенциал сотрудников, личностные качества и профессиональные способности обеспечивают непрерывное улучшение и развитие деятельности высших учебных заведений.

В рамках данного исследования с помощью анализа соответствующих теоретических основ нами была изучена современная система управления человеческими ресурсами в высших учебных заведениях РА. Исследование направлено на улучшение исполнительских функций и развития вузов, в то же время дает возможность ознакомиться с управлением человеческими ресурсами и стратегическими принципами.

Ключевые слова и словосочетания: управление человеческими ресурсами, управление персоналом, психологическая, профессиональная оценка, ресурсы, планирование, обеспечение качества высшего образования.

CHARACTERISTICS OF HUMAN RESOURCES MANAGEMENT PROCESSES IN UNIVERSITIES

VAHAN MELIKSETYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia

International Scientific-Educational Center

Department of Pedagogy

PhD in Pedagogical Sciences

vmelikssetyan0077@mail.ru

Abstract

Higher education institutions constantly face the problems of re-evaluating their strengths and abilities and assessing the deliverables in order to meet the ever-changing demands of the labor market and the challenges of higher education. A key role in the process of quality assurance of higher education is assigned to human resources, their skills, and abilities, the management of which is one of the most important tasks of strategic planning of a higher education institution. In the context of competition between universities, only those institutions that apply an effective human resource management system and principles can succeed.

Human resources are the most powerful force in the development of any higher education institution. Hence, the task of each of them is to create a functioning human resource management system that will include job forecasting, personnel recruiting, ongoing training and professional development, organizational discipline, development of structures aimed at and contributing to enhancing employee satisfaction, and other functions. As it turns out from the recent studies, the modern HRM system of the RA higher education institutions operates mainly with traditional approaches; however, balancing traditional and modern HRM approaches is a prerequisite for ensuring the sustainability and continuous development of operational efficiency. In this regard, it is also of strategic importance for higher education institutions, as the employees' intellectual potential, personal qualities, and professional skills ensure the continuous improvement and development of the activities of higher education institutions.

In the framework of this study, we examined the modern system of human resource management of RA higher education institutions through the analysis of the relevant theoretical bases. The study aims to contribute to the improvement of the performance and development of universities. At the same time, it provides an opportunity to get acquainted with the strategic and human resource management principles in that field.

Keywords and phrases: human resource management, personnel management, psychological professional evaluation, resource, planning, quality assurance of higher education.

Ներածություն

Հայաստանի Հանրապետությունում մարդկային ռեսուրսների կառավարման (այսուհետ՝ ՄՌԿ) ոլորտի կայուն զարգացումը պայմանավորված է ինչպես երկրում ժողովրդավարական արժեքների ամրապնդման անհրաժեշտությամբ, այնպես էլ տնտեսական և հասարակական նոր հարաբերությունների համար անհրաժեշտ պայմանների ապահովմամբ: Համաշխարհայինացման գործընթացների ազդեցության և մրցակցության ներկայիս պայմաններում առանձնահատուկ կարևորություն են ստանում բարձրագույն կրթության արդյունավետ կազմակերպման և պլանավորման հիմնահարցերը: Այս տեսանկյունից՝ անհրաժեշտ է, որ ցանկացած բարձրագույն ուսումնական հաստատություն լիարժեք տեղեկատվություն ունենա սեփական մարդկային ներուժի և առանցքային հմտությունների ու կարողությունների մասին: Կրթական յուրաքանչյուր հաստատություն պետք է առաջին հերթին սահմանի և մշակի այն հիմնական ուղղությունները, որոնց հետևելու է իր երկարաժամկետ ռազմավարության ժամանակահատվածում՝ որակյալ կրթության, հանրային ծառայությունների մատուցման և իրականացվող գիտական հետազոտությունների միջոցով սահմանված առաքելությանն ու նպատակներին հասնելու համար: Պետական և մասնավոր բարձրագույն ուսումնական ամեն մի հաստատության գործունեության հաջողությունը պայմանավորված է բազմաթիվ գործոններով, որոնց շարքում առանձնահատուկ տեղ են գրավում մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարման հիմնախնդիրները: Մարդկային ռեսուրսների կառավարման ընթացակարգերով ու կառուցակարգերով են պայմանավորված ոչ միայն ուսումնական հաստատության գործունեության կայունությունն ու բնականոն ընթացքը, այլ նաև զարգացման ու հետագա բարելավման հստակ ուղիները:

Ինչպես պարզվում է արդի ուսումնասիրություններից, «բարձրագույն ուսումնական հաստատությունների ՄՌԿ արդի համակարգը հիմնականում գործում է ավանդական մոտեցումներով, սակայն գործունեության արդյունավետության կայունությունն ու շարունակական զարգացումն ապահովելու համար ՄՌԿ ավանդական և ժամանակակից մոտեցումների հավասարակշռումը կարևոր նախապայման է: Այս առումով՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում այն նաև ռազմավարական նշանակություն ունի, քանի որ աշխատողների մտավոր ներուժը, անձնային որակներն ու մասնագիտական կարողություններն են ապահովում բարձրագույն ուսումնական հաստատությունների գործունեության շարունակական բարելավումն ու զարգացումը:

Հոդվածում ներկայացրել ենք բուհերում մարդկային ռեսուրսների կառավարման առանցքային մի շարք դրույթներ, աշխատուժի պլանավորման սկզբունքներ և մոտեցումներ: Աշխատակազմի հավաքագրման, ճիշտ թեկնածուի ընտրության, նոր աշխատավայրում նրա հարմարման գործընթացի տարբեր ժամանակաշրջաններում եղել և մնում են ՄՌԿ մասնագետների ուշադրության կենտրոնում: Նրանց առջև դրված հիմնական խնդիրը համապատասխան աշխատակցի ընտրությունը և նոր միջավայրում նրա հարմարման գործընթացը հնարավորին չափ դյուրին դարձնելն է, որի արդյունքում նորեկը կարողանում է լավ հարաբերություններ ստեղծել կոլեկտիվի հետ, ինչի արդյունքում էլ կատարվող աշխատանքը առավել արդյունավետ և որակյալ է դառնում:

Հոդվածի նպատակից բխում են հետևյալ խնդիրները՝

1. բացահայտել և գիտականորեն հիմնավորել մարդկային ռեսուրսների պլանավորումը և ռազմավարական կառավարման բնույթը.
2. վերլուծել աշխատակազմի համալրման գործընթացներն ու միջոցները.
3. ուսումնասիրել բուհական համակարգի կառավարման գործընթացի սկզբունքները, գործառույթներն ու մեթոդները.
4. ներկայացնել մասնագիտությունների հոգեբանության հիմնական հասկացությունների սահմանումը.
5. ուսումնասիրել և բացահայտել մանկավարժական կոլեկտիվի կառավարման առանձնահատկությունները:

Անձնակազմի կառավարում եզրույթը արդի ժամանակներում գործածվում է անձնակազմի ընտրության, վերապատրաստման, հարմարման գործընթացները ներկայացնելու նպատակով:

Անձնակազմի կառավարումը մարդկանց ղեկավարելու գործունեության ձևերից է, որի նպատակը որևէ հաստատության անդամների աշխատանքի, հմտության, փորձի կիրառման միջոցով նրա գործունեության բարելավմանը հասնելն է: Կառավարումը համապարփակ գործընթաց է, որի տեսությունը ստեղծվել է նախորդ դարավերջին:

Սույն ուսումնասիրության օբյեկտը բուհական համակարգի մանկավարժական կոլեկտիվի կառավարման առանձնահատկությունների բացահայտումը, արձանագրումն ու հետազոտումն է:

Առարկան՝ բուհական կրթական համակարգի, մանկավարժական կոլեկտիվի կառավարման մանկավարժա-հոգեբանական գործընթացն է: Ուսումնասիրությունն ունի տեսական և գիտամանկավարժական նշանակություն: Այն կարող է կիրառվել բուհական դասընթացներում և գիտա-գործնական ոլորտում՝ ներբուհական կառավարման աշխատանքներ իրականացնելու նպատակով:

Մարդկային ռեսուրսների կառավարումը

Բուհական հաստատությունների արդյունավետ գործունեության անհրաժեշտ նախապայման է մարդկային, ֆինանսական, տեխնոլոգիական և նյութատեխնիկական ռեսուրսներով ապահովվածությունը: Ցանկացած պետական և մասնավոր բուհի հաջողությունը պայմանավորված է բազմաթիվ գործոններով, որոնց շարքում առանձին տեղ է գրավում մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարման խնդիրը: ՄՌԿ վերաբերում է բարձրագույն հաստատության մաս կազմող այն գործառույթին, որը առնչվում է անձնակազմի հավաքագրման, ուսուցման, ազատման և այլ գործառույթներին՝ նպատակ ունենալով առավելագույնի հասցնելու մարդկային կապիտալում հաստատության կատարած ներդրումները և դրանք նվազեցնելու ռիսկերը:

Մարդկային ռեսուրսների կառավարումը այնպիսի մոտեցում է աշխատակազմին, ըստ որի՝ մրցակցային պայքարում աշխատակիցները դիտարկվում են որպես առավելագույն թանկ ռեսուրսներ, որոնց անհրաժեշտ է մոտիվացնել և զարգացնել՝ բուհական հաստատության ռազմավարական նպատակներին հասնելու համար՝ միաժամանակ ստեղծելով նոր ռեսուրսներ, կուտակելով և օգտագործելով ֆինանսական ռեսուրսները, վերահսկելով որակը:

Մարդկային ռեսուրսները ցանկացած բարձրագույն հաստատության զարգացման կարևորագույն ուժերն են, և նրանցից յուրաքանչյուրի խնդիրը մարդկային ռեսուրսների կառավարման գործունե համակարգ ստեղծելն է, որը կներառի նոր աշխատատեղերի կանխատեսումը, անձնակազմի ընտրությունը, շարունակական ուսուցումն ու մասնագիտական զարգացումը, կազմակերպչական կարգապահությունը և աշխատողների բավարարվածության զգացողության ուժեղացմանը միտված և նպաստող կառուցակարգերի մշակումը և այլ գործառույթներ:

Մարդկային ռեսուրսների կառավարում եզրույթը մասնագիտական գրականության մեջ առաջին անգամ գործածվել է 1960-ական թվականների կեսերին ԱՄՆ-ում: Յուրաքանչյուրը, ով իր ենթակայության տակ ունի աշխատողների որոշակի խումբ, փոխկապված է ՄՌԿ-ի հետ. ոչ մի ղեկավար չի կարող խուսափել այդ գործառույթի իրականացումից, իսկ այդ գործառույթն արդյունավետ է միայն այն դեպքում, երբ գործատու-ղեկավար-աշխատող հարաբերությունները փոխկապակցված են, ունեն ընդհանուր նպատակներ՝ կրթական ընդհանուր շահի նկատառությամբ:

Աշխատողների հավաքագրման ժամանակ թեկնածուի մասնագիտական և անձնական պիտանելիության գնահատման արդյունքում թափուր աշխատատեղի համար կատարվում է համապատասխան ընտրություն: Հավաքագրման ժամանակ ընտրության նպատակն է գնահատել թեկնածուի մասնագիտական և անձնային պիտանելիությունը՝ ըստ թափուր աշխատատեղի: Ընտրությունը կատարվում է *անձնակազմի կառավարման* գործնականության համատեքստում, որը կառավարման գիտության առանձին և ինքնուրույն բաժին է: Ընտրության և հավաքագրման գործընթացը որոշվում է նախևառաջ անձնակազմի կառավարման դրույթներին համապատասխան՝ ա. աշխատող անձի զարգացումը, բ. ուղղվածությունը դեպի համընդհանուր նպատակներ և արժեքներ, գ. համապատասխանությունը հաստատության քաղաքականության հետ, դ. անձնակազմի առանձին խմբերի հետաքրքրությունները, ե. ուղղվածությունը դեպի անձնակազմի նպատակը և նախաձեռնողականությունը, զ. ապագա աշխատողին ներկայացվող պահանջների և

նրա մասնագիտական ձեռքբերումների էջի ստեղծում՝ հիմնվելով թափուր աշխատատեղերի և դրանց նկարագրության վրա:

Այս դեպքում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ընտրության հետևյալ չափանիշներին՝ *մասնագիտական* (կրթություն, փորձ), *ֆիզիկական* (թեկնածուի ֆիզիկական հատկանիշներ), *հոգեբանական* (կենտրոնանալու կարողություն, վստահելիություն), *սոցիալ-հոգեբանական* (միջանձնային փոխհարաբերություններ ստեղծելու կարողություն):

Մարդկային ռեսուրսների կառավարման տեսական և մեթոդական հիմքերը

Սույն ուսումնասիրության շրջանակներում համապատասխան տեսական հիմքերի վերլուծության միջոցով քննության ենք առել ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների մարդկային ռեսուրսների կառավարման արդի համակարգը: Ուսումնասիրությունը միտված է նպաստելու բուհերի կատարողականների բարելավմանը և հնարավորություն է ընձեռում՝ դրանց տիրույթում ծանոթանալու մարդկային ռեսուրսների կառավարման ռազմավարական սկզբունքներին:

Աշխատանքային խմբի (անձնակազմի) ընտրության արդի մոտեցումները

Բուհական հաստատության անձնակազմի կառավարումը ղեկավար կազմի և անձնակազմի հարցերով մասնագետների նպատակաուղղված գործունեությունն է՝ միտված կադրային քաղաքականության հայեցակարգի և ռազմավարության, անձնակազմի ղեկավարման սկզբունքների և մեթոդների մշակմանը: Մարդկային ռեսուրսների կառավարման սկզբունքների և մեթոդների ամբողջականության միջոցով է ձևավորվում անձնակազմի հետ տարվող աշխատանքային համակարգը, որը ներառվում է բուհական հաստատությունների չափորոշչային այնպիսի փաստաթղթերում, ինչպիսիք են՝ բուհերի ընդհանուր փիլիսոփայությունը, կանոնադրությունները, անձնակազմի կանոնակարգերը, որոնք ընդգրկում են աշխատանքի ընդունման, տեղափոխման և ազատման դեպքում աշխատանքի փոխհատուցման և այլ վճարումների, անձնակազմի ուսուցման և զարգացման, անձնակազմի ատեստավորման, անձնակազմի գործնական էթիկայի և աշխատանքային ներքին կարգապահական կանոնների, կազմակերպության հաստիքացուցակի, աշխատանքային պայմանագրի, պաշտոնի անձնագրի, ևն հիմնախնդիրները [2, էջ 11]:

Մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարումը դրականորեն է անդրադառնում բարձրագույն հաստատությունների գործունեության արդյունքների վրա՝ ներառելով աշխատանքային խմբերի աշխատանքների արտադրողականության և ֆինանսական ցուցանիշների աճի բարձրացումը: Ժամանակակից բարձրագույն ուսումնական հաստատություններում, ՄՌԿ գործում, մեծ դերակատարում ունեն նաև տարբեր ստորաբաժանումների կառավարիչները: ՄՌԿ-ի միջոցով կատարվում է այն ամենը, ինչը նախկինում *կադրերի բաժնի լիազորությունն* էր. անձնակազմի ընտրություն, որակավորման ծրագրերի և աշխատանքի վճարման արդյունավետ համակարգերի մշակում և այլն, իսկ այժմ ՄՌԿ-ն իր առջև նպատակ է դնում՝ ներգրավելու առավել արդյունավետ աշխատուժ, զարգացնելու նրա հնարավորությունները և աջակցելու նրանց ուսումնական հաստատությունների ներսում [3, էջ 397]:

Ժամանակակից աշխարհում աշխատանքային խմբերի (անձնակազմերի) հետ տարվող աշխատանքի այսօրինակ համակարգը բաղկացած է փոխկապակցված յոթ ենթահամակարգերից՝ 1. կադրային քաղաքականություն, 2. անձնակազմի ընտրություն, 3. գնահատում, 4. բաշխում, 5. հարմարվելու գործընթացը, 6. ուսուցում, 7. խրախուսում: Մարդկային ռեսուրսների պլանավորումը գործընթաց է, ըստ որի՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների մենեջերները ապահովում են մասնագետների անհրաժեշտ քանակը, որոնց միջոցով կկարողանան հասնել հաստատության կողմից առաջադրվող նպատակներին՝ արդյունավետ լուծումներ գտնելով նաև դրանցից բխող խնդիրներին: Այլ կերպ՝ անձնակազմերի պլանավորումը ծառայում է ուսումնական հաստատությունների նպատակներին՝ դրանց իրագործման համար անհրաժեշտ աշխատակիցների հավաքագրման միջոցով: Ըստ այդմ՝ աշխատանքային խմբի պլանավորման գործընթացը բաժանվում է երկու փուլի՝ մարդկային ռեսուրսների ընթացիկ-ընդհանուր վիճակի և բուհական հաստատությունների ապագա կադրային պահանջների գնահատում: Բուհական

հաստատությունների մարդկային ռեսուրսների պլանավորումը սկսվում է ընթացիկ վիճակի վերլուծությունից, այսինքն՝ այդ ռեսուրսների գնահատման միջոցով: Բուիերի մարդկային ռեսուրսների պահանջները ապագայում ևս պետք է պայմանավորված լինեն դրանց հիմնական նպատակներով և ռազմավարությամբ: Աշխատանքային խմբի հավաքագրման և ընտրության գործընթացը անհրաժեշտ է, որ ուղղված լինի ծախսերի և ստացված արդյունքի միջև հավասարակշռության հասնելու նպատակին [2, էջ 19]:

Ժամանակակից կառավարման համակարգում կարևորվում է նաև մասնագետի՝ իր զբաղեցրած պաշտոնին հոգեբանական համապատասխանության հիմնահարցը: Աշխատանքային գործունեության մեջ մասնագիտական գիտելիքը և հմտությունները աշխատանքում ներգրավելը դեռևս բավարար չեն. անհրաժեշտ են համապատասխան հոգեբանական որակներ, որոնց զուգակցումը կապահովի գործունեության արդյունավետությունը: Այդ պատճառով, կարևոր է նաև մասնագետի ընտրության հարցը հոգեբանական տեսանկյունից դիտարկելը, որը հնարավորություն կտա՝ բացահայտելու անձի՝ մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ հոգեբանական որակները, կանխորոշելու և ապահովելու դրանց կատարելագործման ու զարգացման ուղիները [1]:

Հոգեբանական գնահատման նոր մեթոդների մշակումը կամ արդեն գոյություն ունեցողների կիրառությունը

ՄՌԿ հոգեբանի հիմնական գործառույթների շարքում կարող ենք ներառել աշխատակազմի ընտրության, գնահատման, տեղաբաշխման և հարմարման, ինչպես նաև ՄՌԿ այլ խնդիրներ լուծելիս՝ կիրառել խառնվածքի, ինտելեկտուալ և անձնային առանձնահատկությունների բացահայտման մեթոդները կամ մեթոդաբանությունը: Անհրաժեշտության դեպքում, հոգեբանը, ելնելով կազմակերպության կարիքներից, օգտագործում է արդեն գոյություն ունեցող գնահատման մեթոդները կամ մշակում է նորերը՝ համապատասխանեցնելով դրանք կոնկրետ հաստիքի պրոֆեսիոգրամմային և փսիխոգրամմային:

Անհատական գնահատականի և հոգեբանական հարցազրույցի իրականացումը

ՄՌԿ բաժինը կոնկրետ հաստիքի համար դիմած բոլոր թեկնածուների համար կազմակերպում է գնահատման փուլ, որից հետո հոգեբանը, հիմնվելով գնահատման արդյունքների վրա, նրանց հրավիրում է հարցազրույցի: Հարցազրույցը հիմնականում վարում է հոգեբանը ՄՌԿ մասնագետի հետ, որից հետո կազմվում է հարցազրույցին մասնակցած թեկնածուների կրճատ հոգեբանական դիմանկարները:

Աշխատանքային խմբի կամ աշխատակազմի տեղաբաշխումը: Վերադասի կամ ղեկավարության վերջնական որոշումից և աշխատանքային խմբի ընտրությունից հետո հոգեբանի առջև դրվում է տեղաբաշխման խնդիրը (եթե նոր ընտրված աշխատակիցները աշխատելու են այլ աշխատակիցների հետ մեկ թիմում) [5]:

Ինչպես նշեցինք, ՄՌԿ-ի առաջնային նպատակը բուհական հաստատությունում այնպիսի անհատների ներգրավումն է, որոնք համատեղում են արժեքավոր մասնագետների և ներկայացված պահանջներին համապատասխանող աշխատողների որակները: Արդյունավետ աշխատուժի ներգրավման առաջին խնդիրը մարդկային ռեսուրսների պլանավորումն է, երբ ընկերության ղեկավարները կամ ՄՌԿ մասնագետները, ելնելով առկա թափուր պաշտոններից, զգում են նոր աշխատողների անհրաժեշտությունը: Երկրորդը՝ անձնակազմի նախնական ընտրությունն ու թեկնածուների հետ հաղորդակցության հաստատումն է: Երրորդ խնդիրը թափուր պաշտոնների հավակնորդներից այն մասնագետների ընտրությունն է, որոնք, կառավարման հոգեբանի կամ անձնակազմի մենեջերի կարծիքով, ունակ են կազմակերպությանն ամենաշատ օգուտը բերելու և իրենց անձնային որակներով համապատասխանում են տվյալ պաշտոնին: Այս դեպքում նոր մասնագետն ընդունվում է աշխատանքի:

Բարձրագույն ուսումնական հաստատությունում նոր աշխատակիցների ներգրավման ջանքերի հիմքում ընկած է համընկնման մոդելը, որին համապատասխան հաստատությունն ու մասնագետը ձգտում են համաձայնեցնել իրենց պահանջները, հետաքրքրությունները և արժեքները: ՄՌԿ մասնագետները փորձում են գտնել երկու կողմերի պահանջների հնարավոր համակցումը [3, 405-408]:

Անձնակազմի ընտրության ժամանակ կիրառվող մեթոդները

Այժմ ուսումնասիրենք այն ուղիները, որոնց միջոցով ՄՌԿ մասնագետները հավաքագրում են համապատասխան կադրեր, և դիտարկենք այն մեթոդները, որոնք կիրառվում են անձնակազմի ընտրության գործընթացում: Ըստ Արդայլոն Կիրանովի՝ անձնակազմի *ընտրությունը* հիմնվում է այնպիսի սկզբունքների վրա, որոնց դիտարկումը կարևոր է գործընթացի արդյունավետությունն ապահովելու համար: Այդ սկզբունքներից մեկը ընտրության գործընթացում ուշադրությունը մարդկանց ուժեղ, այլ ոչ թե թույլ կողմերի վրա սևեռելն է, հատկապես, եթե դրանք գործունեության իրականացման համար մեծ կարևորություն ունեն: Ավելին, ոչ թե պետք է խուսափել կատարյալ թեկնածուներ որոնելուց, այլ անհրաժեշտ է նախապատվությունը տալ նրանց, ովքեր հեռանկարային են և իրենց հոգեբանական տվյալներով համապատասխանում են տվյալ պաշտոնին **[8]**: Այս առումով՝ շատ կարևոր է հստակ ուսումնասիրել ու գնահատել պաշտոնը և տվյալ պաշտոնի գործառույթները, ինչպես նաև՝ աշխատանքը արդյունավետ իրականացնելու համար մասնագետի անհրաժեշտ հոգեբանական որակները, և դրանք նկատի ունենալով՝ համապատասխան աշխատանքային փորձառությամբ թեկնածուների ընտրությունը: Հիմք ընդունելով Ա. Մակլակովի մոտեցումը՝ դիտարկել ենք նաև մասնագետի հոգեբանական ընտրության փուլերը, ըստ որի՝ առանձանցրել ենք երեք փուլ **[9]**:

1. *Մասնագիտական հոգեբանության ընտրության համակարգը մշակելու փուլը*, որի ընթացքում բացահայտվում են մասնագետի որոշակի որակների և հատկությունների զարգացման վերաբերյալ մասնագիտական պահանջները: Յուրաքանչյուր մասնագիտության տիրույթում անձին առաջադրվում են որոշակի պահանջներ: Այնուհետև, որոշվում են մասնագիտական գործունեության արդյունավետության չափանիշները, իսկ հաջորդիվ ընտրվում են հոգեբանական մեթոդները, որոնք հնարավորություն են ընձեռում՝ գնահատելու համապատասխան մասնագիտական կարևոր որակների առկայությունը և դրանց դրսևորվածության աստիճանը: Առաջին փուլում մշակվում է նաև մասնագիտական պիտանելիության համար վերջնական եզրակացության, ինչպես նաև՝ թեկնածուների մասնագիտական և հոգեբանական ընտրության գործընթացի ամբողջական կառուցվածքը:

2. *Մասնագիտական հոգեբանության ընտրության երկրորդ փուլը* գործնական միջոցառումների իրականացումն է: Այն ընդգրկում է նաև թեկնածուների հոգեբանական հետազոտության կազմակերպման գործընթացը, որը հիմնված է առաջին փուլում ընտրված մեթոդիկաների վրա: Այնուհետև, մշակվում են հետազոտության արդյունքները, և անհրաժեշտության դեպքում, իրականացվում են նաև լրացուցիչ հետազոտություններ, օրինակ՝ անհատական զրույց:

3. *Երրորդ փուլը մասնագիտական հոգեբանության ընտրության միջոցառումների արդյունավետության գնահատումն է*, որն իր մեջ ներառում է մի շարք գործընթացներ: Այս փուլում հավաքագրվում են մասնագիտական ընտրություն անցած անձանց գործունեության արդյունավետության մասին տեղեկություններ և համադրվում են ընտրության արդյունքների հետ: Գնահատվում են նաև մասնագիտական հոգեբանական պիտանելիության չափորոշիչները: Հստակեցվում են մասնագիտական հոգեբանական ընտրության կառուցվածքային բաղադրիչները: Այս փուլն ավարտվում է, երբ ուրվագծվում են մասնագիտական հոգեբանական ընտրության համակարգը կատարելագործելու հետագա ուղիները **[1, էջ 42-44]**: Համեմատաբար, նոր ուղղություն է աշխատանքային խմբի անդամների հոգեբանական դիմանկարի կամ պրոֆիլի ստեղծումը **[6, էջ 54]**:

Այս համատեքստում ընդունված է առանձնացնել աշխատանքի իրականացման երկու գործոններ՝ նախ՝ գիտելիքներ, հմտություններ և ունակություններ, որոնք հնարավոր է ձեռք բերել ուսուցման ընթացքում, ապա՝ որակներ, որոնք թույլ են տալիս կիրառել գիտելիքները, կայացնել որոշումներ, հաղթահարել բարդ խնդիրները, շփվել մարդկանց հետ, և այլն: Պրոֆիլի կառուցման

¹ Առավել հաճախ պրոֆիլ ասելով՝ հասկանում ենք մասնագիտական գիտելիք, ունակություններ, հմտություններ, անձնային այլ հատկանիշներ, որոնցով պետք է օժտված լինի անձը տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար:

Ժամանակ հաշվի են առնվում երկու հիմնական դրույթներ՝ կորպորատիվ մշակույթի առանձնահատկությունները, իրականացվող աշխատանքի և դրա իրականացման միջավայրի առանձնահատկությունները: Նախապես հստակեցվում են նաև մասնագետի որակավորման և ի պաշտոնե առաջադրվող պարտականությունների տիրույթներում ներառված սոցիալական և մասնագիտական կարևոր որակները: Դրանք հանգուցային կամ հիմնական ունակություններ են, որոնց դրսևորման չափանիշները կա՛մ կարելի է բացահայտել, կա՛մ մշակել նորերը:

Որպես ամփոփում նշենք, որ աշխատանքային խմբի կամ անձնակազմի նախնական ընտրությունը սկսվում է հաստատության համար անհրաժեշտ աշխատակիցների տեսակների որոշմամբ: Այստեղ առանձնացվում են երեք բաղադրիչներ՝ աշխատանքի բովանդակության վերլուծությունը, պաշտոնի բխող պահանջները և որակավորման պահանջները: Աշխատանքի բովանդակության վերլուծությունը աշխատանքային պարտականությունների մասին տեղեկություններ մշակելու և մեկնաբանելու գործընթացն է:

Վերլուծության անցկացման համար կառավարման հոգեբանները կամ ՄՌԿ մասնագետները պարզում են գործունեության առանձնահատկությունները և աշխատանքի բնույթը, տվյալ պաշտոնի և նրանց ենթակա պաշտոնների նկատմամբ վերահսկողության մակարդակը, պահանջվող գիտելիքն ու հմտությունները, արտադրողականության չափանիշը և աշխատանքային պայմանները: Այնուհետև, կազմվում է *պրոֆեստգրամմա* և *փսիխոգրամմա*, այսինքն՝ առաջադրանքների, պարտականությունների և պատասխանատվության հստակ թվարկում, որի միջոցով ձևավորվում են որակավորման պահանջները՝ գիտելիքները, հմտությունները, կրթվածության մակարդակը, ֆիզիկական ունակությունները, հոգեբանական որակները, անձնային հատկանիշները և այլ բնութագրիչներ [3, էջ 409]: Կոմպետենցիաների [4] դասակարգման մեկ այլ տարբերակ է առաջարկում Ա. Կիբանովը: Նա համապատասխանող մասնագետի հիմնական կարողությունները, ըստ հատկանիշների, առանձնացնում է չորս խմբով՝ *մասնագիտական կոմպետենցիաներ*՝ գիտելիքը, ունակությունները, խնդիրները գտնելու և լուծելու կարողությունը, *մեթոդաբանական կոմպետենցիաները* տեխնիկական են, որոնք օգնում են կիրառելու գիտելիքը, օրինակ՝ վերլուծական, կառուցողական մտածելակերպը, օտար լեզվի իմացությունը, հռետորական խոսքը, *սոցիալական կոմպետենցիաներ*՝ ազատ միջանձնային փոխհարաբերություններ ստեղծելու ունակությունը, *անձնային կոմպետենցիաներ*՝ ինքնավերահսկողությունը, նպատակը, ապրումակցումը [7, էջ 58]:

Պաշտոնի պրոֆիլի և մասնագետի կոմպետենցիայի առանձնացումից հետո կարելի է սկսել համապատասխան թեկնածուների բացահայտումը:

Եզրակացություն

Մարդկային ռեսուրսների կառավարումն ու կադրային քաղաքականությունը, ՀՀ-ում նոր երևույթներ լինելով, առայժմ գտնվում են զարգացման և կայացման փուլերում: Հայաստանյան իրականության մեջ մարդկային ռեսուրսների կառավարումը միանշանակ կարելի է կառավարման նոր գործառույթ համարել: Ուսումնասիրության մեջ ներկայացրել ենք բուհերի մարդկային ռեսուրսների կառավարման մի շարք հիմնադրույթներ, սկզբունքներ, ժամանակակից մոտեցումներ, որոնք բացահայտում են արդի համակարգի կառուցակարգերը: Ամփոփելով տեսական ուսումնասիրության արդյունքները՝ կատարել ենք հետևյալ եզրահանգումները՝

1. Տարբեր երկրներում բուհական աշխատակազմերի հավաքագրման գործընթացները ուսումնասիրելու արդյունքում պարզվում է, որ հավաքագրման և ընտրության գործընթացներում ճիշտ մարդկանց, ճիշտ ժամանակին, ճիշտ պաշտոնում նշանակելը ամենապատասխանատու գործընթացներից մեկն է, որին բախվում է ցանկացած հաստատություն: Հետևաբար ցանկացած ՄՌԿ ղեկավարի խնդիրն է աշխատանքի դիմած մի շարք թեկնածուներից ընտրել կոնկրետ անձի՝ կոնկրետ հաստիքի համար՝ օգտվելով անձի հոգեբանական որակները բացահայտող բազմաթիվ մեխանիզմներից և հնարքներից:

2. Ընտրությունից հետո, նորեկների հարմարումը կազմակերպելու առումով, հիմք ընդունելով միջազգային փորձը, անհրաժեշտ է իրականացնել մի շարք միջոցառումներ, ինչպիսիք են՝ կողմնորոշող սեմինարների, մասնագիտական վերապատրաստումների անցկացումը,

աշխատողների և կազմակերպության հիմնական նորմերին և օրենքներին ծանոթացնելը: Աշխատանքային գործընթացում աշխատակիցների ներգրավմանը նպաստող կամ խանգարող հոգեբանական գործոնների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ նոր աշխատակիցների հավաքագրման և ընտրության գործընթացում նախևառաջ հարկավոր է հաշվի առնել թեկնածուների հարմարման համար անհրաժեշտ պայմանները՝ հիմք ընդունելով նրանց աշխատանքային փորձառությունը: Տարբեր ուսումնասիրություններից պարզում ենք, որ առավել քիչ փորձառություն ունեցող անձանց ներգրավման գործընթացը պլանավորելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ նրանք, հնարավոր է, առավել դժվար հարմարվեն աշխատանքային պայմաններին (օրինակ՝ աշխատաժամերին), և դրանից բխեցնելով, պետք է փորձել առավել ճկուն լինել նախնական շրջանում: Ինչ վերաբերում է առավել շատ աշխատանքային փորձառություն ունեցող անձանց հավաքագրելուն և նրանց հարմարման գործընթացը պլանավորելուն, ապա պետք է հաշվի առնել, որ նրանք նույնպես, սովորաբար, առավել դժվար են միջանձնային փոխհարաբերություններ հաստատում:

3. Մասնագետի անհատական առանձնահատկություններից և աշխատանքային գործունեության ընթացքում նրանց անձնային որակներից, ինչպես նաև՝ հարմարման գործընթացների հետազոտություններից դատելով՝ կարող ենք եզրակացնել, որ մինչև չորս տարվա աշխատանքային փորձառություն ունեցող անձանց մոտիվացնում է ազատության հանգամանքը. որքան ազատ են աշխատանքային միջավայրում, ինքնուրույն և անկախ՝ որոշումներ կայացնելու հարցում, այնքան բարձր է նրանց ձգտումը նպատակին: Ինչ վերաբերվում է չորս տարուց ավելի աշխատանքային փորձառություն ունեցող անձանց մոտիվացիային, ապա նրանց կարելի է տալ կառավարելու և իշխելու հնարավորություն, ինչը կնպաստի նոր աշխատավայրին առավել հեշտ հարմարվելուն:

4. Անձի կարիերայի գերիշխող ուղղորդվածությունը և արժեքները ու նոր աշխատանքային պայմաններին հարմարվելու հետ դրանց կապը ուսումնասիրելով՝ կարող ենք ասել, որ նոր աշխատակիցներ հավաքագրելիս աշխատանքային ավելի քիչ փորձառություն ունեցող թեկնածուները փորձում են ներգրավել կյանքի տարբեր ոճեր և ակնկալում են գործընկերներին աջակցելու միջոցով հետագայում գրանցել մասնագիտական աճ, նրանք մարտահրավերներ են ընդունում և ձգտում ավելիին: Ի տարբերություն աշխատանքային այդ խմբի՝ ղեկավար պաշտոնի համար անհրաժեշտ է հավաքագրել աշխատանքային առավել շատ փորձառություն ունեցող մասնագետների, որը հնարավորություն կտա նրանց կառավարելու այլ մարդկանց:

5. Նոր աշխատավայրում մասնագետի սոցիալ-հոգեբանական հարմարման ու դրա հետ կապված անձնային հատկանիշների դրսևորման կապը բացահայտելով՝ պարզեցինք, որ առավել քիչ փորձառություն ունեցող անձանց հարմարման գործընթացը, ի տարբերություն առավել շատ փորձառություն ունեցողների, ավելի դյուրին է ընթանում:

6. Հոգեբանական որակների փոխապայմանավորվածության վերլուծության արդյունքում եկանք այն եզրահանգման, որ նոր աշխատակիցներ հավաքագրող կառավարման հոգեբանը կարող է ընտրել առավել քիչ փորձառություն ունեցող անձի, քանի որ նման թեկնածուն, որպես կարիերայի ուղղորդվածություն, ընտրում է ծառայելը, գործընկերներին օգտակար լինելը և թիմային աշխատանք իրականացնելը: Նման թեկնածուները ունեն լավ արտահայտված հուզական զսպվածություն, առավել նախաձեռնող են, պատրաստ են մարտահրավերներ ընդունելուն, ինչի արդյունքում էլ նոր միջավայրում նրանց հարմարվելու գործընթացը առավել դյուրին է ընթանում: Ի տարբերություն վերոնշյալ խմբի՝ աշխատանքային առավել շատ փորձառություն ունեցող անձանց աշխատանքի ընդունելիս կառավարման հոգեբանը պետք է հաշվի առնի, որ նման թեկնածուները սովորաբար ձգտում են ազատության, և այս դեպքում նրանց մոտ նկատվում է նվազ կայունություն, քանի որ նրանք նախաձեռնող են և աշխատանքային փորձի շնորհիվ՝ մասնագիտորեն առավել կոմպետենտ, ինչի արդյունքում էլ նրանց մոտ առաջանում է իշխելու, գործընկերներին կառավարելու ձգտում:

Գրականության ցանկ

1. Ռ. Աղուզումյան, Լ. Պետրոսյան, Ս. Պողոսյան, Ա. Խաչատրյան, Կառավարիչների հոգեբանական ընտրության գործընթացի առանձնահատկությունները, Ե., Կառավարման ակադեմիա, 2016, 208 էջ:
2. Մ. Պետրոսյան, Ա. Զավադյան, Դ. Ամիրյան, Անձը և պաշտոնը, Ե., «Պետական ծառայություն» հրատ., 2013, 343 էջ:
3. Ա.Ա. Հովհաննիսյան, Մենեջմենթի հիմունքներ, Ե., Հեղ. հրատ., 2015, 616 էջ:
4. Մ. Մ. Ռոզենտալ, ՄՌ կառավարման բացատրական բառարան (Կասկադ Քնսալթինգ), Երևան, 2012, 68 էջ:
5. Бегоян А.Н., Место и роль психолога в отделе управления человеческими ресурсами// Экономическая психология: прошлое, настоящее, будущее: Материалы международной научно-практической конференции 12-13 октября 2011 г. / под ред. В.А. Динеса, А.Н. Неверова, В.А. Русановского - Саратов: СГСЭУ, 2011.; стр. 262-264.
6. Dessler, Gary, Human Resources Management (8th Edition), New Jersey, Prentice Hall; 2000, p. 54. 736p.
7. Кибанов А.Я., Дуракова И.Б., Управление персоналом организации:актуальные технологии найма, адаптации и аттестации, Кнорус, Москва, 2012, 368 с.
8. Коноваленко, М.Ю., Психология управления персоналом: учебник для академического бакалавриата / М. Ю. Коноваленко, А.А. Соломатин. 2-е изд. Москва: Издательство Юрайт, 2019. 369с.
9. Маклаков А., Общая психология: Учебник для вузов.- СПб.: Питер, 2016, 583с.

ТУРГОР КЛЕТКИ - КЛЮЧ К ПОНИМАНИЮ АДАПТАЦИОННЫХ МЕХАНИЗМОВ ПРИ МИГРАЦИИ ТЯЖЕЛЫХ МЕТАЛЛОВ В РАСТЕНИЯХ

АСТГИК СУКИАСЯН

Национальный политехнический университет Армении
кафедра общей химии и химических технологий
Институт горной металлургии и химических технологий
доктор технических наук, доцент
sukiasyan.astghik@gmail.com

Аннотация

Охрана окружающей среды от загрязнений является важнейшей задачей в сфере обеспечения экологической безопасности и устойчивого развития различных территорий и общества. При этом анализ сложившейся экологической ситуации, с выявлением пространственно-временных изменений в ней, является на сегодняшний день актуальной задачей.

На первый план выносятся задача оценки распространенности и накопления тяжелых металлов (ТМ), как наиболее опасных для природной среды химических загрязняющих веществ, на фоне глобальных климатических изменений. С другой стороны, необходимое количество воды и ее доступность для растений является важным экологическим составляющим в окружающей среде. Наряду с повышением потребности воды ее доступность с каждым годом снижается, тем самым необходимость в получении засухоустойчивых растений становится актуальной.

Дефицит воды нарушает многие функции растений как на уровне клеточного метаболизма, так и для растения в целом. Кроме того, продолжительность дефицита воды вызывает стресс у растений, который выражается в изменении скорости их роста и последующем развитии почти на всех физиологических стадиях. Для нормального роста и развития растений необходима поддержка на физиологически приемлемом уровне определенного водного баланса, что в дальнейшем будет способствовать выработке у растений устойчивости к факторам внешней среды. Корневая система растения способна регулировать поступление в него воды, которая насыщена различными ТМ, что, может привести к осмотическому шоку внутри растительного организма.

Нарушение водного обмена растительной клетки является результатом тургора и обусловлено напряжением и релаксацией клеточных стенок наблюдаемых в присутствии высоких концентраций ТМ. Тургор, являясь критическим фактором в регуляции роста растительной клетки, необходим для обеспечения клеточного расширения, и, следовательно, в значительной степени зависит от расширяемости клеточной стенки. Адаптационный механизм у растений ограничивает потерю воды путем снижения транспирационной поверхности листа. В проведенных экспериментах с целью определения степени напряженности оболочек растительной клетки при засухе измерялось ее тургорное давление, как внутреннее давление клетки, возникающее в результате осмоса. Расширение стенок клетки было больше, когда уровень стресса растений увеличивался, так как именно тургор контролирует расширение клеток растений.

Это может быть связано с разницей концентраций растворенных в воде веществ между внутренней и внешней сторонами клетки. Во время понижения тургора, вызванного засухой, наблюдается снижение, а в некоторых случаях и прекращение роста растения, путем уменьшения растяжимости и расширение его клеток.

Определение величины тургора, прежде всего, актуально при экологических исследованиях, так как возможно оценить максимальную способность растения поглощать воду из почвы и удерживать ее. В этом контексте величина тургора может являться одной из геоэкологических характеристик зоны произрастания данного вида растения на предмет ее загрязненности ТМ.

Ключевые слова и словосочетания: тургор, клетка, тяжелые металлы, засуха, растения, механизмы адаптации, экология.

**ԲԶՋԻ ՏՈՒՐԳՈՐԸ՝ ՈՐՊԵՍ ԲՈՒՅՍԵՐՈՒՄ ԾԱՆՐ ՄԵՏԱՂՆԵՐԻ
ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԲԱՆԱԼԻ**

ԱՍՏԴԻԿ ՍՈՒՔԻԱՅԱՆ

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան
ընդհանուր քիմիայի և քիմական տեխնոլոգիաների ամբիոն
լեռնամետալուրգիայի և քիմիական տեխնոլոգիաների ինստիտուտ
տեխնիկական գիտությունների դոկտոր, դոցենտ
sukiasyan.astghik@gmail.com

Համառոտագիր

Շրջակա միջավայրի պաշտպանությունը կարևորագույն խնդիր է հասարակության կենսագործունեության անվտանգության ապահովման համար: Այդ պատճառով հրատապ հարց է ներկայիս էկոլոգիական իրավիճակի վերլուծությունը տարածա-ժամանակային փոփոխությունների բացահայտմամբ:

Կլիմայի գլոբալ փոփոխության պայմաններում առաջնահերթ է ծանր մետաղների՝ որպես բնական միջավայրի ամենավտանգավոր քիմիական աղտոտիչների տարածվածության և կուտակման գնահատման խնդիրը: Մյուս կողմից՝ ջրի անհրաժեշտ քանակությունը և բույսերի համար դրա հասանելիությունը համարվում են շրջակա միջավայրի անհրաժեշտ էկոլոգիական բաղադրիչներ: Սակավաջրության պայմաններում երաշտադիմացկուն բույսերի կիրառման անհրաժեշտությունը դառնում է արդիական:

Զրի անբավարարությունը խաթարում է բույսերի բազմաթիվ գործառույթներ բջջային նյութափոխանակության մակարդակում: Բացի այդ՝ տևական երաշտի պայմաններում բույսերի մոտ առաջացնում է սթրես, որը արտահայտվում է բոլոր ֆիզիոլոգիական փուլերում աճի տեմպի և հետագա զարգացման փոփոխություններով: Բույսերի բնականոն աճի և զարգացման համար անհրաժեշտ է որոշակի պահպանել ջրային հավասարակշռություն ֆիզիոլոգիայես ընդունելի մակարդակում, ինչը հետագայում կնպաստի շրջակա միջավայրի գործոնների նկատմամբ բույսերի հարմարվողականության զարգացմանը: Բույսի արմատային համակարգը կարգավորում է ջրի ներծծումը՝ հագեցած տարբեր ծանր մետաղներով՝ առաջացնելով նրանում օսմոտիկ սթրես:

Բուսական բջջի ջրափոխանակության խախտումը տուրգորի արդյունք է՝ պայմանավորված բջջային պատերի լարվածությամբ և դրանց թուլացմամբ: Այս երևույթը դիտվում է ծանր մետաղների բարձր կոնցենտրացիաների դեպքում: Տուրգորը, լինելով բույսերի բջիջների աճի կարգավորման կարևոր գործոն, էական է բջիջների ընդլայնման համար և մեծապես կախված է բջջային պատի ճկունությունից: Բույսերի հարմարվողական մեխանիզմը սահմանափակում է ջրի կորուստը՝ նվազեցնելով տերևի մակերեսից ջրի գոլորշիացումը: Կատարված հետազոտություններում երաշտի ժամանակ բույսերի բջջաթաղանթների լարվածության աստիճանը որոշելու համար որոշվել է դրանց տուրգորային ճնշումը՝ որպես օսմոսից առաջացող բջջի ներքին ճնշում: Բջջային պատի ընդլայնումն ավելի մեծ է եղել, երբ բույսերի սթրեսի մակարդակը մեծացել է, ինչը վերահսկում է բույսերի բջիջների ընդլայնումը: Դա կարող է պայմանավորված լինել ջրի մեջ լուծված նյութերի կոնցենտրացիաների տարբերությամբ՝ բջջի ներքին և արտաքին կողմերի միջև: Երաշտի հետևանքով առաջացած տուրգորի նվազման ժամանակ նկատվում է բույսի աճի նվազում, իսկ որոշ դեպքերում՝ դադար:

Տուրգորի արժեքի որոշումը առաջնահերթ անհրաժեշտություն է էկոլոգիական հետազոտություններում, քանի որ հնարավորություն է տալիս գնահատելու բույսի կարողությունը հողից ջուր կլանելիս և այն պահպանելիս: Այս համատեքստում տուրգորի արժեքը կարող է լինել տարբեր երկրաբնապահպանական գոտիներում աճող տվյալ բուսատեսակի բնութագրիչներից մեկը՝ ելնելով ծանր մետաղներով աղտոտվածության աստիճանից:

Բանալի բառեր և բառակապակցություններ. տուրգոր, բջիջ, ծանր մետաղներ, երաշտ, բույս, հարմարվողական մեխանիզմներ, էկոլոգիա:

CELL TURGER AS A KEY TO UNDERSTANDING THE ADAPTATION MECHANISMS DURING HEAVY METAL MIGRATION INTO PLANTS

ASTGHIK SUKIASYAN

The National Polytechnic University of Armenia
Department of General Chemistry and Chemical Technology
Institute of Mining Metallurgy and Chemical Technologies
Doctor of Technology, Associate Professor
sukiasyan.astghik@gmail.com

Abstract

Protection of the environment from pollution is the most important task in the field of ensuring environmental safety and sustainable development of various territories and societies. At the same time, the analysis of the current ecological situation, with the identification of spatio-temporal changes in it, is an urgent task today.

The task of assessing the prevalence and accumulation of heavy metals (HM) as the most dangerous chemical pollutants for the natural environment, against the backdrop of global climate change, comes to the fore. On the other hand, the required amount of water and its availability for plants is an important ecological component in the environment. Along with the increase in water demand, its availability decreases every year thus the need for obtaining drought-resistant plants becomes relevant.

Water deficiency disrupts many plant functions, both at the level of cellular metabolism and the plant as a whole. In addition, the duration of water deficit causes stress in plants. This is expressed in a change in their growth rate and subsequent development at almost all physiological stages. For the normal growth and development of plants, it is necessary to maintain a certain water balance at a physiologically acceptable level, which in the future will contribute to the development of plant resistance to environmental factors. The root system of a plant is able to regulate the flow of water into it, which is saturated with various HMs, which leads to osmotic shock inside the plant organism.

Violation of the water metabolism of the plant cell is the result of turgor and is due to the tension and relaxation of the cell walls observed in the presence of high concentrations of HM. Turgor, being a critical factor in the regulation of plant cell growth, is essential for cell expansion and therefore is highly dependent on cell wall extensibility.

An adaptation mechanism in plants limits water loss by reducing the transpiration surface of the leaf. In the experiments, in order to determine the degree of tension of the plant cell membranes during drought, its turgor pressure was measured, as the internal pressure of the cell resulting from osmosis. Cell wall expansion was greater when plant stress levels increased, as it is a turgor that controls plant cell expansion. This may be due to the difference in concentrations of substances dissolved in water between the inner and outer sides of the cell. During the decrease in turgor caused by drought, there is a decrease, and in some cases cessation of plant growth by reducing the extensibility and expansion of its cells.

Determination of the turgor value is, first of all, relevant in ecological studies since it is possible to assess the maximum ability of a plant to absorb water from the soil and retain it. In this context, the turgor value may be one of the geoecological characteristics of the growth zone of a given plant species in terms of its contamination with HMs.

Keywords and phrases: turgor, cell, heavy metals, drought, plant, adaptation mechanisms, ecology.

Введение

Охрана окружающей среды от загрязнений является важнейшей задачей в сфере обеспечения экологической безопасности и устойчивого развития различных территорий и общества. При этом анализ сложившейся экологической ситуации, с выявлением пространственно-временных изменений в ней, является на сегодняшний день актуальной задачей. Важнейшим негативным проявлением является техногенное химическое загрязнение окружающей среды, ее косных и живых компонентов, в том числе человека [1]. На первый план выносятся задача оценки распространенности и накопления тяжелых металлов (ТМ), как наиболее опасных для природной среды химических загрязняющих веществ, на фоне глобальных климатических изменений.

С другой стороны, необходимое количество воды и ее доступность для растений является важным экологическим составляющим в окружающей среде. Абиотический стресс – засуха, являясь периодом сухой погоды, приводит к дефициту водных ресурсов почвы и, как следствие, в окружающей среде возникают необратимые последствия, прежде всего для растительных организмов. Дефицит воды нарушает многие функции растений как на уровне клеточного метаболизма, так и для растения в целом, оказывая отрицательное влияние на многие физиологические процессы, обеспечивающие рост и развитие.

ТМ относятся к числу важнейших, приоритетных загрязнителей природных сред, токсичность которых может быть обусловлена в равной степени проявлением их как физическими, так и химическими особенностями: электронной конфигурацией, электроотрицательностью, ионизацией, величиной окислительно-восстановительного потенциала, сродством к отдельным химическим группам, а также способностью проникать через клеточную мембрану, образуя прочные соединения на поверхности и внутри клетки [2, 3]. Показано, что именно нарушение метаболического баланса влияет на распределение активности кальция Ca^{2+} и других сигнальных процессов в растительной клетке [4]. А ионы кальция можно заменить трехвалентным Al^{3+} , а также другими двухвалентными катионами ТМ, включая Pb^{2+} , Cu^{2+} , Cd^{2+} и Zn^{2+} [5].

Структура клеточной стенки влияет на транслокацию ТМ в ксилеме – проводящей ткани растений, которая переносит воду и растворы минеральных солей, способствуя их накоплению внутри растения от корней по всем органам растения, тем самым обеспечивая ему опору. Одним из преимуществ осаждения ТМ в клеточной стенке является их сильная метаболическая инактивация. Как избыток, так и недостаток ТМ вызывают опасные и необратимые процессы в растительных клетках, и могут быть токсичными даже при их относительно низких концентрациях. Образующиеся в клеточной стенке под действием ТМ свободные радикалы могут действовать как специфический окислитель, способствующий ослаблению клеточной стенки, поддерживая расширение клеток [6]. Тургор, являясь критическим фактором в регуляции роста растительной клетки, необходим для обеспечения клеточного расширения, и, следовательно, в значительной степени зависит от расширяемости клеточной стенки. Водный стресс приводит к уменьшению тургора, вызывая замедление, а в некоторых случаях и прекращение роста растения, так как при этом уменьшается клеточная растяжимость и расширение ее стенок [7].

Очевидно, что определение величины тургора, прежде всего, актуально при экологических исследованиях, так как возможно оценить максимальную способность растения поглощать воду из почвы и удерживать ее. В этом контексте величина тургора может являться одной из геоэкологических характеристик зоны произрастания данного вида растения на предмет ее загрязненности ТМ.

Материалы и методы исследований

В экспериментах использовалась ползубовидная сахарная кукуруза армянской популяции (*Zea mays L.*), выращенная в четырех отличных по экогеохимическим показателям регионах Армении: Лорийский марз вдоль реки Дебет (Одзун – 41°03'06" с.ш. 44°36'55" в.д., Шнох – 41°08'52" с.ш. 44°50'16" в.д., Техут – 41°07'05" с.ш., 44°50'45" в.д.), Армавирский марз вблизи реки Аракс (Ушакерт – 40°04'52" с.ш., 43°55'35" в.д.). В качестве контрольного растения – кукуруза инбредной линии В73 (Iowa Stiff Stalk Synthetic) [8], предоставленная факультетом биологии университета Антверпена, Бельгия.

Абиотический стресс (засуха) моделировался путем контроля относительной влажности почвы (ОВП), установленным регламентом режима полива почвы. В контрольных вазонах оптимальная ОВП составляла 54%, в случае умеренной засухи ОВП составляла 43%, при этом визуально не наблюдалось увядания листьев растения. Во время моделирования сильной засухи ОВП составляла 34%, и наблюдалось увядание листьев в течение дня [9]. Инструментальное измерение осмотического потенциала воды осуществлялось потенциометрическим методом с помощью восьмиканального автоматизированного прибора PSYPRO (WESCOR Inc., USA) с использованием камеры WESCORC-52, предназначенного для измерения потенциала воды растительной ткани. Измерение осуществлялось в следующей последовательности. Свежий срез 5-го листа растения диаметром 9 мм помещался в камеру WESCOR C-52, и фиксировалось значение водного потенциала (МПа) при комнатной температуре ($\Psi_{\text{водный потенциал}}$).

Затем полученный срез растительного материала помещался в контейнер, закрывался крышкой и погружался в жидкий азот на 1-2 мин. По истечению времени контейнер доставался, и производились те же инструментальные измерения осмотического потенциала растительной ткани (МПа) ($\Psi_{\text{осмотическое давление}}$). Вычислялась разница между двумя измерениями как тургор ($\Psi_{\text{тургор}}$) растительной клетки:

$$\Psi_{\text{тургор}} = \Psi_{\text{водный потенциал}} - \Psi_{\text{осмотическое давление}}$$

Аналогичным образом была определена величина тургора свежесрезанного 5-го листа кукурузы при условиях засухи.

На следующем этапе исследований были количественно определены концентрации некоторых ТМ в образцах триады вода-почва-растение. Подготовленные образцы кукурузы по ГОСТ-у 10847-74 (Зерно. Методы определения зольности), воды по ГОСТ-у 31861-2012 (Вода. Общие требования к отбору проб) и почвы по ГОСТ-у 17.4.1.02-83 (Охрана природы. Почвы. Классификация химических веществ для контроля загрязнения) помещались в специальные пластмассовые трубки «XRF Sample Cups» диаметром 32 мм, на дно которых заранее вставлялась специальная полипропиленовая пленка. Сверху образца вставлялся специальный уплотнитель и крышкой прессовался образец до нужного состояния. Исследование образца осуществлялось направлением X-лучей непосредственно на образец в общей сложности до 210 сек. с помощью портативного анализатора «Thermo Scientific™ Niton™ XRF Portable Analyser» (США) [10]. Все проведенные эксперименты имели 10 биологических и до 5 технических повторностей и статистически обработаны [11].

Результаты и их обсуждение

Армения отличается большим разнообразием геоэкологических зон, а интенсивная эксплуатация природных ресурсов в последнее время вызывает определенные риски для окружающей среды [12]. Рост растений в различных геоэкологических условиях позволяет получать информацию о качестве среды произрастания, так как последнее требует согласованного поглощения воды и необратимого расширения клеточной стенки при увеличении клеток. А засуха или обезвоживание приводят к стрессу, вызванному дефицитом воды в клетке, создавая такие физиологические изменения, как изменения тургора, осмотического потенциала и интенсивности лиственной транспирации. При этом адаптационные механизмы растений регулируют вызванные изменения путем ограничения потери воды с поверхности листьев (транспирация) [13].

Нами были изучены некоторые физиологические особенности роста кукурузы, выращенной в различных почвенно-климатических условиях Армении. С этой целью определялась скорость роста растения по изменению длины его пятого листа, которая измерялась ежедневно в одно и то же время и рассчитывалась как степень удлинения листа (СУЛ) во время стационарного роста растения в течение трех дней после появления. Полученные результаты представлены на рис. 1, согласно которым армянские образцы отличались по скорости произрастания по сравнению контролем В73.

Условно их можно разделить на две группы: быстро (образцы из Техута и Одзуна) и медленно растущие (образцы из Шноха и Ушакерта). Значение СУЛ для растений из первой группы превышало значение по сравнению с контролем (В 73) в среднем на 38%, а для второй группы изменение было незначительным. Умеренный стресс вызвал замедление роста у армянских образцов, но, по сравнению контролем, СУЛ был больше в среднем на 15%. При сильной засухе наблюдаем снижение скорости роста у всех образцов, хотя по сравнению с контрольным растением значение СУЛ уменьшилось в среднем на 4%. Совершенно иная ситуация наблюдается у образца из Ушакерта. В обоих случаях моделируемой засухи скорость его роста составила в среднем 37%. Анализ полученных результатов выявил кинетические особенности замедления роста растений по изменению морфологических показателей. Сильный стресс, связанный с минимальным количеством поглощаемой воды, вызывает упругие деформации и/или примыкающие к упругой деформации. Расширение стенок клетки было больше, когда уровень стресса растений увеличился, так как именно тургор контролирует расширение клеток растений. Это может быть связано с разницей концентраций растворенных в воде веществ между внутренней и внешней сторонами клетки.




Рис. 1. Скорость роста кукурузы (*Zea mays L.*) из различных почвенно-климатических регионов Республики Армения при моделируемой засухе

Действующее на клеточную стенку давление противодействует внутренней силе клетки и, как следствие, клетка находится в состоянии растяжимого напряжения [14]. При росте стенка растительной клетки расширяется за счет тургора и всякий раз, когда концентрация растворенных веществ в растительной клетке возрастает, давление повышает тургор. Полученные результаты по определению величины тургора представлены на рис. 2, согласно которым абиотический стресс вызвал неодинаковую реакцию.






Рис. 2. Значения водного потенциала, осмотического давления и тургора при моделируемой засухе в образцах кукурузы (*Zea mays L.*) из различных почвенно-климатических регионов Республики Армения

Очевидный факт в данном контексте засуха/обезвоживание вне зависимости от природы своего происхождения приводит к стрессу – дефициту воды, который определяется как дисбаланс между наличием воды в почве и испарением. Отсюда можно заключить, что тургор является той физической силой (давлением), которая и способна вызвать расширение растительной клетки, следовательно, является решающим фактором в регуляции клеточного роста. Во время понижения тургора, вызванного засухой,


наблюдается снижение, а в некоторых случаях и прекращение роста растения, путем уменьшения растяжимости и расширения его клеток. Следует четко прояснить, что расширение клетки происходит только тогда, когда тургор больше пороговой текучести клеточной стенки. Механизм адаптации растения допускает потерю определенного количества воды при транспирации с поверхности листьев.

Бойд выдвинул гипотезу об экологических функциях у гипераккумуляторных растений, где ключевыми являются две позиции: допуск/утилизация металла и устойчивость к засухе. При этом металлическая гипертолерантность является примером экстремальной абиотической стрессоустойчивости растений, что скорее является способом защиты животных и/или патогенов [15]. С учетом данной гипотезы был проведен сравнительный анализ ответной реакции кукурузы на засуху по показателям его толерантности к стрессу и ряду биогеохимических коэффициентов [10]. Последние представлены в виде отношений содержания ТМ в образцах воды, почвы и растения. На рисунке 3 (1-7) представлены некоторые из сравнительных диаграмм для Pb (1), Cd (2), Zn (3), Mn (4), Cr (5), Co (6), Mo (7) в исследуемых регионах.


1) **Pb**




2) **Cd**




5) **Cr**



3) **Zn**



6) **Co**



4) **Mn**

7) Mo




Рис. 3. Сравнительная диаграмма биогеохимических коэффициентов для Pb (1), Cd (2), Zn (3), Mn (4), Cr (5), Co (6), Mo (7) при жестком стрессе засухи кукурузы (*Zea mays L.*) из различных почвенно-климатических регионов Республики Армения

В процессах поглощения Cd, Zn и Cu кукуруза проявляет гипераккумулятивные свойства, при этом сильная засуха не является барьерным фактором процессов накопления данных ТМ. На данный факт указывает и подвижность элементов в системе почва-растение вне зависимости от почвенно-климатических условий произрастания растения. Далее сравнительный анализ по значениям коэффициентов миграции Co, Mn и Pb в образцах воды, почвы и растения выявил схожесть в тенденции процессов поглощения. Так, в Одзуне, а в Шнохе в большей степени, установлено повышенное содержание данных ТМ в почве, но дефицит воды является лимитирующим фактором их накопления в кукурузе. При этом четко выражена зависимость накопительной активности ТМ от почвенно-климатических условий произрастания растения. Повышенная подвижность Cr в системе почва-растение свидетельствует о доминирующей активности его накопления в Техуте и Шнохе, где отмечена повышенная реакция кукурузы на засуху.

Заключение

Таким образом, тургор позволяет оценивать количество поступивших и растворенных в воде веществ в растительную клетку. А так как ТМ разбавляются в поступающей воде, то клетка начинает расширяться и достигать равновесного состояния. В проведенных нами экспериментах данные изменения отображаются и на физиологическом уровне, регулируя скорость роста растения. Можно предположить, что вопросы экологической устойчивости и адаптации растений в итоге сводятся к всестороннему исследованию механизмов обмена веществ, а морфологические изменения в растениях в условиях дефицита воды, являются результатом изменений в клеточных стенках растений. Данные измерения, основанные на определении влагообеспеченности как разности водного потенциала и осмотического давления, имеет практическое значение [16].

Список литературы

1. Nagajyoti P.C. Lee, K.D., Srekanth T.M. Heavy metals, occurrence and toxicity for plants. A review // *Environmental Chemistry Letters*, 2010, V.8, №3. pp. 199–216
2. Akram S., Najam R., Rizwani G.H., Abbas S.A. Determination of heavy metal contents by atomic absorption spectroscopy (AAS) in some medicinal plants from Pakistani and Malaysian origin // *Pak J Pharm Sci*. 2015. V. 28(5), pp.1781-1787
3. Bielen A., Remans T., Vangronsveld J., Cuypers A. The influence of metal stress on the availability and redox state of ascorbate, and possible interference with its cellular functions // *International Journal of Molecular Sciences*. 2013. V.14 (3). pp. 6382–6413
4. Nowińska K., Adamczyk Z. Mobilność pierwiastków towarzyszących odpadom hutnictwa cynku i ołowiu w środowisku // *Górnictwo i Geologia*, Accessed, 2016, V.8 (1), pp. 77-87
5. Dronnet V.M., Renard C.M.G.C., Axelos M.A.V., Thibault J.F. Heavy metal binding by pectins: Selectivity, quantification and characterization // *Carbohydr. Polym.*, 1996, V.30, pp. 253–263
6. Appenroth K.J. What are “heavy metals” in plant sciences? // *Acta Physiol. Plant* 2010, V. 32, pp. 615–619.
7. Tangahu B.V, Abdullah S.R.S., Basri H., Idris M. et al. A review on heavy metals (As, Pb, and Hg) uptake by plants through phytoremediation // *International Journal of Chemical Engineering*, 2011, V. 2011, pp. 1– 32
8. McMullen M.D. et al. Genetic Properties of the Maize Nested Association Mapping Population // *Science*, 2009, V. 325(737), pp. 737–740
9. Сукиасян А.Р., Тадевосян А.В., Нагдалян А.Г., Багдасарян Т.С. Транспирация как критерий оценки абиотического стресса // *Вестник НПУА, Серия Гидрология и гидротехнология*, 2015, №2, С. 9-14
10. Сукиасян А.Р. Новый подход определения фактора экологического риска // *Юг России: экология, развитие*, 2018, № 4, С. 108-118. DOI: 10.18470/1992-1098-2018-4-108-11819
11. Коросов А.В. Горбач В.В. Компьютерная обработка биологических данных // *Издательство ПетрГУ*, 2017, 97 с
12. Сагателян А.К. Особенности распределения тяжелых металлов на территории Армении: Монография. – Ер.: Изд-во Центра экологоноосферных исследований НАН РА, 2004. - 154 с
13. Sheikh F.A., Dar Z.A., Sofi P.A, Lone A.A. Recent advances in breeding for abiotic stress (drought) tolerance in maize // *International Journal of Current Microbiology and Applied Sciences*, 2017, V. 6(4), pp. 2226–2243268
14. Xianjun P. et al. Improved drought and salt tolerance of *Arabidopsis thaliana* by transgenic expression of a novel DREB gene from *Leymus chinensis* // *Plant Cell Rep*. 2011, V. 30(8), pp. 1493–150
15. Boyd R.S. The defense hypothesis of elemental hyperaccumulation: status, challenges and new directions. *Plant and Soil*, 2007, V.293, pp. 153–176
16. Արտոնագիր № 3060 А: Բույսի խոնավապահովվածության աստիճանի որոշման եղանակ / Ա.Ռ. Սուքիասյան, Ա.Վ. Թադևոսյան, Ա.Ա. Կիրակոսյան, Գ. Պ. Փիրումյան - Գրանցված է 16.11.16:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ (1991-2021 ԹԹ.)

ԼԻԼԻԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
գիտակրթական միջազգային կենտրոն
պատմության ինստիտուտ

Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմության բաժնի ավագ գիտաշխատող
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
lilit.hovhannisyana@isec.am; lilitovannisian@yahoo.com

Համառոտագիր

1991 թ. Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումով նորագույն ժամանակների Հայոց պետականության պատմությունը թևակոխեց նոր փուլ: Ազգային անկախության պայմաններում լայն հնարավորություններ բացվեցին Հայաստանյան պատմագիտության առջև կոմունիստական գաղափարախոսության կապանքներից ազատ անաչառ հետազոտություններ իրականացնելու Հայոց պատմության բոլոր փուլերի հիմնախնդիրների վերաբերյալ: Դրանց թվում գիտական և գործնական առանցքային նշանակություն ունի Հայկական հարցի պատմության ուսումնասիրումը:

Անցած երեսնամյակի ընթացքում հայաստանյան պատմաբանների աշխատություններում այդ բազմաշերտ հիմնահարցը վերլուծության է ենթարկվել իր բովանդակության երեք դրսևորումներով՝ որպես համաթուրքականության գաղափարախոսությունից բխող հայ ժողովրդի ֆիզիկական ոչնչացման, Հայաստանի հայաթափման թուրքական պետական քաղաքականության հարց, որպես միջազգային դիվանագիտության հարց և որպես թուրքական հայաջինջ քաղաքականության դեմ հայ ժողովրդի ազատագրական պայքարի, Արևմտյան Հայաստանի նկատմամբ հայ ժողովրդի արդար իրավունքների՝ Հայոց պահանջատիրության բավարարման հարց: Առանձնակի ուշադրություն է դարձվել 1878-1923 թվականներին միջազգային դիվանագիտության կողմից մշակված ու կնքված ծրագրերում և պայմանագրերում Արևմտյան Հայաստանի բարենորոգումների, ապա ինքնավարության և անկախության, այնուհետև արևմտահայերի՝ որպես Թուրքիայի ազգային փոքրամասնության, իրավունքների պաշտպանության գաղափարների ամրագրմանը: Դրանց թվում առավելապես կարևորվել է 1920 թ. Սևրի պայմանագրի, Վ. Վիլսոնի իրավարար վճռի, 1921-1923 թթ. Մոսկվայի ու Կարսի, Լոնդոնի և Լոզանի պայմանագրերի պատմաիրավական նշանակության վերագնահատումը (Գ. Գալոյան, Է. Զոհրաբյան, Ա. Հակոբյան, Հ. Հակոբյան, Ա. Մարության, Ա. Պապյան, Լ. Հովհաննիսյան):

Համակողմանի վերլուծության է ենթարկվել մեծ տերությունների քաղաքականությունը Հայկական հարցում (Հ. Ավետիսյան, Գ. Գալոյան, Ա. Մելքոնյան, Ե. Սարգսյան, Լ. Խուրշուդյան, Հ. Կարապետյան, Վ. Ղազախեցյան, Վ. Մելիքյան, Գ. Մախմուրյան, Լ. Հովհաննիսյան, Ա. Ղամբարյան, Հ. Բոյաջյան, Ս. Պողոսյան, Ա. Հարությունյան):

Հիմնավորվել է Հայոց ցեղասպանության թուրքական քաղաքականության շարունակականությունը՝ սկսած XIX դարի վերջին քառորդին Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում, ինչպես նաև՝ թուրքական պետության հայաբնակ շրջաններում տեղի ունեցած զանգվածային կոտորածներից մինչև Առաջին աշխարհամարտի տարիներին տեղի ունեցած զանգվածային տեղահանությունն ու աննախադեպ կոտորածները, ապա Անդրկովկասի հայաբնակ շրջաններում, Նախիջևանում ու Արցախում տեղի ունեցած և ներկայումս էլ Արցախում շարունակվող ցեղասպանական գործողությունները (Բ. Ուլուբաբյան, Վ. Միքայելյան, Ա. Մելքոնյան, Հ. Աբրահամյան, Հ. Հարությունյան, Վ. Թունյան, Գ. Ստեփանյան, Ա. Մարության, Ստ. Պողոսյան, Մ. Հարությունյան, Շ. Աբրահամյան):

Վերոնշյալ պատմաբանների կողմից նաև ուսումնասիրվել և վերագնահատվել են XIX-XX դդ. հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը արևմտահայերի ֆիզիկական անվտանգության ապահովման, Արևմտյան Հայաստանում հայկական պետականության վերականգնման համար, հայ

հասարակական-քաղաքական ուժերի ու գործիչների տեսակետները և գործունեությունը Հայկական հարցի լուծման ուղիների վերաբերյալ:

Անցած երեսնամյակի ընթացքում Հայկական հարցի ուսումնասիրության ուղղությամբ Հայաստանյան պատմաբանները կատարել են գնահատելի աշխատանք, որն, անշուշտ, կշարունակվի:

Բանալի բառեր և բառակապակցություններ. Հայաստանի Հանրապետություն, Հայկական հարց, պատմագիտություն, Արևմտյան Հայաստան, բարենորոգումներ, ինքնավարություն, անկախություն:

РЕЗУЛЬТАТЫ ИССЛЕДОВАНИЯ АРМЯНСКОГО ВОПРОСА В ИСТОРИЧЕСКОЙ НАУКЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ (1991-2021 ГГ.)

ЛИЛИТ ОГАНИСЯН

Национальная академия наук Республики Армения

Международный научно-образовательный центр

Институт истории

старший научный сотрудник отдела истории Армянского вопроса и Геноцида армян

кандидат исторических наук, доцент

lilit.hovhannisyan@isec.am; lilithovannisian@yahoo.com

Аннотация

С провозглашением независимости Республики Армения в 1991 году история современной армянской государственности вступила в новый этап. В условиях национальной независимости перед исторической наукой Армении открылись широкие возможности для осуществления свободных от оков коммунистической идеологии объективных исследований по вопросам всех этапов армянской истории. Среди них ключевое научное и практическое значение имеет изучение истории Армянского вопроса.

На протяжении последних тридцати лет в работах армянских историков эта многослойная проблема анализировалась в трех проявлениях своего содержания: как вытекающий из идеологии пантюркизма вопрос турецкой государственной политики по очищению Армении от армян путем физического уничтожения армянского народа; как вопрос международной дипломатии и как вопрос освободительной борьбы армянского народа против турецкой политики истребления армян, а также удовлетворения справедливых прав армянского народа – требований по международному праву. Особое внимание было уделено закреплению идей реформ в Западной Армении, ее автономии и независимости, затем - защиты прав западных армян как национального меньшинства в Турции в программах и договорах, разработанных и подписанных международной дипломатией в 1878-1923 гг. В их числе особое значение уделено переоценке историко-правового значения Севрского договора и Арбитражного решения В. Вильсона 1920 г., также Московского, Карсского, Лондонского и Лозаннского договоров 1921-1923 гг. (Г. Галоян, Э. Зограбян, А. М. Акопян, А. В. Акопян, А. Марукян, А. Папян, Л. Оганисян).

Тщательно проанализирована политика великих держав в Армянском вопросе (Г. Аветисян, Г. Галоян, А. Мелконян, Е. Саргсян, Л. Хуршудян, А. Карапетян, В. Казахецян, В. Меликян, Г. Махмуриян, Л. Оганисян, А. Гамбарян, О. Бояджян, С. Погосян, А. Арутюнян).

Обоснована непрерывность турецкой политики Геноцида армян, начиная с последней четверти XIX века - массовых погромов в Западной Армении, Киликии, а также в армянонаселенных районах турецкого государства, до массовых депортаций и беспрецедентной резни во время Первой мировой войны, затем - геноцидных действий, имевших место в армянонаселенных районах Закавказья, Нахичевани, Арцаха, продолжающиеся в Арцахе до сих пор (Б. Улубабян, В. Микаелян, А. Мелконян, Г. Абрамян, Г. Арутюнян, В. Тунян, Г. Степанян, А. Марукян, Ст. Погосян, М. Арутюнян, Ш. Абраамян).

Национально-освободительная борьба армянского народа в XIX-XX вв. за обеспечение физической безопасности западных армян, за восстановление армянской государственности в Западной Армении, взгляды армянских общественно-политических сил и деятелей на пути решения Армянского вопроса также изучены и переоценены вышеупомянутыми историками.

За последние тридцать лет армянские историки проделали ценную работу по изучению Армянского вопроса, которая, безусловно, будет продолжена.

Ключевые слова и словосочетания: Республика Армения, Армянский вопрос, историческая наука, Западная Армения, реформы, автономия, независимость.

THE RESULTS OF RESEARCH ON THE ARMENIAN QUESTION IN HISTORICAL SCIENCE OF ARMENIA (1991-2021)

LILIT HOVHANNISYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
International Scientific Educational Center
Institute of History
Department of History of the Armenian Question and
Genocide of Armenians, Senior Researcher
PhD in Historical Sciences, Associate Professor
lilit.hovhannisyan@isec.am; lilitovhannisian@yahoo.com

Abstract

With the proclamation of the independence of the Republic of Armenia in 1991, the history of modern Armenian statehood entered a new phase. In the conditions of national independence, wide opportunities opened up for the Historical science of Armenia to carry out free from the shackles of communist ideology and objective research on the issues of all stages of Armenian history. Among them, the study of the history of the Armenian Question is of crucial scientific and practical importance.

Over the past thirty years, this multi-layered issue has been analyzed in the works of Armenian historians in three manifestations of its content: as a matter of Turkish state policy of extermination of Armenians and depopulation of Armenia, stemming from the ideology of pan-Turkism; as a matter of international diplomacy and as a question of the liberation struggle of the Armenian people against the Turkish extermination policy, the satisfaction of its just rights towards Western Armenia - Armenian claims under international law. Particular attention was paid to the fixing programs and treaties, developed and signed by international diplomacy in 1878-1923 the ideas of reform of Western Armenia, then -its autonomy and independence, and then - protection of the rights of Western Armenians as a national minority living in Turkey. Among them special importance is given to the re-evaluation of historical-legal significance of the 1920 Sèvres Treaty, W. Wilson's Arbitral Award, 1921-1923 Treaties of Moscow and Kars, London and Lausanne (G. Galoyan, E. Zohrabyan, A. Hakobyan, H. Hakobyan, A. Marukyan, A. Papyan, L. Hovhannisyan).

The policy of the great powers in the Armenian Question has been comprehensively analyzed (H. Avetisyan, G. Galoyan, A. Melkonyan, E. Sargsyan, L. Khurshudyan, H. Karapetyan, V. Ghazakhetsyan, V. Melikyan, G. Makhmourian, L. Hovhannisyan, A. Ghambaryan, H. Boyajyan, S. Poghosyan, A. Harutyunyan).

The continuity of the Turkish policy of the Armenian Genocide is grounded, since mass massacres in Western Armenia, Cilicia, as well as in the Armenian-populated regions of the Turkish state occurred at the last quarter of the XIX century, till the mass deportations and unprecedented massacres during World War I, then the genocidal actions in the Armenian-populated regions of Transcaucasia, Nakhichevan, Artsakh during XX century, which still going on in Artsakh (B. Ulubabyan, V. Mikayelyan, A. Melkonyan, H. Abrahamyan, H. Harutyunyan, V. Tunyan, G. Stepanyan, A. Marukyan, St. Poghosyan, M. Harutyunyan, Sh. Abrahamyan).

The national-liberation struggle of the Armenian people in XIX-XX centuries for the provision of physical security of the Western Armenians, the restoration of the Armenian statehood in Western Armenia, as well as the views and activities of the Armenian social-political forces and figures on the ways of solution of the Armenian Question are also studied and re-evaluated by above-mentioned historians.

Over the past thirty years, Armenian historians have done valuable work in the study of the Armenian Question, which will certainly continue.

Keywords and phrases: Republic of Armenia, Armenian Question, Historical science, Western Armenia, reforms, autonomy, independence.

Ներածություն

Հայկական հարցի ուսումնասիրումը հայ պատմագիտության առանցքային ուղղություններից է թե՛ Հայաստանի Հանրապետությունում, թե՛ Սփյուռքում: Հայոց ցեղասպանության հետևանքով հայաթափված Արևմտյան Հայաստանի ու հայ ժողովրդից խլված այլ տարածքների ազատագրության, հայկական անկախ և միացյալ պետականության վերականգնման, այդ հարցերի նկատմամբ մեծ տերությունների քաղաքականության ու դիվանագիտական պայքարի հիմնահարցերի հետազոտումը գիտաքաղաքական ու գործնական նշանակություն ունի համայն հայության համար՝ հայկական պետականությանը միտված գլոբալ մարտահրավերներին դիմակայելու, միջազգային ասպարեզում հայ ազգային-պետական շահերը հաջողությամբ պաշտպանելու, Հայոց պահանջատիրության բավարարմանը հասնելու տեսանկյունից: Այս իմաստով կարևորվում է 1991 թ. Հայաստանի անկախության վերականգնումից ի վեր՝ անցած երեսուն տարիների ընթացքում Հայկական հարցի պատմությունն ուսումնասիրած հայաստանյան պատմաբանների գիտական հետազոտությունների արդյունքների, դրանցում արտացոլված տեսակետների ու եզրահանգումների վերլուծությունը:

Սույն ուսումնասիրությունը 1991-2021 թվականներին Հայաստանյան պատմագիտության մեջ 1878-1923 թթ. Հայկական հարցի՝ որպես միջազգային դիվանագիտության հարցի վերաբերյալ հետազոտությունների արդյունքներն ամփոփելու փորձ է: Հեղինակը 1915-1923 թթ. Հայկական հարցի դիվանագիտական քննարկումներին և դրանց արդյունքներին վերաբերող առանցքային հիմնահարցերը 2015-2020 թթ. լուսաբանել է ՀՀ-ում ու Լիբանանում լույս տեսնող հեղինակավոր պարբերականներում՝ գիտական հոդվածների տեսքով, ապա ուսումնասիրության արդյունքներն ամփոփել ծավալուն մենագրությամբ [1]:

Ուսումնասիրության տեսամեթոդական հիմքերը

1991-2021 թթ. հայաստանյան պատմագիտության մեջ 1878-1923 թթ. Հայկական հարցի դիվանագիտական քննարկումների և դրանց արդյունքների վերաբերյալ ուսումնասիրությունների վերլուծության համար տեսական հիմք հանդիսանում են պատմագիտական հիմնարար աշխատությունները՝ մենագրությունները, գիտական հոդվածներն ու զեկուցումները, պատմագրական բնույթի ուսումնասիրությունները:

Հետազոտությունը կատարված է պատմագենետիկական, ռետրոսպեկտիվ, պատմահամեմատական, պատմահամակարգային և տերմինաբանական մեթոդների օգտագործմամբ:

Ուսումնասիրության արդյունքները

Հայկական հարցի՝ որպես միջազգային դիվանագիտության հարցի պատմության գիտական գնահատականներում կարևորվում է նախևառաջ 1878 թվականին Սան Ստեֆանոյի ռուս-թուրքական հաշտության բանակցություններում և պայմանագրում Արևմտյան Հայաստանի հարցի միջազգայնացման արժևորումը: Պատմաբանների կարծիքով՝ XIX դարի վերջին հայկական պարբերականներում Հայկական հարցի միջազգայնացումը՝ որպես հաղթանակ գնահատելը չափազանցություն է: Նրանք շեշտում են, որ 16-րդ հոդվածով Հայկական հարցն առաջին անգամ դարձավ միջազգային քննարկման առարկա. առաջին անգամ Թուրքիան ընդունեց Հայաստան աշխարհագրական և պատմական տարածքի գոյությունն իր նվաճած երկրների շարքում, պարտավորվեց ռուսական զորքերի առկայությամբ 6 ամսվա ընթացքում կատարել տեղական պահանջներից բխող բարեփոխումներ և դրանց մասին տեղյակ պահել ռուսական

կառավարությանը, սակայն հողվածը լի էր անորոշություններով. հստակորեն չէր նշվում, թե ի՞նչ բարեփոխումներ պետք է կատարվեն, կային միայն ընդհանուր դատողություններ» [2, էջ 435-436]:

«Հ ՀԱԱ ակադեմիկոս Գալուստ Գալոյանի համոզմամբ թուրքական տիրապետությունից արևմտահայերի ազատագրման միակ ուղին կարող էր լինել Արևմտյան Հայաստանի գինագրավումը ռուսական զորքի կողմից, սակայն դրան խոչընդոտեց Անգլիան [3, էջ 255-257]: Պատմաբանը նաև քննադատում է արևմտահայ մտավորականությանը Արևմտյան Հայաստանի ազատագրության հարցում վախվորած, անհամարձակ կեցվածքի համար՝ նշելով, որ մինչ Սերբիան և Չեռնոգորիան պատերազմում էին Թուրքիայի դեմ, արևմտահայ մտավորականությունը, ի դեմ Կ. Պոլսի Հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանի, հույսը դրել էր Եվրոպայի օգնության վրա՝ փոխարեն ապստամբությամբ լուծելու Արևմտյան Հայաստանի հարցը [3, էջ 259]: Գ. Գալոյանը Հայկական հարցի տեսանկյունից կարևորում է Սան Ստեֆանոյի պայմանագրի ոչ միայն 16-րդ, այլև 17-րդ, 19-րդ, 24-րդ, 25-րդ և 27-րդ հոդվածները: Դրանք բոլորը միասին նշանակում էին, որ Արևմտյան Հայաստանը պայմանագրում դիտվում էր որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, և Թուրքիան ճանաչում էր այդ փաստը [3, էջ 266-268]: Ավելին, նա շեշտում է Սան Ստեֆանոյի ամբողջ պայմանագրի գնահատման կարևորությունը՝ նշելով, որ այն «ամբողջությամբ Ռուսաստանին դարձնելու էր ոչ միայն Սև ծովում, այլև Միջերկրական ծովում, ...Բալկաններում» «գերիշխող պետություն» [3, էջ 267]:

Պատմագիտական աշխատություններում նշվում է, որ Ռուսաստանի դիվանագիտության պարտությունը Բեռլինի վեհաժողովում նաև պայմանավորված էր հայ ազգային, հասարակական շրջանակների այն մտայնությամբ, որ Արևմտյան Հայաստանի հարցը կարելի է լուծել Օսմանյան կայսրության սահմաններում Ռուսաստանի և մյուս եվրոպական տերությունների հովանավորությամբ բարենորոգումների անցկացման միջոցով, ավելին՝ սուլթան Աբդուլ Համիդ II-ի գիտությամբ այդ դիրքորոշումը և՛ Ռուսաստանի, և՛ եվրոպական պետությունների դիվանագիտական շրջանակներում ներկայացնող Խորեն Նար բեյի ու Մկրտիչ Խրիմյանի գործունեության հատվածականությամբ և անարդյունավետությամբ: Դա նշանակում էր, որ հայերը «խաղում էին երկու լարի վրա», ընդ որում, թուրքական սուլթանն այդ հանգամանքը հմտորեն օգտագործեց հայերին կեղծավորության, երկերեսանիության մեջ մեղադրելու և Սան Ստեֆանոյի պայմանագրի՝ Հայկական հարցին վերաբերող հոդվածները 1878 թ. Բեռլինի վեհաժողովում հօգուտ Թուրքիայի վերանայելու համար [2, էջ 430-433; 3, էջ 268-274]:

Հայաստանյան պատմաբանների աշխատություններում միանշանակ չէ Արևմտյան Հայաստանում բարենորոգումների վերաբերյալ 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրին տրված գնահատականը: Նրա նշանակությունը կա՛մ գերազնահատվել է՝ տուրք տալով 1912-1914 թթ. Հայկական հարցում Ռուսաստանի վարած քաղաքականության նախաձեռնողական բնույթին և հայ ժողովրդի ռուսական կողմնորոշմանը, կա՛մ թերազնահատվել է՝ ելնելով Հայկական հարցում մեծ տերությունների և մասնավորապես Մերձավոր Արևելքում Ռուսաստանի վարած քաղաքականության շահադիտական մղումներից ու հակահայկական դրսևորումներից: Եվ միայն վերջին երեսնամյակի ընթացքում լույս տեսած պատմագիտական աշխատություններում տրված է Արևմտյան Հայաստանում բարենորոգումների վերաբերյալ այդ համաձայնագրի պատմաիրավական օբյեկտիվ գնահատականը: Շեշտված է, որ համաձայնագիրը հանդիսանում էր մեծ տերությունների և թուրքական պետության միջև Բեռլինի վեհաժողովում սկսված և մոտ 40 տարի տևած դիվանագիտական պայքարի հանգուցալուծումը: Համաձայնագիրը հայերի դեմ ցեղասպանության գործողությունների կանխմանն ուղղված միջազգային իրավական փաստաթուղթ էր և իրագործման դեպքում, անշուշտ, կունենար այդ նշանակությունը: Նրանում

բարենորոգումների 1895 թ. Մայիսյան ծրագրի համեմատ էապես խոցելի ու քննադատելի կողմը, թերևս, հայկական մեկ նահանգի փոխարեն երկու առանձին վարչական միավորների ստեղծում նախատեսող դրույթն էր: Համաձայնագիրն էլ ավելի առաջադիմական կլիներ, եթե դրա հիմքում դրվեր ռուսական սկզբնական նախագիծն առանց այն որևէ փոփոխության ենթարկելու: Այդ դեպքում հայկական վիլայեթներից կստեղծվեր մեկ միասնական վարչական միավոր, այն վերջապես կունենար ազգային ժողով, մահմեդականներով խիտ բնակեցված տարածքները չէին միացվի հայկական վարչական միավորին, նահանգում բոլոր պաշտոնների, օրենսդիր և գործադիր իշխանություն իրականացնող մարմինների բաշխման, ինչպես նաև ոստիկանության ու ժանդարմերիայի կազմակերպման հիմքում կդրվեր ոչ թե համամասնության, այլ հավասարության սկզբունքը, կարձակվեր քրդական «համիդիե» հեծելազորը, վերջ կդրվեր մուհաջիրների² վերաբնակեցմանը հայկական նահանգում, հողային հարցը կլուծվեր ընդհանուր նահանգապետի ու հատուկ հանձնաժողովի կողմից հայերից խլված հողերը նրանց վերադարձնելու միջոցով [4]:

Ռուս-թուրքական համաձայնագրով պաշտոնապես վերահաստատվում էր Ռուսաստանի ղեկավար դերը Հայկական հարցում, որի հիմքը դրվել էր Սան Ստեֆանոյի պայմանագրով [5, էջ 17-37, 6, էջ 134-147]:

Առաջին աշխարհամարտի տարիներին Հայկական հարցի դիվանագիտական արձարձումները ներկայացնող պատմագիտական աշխատություններում գլխավորը օսմանյան «ժառանգության», այսինքն՝ Ասիական Թուրքիայի բաժանման վերաբերյալ 1915-1916 թթ. տեղի ունեցած անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի բանակցություններն են, որոնց արդյունքում ստորագրված համաձայնագրերով նախատեսվում էր Արևմտյան Հայաստանի բաժանումը Ռուսաստանի և Ֆրանսիայի միջև: Ուսումնասիրվել է նաև Կովկասյան ֆեդերացիայի կամ «Կովկասյան ընդհանուր տան» թուրք-գերմանական ծրագիրը, որն իրագործվելու էր որպես Արևմտյան Հայաստանի հայաթափման, արևմտահայերի բնաջնջման թուրքական պետական քաղաքականության տրամաբանական շարունակություն: Հիմնավորվել է այն տեսակետը, որ, չնայած իր զավթողական էությանը, այնուամենայնիվ, անգլո-ֆրանս-ռուսական ծրագիրը նախընտրելի էր թուրք-գերմանականից, քանի որ դրանում չէր դրվում հայ ժողովրդի ֆիզիկական ոչնչացման հարցը, ընդհակառակը, կարևորվում էր Հայաստանի ու հայ ժողովրդի նկատմամբ թուրքական գերիշխանության դադարեցման անհրաժեշտությունը, որը պատերազմի ավարտական փուլում ձևակերպվեց հայկական ինքնավարության, ապա՝ անկախ պետություն ստեղծելու գաղափարի տեսքով [1, էջ 49-74, 7]:

1917-1918 թվականներին՝ Առաջին աշխարհամարտի ավարտական փուլում, Հայկական հարցի պատմափուլի ուսումնասիրումը թերևս ամենախրթինն է, քանի որ կապված է միջազգային քաղաքական իրադրության փոփոխությունների, մեծ տերությունների շահերի ու հակասությունների բախման, Հայաստանի առաջին Հանրապետության՝ միջազգային հարաբերությունների ակտոր դառնալու հանգամանքի, Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնահարցերի հետ:

Նորահայտ բազմալեզու արխիվային փաստաթղթերի հիման վրա պատմաբանները համակողմանիորեն ներկայացրել են Արևմտյան Հայաստանի հարցի դիվանագիտական քննարկումները 1917-1918 թթ. Խորհրդային Ռուսաստանի և Քառյակ միության պետությունների միջև Բրեստ-Լիտովսկի հաշտության բանակցություններում, 1918 թ. Տրապիզոնի թուրք-անդրկովկասյան կոնֆերանսում և Հայաստանի Հանրապետության ու Օսմանյան Թուրքիայի միջև

² 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում Բալկանյան թերակղզուց Ասիական Թուրքիա գաղթած մահմեդական վերաբնակիչների ընդհանուր անվանումը:

Բաթումի հաշտության բանակցություններում **[8]**: 1917–1918 թթ. Հայկական հարցում մեծ տերությունների ռազմաքաղաքական շահերը, նաև Օսմանյան Թուրքիայի զավթողական ծրագրերը Արևմտյան ու Արևելյան Հայաստանի նկատմամբ լուսաբանվել են սեփական հայրենիքում Արևմտյան Հայաստանում հայերի ազգային ինքնորոշման իրավունքի տեսանկյունից **[8, էջ 51-53, 9, 10, 11, 12, 13, էջ 277-304]**: Վերանայվել են 1917 թ. Խորհրդային Ռուսաստանի Ժողովուրդի «Թուրքահայաստանի մասին» հրովարտակին, Բրեստ-Լիտովսկի ու Բաթումի պայմանագրերին տրված պատմաիրավական և քաղաքական գնահատականները **[8, էջ 72, 73, 10, էջ 56, 11, էջ 396-399, 14, էջ 44, 15, էջ 10-11, 16, էջ 20-22, 17, էջ 191, 18, էջ 271, 19, էջ 89-93, 20, էջ 201-243]**:

Արժեքավոր աշխատանք է կատարվել 1919-1920 թթ. Փարիզի հաշտության միջազգային վեհաժողովում և Ազգերի լիգայում, ինչպես նաև՝ հայ հասարակական-քաղաքական շրջանակներում Արևմտյան Հայաստանի անկախության, սահմանների և մանդատի վերաբերյալ քննարկումները լուսաբանելու ուղղությամբ: Հատկապես, համակողմանի ուսումնասիրվել և գնահատվել է Հայկական հարցում Մեծ Բրիտանիայի ու ԱՄՆ-ի վարած քաղաքականությունը: Պատմաբաններ Ա. **Մելքոնյանի** **[17, 18, 21, 22, 23, 24]**, Գ. Գալոյանի **[16]**, Հր. Սիմոնյանի **[25]**, Է. Զոհրաբյանի **[26]**, Լ. Խուրշուդյանի **[14; 27]**, Գ. Մախմուրյանի **[7; 28; 29]**, Ա. Մ. Հակոբյանի **[30; 31]**, Ա. Մարուքյանի **[19]**, Ա. Պապյանի **[32]**, Վ. Մելիքյանի **[33]** վերլուծություններն ու եզրահանգումները գիտական ծանրակշիռ հիմք են ապահովում միջազգային իրավունքի տեսանկյունից հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման և հայոց պահանջատիրության հիմնահարցերը մշակելու համար:

Գիտական և քաղաքական հրատապություն ունեն 1921-1923 թթ. դիվանագիտական բանակցություններում ու միջազգային պայմանագրերում Հայկական հարցի արծարծումների, մասնավորապես՝ 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերի վերլուծությանն ու վերարժևորմանը նվիրված աշխատանքները: Դրանցում կենտրոնականը նշված պայմանագրերի՝ միջազգային իրավունքին համապատասխանության հարցերն են: Պատմաբանների գնահատմամբ, Մոսկվայի և Կարսի պայմանագրերով Թուրքիան և Ռուսաստանը ամենակոպիտ կերպով խախտել են հայ ժողովրդի ինքնորոշման իրավունքը: Այդ պայմանագրերը հակաօրինական են, թեև մինչ օրս դրանցով են կարգավորվում հայ-թուրքական սահմանային հարաբերությունները **[34, 35, 36, 37, 38]**:

Եզրակացություն

Հայկական հարցի՝ 1878–1923 թթ. պատմության հիմնախնդիրների վերաբերյալ աշխատությունները ոչ միայն նոր խոսք են հայ պատմագիտության մեջ, այլև ունեն գործնական նշանակություն Թուրքիայի կողմից խլված Արևմտյան Հայաստանի, Կարսի և Արդահանի նկատմամբ հայ ժողովրդի իրավունքները պաշտպանելու տեսանկյունից:

Արտահայտված տեսակետները տրամաբանորեն փոխլրացնում են միմյանց: Դրանք պատմագիտական մտքի արժեքավոր ընդհանրացումներ են, որոնք արդիական ու գործնական ուղերձներ են պարունակում Հայկական հարցի լուծման և հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման գործընթացի էության, բովանդակության, հայկական անկախ պետության դիվանագիտության առաջնահերթությունների, ազգային ուժերի ներքին միասնությունը պահպանելու կարևորության վերաբերյալ՝ անկախ արտաքին քաղաքական փոփոխություններից :

Գրականության ցանկ

1. Լ. Հովհաննիսյան, Հայկական հարցի 1915-1923 թթ. պատմության հիմնահարցերի լուսաբանումը Հայաստանյան պատմագիտության մեջ (1991-2015 թթ.), խմբ. Մախմուրյան Գ., Երևան: Պատմության ինստիտուտ, 2020, 384 էջ:
2. Հայոց պատմություն, խմբ. խորհ. Բարխուդարյան Վ. և ուրիշ., հ. 3. Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես – 1918 թ.), գիրք 1 (XVII դարի երկրորդ կես – XIX դարի վերջ), պատ. խմբ.՝ Մելքոնյան Ա., Երևան: Զանգակ-97, 2010, 704 էջ:
3. Գ. Գալոյան, Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917 թ.), խմբ.՝ Դանիելյան Է., Երևան: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2004, 822 էջ:
4. Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 57, ց. 5, գ. 59, թ. 1-4:
5. Լ. Հովհաննիսյան, Հայկական հարցը և մեծ տերությունները 1914-1917 թվականներին, պատ. խմբ. Ավետիսյան Հ., Երևան: Զանգակ-97, 2002, 184 էջ:
6. Հայոց պատմություն, խմբ. խորհ.՝ Բարխուդարյան Վ. և ուրիշ., հ. 3. Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես – 1918 թ.), գիրք 2 (1901-1918 թթ., հայ գաղթավայրերը, պարբերական մամուլը և մշակույթը XIX դ. և XX դ. սկզբին), պատ. խմբ.՝ Մելքոնյան Ա., Երևան: Զանգակ-97, 2015, 760 էջ:
7. Махмуриян Г., Армения в политике США 1917–1923 гг. Отв. ред. Гамбарян А. Ереван: Институт истории НАН РА, 2018, 608 с.
8. Հ. Ավետիսյան, Հայկական հարցը 1918 թվականին, խմբ. Խառատյան Ա., Երևան: Բարձրագույն դպրոց, 1997, 436 էջ:
9. Վ. Մելիքյան, Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը (1917 թ. մարտ-հոկտեմբեր), պատ. խմբ.՝ Ղազախեցյան Վ., Երևան: Մխիթար Գոշ, 1997, 320 էջ:
10. Ստ. Պողոսյան, Կ. Պողոսյան, Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն, հ. III, գիրք I, մաս Ա. Հայկական հարցը 1917 թ. երկրորդ կեսից մինչև ՀՀ ստեղծումը, Երևան: Հայաստան, 2004, 392 էջ:
11. Марукян А. Армянский вопрос и политика России (1915-1917 гг.). Отв. ред.: Тунян В., Багдасарян Р. Ереван: МИГА НАН РА, 2003, 482 с.
12. Ս. Պողոսյան, Միացյալ Հայաստանի խնդիրը 1917–1918 թթ., «Պատմություն և հասարակագիտություն», 2016, թիվ 2, էջ 8-23:
13. Հ. Վ. Հակոբյան, Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական ու իրավական հիմքերը, խմբ.՝ Բայբուրդյան Վ., Երևան: Ասողիկ, 2002, 414 էջ:
14. Լ. Խուրշուդյան, Հայկական հարցը: Բովանդակությունը, ծագումը, պատմության հիմնական փուլերը, խմբ.՝ Ուլուբաբյան Բ., Երևան: «Համազգային հայ կրթական և մշակութային միություն», 1995, 100 էջ:
15. Հ. Կարապետյան, Սևրի պայմանագիրը հայոց ճակատագրում, խմբ.՝ Հարությունյան Ա., Երևան: Հայաստանի ազգային արխիվ, 2004, 128 էջ:
16. Գ. Գալոյան, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., խմբ.՝ Միքայելյան Վ., Երևան: Գիտություն, 1999, 539 էջ:
17. Ա. Մելքոնյան, Հայոց պատմություն. դասախոսությունների ձեռնարկ, Երևան: Հայագիտակ, 1998, 278 էջ:
18. Է. Դանիելյան, Ա. Մելքոնյան, Հայոց պատմություն: Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան: Զանգակ-97, 2008, 352 էջ:
19. Ա. Մարուքյան, Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, խմբ.՝ Մելքոնյան Ա., Վարդանյան Վ., Երևան: Պատմության ինստիտուտ, 2014, 332 էջ:

20. Գ. Պետրոսյան, Անդրկովկասը դիվանագիտական հորձանուտում. հայոց անկախ պետականության կերտումը (1917 թ. փետրվար-1918 թ. հունիս), Երևան: ԵՊՀ հրատարակչություն, 2018, 268 էջ:
21. Ա. Մելքոնյան, Ցեղասպանություն և հայրենագրկում: Ճանաչումից՝ հատուցում (հողվածներ և հարցազրույցներ), Երևան: Զանգակ, 2015, 440 էջ:
22. Ա. Մելքոնյան, Հայաստանի պատմության և ժողովրդագրության հիմնահարցեր (հողվածների ժողովածու), Երևան: «Միտք» վերլուծական կենտրոն, 2011, 456 էջ:
23. Ա. Մելքոնյան, Հայոց պատմության դասերն ու պատգամները, Երևան: Գիտություն, 2013, 632 էջ:
24. Ա. Մելքոնյան, Պատմագիտական հետազոտություններ, Երևան: Պատմության ինստիտուտ, 2021, 489 էջ:
25. Հր. Սիմոնյան, Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան: Հայաստան, 1991, 630 էջ:
26. Է. Զոհրաբյան, Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «դաշնակիցները» (1918 թ. դեկտեմբեր-1920 թ. ապրիլ), Երևան, ա. հ., 2002, 266 էջ:
27. Լ. Խուրշուդյան, Հայաստանի բաժանումը 1920 թվականին, Երևան: ԵՊՀ հրատ., 2002, 315 էջ:
28. Махмуриян Г. Лига наций, Армянский вопрос и Республика Армения. Ереван: Артагерс, 1999, 176 с.
29. Махмуриян Г. Политика Великобритании в Армении и Закавказье в 1918-1920 гг. Время белого человека. Ред. Степанян Ст. Ереван: Лусакн, 2002, 309 с.
30. Ա. Հակոբյան, Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., խմբ.՝ Խուրդինյան Գ., Երևան: Լուսակն, 2018, 152 էջ:
31. Ա. Հակոբյան, Միացյալ և անկախ Հայաստանի գաղափարը Հայոց պատմության հոլովույթում, խմբ.՝ Խ. Ստեփանյան, Երևան: Լուսակն, 2020, 212 էջ:
32. Ա. Պապյան, Հայրենատիրություն: Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները և հարակից հարցեր (հողվածների ժողովածու), Երևան: Ասողիկ, 2012, 488 էջ:
33. Վ. Մելիքեան, Հայկական պահանջատիրություն: Հայութեան ինքնակազմակերպման խնդիրը եւ Արեւմտահայերի 3-րդ համագումարի անհրաժեշտությունը, Երեւան: Զանգակ-97, 2010, 120 էջ:
34. Акопян А. Московский и Карсский договоры в судьбе армянского народа (По поводу 100-летия заключения договоров), отв. ред. Степанян Х. Ереван: Гитутюн, 2021, 199 с.
35. Марукян А. Историко-правовой анализ советско-турецкого Московского договора 1921 года «О дружбе и братстве». «ИФЖ», НАН РА, № 1, 2021, с. 3-19.
36. Լ. Հովհաննիսյան, Ռուս-թուրքական գործակցությունը և 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագիրը Հայաստանյան պատմագիտության գնահատմամբ (1991-2020 թթ.), «ՊԲՀ», ՀՀ ԳԱԱ, № 1, 2021, էջ 20-46:
37. Ա. Յ. Մարության, Կարսի 1921 թ. հոկտեմբերի 13-ի պայմանագրի գործադրման ընթացակարգերը, «Վէմ» համահայկական հանդես, հոկտեմբեր-դեկտեմբեր, թիվ 4, 2021, էջ 301-318 (I-XVIII):
38. Լ. Հովհաննիսյան, 1921 թ. հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագիրը Հայաստանյան արդի պատմագիտության գնահատմամբ (1991-2021 թթ.), «Վէմ» համահայկական հանդես, հոկտեմբեր-դեկտեմբեր, թիվ 4, 2021, էջ 319-337 (XIX-XXXVII):

**ՄԻՋԽՄԲԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՎԱՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՂԻ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ**

ԱՆԺԵԼԱ ՂԱԼԱՄԴԱՐՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
գիտակրթական միջազգային կենտրոն
կրթության որակի ապահովման բաժնի սոցիոլոգ
Երևանի պետական համալսարան, ասպիրանտ
anzhela.ghalamdaryan@isec.am

Համառոտագիր

Հետխորհրդային մյուս երկրների նման Հայաստանը անկախության հռչակումից հետո (1991 թ. սեպտեմբեր 21) հիմք դրեց վարչատարածքային բարեփոխումների, որտեղ կենտրոնականը ապակենտրոնացված կառավարումն էր: Ներկայիս մոդելի հիմնական սկզբունքները սկսել են կիրառվել դեռևս 26-27 տարի առաջ, երբ ընդունվեցին ՀՀ Սահմանադրությունը (1995թ.) և Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքը (1996թ.): Համայնքների խոշորացման առաջին օրինակներից է 2008թ-ին ընդունված «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, որով նախկինում առանձին համայնքների կարգավիճակ ունեցող Երևանի 12 վարչական միավորները ձևավորեցին խոշորացված Երևան համայնքը, իսկ 2015թ-ից սկսվեց ՀՀ մնացած համայնքների խոշորացումը:

Տվյալ հոդվածում ներկայացված հետազոտության նպատակն է՝ բացահայտել ՀՀ խոշորացված համայնքներում սոցիալական հեռավորության, սոցիալական վստահության և տեղի ինքնության ձևերը: Դա հետազոտելու համար ստեղծվել է տեսական հիմք՝ բացահայտելով *միջխմբային սահման, համայնքային սահման, սոցիալական հեռավորություն, սոցիալական վստահություն, տեղի ինքնություն* հասկացությունների կոնցեպտուալ կապը: Հետազոտության համար անհրաժեշտ տեղեկատվությունը հավաքագրվել է՝ օգտագործելով ստանդարտացված հարցազրույցի մեթոդը: Հետազոտության շրջանակներում առանձնացվել է խոշորացված համայնքների բնակիչների երկու տիպ՝ համայնքի կենտրոնի բնակիչներ և կենտրոն չհանդիսացող բնակավայրի բնակիչներ: Հիմնվելով հետազոտության արդյունքների վրա՝ կարելի է պնդել, որ ՀՀ խոշորացված համայնքներում միջխմբային սոցիալական հեռավորությունը և սոցիալական վստահությունը պայմանավորված են համայնքի կենտրոնի և կենտրոն չհանդիսացող բնակավայրի բնակիչների միջև խոշորացման գործընթացում առաջացող հիմնախնդիրներով:

Բանալի բառեր և բառակապակցություններ. խոշորացված համայնք, սոցիալական տարածություն, սոցիալական հեռավորություն, սոցիալական վստահություն, տեղի ինքնություն, միջխմբային փոխհարաբերություններ:

МЕЖГРУППОВАЯ СОЦИАЛЬНАЯ ДИСТАНЦИЯ, СОЦИАЛЬНОЕ ДОВЕРИЕ И МЕСТНАЯ ИДЕНТИЧНОСТЬ В УКРУПНЕННЫХ ОБЩИНАХ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

АНЖЕЛА ГАЛАМДАРЯН

Национальная академия наук Республики Армения
Международный научно-образовательный центр
социолог отдела обеспечения качества образования
Ереванский государственный университет
аспирант
anzhela.ghalamdaryan@isec.am

Аннотация

После провозглашения независимости (21 сентября 1991 г.) Армения, как и другие постсоветские страны, заложила основы административной реформы, в центре которой было децентрализованное управление. Основные принципы действующей модели начали применяться 26-27 лет назад, когда была принята Конституция РА (1995 г.) и Закон РА «О местном самоуправлении» (1996 г.): Одним из первых примеров укрупнения общины является принятый в 2008 г. в Ереване Закон РА «О местном самоуправлении», согласно которому 12 административных единиц Еревана, ранее имевших статус отдельных общин, образовали укрупненную/ объединенную ереванскую общину, а в 2015 г. началось укрупнение других общин.

Целью исследования, представленного в данной статье, является выявление форм социальной дистанции, социального доверия и локальной идентичности в укрупненных общинах Республики Армения. Для изучения этого разработана теоретическая база, раскрывающая концептуальную связь понятий межгрупповая граница, “общинная граница”, “социальная дистанция”, “социальное доверие”, “локальная идентичность”. Информация, необходимая для исследования, была собрана с использованием метода стандартизированного интервью. В рамках исследования были выделены два типа жителей укрупненных общин: жители общинного центра и жители нецентрального поселения. По результатам исследования, можно утверждать, что межгрупповая социальная дистанция и социальное доверие в укрупненных общинах Республики Армения обусловлены проблемами, возникающими в процессе укрупнения между жителями общинного центра и нецентральных поселений.

Ключевые слова и словосочетания: социальное пространство, социальная дистанция, социальное доверие, местная идентичность, межгрупповые отношения.

INTERGROUP SOCIAL DISTANCE, SOCIAL TRUST AND PLACE IDENTITY IN CONSOLIDATED COMMUNITIES OF RA

ANZHELA GHALAMDARYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia

International Scientific-Educational Center

Sociologist at the Quality Assurance Department

Yerevan State University

PhD student

anzhela.ghalamdaryan@isec.am

Abstract

After the declaration of independence (September 21, 1991), Armenia, like other post-Soviet countries, laid the groundwork for administrative reform, with a decentralized government at its center. The basic principles of the current model started to be applied 26-27 years ago when the RA Constitution (1995) and The RA Law on Local Self-Government (1996) were adopted. One of the first examples of community consolidation is the RA Law on Local Self-Government adopted in 2008 in Yerevan, by which the 12 administrative districts of Yerevan (which previously had the status of separate communities), formed the consolidated Yerevan community, and in 2015 the consolidation of other communities began.

The research presented in this article aims to identify the forms of social distance, social trust, and place identity in the consolidated communities of the Republic of Armenia. A theoretical basis has been developed to study this, revealing the conceptual connection of the concepts of intergroup border, community border, social distance, social trust, local identity. The research information was collected using a standardized interview method. Within the framework of the research, two types of residents of consolidated communities were identified: residents of the community center and residents of a non-center settlement.

Based on the results of the research, it can be argued that the inter-group social distance and social trust in consolidated communities of the Republic of Armenia are conditioned by the problems arising in the process of consolidation between the residents of the community center and non-center settlement.

Keywords and phrases: social space, social distance, social trust, place identity, intergroup relations.

Ներածություն

«Վանկախացման առաջին 5 տարիների ընթացքում գործում էր տեղական ինքնակառավարման խորհրդային մոդելը: 2018թ-ից սկսվեց «Վ համայնքների խոշորացումը, որը 2018թ-ին կանգ առավ և հետագայում շարունակվելով՝ ավարտին հասավ 2021թ-ի դեկտեմբերին: Արդյունքում նախկին 915 համայնքներից այժմ ձևավորվել են 79 համայնքներ (72-ը՝ միավորված): Տվյալ հոդվածում ներկայացվում է «Վ խոշորացված համայնքների կամ կենտրոնի և ոչ կենտրոնի բնակիչների միջխմբային սահմանների ձևավորման հարցերը, խնդիրները՝ հիմնվելով ներկայացված տեսամեթոդաբանական մոտեցումների վրա, որտեղ կապվում են *սոցիալական հեռավորություն, սոցիալական վստահություն, տեղի ինքնություն* հասկացությունները, որոնք էլ, ըստ էության, կարող են պայմանավորել համայնքի տարբեր բնակավայրերի բնակիչների միջխմբային հարաբերությունները [2, տե՛ս էջ62]:

Ստանդարտացված հարցումների տվյալների հիման վրա էլ ներկայացվում են հիմնական եզրահանգումները:

Տեսամեթոդաբանական հիմքերը

Տեղական ինքնակառավարման մարմինները, սկսած 1990 թ-ից, սկսել են փոփոխվել եվրոպայի մի շարք երկրներում [7, էջ 1], երբ տարածքային կառավարման առկա մոդելները սկսեցին դիտվել որպես ոչ ժողովրդավարական և ոչ մասնակցային կառավարման ձևեր: Պարզ դարձավ, որ տարածքային մասնատվածությունը գլխավոր պատճեն է ապակենտրոնացման և արդյունավետ տեղական կառավարման առումով [7, էջ 1], դրա արդյունքում համայնքների խոշորացումը սկսեց դիտվել որպես արդյունավետ մոդել վարչաքաղաքական կառավարման տեսանկյունից: Այն իր կարևորությունն է ստանում նաև տնտեսական տեսանկյունից, քանի որ, ենթադրվում է միավորել համայնքի բոլոր բնակավայրերի բյուջեները, ինչը կարող է շահավետ լինել ֆինանսական ռեսուրսների համախմբման, խնայման և արդյունավետ օգտագործման առումով: Հաշվի առնելով տարբեր բնակավայրերի բնակիչների փոխհարաբերությունների ուսումնասիրման կարևորությունը՝ հարկ է նշել, որ այն, զուտ ֆիզիկական տարածության համատեքստում դիտարկելուց բացի, պետք է ուսումնասիրել նաև սոցիալական տարածության համատեքստում, քանի որ տարածությունը, ֆիզիկական բնութագրիչ լինելուց բացի, ունի նաև սոցիալական մեծ նշանակություն՝ հակառակ այն փաստին, որ սոցիալական տարածություն հասկացությունը սկզբնական շրջանում դիտարկվում էր ֆիզիկական տարածությանը շատ մոտ իմաստով [1, էջ 279]:

Միաժամանակ այս գործընթացը դրսևորվում է որպես սոցիալական գործընթաց, քանի որ համայնքների խոշորացման հետևանքների անմիջական կրողները այդ համայնքի բնակիչներն են՝ իրենց սոցիալական հարաբերություններով ու սոցիալական հիմնախնդիրներով, ընդ որում՝ վարչաքաղաքական և տնտեսական գործընթացները սերտորեն կապված են սոցիալական գործընթացների հետ: Համայնքի բնակավայրերի միջև առկա սահմանների մասին խոսելիս պետք է բնակավայրերն առանձնացնել այդ տարածքը զբաղեցնող մարդկանցից, քանի որ սոցիալական տարածությունը մարդկանց փոխգործողությունների վայր է, և չի առանձնանում այն մարդկանցից, որոնք զբաղեցնում են այդ տարածքը [3, էջ 4]: Հենց այստեղ է, որ կենտրոնական են դառնում սոցիալական վստահության և տեղի ինքնության խնդիրները, քանի որ բնակավայրերը ունեն իրենց սահմանազատման մեխանիզմները, ձևերը, ինչպես նաև մշակութային յուրահատկությունները: Միաժամանակ այդ համայնքի/տեղի ինքնությունը կարևոր է, քանի որ տեղը տեղ դառնում է առաջին հերթին այն պատճառով, որ ունի ինքնություն [5, էջ 6]: Հենց ինքնությունն է տարածությունը դարձնում տեղ: Միևնույն ժամանակ, պետք է ընդգծել, որ համայնքի բնակավայրերի բնակիչների փոխհարաբերությունները սոցիալական տարածության մեջ առկա սահմանազատումների համատեքստում պայմանավորված են սոցիալական վստահության կոմպոնենտով: Միաժամանակ վստահելու/չվստահելու կարևոր կոմպոնենտն այն է, որ այն ուղղված է դեպի ապագան: Այստեղ էական են գործողության նպատակն ու սպասելիքները [4, էջ 68]: Սա տարբեր բնակավայրերի բնակիչների միջև փոխհարաբերություններ կառուցելու սոցիալական

բանաձևն է: Սոցիալական վստահության և տեղի ինքնության խնդիրները կենտրոնական են դառնում համայնքների խոշորացման համատեքստում, քանի որ բնակավայրերը ունեն իրենց սահմանազատման մեխանիզմները, ձևերը, մշակութային յուրահատկությունները:

Կարևոր է փաստել, որ ՀՀ-ում սոցիալ-տնտեսական փոխակերպումների ողջ գործընթացում ընդգծվում է ՀՀ-ի՝ որպես հետսովետական երկիր լինելու հանգամանքը: Այս փաստն ամրագրված է թե՛ պետական կառավարման, թե՛ բնակիչների առօրյա պրակտիկաների տեսանկյունից, որի ապացույցը համայնքների խոշորացումը խորհրդային շրջանների մոդելով իրականացնելն է: Դա բացատրվում է մինչև ՀՀ անկախացումը ձևավորված տարածքային/տեղական/լոկալ ենթակառուցվածքների առկայությամբ և տվյալ շրջանում բնակիչների միջև վաղուց ամրապնդված սոցիալ-տնտեսական արդյունավետ հարաբերությունների առկայությամբ:

Այսպիսով՝ ակտուալ է դառնում հասկանալը, թե սոցիալական հեռավորության, սոցիալական վստահության և տեղի ինքնության ինչպիսի դրսևորումներ կան խոշորացված համայնքներում ձևավորվող սոցիալական փոխհարաբերություններում:


Ուսումնասիրության մեթոդներ

ՀՀ խոշորացված համայնքներում միջխմբային սոցիալական հեռավորությունը, սոցիալական վստահությունը և տեղի ինքնությունը համայնքի կենտրոնի և կենտրոն չհանդիսացող այլ բնակավայրի բնակիչների շրջանում բացահայտվեց ստանդարտացված հարցազրույցի մեթոդով: Այս մեթոդի կիրառումը հետախուզական նպատակով էր հետապնդվում՝ հիմնախնդիրն ուսումնասիրելու համար, ինչպես նաև՝ հետազայում ավելի լայն շրջանակներով հետազոտություն նախագծելու համար: Տվյալները հավաքագրվել են 2020թ-ի փետրվար-մարտ ամիսներին, երբ ՀՀ-ում խոշորացման գործընթացը ամբողջովին չէր ավարտվել: Այն թույլ տվեց բացահայտել սոցիալական հեռավորության, սոցիալական վստահության և տեղի ինքնության ձևերը՝ որպես միջբնակավայրային փոխհարաբերությունների ուսումնասիրման կարևոր ցուցիչներ: (*Հարցմանը մասնակցել է խոշորացված համայնքների 18 փարեկանից բարձր 100 բնակիչ՝ ընտրանքի վստահելիության միջակայքը՝ 10%, վստահելիության հավանականությունը՝ 95.0%*):

Հիմնական բացահայտումներ


Իրականացված հետազոտության շրջանակներում նկատելի բացահայտումներից է այն, որ համայնքի կենտրոնում հարցվածների ավելի շատ տոկոսն է կարծում, որ խոշորացումից հետո իրենց բնակավայրում ոչինչ չի փոխվել (62,1%), քան՝ ոչ կենտրոնի բնակիչները (41,7%), միաժամանակ ոչ կենտրոնի բնակիչների ավելի շատ տոկոսն է կարծում, որ իրենց բնակավայրի կյանքը ընդհանուր առմամբ վատացել է (19,4%), քան՝ կենտրոնի բնակիչները (3,4%):

Գծապատկեր 1. Խոշորացումից հետո բնակավայրի կյանքի ընդհանուր փոփոխությունը՝ ըստ բնակավայրի տիպի (%):




Միևնույն ժամանակ ոչ կենտրոնի բնակիչների ավելի քիչ տոկոսն է կարծում, որ կարող է ազդել իր բնակավայրին և խոշորացված համայնքին վերաբերող որոշումների վրա, քան կենտրոնի բնակիչները, ընդ որում՝ կենտրոնից հարցվածների 70,6%-ն է կարծում, որ կարող է ազդել խոշորացված համայնքին վերաբերող որոշումների վրա, իսկ ոչ կենտրոնից՝ հարցվածների 29%-ը:

Գծապատկեր 2. Սեփական բնակավայրին և խոշորացված համայնքին վերաբերող որոշումների վրա ազդելը՝ ըստ բնակավայրի տիպի (%) :



Տեղի հետ կապվածության հարցում կենտրոնի և ոչ կենտրոնի բնակիչների ընկալումներում որոշակի ընդհանրություններ կային: Դա կապված էր այն փաստի հետ, որ երկու խմբերն էլ ավելի շատ կապված են սեփական բնակավայրի տեղին, քան ընդհանուր խոշորացված համայնքին, և երկու դեպքում էլ միջխմբային սոցիալական հեռավորությունն ավելի շատ է, քան՝ ներխմբայինը: Դա են փաստում գծապատկեր 2.2.4-ը և գծապատկեր 2.2.5-ը, որտեղ ներկայացված է այն հարցի պատասխանները, երբ հարցվողները 1-5 բալանոց սանդղակով գնահատում էին, թե որքանով են համաձայն նշված պնդումների հետ, (որտեղ 1-համաձայն չեմ, 2-ավելի շուտ համաձայն չեմ, 3-չեզոք, 4-ավելի շուտ համաձայն եմ, 5- լիովին համաձայն եմ): Յուրաքանչյուր պնդումներից առաջին կետը վերաբերում էր սեփական բնակավայրին, երկրորդը՝ ընդհանուր խոշորացված համայնքին (ընդհանուր առմամբ 12 պնդում): Գծապատկերներ 2.2.4-ում և 2.2.5-ում ներկայացված են այդ պնդումներին տրված պատասխանների միջին արժեքները: Գծապատկերների ներքևում գրված թվերը վերաբերում են նշված պնդումներին՝ համապատասխանաբար: Պնդումների հերթականությունը՝ ըստ գծապատկերում նշված թվերի, ներկայացված է գծապատկերներին կից աղյուսակներում:

Գծապատկեր 3. Կենտրոնի բնակիչներ:



Աղյուսակ 1

1. Այն, ինչ կատարվում է այս խոշորացված համայնքում/գյուղում/քաղաքում կարևոր է ինձ համար:
2. Ես հոգեպես կապված եմ այս խոշորացված համայնքին/գյուղին/քաղաքին:
3. Ինձ հարազատ են այս համայնքի/գյուղի/քաղաքի բոլոր վայրերը:
4. Իմ ապրելակերպը և մտածողությունը շատ նման է այս գյուղում/քաղաքում/խոշորացված համայնքում ապրող մարդկանց ապրելակերպին և մտածողությանը:
5. Ես պատրաստ եմ ավելի շատ ժամանակ հատկացնել՝ այս գյուղը/քաղաքը ավելի լավ դարձնելու համար:
6. Ես պատրաստ եմ ֆինանս/ներ ներդնելու՝ այս գյուղը/քաղաքը ավելի լավ դարձնելու համար:


7. Այս գյուղը/քաղաքը/խոշորացված համայնքը ինձ համար մեծ նշանակություն ունի:
8. Իմ կյանքի մեծ մասը կապված է այս գյուղի/քաղաքի/խոշորացված համայնքի հետ:
9. Ես պարտավորություն ունեմ այս խոշորացված համայնքի/գյուղի/քաղաքի նկատմամբ:
10. Այս խոշորացված համայնքը/գյուղը/քաղաքը իմ մի մասն է:
11. Ես ինձ ապահով եմ զգում այս խոշորացված համայնքում/գյուղում:
12. Ես վստահում եմ այս խոշորացված համայնքի/գյուղի/քաղաքի բնակիչներին:

Այստեղ ամենաշատ տարբերությունը տեղի հետ էմոցիոնալ կապվածության մեջ է, քանի որ այդ տարբերությունները ամենակնհայտներն են, հատկապես՝ հետևյալ երեք հարցերում (քանի որ այս դեպքում գործ ունենք երկու ոչ նորմալ բաշխված մետրիկական փոփոխականի հետ և անհրաժեշտ է հասկանալ, թե ինչքանով են այդ երկու փոփոխականները կապված միմյանց հետ, այդ պատճառով կհաշվենք Սպիրմենի կորրելացիան [6, էջ 180]:

1. Ես հոգեպես կապված եմ այս խոշորացված համայնքին/գյուղին/քաղաքին (գոյություն ունի միջին կապ, քանի որ Spearman's rho=0.489՝ $p<0.001$ վիճակագրական հավաստիությամբ):
2. Իմ կյանքի մեծ մասը կապված է այս խոշորացված համայնքի/գյուղի/քաղաքի հետ (գոյություն ունի միջին կապ, քանի որ Spearman's rho=0.486, $p<0.001$ վիճակագրական հավաստիությամբ):
3. Այս խոշորացված համայնքը/գյուղը/քաղաքը իմ մի մասն է (գոյություն ունի միջին կապ, քանի որ Spearman's rho=0.49, $p<0.001$ վիճակագրական հավաստիությամբ):

Հաջորդ գծապատկերն էլ ցույց է տալիս սեփական բնակավայրին և խոշորացված համայնքին կապվածության հարցերը կենտրոն չհանդիսացող բնակավայրի բնակիչների շրջանում:

Գծապատկեր 4. Ոչ կենտրոնի բնակիչներ:



Աղյուսակ 2.

1. Այն, ինչ կատարվում է այս խոշորացված համայնքում/գյուղում/քաղաքում կարևոր է ինձ համար:
2. Ես հոգեպես կապված եմ այս խոշորացված համայնքին/գյուղին/քաղաքին:
3. Ինձ հարազատ են այս համայնքի/գյուղի/քաղաքի բոլոր վայրերը:
4. Իմ ապրելակերպը և մտածողությունը շատ նման է այս գյուղում/քաղաքում/խոշորացված համայնքում ապրող մարդկանց ապրելակերպին և մտածողությանը:
Экономический кризис 2020-2021 продолжается непредсказуемыми и высокими темпами до сегодняшнего дня и в 2022 году она набрала сумасшедшие темпы после того, когда началась русско-украинская война. Она наносит серьезный удар по экономике практически всех стран по цепной реакции. Все началось с COVID-19, который не только затронул тот или иной сектор экономики, вызвав кризисную ситуацию, но и парализовал весь мир, заставив всех смотреть как на процесс экономического развития, так и на рамки сотрудничества и взаимоотношений с новой точки зрения. Кризисы стали обычным явлением в разных странах в последние годы, но этот кризис коренным образом отличается от предыдущих. Мы можем выделить несколько причин. Прежде всего, в отличие от предыдущих, связанная он не проявляется сначала в одной или двух странах, а затем лишь затрагивает остальные, а параллельно распространяется на разные регионы, экономический спад как в развитых, так и в развивающихся странах. Во-вторых, это проблема, связанная со здоровьем, привела к кризису не в своей отрасли, а парализовала всю экономику: государства стали закрывать границы, разные страны ввели жесткие ограничения, закрылись предприятия, а те отрасли экономики, которые продолжали работать дистанционно, сталкивались с трудностями, потому что для многих это было в новинку и создавало много препятствий.

Параллельно со всем этим 27 сентября 2020 года началась 44-дневная война, которая нанесла потери, во-первых, в виде человеческих жизней, а во-вторых, нанесла второй удар по и без того нестабильному состоянию нашей экономики. С конца февраля 2022 года мир столкнулся с новым испытанием и день ото дня углубляющимся новым экономическим кризисом, что связано с русско-украинской войной и санкциями, применяемыми западными странами. А какое влияние оказали вышеупомянутые реалии на банковскую систему Республики Армения? Смогли ли банки преодолеть беспрецедентный кризис, продолжить нормальную деятельность на рынке, готовы ли последние к новым вызовам? Мы попытались получить ответы на эти и другие подобные вопросы в ходе нашей работы.

Ключевые слова и словосочетания: санкции, мораторий, девальвация, экономический рост, финансовый кризис, чистая рентабельность.

CURRENT CHALLENGES OF RA BANKING SYSTEM STABILITY

ARTUR MURADYAN

Yerevan State University, Ijevan Branch
Faculty of Economics, Department of General Economics
PhD in Economics, Assistant Lecturer
AREGAK Universal Credit Organization, Branch Manager
makartur85@gmail.com

Abstract

The economic crisis of 2020-2021 continues at an unpredictable and rapid pace until today. In 2022 it gained a crazy pace after the Russian-Ukrainian war began. It deals with a serious blow to the economies of almost all countries with a chain reaction. It all started with COVID-19, which not only affected a particular sector of the economy, causing a crisis but also paralyzed the whole world, forcing everyone to look at both the process of economic development and the framework of cooperation and relations from a new point of view. Crises have become commonplace in different countries in recent years, but this crisis is fundamentally different from previous ones. We can highlight several reasons. First, unlike the previous ones, it does not appear in one or two countries, and then only impacts the rest, but simultaneously extends to different regions, causing an economic decline in both developed and developing countries. Secondly, this health problem led to a crisis, not in its industry, but paralyzed the entire economy: states began to close borders, different countries introduced strict restrictions, enterprises closed, and those sectors of the economy that continued to work remotely faced difficulties, because for many it was new and created many obstacles. In parallel with all this, on September 27, 2020, a 44-day war began, which inflicted losses, firstly, in the form of human lives, and secondly, dealt a second blow to the already unstable state of our economy. Since the end of February 2022, the world faced a new test, and day by day a deepening new economic crisis, which is associated with the Russian-Ukrainian war and sanctions applied by Western countries. What effect did the aforementioned realities have on the banking system of the Republic of Armenia? Have banks been able to overcome an unprecedented crisis, continue normal activities in the market? Are the latter ready for new challenges? We tried to get answers to these and other similar questions during the analysis.

Keywords and phrases: Sanctions, moratorium, devaluation, economic growth, financial crisis, net profitability.

Ներածություն

Վերջին տարիներին հաճախակի են դարձել համաճարակներն ու պատերազմները, առանց որոնց պատկերացնել մեր առօրյան գրեթե անհնար է: 2020թ.՝ արցախյան պատերազմ, 2020-2021 թթ.՝ COVID-19, 2022 թ. ռուս-ուկրաինական նոր պատերազմ և ՌԴ նկատմամբ կիրառվող պատժամիջոցներ: Այս ամենը, թե՛ ՀՀ և թե՛ համաշխարհային տնտեսության զարգացման տեսանկյունից առաջացրել է լուրջ խնդիրներ:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ բանկային համակարգը առանձնահատուկ տեղ ունի պետության զարգացման և հասարակական պահանջմունքների բավարարման տեսանկյունից, իսկ երկրի հիմնական ֆինանսական շարժն ու բնակչության կարիքների բավարարումը տեղի է ունենում բանկային համակարգի միջոցով: Տարածաշրջանային աշխարհաքաղաքական ռիսկերի, գնաճային և ֆինանսական արտաքին ազդակների, դրամական փոխանցումների կրճատման և պահանջարկի անկման արդյունքում նկատվում է ՀՀ տնտեսական աճի տեմպի նվազում, ինչից ելնելով էլ ավելի է կարևորվում բանկային համակարգի կայուն աշխատանքը, ինչն իր հերթին պետք է նպաստի բիզնես ոլորտի զարգացմանն ու տնտեսության կայունությանը, անգամ ճգնաժամային իրավիճակներում:

Հետազոտության նպատական է ուսումնասիրել ՀՀ բանկային համակարգի կայունությունը վերջին համաճարակների և պատերազմների ընթացքում, որից ելնելով ուսումնասիրվել է բանկային համակարգի զարգացման միջազգային փորձն ու ռուս-ուկրաինական պատերազմով պայմանավորված տարածաշրջանային զարգացումները, ինչպես նաև ՀՀ բանկային համակարգի վերջին տարիների զարգացման միտումներն ու ֆինանսական ցուցանիշների կայունությունը:

Տեսամեթոդական հիմքեր

Ճգնաժամային իրավիճակներում բանկերում կարևորվում է ռազմավարական կառավարման գործընթացը, որը պետք է կենտրոնանա հետևյալ հիմնական խնդիրների լուծման շուրջ՝

- ✓ ղեկավար անձնակազմի ջանքերի կենտրոնացում և գործողությունների համակարգում բոլոր մակարդակներում,

- ✓ բանկի գործունեության նպատակների և խնդիրների վերաբերյալ բաժնետերերի միջև հստակ պատկերացումների ձևավորում միջնաժամկետ, երկարաժամկետ և ռազմավարական առումով,

- ✓ մոտիվացիոն մրցունակ համակարգի ներդնում ռազմավարական խնդիրների կատարման, բանկի կորպորատիվ մշակույթի ձևավորման նպատակով,

- ✓ բանկի իմիջի շարունակական բարձրացում [3, էջ 31-32]:

Բանկային համակարգի կայունության տեսանկյունից միջազգային պրակտիկայում լայն կիրառում ունեն վարկ/գրավ (loan to value), պարտք/եկամուտ (debt to income) և պարտքի սպասարկում/եկամուտ (debt service to income) հարաբերակցությունների առավելագույն սահմանաչափերի սահմանումը [20]: ՀՀ-ում 2019 թ.-ից Բազել III-ի շրջանակներում կիրառվում է հակացիկլիկ բուֆեր, որի նպատակը ֆինանսատնտեսական շոկերին բանկային համակարգի դիմակայելու ունակության բարձրացումն ու տնտեսությանը վարկավորման տեսքով տրամադրվող ֆինանսական միջոցների հարթ ընթացքի ապահովումն է:

Հետազոտության ընթացքում կփորձենք վերլուծել ՀՀ բանկային համակարգի առավել կարևոր ցուցանիշները: Բանկային համակարգի գործունեության կայունության տեսանկյունից շատ կարևոր է ռազմավարական կառավարման արդյունավետ մեխանիզմի ստեղծումը և ռազմավարական վերլուծությունը՝ պլանավորման ու վերահսկման ընթացակարգերի կիրառմամբ: Իհարկե, յուրաքանչյուր չգնաժամ դրսևորվում է յուրովի և միայն ռազմավարական գործիքակազմը բավական չէ այն հաղթահարելու համար: Բանկային համակարգերը անխափան են գործում, երբ

առկա չեն ֆորսմաժորներ և տնտեսությունները կայուն են, իսկ վերջին տարիներին մենք ականատես ենք լինում լրիվ հակառակ պատկերին:

Ռուս-ուկրաինական պատերազմով պայմանավորված արագ տեմպերով սկսվեցին փոփոխվել վերջին տասնամյակներում ձևավորված ֆինանսական և բանկային համարգերը: Եվրամիությունը (ԵՄ) որոշել է անջատել Ռուսիաբանկը, Նովիկոմբանկը, Պրոմսլավաբանկը, Սովկոմբանկը, ՎՏԲ-ն և մի շարք այլ բանկեր SWIFT համակարգից (Համաշխարհային միջբանկային ֆինանսական հեռահաղորդակցության կազմակերպություն) [4]: ԵՄ երկրները մտադիր են համակողմանի տնտեսական եւ ֆինանսական պատերազմ սկսել ՌԴ դեմ և պատրաստ են ավելի ուժեղացնել պատժամիջոցները [5]: Այս առումով հետաքրքիր է արևելաեվրոկապան երկրների արձագանքը: Չեխիայի Ազգային բանկը՝ Sberbank Europe-ը, բանկային խմբի մեջ մտնող Sberbank CZ-ից («Սբերբանկ Չեխիա») բանկային գործունեության լիցենզիան հետ կանչելու գործընթաց է սկսել [6]: Միաժամանակ սերբական AIK Banka-ը հայտարարել է, որ փակել է Sberbank Srbija-ն (Sberbank Europe-ի մաս) գնելու գործարքը [7]: Եվրոպական կենտրոնական բանկն (ԵԿԲ) ավելի վաղ հայտարարել էր Sberbank Europe AG-ի (ռուսաստանյան «Սբերբանկի» դուստր ընկերություն) և Խորվաթիայում ու Սլովենիայում իր ստորաբաժանումների սնանկության ռիսկերի մասին: ԵՄ բանկային հատվածի խնդիրների կարգավորման միասնական խորհուրդը (Single Resolution Board) 24-ժամյա մորատորիում է հայտարարել Sberbank Europe AG (Ավստրիա), Sberbank d.d. (Խորվաթիա) եւ Sberbank banka d.d. (Սլովենիա) գործունեություն իրականացնելու վրա: Օրինակներն անվերջ կարող ենք շարունակել, քանի որ սանկցիաներն ու սահմանափակումներն օր օրի ավելանում են: Փորձենք հասկանալ՝ այս ամենին զուգահեռ ի՞նչ իրավիճակ է ռուսական շուկայում:

2008-2009 թթ. ֆինանսական ճգնաժամի ընթացքում ՌԴ բանկերն անցան դրամական միջոցների և ռեզերվների կուտակման գործընթացի, որպեսզի կարողանան անսպասելի իրավճակներում կանխիկ դրամի խնդիր չունենալ [2, էջ 52-53]: 2010-2011 թթ. ՌԴ տնտեսության վերականգնմանը նպաստեց նավթի արտահանման ծավալների և գների աճը՝ 2010 թ.՝ 32%-ով, 2011 թ.՝ 32%-ով: Նավթի գինը, 2008թ. 95-ից, 2009թ. 65 դոլար/բարել ընկնելուց հետո, 2011-2012 թթ. բարձրացավ մինչև 110-115 դոլար/բարել, իսկ արտահանումը հասավ ռեկորդային 527 մլրդ դոլարի (2008թ.՝ 472 մլրդ դոլար) [1, էջ 27]: Համեմատելով վերջին երկու տարիների տվյալները՝ պարզ է դառնում, որ վերոնշյալ ցուցանիշները մի քանի անգամ նվազել են (2020թ.՝ 72,4 , 2021թ.՝ 110,1 մլրդ դոլար) [8]:


Այս նոր ճգնաժամի պայմաններում ՌԴ ԿԲ տնօրենների խորհուրդը 2022 թ. փետրվարի 28-ից վերաֆինանսավորման տոկոսադրույքը բարձրացրել է 9,5%-ից մինչև 20% [9], որի նպատակն է բանկերում ավանդների տոկոսադրույքների աճը, ինչը պետք է փոխհատուցի ավանդատուներին դեֆլավացիոն և գնաճային ավելացող ռիսկերը: Վերջին անգամ ՌԴ ԿԲ-ն տոկոսադրույքի վերաբերյալ արտահերթ որոշում էր կայացրել 2014 թ. դեկտեմբերին (10,5-ից մինչև 17%): 20% ցուցանիշը բացարձակ ռեկորդ է ՌԴ պատմության մեջ: Շարունակվում է ռուսական ռուբլու գահավիժումը: Մարտի 2-ին դոլարի և եվրոյի փոխարժեքները թարմացրել են իրենց պատմական ռեկորդները [10]: Դոլարը վաճառվում էր առավելագույնը 110 ռուբլով, եվրոն՝ 122,39 ռուբլով՝ համաճայն առքուվաճառքի տվյալների: 22.03.2022 թ. ՌԴ բնակչության միջոցները բանկերում նվազել են 3,5%-ով կամ 1,2 տրլն. ռուբլով (2008 թ.՝ 6% կամ 354 մլրդ ռուբլի): Համաշխարհային ՀՆԱ աճի կանխատեսումը նվազել է մինչև 3,5% (0,7%-ով), ԵՄ-ում՝ 3,0%(1,5 %), ԱՄՆ-ում՝ 3,5%(0,2 %): Համաշխարհային ֆինանսական համակարգի հետ ՌԴ կապը գրեթե խզված է: Ստեղծվել են արտերկրում պահվող պետական արտարժույթի 300 մլրդ դոլարի պահուստները: Այս ամենի ֆոնին հետաքրքիր է ՀՀ դրամի փոխարժեքի տատանումները [11]: Ռուբլու արժեզրկմանը հաջողեց դրամի արժեզրկումը (երկու շաբաթվա ընթացքում մոտ 35 դրամ՝ 483-ից 518,28 ՀՀ դրամ՝ 11.03.2022թ. դրությամբ), ինչն, իհարկե, պայմանավորված է բնակչության և բիզնեսների մտավախություններով ու դրամական միջոցներն արտաժույթի վերածելու գործընթացով, ինչպես նաև՝ ՌԴ-ից և Բելառուսիայի որոշ բիզնեսների ՀՀ տեղափոխվելու հանգամանքներով: ԿԲ վերլուծության համաձայն՝ ՀՀ բանկային համակարգը կայուն է, իսկ արտաքին ռիսկերը՝ վերահսկելի [17]: Վերջին տարիներին ՌԴ ներկայությունը ՀՀ բանկային համակարգում ունի նվազման միտում և չափավոր

դիսկ է պարունակում: Մարտին ՀՀ ԿԲ-ն կարողացավ կարգավորել դրամի փոխարժեքը, և բարձրացրեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը 1,25 %-ով՝ սահմանելով այն 9,5% [19]: Այժմ վերլուծենք ՀՀ բանկային համակարգի վերջին զարգացումները:

Ուսումնասիրության մեթոդներ և ստացված արդյունքներ

Նախ՝ վերհիշենք, որ 2020 թ. սկսած Կառավարության կողմից մշակվեցին արտոնյալ վարկեր տարբեր թիրախային խմբերի աջակցման շրջանակներում, ինչպես նաև սկսվեց զիջումների և հետաձգումների գործընթաց, որոնք լրացուցիչ բեռ էին բանկային համակարգի համար (Covid 19, պատերազմ, հետպատերազմական ժամանակահատված, որը շարունակվում է առ այսօր), սակայն, այդ թվում՝ ԿԲ ջանքերով, համակարգը առավելագույնս խուսափեց կորուստներից [12]:


Ներկայացնենք ՀՀ բանկային համակարգի արձագանքը 2020-2021 թթ. շուկայում տիրող իրավիճակին: Գծ. 1-ում պատկերված է բանկերի կապիտալի համարժեքության և իրացվելիության նորմատիվները 2020 թ. հունվարի 1-ից 2021 թ. հուլիս 7-ն ընկած ժամանակահատվածում, որտեղ Ն1(2)-ը Ընդհանուր կապիտալ/Ռիսկով կշռված ակտիվներն են, Ն2(1)-ը Բարձր իրացվելի ակտիվներ/Ընդհանուր ակտիվներն են, Ն2(2)-ը՝ Բանկի բարձր իրացվելի ակտիվներ/Ցպահանջ պարտավորությունները [13]:



Գծապատկեր 1: ՀՀ բանկային համակարգի կապիտալի համարժեքության և իրացվելիության նորմատիվները:


Թվային տվյալներից ակնհայտ է, որ անգամ COVID 19-ի հետևանքները էական ազդեցություն չեն թողել իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ հարաբերակցությանը (31.08.2020 թ. 117,84%), սակայն 2020 թ. սեպտեմբերից մինչև 2021 թ. հունվար ամիսը ներառյալ, վերոնշյալ ցուցանիշը սկսել է նվազել՝ հասնելով վերջին տարիներին իր նվազագույն մակարդակին (31.12.2020 թ. 108,8 %): Հետագա ամիսներին վերականգնել է նախկին մակարդակը (30.11.2021 թ. 123,6%): Բարձր իրացվելի ակտիվներ / Ընդհանուր ակտիվներ ցուցանիշը 30.08.2020 թ. համեմատ 27,35 %-ից բարձրացել է՝ 30.11.2021 թ. կազմելով 31,76 %: Ինչ վերաբերում է Ընդհանուր կապիտալ / Ռիսկով կշռված ակտիվներ ցուցանիշին, ապա նույն ժամանակահատվածի համար այն 17,06%-ից նվազել է՝ հասնելով 15,53 %-ի:

Անդրադառնանք ֆինանսական կայունության հիմնական ցուցանիշներին 2019-2021 թթ. [14]:



Գծապատկեր 2: Վարկատեսակների պաշարային ցուցանիշի հունվար-դեկտեմբեր աճի տեմպերը 2019-2021թթ. ընթացքում


Գծ. 2-ի համաձայն՝ 2021 թ. դեկտեմբերի դրությամբ, ի տարբերություն նախորդ տարիների, դրական աճ արձանագրվել է միայն հիպոտեկային վարկերի գծով (36 %), ինչը տրամաբանական է՝ հաշվի առնելով եկամտային հարկի հետ վերադարձի մասին օրենքը և օրենքի վերջին փոփոխությունները, որոնք ուժի մեջ են մտել 2021 թ. սեպտեմբերի վերջից [15]: Սպառողական և բիզնես վարկերի առումով տեղի է ունեցել ակնհայտ անկում՝ շուկայական իրավիճակով պայմանավորված (համապատասխանաբար -11,2 % և -9,6%):



Գծապատկեր 3: Սպառողական, հիպոտեկային և բիզնես վարկերի տարեկան հոսքերի տ/տ աճի տեմպեր

Վերլուծելով գծ. 3-ում առկա ցուցանիշները կարող ենք արձանագրել, որ 2021 թ. դեկտեմբերի դրությամբ նոր տրամադրվող սպառողական և բիզնես վարկերի մասով առկա է աճի դրական միտում: Հիպոտեկային վարկերի դեպքում բարձր աճի տեմպերը պահպանվել են:


RUMELS Management Solutions խորհրդատվական ընկերության ուսումնասիրության համաձայն 2021 թ. ընթացքում ՀՀ գործող բանկերի զուտ շահույթը կազմել է 87 մլրդ ՀՀ դրամ, ինչը 33 մլրդ-ով կամ 62%-ով ավել է, քան 2020 թ. ընթացքում գրանցված արդյունքը: 2021 թ. ընթացքում վարկային կորուստների պահուստին կատարված մասհանումները 56 մլրդ-ով ավելի քիչ են կատարվել, քան 2020 թ. ընթացքում: 2021 թ. երեք բանկեր (Ամերիաբանկ, Արդշինբանկ և Ակբա բանկ) արձանագրել են ՀՀ բանկային համակարգի զուտ շահույթի ավելի քանի 50%-ը [16]:



Գծապատկեր 4: ՀՀ բանկերի զուտ շահույթը 2020-2021թթ.

Գծապատկեր 5-ում պատկերված է Ջուտ շահույթ / ընդհանուր կապիտալ միջին հարաբերակցությունը (ROAE): Բանկային համակարգի ROAE ցուցանիշը 2021 թ. ընթացքում աճել է

51%-ով (6.3%-ից՝ 9.5%): Բանկային համակարգի սեփական կապիտալը 2021 թ. ընթացքում աճել է 8.8%-ով եւ 31.12.2021թ. դրությամբ կազմել 958 մլրդ ՀՀ դրամ: Ամփոփելով նշենք, որ 2021 թ. ՀՀ բոլոր բանկերն ունեցել են դրական ROAE ցուցանիշ:



Գծապատկեր 5: ՀՀ բանկերի զուտ շահույթ/ընդհանուր կապիտալ միջին հարաբերակցության(ROAE) համեմատական ըստ բանկերի 2020-2021թթ.

Եզրակացություն

Ամփոփելով մեր կողմից կատարված աշխատանքի արդյունքները՝ կարող ենք փաստել հետևյալը.

ՀՀ բանկային համակարգը տնտեսության առավել կայացած համակարգերից մեկն է: Առևտրային բանկերը վերահսկում են շուկայում տեղի ունեցող փոփոխությունները, փորձում են հնարավորինս արագ բացահայտել և վերացնել առկա խնդիրները: ՀՀ տարածքում գործող բոլոր բանկերը իրացվելի են, բարձր կապիտալացված և իրենց գործունեությունն իրականացնում են բնականոն եղանակով: Այս ամենի վառ ապացույցն է մեր կողմից ներկայացված մի շարք կարևորագույն ֆինանսական ցուցանիշների հաշվարկը, որոնցից պարզ է դառնում, որ չնայած առկա կարճաժամկետ խնդիրներին, համաճարակով և 44-օրյա պատերազմով պայմանավորված, բանկային համակարգը շատ արագ ոտքի կանգնեց հետագա ամիսների ընթացքում:

Սակնցիաները, որոնք կիրառվում են ՌԴ նկատմամբ ՀՀ տնտեսության վրա կարող են ունենալ ոչ միայն բացասական, այլև դրական ազդեցություն՝ մարդկային ռեսուրսների և կապիտալի ներհոսքով պայմանավորված: Չմոռանանք նաև SWIFT համակարգի մասին [18]: Համակարգի անջատումը տարածվում է ՌԴ ոչ բոլոր բանկերի վրա, իսկ ՀՀ առևտրային բանկերում գործարքների տեսանկյունից խնդիրներ չպետք է առաջանան:

Դրամական փոխանցումների նվազումը բացասական է ազդում ՀՀ ներքին պահանջարկի վրա, սակայն նման իրավիճակը նորություն չէ ՀՀ տնտեսության համար (վերջին տարիներին մեր տնտեսությունը և բանկային համակարգը ավելի քիչ են կախված ՌԴ փոխանցումներից): Նշենք նաև, որ այս պահին շուկայում առկա է գնաճ տարբեր ոլորտներում, իսկ արտահանման ծավալները նվազել են: Մեր գնահատմամբ սրանք կարճաժամկետ ազդակներ են, քանի որ ռազմավարական առումով ԿԲ-ն կկարողանա կարգավորել արտարժույթի տատանումները, գնաճը որոշակի կկայունանա, իսկ արտահանման ծավալները կվերականգնվեն:

Գրականության ցանկ

1. Аганбегян А. Г., «Финансы, бюджет и банки в новой России», Издательский дом «Дело» РАНХиГС, Москва, 2020, стр. 31-32,
2. Дмитриев М. Э., Трунин Павел Вячеславович, Наркевич С. С. «Российская банковская система в условиях кризиса», Москва, 2010, стр. 52-53,
3. Мисюлин Д.В., «От стратегии к финансовым показателям деятельности банка» М.: БДЦ-Пресс // Расчеты и операционная техника в коммерческом банке, 2000. № 2(6), стр. 27
4. Council Regulation (EU) 2022/345 of 1 March 2022, https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=uriserv%3A0J.L_.2022.063.01.0001.01.ENG&toc=OJ%3AL%3A2022%3A063%3ATOC, 02.03.2022,
5. Евросоюз развернет тотальную экономическую войну против России <https://tass.ru/ekonomika/13910777?fbclid=IwAR3Bhj9vVoXp5cefi9ci6j6CNxUkdi3F1QBShTyk-P1u3hVagTjiYb9nziA>, 03.03.2022
6. ECB assesses that Sberbank Europe AG and its subsidiaries in Croatia and Slovenia are failing or likely to fail, <https://www.bankingsupervision.europa.eu/press/pr/date/2022/html/ssm.pr220228~3121b6aec1.en.html>, 03.03.2022
7. Сербский АИК Банка закрыл сделку по покупке "дочки" Сбербанка, <https://www.interfax.ru/business/825166>, 04.03.2022
8. В какие страны Россия экспортирует нефть и газ, https://tass.ru/info/14008857?utm_source=google.com&utm_medium=organic&utm_campaign=google.com&utm_referrer=google.com, 14.03.2022
9. ЦБ повысил ключевую ставку сразу до рекордных 20% годовых, https://www.rbc.ru/finances/28/02/2022/621c70319a7947458388e7e9?from=from_main_8, 04.03.2022
10. Курсы доллара и евро на Мосбирже обновили исторические максимумы, <https://www.vedomosti.ru/finance/news/2022/03/02/911652-kursi-dollar-avro-obnovili-maksimumi>, 03.03.2022
11. ՀՀ դրամի փոխարժեքի տատանումները, <https://www.cba.am/am/SitePages/Default.aspx>, 12.03.2022
12. Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման ծրագրեր <https://www.gov.am/am/covid19/>, 17.02.2022
13. Բանկերի կապիտալի համարժեքության և իրացվելիության նորմատիվները 2020-2021, <https://www.cba.am/am/SitePages/Search.aspx?k=կապիտալի համարժեքության և իրացվելիության>, 15.02.2022
14. Ընդհանուր կապիտալ / Ռիսկով կշռված ակտիվներ ցուցանիշ 2019-2021, [https://www.cba.am/am/SitePages/Search.aspx?k=duplicates:"26834"](https://www.cba.am/am/SitePages/Search.aspx?k=duplicates:), 15.02.2022
15. Եկամտային հարկի հետ վերադարձի մասին օրենքի վերջին փոփոխությունները, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=156294>, 15.02.2022
16. ՀՀ բանկային համակարգի ֆինանսական վերլուծություն 2021, https://rumels.am/publications_am.php?x=9, 17.02.2022
17. ՀՀ ԿԲ զեկույցը ռուս-ուկրաինական պատերազմի հնարավոր ազդեցությունների վերաբերյալ 01.03.2022,
18. Ինչ է SWIFT-ը, <https://ru.wikipedia.org/wiki/SWIFT>, 02.03.2022
19. ՀՀ ԿԲ, վերաֆինանսավորման տոկոսադրույքի փոփոխության վերաբերյալ https://www.cba.am/AM/News/Pages/news_09-06-21.aspx#sthash.roNZb5Dp.dpbs, 15.03.2022

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ՆԱԽԱԴԻՅԱԼՆԵՐԸ

ԳՈՎԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հայաստանի ազգային ագրարային համալսարան
տվյալագիտության ամբիոն
պրոֆեսոր, տնտեսագիտության թեկնածու
vardgohar@yandex.ru

ՌԱԶՄԻԿ ԱՀԱՐՈՆՅԱՆ

ՀՊՏՀ-ի ֆինանսատնտեսագիտական քոլեջի դասախոս
razmik.aharonyan94@gmail.com

Համառոտագիր

Տարածաշրջանային էկոնոմիկան տնտեսագիտության կարևոր ճյուղերից է, որն ուսումնասիրում է միջտարածաշրջանային, ներտարածաշրջանային և միջպետական տնտեսական կապերը: Տարածաշրջանային էկոնոմիկան զբաղվում է նաև տարածաշրջանների ժողովրդագրական, բնական և տնտեսական առանձնահատկությունների ուսումնասիրությամբ, հետազոտում է արտադրողական ուժերի օրինաչափությունները տարածաշրջանային մակարդակով: Միաժամանակ այն վերլուծում, կանխատեսում և հիմնավորում է արտադրողական ուժերի տեղաբաշխումը՝ հիմք ընդունելով տվյալ տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը, ինչպես նաև՝ դրա զարգացման համար պահանջվող բնական պայմանները: Հետևաբար, նույն տրամաբանությամբ, տեղայնացնելով վերոնշյալ միտքը, տարածաշրջանային էկոնոմիկան Հայաստանում ուսումնասիրում է արտադրողական ուժերի տեղաբաշխումը, քանի որ տնտեսական սուբյեկտները համարվում են ողջ երկրի տնտեսական մեխանիզմի անքակտելի մասը, չնայած որ այս համատեքստում առաջնային նշանակություն ունեն տնտեսության այն ճյուղերը, որոնք հասարակության առաջնային պահանջմունքների բավարարման համար ապահովում են արտադրանքի արտադրություն: Պակաս կարևոր չէ նաև տնտեսության այնպիսի ճյուղերի նշանակությունը, ինչպիսիք են՝ շինարարությունը, հանքարդյունաբերությունը և էներգետիկան: Տարածաշրջանային էկոնոմիկան համարվում է միակ տնտեսական կատեգորիան, որը զբաղվում է կոնկրետ աշխարհագրական տարածքի տնտեսագիտական ուսումնասիրությամբ: Եթե հետազոտողը, գիտնականը զբաղվում է ֆինանսաբանկային համակարգի կամ այլ նմանատիպ խնդիրների ուսումնասիրությամբ, ապա նա անպայման պետք է տեղյակ լինի տվյալ տարածաշրջանի տնտեսական կառուցվածքից, պատկերացում ունենա տարածաշրջանի տնտեսական ներուժի մասին, իմանա, թե ինչպիսին է վերջինիս սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը: Տարածաշրջանային քաղաքականության հիմնական նպատակն է՝ չթուլատրել տարածաշրջանում սոցիալ-տնտեսական իրավիճակի վատթարացում: Տարածաշրջանային էկոնոմիկան փորձում է կազմակերպել և ներդնել համապատասխան տնտեսական գործիքներ և տալ տարածաշրջաններին որոշակի արտոնություններ: Տարածաշրջանային էկոնոմիկայի գործառնություններից է նաև տարածաշրջանում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործողությունների, ազդեցությունների տարանջատումը: Տնտեսագիտական այս ճյուղի երկու հիմնական հասկացություններն են տարածաշրջանը և շրջանը:

Այս հետազոտությունում մեր կողմից փորձ է կատարվել Հայաստանի Հանրապետության տարածաշրջանային տնտեսական ցուցանիշների հաշվարկը օպտիմալ և ավելի դյուրին դարձնելու համար ՀՀ-ն բաժանել տնտեսական շրջանների: Տնտեսական շրջանների բաժանման նպատակով առանձնացրել ենք մի քանի բնութագրական ցուցանիշներ, որոնք Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական կոմիտեն տրամադրում է մարզային կտրվածքով:

Տնտեսական շրջանի առանձնացման հիմնական պայման է համարվում բոլոր գործոնների հաշվարկմանը համապարփակ մոտեցումը, որոնք կօգնեն վերջինիս ընդունել որպես ինքնուրույն և իրավահավասար տարածաշրջանային միավոր, և կատարել նրան վերաբերող վերլուծական ու տնտեսական հետազոտություններ:

Բանալի բառեր և բառակապակցություններ. տարածաշրջանային վիճակագրություն, տարածաշրջան, տարածաշրջանային տնտեսական ցուցանիշներ, տնտեսական շրջան:

МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ОСНОВЫ И ПРЕДПОСЫЛКИ ФОРМИРОВАНИЯ ЭКОНОМИЧЕСКИХ РАЙОНОВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

ГООР ВАРДАНЯН

профессор кафедры даталогии Национального аграрного университета Армении

кандидат экономических наук

vardgoar@yandex.ru

РАЗМИК АГАРОНЯН

преподаватель Финансо-экономического колледжа АШЭУ

razmik.aharonyan94@gmail.com

Аннотация

Региональная экономика одна из важных отраслей экономики, изучающая межрегиональные, внутрирегионально-межгосударственные экономические отношения. Региональная экономика также занимается изучением демографических, природных и экономических особенностей регионов, изучает закономерности развития производительных сил на региональном уровне. При этом она анализирует, прогнозирует, обосновывает размещение производительных сил, исходя из уровня социально-экономического развития региона, а также необходимых для его развития природных условий. Следовательно, по той же логике, локализуя указанную выше мысль, региональная экономика в Армении изучает размещение производительных сил, поскольку хозяйствующие субъекты рассматриваются как неотъемлемая часть хозяйственного механизма всей страны. Хотя в этом контексте первостепенное значение имеют отрасли экономики, обеспечивающие производство продукции для удовлетворения основных потребностей общества, не менее важное значение имеет значение таких отраслей экономики, как строительство, добыча полезных ископаемых и энергетика. Региональная экономика считается единственной экономической категорией, которая занимается экономическим изучением конкретной географической области. Если исследователь занимается изучением финансово-банковской системы или другими подобными вопросами, он должен быть в курсе экономической структуры данного региона, иметь представление об экономическом потенциале региона, знать уровень своего социально-экономического развития. Основная цель региональной политики – не допустить ухудшения социально-экономической ситуации в регионе. Региональную экономику пытаются организовать, внедрить соответствующие экономические инструменты, дать регионам определенные привилегии. Одной из функций региональной экономики является разделение действий и влияний государственных органов и органов местного самоуправления в регионе. Двумя основными понятиями этой отрасли экономики являются регион и район.

В данном исследовании мы предприняли попытку разделить Республику Армения на экономические районы, чтобы сделать расчет региональных экономических показателей Республики Армения оптимальным, более легким. С целью разделения экономических районов мы выделили несколько характерных показателей, которые предоставляются Национальным статистическим комитетом Республики Армения в региональном разрезе.

Основным условием выделения экономического района является комплексный подход к расчету всех факторов, что позволит принять последний как самостоятельную, равноправную региональную единицу, провести по нему аналитические и экономические исследования.

Ключевые слова и словосочетания: региональная статистика, регион, региональные экономические показатели, экономический район.

METHODOLOGICAL BASIS AND PRECONDITIONS FOR THE FORMATION OF ECONOMIC REGIONS IN THE REPUBLIC OF ARMENIA

GOHAR VARDANYAN

Armenian National Agrarian University
Department of Data Sciences
PhD in Economic Sciences, Professor
vardanyangohar@yandex.ru

RAZMIK AHARONYAN

Armenian State University of Economics
College of Finance and Economics,
Lecturer Razmik.aharonyan94@gmail.com

Abstract

Regional economics is one of the important branches of economics, which studies interregional, intraregional-interstate economic relations. The regional economy is also engaged in the study of the demographic, natural and economic features of the regions, examines the regularities of the productive forces at the regional level. At the same time, it analyzes, forecasts, substantiates the distribution of productive forces, based on the level of socio-economic development of the region, as well as the natural conditions required for its development. Therefore, by the same logic, localizing the above-mentioned idea, the regional economy in Armenia studies the distribution of productive forces, as economic entities are considered an integral part of the economic mechanism of the whole country. Although in this context the branches of the economy that provide production to meet the basic needs of the society are of primary importance, the importance of such branches of the economy as construction, mining and energy is no less important. The regional economy is considered to be the only economic category that deals with the economic study of a specific geographical area. If the researcher is engaged in the study of the financial-banking system or other similar issues, he / she must be aware of the economic structure of the given region, have an idea of the economic potential of the region, know the level of its socio-economic development. The main goal of the regional policy is not to allow the deterioration of the socio-economic situation in the region. The regional economy tries to organize, introduce appropriate economic tools, give certain privileges to the regions. One of the functions of the regional economy is to separate the actions and influences of state and local self-government bodies in the region. The two main concepts of this branch of economics are region l₁ region.

In this research, we have made an attempt to divide the Republic of Armenia into economic regions in order to make the calculation of the regional economic indicators of the Republic of Armenia optimal, easier. For the purpose of dividing the economic regions, we have singled out several characteristic indicators, which are provided by the National Statistical Committee of the Republic of Armenia in the regional context.

The main condition for the separation of the economic district is the comprehensive approach to the calculation of all factors, which will help to accept the latter as an independent, equal regional unit, to conduct analytical and economic research on it.

Keywords and phrases: regional statistics, region, regional economic indicators, economic region.

Ներածություն

Գաղտնիք չէ, որ տարածաշրջանային էկոնոմիկան տնտեսագիտության կարևոր ճյուղերից է, որն ուսումնասիրում է միջտարածաշրջանային, ներտարածաշրջանային և միջպետական տնտեսական կապերը: Տարածաշրջանային էկոնոմիկան զբաղվում է նաև տարածաշրջանների ժողովրդագրական, բնական և տնտեսական առանձնահատկությունների ուսումնասիրությամբ, հետազոտում է արտադրողական ուժերի օրինաչափությունները տարածաշրջանային մակարդակով: Միաժամանակ այն վերլուծում, կանխատեսում և հիմնավորում է արտադրողական ուժերի տեղաբաշխումը՝ հիմք ընդունելով տվյալ տարածաշրջանի (մարզի) սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը, ինչպես նաև դրա զարգացման համար պահանջվող բնական պայմանները: Հետևաբար, նույն տրամաբանությամբ, տեղայնացնելով վերոնշյալ միտքը, տարածաշրջանային էկոնոմիկան Հայաստանում ուսումնասիրում է արտադրողական ուժերի տեղաբաշխումը, քանի որ տնտեսական սուբյեկտները համարվում են ողջ երկրի տնտեսական մեխանիզմի անքակտելի մասը, չնայած որ այս համատեքստում առաջնային նշանակություն ունեն տնտեսության այն ճյուղերը, որոնք հասարակության առաջնային պահանջմունքների բավարարման համար ապահովում են արտադրանքի արտադրություն: Պակաս կարևոր չէ նաև տնտեսության այնպիսի ճյուղերի նշանակությունը, ինչպիսիք են՝ շինարարությունը, հանքարդյունաբերությունը և էներգետիկան: Տարածաշրջանային էկոնոմիկան համարվում է միակ տնտեսական կատեգորիան, որը զբաղվում է կոնկրետ աշխարհագրական տարածքի (տարածաշրջանի, մարզի, շրջանի) տնտեսագիտական ուսումնասիրությամբ: Եթե հետազոտողը, գիտնականը զբաղվում է ֆինանսաբանկային համակարգի կամ այլ նմանատիպ խնդիրների ուսումնասիրությամբ, ապա նա անպայման պետք է տեղյակ լինի տվյալ տարածաշրջանի տնտեսական կառուցվածքից, պատկերացում ունենա տարածաշրջանի տնտեսական ներուժի մասին, իմանա, թե ինչպիսին է վերջինիս սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը: Տարածաշրջանային քաղաքականության հիմնական նպատակն է չթույլատրել տարածաշրջանում սոցիալ-տնտեսական իրավիճակի բացասական իմաստով սրացումը (այն է բնակֆոնդի կառավարում և տնտեսական անկայունություն): Տարածաշրջանային էկոնոմիկան փորձում է կազմակերպել և ներդնել համապատասխան տնտեսական գործիքներ և/կամ տալ տարածաշրջաններին որոշակի արտոնություններ (օրինակ՝ որոշակի ապրանքների, արտադրանքի ներկրման քվոտավորում): Տարածաշրջանային էկոնոմիկայի գործառույթներից է նաև տարածաշրջանում (մարզում) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործողությունների, ազդեցությունների տարանջատումը: Տնտեսագիտական այս ճյուղի երկու հիմնական հասկացություններն են տարածաշրջանը (վարչատարածքային միավոր) և շրջանը:

Տարածաշրջան է համարվում վարչական և քաղաքական միավորը: Այն վարչական սահմաններով տարածք է՝ հաստատված պետության կողմից, որի հատկանիշներն են համակարգվածությունը, ամբողջականությունը և կառավարելիությունը:

Շրջանը ո՛չ քաղաքական և ո՛չ էլ վարչական միավոր է: Այն տարածք է, որն ունի մեկ կամ մի քանի հատկանիշներ, որոնցով տարբերվում է հարևան շրջաններից: Տարածաշրջանային էկոնոմիկան՝ որպես գիտություն, համակցված է այնպիսի գիտությունների հետ, ինչպիսիք են՝ վիճակագրությունը, տարածաշրջանային կառավարումը, հասարակագիտությունը, աշխատանքի էկոնոմիկան և այլն: Որպես կանոն՝ տարածաշրջանները տարբերվում են իրենց զարգացման և սոցիալ-տնտեսական մակարդակներով: Հիմնական գործիքը, որից օգտվում է տարածաշրջանային էկոնոմիկան, տարածաշրջանային զարգացման պետական ծրագիրն է: Այս ծրագիրը կազմվում է՝ ըստ տարածաշրջանի առանձնահատկությունների, նրա զարգացման մակարդակի և հաճախ ուղղված է հեռավոր, սահմանամերձ տարածաշրջանների զարգացմանը: Պետք է նշել, որ

չավարտված ներդրումային ծրագրերը խոչընդոտում են տարածաշրջանի հետագա ինքնուրույն զարգացման համար:

Մակրոտարածաշրջանները երկրի խոշոր տնտեսական տարածքներն են իրենց բնորոշ արտադրողական ուժերի բնական և տնտեսական պայմաններով՝ կախված բնական ռեսուրսների կենտրոնացվածությունից և բնակչության տարածաշրջանային տեղաբաշխումից:

Մակրոշրջանի սահմանները ընդունվում են պայմանականորեն, քանի որ նրանց ներսում առկա են շրջաններ, որոնց բնակչիմայական և տնտեսական բնութագրերը էականորեն շեղվում են մակրոշրջանը՝ որպես ամբողջություն բնորոշող կանոններից: Տնտեսական շրջանը երկրի տնտեսության տարածքային մասն է, որը բնութագրվում է հատուկ տնտեսական և աշխարհագրական դիրքով, բնական և տնտեսական պայմանների յուրահատկությամբ և պայմանականորեն հաստատված աշխատանքի տարածքային սոցիալական բաժանման վրա հիմնված արտադրության մասնագիտացմամբ: Այս հասկացությունը կարելի է մեկնաբանել նաև հետևյալ կերպ. մակրոտնտեսական շրջանը երկրի տնտեսության տարածքային մաս է՝ բնութագրված կոնկրետ տնտեսաաշխարհագրական դիրքով, տարածաշրջանային տնտեսական միասնականությամբ, ինչպես նաև՝ յուրահատուկ բնական պայմաններով:

Տնտեսական շրջանի առանձնացման հիմնական պայման է համարվում բոլոր գործոնների հաշվարկմանը համապարփակ մոտեցումը, որոնք կօգնեն վերջինիս ընդունել որպես ինքնուրույն և իրավահավասար տարածաշրջանային միավոր, և կատարել նրան վերաբերող վերլուծական ու տնտեսական հետազոտություններ [1, էջ 237-239]:

Տեսամեթոդական հիմքեր

Ներկայումս Հայաստանի Հանրապետության տարածքը բաժանված է տասը մարզի և համայնքի կարգավիճակ ունեցող Երևան քաղաքի: Հայաստանի Հանրապետության մարզերն են՝ Արագածոտնը, Արարատը, Արմավիրը, Գեղարքունիքը, Լոռին, Կոտայքը, Շիրակը, Սյունիքը, Վայոց Ձորը և Տավուշը: Մարզի տարածքը կազմված է նրա մեջ ընդգրկված համայնքների տարածքներից և պետական սեփականություն հանդիսացող հողային և ջրային այլ տարածքներից: Հայաստանի Հանրապետության մարզային բաժանման, մարզերի սահմանների, մարզերի վարչական կենտրոնների, համայնքների, թաղային համայնքների, բնակավայրերի և թաղամասերի տարածքների սահմանների փոփոխումը, նոր համայնքների ստեղծումը կամ նոր բնակավայրերի հիմնումը, բնակավայրերի դասակարգման փոփոխումը, ինչպես նաև մարզերի, բնակավայրերի, թաղամասերի, համայնքների և թաղային համայնքների անվանումներն ու վերանվանումները կատարվում են Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացմամբ՝ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի մեջ համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով:

Բնակավայրերի վերանվանումները կատարվում են միայն պատմական անվանումները վերականգնելու, օտար, ոչ բարեհունչ և կրկնվող անվանումները վերացնելու նպատակով՝ հաշվի առնելով բնակավայրերի բնակչության կարծիքը [2, Հոդված 1 և 2]:

Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեն վերջին տարիներին սկսել է հրապարակել երկրի տարածաշրջանային մակրոտնտեսական ցուցանիշները: Վերջինս որպես տարածաշրջանային միավոր ընտրել է ՀՀ մարզերը և մայրաքաղաք Երևանը: Տարածաշրջանային էկոնոմիկան, ինչպես ցանկացած տնտեսագիտական այլ ճյուղ, ունի իրեն բնորոշ գիտական հասկացություններ: Ներկայացնենք դրանցից հիմնականը: Տնտեսական անվտանգությունը գնահատող կարևորագույն ցուցանիշ է համարվում համախառն տարածաշրջանային արդյունքը.

այն բնութագրում է տնտեսական զարգացման մակարդակը տվյալ տարածաշրջանում, այսինքն՝ բոլոր տնտեսվարող սուբյեկտների կողմից ստացված տնտեսական գործունեության արդյունքները:

Հայտնի է, որ Համախառն ներքին արդյունքը ազգային հաշիվների համակարգի առանցքային ցուցանիշն է, ինչը հաշվարկվում է որպես տնտեսության բոլոր ճյուղերի համախառն ավելացված արժեքների գումար: Համախառն ավելացված արժեքը իրենից ներկայացնում է թողարկված ապրանքների, ծառայությունների և միջանկյալ սպառման տարբերություն, այսինքն՝ արտադրության գործընթացում ամբողջությամբ սպառված ապրանքների և ծառայությունների արժեքը:

Համախառն տարածաշրջանային արդյունքի բացարձակ չափը իրենից ներկայացնում է տվյալ երկրի տնտեսության մեջ այդ շրջանի կատարած ներդրման օբյեկտիվ ցուցանիշ, քանի որ բոլոր շրջանների գումարային ՀՆԱ-ն կազմում է երկրի ՀՆԱ-ի ծավալը:

Ներքոհիշյալ գծանկար 1-ում ներկայացրել ենք ՀՀ վարչատարածքային բաժանման քարտեզը:



Նկար 1. ՀՀ վարչատարածքային բաժանումը:

Ուսումնասիրության մեթոդներ

Այս հետազոտությունում մեր կողմից փորձ է կատարվել Հայաստանի Հանրապետության տարածաշրջանային տնտեսական ցուցանիշների հաշվարկը օպտիմալ և ավելի դյուրին դարձնելու համար ՀՀ-ն բաժանել տնտեսական շրջանների: Տնտեսական շրջանների բաժանման նպատակով առանձնացրել ենք մի քանի բնութագրական ցուցանիշներ, որոնք Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական կոմիտեն տրամադրում է մարզային կտրվածքով: Այդ ցուցանիշներն են՝ համախառն տարածաշրջանային ներքին արդյունքը, ընդամենը և մեկ շնչի հաշվով, շինարարության, արդյունաբերության, գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը և մշտական բնակչության թվաքանակը՝ ըստ մարզերի: Այս համատեքստում հատկապես շատ կարևոր է նաև տարածաշրջանների (մարզերի) աշխարհագրական դիրքը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս պահի դրությամբ ՀՀ ազգային վիճակագրական կոմիտեն հրապարակել է համախառն տարածաշրջանային ներքին արդյունքի միայն 2015-2019

թվականների ցուցանիշները, 2020 թվականի համախառն տարածաշրջանային արդյունքի հաշվարկը կատարվել է մեր կողմից: Մնացած բոլոր ցուցանիշները նույնպես հաշվարկել ենք մենք՝ 2016-2020 թվականների ՀՀ ՎԿ-ի հրապարակած տվյալների միջինացման արդյունքում: Ստորև բերված աղյուսակներում ներկայացված են հաշվարկված բոլոր ցուցանիշները:

Աղյուսակ 1.

Հայաստանի Հանրապետության համախառն տարածաշրջանային արդյունքի միջինացված ցուցանիշները՝ ըստ մարզերի 2016-2020թթ. (ընթացիկ գներով, մլն դրամ):

ՀՀ մարզեր և մայրաքաղաք Երևան	2016	2017	2018	2019	2020*	Միջինացված ցուցանիշներ
ք. Երևան	2756727	3032454	3257069	3820048	3437005	3260660.68
Արագածոտն	176132.2	175229.2	190498.2	165502	179268.3	177325.98
Արարատ	365278.4	381659.4	424079	452804.4	426534.8	410071.2
Արմավիր	326554.9	340603.5	380625.7	384781.2	377081.5	361929.36
Գեղարքունիք	203429.5	224241.9	234995.9	234517.3	234903.2	226417.56
Լոռի	252438.5	276931.1	248216.3	229581.6	259629.9	253359.48
Կոտայք	302305.8	346843	409454.4	413471.6	395626.5	373540.26
Շիրակ	238717.8	238001.1	273716.3	268947.4	265811.6	257038.84
Սյունիք	265086.4	335238	385943.3	370576.7	370899.8	345548.84
Վայոց Ձոր	94635.8	94635.8	75717.5	69128.9	86543.3	84132.26
Տավուշ	107138.5	118656.6	136719.4	133907.9	129814.9	125247.46

*Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ ՀՀ ՎԿ-ի հրապարակած տվյալների համաձայն:

Աղյուսակ 1-ի տվյալները փաստում են, որ Երևան քաղաքը 3434005 մլն դրամ համախառն ներքին արդյունքի ցուցանիշով բացարձակ առաջատար է:

Աղյուսակ 2.

Հայաստանի Հանրապետության համախառն տարածաշրջանային արդյունքի 1 շնչի հաշվով միջինացված ցուցանիշները՝ ըստ մարզերի 2016-2020 թթ. (ընթացիկ գներով, մլն դրամ):

ՀՀ մարզեր և մայրաքաղաք Երևան	2016	2017	2018	2019	2020*	Միջինացված ցուցանիշներ
ք. Երևան	2565113	2816433	3016643	3527284	3195656	3024225.8
Արագածոտն	1363260	1371121	1508299	1322958	1444412	1402010
Արարատ	1412523	1478727	1648189	1764631	1672553	1595324.6
Արմավիր	1226728	1284327	1440128	1458057	1431888	1368225.6
Գեղարքունիք	879505	974118	1026183	1028821	1022777	986280.8
Լոռի	1132011	1263372	1147025	1070810	1202285	1163100.6
Կոտայք	1192998	1375270	1627402	1645986	1588435	1486018.2
Շիրակ	989709	1002954	1168230	1157759	1139666	1091663.6
Սյունիք	1904356	2417001	2796691	2695103	2709315	2504493.2
Վայոց Ձոր	1455113	1892716	1535852	1419485	1680277	1596688.6
Տավուշ	857108	956908	1113350	1099408	1085396	1022434

*Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ համաձայն ՀՀ ՎԿ տվյալների կողմից հրապարակած տվյալների:

Աղյուսակ 2-ի տվյալներից պարզ է դառնում, որ Հայաստանի Հանրապետության 1 շնչի հաշվով համախառն տարածաշրջանային արդյունքի միջինացված ցուցանիշով բացարձակ առաջատարը մայրաքաղաք Երևանն է, իսկ ամենացածր ցուցանիշը գրանցվել է Գեղարքունիքի մարզում՝ 986280,8 ՀՀ դրամ:

Աղյուսակ 3-ում ներկայացված են Հայաստանի Հանրապետությունում շինարարության տարածաշրջանային ցուցանիշների շարժընթացը 2016-2020 թվականներին: Տվյալները ավելի ընդանրական և համադրելի դարձնելու նպատակով կատարել ենք ցուցանիշների միջինացում: Այսպիսով՝ այս ոլորտում ևս բացարձակ առաջատար է քաղաքամայր Երևանը՝ 234,62 մլրդ դրամ միջինացված ցուցանիշով: Շինարարության միջինացված ամենացածր ցուցանիշը դարձյալ գրանցվել է Գեղարքունիքի մարզում՝ 18,2 մլրդ դրամ:

Աղյուսակ 3.

Հայաստանի Հանրապետությունում շինարարության արտադրանքի տարածաշրջանային միջինացված ցուցանիշները՝ ըստ մարզերի 2016-2020թթ. (ընթացիկ գներով, մլրդ դրամ):

ՀՀ մարզեր և մայրաքաղաք Երևան	2016	2017	2018	2019	2020	Միջինացված ցուցանիշներ
ք. Երևան	250.4	206	228	240	248.7	234.62
Արագածոտն	22.7	21.3	20.8	13.3	14.2	18.46
Արարատ	15.6	327	25.3	25.4	24.2	83.5
Արմավիր	10.1	25.9	37.3	37.1	23.2	26.72
Գեղարքունիք	16.4	16.1	15.5	22.7	20.3	18.2
Լոռի	16.8	17.7	20.7	14.3	16.6	17.22
Կոտայք	15.2	21.6	24.3	26.8	25.1	22.6
Շիրակ	16.5	14.7	16.2	28.1	17.4	18.58
Սյունիք	29.8	19.2	22.2	19.5	21.4	22.42
Վայոց Ձոր	7.2	37.8	10.8	6.8	8.6	14.24
Տավուշ	12.7	16.9	14.8	16.9	13	14.86

Աղյուսակ 4.

Հայաստանի Հանրապետությունում արդյունաբերական արտադրանքի ծավալի տարածաշրջանային միջինացված ցուցանիշները՝ ըստ մարզերի 2016-2020թթ. (ընթացիկ գներով, մլրդ դրամ):

ՀՀ մարզեր և մայրաքաղաք Երևան	2016	2017	2018	2019	2020*	Միջինացված ցուցանիշներ
ք. Երևան	588.8	684.7	735.2	787.5	723.5	703.94
Արագածոտն	54.2	53.5	51.4	45.7	44.2	49.8
Արարատ	190	217.3	254.5	296.8	301	251.92
Արմավիր	70.1	78.4	83.6	108.4	122.5	92.6
Գեղարքունիք	52.3	55.3	64.6	69.9	69.9	62.4
Լոռի	143.5	163.7	89.4	87.2	110.4	118.84
Կոտայք	148.7	174.5	208.4	220	253.9	201.1
Շիրակ	58.4	63.4	69.6	69.4	59.9	64.14
Սյունիք	222.6	194.3	323.5	347.5	359.8	289.54
Վայոց Ձոր	22.9	24.6	27.6	27.8	24.9	25.56
Տավուշ	21.3	24.9	29.5	31.3	31.1	27.62

*Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ ՀՀ ՎԿ-ի կողմից հրապարակած տվյալների համաձայն:

Աղյուսակ 4-ում ներկայացված է Հայաստանի Հանրապետությունում արդյունաբերական արտադրանքի ծավալի տարածաշրջանային ցուցանիշների շարժընթացը 2016-2020 թվականների կտրվածքով, ինչպես նաև հեղինակի կողմից կատարվել է միջին ցուցանիշների հաշվարկ ցուցանիշները համադրելի դարձնելու նպատակով: Աղյուսակի տվյալներից կարելի է եզրակացնել, որ 2016-2019 թվականներին գրանցվել է արդյունաբերական արտադրանքի ծավալի կայուն աճ մայրաքաղաք Երևանում, Արարատի, Լոռվա, Շիրակի, Սյունիքի, Վայոց Ձորի և Տավուշի մարզերում: Հատկապես պետք է կարևորել Շիրակի մարզում գրանցված աճը վերոնշյալ ոլորտում՝ հաշվի առնելով մարզի՝ աղետի գոտի լինելու կարգավիճակը: Ցավոք, պետք է փաստել, որ 2020 թվականի համավարակային իրավիճակով պայմանավորված, գրեթե բոլոր մարզերում ունեցել ենք շինարարության ծավալների անկում:

Աղյուսակ 5-ում ներկայացված են Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսության համախառն տարածաշրջանային արդյունքի միջինացված ցուցանիշները: Ի տարբերություն վերոնշյալ ցուցանիշների՝ այս ոլորտում մայրաքաղաք Երևանը հասկանալի պահանջներով զիջել է առաջատարի դիրքը: Գյուղատնտեսական համախառն տարածաշրջանային միջինացված ցուցանիշով հանրապետությունում առաջատար է Արմավիրի մարզը՝ 179,58 մլրդ դրամ ցուցանիշով: Առաջատար եղյակում են նաև Արարատի և Գեղարքունիքի մարզերը՝ համապատասխանաբար 127.38 մլրդ դրամ և 112.84 մլրդ դրամ միջինացված ցուցանիշներով:

Աղյուսակ 5.

Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսության համախառն տարածաշրջանային արդյունքի միջինացված ցուցանիշները՝ ըստ մարզերի 2016-2020թթ. (ընթացիկ գներով, մլրդ դրամ):

ՀՀ մարզեր և մայրաքաղաք Երևան	2016	2017	2018	2019	2020*	Միջինացված ցուցանիշներ
ք. Երևան	11.1	10.6	12.1	10.5	8.9	10.64
Արագածոտն	87	88.4	91.3	79.7	82.5	85.78
Արարատ	134.9	125	124.8	127.2	125	127.38
Արմավիր	176.5	184.2	177.5	178.7	181	179.58
Գեղարքունիք	111.6	122.6	118.2	112.4	99.4	112.84
Լոռի	69.2	79	73.2	68.5	67.2	71.42
Կոտայք	60.4	73.4	72.9	70.6	73.7	70.2
Շիրակ	101.7	99.4	97.9	88.7	83.5	94.24
Սյունիք	64.6	62.1	63.4	58.9	54.4	60.68
Վայոց Ձոր	21.9	24	22.3	21.1	21.8	22.22
Տավուշ	39.6	39.9	39.3	37	35.9	38.34

*Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ համաձայն ՀՀ ՎԿ տվյալների:

Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակչության թվաքանակը՝ ըստ մարզերի 2021թվականի հունվարի 1-ի դրությամբ (հազ. մարդ):

ՀՀ մարզեր և մայրաքաղաք Երևան	2021թ հունվարի 1-ի դրությամբ
ք. Երևան	1091.7
Արագածոտն	124.5
Արարատ	256.6
Արմավիր	264
Գեղարքունիք	227.3
Լոռի	212.6
Կոտայք	251.2
Շիրակ	231
Սյունիք	135.8
Վայոց Ձոր	48.1
Տավուշ	120.5

Աղյուսակ 6-ում ներառված է Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ:

Ստացված արդյունքներ


Մեր կողմից նպատակ է դրվել կատարելու ՀՀ տնտեսական շրջանների ձևավորում, ինչի համար հիմք են ծառայել մարզերի վերոնշյալ ցուցանիշները, ինչպես նաև՝ վերջիններիս աշխարհագրական դիրքերը: Միևնույն տնտեսական շրջանի մեջ ներառել ենք այնպիսի մարզեր, որոնք աշխարհագրական տեսանկյունից հարևաններ են և ունեն տնտեսական ու ժողովրդագրական, միմյանց մոտ կամ միմյանց լրացնող ցուցանիշներ: Բացառություն կկազմի Սյունիքի մարզը, քանի որ նրա միակ աշխարհագրական հարևանը Վայոց ձորի մարզն է, և քանի որ խնդիր ունենք ստեղծելու տնտեսապես հավասարազոր շրջան, այս երկու մարզերին միացնենք նաև Արարատի մարզը: Միավորելով վերջիններիս՝ կստանանք տնտեսական շրջան, որը պայմանականորեն կկրի *Հարավային տնտեսական շրջան* անվանումը: Պետք է նաև հատուկ ուշադրության արժանացնել մայրաքաղաք Երևանին: Նրա տնտեսական և ժողովրդագրական ցուցանիշը հավասար է մեկ լիարժեք տնտեսական շրջանի ցուցանիշի, հետևաբար նույնպես առանձնացնելու իմաստ կա այն՝ որպես ինքնուրույն տնտեսական շրջան՝ *Երևանյան կամ Մայրաքաղաքային տնտեսական շրջան* պայմանական անվանմամբ: Մյուս դեպքերում առաջնորդվենք տնտեսական, աշխարհագրական և ժողովրդագրական նմանությունների, ինչպես նաև՝ միմյանց փոխլրացնող ցուցանիշների ընտրման սկզբունքով: Նպատակահարման ենք գտնում Արմավիրի, Արագածոտնի և Կոտայքի մարզերը միավորել մեկ տնտեսական շրջանում՝ *Կենտրոնական տնտեսական շրջան* անվանմամբ: Վերջին՝ չորրորդ տնտեսական շրջանը, որը իր մեջ կներառի Լոռվա, Շիրակի, Տավուշի և Գեղարքունիքի մարզերը, կկրի *Հյուսիսարևելյան տնտեսական շրջան* պայմանական անվանումը: Կստանաք չորս լիարժեք տնտեսական շրջաններ, որոնցից երեքը կունենան միմյանց մոտ տնտեսական արդյունքներ: Ներկայացնենք աղյուսակ, որտեղ առկա է վերոնշյալ տնտեսական շրջանների համախառն տարածաշրջանային ներքին արդյունքի ցուցանիշը, մշտական բնակչության թվաքանակը 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ և մեկ շնչի հաշվով տարածաշրջանային համախառն ներքին արդյունքը 2020 թվականին:

Հայաստանի Հանրապետության տնտեսական շրջանների մի քանի տնտեսական և ժողովրդագրական ցուցանիշներ:

Տնտեսական շրջաններ	2020 թվականի համախառն տարածաշրջանային ներքին արդյունք՝ ըստ տնտեսական շրջանների (մլն դրամ)	Մշտական բնակչություն 2021թ հունվարի 1-ի դրությամբ (հազ. մարդ)	2020 թվականի ներքին արդյունք (համախառն, շուկայական գներով) բնակչության մեկ շնչի հաշվով՝ ըստ տնտեսական շրջանների (դրամ)
Երևանյան կամ Մայրաքաղաքային	3437005.2	1091,7	3195656
Հյուսիսարևելյան	890159.6	791.4	1112531
Կենտրոնական	951976.3	639.7	1488245
Հարավային	883977.9	440.5	1898835

*Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից՝ հոդվածում ներկայացված աղյուսակների տվյալների հիման վրա:

Ստորև՝ գծանկար 2-ում, ներկայացված է նաև Հայաստանի Հանրապետության քարտեզը՝ ըստ տնտեսական շրջանների:



Նկար 2. ՀՀ տնտեսական շրջանները:

Եզրակացություն

Հայաստանի Հանրապետության նման տնտեսական բաժանումը թույլ կտա ՀՀ Վիճակագրական կոմիտեին ավելի օպտիմալացնել կատարվող աշխատանքը, ինչպես նաև՝ ավելի համապարփակ տեսքով ներկայացնել ՀՀ տարածաշրջանային սոցիալ-տնտեսական ցուցանիշները: Այս մեթոդի կիրառումը կնպաստի ՀՀ կառավարությանն ավելի ամբողջական պատկերացում կազմելու Հայաստանում տարածաշրջանային տնտեսական իրավիճակի մասին և առանձին տնտեսական շրջաններում կիրառելու միևնույն մակրոտնտեսական քաղաքականությունը:

Գրականության ցանկ

1. Видяпин В. И. , Степанов М. В. , Синдяшкин Н. И. , Бельчук Е. В. , Архипова Л. С. , Гагарина Г. Ю. , Павлова Г. В. – Региональная экономика, Москва 2007г. , ИНФРА-М, стр. 237-239
2. «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենք, հոդված 1, հոդված 2, հոդված, ընդունված Ազգային ժողովի կողմից 7 նոյեմբերի 1995 թվական:
3. Հայաստանի Հանրապետության Վիճակագրական կոմիտեի կայք-էջ՝ www.armstat.am:

ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԵՍԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐԸ

ԴԱՎԻԹ ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
գիտակրթական միջազգային կենտրոն, ասպիրանտ
davit.beglaryan@edu.isec.am

Համառոտագիր

Սույն հոդվածում ներկայացված է տնտեսության պետական կարգավորման հայեցակարգերի և հիմնական ուղղությունների զարգացման էվոլյուցիան, ինչպես նաև՝ ներկայումս գործող կարգավորման մեխանիզմները:

Տնտեսության պետական կարգավորման էվոլյուցիոն շղթայի մեջ հիմնականում առանձնացվել են՝

- Ադամ Սմիթը՝ որպես տնտեսության դասական դպրոցի ներկայացուցիչ.
- Ջոն Մեյնարդ Բեյնսը, որը 20-րդ դարի սկզբին լուրջ առաջընթաց գրանցեց տնտեսության պետական կարգավորման ուղղությամբ.
- նեոլիբերալները, որոնք շեշտում էին տնտեսության մշտական պետական աջակցության անհրաժեշտությունը՝ մրցակցային միջավայրի անխափան գործունեության համար.
- օրդոլիբերալները, որոնք դիտարկում էին ազատ շուկայական մրցակցությունը ոչ թե որպես բնական գործընթաց, այլ՝ որպես ինստիտուտ.
- Ինստիտուցիոնալիստները. դրա հիմնադիրներից մեկը՝ Թ. Վեբլենի տեսանկյունից:

Արևմտյան տեսությունների և համաշխարհային փորձի վերլուծությունը նաև թույլ է տալիս խոսել տնտեսության մեջ պետության միջամտության ինչպես ազգային մոդելների ձևավորման, այնպես էլ՝ պետական կարգավորման հասարակական ձևերի և մեթոդների ձևավորված ստանդարտ փաթեթի մասին: Տարբերակվում է երկու հիմնական ձև՝

- ուղղակի՝ պետական սեփականության միջոցով.
- անուղղակի՝ տնտեսական քաղաքականության տարբեր միջոցառումների միջոցով:

Ուղղակի միջամտությունն իրականացվում է վարչական և տնտեսական ազդեցության միջոցներով, իսկ կարգավորման անուղղակի մեթոդն իրականացվում է միայն տնտեսական միջոցներով:

Ուղղակի տնտեսական կարգավորումը ներառում է տարածքների, ձեռնարկությունների, ճյուղերի անվերադարձ նպատակային ֆինանսավորման տարբեր ձևեր՝ սուբվենցիաներ կամ ուղղակի սուբսիդիաներ, որոնք ներառում են տարբեր տեսակի դոտացիաներ, հավելավճարներ տարբեր մակարդակների հատուկ բյուջետային և արտաբյուջետային ֆոնդերից, ինչպես նաև՝ արտոնյալ վարկեր:

Տնտեսական (անուղղակի) կարգավորման մեթոդներին է վերաբերում պետության կողմից իրականացվող քաղաքականությունը դրամավարկային, արժույթային, արտաքին տնտեսական (այդ թվում՝ մաքսային) հարաբերությունների, հարկային համակարգերի, ամորտիզացվող գույքի և այլ ոլորտներում: Դրանից հետևում է, որ պետությունն, օգտագործելով տնտեսական շահերն ու խթանները, ազդում է տնտեսվարող սուբյեկտների տնտեսական վարքագծի վրա, որոնք հանդես են գալիս որպես արտադրողներ և սպառողներ:

Ձեռնարկատիրական գործունեության համար բնականոն պայմաններ ստեղծելու, տնտեսության կայունացման և վերելքի համար պետությունը պետք է իրականացնի համապատասխան տնտեսական քաղաքականություն, որը ձևավորվում է հարկաբյուջետային, գիտատեխնիկական, ներդրումային, գնային, ամորտիզացիոն, դրամավարկային և քաղաքականության այլ տեսակներով, որոնց

իրականացման համալիրում օգտագործվում են ինչպես տնտեսական, այնպես էլ՝ վարչական ռեսուրսներ:

Հոդվածի շարադրանքից կարելի է եզրակացնել, որ դինամիկ զարգացող տնտեսության պայմաններում տնտեսության պետական կարգավորման հարցերը մշտապես պետք է գտնվեն գիտական մտքի և կառավարման տարբեր օղակների ուշադրության կիզակետում, որպեսզի կանխվի ճգնաժամային իրավիճակների առաջացումը:

Բանալի բառեր և բառակապակցություններ. տնտեսական կարգավորում, հայեցակարգ, հիմնական ուղղություններ, համեմատական վերլուծություն, էվոլյուցիոն շղթա:

ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ ГОСУДАРСТВЕННО-ХОЗЯЙСТВЕННОГО РЕГУЛИРОВАНИЯ И ИХ ТЕОРЕТИЧЕСКИЕ КОНЦЕПЦИИ

ДАВИД БЕГЛАРЯН

Национальная академия наук Республики Армения

Международный научно-образовательный центр

аспирант

davit.beglaryan@edu.isec.am

Аннотация

В настоящей статье представлены эволюционные механизмы развития концепций и основных направлений государственного регулирования экономики, а также действующие в настоящее время механизмы регулирования.

В эволюционной цепочке государственного регулирования экономики в основном были выделены Адам Смит как представитель классической школы экономики, Джон Мейнард Кейнс, который в начале 20-го века достиг серьезного прогресса в направлении теории государственного регулирования экономики, неолибералы, которые подчеркивали необходимость постоянной государственной поддержки экономики для бесперебойной деятельности конкурентной среды, ордолибералы, рассматривавшие свободную рыночную конкуренцию не как естественный процесс, а как институт, а также институционалисты и их взгляды на государственное регулирование экономики с точки зрения одного из основателей этого направления Веблена.

Анализ западных теорий и мирового опыта также позволяет говорить о стандартном пакете, сформированном как в организации национальных моделей, так и в общественных формах и методах государственного регулирования: прямо - через государственную собственность, косвенно - посредством различных мероприятий экономической политики.

Прямое вмешательство осуществляется посредством административного и экономического влияния, а косвенный метод регулирования - только экономическими средствами.

Прямое экономическое регулирование включает в себя различные формы безвозвратного целевого финансирования территорий, предприятий, отраслей, субвенции или прямые субсидии, включающие различные виды дотаций, доплаты из специальных бюджетных и внебюджетных фондов различных уровней, а также льготные кредиты.

К методам экономического (косвенного) регулирования относится проводимая государством политика в денежно-кредитной, валютной, внешнеэкономической (в том числе таможенной) отношениях, налоговых системах, амортизируемом имуществе и других сферах.

Для создания нормальных условий предпринимательской деятельности, стабилизации и подъема экономики государство должно осуществлять соответствующую экономическую политику, которая формируется налогово-бюджетными, научно-техническими, инвестиционными, ценовыми, амортизационными, денежно-кредитными и другими видами политики, в комплексе осуществления которых используются как экономические, так и административные ресурсы.

Исходя из статьи можно сделать вывод, что в условиях динамично развивающейся экономики вопросы государственного регулирования экономики должны постоянно находиться в центре внимания научного общества и различных звеньев управления, чтобы предотвратить возникновение кризисных ситуаций.

Ключевые слова и словосочетания: экономическое регулирование, концепция, основные направления, сравнительный анализ, эволюционная цепь.

MAIN DIRECTIONS OF STATE ECONOMIC REGULATIONS AND THEIR THEORETICAL CONCEPT

DAVIT BEGLARYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia

International Scientific-Educational Center

PhD student

davit.beglaryan@edu.isec.am

Abstract

The purpose of this article is to examine the evolutionary mechanisms of concepts development and the main directions of state regulation, as well as the current regulatory mechanisms.

In the evolutionary state regulation chain of the economy mainly the following individuals or ideologies have been highlighted: Adam Smith, a representative of the classical school of economics, John Maynard Keynes, who made significant strides in state regulation in the early 20th century, the neoliberals, who emphasized the need for continued state support in a competitive environment, the Ordoliberalists, who viewed free-market competition not as a natural process but as an institution, and the institutionalists, from the point of view of one of its founders, T. Weblen.

Through the analysis of Western theories and world experience, we can also identify a standard package that is both organized into national models and organized in public forms and methods of state regulation: directly through state ownership, indirectly through various economic policy measures.

An indirect method of regulation is carried out solely through economic means, while direct intervention is carried out by the administration and economic influence.

Direct economic regulation includes various forms of irrevocable targeted financing of territories, enterprises, industries, as well as direct subventions and subsidies, including various types of subsidies, surcharges from budgetary and extrabudgetary funds, as well as preferential loans.

The methods of economic (indirect) regulation include government policy in monetary, currency, foreign economic (including customs) relations, tax systems, depreciable property, and other areas.

At the node of administrative and direct economic methods of regulation are such forms of state regulation as the program-target approach, project financing, and lending.

The state must implement an appropriate economic policy in order to create normal conditions for entrepreneurial activity, stabilization, and economic rebound, which is a combination of fiscal, scientific, and technical, investment, pricing, depreciation, monetary, and other policies, in the complex implementation of which both economic and administrative resources are utilized.

It should be noted that the theoretical paradigms and concepts of state regulation of the market economy aim to establish constructive relations between the state and civil society (state and private entrepreneurship), to assure society's priority, the rights, and the unity of economic and social efficiency of the development of society at different periods in history.

The article concludes that in a dynamically developing economy, the scientific society and various management units should constantly be focusing on issues of state regulation of the economy to prevent crises from occurring.

Keywords and phrases: economic regulation, concept, main directions, comparative analysis, evolutionary chain.

Ներածություն

Պետությունը՝ որպես տնտեսական հարաբերությունների սուբյեկտ՝ իրենից ներկայացնում է կազմակերպությունների համախումբ, որոնք օժտված են շուկայի այլ մասնակիցների համար տնտեսական գործունեության պարտադիր պայմանների սահմանման և նրանց գործունեության արդյունքների վերաբաշխման իրավունքներով և պարտավորություններով [1]:

Տնտեսության պետական կարգավորումը մի համակարգ է, որն իր մեջ ներառում է այնպիսի տարրեր, ինչպիսիք են՝ նպատակներ, մեթոդներ, գործիքներ: Կախված այն բանից, թե ինչպիսին է համակարգի տարրերի համադրությունը, որքան արագ է այն ընդգրկվում տնտեսական գործընթացների մեջ ու ճկուն արձագանքում իրավիճակային փոփոխություններին, ինչպես նաև՝ վերջինիս կառուցվածքը համապատասխանում տնտեսությանը, այդքան ավելի արդյունավետ կլինի այն ծառայած սոցիալ-տնտեսական խնդիրների լուծումը, որը ի գորու չէ լուծել շուկան [2]:

Տնտեսության զարգացման գործընթացի և վերջինիս կարգավորման արտերկրյա փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պետական կարգավորման ուղղակի վարչական մեթոդների դերը այնքան մեծ է, որքան անկայուն է երկրի տնտեսական իրավիճակը, և սուր են առկա տնտեսական խնդիրները և, ընդհակառակը, որքան կայուն է տնտեսական իրավիճակը տվյալ երկրում, այդքան մեծանում է շուկայական ինքնակարգավորման մեխանիզմների և պետական անուղղակի գործիքների կիրառման դերը տնտեսության կարգավորման ոլորտում: Պետության կարգավորիչ դերի հիմնական նշանակությունը և առանձնահատկությունն այն է, որ ինքնին շուկայական կարգավորումը կարող է հանգեցնել տնտեսական գործընթացների որոշակի խեղաթյուրման, ինչպես նաև՝ վերարտադրության գործընթացների կառուցվածքային անհամաչափությունների [3]:

«Պետության սխալները միշտ ավելի վատ են, քան շուկայի սխալները»։ այս մտքից հետևում է, որ ավելի լավ է «գերակատարել» ապակարգավորումը, քան թույլ տալ պետության միջամտում՝ դրանց անխուսափելի հետևանքներով: Ինչպես վկայում է համաշխարհային տնտեսական մտքի պատմությունը, անհատի և պետության փոխհարաբերությունների այս կամ այն ձևը շատ հաճախ դառնում է գաղափարական սուր բանավեճի առարկա:

17-րդ դարի վերջին և 18-րդ դարի սկզբին Եվրոպայում արտադրական համաքարությունների փլուզման և միջազգային առևտրի զարգացման արդյունքում Եվրոպական կառավարությունները սկսեցին խնամակալության տակ վերցնել հպատակների արդյունաբերական և առևտրային գործունեությունը, ընդ որում՝ խիստ կարգավորելով աշխատողների եկամուտները և առաջին անհրաժեշտության ապրանքների գները:

Այս ամենին դեմ էր հանդես գալիս անգլիացի տնտեսագետ Ադամ Սմիթը (1723-1790)՝ հիմնավորելով իր տեսակետը «բնական ազատության համակարգով» [4]: Ա.Սմիթի՝ որպես դասական դպրոցի ներկայացուցչի գիտական դիրքորոշումը հետևյալն էր. «Բնական ազատության համակարգի համաձայն՝ պետությունը պետք է ուշադրություն դարձնի միայն երեք պարտականությունների վրա.

- Հասարակության՝ այլ անկախ հասարակությունների կողմից բռնությունից և ներխուժումից պաշտպանություն,
- հասարակության յուրաքանչյուր անդամին նույն հասարակության ցանկացած այլ անդամի կողմից ճնշումներից կամ անարդարությունից հնարավորին չափ պաշտպանություն, կամ արդարության ճշգրիտ իրականացման հաստատում,
- այնպիսի հաստատությունների ստեղծում և պահպանում, որոնք դուրս են ցանկացած անհատի կամ փոքր թվով անհատների շահերից, քանի որ ստացված հատույցը երբեք չի

փոխհատուցի ցանկացած անհատի կամ փոքր թվով անհատների ծախսերը, թեև հաճախ պետական շահերի համար նման հատույցը կարող է գերազանցել կրած ծախսերի չափը:

Ա.Սմիթի կողմից շարադրված երեք «պարտականություններն» իրենց քաղաքացիների նկատմամբ չեն մատնանշում անհատների շահերին պետության միջամտության աստիճանն ու սահմանները: Նրա հիմնական ուշադրությունը կենտրոնացած էր դինամիկ զարգացող տնտեսության մեջ պետական իշխանության լիազորությունների և խնդիրների մասին ընդհանուր պատկերացումների համակարգման վրա և կայանում էր այդ նոր պատկերացումների էությունն ավելի ճշգրիտ արտահայտելու ձգտման մեջ:

Պետության և մասնավոր նախաձեռնության միջև պարտականությունների բաշխման չափանիշներն ու սկզբունքները, հասարակության տնտեսական կյանքին պետական մասնակցության ծավալներն ու սահմանները շարունակում էին սուր բանավեճի առարկա մնալ 19-20-րդ դարերում տնտեսագիտական տարբեր գաղափարախոսական դպրոցների միջև:

20-րդ դարում տնտեսության պետական կարգավորման ուղղությամբ էական առաջընթաց է գրանցվել մեկ այլ անգլիացի տնտեսագետ Ջոն Մեյնարդ Քեյնսի կողմից, և տնտեսագիտությունը նրան է պարտական տնտեսական նախատրամադրվածության տեսական հիմնավորմամբ: Ա.Սմիթի և Ջ.Քեյնսի տեսությունների միջև ընդհանուրն այն է, որ տարբեր դարաշրջաններում տեսաբանները փորձում էին հիմնավորել Անգլիայի տնտեսության կայուն աճի ուղիները, սակայն՝ տարբեր մոտեցումներով: Սմիթը ձևավորեց շուկայի տեսությունը, իսկ Քեյնսը նպատակ ուներ բարելավելու շուկայական համակարգի գործունեությունը, որը երբեմն լուրջ խաթարումներ էր ունենում:

Քեյնսը, մյուս կողմից, կապիտալիստական տնտեսության չարիքի և դժբախտության արմատը տեսնում էր հենց այն բանի մեջ, որ գործում էին որոշակի ներքին ուժեր, որոնք այն դուրս են մղում նախանշված ուղղուց: «Հասարակության մեջ, որը գործում է դասական տեսության հիմնադրույթների համաձայն, իսկապես ակնհայտ կլինեք բնական հակում ունենալ դեպի ռեսուրսների օպտիմալ օգտագործումը: Շատ հնարավոր է, որ դասական տեսությունը պատկերացում է տալիս, թե ինչպես մենք կցանկանայինք, որ հասարակությունը գործեր, բայց հավատալ, որ այն գործում է այդպես, նշանակում է անտեսել իրական խնդիրները» [5]: Քեյնսը, այսպիսով, բարձրաձայնում էր տնտեսության մեջ պետական միջամտության անհրաժեշտության մասին՝ թերությունները շտկելու համար: Դրանք, մասնավորապես, ներառում էին հասարակության անկարողությունը ապահովելու լիարժեք զբաղվածություն և հարստության ու եկամուտների կամայական և անարդար բաշխման կանխում: Ակնհայտ է, որ զբաղվածության որոշակի մակարդակը ազդում է եկամուտների մակարդակի վրա, չնայած որ իր հերթին այն նույնպես կախված է դրանցից: Այս երկընտրանքը լուծելու համար պետք էր ինչ-որ կերպ գործի դնել մշտական գործող պետական միջամտության որոշակի մեխանիզմներ: Քեյնսը բացահայտեց դրանց կիրառման առանձնահատկությունները տնտեսական ցուցանիշների զանգվածում՝ ճշգրիտ գնահատելով դրանց պատճառահետևանքային կապերը:

Այսպիսով՝ Քեյնսի և Սմիթի մոտ չկար որևէ հակադրություն անհատի և պետության միջև, դրանք չեն բացառում, այլ որոշակիորեն լրացնում են միմյանց: Պարզապես Քեյնսի տեսությունում պետական միջամտության շրջանակը զգալիորեն ընդլայնվել էր, սակայն պետությունը շարունակում է մնալ շուկայի նկատմամբ ինչ-որ արտաքին ուժ, թեև արդեն շատ գործոններ են մատնանշել այն լիարժեք շուկայական սուբյեկտների կազմում ընդգրկելու նպատակահարմարությունը:

20-րդ դարի 30-40-ական թվականներին համաշխարհային տնտեսական միտքը, քեյնսականության հետ միասին և գրեթե միաժամանակ, այլ պատասխան առաջարկեց

ավանդական լիբերալիզմի ճգնաժամին: Եվրոպայի մի շարք երկրներում, հատկապես Գերմանիայում, սկսեցին ձևավորվել, այսպես կոչված, նեոլիբերալիզմի օջախներ:

Ի տարբերություն քեյնսիզմի՝ նեոլիբերալները **[6]** շեշտում էին տնտեսության մշտական պետական աջակցության անհրաժեշտությունը՝ մրցակցային միջավայրի անխափան գործունեության համար: Նեոլիբերալները անթույլատրելի էին համարում ցանկացած անմիջական միջամտություն շուկայական մեխանիզմի գործունեությանը: Նրանց կարծիքով՝ այն ոչ միայն չէր բարելավում, այլ, ընդհակառակը, միայն վատթարացնում էր տնտեսական իրավիճակը: Նրանք պնդում էին, որ շուկայի մեխանիզմը այնքան կատարյալ է, որ, բացառությամբ որոշ հատուկ դեպքերի, որևէ փոփոխություն չի պահանջում: Այնուամենայնիվ, նման մեխանիզմի անխափան աշխատանքի պայմանների պահպանումը նրանք թողնում էին բացառապես պետության ուսերին:

Այսպիսով՝ նեոլիբերալիզմի և դասական լիբերալիզմի հիմնարար տարբերությունն այն էր, որ դասականները պնդում էին անսահմանափակ ազատ մրցակցության գերակայությունը՝ չնայած պետությանը, իսկ նեոլիբերալները կարծում էին, որ այդ գերակայությունը հնարավոր է միայն պետության շնորհիվ:

Լինելով ազատ շուկայական մրցակցության անվերապահ կողմնակիցներ՝ օրդոլիբերալները **[7]** դիտարկում էին ազատ շուկայական մրցակցությունը ոչ թե որպես բնական գործընթաց, այլ՝ որպես ինստիտուտ, որը, առաջին հերթին, պետք է ներդրվի պետության կողմից և պահպանվի: Օրդոլիբերալիզմի իդեալը կարելի է ամփոփել հետևյալ կերպ. պետությունը ստեղծում է այնպիսի կանոններ, որոնց շրջանակներում շուկայի սուբյեկտները ազատորեն փոխկապակցվում են միմյանց հետ, պետությունը չի միջամտում, այլ միայն հետևում է կանոնների պահպանմանը և դիմում է հարկադրանքի համապատասխան միջոցների, եթե այդ կանոնները խախտվում են:

Սոցիալական շուկայական տնտեսության հայեցակարգը լիովին համընկնում է օրդոլիբերալիզմի ուսմունքի հետ: Սոցիալական շուկայական տնտեսության հայեցակարգի գլխավոր տեսաբան Ա.Մյուլեր-Արմակի դերը տեսանելի դարձավ՝ մրցակցության վրա հիմնված տնտեսության «ազատ նախաձեռնությունը սոցիալական առաջընթացի» հետ համատեղելով **[8]**:

Սոցիալական շուկայական տնտեսության տեսության և ավանդական օրդոլիբերալիզմի տարբերությունը կարելի է տեսնել միայն հետևյալում. նախ՝ էկլետիկական աշխարհայացքում, օրինակ՝ գերմանական վարկածով նեոլիբերալ գաղափարները, սոցիալական կաթոլիկությունը և բողոքական էթիկան իրար հետ գոյակցում են: Երկրորդ՝ սոցիալական շուկայի կառավարման հայեցակարգում պետական կարգավորումը նույնիսկ ավելի կարևոր է, քան մանդատիստների կարգը: Երկու հասկացությունների միջև եղած տարբերությունը քանակական է, քանի որ վեճի առարկան, ըստ էության, հանգում էր տնտեսական գործունեության մեջ պետության ցանկալի նվազագույն մասնակցության չափին:

Գործնականում սոցիալական շուկայի կառավարման հայեցակարգը ներդրվել և իրականացվել է Լ.Էրհարդի կողմից 1948 թ-ի կեսերից Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունում: Նա իրականացրեց դրամավարկային բարեփոխումներ և գների ազատականացում, որը զուգորդվեց հակամենաշնորհային օրենսդրության խստացմամբ և զսպող դրամավարկային քաղաքականությամբ: Այս միջոցները հիմք հանդիսացան արագ տնտեսական աճի համար (միջին տարեկան ՀՆԱ-ի աճը 1948-1968 թվականներին՝ 12%) **[9]**, որն ամբողջ աշխարհում հայտնի դարձավ որպես «գերմանական տնտեսական հրաշք»:


Զուգահեռ ԱՄՆ-ում հայտնվեց տնտեսական մտքի ինստիտուցիոնալ ուղղությունը **[10]**, որում ի տարբերություն նեոդասական տնտեսագիտական տեսության, ինստիտուտը (պետություն, ձեռնարկություններ, տնային տնտեսություններ) սահմանվում էր ոչ թե որպես որոշակի

նպատակներ և շահեր ունեցող առանձին տնտեսական գործակալ, այլ՝ որպես շահերի ներքին կառուցվածքով օժտված համակարգ:

Ինստիտուցիոնալիզմի հիմնադիրներից մեկը՝ Թ. Վերլենը [11], «հաստատությունները» դիտարկում էր «որպես մտքի հաստատված սովորույթներ, որոնք տարածված են մարդկանց տվյալ համայնքի համար», այսինքն՝ դրանք նրա կողմից հիմնականում դիտարկվում էին որպես սոցիալ-հոգեբանական երևույթներ, որոնց հիմքում ընկած են հենց ինստիտուտների դինամիկայի էվոլյուցիոն մեխանիզմները և սոցիալ-մշակութային ազդեցությունը տնտեսական զարգացման վրա:

Ժամանակակից կամ նոր ինստիտուցիոնալիստները մի փոքր այլ կերպ են սահմանում ինստիտուտները: Նոր ինստիտուցիոնալիզմի ամենահայտնի ներկայացուցիչներից մեկի՝ նոբելյան մրցանակի դափնեկիր Դ.Նորթի կարծիքով՝ «ինստիտուտները հասարակության մեջ խաղի կանոններ են կամ, արտահայտվելով ավելի ֆորմալ, մարդու կողմից ստեղծված սահմանափակող շրջանակներ, որոնք մարդկանց միջև փոխհարաբերություններ են կազմակերպում, ստեղծում են մարդկային փոխգործակցության հաղթական դրդապատճառների կառուցվածքը՝ լինի դա քաղաքականության, սոցիալական ոլորտի, թե տնտեսության մեջ» [12]:

Ելնելով պետական տնտեսական կարգավորման էվոլյուցիոն զարգացման շղթայից՝ տնտեսության պետական կարգավորման մեթոդները կարելի է ներկայացնել ստորև բերված տեսքով (Գծանկար 1).



Գծանկար 1. Տնտեսության պետական կարգավորման ուղղությունները [13]:

Արևմտյան տեսությունների և համաշխարհային փորձի վերլուծությունը թույլ է տալիս խոսել տնտեսության մեջ պետության միջամտության ինչպես ազգային մոդելների ձևավորման, այնպես էլ պետական կարգավորման հասարակական ձևերի և մեթոդների ձևավորված ստանդարտ փաթեթի մասին: Ըստ այդմ՝ տարբերակվում է երկու հիմնական ձև՝ ուղղակի և անուղղակի:

Ուղղակի միջամտությունն իրականացվում է վարչական և տնտեսական ազդեցության միջոցներով, իսկ կարգավորման անուղղակի մեթոդն իրականացվում է միայն տնտեսական միջոցներով:

Կարգավորման վարչական մեթոդները ներառում են եկամտի, հաշվառման տոկոսների, քվոտաների, լիցենզավորման և այլնի վերահսկման բազմազան միջոցներ: Տնտեսությունը կարգավորելու վարչական մեթոդները ներառում են այնպիսի միջոցներ, ինչպիսիք են՝ արգելումը, թույլտվությունը, հարկադրանքը:

Վարչական մեթոդներն օգտագործվում են պետության կողմից այն դեպքում, երբ տնտեսական մեթոդները բավարար արդյունավետ չեն այս կամ այն խնդիրը լուծելիս: Ինչպես ցույց է տվել համաշխարհային փորձը, վարչական մեթոդներն առավել արդյունավետ են օգտագործվում հետևյալ ոլորտներում՝

- բնական պետական մենաշնորհներ (երկաթուղային տրանսպորտ, կապ).
- շրջակա միջավայրի պահպանություն և ռեսուրսների բաշխում.
- սերտիֆիկացում և ստանդարտացում.

- սոցիալական քաղաքականություն, առաջին հերթին, բնակչության կյանքի նվազագույն թույլատրելի ցուցանիշների որոշումն ու պահպանումը (երաշխավորված նվազագույն աշխատավարձ, գործազրկության նպաստ և այլն):

Պետաիրավական կարգավորումն իրականացվում է տնտեսական օրենսդրության հիման վրա՝ սահմանած նորմերի և կանոնների համակարգի միջոցով:

Ուղղակի տնտեսական կարգավորումը ներառում է տարածքների, ձեռնարկությունների, ճյուղերի անվերադարձ նպատակային ֆինանսավորման տարբեր ձևեր՝ սուբվենցիաներ կամ ուղղակի սուբսիդիաներ, որոնք ներառում են տարբեր տեսակի դոտացիաներ, հավելավճարներ տարբեր մակարդակների հատուկ բյուջետային եւ արտաբյուջետային ֆոնդերից, ինչպես նաև՝ արտոնյալ վարկեր:

Կարգավորման վարչական և ուղղակի տնտեսական մեթոդների հանգույցի վրա են գտնվում պետական կարգավորման այնպիսի ձևեր, ինչպիսիք են՝ ծրագրա-նպատակային մոտեցումը, նախագծային ֆինանսավորումը և վարկավորումը:

Տնտեսական (անուղղակի) կարգավորման մեթոդներին է վերաբերում պետության կողմից իրականացվող քաղաքականությունը դրամավարկային, արժույթային, արտաքին տնտեսական (այդ թվում՝ մաքսային) հարաբերությունների, հարկային համակարգերի, ամորտիզացվող գույքի և այլ ոլորտներում: Դրանից հետևում է, որ պետությունն, օգտագործելով տնտեսական շահերն ու խթանները, ազդում է տնտեսվարող սուբյեկտների տնտեսական վարքագծի վրա, որոնք հանդես են գալիս որպես արտադրողներ և սպառողներ:

Ձեռնարկատիրական գործունեության համար բնականոն պայմաններ ստեղծելու, տնտեսության կայունացման և վերելքի համար պետությունը պետք է իրականացնի համապատասխան տնտեսական քաղաքականություն, որը ձևավորվում է հարկաբյուջետային, գիտատեխնիկական, ներդրումային, գնային, ամորտիզացիոն, դրամավարկային և քաղաքականության այլ տեսակներով, որոնց իրականացման համալիրում օգտագործվում են ինչպես տնտեսական, այնպես էլ՝ վարչական ռեսուրսներ:

Ֆիսկալ քաղաքականությունը [14] կառավարության ծախսային և հարկային գործառույթների նպատակաուղղված կիրառումն է որոշակի մակրոտնտեսական նպատակների հասնելու համար:

Ֆիսկալ քաղաքականությունը կարգավորվում է բյուջետային և հարկային քաղաքականություններով՝ տնտեսության կայունացման և աշխուժացման նպատակով: Պետության

Ֆիսկալ քաղաքականության հիմնական լծակը հարկային դրույքաչափերի փոփոխությունն է՝ համապատասխան կառավարության նպատակներին:

Ֆիսկալ քաղաքականությունը ձևավորվում է, այսպես կոչված, հայեցողական և ավտոմատ Ֆիսկալ քաղաքականություններից: Հայեցողական ֆիսկալ քաղաքականության տակ ենթադրվում է պետական ծախսերի, հարկերի և պետական բյուջեի հաշվեկշռի նպատակաուղղված կարգավորումը՝ ազգային արտադրության իրական ծավալի, զբաղվածության, տնտեսական աճի և գնաճի վրա ազդելու նպատակով [15]:

Անկման շրջանում խթանող ֆիսկալ հարկաբյուջետային քաղաքականությունը ենթադրում է՝

- պետական ծախսերի ավելացում.
- հարկերի նվազեցում.
- պետական ծախսերի աճի համադրումը հարկերի նվազեցման հետ:

Գնաճի պայմաններում, որն առաջացել է ավելորդ պահանջարկից (գնաճային պահանջարկից), զսպող հայեցողական հարկաբյուջետային քաղաքականությունը ենթադրում է՝

- պետական ծախսերի նվազեցում,
- հարկերի ավելացում,
- պետական ծախսերի կրճատման և աճող հարկման համադրությունը:

Պետական ծախսերի նվազումը որոշակի դեպքերում հանգեցնում է պետական բյուջեի դեֆիցիտի նվազմանը, հետևաբար՝ գնաճային գործընթացների դանդաղեցմանը: Նման հարկաբյուջետային քաղաքականությունը կենտրոնանում է բյուջեի դրական հաշվեկշռի վրա:

Մակրոկարգավորումը չի սահմանափակվում միայն պետության անմիջական գործողություններով՝ ի դեմս նրա կառավարման մարմինների, քանի որ պետության գործողությունները կարող են ժամանակավրեպ լինել:

Տնտեսության մեջ գոյություն ունեն ինքնակազմակերպման և ինքնակարգավորման որոշակի մեխանիզմներ, որոնք գործողության մեջ են մտնում անմիջապես, երբ տնտեսության մեջ տեղ են գտնում բացասական գործընթացներ:

Նման կայունացուցիչ կարող է լինել հարկային պրոգրեսիվ համակարգը, որի դեպքում հարկի չափը կախված է եկամուտներից: Եկամուտների բարձրացմանը զուգահեռ, կառավարության կողմից նախապես հաստատված հարկային դրույքաչափերը աստիճանաբար ավելանում են:

Պետության դրամավարկային [16] քաղաքականությունն իրենից ներկայացնում է միջոցների համալիր, որոնք ազդում են դրամական շրջանառության եւ վարկավորման ծավալների վրա՝ ոչ ինֆլյացիոն տնտեսական աճի և լրիվ զբաղվածության հասնելու նպատակով:

Դրամավարկային քաղաքականությունը հիմնված է մոնետարիզմի սկզբունքների վրա: Ֆիսկալ (հարկաբյուջետային) քաղաքականության հանդեպ նրա գլխավոր առավելությունը օպերատիվությունն ու ճկունությունն է: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այն իրականացվում է Կենտրոնական բանկի, այլ ոչ թե երկրի խորհրդարանի կողմից, այն ավելի քիչ է ենթակա քաղաքական ազդեցության:

Համաշխարհային տնտեսական պրակտիկայում կիրառվում են դրամական զանգվածի շրջանառության կարգավորման հետևյալ գործիքները՝

- վերաֆինանսավորման տոկոսադրույքի փոփոխություն, այսինքն՝ Կենտրոնական բանկի կողմից առևտրային բանկերի վարկերի տոկոսադրույքի կարգավորում.
- պարտադիր պահուստների նորմայի փոփոխություն.
- արժեթղթերով գործառնություններ բաց շուկայում:

Ինչպես ցույց է տվել համաշխարհային փորձը, ֆիսկալ և դրամավարկային քաղաքականությունները

պետք է իրականացվեն համատեղ և հավասարակշռված, քանի որ միայն այդ դեպքում դրանք կարող են արդյունավետորեն ազդել երկրի տնտեսության վրա:

Վերը ներկայացված վերլուծությունը, չնայած համառոտ շարադրանքին, մեկ անգամ ևս հաստատում է պետական տնտեսական կարգավորման հայեցակարգերի և հիմնական ուղղությունների ուսումնասիրության արդիականությունը և անհրաժեշտությունը:

Ամփոփելով՝ պետք է նշել, որ շուկայական տնտեսության պետական կարգավորման տեսական պարադիգմաներն ու հայեցակարգերն ուղղված են քաղաքացիական հասարակության (պետության և մասնավոր ձեռնարկատիրության) հետ պետության կառուցողական հարաբերությունների ձևավորմանը, հասարակության գերակայությանը, պահանջատիրությանը և հասարակության զարգացման տնտեսական և սոցիալական արդյունավետության միասնականության ապահովմանը և պատմական տարբեր ժամանակահատվածներում իրականացվող բարեփոխումներին:

Դինամիկ զարգացող տնտեսության պայմաններում տնտեսության պետական կարգավորման հարցերը մշտապես պետք է գտնվեն գիտական մտքի և կառավարման տարբեր օղակների ուշադրության կիզակետում, որպեսզի կանխվի ճգնաժամային իրավճակների առաջացումը: Ինչ վերաբերում է տնտեսության մեջ պետության մասնակցությանը, ապա որքան էլ կարևոր է պետական կարգավորման դերը շուկայական տնտեսության մեջ, այն պետք է լինի տնտեսապես հիմնավորված և այնպիսի թույլատրելի չափերով, որոնք կնպաստեն տնտեսական արդյունավետության բարձրացմանը:

Գրականության ցանկ

1. Кушлина В. Н., Волгина Н. А Государственное регулирование рыночной экономики. Учебник для вузов /Под. общ. ред.-М.: «Экономика», 2006. - С. 28.
2. Կ. Սարգսյան, Պետական հակաճգնաժամային քաղաքականության արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016:
3. Կ. Սարգսյան, Պետական հակաճգնաժամային քաղաքականության արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները, Գիտություն,, հրատ., Երևան, 2016թ., էջ 115-116:
4. Смит А. Исследования о природе и причинах богатства народов. М.: Соцэкгиз, 1962.
5. Զ. Քեյնս, Առաջաբ. և խմբ.՝ Մարկոսյան Ա., Դավդյան Ս.; Թարգմ.՝ Կիրակոսյան Կ., Զբաղվածության, տոկոսի և փողի ընդհանուր տեսություն Երևան: Տիգրան Մեծ, 2006, 389 էջ:
6. Harvey, D. «A Brief History of Neoliberalizm», Oxford University Press, Oxford – New York, 2005.
7. Худокормов А. Г., Невский С. И. Национальные экономические школы в Германии и теория социального рыночного хозяйства // Экономическая политика. 2017. Т. 12. № 4. С. 204—249.
8. Мюллер-Армак А. О свободе и социальной справедливости / Предложения по осуществлению социальной рыночной экономики / Социальное рыночное хозяйство // Политэконом. - 1996. – №1
9. An Economic Life in Vain – Path Dependence and East Germany’s Pre- and Post-Unification Economic Stagnation – <https://www.econstor.eu/bitstream/10419/52393/1/67100039X.pdf>
10. Васильцова В. М., Тертышный С. А. В19 Институциональная экономика: Учебное пособие. Стандарт третьего поколения. — СПб.: Питер, 2012. — 256 с.: ил.
11. Dover Publications; Revised ed. edition (May 20, 1994)
12. Норт Д. Институты, институциональные изменения и функционирование экономики. М.: Фонд экономической книги «Начала», 1997. С. 17.
13. Щетинин А. И. Политическая экономия. Учебник. - Киев.: Центр научной литературы, 2005.
14. Матвеева Т. Ю. 12.1 Цели и инструменты фискальной политики // Введение в макроэкономику. — «Издательский дом ГУ-ВШЭ», 2007. — С. 446 - 447. — 511 с.
15. Виды и инструменты фискальной политики
http://edu.tltsu.ru/er/book_view.php?book_id=189e&page_id=14485
16. Московская финансово-промышленная академия, Денежно-кредитная политика: теория и практика, 2010:

ՑՈՐԵՆԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

ԷԼԵՆԱ ՍԵՐՈԲՅԱՆ

Հաշվապահ «Ախուրյանի համայնքային գրադարան» ՀՈԱԿ
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, Գյումրու մասնաճյուղ
«Մաքսային վարչարարություն» կրթական ծրագրի մագիստրանտ
elen.serobyan00@inbox.ru

Համառոտագիր

Գյուղատնտեսությունը կարևոր դեր է խաղում համաշխարհային տնտեսության մեջ: Նրա գործառնությունները լայն են և ներառում են պարենային անվտանգության ապահովում, տնտեսական աճի ապահովում, աղքատության մակարդակի կրճատում, եկամուտների բաշխման անհավասարության նվազեցում: Տնտեսական և քաղաքական ցնցումների ժամանակաշրջանում պարենային անվտանգությունը մնում է յուրաքանչյուր երկրի կառավարության գլխավոր նպատակը: Ներկայումս հացահատիկի արտադրությունը հայրենական գյուղատնտեսության զարգացման և պարենային անվտանգության հիմքն է: Առևտրային սահմանափակումների կիրառումը, ի պատասխան Covid-19 համաճարակի, բացասական ազդեցություն է ունեցել պարենային անվտանգության վրա, հատկապես՝ ցորենի շուկայի վրա: Սկզբնական շրջանում խուճապային իրավիճակ էր ստեղծվել ամբողջ աշխարհում գնումների մակարդակով, հետագայում նվազեցված առաջարկի պատճառով հացահատիկ արտահանող հիմնական երկրների կողմից արտահանման սահմանափակումներից հետո ակնկալվում էր, որ ցորենի գինը կբարձանար: Ակնկալվում է, որ ցորենի սպառման աճ տեղի կունենա, պայմանավորված այն հանգամանքով, որ այն կօգտագործվի մեծ մասամբ ալյուրի, մակարոնեղենի արտադրության մեջ:

Ամբողջ աշխարհում ցորենի մշակությամբ զբաղվելու համար նախատեսված է 220 մլն հեկտար հողատարածք: Ցորենի արտադրությամբ զբաղվում են ինչպես զարգացող, այնպես էլ՝ զարգացած երկրները: Զարգացող երկրներին բաժին է ընկնում բերքահավաքի ընդհանուր մակերեսի 53%-ը և արտադրության 50%-ը: Ցորենի 70%-ն օգտագործվում է որպես սնունդ, իսկ 20%-ը և 2-3%-ը օգտագործվում է անասնաբուծության և արդյունաբերական վերամշակման ոլորտներում որպես կերեր: Համաշխարհային մակարդակով պարենի մոտավորապես 21%-ը կախված է ցորենի տարեկան բերքահավաքից, որը հաճախ համեմատաբար ցածր պաշարներ ունի: Զարգացող երկրները, որոնց մեծամասնությունը ցորենի զուտ ներկրողներն են, սպառում են ցորենի համաշխարհային արտադրության 77%-ը, համապատասխանաբար, ցորենը կազմում է զարգացող երկրների կողմից ներմուծվող պարենային ապրանքների մոտավորապես 24%-ը: Ցորենը մեծությամբ երկրորդն է հացահատիկի արտադրության ընդհանուր ծավալում: Հացահատիկի միջազգային խորհրդի տվյալների համաձայն՝ 2019-2020 թթ-ին ցորենի արտադրությունը կազմել է 763,7 մլն տոննա, որից ավելի քան 523,3 և 137,4 մլն տոննան օգտագործվել է համապատասխանաբար սննդի և անասնակերի համար, արդյունաբերական վերամշակման համար օգտագործվող ցորենի ծավալը կազմել է 24 մլն տոննա, իսկ 2020-2021 թթ. ցորենի արտադրության համաշխարհային ծավալը կազմել է 772 մլն տոննա, նախորդ տարվա համեմատ աճել է 10 մլն տոննայով, իսկ սննդի և անասնակերի համար օգտագործվել է համապատասխանաբար 540մլն և 232 մլն տոննա: ԵՄ-ն ցորեն արտադրող տարածաշրջաններից առաջինն է: Ցորենի սպառման ծավալները աճել են 2020-2021 թթ.՝ հասնելով 783 մլն տոննա. այդ տարում Չինաստանը սպառել է մոտ 150 մլն տոննա ցորեն: Վերջին տասնամյակում մեկ շնչին բաժին է ընկնում 66 կգ ցորեն [1]: Ցորենի արտադրության վրա ազդում են մի շարք գործոններ՝

- բնական պայմանները, այդ թվում՝ օդի ջերմաստիճանը, արևային ճառագայթը, որոնց վրա մարդը չի կարող ազդել, բայց դրանք հաշվի են առնվում ցանքի ժամանակն ընտրելիս և այլն,

- գործոններ, որոնք կախված են մարդու գործունեությունից՝ հողի խոնավությունը, պարտանյութերի կամ սննդանյութերի մատակարարումը, սերմի որակը և տեսակը, ցանքի պաշտպանումը վնասատուներից, հիվանդություններից և մոլախոտերից, բերքահավաքը և այլն [2]:

Ցորենի արտադրության ծավալների ընդլայնման նպատակով տարբեր երկրներում կառավարությունների կողմից տրվում են արտոնություններ, այդ թվում՝ սուբսիդիաններ, և առևտրի կարգավորման ոլորտում կարևոր տեղ է զբաղեցնում «Ցորենի միջազգային խորհուրդը», որի նպատակը միջազգային համագործակցության և շուկայի կայունության ու թափանցիկության ապահովումն է:

Բանալի բառեր և բառակապակցություններ. հացահատիկ, ցորեն, ցորենի միջազգային խորհուրդ, պարենային աջակցության կոնվենցիա, արտադրություն, սպառում, արտահանում, ներմուծում:

АНАЛИЗ МИРОВОГО РЫНКА ПШЕНИЦЫ И ЕГО РЕГУЛИРОВАНИЕ

ЕЛЕНА СЕРОБЯН

Бухгалтер ООО "Ахурянская общественная библиотека"
Армянский государственный экономический университет, Гюмрийский филиал
магистрант по образовательной программе "Таможенное администрирование"
elen.serobyano0@inbox.ru

Аннотация

Сельское хозяйство играет важную роль в мировой экономике. Его функции широки, включая обеспечение продовольственной безопасности, экономического роста, сокращение бедности и сокращение неравенства доходов. Во времена экономических и политических потрясений продовольственная безопасность остается главной целью каждого правительства. В настоящее время производство зерна является основой развития отечественного сельского хозяйства и продовольственной безопасности. Введение торговых ограничений в ответ на пандемию Covid-19 негативно сказалось на продовольственной безопасности, особенно на рынке пшеницы. Первоначально была всемирная паника на уровне закупок по всему миру, но из-за сокращения поставок ожидался рост цен на пшеницу после экспортных ограничений со стороны крупных экспортеров зерна, в том числе в производстве муки, макарон.

Во всем мире под пшеницу отведено 220 млн га земли. Производством пшеницы занимаются как развивающиеся, так и развитые страны. На развивающиеся страны приходится 53% общей посевной площади и 50% производства, 70 % пшеницы используется в пищу, а 20 % и 2-3 % используется в животноводстве и промышленных перерабатывающих производствах в качестве корма. Приблизительно 21% мирового продовольствия зависит от ежегодного урожая пшеницы, который зачастую относительно невелик. Развивающиеся страны, большинство из которых являются нетто-импортерами пшеницы, потребляют 77% мирового производства пшеницы, что составляет около 24% импорта продовольствия из развивающихся стран.

Пшеница является вторым по величине производителем зерна. По данным Международного совета по зерну, производство пшеницы в 2019-2020 гг. составило 763,7 млн тонн, из которых более 523,3 и 137,4 млн тонн было использовано соответственно в пищу на фураж, объем пшеницы, использованной для промышленной переработки, составил 24 млн тонн, и а в 2020-2020 гг. 2021 мировой объем производства пшеницы составил 772 млн тонн, увеличившись на 10 млн тонн по сравнению с предыдущим годом, и соответственно 540 и 232 млн тонн было использовано в пищу. ЕС является первым регионом, производящим пшеницу. Объемы потребления пшеницы выросли в 2020-2021 гг, достигнув 783 миллионов тонн, Китай потреблял в этом году около 150 миллионов тонн пшеницы. За последнее десятилетие на душу населения приходится 66 кг пшеницы. На производство пшеницы влияет ряд факторов.

- природные условия, в том числе температура воздуха, солнечный свет, на которые человек не может повлиять, но они учитываются при выборе сроков посева и т.д.;
- Факторы, зависящие от деятельности человека: влажность почвы, запас питательных веществ или питательных веществ, качество семян и тип, защита посевов от вредителей, болезней и сорняков, урожай и т. д.

Для увеличения производства пшеницы правительства разных стран предоставляют льготы, в том числе субсидии, а Международный совет по пшенице играет важную роль в регулировании торговли с целью обеспечения международного сотрудничества, стабильности и прозрачности рынка.

Ключевые слова и фразы: зерно, пшеница, международный совет по пшенице, конвенция о продовольственной помощи, производство, потребление, экспорт, импорт.

WHEAT WORLD MARKET ANALYSIS AND SETTLEMENT

ELENA SEROBYAN

"Akhuryan Community Library" NPO Accountant
Armenian State University of Economics, Gyumri branch
"Customs Administration" educational program, Master Student
elen.serobyanyan00@inbox.ru

Abstract

Agriculture plays a role in the world economy. Their broad scope includes ensuring food security, economic growth, reducing poverty, and reducing income inequality. In times of economic and political turmoil, food security remains the main goal of every government, it is the basis of food security for the development of national agriculture. The imposition of trade restrictions in response to the Covid-19 pandemic, had an impact on food security, especially in the wheat market. Initially, there was panic around the world, which is due to the fact that it will be used for the most part, in the production of flour, macaroni.

220 million hectares of land are planned for cultivation all over the world. Both developing and developed countries are engaged in wheat production. Developing countries account for 53% of the total harvest area 50% of production. 70% of wheat is used as food, and 20% and 23% are used for animal husbandry and industrial processing as fodder. About 21% of the world's food depends on the annual wheat harvest, which is often relatively low. Developing countries, most of which are net importers of wheat, consume 77% of world wheat production respectively, wheat accounts for about 24% of food imports from developing countries. Wheat is the second-largest grain producer. According to the International Grain Council, the production of wheat in 2019-2020 amounted to 763.7 million tons, of which more than 523.3 and 137.4 million tons of medicine for food and feed, respectively, the volume of wheat used for industrial processing was 24 million tons, and in 2020-2021. World wheat production amounted to 772 million tons, an increase of 10 million tons compared to the previous year, and 540 and 232 million tons for fodder, respectively. The EU is the first wheat-producing region. Wheat consumption volumes increased in 2020-2021. Reaching 783 million tons, China consumed about 150 million tons of wheat that year. In the last decade, per capita has been 66 kg. There are a number of, ingredients on wheat production.

- natural conditions, including air and temperature, sunlight, which can not be affected by man, but they are taken into account when choosing the time of sowing.
- activities that depend on the person: soil moisture, bond or food supply, type of seed quality, sow protection from pests, diseases, weeds, harvest, etc.

In order to increase wheat production, various governments are given privileges, including subsidies, and trade regulation issues are addressed by the International Wheat Council, which aims to ensure international cooperation, market stability, and transparency.

Keywords and phrases: grain, wheat, International Council of Wheat, Food Aid Convention, production, consumption, export, import.

Ներածություն

Հացահատիկները ներկայումս աշխարհում ամենակարևոր ներդրումն են մարդկային սննդի մատակարարման մեջ, ինչպես հայ ժողովրդի, այնպես էլ այլ ազգերի համար հացահատիկն ու հացը առանցքային նշանակություն ունեն, և մարդկային քաղաքակրթության մեջ ցորենը շարունակում է մնալ համաշխարհային առևտրի կարևորագույն ապրանքներից մեկը: Յուրաքանչյուր մարդու կյանքում հացահատիկի դերն ու նշանակությունը շատ ավելին է, քան ընդունված է կարծել: Իր նշանակությամբ առանձնանում է հատկապես ցորենը, որից պատրաստված արտադրանքները յուրաքանչյուր մարդու սննդի անբաժան մասն են կազմում, դրանք սննդարար են և ունեն բարձր կալորիականություն՝ իրենց մեջ պարունակելով սպիտակուցներ, ածխաջրեր, ճարպեր, վիտամիններ, երկաթ, կալցիում և այլն:

Ցորենի համաշխարհային շուկայի վերլուծությունը հնարավորություն է տալիս տարբեր երկրների օրինակով դիտարկելու ցորենի արտադրության ապահովման նպաստավոր պայմանները և ազդող գործոնները, նվազեցնելու դրանց բացասական ազդեցությունը, որը ներկայումս արդիական խնդիր է: Այս հոդվածում վերլուծվել է ցորենի համաշխարհային շուկան և դրա կարգավորումը:

Տեսամեթոդական հիմքեր

Տեսական և մեթոդական հիմքն են ապահովում ցորենի համաշխարհային շուկայի ուսումնասիրության բնագավառում հայ և օտարերկրացի ականավոր հեղինակների տեսական, գիտական և կիրառական բնույթի հոդվածները, ՀՀ ԱՎԿ-ի և ֆինանսական կազմակերպությունների զեկույցները, վերլուծությունները, փորձագետների հետազոտության արդյունքները ու հրապարակումները, և մի շարք էլեկտրոնային կայքեր, այդ թվում՝ համաշխարհային բիզնես տվյալների հարթակը:

Ուսումնասիրության մեթոդները

Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են էմպիրիկ և տեսական մեթոդները:

Ստացված արդյունքները

Մինչ անդրադառնալը ցորենի համաշխարհային շուկայի ուսումնասիրությանը կարևոր է ուսումնասիրել նաև դրա միջազգային կարգավորումը, որն իրականացնում է Ցորենի միջազգային խորհուրդը: Ցորենի միջազգային խորհուրդը հիմնադրվել է 1949 թ-ի հուլիսի 1-ին: 1995 թ-ին վերանվանվել է հացահատիկի միջազգային խորհուրդ. այն միջկառավարական կազմակերպություն է, որը վերահսկում է հացահատիկի առևտրի կոնվենցիան և ձգտում է խթանել համագործակցությունը հացահատիկի համաշխարհային առևտրում: Դրա խնդիրներն են՝ բարելավել շուկայի կայունությունը և համաշխարհային պարենային անվտանգությունը՝ ապահովելով հացահատիկի տարբեր ոլորտներում առաջարկի և պահանջարկի հիմունքների անաչառ վերլուծություն և բարելավել թափանցիկությունը՝ շուկայի և քաղաքականության զարգացումների վերաբերյալ կանոնավոր հաշվետվությունների միջոցով: ՀՄԽ-ի տվյալները, վերլուծությունները և հաշվետվություններն օգտագործվում են անդամ կառավարությունների, մասնավոր կազմակերպությունների և այլ միջազգային կառույցների կողմից, որոնք զբաղվում են հացահատիկի շուկայի զարգացումներով: ՀՄԽ-ի բարձրագույն մարմինը՝ քարտուղարությունը, կառավարում է Պարենային աջակցության կոնվենցիան, վարչական ծառայություններ է մատուցում Պարենային աջակցության կոմիտեին և հանդիսանում է գյուղատնտեսական շուկայի տեղեկատվական համակարգի քարտուղարության մի մասը: ՀՄԽ-ի գլխամասային գրասենյակը գտնվում է Լոնդոնում, որտեղ հրավիրվում է հացահատիկի ամենամյա համաժողովը, որը միավորում է միջազգային գնորդներին և վաճառողներին, ոլորտի ներկայացուցիչներին և քաղաքականություն մշակողներին: ՀՄԽ-ն ունի երկու տեսակի անդամներ՝ ներմուծող և արտահանող երկրներ:

2021թ-ի ապրիլի դրությամբ նրա անդամները բաղկացած են 11 արտահանող և 18 ներմուծող երկրներից:

Աղյուսակ 1. «Ցորենի միջազգային խորհրդի» անդամ երկրները:

ԱՐՏԱՀԱՆՈՂ ԵՐԿՐՆԵՐ	ՆԵՐՄՈՒԾՈՂ ԵՐԿՐՆԵՐ
Արգենտինա	Ալժիր
Ավստրալիա	Կուբա
Կանադա	Եգիպտոս
ԵՄ	Իրան
Հնդկաստան	Իրաք
Ղազախստան	Ճապոնիա
ՌԴ	Հվ.Կորեա
Սերբիա	Մարոկկո
Ուկրաինիա	Օման
ԱՄՆ	Պակիստան
Թուրքիա	Սաուդյան Արաբիա
	Հվ.Աֆրիկա
	Շվեյցարիա
	Թունիս
	Վատիկան
	Կոդ դ'իվուար
	Քենիա


ՀՄԽ-ի նպատակները 1995թ-ին կառավարել է հացահատիկի առևտրի կոնվենցիան, որը կոչված է առավել արդյունավետորեն բավարարելու անդամ երկրների, հատկապես՝ զարգացող երկրների կարիքներն ու ձգտումները և ամրապնդելու հացահատիկ արտահանող և ներմուծող անդամների միջև միջազգային համագործակցությունը՝ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ կարծիքների փոխանակման միջոցով: Կոնվենցիան չի փորձում ազդել շուկայի գների տատանումների վրա, այլ նպատակ ունի նպաստելու շուկայի թափանցիկությանը հուսալի տեղեկատվության հավաքագրման և տարածմանը խորհրդակցությունների միջոցով: Այսպիսով՝ որպես միջկառավարական կազմակերպություն հիմնական նպատակներն են՝

- հացահատիկի առևտրի ոլորտում միջազգային համագործակցության խորացում.
- աջակցություն հացահատիկի ոլորտի զարգացման, դրա բացության և անաչառության ապահովման գործում, այդ թվում՝ առևտրային խոչընդոտների և խտրական գործելաճի վերացումը՝ ի շահ բոլոր մասնակիցների, մասնավորապես՝ զարգացող երկրների.
- հացահատիկի շուկայի կայունության և համաշխարհային պարենային անվտանգության ամրապնդում [3]:

Այս նպատակների իրագործումը հնարավոր է շուկայի թափանցիկության բարձրացման միջոցով հացահատիկի շուկայի և գյուղատնտեսական քաղաքականության փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման, հետազոտությունների և խորհրդատվության միջոցով:

Ուսումնասիրելով ցորենի համաշխարհային շուկան՝ նկատում ենք, որ 2015-2021թթ-ին ցորենի արտադրության ծավալները աճել են, որի հիմնական պատճառներից մեկն այն է, որ ցորենը օգտագործվում է տարբեր արտադրանքների արտադրության մեջ, որոնք ունեն սպառման մեծ ծավալներ, այդ թվում՝ հացը, մակարոնեղենը և այլն:

Գծապատկեր 1. Ցորենի համաշխարհային արտադրության ծավալները 2015-2021թթ. (մլն տոննա):




Գծապատկերից պարզ է դառնում, որ 2019 թ-ին ցորենի արտադրության համաշխարհային ծավալը կազմել է 765 մլն տոննա, նախորդ տարվա համեմատ աճել է 30 մլն տոննայով: 2021թ-ին կազմել է 778.4 մլն տոննա: ԱՄՆ-ում ամեն տարի արտադրվում է մեծ քանակությամբ ցորեն, որը հետագայում արտահանվում է, միջինում, եթե ներմուծվում է 4 մլն տոննա ցորեն, ապա արտահանվում է 28 մլն տոննա [4]:

Ուսումնասիրելով ցորենի արտադրության ծավալները ըստ երկրների՝ նկատում ենք, որ առաջատար տեղ են գրավում «Ցորենի միջազգային խորհուրդի» անդամ երկրները, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ անդամ երկրները իրենց առջև նպատակ են դրել բավարարելու ինչպես ներքին շուկայի պահանջարկը, այնպես էլ՝ արտաքին շուկայի՝ ի հաշիվ այն աջակցության, որ ստանալու են հացահատիկի ոլորտի զարգացման ապահովման նպատակով:


Առաջատար երկրներից մի քանիսը չեն համարվում խորհրդի անդամ երկրներ, սակայն ունեն արտադրության մեծ ծավալներ՝ ի հաշիվ բնակչության թվաքանակի աճի:

Գծապատկեր 2. Ցորենի արտադրության ծավալները՝ ըստ երկրների (մլն տոննա) [5]:



Գծապատկերում ներկայացված են համաշխարհային մակարդակով առաջատար ցորեն արտադրող երկրները: ԵՄ ցորեն արտադրող առաջատար երկիրն է. 2019 թ-ից 2020 թ-ին արտադրել է 154,5 մլն տոննա ցորեն, ինչը կազմում է ցորենի համաշխարհային արտադրության ավելի քան մեկ հինգերորդը: Ինչ վերաբերում է ցորենի համաշխարհային արտադրությանը՝ ըստ երկրների՝ Ֆրանսիան, Գերմանիան և Միացյալ Թագավորությունը վերջին 10 տարիների ընթացքում եղել են ԵՄ անդամ երկրների ամենամեծ ցորեն արտադրող երկրները: 2019 թ-ին Մեծ Բրիտանիան արտադրել է մոտավորապես 16,22 մլն տոննա ցորեն, որը գնահատվում է մոտավորապես 2,44 մլրդ բրիտանական ֆունտ ստեռլինգ: Այս շրջաններում ցորենի արտադրության մեծ ծավալները պայմանավորված են այն հանգամանքով, որ նրանք նախընտրում են այլուրի արտադրության համար օգտագործել իրենց երկրում արտադրված ցորենը, քան ներմուծվողը: 2019 թ-ին Միացյալ Թագավորությունը Իսպանիա է արտահանել մոտ 652 հզ տոննա այլուր: Երկրորդ տեղը զբաղեցրած Չինաստանը 2019 թ-ից 2020 թ-ի ընթացքում արտադրել է մոտ 133 մլն տոննա ցորեն: ԱՄՆ-ի Կանզաս, Հյուսիսային Դակոտան և Մոնտանա նահանգները ցորեն արտադրող առաջատարներն են:

Գծապատկեր 3. Ցորենի սպառման համաշխարհային ծավալները 2017-2022 թթ. (մլն տոննա):



Գծապատկերում ներկայացված են ցորենի սպառման համաշխարհային ծավալները 2018-2021 թ.-ի ամփոփ տվյալներ և 2022 թ.-ի կանխատեսվող մակարդակը, ըստ որի՝ այն կկազմի 787,4 մլն տոննա, որը 2021 թ.-ի համեմատ կաճի 4,4 մլն տոննայով [6]:

Այժմ դիտարկենք, թե բնակչության թվաքանակի փոփոխությունը ինչպես է ազդում ցորենի սպառման ծավալների վրա՝ իրականացնելով ռեգրեսիոն վերլուծություն:

Գծապատկեր 4. Բնակչության թվաքանակի փոփոխության ազդեցությունը ցորենի սպառման ծավալների վրա:


ВЫВОД ИТОГОВ								
<i>Регрессионная статистика</i>								
Множественный R	0,940287643							
R-квадрат	0,884140851							
Нормированный R-квадрат	0,845521135							
Стандартная ошибка	0,045801998							
Наблюдения	5							
<i>Дисперсионный анализ</i>								
	<i>df</i>	<i>SS</i>	<i>MS</i>	<i>F</i>	<i>Значимость F</i>			
Регрессия	1	0,048026531	0,048026531	22,89350969	0,017358075			
Остаток	3	0,006293469	0,002097823					
Итого	4	0,05432						
	<i>Коэффициенты</i>	<i>Стандартная ошибка</i>	<i>t-статистика</i>	<i>P-Значение</i>	<i>Нижние 95%</i>	<i>Верхние 95%</i>	<i>Нижние 95,0%</i>	<i>Верхние 95,0%</i>
Y-пересечение	4,28074582	0,714077897	5,994788293	0,009295421	2,008231253	6,553260386	2,008231253	6,553260386
Переменная X 1	0,004499546	0,0009404	4,78471626	0,017358075	0,001506774	0,007492317	0,001506774	0,007492317

Ռեգրեսիոն վերլուծությունից պարզ է դառնում, որ բնակչության 1% աճի դեպքում ցորենի սպառման ծավալները ավելանում են 0,004%-ով :

R² ինչքան մոտ է 1-ին այնքան փոփոխականների միջև կապը մեծ է, ստացված արդյունքների դեպքում R² հավասար է 0,88 հետևաբար մոդելի որակի բարձր է և կապը փոփոխականների միջև մեծ է: Մոդելի մյուս կարևոր բնութագրիչը t վիճակագրական է, որը ինչքան բարձր է, այնքան մոդելի որակը բարձր է, որպես կանոն 1,96-ից բարձր: Վիճակագրության սխալի հավանականությունը 0,017, քանի որ այն փոքր է 0,05 -ից, ուրեմն գործոնների գումարային ազդեցությունը վիճակագրորեն նշանակալի է:

Այսինքն՝ մոդելից պարզ է դառնում, որ բնակչության թվաքանակի փոփոխությունը ազդում է ցորենի սպառման ծավալների վրա:


Գծապատկեր 5. Ցորենի սպառման ծավալները 2021թ-ին՝ ըստ երկրների (մլն տոննա):



Գծապատկերից պարզ է դառնում, որ 2021 թ-ին ցորենի սպառման ծավալներով առաջատար տեղ է գրավում Չինաստանը՝ 148,5 մլն տոննա, նախորդ տարվա համեմատ աճել է 31 մլն տոննայով, երկրորդ և երրորդ տեղը զբաղեցնում են ԱՄՆ և Հնդկաստանը համապատասխանաբար՝ 107,6 և 104,2 մլն տոննա ծավալով:

2021թ-ին ցորենի ներմուծման ծավալները կազմել է 44,1 մլրդ դոլար[7]:


Գծապատկեր 6. Ցորենի ներմուծման ծավալները՝ ըստ երկրների 2021թ-ին (մլն տոննա):



Գծապատկերից պարզ է դառնում, որ ցորենի ներմուծման ծավալներով առաջատար տեղ է գրավում Եգիպտոսը՝ 13 մլն տոննա, Թուրքիան՝ 11 մլն տոննա, և Ինդոնեզիան՝ 10,75 մլն տոննա [8]:


«Ցորենի միջազգային խորհրդի» անդամ երկրներից Եգիպտոսը, Ալժիրը, Ճապոնիան և ներմուծման ծավալներով առաջատար տեղ են զբաղեցնում:

Գծապատկեր 7. Յորենի ներմուծման ծավալները՝ ըստ երկրների 2021թ-ին (տոկոս):



Յորենի ներմուծման ծավալում տեսակարար կշիռ ունի Եգիպտոսը, որին բաժին է ընկնում ընդհանուր ներմուծման ծավալի 10,6%-ը կամ 4,67 մլրդ դոլար, առաջատար եռյակը եզրափակում է Ինդոնեզիան և Եգիպտոսը՝ 5,23% և 4,86% կամ 2,31 մլրդ դոլար և 2,1 մլրդ դոլար ընդհանուր արժեքով, իսկ արտահանման ծավալում առաջատար տեղ է գրավում Ռուսաստանը 54,5%-ով կամ դրան համարժեք 2,55 մլրդ դոլար, երկրորդ տեղը զբաղեցնում է Ուկրաինան 14,7%-ով և Ռումինիան 12,6%-ով, որը համարժեք է համապատասխանաբար 685 մլն և 587 մլն դոլարի:

Գծապատկեր 8. Յորենի արտահանման ծավալները՝ ըստ երկրների 2021թ (մլն տոննա):



Գծապատկերից պարզ է դառնում, որ ցորենի արտահանման ծավալներով 2021թ-ին առաջատար դիրք է գրավում ՌԴ՝ կազմելով 32 մլն տոննա, ԱՄՆ և Կանադան համապատասխանաբար՝ 27 և 23 մլն տոննա: Այսպիսով՝ Եվրասիական միության երկրները կարևոր դեր են խաղում ցորենի համաշխարհային արտահանման մեջ [9]: Ռուսաստանի, Ուկրաինայի և Ղազախստանի կարևորությունը հացահատիկի միջազգային շուկաներում պարենային անվտանգության ապահովումն է, մասնավորապես այս երկրներում ցորենի շուկայի

կարգավորմանն ուղղված քաղաքականությունը և միջոցառումները էական ազդեցություն ունեն համաշխարհային շուկաների վրա: Օրինակ՝ ցածր բերքատվությունը, արտահանման սահմանափակումները կամ արգելքները առաջացնում են համաշխարհային գների բարձրացում: Բարձր գները վնասակար են սպառողների համար, բայց միևնույն ժամանակ կարող են շահավետ լինել արտադրողների համար: Գների աճը հիմնականում չի ազդում բարձր եկամուտ ունեցող երկրներում պարենային անվտանգության վրա, այնուամենայնիվ ցածր եկամուտ ունեցող երկրների համար հացահատիկի ներկրման ծախսերը բարձր են, չնայած երբեմն կարող են օգուտ ստանալ:

Գծապատկեր 9. Ցորենի գնի դինամիկան 2015-2021թթ-ին (դոլար):



Ստորև գծապատկերում ներկայացված է ցորենի գնի դինամիկան 2015-2021 թթ-ին, որից պարզ է դառնում, որ աստիճանաբար գնի մակարդակը բարձրացել է, եթե 2015 թ-ին ցորենի գնի միջին մակարդակը կազմել է 4,8 ԱՄՆ դոլար, 2015թ-ին նվազել է՝ կազմելով 4,3 ԱՄՆ դոլար, այն, ինչ 2021թ-ին կազմել է մոտավորապես 8,5 ԱՄՆ դոլար **[10]**: Քանի որ ցորենի համաշխարհային շուկայում առաջատար դիրք են գրավում «Ցորենի միջազգային խորհրդի» անդամ երկրները, նրանք էլ ցորենի գնի վրա ունեն էական ազդեցություն:

Ցորենի գնի վրա կարող են ազդել մի շարք գործոններ, այդ թվում՝

- ըստ գերմանացի փորձագետ և հետազոտող, բույսերի պաշտպանության հայտնի մասնագետ Օլավ Օտտինգերի՝ գլոբալ տաքացումն ազդում է գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության վրա, ազդեցությունն հացահատիկային մշակաբույսերի բերքատվության վրա յուրաքանչյուր 1 աստիճանի ջերմաստիճանի բարձրացումը բերում է բերքատվության մոտ 6% կորստի.
- կլիման, որովհետև ցորենի ծլելու լավագույն ջերմաստիճանը 12-15 °C է: Ձյան շերտի բացակայության դեպքում աշնանացան ցորենը ոչնչանում է -16-18°C սառնամանիքներից, իսկ 20 սմ ձյան շերտի տակ դիմանում է մինչև -20°C, իսկ 30-60 սմ ձյան շերտի տակ՝ -40°C-ին: Գարնանացան ցորենի ծիլերը դիմանում են -13°C սառնամանիքներին, իսկ թփակալման փուլում -8-9°C, ծաղկման ու հատիկալիցքի փուլում՝ -1-2°C սառնամանիքի պայմաններում վնասվում են: Ցորենը պահանջկոտ է խոնավության նկատմամբ:

- Տնտեսական գործոնները, այդ թվում հացահատիկի արտահանման և ներմուծման ծավալները, առաջարկի և պահանջարկի հավասարակշռությունը, ինչպես նաև՝ շուկայի պայմանները:
- Նախորդ ժամանակահատվածի արդյունքները և ընթացիկ սպասումները, այդ թվում՝ զբաղեցրած տարածքը, հաջորդ տարվա բերքի կանխատեսումները, բեռնափոխադրումները պահեստներում, բերքի հավաքման ժամանակը և այլն:

ՀՀ ցորենի շուկայի վերլուծություն

ՀՀ-ում տարեկան սպառում են 390-ից 420 հզ տոննա հացահատիկ, որից 320-ից 350 հզ. տոննան ներկրվում է: Հայաստանում ցորենի գնի աճը 2021 թ-ին պայմանավորված է արտաքին գործոններով, այդ թվում՝ ազգային արժույթի արժեզրկմամբ, քաղաքական և տնտեսական իրավիճակներով: Գլխավոր գործոնը նախորդ տարում Ռուսաստանում հացահատիկի գների աճի միտումն է. Ռուսաստանից է Հայաստանը ներմուծում ցորենի մեծ մասը: ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալներով 2021թ-ին, ցորենի գնի աճով պայմանավորված, հացի և ալյուրի գինը բարձրացել է 2020 թ-ի համեմատ 11%-ով և 7,2%-ով: Ցորենի գնի բարձրացումը մեծացնում է տրանսպորտային ծախսերը և ԱԱՀ-ն: 1 տոննա ցորենը Հայաստան մուտք գործելիս արդեն արժե 385 դոլար: 2020թ-ի համեմատ աճել է 30%-ով: Պաշտոնապես մեկ պարկ ալյուրը թանկացել է 2,5 հզ դրամով, այսինքն 1 կգ ալյուրը 40 դրամով է թանկացել: Եթե Հայաստանը չլիներ ԵԱՏՄ անդամ երկիր, ապա նա պիտի վճարեր նաև ցորենի արտահանման քվոտայի համար, այսինքն՝ 100 դոլարի փոխարեն տոննայի համար պիտի վճարեր 170 դոլար ավելի: Ցորենի գնի բարձրացումը պայմանավորված է նաև տրանսպորտային փոխադրումների գնի բարձրացմամբ: Եթե 2020 թ-ին ծովային փոխադրման դեպքում 1 տոննայի փոխադրումն արժեր 18 դոլար, ապա այն այժմ կազմում է 60 դոլար: Ներկայումս ցորենի փոխադրման նվազագույն ծախսերը «Վերին Լարսով» փոխադրման դեպքում է:

Հայաստանյան ցորենը արտահանվում է Թուրքմենստան, Ռումինիա, Ֆրանսիա, Ուկրաինա և Ուզբեկստան: 2021թ-ին 1 կիլոգրման ցորենը արժեր 0,67 դոլար, որը 2020 թ-ի համեմատ աճել է 20%-ով՝ 0,56 ԱՄՆ դոլարի փոխարեն:

Ցորենի արտադրման գները ևս փոխվել են. 2021 թ-ին կազմել է 2,09 ԱՄՆ դոլար: Հայաստանում ցորենի 1 տոննայի գինը 2020 և 2021 թթ.՝ 555,56 ԱՄՆ դոլար և 733,33 ԱՄՆ դոլար: Ըստ որոշ կանխատեսումների՝ 2022թ-ին ցորենի գինը մոտավոր կտատանվի 1կգ համար՝ 0,56-0,73 ԱՄՆ դոլար, ՀՀ դրամով՝ 392,16 դրամ 1 կգ-ի դիմաց: 2021թ-ին Հայաստանն արտահանել է 17000 տոննա ցորեն և ներմուծել 252645 տոննա ցորեն[11]: Հայաստանում ցորենի արտադրությունը կազմել է 900968 տոննա, այն ինչ ունենք 460504 հա հողատարածք ցորենի մշակման համար, միջինում 1 հա հողատարածքի բերաքատվությունը կարող է տատանվել 4-10 տոննա՝ կախված բնակլիմայական պայմաններից, ցորենի տեսակից, պարարտացումից և այլ պայմաններից: Այսինքն՝ ամբողջությամբ մշակվելու դեպքում միջինում բերաքատվությունը կկազմի 1.842.016-4.605.040 մլն տոննա, և ներքին շուկայում պահանջարկը լիարժեքորեն կբավարարենք:

Եզրակացություն

Այսպիսով՝ վերլուծությունից պարզ է դառնում, որ ցորենի համաշխարհային շուկայում արտադրության, սպառման, արտահանման և ներմուծման ծավալներով առաջատար տեղ են զբաղեցնում «Ցորենի միջազգային խորհրդի» անդամ երկրները, ինչը վկայում է այն մասին, որ այդ երկրները հավատարիմ են իրենց որդեգրած քաղաքականությանը, իսկ ՀՀ-ն դեպքում առկա են նպաստավոր պայմաններ ցորենի արտադրության համար և եթե ցորենի մշակության համար նախատեսված հողատարածքները ամբողջությամբ մշակվեն, ապա ստացված բերքը բավարար

կլինի ներքին շուկայի պահանջարկի լրիվ բավարարման համար, քանի որ ներկայումս ցորենի անհրաժեշտ մակարդակի ապահովումը կարող է դառնալ մեծագույն խնդիր: Մեր կարծիքով՝ Ռուսաստանի և Ուկրաինայի միջև սրվող հակամարտությունը կարող է հանգեցնել պարենային ապրանքների գների աճին և համաշխարհային դեֆիցիտի, այդ թվում՝ ցորենի գնի կտրուկ բարձրացմանը, քանի որ խոշոր արտահանողներ և հատկապես կարևոր մատակարարներ են Մերձավոր Արևելքի, Հյուսիսային Աֆրիկայի և Ասիայի համար, և այս դինամիկան կպահպանվի երկար ժամանակ: Ցորենի խոշոր արտահանողների պաշարները 2021/2022 ավարտին նախատեսվում է իջնել մինչև 9 տարվա նվազագույնը՝ 57 մլն տոննա, դրանք կազմում են համաշխարհային պաշարների ընդամենը մեկ հինգերորդն այն դեպքում, երբ համաշխարհային սպառումը կկազմի 781 մլն տոննա, որը կսնուցի աշխարհի բնակչությանը ընդամենը 27 օրվա ընթացքում: Եթե Ռուսաստանը և Ուկրաինան բացառվեն, մյուս խոշոր արտահանողներին բաժին է ընկնում համաշխարհային պաշարների 16%-ը կամ այնքան ցորեն, որ աշխարհի բնակչությանը կբավարարի երեք շաբաթից էլ քիչ ժամանակ:

Գրականության ցանկ

1. Shahbandeh M., Wheat-statistics & facts, United States, 2022 https://www.statista.com/topics/1668/wheat/#topicHeader__wrapper 27.01.2022.
2. Степановских А., Прикладная экология охрана окружающей, Москва,Юнити-Дана,2005,-С.418-419-(Серия Серия«Oikos»).- 30000 экз.-ISBN 5-238-00484-2 .
3. Global Civil Society Database, International Grains Council (IGC), London, 2016, <https://uia.org/s/or/en/1100051258>, 07.06.2022.
4. Shahbandeh M., Global Whaet production from 2011/2012 to 2021/2022, London, 2022, <https://www.statista.com/statistics/267268/production-of-wheat-worldwide-since-1990/>,31.01.2022.
5. Shahbandeh M., Leading Wheat producers worldwide from 2016/2017 to 2021/22,London,2022 <https://www.statista.com/statistics/237908/global-top-wheat-producing-countries/>, 28.01.2022.
6. Shahbandeh M., Total wheat consumption worldwide from 2017/2018to 2021/2022 , London, 2022, <https://www.statista.com/statistics/1094056/total-global-rice-consumption/>,07.03.2022.
7. Shahbandeh M.,Wheat consumption worldwide in 2021/2022, by country, London, 2022, <https://www.statista.com/statistics/1094065/total-global-wheat-consumption-by-country/> 07.03.2022.
8. IndesMundi,, Wheat imports by country in 1000 MT, United States,2021, <https://www.indexmundi.com/agriculture/?commodity=wheat&graph=imports>, 08.03.2022.
9. Eurasian research institute , Analysis of the Global Wheat Market,2021, <https://www.eurasian-research.org/publication/analysis-of-the-global-wheat-market/>.
10. Macrotrends, Wheat prices-40 Year Historical Chart, 2022, <https://www.macrotrends.net-/2534/wheat-prices-historical-chart-data> ,07.03.2022.
11. Wamucii S., Armenia Wheat Prices, Armenia, 2021, <https://www.selinawamucii.com/insights-/prices/armenia/wheat/> .

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԼԵՎՈՆ ՂԱՐԻԲՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ
ասպիրանտ
levon-gharibyan@mail.ru

Համառոտագիր

Ժամանակակից աշխարհում համաշխարհային տնտեսության զարգացման կարևորագույն խթաններից մեկը կապիտալի միջազգային տեղաշարժն է: Տնտեսական և ֆինանսական գլոբալիզացիայի աճի հետ մեկտեղ զարգացող երկրների տնտեսական առաջընթացի արդյունավետությունը կախված է այս գործընթացում նրանց ներգրավվածության աստիճանից:

Ցանկացած պետության տնտեսական և սոցիալական ոչ մի ոլորտ չի կարող բնականոն գործել՝ առանց դրանցում ներդրումների հոսքերի ներգրավման:

Ներդրումները հանգեցնում են տնտեսության կառուցվածքային վերափոխմանը և բոլոր ոլորտների համաչափ զարգացմանը, անհրաժեշտ հումքային բազայի ստեղծմանը, սոցիալական ոլորտի զարգացմանը, պետության պաշտպանունակության և անվտանգության, շրջակա միջավայրի պահպանության խնդիրների լուծմանը, գործազրկության նվազմանը և այլն: Ելնելով դրանից՝ ներդրումները՝ որպես տնտեսական կատեգորիա, խթանում են տնտեսական աճը և մեծացնում երկրի արտադրական ներուժը:

Ներդրումների տնտեսական բնույթը կայանում է նրանում, որ վերջիններս միջնորդում են այնպիսի հարաբերություններ, որոնք ձևավորվում են ներդրումային գործունեության մասնակիցների միջև՝ կապված արտադրության ընդլայնման և բարելավման նպատակով ներդրումային ռեսուրսների ձևավորման և օգտագործման հետ:

Մակրոմակարդակում ներդրումները հիմք են հանդիսանում պետության կողմից ընդլայնված վերարտադրության քաղաքականության իրականացման, գիտատեխնիկական առաջընթացի և ապրանքների և ծառայությունների մրցունակության ապահովման համար:

Միկրոմակարդակում ևս ներդրումների դերը չափազանց կարևոր է, քանի որ դրանք անհրաժեշտ են բնականոն գործունեությունը, կայուն ֆինանսական վիճակն ու աճն ապահովելու համար:

Բանալի բառեր և բառակապակցություններ. ներդրումների տեսակներ, օտարերկրյա ուղղակի ներդրումներ, ներդրումների խթանում, ներդրումների էություն և տնտեսական նշանակություն:

СУЩНОСТЬ И ЭКОНОМИЧЕСКАЯ ЗНАЧИМОСТЬ ИНВЕСТИЦИЙ

ЛЕВОН ГАРИБЯН

Национальная академия наук Республики Армения
Института экономики и аспирант мени Котаняна
аспирант
levon-gharibyan@mail.ru

Аннотация

Одним из важнейших стимулов развития мировой экономики в современном мире является международное движение капитала. С ростом экономической и финансовой глобализации эффективность экономического прогресса развивающихся стран зависит от степени их вовлеченности в этот процесс.

Ни одна экономическая или социальная сфера любого государства не может нормально функционировать без вовлечения в них инвестиционных потоков.

Инвестиции ведут к структурной перестройке экономики - сбалансированному развитию всех отраслей, созданию необходимой сырьевой базы, развитию социальной сферы, решению экологических проблем, сокращению безработицы и т.д. Исходя из этого, инвестиции как экономическая категория стимулируют экономический рост и повышают производственный потенциал страны.

Экономическое значение инвестиций заключается в том, что последние опосредуют отношения, которые складываются между участниками инвестиционной деятельности в связи с формированием и использованием инвестиционных ресурсов в целях расширения производства и совершенствования производства.

На макроуровне инвестиции являются основой реализации расширенной воспроизводственной политики государства, научно-технического прогресса и обеспечения конкурентоспособности товаров и услуг.

Роль этих инвестиций на микроуровне имеет решающее значение, так как они необходимы для обеспечения нормальной работы, стабильного финансового состояния и роста.

Ключевые слова и словосочетания: виды инвестиций, прямые иностранные инвестиции, привлечение инвестиций, сущность инвестиций и экономическое значение.

THE ESSENCE AND ECONOMIC SIGNIFICANCE OF INVESTMENTS

LEVON GHARIBYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia

Institute of Economics after Mikael Kotanyan

PhD student

levon-gharibyan@mail.ru

Abstract

One of the most important stimuli for the development of the modern world economy is the international movement of capital. With the growth of economic and financial globalization, the effectiveness of the economic progress of developing countries depends on the degree of their involvement in the process.

No economic or social sphere of any state can function normally without the involvement of investment flows in them.

Investments lead to the structural transformation of the economy - the balanced development of all sectors, the creation of the necessary raw material base, the development of the social sector, the solution of environmental problems, the reduction of unemployment, etc.

Based on this, investments as an economic category stimulate economic growth and increase the country's production potential.

The economic meaning of investments lies in the fact that the latter mediates the relationships that are formed between the participants of investment activities in connection with the formation and use of investment resources to expand production and improve production.

At the macro level, investments are the basis for the implementation of the expanded reproduction policy of the state, scientific and technical progress, and ensuring the competitiveness of goods and services.

The role of these investments at the micro-level is crucial, as they are necessary to ensure standard operation, stable financial condition, and growth.

Keywords and phrases: Types of investments, foreign direct investments, investment promotion, investment essence, economic significance

Ներածություն

Զարգացման ներկա փուլում ներդրումները, որոնք շուկայական տնտեսության կարևորագույն բաղադրիչներից են, գնալով ավելի կարևոր են դառնում երկրների տնտեսական զարգացման համար: Ժամանակակից գիտական գրականության մեջ ներկայացված են «ներդրումներ» հասկացությունների սահմանման տարբեր մոտեցումներ:

Ներդրումը կապիտալի երկարաժամկետ ներդրում է տնտեսության ոլորտներում՝ երկրի ներսում և արտերկրում, որն ուղղված է պարզ և ընդլայնված վերարտադրությանը:

«Ներդրում» տերմինի ժամանակակից մեկնաբանությունը ենթադրում է տնտեսական հարաբերությունների մի շարք, որոնք կապված են ներդրված միջոցների իրական հոսքի հետ՝ որոշակի նպատակների իրականացման համար: Ներդրումները լայն իմաստով ապահովում են երկրի ոլորտային կառուցվածքի աճն ու զարգացումը ֆինանսավորելու համար անհրաժեշտ իրական և ֆինանսական ներդրումներ ներգրավելու մեխանիզմները:

Գրականության ակնարկ

Ներդրումները տնտեսության զարգացման ամենակարևոր բաղադրիչներից են, և պատահական չէ, որ այս եզրույթին բավական մեծ ուշադրություն է հատկացվում ժամանակակից տնտեսագիտական հետազոտություններում: Ներդրումների տնտեսական բովանդակության վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ առկա են բազմաթիվ մոտեցումներ, ուստի կարելի է եզրահանգել, որ վերջինիս ուսումնասիրության համար անհրաժեշտ է բազմակողմանի մոտեցում: Առհասարակ ներդրումների սահմանման հետ կապված գոյություն ունեն երկու հիմնական մոտեցումներ՝ գիտական և պաշտոնական [1, էջ 5]: Առաջին դեպքում սահմանումը դիտարկվում է տարբեր տեսանկյուններից՝ որպես գիտական մոտեցումների համախումբ, իսկ պաշտոնական սահմանումները ամրագրված են բացառապես իրավական ակտերում: Ըստ Ու.Շարփի՝ ընդհանուր առմամբ ներդրում իրականացնել նշանակում է «հիմա բաժանվել փողից՝ ապագայում ավելի շատ փող տնօրինելու համար» [2]: Բազմաթիվ ժամանակակից տնտեսագետներ, մասնավորապես Դ. Նորթթոթը [3] ավելի համոզիչ է համարում ամերիկացի տնտեսագետ և ներդրող Գրեհեմ Բ.-ի ձևակերպումը, որը ներդրումը մեկնաբանում է որպես գործողություն, որը դետալային վերլուծությունից հետո ենթադրում է հիմնական կապիտալի անվտանգություն և դրական եկամուտ [4, էջ 568]: Հարկ է նշել, որ այս սահմանումով դժվար է որոշել, թե բուն եկամուտը որտեղից է ստացվում և ինչ միջոցների հաշվին:

Անդրադառնալով ռուս հետազոտողների կողմից տրված սահմանումներին՝ կարող ենք մեջբերել ևս մի քանի սահմանումներ: Մասնավորապես Ա. Բորիսովի մեծ տնտեսական բառարանում ներդրումները սահմանվում են որպես «ծախսերի մի շարք, որոնք իրականացվում են ազգային տարբեր ոլորտներում մասնավոր կամ պետական կապիտալի երկարաժամկետ ներդրումների տեսքով [5, էջ 895]: Իսկ մեծ իրավաբանական բառարանում բերված սահմանումը հետևյալն է՝ «ներդրումներ են համարվում փողը, արժեթղթերը, այլ գույքը՝ ներառյալ սեփականության կամ դրամական այլ արժեք ունեցող իրավունքները, որոնց կիրառմամբ կարելի է ստանալ եկամուտ կամ հասնել ցանկալի արդյունավետության [6]: Իմ կարծիքով՝ ներդրումների վերաբերյալ ամենադիպուկ և ամբողջական ձևակերպումը, որը նաև ներառում է վերը նշված գրեթե բոլոր տեսակետները, տրվել է ռուս հետազոտող Ա. Նեշիտոյի կողմից: Ըստ վերջինիս՝ ներդրումները վերաբերում են տարբեր գործունեության օբյեկտներին, այդ թվում՝ ձեռնարկատիրական նախագծեր, սոցիալ-տնտեսական ծրագրեր, նորարարական նախագծեր՝ եկամուտ ստեղծելու կամ այլ շահավետ արդյունքի հասնելու համար» [7, էջ 13]:

Ըստ ԱՄՀ-ի ձևակերպման՝ ուղղակի ներդրումների նպատակը ուղղակի ներդրողի (այլ տնտեսության ռեզիդենտի) մշտական մասնաբաժին ստանալն է: Այսպիսով՝ ուղղակի ներդրողը զգալի ազդեցություն ունի տնտեսվարող կազմակերպության կառավարման վրա, ինչը ենթադրում է երկարաժամկետ հարաբերությունների ձևավորում [8, էջ 3]: Իսկ ինչ վերաբերվում է ՏՀԿԶ տարբերակին, ապա այնտեղ ուղղակի ներդրումը սահմանվում է որպես ներդրումների տեսակ, որն արտացոլում է ռեզիդենտ ձեռնարկության կողմից մեկ տնտեսության (ուղղակի ներդրողի) նկատմամբ կայուն շահեր հաստատելու նպատակը այն ձեռնարկության հետ (ուղղակի ներդրումային ձեռնարկության), որը ռեզիդենտ է այլ տնտեսության մեջ [9, էջ 7]:

Ներդրումների տեսակները և նշանակությունը

Ներդրողները կապիտալ ներդնելու երկու տարբերակ ունեն. կարճաժամկետ շահույթ ստանալու նպատակով նրանք կարող են պորտֆելային ներդրումներ կատարել՝ առանց ձեռնարկության գործունեությանը ակտիվորեն մասնակցելու: Երկարաժամկետ հեռանկարում ներդրողները ներդրումներ են կատարում այլ տնտեսության ձեռնարկությունում՝ առնվազն 10% բաժնեմաս ունեցող ընկերության կառավարման վրա ազդեցություն ձեռք բերելու համար: Բացի այդ, նրանք կարող են զրոյից կառուցել նոր օբյեկտներ՝ միաժամանակ պահպանելով գործողությունների ամբողջական վերահսկողությունը [10, էջ 34]:

Ժամանակակից շուկայական պայմաններում ներդրումները տնտեսական աճի հիմնական աղբյուրներից են: Նրանց ռացիոնալ օգտագործումը կախված է տարածաշրջանի արտադրական ներուժից, սոցիալական արտադրության վերարտադրողական և ոլորտային կառուցվածքից:

Ըստ կապիտալ ներդրումների օբյեկտների՝ առանձնանում են ֆինանսական և իրական ներդրումներ: Իրական ներդրումների տակ հասկացվում են կապիտալի ներդրումն ակտիվների ձևավորման մեջ, որոնք կապված են գործառնական գործունեության իրականացման և ձեռնարկության սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման հետ: Իրական ներդրումներ կատարելիս ներդրող ընկերությունը մեծացնում է իր արտադրության ներուժը՝ հիմնական արտադրական ակտիվները և դրանց գործունեության համար անհրաժեշտ շրջանառու միջոցները: Ֆինանսական ներդրումները կապիտալի ներդրումն է որոշակի ֆինանսական գործիքներում, հիմնականում արժեթղթերում, ինչպես նաև այլ ձեռնարկությունների ակտիվներում: Ներդրողը, կատարելով ֆինանսական ներդրումներ, մեծացնում է իր ֆինանսական կապիտալը՝ ստանալով շահաբաժիններ և այլ օգուտներ: Ինչ վերաբերվում է ֆինանսական ներդրումներին, ապա դրանք կամ սպեկուլյատիվ են, կամ ուղղված են երկարաժամկետ ներդրումներին [11]:

Սպեկուլյատիվ ֆինանսական ներդրումները ուղղված են ներդրողի կողմից որոշակի ժամանակահատվածում եկամուտ ստանալուն: Երկարաժամկետ ֆինանսական ներդրումներն իրականացվում են հիմնականում ներդրողի ռազմավարական նպատակներին հասնելու համար և կապված են այն կազմակերպության կառավարմանը մասնակցության հետ, որտեղ ներդրված է կապիտալը:

Ըստ ներդրողի կողմից ձեռք բերված սեփականության իրավունքի՝ ներդրումները կարող են լինել ուղղակի և անուղղակի: Ուղղակի ներդրումները ներդրումների տեսակ են, որոնք ներդրողին տալիս են գույքի կամ արժեթղթերի անմիջական սեփականություն: Անուղղակի ներդրումները, ըստ էության, ներդրում են արժեթղթերի պորտֆելում: Այս դեպքում ներդրողը կունենա ոչ թե պահանջ որոշակի ձեռնարկության ակտիվների նկատմամբ, այլ պորտֆելում բաժնեմաս [12]:

Ըստ տարածաշրջանային առանձնահատկության՝ կարելի է տարբերակել ներքին (ներքին) և արտաքին (արտաքին) ներդրումներ: Ներքին ներդրումները կատարվում են տվյալ երկրի ներսում,

իսկ արտաքինը՝ դրա սահմաններից դուրս գտնվող օբյեկտներում: Սա ներառում է նաև որոշակի ֆինանսական գործիքների ձեռքբերում՝ օտարերկրյա ընկերությունների բաժնետոմսեր կամ այլ երկրների պարտատոմսեր: Այսպիսով՝ ներդրումներն իրենցից ներկայացնում են ծախսերի մի շարք, որոնք իրականացվում են կապիտալի նպատակային ներդրման միջոցով որոշակի ժամանակահատվածում տնտեսության տարբեր ճյուղերում և ոլորտներում՝ եկամուտ (շահույթ) և կամ այլ օգտակար արդյունք և բարենպաստ սոցիալական ազդեցություն ստանալու համար:

Եզրակացություն

«Ներդրում» տերմինը ունի շատ հարուստ իմաստային ներուժ և օգտագործվում է տարբեր իմաստներով: Ինչպես անցյալում, այնպես էլ այսօր դրա ուսումնասիրության և ըմբռնման տարբեր մոտեցումներ կան բազմաթիվ գիտնականների և հետազոտողների կողմից, ինչը պայմանավորված է այս հայեցակարգով ընդգրկված երևույթների էության լայնությամբ: Ներդրումների արժեքը ժամանակակից տնտեսության զարգացման համար անգնահատելի է, քանի որ դրանք անհրաժեշտ են ինչպես ընթացիկ արտադրության և վերարտադրության, այնպես էլ հիմնարար և կիրառական հետազոտությունների իրականացման, նորարարությունների խթանման և միջազգային նախագծերի ֆինանսավորման համար: Արդյունավետ ներդրումային գործունեությունը տնտեսության վերականգնման հիմնական լծակն է:

Գրականության ցանկ

1. Инвестиции: учебное пособие / Сост. В.С. Былинкина, М.В. Попов / Саратовский государственный социально-экономический университет. С., 2010. С.5.
2. Шарп У., Инвестиции / Учебное пособие. «ИНФРА-М», 2001.
3. Норткотт Д. Принятие инвестиционных решений. М.: Банки и биржи, 1997.
4. Грэхем Б. Разумный инвестор: Полное руководство по стоимостному инвестированию. М.: Альпина Паблишер, 2014. С. 568
5. Борисов А.Б. Большой экономический словарь. М.: Книжный мир, 2003. С. 895
6. Сухарев А., Крутских А., Сухарева А., Большой юридический словарь, 2003.
7. Нешиной, А.С. Инвестиции: Учебник. М.: ИТК «Дашков и К», 2007. С. 13.
8. GLOSSARY OF FOREIGN DIRECT INVESTMENT TERMS // IMF. p. 3
9. OECD GLOSSARY OF FOREIGN DIRECT INVESTMENT TERMS AND DEFINITIONS, p. 7
10. Галеза Т., Чань Дж. Что такое прямые инвестиции? // МВФ. Финансы и развитие. №9. 2015. С.34.
11. Кузнецова, Е.И. Инновационное развитие : учебник и практикум для вузов / Е.И. Кузнецова.
12. Китиева, М.И. Методы государственного регулирования инвестиционной деятельности / М.И. Китиева, М.А. Орцханова, Ф.Я. Полонкочева // Colloquium-journal. - 2019.

ՌՈՒՍ-ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
գիտակրթական միջազգային կենտրոն
կառավարման ամբիոնի վարիչ
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
kssargsyan@yahoo.com

Համառոտագիր

Ռուսաստանի տնտեսությունը բավական ծանր իրավիճակում է հայտնվել Ուկրաինայի շուրջ ստեղծված աշխարհաքաղաքական լարվածության պատճառով, որն ավելի սրվեց ռուսական իշխանությունների կողմից Դոնեցկի ու Լուգանսկի Հանրապետությունների անկախության ճանաչման և այնուհետ 2022 թվականի փետրվարի 24-ին մեկնարկած հատուկ ռազմական գործողության արդյունքում: ԱՄՆ-ի և ԵՄ-ի կողմից սահմանված բավական կոշտ պատժամիջոցները անխուսափելիորեն բացասաբար կազդեն ինչպես Ռուսաստանի, այնպես էլ վերջինիս գործընկեր երկրների տնտեսությունների վրա:

Ինչպես հայտնի է Ռուսաստանը Հայաստանի գլխավոր առևտրային գործընկերն է և առաջին տեղում է արտահանման, ներմուծման, ինչպես նաև ստացվող դրամական հոսքերի գծով, ըստ այդմ՝ Հայաստանի տնտեսության վրա ռուս-ուկրաինական պատերազմի ազդեցությունները կարտահայտվեն մի շարք ուղղություններով, այդ թվում՝ արտահանման նվազում, տրանսֆերտների կրճատում, գնաճի տեմպերի արագացում, տնտեսական աճի դանդաղում:

Հաշվի առնելով այն կարևորությունը, որ ռուսական շուկան ներկայացնում է մեր տնտեսության համար՝ ռուբլու փոխարժեքի կտրուկ անկումը նախևառաջ բացասական կանդրադառնա արտահանող ընկերությունների վրա: Փաստացի, ռուսական շուկայում նոր փոխարժեքով սահմանվող գների դեպքում հնարավոր է՝ հայկական ապրանքները դառնան ոչ մրցունակ: Ավելին, նաև արտահանման դեպքում արժեզրկվում են նաև այդ ընկերությունների կողմից ստացված հասույթը: Բացի այդ՝ ռուբլու փոխարժեքի նման խիստ տատանողականության պայմաններում դժվար է նույնիսկ կարճաժամկետ հատվածում գնահատել առկա ռիսկերը, ինչը ստիպում է արտահանող ընկերություններին ձեռնպահ մնալ առայժմ արտահանում իրականացնելուց:

Ռուսաստանի դեմ տնտեսական պատժամիջոցներն ու ռուսական ռուբլու դիրքերի թուլացումը կարող են լուրջ բացասական հետևանքներ թողնել Ռուսաստանից Հայաստան դրամական փոխանցումների վրա, որը մեր տնտեսության վրա ևս բացասաբար է անդրադառնալու: Ըստ Համաշխարհային բանկի կանխատեսման՝ ընթացիկ տարում Ռուսաստանից դեպի Հայաստան փոխանցվող վճարումները կրճատվելու են 19%-ով, ինչը կազմում է Հայաստանի ՀՆԱ-ի 1.2%-ը:

Ինչպես էներգակիրների գների աճը, այնպես էլ ռուսական ռուբլու փոխարժեքի անկումը անխուսափելիորեն հանգեցնելու են նաև ներմուծվող ապրանքների գների աճի, ինչն էլ իր հերթին կհանգեցնի սպառողական շուկայում գնաճի նոր ալիքի, իսկ վերջին ամիսներին Հայաստանում արդեն իսկ նկատվում էր գնաճի տեմպերի նվազում: 2021 թվականի դեկտեմբեր ամսին սպառողական շուկայում տասներկուամսյա գնաճը կազմել է 7.7% , 2022 հունվար ամսին՝ 7.1%, իսկ արդեն փետրվար ամսին այն նվազել էր մինչև 6.5%: Գնաճի տեմպերի նվազմանը նպաստել էին ինչպես ԿԲ կողմից վերաֆինանսավորման տոկոսադրույքի բարձրացումները, այնպես էլ համաշխարհային ապրանքային շուկաներում որոշակի գնանկումները, ինչն արդեն այս տարվա մարտ ամսից փոխարինվեց գնաճային միտումներով: Ռուս-ուկրաինական պատերազմը և Ռուսաստանի հանդեպ կիրառված պատժամիջոցները արդեն իսկ հանգեցրել են էներգակիրների և պարենային մի շարք այնպիսի ապրանքների գնաճի, որոնց արտահանողները հանդիսացել են Ռուսաստանը և Ուկրաինան: Ինչ վերաբերում է տնտեսական աճի տեմպերի թուլացմանը, ապա արտահանման ծավալների նվազումը, տրանսֆերտների կրճատումը և գնաճի տեմպերի արագացումը անխուսափելիորեն հանգեցնելու են 2022 թվականի՝ Հայաստանում տնտեսական ակտիվության կրճատմանը:

Բանալի բառեր և բառակապակցություններ. ռուս-ուկրաինական պատերազմ, էներգակիրներ, արտահանում, դրամական փոխանցումներ, տնտեսական աճ, պատժամիջոցներ:

ВЛИЯНИЕ РОССИЙСКО-УКРАИНСКОГО КОНФЛИКТА НА ЭКОНОМИКУ АРМЕНИИ

КАРЕН САРГСЯН

Национальная академия наук Республики Армения
Международный научно-образовательный центр
заведующий кафедрой "Менеджмент"
кандидат экономических наук, доцент
kssargsyan@yahoo.com

Аннотация

Экономика России находится в сложном положении из-за геополитической напряженности вокруг Украины, которая усугубилась признанием российскими властями независимости Донецкой и Луганской республик, а затем начатой 24 февраля 2022 года специальной военной операцией. Достаточно жесткие санкции, введенные США и ЕС, неизбежно окажут негативное влияние на экономику как России, так и стран-партнеров.

Как известно, Россия является основным торговым партнером Армении, в первую очередь, по экспорту, импорту, а также по полученным денежным потокам. Соответственно, последствия российско-украинской войны для экономики Армении будут отражаться по ряду направлений, включая снижение экспорта, сокращение денежных переводов, ускорение инфляции и замедление экономического роста.

Учитывая потенциал российского рынка для нашей экономики, резкое падение курса рубля, в первую очередь, негативно отразится на компаниях-экспортерах. Ведь в случае установления цен по новому курсу на российском рынке армянская продукция может стать неконкурентоспособной. Кроме того, в случае иностранной валюты доход, полученный этими компаниями, также обесценивается. Кроме того, в условиях таких колебаний курса рубля сложно оценить существующие риски даже в краткосрочной перспективе, что вынуждает компании-экспортеры пока воздерживаться от экспорта.

Экономические санкции против России и ослабление позиций российского рубля могут иметь серьезные негативные последствия для денежных переводов из России в Армению, что окажет негативное влияние на нашу экономику. По данным Всемирного банка, платежи из России в Армению в этом году сократятся на 19%, что составляет 1,2% ВВП Армении.

И рост цен на энергоносители, и падение курса российского рубля неизбежно приведут к росту цен на импортные товары, что, в свою очередь, приведет к новой волне инфляции на потребительском рынке. А в последние месяцы темпы инфляции в Армении снижаются. Так, в декабре 2021 года двенадцатимесячная инфляция на потребительском рынке составила 7,7%, в январе 2022 года — 7,1%, а уже в феврале она снизилась до 6,5%. Снижение темпов инфляции было обусловлено повышением ставки рефинансирования ЦБ, а также определенной дефляцией на мировых товарных рынках, которая с марта текущего года сменилась инфляционными тенденциями. Русско-украинская война, санкции, введенные против России, уже привели к повышению цен на энергоносители и продукты питания, экспортерами которых были Россия и Украина. Что касается ослабления темпов экономического роста, сокращение объемов экспорта, сокращение денежных переводов, ускорение темпов инфляции неизбежно приведут к снижению экономической активности в Армении в 2022 году.

Ключевые слова и словосочетания: российско-украинская война, энергоресурсы, экспорт, денежные переводы, экономический рост, санкции.

THE IMPACTS OF THE RUSSIA-UKRAINE CONFLICT ON THE ARMENIAN ECONOMY

KAREN SARGSYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
International Scientific-Educational Center
Head of the Management Department
PhD in Economic Sciences, Associate Professor
kssargsyan@yahoo.com

Abstract

Russia's economy is in a difficult situation due to the geopolitical tension around Ukraine, which was exacerbated by the Russian authorities' recognition of the independence of the Donetsk and Luhansk Republics, and then a special military operation launched on February 24, 2022. The rather harsh sanctions imposed by the US and the EU will inevitably have a negative impact on the economies of both Russia and its partner countries.

As it is known, Russia is the main trade partner of Armenia, firstly, in terms of export, import, as well as in terms of received cash flows. Accordingly, the effects of the Russian-Ukrainian war on the Armenian economy will be reflected in a number of directions, including a decrease in exports, a reduction in remittances, an acceleration of inflation, and a slowdown in economic growth.

Given the potential of the Russian market for our economy, the sharp fall in the ruble exchange rate will primarily have a negative impact on exporting companies. In fact, in case of prices set at the new exchange rate in the Russian market, Armenian products may become uncompetitive. Moreover, in the case of foreign exchange, the income received by those companies also depreciates. In addition, in the face of such fluctuations in the ruble exchange rate, it is difficult to assess the existing risks, even in the short term, which forces exporting companies to refrain from exporting for the time being.

Economic sanctions against Russia and the weakening position of the Russian ruble could have serious negative consequences for remittances from Russia to Armenia, which will have a negative impact on our economy. According to the World Bank, payments from Russia to Armenia will be reduced by 19% this year, which is 1.2% of Armenia's GDP.

Both the rise in energy prices and the fall in the exchange rate of the Russian ruble will inevitably lead to an increase in the prices of imported goods, which in turn will lead to a new wave of inflation in the consumer market. And in recent months, inflation rates have been declining in Armenia. Thus, in December 2021, the twelve-month inflation in the consumer market was 7.7%, in January 2022, 7.1%, and in February, it had decreased to 6.5%. The reduction of inflation rates was due to the increase in the refinancing rate by the Central Bank, as well as certain deflation in world commodity markets, which has been replaced by inflationary trends since March 2022. The Russian-Ukrainian war, the sanctions imposed on Russia have already led to an increase in the price of energy and food, the exporters of which were Russia and Ukraine. As for the weakening of economic growth rates, the reduction of export volumes, the reduction of remittances, the acceleration of inflation rates will inevitably lead to the reduction of economic activity in Armenia in 2022.

Keywords and phrases: Russian-Ukrainian war, energy resources, exports, remittances, economic growth, sanctions.

Ներածություն

Համավարակով պայմանավորված՝ տնտեսական ճգնաժամի ազդեցությունների հաղթահարումը, չնայած կանխատեսվող վատատեսական սցենարներին, բավական արագ տեղ գտավ, և համաշխարհային տնտեսությունը սկսեց վերականգնվել թեթև V-աձև սցենարով [1]: Համաշխարհային տնտեսությունը 2021 թվականից սկսել էր աստիճանաբար վերականգնվել կորոնավիրուսի համավարակով պայմանավորված ճգնաժամից և արդեն ընթացիկ տարուց սկսած՝ կանխատեսվում էր տնտեսական աճի կայուն հետագիծ առաջիկա տարիների համար, սակայն փետրվարի 24-ից սկիզբ առած ռուս-ուկրաինական պատերազմը բավական մեծ հարված հասցրեց ինչպես ռուսական և ուկրաինական, այնպես էլ աշխարհի բազմաթիվ երկրների տնտեսություններին: Արևմտյան երկրները, որոնք մինչ այդ էլ էին հայտարարում, որ Ուկրաինայի տարածք զորքեր մտցնելու դեպքում Ռուսաստանի նկատմամբ կկիրառվեն կոշտ պատժամիջոցներ, սկսեցին դրանք աստիճանաբար կիրառել: Սկզբնական հատվածում կիրառվեցին ֆինանսական պատժամիջոցներ, մասնավորապես՝ ռուսական պարտատոմսերի շրջանառության արգելքը, Ռուսաստանի բանկի ակտիվների և մի շարք առևտրային բանկերի և կազմակերպությունների ակտիվների սառեցումն արևմտյան երկրների բանկերում, SWIFT միջազգային վճարահաշվարկային համակարգի հասանելիության արգելիք կիրառումը ռուսական մի շարք բանկերի նկատմամբ: Այնուհետ պատժամիջոցները սկսեցին կիրառվել նաև ռուսական արտահանվող ապրանքների նկատմամբ: Բացի այդ՝

Ռուսաստանում գործող արտասահմանյան կազմակերպությունները դադարեցրին իրենց գործունեությունն այդ երկրում: Նախևառաջ՝ արևմտյան ֆինանսական պատժամիջոցները և ռուսական ֆինանսական շուկայից կապիտալի կտրուկ արտահոսքը հանգեցրին ռուսական ռուբլու փոխարժեքի կտրուկ անկման, ինչը նման պայմաններում անխուսափելի էր: Ռուսաստանի մոնետար իշխանություններն, իհարկե, քայլեր ձեռնակերցին իրավիճակը կայունացնելու համար, սակայն հաշվի առնելով Ռուսաստանի բանկի արտարժույթային ակտիվների առնվազն կեսի սառեցումը, ձեռնարկված քայլերը մեծ արդյունավետություն չունեցան, և ռուբլու փոխարժեքը ֆինանսական շուկաներում կտրուկ անկում ապրեց՝ դրսևորելով նաև խիստ տատանողականություն:

Ուսումնասիրության մեթոդներ

Սույն հոդվածում իրականացված ուսումնասիրությունների ընթացքում կիրառվել են տնտեսագիտական հետազոտության՝ համակարգային, վիճակագրական, համեմատական, պատճառահետևանքային, վերլուծական և համադրման մեթոդները:

Ստացված արդյունքներ

Արևմտյան երկրների ֆինանսական պատճամիջոցների արդյունքում ռուսական ռուբլու փոխարժեքը կտրուկ արժեզրկվեց համաշխարհային առաջատար արժույթների նկատմամբ, ինչին ի պատասխան՝ Ռուսաստանի բանկը, անմիջապես արժույթային ինտերվենցիաներ իրականացնելով ֆինանսական շուկայում, փորձեց թույլ չտալ ռուբլու փոխարժեքի ավելի խորը նվազմանը: Նշված միջոցառումը նպաստեց ռուբլու փոխարժեքի որոշակի կայունացմանը կարճաժամկետ հատվածում, սակայն սրան հաջորդած արևմտյան երկրների նոր ֆինանսական պատժամիջոցները, մասնավորապես, Ռուսաստանի բանկի արտարժույթային հաշիվների սառեցումը արտասահմանյան բանկերում, ռուբլու փոխարժեքը կրկին մղեցին կտրուկ անկման: Սա միանգամայն տրամաբանական էր, քանի որ խոսքը գնում էր ՌԴ արժույթային պաշարների շուրջ 50 տոկոսի սառեցման մասին, ինչը Կենտրոնական բանկին զրկում էր դրամավարկային քաղաքականության ճկունությունից և արժույթային ինտերվենցիաների իրականացման հնարավորությունից: Ռուսաստանի բանկը իրավիճակը կայունացնելու նպատակով դիմեց դրամավարկային քաղաքականության մեկ այլ գործիքի՝ վերաֆինանսավորման տոկոսադրույքի բարձրացմանը:

Ռուսաստանի Բանկի տնօրենների խորհրդի որոշմամբ՝ 2022 թվականի փետրվարի 28-ից վերաֆինանսավորման տոկոսադրույքը բարձրացվեց մինչև տարեկան 20%: Բանկի պաշտոնական

հաղորդագրության մեջ մասնավորապես նշվում է, որ Ռուսաստանի տնտեսության արտաքին պայմանները կտրուկ փոխվել են և բազային տոկոսադրույքի բարձրացումը հնարավորություն կտա ապահովելու ավանդների տոկոսադրույքների բարձրացում այն մակարդակով, որն անհրաժեշտ է՝ փոխհատուցելու աճող արժեզրկման և գնաճային ռիսկերը, ինչը կօգնի պահպանելու ֆինանսական և գների կայունությունն ու պաշտպանելու քաղաքացիների խնայողությունները արժեզրկումից [2]: Հարկ է նշել, որ Ռուսաստանի Բանկի կողմից բազային տոկոսադրույքի բարձրացումը տեղի է ունեցել չեզոք ազդակով, այլ կերպ ասած, Ռուսաստանի բանկը հիմնական տոկոսադրույքի վերաբերյալ հետագա որոշումներ կայացնելու է՝ հիմնվելով արտաքին և ներքին պայմանների ռիսկերի գնահատման և դրանց նկատմամբ ֆինանսական շուկաների արձագանքի վրա, հաշվի առնելով գնաճի իրական և սպասվող դինամիկան, ինչպես նաև նպատակային կանխատեսվող հորիզոնում տնտեսական զարգացման տեմպը [2]: Միաժամանակ, Ռուսաստանի Դաշնության Ֆինանսների նախարարության և Ռուսաստանի Բանկի առաջարկների հիման վրա որոշում է կայացվել 2022 թվականի փետրվարի 28-ից օտարերկրյա տնտեսական գործունեության մասնակից ռեզիդենտների համար արտարժույթի պարտադիր վաճառքի մասին՝ արտաքին առևտրի բոլոր պայմանագրերով ստացվելիք հասույթի 80%-ի չափով [3]:

Բացի այդ՝ առևտրային բանկերի և այլ վարկային հաստատությունների իրացվելիության մակարդակի ապահովման նպատակից ելնելով՝ Ռուսաստանի բանկի որոշմամբ 2022 թվականի փետրվարի 27-ից ընդլայնվել է վարկային պայմանագրերով պարտավորված կողմերի կամ փոխառու հանդիսացող իրավաբանական անձանց հիմնական գործունեության ցանկը, որոնց պահանջի իրավունքներն ընդունվում են որպես գրավ Ռուսաստանի բանկի վարկերի համար (այսպես կոչված՝ ոչ շուկայական ակտիվներ): Միաժամանակ, ՌԴ Բանկի կողմից 2022 թվականի փետրվարի 27-ից ավելացվել էր նաև ոչ շուկայական ակտիվների արժեքի ճշգրտման համար օգտագործվող ճշգրտման գործակիցների չափը: 2022 թվականի փետրվարի 28-ից սկսած Ռուսաստանի բանկը ռեպո և վարկավորման գործարքներում օգտագործելու է դրանց շուկայական արժեքը՝ 2022 թվականի փետրվարի 18-ի դրությամբ: Միևնույն ժամանակ, Ռուսաստանի Բանկը ս.թ. մարտի 3-ից ֆոնդային բորսայում ԱՄՆ դոլարի, Եվրոյի և ֆունտ ստեռլինգի գնման համար սահմանեց միջնորդավճար՝ գործարքի գումարի առնվազն 30%-ի չափով, ինչը նպատակ էր հետապնդում զսպելու ազգաբնակչության արտարժույթ գնելու մեծ պահանջարկը: Միջնորդավճարի նման բարձր չափը, ինչ խոսք, վկայում էր, ըստ էության, ռուսական արժույթային շուկայում մեծ անհավասարակշռության առկայության մասին, երբ կիրառված գործիքներն, այնուամենայնիվ, կարճաժամկետ հատվածում թույլ չեն տալիս պատշաճ կերպով կայունացնել փոխարժեքը: Այնուհետ, արդեն մարտի 9-ից Ռուսաստանի բանկը վեց ամիս ժամկետով արգելեց առևտրային բանկերի կողմից արտարժույթի առքուվաճառքը երկրի քաղաքացիների համար:

Ռուսաստանի ֆինասական շուկայի վրա հաջորդ բացասական ազդեցությունը պայմանավորված էր ռուսական մի շարք խոշոր բանկերին միջազգային SWIFT վճարային համակարգի հասանելիությունից զրկելու մասին արևմտյան երկրների որոշմամբ: 2022 թ. փետրվարի 27-ի երեկոյան հայտնի դարձավ, որ ԱՄՆ-ն և ԵՄ-ն սահմանափակել են SWIFT վճարային համակարգի հասանելիությունը այն ֆինանսական հաստատությունների համար, որոնք արդեն պատժամիջոցների տակ էին: Դրանք 7 էին՝ «ՎՏԲ բանկ», «Պրոմսվյազբանկ», «Օտկրիտյե բանկ», «Նովիկոմբանկ», «Ռոսիա բանկ», «Սովկոմբանկ» և «Ռուսաստանի զարգացման բանկ»: Նշված պատժամիջոցը փաստացի շրջանցում էր ռուսական երկու խոշորագույն բանկերը՝ «Գազպրոմբանկը» և «Ինայբանկը» [4]: Սակայն, ըստ Եվրահանձնաժողովի ղեկավար Ուրսուլա ֆոն դեր Լեյենի հայտարարության՝ անհրաժեշտության դեպքում այդ պատժամիջոցը կկիրառվեն նաև ռուսական այլ բանկերի համար: Հարկ է նշել, որ թեև ԱՄՆ-ն և ԵՄ-ն այդ պահին ամեն դեպքում փորձել են չսահմանափակել ռուսական էներգակիրների ներմուծումը՝ դրանցից ունեցած կախվածության պատճառով, սակայն, նույնիսկ այս պարագայում SWIFT-ի սահմանափակման մասին որոշումը լուրջ ազդեցություն կունենա ռուսական ապրանքների առևտրի վրա, քանի որ դրանից տուժող բանկերը զգալի դժվարություններ կունենան միջսահմանային վճարումներ իրականացնելիս: Պատկերացում կազմելու համար պետք է նշել, որ Ռուսաստանում միջբանկային գործարքները սպասարկող SWIFT համակարգից օգտվում են մոտ 300 ռուսական բանկեր և ֆինանսական ընկերություններ: Փաստացի, ռուսական բանկերին այս համակարգից անջատելու

պարագայում վերջիններիս համար ավելի դժվար է տեղեկատվություն փոխանակել իրենց միջազգային գործընկերների հետ, ինչը կոանդաղեցնի առևտուրը և կբարձրացնի գործարքային ծախսերը: Անդրադառնալով SWIFT համակարգին՝ պետք է նշել, որ վերջինս իրենից ներկայացնում է համաշխարհային միջբանկային ֆինանսական հեռահաղորդակցության կազմակերպություն (անգլ.՝ Society for Worldwide Interbank Financial Telecommunication (SWIFT)), որը ստեղծվել է 1973 թվականին Բելգիայում: Այն իրենից ներկայացնում է բելգիական օրենսդրությանը ենթարկվող կոոպերատիվ կազմակերպություն, որը պատկանում է իր անդամ ֆինանսական հաստատություններին՝ ունենալով գրասենյակներ ամբողջ աշխարհում: Այս համակարգը հնարավորություն է ընձեռում ամբողջ աշխարհի ֆինանսական հաստատություններին ուղարկելու և ստանալու տեղեկատվություն ֆինանսական գործարքների մասին՝ անվտանգ, ստանդարտացված և հուսալի միջավայրում: Ներկայումս միջազգային միջբանկային հաղորդագրությունների մեծամասնությունն օգտագործում է SWIFT ցանցը: SWIFT-ը միավորում է 11,000 ֆինանսական հաստատությունների ավելի քան 200 երկրներում և տարածքներում, որոնք օրական միջինից ավելի քան 32 միլիոն հաղորդագրություն են փոխանակում [5]:

Հաշվի առնելով ֆինանսական պատժամիջոցների լուրջ ազդեցությունը ռուսական ֆինանսական համակարգի վրա՝ միջազգային վարկանիշային կազմակերպությունները վերանայել են Ռուսաստանի՝ որպես թողարկող սուվերեն վարկանիշը: Մարտի 6-ին Moody's Investors Service-ը փոխել է Ռուսաստանի երկարաժամկետ թողարկողի և չապահովված պարտքի վարկանիշը «B3»-ից «Ca»-ի՝ բացասական կանխատեսմամբ: Սա վարկանիշային սանդղակի երկրորդ ամենացածր աստիճանն է, և նման վարկանիշ շնորհելու համար գործակալության համար հիմք է հանդիսացել ՌԴ բանկի կապիտալի սառեցումը արտերկրում, որը հավանական է՝ ապագայում սահմանափակելու է երկրի արտաքին պարտքի գծով վճարումները և հանգեցնելու է դեֆոլտի: Զեկույցում նշվում է, որ Ռուսաստանի վարկանիշի իջեցման որոշումը պայմանավորված է խորը մտահոգությամբ՝ կապված ֆինանսական պարտավորությունները վճարելու Ռուսաստանի պատրաստակամության և ունակության հետ» [7]: Նշենք, որ ավելի վաղ՝ մարտի 3-ին, Moody's-ն արդեն փոխել էր Ռուսաստանի վարկանիշը արտաքին և ազգային արժույթներով պարտքային պարտավորությունների իրականացման մասով՝ այն Baa3-ից նվազեցնելով B3-ի [6]: Մարտի 2-ին մեկ այլ վարկանիշային կազմակերպություն՝ Fitch Ratings-ը, Ռուսաստանի վարկանիշը BBB-ից նվազեցրել էր մինչև B, իսկ մարտի 9-ին այն նվազեցրեց մինչև C [8]:

Ռուսական տնտեսության համար հաջորդ մեծ հարվածը հանդիսացավ էներգակիրների արտահանման արգելքի սահմանումը Եվրոպական երկրների, Կանադայի, այնուհետ նաև ԱՄՆ-ի կողմից, ինչը հանգեցրեց նավթի համաշխարհային գների կտրուկ աճի, որոնք 2021 թվականից վերջից արդեն իսկ աճի երկարաժամկետ միտումներ էին դրսևորում: Պետք է նշել, որ Ռուսաստանն էներգակիրների շուկայում առաջատար արտադրողներից է: Վերջինիս բաժին է ընկնում նավթի համաշխարհային արդյունահանման 10%-ը, ինչպես նաև՝ դեպի Եվրոպա մատակարարվող գազի 40%-ը: Այն նաև հացահատիկի և պարարտանյութերի աշխարհի խոշորագույն արտահանողն է, պալադիումի և նիկելի առաջատար արտադրողներից մեկը, ածուխի և պողպատի երրորդ արտահանողը, իսկ փայտանյութի դեպքում՝ հինգերորդը:

2022 թվականի մարտի 7-ին Brent տեսակի նավթի գինը հասավ նոր ռեկորդային մակարդակի՝ կազմելով 130,89 դոլար, ինչը գերազանցեց 2012 թվականին արձանագրված առավելագույն արժեքը՝ այն է 128 դոլար: Նշենք, որ նավթի համաշխարհային գնի ռեկորդային մակարդակ գրանցվել է 2008 թվականի հուլիսին, երբ նավթի մեկ բարելի արժեքը գերազանցում էր 143 դոլարը [9]:

Թվում է՝ էներգակիրների նման բարձր գնանշումների պայմաններում ռուսական արժույթը մեծ աջակցություն պետք է ստանա, սակայն նավթի համաշխարհային շուկայում արևմտյան պետությունների պատժամիջոցների պատճառով գնորդները հիմնականում հրաժարվում են ռուսական նավթ գնելուց՝ փորձելով դրան այլ փոխարինող գտնել: Առաջնահերթությունների նման փոփոխությունը հստակ երևում է նաև Urals-ի և Brent-ի միջև առկա գնային սփրեդի կտրուկ ընդլայնմամբ: Պատմականորեն այս բրենդների միջև սփրեդը շուկայում կազմել է միջինում 2-3 դոլար՝ հոգուտ ավելի թեթև համարվող Brent-ի: Ներկա պահին այդ տարբերությունն արդեն

կազմում է ավելի քան 18 դուլար և աստիճանաբար կարող է ավելանալ, քանի որ շուկայի մասնակիցները ռուսական նավթի նոր բեռնափոխադրումներ չեն կատարում՝ փաստացի սաբոտաժի ենթարկելով այն: Փաստացի, ինչպես տեսնում ենք, Ռուսաստանը դեռևս չի կարողանում լիարժեք օգուտ քաղել գների նման աննախադեպ բարձրացումից՝ կորցնելով ինչպես իրացման ծավալները, այնպես էլ բախվելով վաճառքի գների փաստացի անկման հետ:

Ռուսաստանի նկատմամբ պատժամիջոցների արդյունքում տուժում են գրեթե աշխարհի բոլոր երկրները և իրավիճակը էներգետիկ շուկաներում բավական լուրջ է: Ներկայումս համաշխարհային էներգետիկ անվտանգությունը մեծ ռիսկի տակ է, որն իր հերթին վտանգի տակ է դնում համաշխարհային տնտեսության վերականգնումը համավարակից հետո:

Անդրադառնալով ռուսական մեկ այլ էներգակիրի՝ գազի հետ կապված խնդրին, պետք է նշել, որ վերջինիս գինը Եվրոպական շուկայում արդեն մի քանի շաբաթ է՝ սրընթաց աճում է՝ հասնելով ընդհուպ 4000 դուլարի շեմին՝ դրսևորելով խիստ տատանողականություն, ընդ որում՝ գների նման մակարդակն առնվազն չորս անգամ գերազանցում է դեռևս այս տարվա փետրվարի սկզբին գազի բորսայական ֆյուչերսների գինը, որը կազմում էր մոտ 950 դուլար: Այնուամենայնիվ, վերջին մի քանի օրերի ընթացքում պատմական առավելագույն գնանշում արձանագրելուց հետո գազի ֆյուչերսային գները շուրջ եռակի նվազեցին՝ վաճառվելով 1300 դուլարի սահմաններում:

Գազի գնի նման աննախադեպ կտրուկ բարձրացումը և խիստ տատանողականությունը պայմանավորված են մի շարք գործոններով՝

- Ռուսաստանի կողմից գազի մատակարարումների հնարավոր դադարեցմամբ.
- Եվրոպական երկրների կողմից Ռուսաստանի հանդեպ պատժամիջոցների շրջանակում գազի մատակարարումներից հնարավոր հրաժարմամբ.
- ռուսական գազի տարանցիկ երկիր Ուկրաինայում գազամուղի հնարավոր վնասմամբ.
- Եվրոպական գազապատարաններում գազի ծավալների կտրուկ նվազմամբ:

Ներկայումս եվրոպական երկրների կախվածությունը ռուսական գազի մատակարարումներից բավական մեծ է, և հիմնականում սա է պատճառը, որ արևմտյան պատժամիջոցների ցուցակը դեռևս սահմանափակվում է նավթամթերքներով և առայժմ շրջանցում է գազի մատակարարումներից հրաժարումը, ինչը նաև ոչ մեկ անգամ իրենց հրապարակային ելույթներում հավաստում են եվրոպական մի շարք երկրների բարձրաստիճան ղեկավարները: Թերևս, հենց այս հանգամանքն էլ որոշակի լավատեսություն ներշնչեց շուկայի մասնակիցներին գազի մատակարարումների չընդհատման պահով, համենայն դեպս առաջիկա մի քանի ամիսների ընթացքում, սակայն այս ոլորտում անորոշությունների աստիճանը դեռևս բավական բարձր է, ուստի գազի գնանշումները դեռևս մեծ տատանողականություն կունենան առաջիկայում: Պատժամիջոցների նոր փաթեթի քննարկումը կամ եղանակային պայմանների վատթարացումը, որոնք կհանգեցնեն պահեստարաններում գազի ծավալների էլ ավելի նվազման, կարող են անմիջականորեն ազդել գազի շուկայական գնանշումների վրա:

Եվրոպական շուկայում գազի գների նման բարձրացումը, ինչն աննախադեպ էր 1996 թվականից ի վեր, սկսվել էր դեռևս անցած տարվա գարնան ամիսներից, երբ գազի սփոթ (անմիջական վաճառքի) գները կազմում էին 250-300 դուլար հազար խորանարդ մետրի դիմաց: Ամռան ամիսներին այն արդեն հասավ 600 դուլարի, իսկ աշնանը՝ կազմեց արդեն 1000 դուլար: Գների նման բարձրացումը պայմանավորված էր նախևառաջ՝ մատակարարների սահմանափակ առաջարկով, հեղուկ գազի նկատմամբ ասիական երկրների կողմից առաջարկի կտրուկ աճով, ինչպես նաև՝ եվրոպական գազի պահեստարաններում ցուրտ եղանակով պայմանավորված՝ գազի ծավալների աննախադեպ ցածր մակարդակով:

Փաստացի, պետք է նշել, որ եվրոպական շուկայում գազի գնանշումների նման կտրուկ աճը որևէ կերպ պայմանավորված չէ ռուսական գազի մատակարարման գների փոփոխության հետ, այլ պայմանավորված է բորսայական սպեկուլյատիվ միտումներով: Ռուսաստանն առհասարակ իր պայմանագրային մատակարարման գները չի փոփոխել որևէ երկրի համար և բորսայական գների նման գնի բարձրացումից օգուտներ չի ստանում: Այն դեպքում, երբ մատակարարման գները հստակ ամրագրված են պայմանագրերով, ապա դրանք մնացել են նույնը, իսկ այն պայմանագրերում, որտեղ մատակարարման գները կապակցված են բորսայական գնանշումներին, ապա այդ երկրները բավական թանկ են հիմա վճարում դրա դիմաց:

Ռուսաստանն, այնուամենայնիվ, չի հրաժարվում գազի մատակարարումներից, այդ թվում՝ Ուկրաինայի համար, որը տարանցման երկիր է հանդիսանում, և դեպի Եվրոպա գազի մատակարարման ժամանակ ինքնաբերաբար մատակարարվում է նաև այս երկրին: Մատակարարումից չհրաժարվելը Ռուսաստանի համար նաև կարևոր է ներկայիս իրավիճակում այնքանով, որ ապահովում է արտարժույթային զգալի մուտքեր, ինչի կարիքը Ռուսաստանը ներկա պահին շատ ունի: Փաստացի, գազի մատակարարման հարցում թե՛ Եվրոպայի և թե՛ Ռուսաստանի տեսակետները ներկա պահին համընկնում են, և այս առումով հնարավոր է մոտ ժամանակ ականատես լինենք գազի գների հետագա անկման՝ նաև հաշվի առնելով եղանակի տաքացումն ու պահանջարկի աստիճանաբար անկումը:

Արդյունքներ

Անդրադառնալով Հայաստանի տնտեսության վրա ռուս-ուկրաինական պատերազմի ազդեցություններին, դրանք կարող ենք տարանջատել՝ ըստ հետևյալ ուղղությունների՝

1. արտահանման նվազում,
2. տրասֆերտների կրճատում,
3. գնաճի տեմպերի արագացում,
4. տնտեսական աճի դանդաղում:

Ինչպես հայտնի է, Ռուսաստանը Հայաստանի գլխավոր առևտրային գործընկերն է և առաջին տեղում է ինչպես ներմուծման, այնպես էլ՝ արտահանման գծով: 2021 թվականին Հայաստանի արտահանման կազմում Ռուսաստանի տեսակարար կշիռը կազմել է 28%, իսկ ներմուծման կազմում՝ 37.2% **[10]**:

Ըստ ՀՀ ազգային Վիճակագրական կոմիտեի տվյալների՝ Հայաստանի և Ռուսաստանի փոխադարձ առևտրաշրջանառությունը 2021 թվականին կազմել է 2 175.6 մլն դրամ, որը կազմում է ընդհանուր առևտրաշրջանառության 30.6%-ը: Ընդ որում՝ 2021 թվականին Հայաստանը դեպի Ռուսաստան է արտահանել 847.3 մլն դոլարի ապրանքներ, ինչը նախորդ տարվա ցուցանիշի համեմատ աճել էր 24.5%-ով: Նույն ժամանակահատվածում Հայաստանը Ռուսաստանից ներմուծել է 1 մլրդ 782 մլն դոլարի ապրանք, որը նախորդ տարվա համեմատ աճել է 19.2%-ով **[10]**:

Հաշվի առնելով այն կարևորությունը, որ ռուսական շուկան ներկայացնում է մեր տնտեսության համար, ռուբլու փոխարժեքի կտրուկ անկումը բացասական կանդրադառնա արտահանող ընկերությունների վրա: Փաստացի, ռուսական շուկայում նոր փոխարժեքով սահմանվող գների դեպքում հնարավոր է՝ հայկական ապրանքները դառնան ոչ մրցունակ: Ավելին, նաև նման դեպքում արժեզրկվում են արտահանող ընկերությունների ստացված հասույթները: Բացի այդ՝ ռուբլու փոխարժեքի նման խիստ տատանողականության պայմաններում դժվար է նույնիսկ կարճաժամկետ հատվածում գնահատել առկա ռիսկերը, ինչը ստիպում է արտահանող ընկերություններին առաջիկայում դեռևս ձեռնպահ մնալ արտահանում իրականացնելուց:

Ռուսաստանի դեմ տնտեսական պատժամիջոցներն ու ռուսական ռուբլու դիրքերի թուլացումը կարող են լուրջ բացասական հետևանքներ թողնել Ռուսաստանից Հայաստան դրամական փոխանցումների վրա, որը մեր տնտեսության վրա ևս բացասաբար է անդրադառնալու: Ըստ Կենտրոնական բանկի հրապարակած տվյալների՝ 2021 թվականին առևտրային բանկերի միջոցով ֆիզիկական անձինք արտերկրից Հայաստան են փոխանցել մոտ 2108.9 մլն դոլար, որից 865.6 մլն դոլարը կամ ընդհանուր փոխանցումների 41%-ը ստացվել է Ռուսաստանից: Ընդ որում՝ այս ցուցանիշը 2020 թվականի ցուցանիշը գերազանցում է շուրջ 5%-ով **[11]**: Նույն տարում Հայաստանից արտերկիր է փոխանցվել 1.226 մլն դոլարին համարժեք գումար, որից դեպի ՌԴ՝ 401.8 մլն դոլար կամ դեպի արտերկիր ընդհանուր փոխանցումների 32.8%-ը: Համաշխարհային բանկի գնահատմամբ 2022 թվականին Ռուսաստանից դեպի Հայաստան դրամական փոխանցումները դոլարային արտահայտությամբ կրճատվելու են 19%-ով **[12]**, ինչը կկազմի շուրջ 164.5 մլն դոլար կամ Հայաստանի ՀՆԱ-ի մոտ 1.2%-ը: Ռուսաստանից տրանսֆերտների կրճատումը տեղի կունենա ինչպես ծավալային՝ կապված արտագնա մեկնող քաղաքացիների թվաքանակի կրճատման հետ, այնպես էլ արժեքային առումով՝ պայմանավորված ռուբլու կտրուկ արժեզրկման հետ:

Ինչպես էներգակիրների գների աճը, այնպես էլ ռուսական ռուբլու փոխարժեքի անկումը անխուսափելիորեն հանգեցնելու են նաև ներմուծվող ապրանքների գների աճի, ինչն էլ իր հերթին կհանգեցնի սպառողական շուկայում գնաճի նոր ալիքի, իսկ վերջին ամիսներին Հայաստանում արդեն իսկ նկատվում էր գնաճի տեմպերի նվազում: 2021 թվականի դեկտեմբեր ամսին սպառողական շուկայում տասներկուամսյա գնաճը կազմել է 7.7% , 2022 հունվար ամսին՝ 7.1% իսկ փետրվար ամսին այն նվազել էր մինչև 6.5% [13]: Գնաճի տեմպերի նվազմանը նպաստել էին ինչպես ԿԲ կողմից վերաֆինանսավորման տոկոսադրույքի բարձրացումները, այնպես էլ համաշխարհային ապրանքային շուկաներում որոշակի գնանկումները: Ռուս-ուկրաինական պատերազմը և Ռուսաստանի հանդեպ կիրառված պատամիջոցները արդեն իսկ հանգեցրել են էներգակիրների և պարենային մի շարք այնպիսի ապրանքների գնաճի, որոնց հիմնական արտահանողները հանդիսացել են Ռուսաստանը և Ուկրաինան:

Արտահանման ծավալների նվազումը, տրանսֆերտների կրճատումը և գնաճի տեմպերի արագացումը անխուսափելիորեն հանգեցնելու են 2022 թվականի Հայաստանում տնտեսական ակտիվության կրճատման: Fitch վարկանիշային գործակալությունը Հայաստանի տնտեսական աճը ընթացիկ տարում կանխատեսում է 1.3%-ի չափով՝ նախկինում կանխատեսվող 5.3%-ի փոխարեն: Տնտեսական աճի տեմպերը կդանդաղեն հատկապես արտահանող ճյուղերում՝ դեպի հիմնական արտահանման երկիր արտահանումների ծավալի կրճատման պատճառով:

Եզրակացություն

Ամփոփելով՝ պետք է նշել, որ ռուս-ուկրաինական հակամարտությունը համավարակից հետո նոր լուրջ մարտահրավերներ առաջացրեց ողջ համաշխարհային տնտեսության համար, և դրա ազդեցությունները առաջիկայում կդրսևորվեն էներգակիրների և պարենային ապրանքների նոր գնաճի, արտաքին առևտրի սահմանափակումների և տնտեսական ակտիվության նվազման ձևով աշխարհի բոլոր երկրներում: Հայաստանի տնտեսության վրա ռուս-ուկրաինական պատերազմի ազդեցությունները կարտահայտվեն մի շարք ուղղություններով, այդ թվում՝ արտահանման նվազում, տրանսֆերտների կրճատում, գնաճի տեմպերի արագացում, տնտեսական աճի դանդաղում: Ինչպես հայտնի է, Ռուսաստանը Հայաստանի գլխավոր առևտրային գործընկերն է և առաջին տեղում է արտահանման, ներմուծման, ինչպես նաև՝ ստացվող դրամական հոսքերի գծով: Այս ամենը կհանգեցնի նրան, որ Հայաստանում տնտեսական աճի տեմպերը կդանդաղեն, և հնարավոր է՝ ներքին շուկայում նոր գնաճային ճնշումներ լինեն, որոնց հաղթահարման քայլերը իրենց հերթին էլ ավելի կզսպեն տնտեսական ակտիվությունը:

Գրականության ցանկ

1. Կ. Ս. Սարգսյան, COVID-19. տնտեսական մարտահրավերներ և հաղթահարման հիմնախնդիրներ / Կ. Ս. Սարգսյան.–Եր.: «Տիր» հրատ., 2021.-124 էջ, / էջ 48/:
2. Банк России, прессрелиз:https://www.cbr.ru/press/pr/?file=28022022_094500Key.htm
3. Банк России, пресс релиз:https://www.cbr.ru/press/pr/?file=28022022_095000prod.htm
4. An official website of the European Union: Council Decision (CFSP) 2022/346 of 1 March 2022 amending Decision 2014/512/CFSP concerning restrictive measures in view of Russia's actions destabilising the situation in Ukraine https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=uriserv%3AOJ.L_.2022.063.01.0005.01.ENG&toc=OJ%3AL%3A2022%3A063%3ATOChhttps://www.swift.com/about-us/discover-swift?AKredir=true
5. Moody's Investory Service: Moody's downgrades Russia's ratings to B3; ratings remain on review for further downgrade: https://www.moodys.com/research/Moodys-downgrades-Russias-ratings-to-B3-ratings-remain-on-review--PR_463447?cid=P10KMJ5G3415989
6. Bloomberg news: Moody's Cuts Russia's Rating Deeper Into Junk Territory to CA:<https://www.bloomberg.com/news/articles/2022-03-06/moody-s-cuts-russia-s-rating-deeper-into-junk-territory-to-ca>
7. Fitch Rating: Russia Rating Action Report <https://www.fitchratings.com/research-/sovereigns/fitch-downgrades-russia-to-c-08-03-2022>
8. www.oilprice.com, the No.1 source for oil and energy news: <https://oilprice.com>
9. ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայք, հղումը՝ https://armstat.am/file/article/sv_12_21a_411.pdf
10. ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայք, հղումը՝
11. The World Bank official website: Russia-Ukraine Conflict: Implications for Remittance flows to Ukraine and Central AsiaRussia-Ukraine Conflict: Implications for Remittance flows to Ukraine and Central Asia
12. ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայք
13. Fitch Rating: Rating action commentary: Fitch Affirms Armenia at 'B+'; Outlook Stable: <https://www.fitchratings.com/research/sovereigns/fitch-affirms-armenia-at-b-outlook-stable-18-03-2022>.

ՋԵՐՄԱԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՄԻԱՖՈՏՈՆ ԴԵՏԵԿՏՈՐ

ԱՐՄԵՆ ԿՈՒՂԱՆՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ
Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու
առաջատար գիտաշխատող
akuzanyan@yahoo.com

Համառոտագիր

Մեկ ֆոտոն գրանցել ունակ դետեկտորները կիրառվում են ժամանակակից գիտության և տեխնիկայի բազմաթիվ բնագավառներում՝ սպեկտրոսկոպիա, կենսաֆիզիկա, բարձր էներգիաների ֆիզիկա, աստղագիտություն, ֆոտոնիկա, քվանտային տեխնոլոգիաներ, հեռահաղորդման համակարգեր, տիեզերական կապ, բժշկական սարքաշինություն և այլն: Գոյություն ունեն տարբեր տիպի տարբեր բնութագրերով, առավելություններով և թերություններով օժտված միաֆոտոն դետեկտորներ: Համաձայն տեսական հաշվարկների և համակարգչային մոդելավորման արդյունքների՝ ջերմաէլեկտրական դետեկտորները (ՋՄՖԴ) կարող են գրանցել մեկ ֆոտոն, որոշել դրա էներգիան և ունեն մի շարք առավելություններ: Դրանցից կարևորներն են զգայուն տարրի պարզ կառուցվածքը և ոչ խիստ պահանջները աշխատանքային պայմաններին: Ունենալով նաև բարձր բնութագրեր, ջերմաէլեկտրական միաֆոտոն դետեկտորները կարող են հանդիսանալ այլընտրանք արդեն առկա դետեկտորներին:

Համակարգչային մոդելավորումն իրականացվել է ջերմահաղորդման մասնակի դիֆերենցիալ հավասարումների թվային լուծումով եռաչափ մատրիցային եղանակի կիրառմամբ: Բարակ թաղանթների ստացման համար օգտագործվել են ջերմային և էլեկտրոնաճառագայթային փոշենստեցման եղանակները: Քիմիական բաղադրության, բյուրեղային կատարելության և միկրոկառուցվածքի ուսումնասիրությունները իրականացվել են տեսաձրող էլեկտրոնային մանրադիտության և ռենտգենյան միկրովերլուծության եղանակներով: Բարակ թաղանթների ջերմաէլեկտրական ՕԳԳ-ի որոշման նպատակով ուսումնասիրվել են տեսակարար դիմադրության, Ջեքեկի գործակցի և ջերմահաղորդականության ջերմաստիճանային կախվածությունները: Տեսակարար դիմադրության ուսումնասիրման համար կիրառվել է ավանդական չորս-հպակային եղանակը: Ջեքեկի գործակիցը չափվել է երկու համարժեք տաքացուցիչների հաստատուն ջերմաստիճանների եղանակով: Ջերմահաղորդականության գործակիցը չափվել է նմուշում առանցքային ջերմային հոսքի եղանակներով: Ուսումնասիրվել են թաղանթների անդրադարձման և կլանման գործակիցները ալիքի տարբեր երկարությունների համար:

Ստեղծվել է ամուր հիմք՝ ՋՄՖԴ-ի բարձր բնութագրերով օժտված զգայուն տարրի նախագծման և պատրաստման համար: Ցույց է տրվել, որ ՋՄՖԴ-ն ունակ է գրանցել ուլտրամանուշակագույնից մինչև մոտ ինֆրակարմիր տիրույթի միակի ֆոտոններ, ապահովել հաշվարկի տերահերցային արագություն, դետեկտման առնվազն 90% արդյունավետություն և 1% էներգետիկ լուծաչափ: Այդպիսի բնութագրերով միաֆոտոն դետեկտորները պահանջված են քվանտային էլեկտրոնիկայի, քվանտային ինֆորմատիկայի, հեռահաղորդակցության, քվանտային չափագիտության, անվտանգության ապահովման և այլ ոլորտներում:

Իրականացվել է ՋՄՖԴ-ի միաշերտ, եռաշերտ և քառաշերտ զգայուն տարրում միակի ֆոտոնի կլանման արդյունքում առաջացող ջերմային պրոցեսների համակարգչային մոդելավորում: Դիտարկվել են տարբեր երկրաչափության W, LaB₆ կլանիչով և ջերմատարով, CeB₆, (La,Ce)B₆, FeSb₂ տվիչով, LaB₆ և SiO₂ հակաանդրադարձնող շերտով զգայուն տարրեր և որոշակի էներգիայով ֆոտոնների գրանցման համար ընտրվել է զգայուն տարրի օպտիմալ կառուցվածք: Ցույց է տրվել, որ քառաշերտ զգայուն տարրի տվիչի վրա առաջացող լարումը գծային է՝ կախված կլանված ֆոտոնի էներգիայից, և կարող է հասնել միլիվոլտերի: Բացահայտվել է, որ ՋՄՖԴ-ն ունակ է հաշվարկելու միաժամանակ կլանված ֆոտոնների

թիվը, ինչպես նաև գրանցելու ֆոտոններ, որոնց ժամանակային հապաղումը փոքր է ազդանշանի մարման ժամանակից:

Տարբեր տակդիրների վրա, տարբեր պայմաններում փոշենստեցվել են W, LaB₆, CeB₆ և SiO₂ բարակ թաղանթներ և հետազոտվել են դրանց հատկությունները: Սինթեզվել են CeB₆ բարակ թաղանթներ, որոնց ջերմաէլեկտրական հատկությունները չեն զիջում ծավալային նմուշների հատկություններին: Որպես ՋՄՖԴ-ի զգայուն տարրի նախատիպ ստեղծվել և ուսումնասիրվել է SiO₂/W/CeB₆/W/Al₂O₃ հետերոկառուցվածքը:

Բանալի բառեր և բառակապակցություններ. միաֆոտոն դետեկտոր, ջերմաէլեկտրիկ, գերհաղորդիչ, կլանիչ, ջերմատար, տվիչ, զգայուն տարր, էֆեկտիվություն, թաղանթ:

ТЕРМОЭЛЕКТРИЧЕСКИЙ ОДНОФОТОННЫЙ ДЕТЕКТОР

АРМЕН КУЗАНЯН

Национальная академия наук Республики Армения

Институт физических исследований

кандидат физико-математических наук

ведущий научный сотрудник

akuzanyan@yahoo.com

Аннотация

Детекторы, способные регистрировать одиночный фотон, используются во многих областях современной науки и техники: спектроскопии, биофизике, физике высоких энергий, астрономии, фотонике, квантовых технологиях, телекоммуникационных системах, зондировании высоких слоев атмосферы, космической связи, медицинском приборостроении и т.д. Существуют разные типы однофотонных детекторов с различными характеристиками, преимуществами и недостатками. Согласно теоретическим расчетам и результатам компьютерного моделирования, термоэлектрические однофотонные детекторы (ТОФД) способны регистрировать одиночный фотон и определять его энергию. Они имеют ряд преимуществ, основными из которых являются простая конструкция чувствительного элемента и нежесткие требования к рабочим условиям. Обладая также высокими характеристиками, термоэлектрические однофотонные детекторы могут быть альтернативой существующим детекторам.

Компьютерное моделирование процессов, происходящих после поглощения фотонов в чувствительном элементе ТОФД, осуществлялось на основе уравнения распространения тепла из ограниченного объема с использованием трехмерного матричного метода. Методы термическое испарение и электронно-лучевое осаждение были использованы для получения тонких пленок. Исследования химического состава, кристаллического совершенства и микроструктуры образцов проводились методами растровой электронной микроскопии и рентгеноспектрального микроанализа. Для определения термоэлектрической эффективности тонких пленок исследованы температурные зависимости удельного сопротивления, коэффициента Зеебека и теплопроводности. Для измерения удельного сопротивления применялся стандартный четырехзондовый метод. Коэффициент Зеебека измерялся стационарным методом двух эквивалентных нагревателей. Теплопроводность определялась методами осевого потока тепла через образец.

Нами создана основа для проектирования и изготовления чувствительного элемента термоэлектрического однофотонного детектора (TSPD) с высокими характеристиками. Было показано, что TSPD способен регистрировать одиночные фотоны в диапазоне от ИК до ближнего УФ, обеспечивать терагерцовую скорость счета, эффективность обнаружения не менее 90% и энергетическое разрешение не хуже 1%. Однофотонные детекторы с такими характеристиками востребованы в квантовой электронике, астрофизике, физике высоких энергий, квантовой информатике, телекоммуникации, квантовой метрологии, безопасности и других областях. Выполнено компьютерное моделирование тепловых процессов, возникающих в результате поглощения одиночного фотона в одно-, трех- и четырехслойном чувствительном элементе TSPD. Были исследованы чувствительные элементы различной геометрии с поглотителем и теплообменником из LaB_6 и W, сенсором CeB_6 , $(\text{La}, \text{Ce})\text{B}_6$ и FeSb_2 , антиотражающим слоем LaB_6 и SiO_2 и была выбрана оптимальная конструкция чувствительного элемента для обнаружения фотонов с определенной энергией. Показано, что напряжение на датчике четырехслойного чувствительного элемента линейно зависит от энергии поглощенного фотона и может достигать нескольких милливольтов. Обнаружено, что TSPD может считать количество одновременно поглощаемых фотонов, а также обнаруживать фотоны, следующие с меньшей временной задержкой, чем время затухания сигнала.

При различных условиях на подложки из различных материалов были напылены тонкие пленки W, LaB_6 , CeB_6 и SiO_2 и исследованы их свойства. Синтезированы тонкие пленки CeB_6 с термоэлектрическими характеристиками, не уступающими характеристикам объемных образцов. В качестве прототипа чувствительного элемента TSPD была создана и исследована гетероструктура $\text{SiO}_2/\text{W}/\text{CeB}_6/\text{W}/\text{Al}_2\text{O}_3$.

Ключевые слова и словосочетания: однофотонный детектор, термоэлектрик, сверхпроводник, поглотитель, теплоотвод, датчик, чувствительный элемент, эффективность, пленка.

THERMOELECTRIC SINGLE-PHOTON DETECTOR

ARMEN KUZANYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia

Institute for Physical Research

Candidate of Physical and Mathematical Sciences

Leading Researcher

akuzanyan@yahoo.com

Abstract

Detectors capable to detect a single photon are used in many areas of modern science and technology, namely in spectroscopy, biophysics, high energy physics, astronomy, photonics, quantum technologies, telecommunication systems, space communications, medical devices, etc. There are different types of single-photon detectors with different characteristics, advantages and disadvantages. According to the theoretical calculations and computer simulation results the thermoelectric detector (TSPD) can register a single photon, determine its energy, and has some advantages. Among the most important advantages are the simple design of the detection pixel and not strict requirements to the working conditions. Having high characteristics, thermoelectric single-photon detectors can be an alternative to the existing detectors.

Computer modelling of the processes taking place after the absorption of photons in the detection pixel of TSPD was carried out based on the equation of heat propagation from a limited volume using the three-dimensional matrix method. Thermal evaporation and electron-beam depositions have been used to produce thin films. The investigation of chemical composition, perfection and microstructure of crystals was carried out by scanning electron microscopy and X-ray microanalysis. In order to determine the thermoelectric figure of merit of thin films, the temperature dependencies of the resistivity, Seebeck coefficient and heat conductivity were studied. A standard four-probe method was used for resistivity measurements. The Seebeck coefficient was measured by stationary method with two equivalent heaters. Heat conductivity was determined by the methods of axial heat flow through the sample.

We have created the basis for design and preparation of the detection pixel of TSPD with high characteristics. It has been shown that TSPD is capable to detect single photons in the range from IR to near UV, provide terahertz count rate, at least 90% detection efficiency and 1% energy resolution. Single-photon detectors with such characteristics are in demand in quantum electronics, astrophysics, high energy physics, quantum informatics, telecommunications, quantum metrology, security, and other fields. Computer modeling of thermal processes resulting from the absorption of a single photon in the single-, three- and four-layer detection pixel of the TSPD was performed. Detection pixels of different geometries with W, LaB₆ absorber and heat sink, CeB₆, (La,Ce)B₆ and FeSb₂ sensor, LaB₆ and SiO₂ antireflection layer were investigated and optimal design of detection pixel was selected for certain energy photons' detection. It has been shown that the voltage across the sensor of a four-layer detection pixel is linearly dependent from the energy of the absorbed photon and can reach millivolts. It has been found that the TSPD is able to calculate the number of simultaneously absorbed photons, as well as to detect photons with the delay time less than the decay time of signal.

Thin films of W, LaB₆, CeB₆ and SiO₂ were deposited under various conditions onto substrates of various materials and their properties were studied. Thin films of CeB₆ are synthesized with thermoelectric characteristics not inferior to those of bulk samples. The SiO₂/W/CeB₆/W/Al₂O₃ heterostructure was created and studied as a prototype of the TSPD detection pixel.

Keywords and phrases: single-photon detector, thermoelectric, superconductor, absorber, heat sink, sensor, detection pixel, efficiency, thin film.

Ներածություն

Խնդրի արդի վիճակը


Միակի ֆոտոնների աղբյուրներն ու դետեկտորները վերջին տարիներին գրավել են բազմաթիվ հետազոտողների ուշադրությունը գիտության և տեխնիկայի տարբեր բնագավառներում լայն կիրառության շնորհիվ: Ֆոտոնների էներգիան որոշող և բարձր հաշվարկի արագություն ապահովող միաֆոտոն դետեկտորները (ՄՖԴ) պահանջված են քվանտային էլեկտրոնիկայի, աստղաֆիզիկայի, բարձր էներգիայի ֆիզիկայի, քվանտային ինֆորմատիկայի, հեռահաղորդակցության, քվանտային չափագիտության, բժշկության, անվտանգության ապահովման և այլ ոլորտներում [1]: Գոյություն ունեն տարբեր տիպի՝ տարբեր բնութագրերով, առավելություններով և թերություններով օժտված դետեկտորներ: ՄՖԴ-ն զգայուն է միայն էլեկտրամագնիսական սպեկտրի որոշակի տիրույթում՝ պայմանավորված զգայուն տարրի կառուցվածքում օգտագործված նյութերի հատկություններով: Սիլիցիումային տարափային ֆոտոդիոդների զգայունությունը սահմանափակվում է սիլիցիումի արգելված շերտի լայնությամբ և կտրուկ նվազում է 1100 նմ-ից ավելի ավիքի երկարության դեպքում: Գերհաղորդիչ նանոլարային միաֆոտոն դետեկտորները (ԳՆՄՖԴ) այժմ համարվում են ամենահեռանկարայինը [2]: Իրենց հատկություններով ԳՆՄՖԴ-ները գերազանցում են նախկինում հայտնի բոլոր դետեկտորներին: Նրանք ունեն մթնային հաշվարկի ցածր արագություն, գիգահերցային արագագործություն և կարող են գրանցել ֆոտոններ էլեկտրամագնիսական սպեկտրի լայն տիրույթում [3]: Սակայն տեխնոլոգիական զարգացման խնդիրները պահանջում են ՄՖԴ-ի նոր սերունդի մշակում, ինչի շրջանակներում հնարավոր կլինի իրականացնել կլանված ֆոտոնների հաշվառում, պատկերում և տվիչների բազմատարր տեխնոլոգիա: Արդիական խնդիր է հանդիսանում նաև բարձր բնութագրերով, պարզ կառուցվածքով, մատչելի, աշխատանքային ոչ խիստ պայմաններով դետեկտորի ստեղծումը: Այդ պահանջները կարող է բավարարել ջերմաէլեկտրական միաֆոտոն դետեկտորը (ՋՄՖԴ):

ՋՄՖԴ-ի ֆիզիկական գաղափարը առաջարկվել է հայ-ամերիկյան համատեղ գիտական խմբի կողմից 2000 թ-ին [4]: Հետագա հետազոտությունները ցույց տվեցին, որ ՋՄՖԴ-ն կարող է մրցակցել գերհաղորդիչ դետեկտորների հետ [5]: ՋՄՖԴ-ի զգայուն տարրում ջերմության տարածման պրոցեսների համակարգչային մոդելավորումը ցույց տվեց, որ ՋՄՖԴ-ի զգայուն տարրի բազմաշերտ կառուցվածքն ունի որոշ առավելություններ միաշերտի նկատմամբ [6,7]: Այս աշխատանքներում լանթան-ցերիումի ($La_{1-x}Ce_xB_6$) և ցերիումի (CeB_6) հեքսաբորիդները, որոնք ունեն բարձր ջերմաէլեկտրական հատկություններ համապատասխանաբար 0.54 և 9.4 ջերմաստիճաններում, դիտարկվել են որպես ՋՄՖԴ-ի սենսորներ: Ակնհայտ է, որ ՄՖԴ-ի աշխատանքային ցածր ջերմաստիճանները անհրաժեշտ են ջերմային աղմուկը ճնշելու համար: Այս պահանջը հանգեցնում է ՋՄՖԴ-ում ցածր ջերմաստիճաններում բարձր ջերմաէլեկտրական հատկություններ ունեցող նյութերի օգտագործման անհրաժեշտությանը: $FeSb_2$ -ը ունի Ջեյքեյի շատ բարձր գործակից 9.4 ջերմաստիճանում, ուստի այս նյութից պատրաստված սենսորը ավելի մեծ ազդանշան և էներգետիկ լուծաչափ կապահովի $La_{1-x}Ce_xB_6$ և CeB_6 սենսորների համեմատ: Հետագա հետազոտությունները ցույց տվեցին, որ ծանր մետաղների փոխարեն գերհաղորդիչների օգտագործումը որպես կլանիչ ՋՄՖԴ-ում հաշվարկի արագության բարձրացման միջոց է հանդիսանում [8]: Մեկ սարքում այս երկու առավելությունների համադրումը հեռանկարային է:

ՋՄՖԴ-ի նկարագրությունը և մրցակցային առավելությունները

ՋՄՖԴ-ի միաշերտ զգայուն տարրը պարունակում է կլանիչ ու ջերմատար, որոնք փոշենստեցվում են դիէլեկտրիկ տակդիրի վրա և միացվում ջերմաէլեկտրական կամրջակով (Նկար 1): Երբ ֆոտոնը իր էներգիան հաղորդում է կլանիչին, վերջինիս ջերմաստիճանը բարձրանում է ջերմատարի համեմատությամբ, ինչը առաջացնում է էլեկտրական լարում ջերմաէլեկտրական կամրջակի վրա: Չափելով այս լարումը՝ կարելի է գրանցել կլանման փաստը և որոշել ֆոտոնի էներգիան: Այսպիսի զգայուն տարրի շահագործումը չի պահանջում էլեկտրաէներգիայի լրացուցիչ աղբյուր, հետևաբար նաև լրացուցիչ հպակներ, որոնք կիրառվում են գերհաղորդիչ տվիչներում:

Միաշերտ զգայուն տարրը, այնուամենայնիվ, ունի նրա կիրառությունները սահմանափակող թերություն: Ֆոտոնի էներգիան որոշվում է՝ հաշվի առնելով ազդանշանի ժամանակային կախվածությունը: Եթե մինչև ֆոնային արժեք ազդանշանի անկման ժամանակը ավելի մեծ է, քան մետաղ-դիէլեկտրիկ (կլանիչ-տակդիր) սահմանից ջերմության անցման ժամանակը, ապա ֆոտոնի կլանումից հետո առաջացած ջերմության մի մասը կանցնի դեպի տակդիր՝ անհնար դարձնելով ֆոտոնի էներգիայի ճշգրիտ որոշումը: Եռաշերտ զգայուն տարրը զերծ է նշված թերությունից:



Նկար 1. ՋՄՖԴ զգայուն տարրի կառուցվածքը. միաշերտ, եռաշերտ և քառաշերտ: 2զայուն տարրի շերտեր. 1 - հակաանդրադարձնող, 2 - կլանիչ, 3 - տվիչ, 4 - ջերմատար, 5 - տակդիր:

ՄՖԴ-ի դետեկտման արդյունավետությունը (η) կարող է արտահայտվել որպես երեք ներդրումների արդյունք՝ $\eta = \eta_o \times \eta_a \times \eta_i$, որտեղ η_o -ն ֆոտոնների և զգայուն տարրի միջև օպտիկական կապի արդյունավետությունն է, η_a -ն ֆոտոնների կլանման արդյունավետությունն է և η_i -ն ներքին դետեկտման արդյունավետությունն է, որը նկարագրում է ֆոտոնի կլանման արդյունքում զգայուն տարրում ազդանշանի առաջացման հավանականությունը: Բարձր արդյունավետության հասնելու համար բոլոր երեք պարամետրերը պետք է առավելագույնի հասցվեն:

Հեռահաղորդակցության համակարգերում կիրառվող ալիքի երկարության դեպքում 90%-ը գերազանցող դետեկտման արդյունավետության մասին զեկուցվել է երկու տեսակի դետեկտորների համար: Մեկը՝ հաֆնիումից պատրաստված գերհաղորդիչ վիճակի անցնող դետեկտորն է (գերհաղորդական անցման ջերմաստիճանը մոտ 200 մԿ) 95% արդյունավետությամբ: Մյուսը՝ 93% արդյունավետությամբ ամորֆ WSi-ից պատրաստված ԳՆՄՖԴ-ն է, սակայն Hf-ի և WSi-ի գերհաղորդական անցման ցածր ջերմաստիճանը գործնական կիրառման համար արգելք է: Առաջարկվել է ԳՆՄՖԴ, որը կազմված է բազմաբյուրեղային NbN-ից և 2.1 Կ-ում 1550 նմ ալիքի ֆոտոնների համար ունի 90.2% արդյունավետություն [9]: Ավելի բարձր աշխատանքային ջերմաստիճանով դետեկտման բարձր արդյունավետությամբ ՄՖԴ-ի ստեղծումը կարևոր խնդիր է: Մեր կողմից առաջարկված ՋՄՖԴ-ները կունենան 8 և 9 Կ աշխատանքային ջերմաստիճան $FeSb_2$ և CeB_6 տվիչների համար համապատասխանաբար: Դրանք ունակ կլինեն նաև որոշելու

միաժամանակ կլանված ֆոտոնների քանակը, կունենան տերահերցային հաշվարկի արագություն և ոչ պակաս, քան 1% էներգետիկ լուծաչափ **[10-15]**: Լրացուցիչ և շատ կարևոր առավելություն է այն, որ այլ դետեկտորների համեմատ, ՋՄՖԴ-ի զգայուն տարրն ունի բացառիկ պարզ կառուցվածք, ինչը հնարավորություն է ընձեռում ստեղծելու բազմատարր տվիչներ:

Ուսումնասիրության մեթոդներ

Համակարգչային մոդելավորումն իրականացվել է ջերմահաղորդման մասնակի դիֆերենցիալ հավասարումների թվային լուծումով եռաչափ մատրիցային եղանակի կիրառմամբ **[14]**: Բարակ թաղանթների ստացման համար օգտագործվել են ջերմային, լազերային և էլեկտրոնաճառագայթային փոշենստեցման եղանակները: Քիմիական բաղադրության, բյուրեղային կառուցվածքի և միկրոկառուցվածքի ուսումնասիրությունները իրականացվել են տեսածրող էլեկտրոնային մանրադիտության և ռենտգենյան միկրովերլուծության եղանակներով: Բարակ թաղանթների ջերմաէլեկտրական ՕԳԳ-ի որոշման նպատակով ուսումնասիրվել են տեսակարար դիմադրության, Ջեթբեկի գործակցի և ջերմահաղորդականության ջերմաստիճանային կախվածությունները: Տեսակարար դիմադրության ուսումնասիրման համար կիրառվել է ավանդական չորս-հպակային եղանակը: Ջեթբեկի գործակիցը չափվել է երկու համարժեք տաքացուցիչների հաստատուն ջերմաստիճանների եղանակով: Ջերմահաղորդականության գործակիցը չափվել է նմուշում առանցքային ջերմային հոսքի եղանակներով: Ուսումնասիրվել են թաղանթների անդրադարձման և կլանման գործակիցները ալիքի տարբեր երկարությունների համար:

Ստացված արդյունքներ

ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի նյութագիտության լաբորատորիայի աշխատակիցների ՋՄՖԴ-ի 2019–2020 թթ. հետազոտությունների արդյունքները տպագրվել են 11 գիտական ամսագրերում, ստացվել է մեկ արտոնագիր **[10-21]**:

Համակարգչային մոդելավորման արդյունքները

Տարբեր էներգիայով ֆոտոնների գրանցման համար ՋՄՖԴ-ի բարձր արդյունավետությունն ապահովվում է կլանիչի, տվիչի և ջերմատարի նյութերի և չափերի ընտրությամբ: LaB_6 , CeB_6 և $(La,Ce)B_6$ հեքսաբորիդները ունեն նույն բյուրեղային կառուցվածքը և անհրաժեշտ ֆիզիկական հատկությունները՝ ՋՄՖԴ-ի զգայուն տարրում կիրառվելու համար: Համակարգչային մոդելավորման եղանակով ուսումնասիրվել է ՋՄՖԴ-ի LaB_6 կլանիչով և ջերմատարով, CeB_6 և $(La,Ce)B_6$ տվիչով միաշերտ և եռաշերտ զգայուն տարրում ֆոտոնի կլանման հետևանքով առաջացող ջերմային պրոցեսները **[10, 11]**: CeB_6 տվիչի պարագայում դետեկտորի աշխատանքային ջերմաստիճանը 9 Կ է, իսկ $(La,Ce)B_6$ տվիչի պարագայում՝ 0.5 Կ: Մոդելավորումը իրականացվել է դիտարկելով 0.5–4.13 էՎ էներգիայով ֆոտոնների կլանումը: Ուսումնասիրվել են հաշվարկի արագության (R), տվիչի վրա առաջացող ջերմաստիճանների տարբերության (ΔT) և գեներացվող լարման (V) կախվածությունները կլանված ֆոտոնի էներգիայից (E), տվիչի (L) և կլանիչի (Z_1) հաստությունից: Աղյուսակում բերված են նաև ազդանշանի առավելագույն արժեքին հասնելու և մինչև ֆոնային արժեք նվազելու t_m և t_b ժամանակները:

Հետազոտությունները ցույց տվեցին, որ եռաշերտ կառուցվածքով զգայուն տարրի տվիչի վրա գեներացված լարման կախվածությունը կլանված ֆոտոնի էներգիայից գծային է, ինչը հնարավորություն է ընձեռում, չափելով լարումը, միարժեքորեն որոշելու կլանված ֆոտոնի էներգիան: Տվիչի հաստության մինչև 0.01 մկմ փոքրացման արդյունքում հաշվարկի արագությունը


աճում է մինչև տասնյակ գիգահերցերի, իսկ տվիչի վրա գեներացված լարումը մնում է միկրովոլտերի կարգի:

Այսպիսով՝ համակարգչային մոդելավորման արդյունքների հիման վրա կարող ենք եզրակացնել, որ $\text{LaB}_6/\text{CeB}_6/\text{LaB}_6$ և $\text{LaB}_6/(\text{La,Ce})\text{B}_6/\text{LaB}_6$ զգայուն տարրով դետեկտորները ունակ են գրանցելու ՈւՄ-ից միջև մոտ ԻԿ տիրույթի միակի ֆոտոններ, ապահովելու գիգահերցերի հասնող հաշվարկի արագություն, 1% էներգետիկ լուծաչափ և դետեկտման առնվազն 90% արդյունավետություն, եթե ապահովվի այդ տիրույթի ֆոտոնների և LaB_6 կլանիչի օպտիկական կապը:

Աղյուսակ. ԶՄՖԴ-ի $(\text{La,Ce})\text{B}_6$ տվիչով զգայուն տարրի բնութագրերը $T = 0.5$ Կ ջերմաստիճանում:


N°	L, մկմ	E, էՎ	$\Delta T_m, 10^{-4}$ Կ	z_m , պվ	V_m , մկՎ	z_b , պվ	R, ԳՀց
Եռաշերտ զգայուն տարր , $Z_1=0.5$ մկմ , $Z_2=1$ մկմ							
1	1	4.13	537.4	1.5	4.568	1950	0.51
2	1	0.8	104	1.5	0.884	201.9	4.95
3	1	0.5	65	1.5	0.553	136.5	7.3
4	4	0.8	104	1.5	0.884	304.5	3.28
5	2	0.8	104	1.5	0.884	283.8	3.5
6	0.6	0.8	100.3	1.5	0.853	165.3	6
7	0.4	0.8	95.1	1.5	0.808	125.7	8
8	0.2	0.8	81.2	1.5	0.69	58.5	17.1
9	0.1	0.8	59.7	1.5	0.508	19.5	51.3
Միաշերտ զգայուն տարր							
10	4	0.8	522	0.66	4.437	84.6	11.82
11	2	0.8	522	0.66	4.437	84.6	11.82
12	1	0.8	522	0.654	4.437	73.71	13.57
13	0.5	0.8	522	0.654	4.437	37.68	25.54
14	0.1	0.8	521.7	0.651	4.434	14.52	68.87

Հեռահաղորդակցության համակարգերում կիրառման համար ջերմաէլեկտրական միաֆոտոն դետեկտորի առավել մեծ դետեկտման արդյունավետություն ստանալու նպատակով առաջարկվել է դետեկտորի զգայուն տարրի քառաշերտ մոդելը (Նկար 1), որի վերևի շերտը օպտիկական կապ ապահովող շերտն է [12-15]: Հետազոտվել է 0.8 էՎ (1550 նմ) էներգիայով ֆոտոնների կլանումը: Տվյալ ֆոտոնների համար որպես օպտիկական կապ ապահովող նյութ ընտրվել է LaB_6 -ը: Համակարգչային մոդելավորման եղանակով ուսումնասիրվել են LaB_6 հակաանդրադարձող շերտով, W կլանիչով և ջերմատարով, CeB_6 և $(\text{La,Ce})\text{B}_6$ տվիչով քառաշերտ զգայուն տարրով ջերմաէլեկտրական միաֆոտոն դետեկտորում ֆոտոնի կլանումից հետո առաջացող ջերմային պրոցեսները:




Նկար 2. ԶՄՖԴ-ի քառաշերտ զգայուն տարրի t_b և R բնութագրերը [13]:

Հետազոտվել են հաշվարկի արագության և տվիչի վրա գեներացված լարման կախվածությունները կլանիչի և տվիչի հաստությունից: Նկար 2-ում պատկերված են $\text{LaB}_6/\text{W}/\text{CeB}_6/\text{W}$ ՋՄՖԴ-ի քառաշերտ զգայուն տարրի ազդանշանի մինչև ֆոնային արժեք նվազման և հաշվարկի արագության կախվածությունները CeB_6 տվիչի հաստությունից՝ LaB_6 հակաանդրադարձնող շերտի 0.1 մկմ և 0.5 մկմ հաստությունների դեպքում: Ուսումնասիրվել են նաև $\text{SiO}_2/\text{W}/\text{CeB}_6/\text{W}$ քառաշերտ զգայուն տարրում 0.8-4 էՎ էներգիայով ֆոտոնների կլանման արդյունքում առաջացող ջերմային պրոցեսները: Ցույց է տրվել, որ առաջացող ազդանշանի առավելագույն արժեքը զգալիորեն մեծ է ֆոնային մակարդակից, կախված չէ կլանիչում ֆոտոնի կլանման տիրույթից և դրա կախվածությունը ֆոտոնի էներգիայից գծային է: Զգայուն տարրի կառուցվածքը ապահովում է տերահերցերի հասնող հաշվարկի արագություն (Նկար 3): Ազդանշանի հապաղման ժամանակը ֆեմտոսեկունդային փոքր է:




Նկար 3. $V_m(1, 3)$ և $R(2, 4)$ բնութագրերի կախվածությունը ֆոտոնի էներգիայից. կլանիչի հաստությունը $Z_2=0.1$ մկմ (1, 2) և $Z_2=0.2$ մկմ (3, 4) [14]:

ՋՄՖԴ-ի ազդանշանի ժամանակային կախվածությունը հաշվարկվել է $\text{SiO}_2/\text{W}/\text{FeSb}_2/\text{W}$ զգայուն տարրի շերտերի տարբեր հաստությունների համար [16]: Նկար 4-ում բերված է տվիչի վրա առաջացող առավելագույն էլեկտրական լարման և հաշվարկի արագության կախվածությունը տվիչի և կլանիչի հաստությունից:




Նկար 4. FeSb_2 տվիչի վրա առաջացող առավելագույն էլեկտրական լարման (V_m , քառակուսիներ) և հաշվարկի արագության (R , եռանկյուններ) կախվածությունը տվիչի հաստությունից (Z_3): Կլանիչի հաստությունն է 0.2 մկմ (անընդհատ գիծ), 0.1 մկմ (կետագիծ) և 0.05 մկմ (կետ-կետագիծ) [16]:

Հիմնավորվել է, որ այդպիսի զգայուն տարրով ՋՄՖԴ-ն կարող է ապահովել մոտ ինֆրակարմիր տիրույթի ֆոտոնների գրանցում 95% արդյունավետությամբ և տերահերցերի հասնող հաշվարկի արագությամբ: Համակարգչային մոդելավորման եղանակով ցույց է տրվել նաև, որ ՋՄՖԴ-ն ունակ է որոշելու միաժամանակ կամ փոքր ժամանակային հապաղումով կլանված ֆոտոնների թիվը, որը շատ կարևոր է դետեկտորի քվանտային տեխնոլոգիաների բնագավառում կիրառության համար: Ուսումնասիրվել են $\text{SiO}_2/\text{W}/\text{CeB}_6/\text{W}$ և $\text{SiO}_2/\text{W}/\text{FeSb}_2/\text{W}$ քառաշերտ զգայուն տարրում 0.8 էՎ էներգիայով 1-4 ֆոտոնների միաժամանակյա կլանման արդյունքում առաջացող ջերմային պրոցեսները: Օրինակ՝ նկար 5-ում բերված է $\text{SiO}_2/\text{W}/\text{CeB}_6/\text{W}$ քառաշերտ զգայուն տարրում 0.8 էՎ էներգիայով երեք ֆոտոնների միաժամանակ, իրարից 0.5 մկմ հեռավորության վրա կլանման արդյունքում կլանիչ-տվիչ սահմանի ջերմաստիճանի տարածա-ժամանակային կախվածության գրաֆիկները:




Նկար 5. Կլանիչ-տվիչ սահմանի ջերմաստիճանի տարածա-ժամանակային կախվածությունը [17]:

Ազդանշանի մինչև ֆոնային արժեք նվազելու ժամանակի կախվածությունը կլանված ֆոտոնների թվից պատկերված է Նկար 6-ում: Երևում է, որ t_b ժամանակը գծային կախված է միաժամանակ կլանված ֆոտոնների թվից: Այսպիսով՝ իրականացված հետազոտությունների արդյունքում պարզ է դառնում, որ համադրելով ազդանշանի առավելագույն արժեքի և տևողության սվյալները՝ հնարավոր է միարժեքորեն որոշել կլանված ֆոտոնների թիվը:



Նկար 6. t_b -ի կախվածությունը միաժամանակ կլանված ֆոտոնների թվից [18]:

Համակարգչային մոդելավորման եղանակով ուսումնասիրվել են նաև 5 ֆվ ժամանակային հապաղումով 0.95 էՎ ֆոտոնների կլանման արդյունքում $\text{SiO}_2/\text{W}/\text{FeSb}_2/\text{W}$ զգայուն տարրում առաջացող ջերմային պրոցեսները [19]: Կլանիչ-տվիչ սահմանին յուրաքանչյուր ֆոտոնի կլանումից հետո առաջանում են ջերմաստիճանի փոփոխման մաքսիմումներ (ΔT_{Amax}), որոնցից ամեն հաջորդը ունի ավելի մեծ արժեք: Ամեն հաջորդ ֆոտոնի համար կլանիչ-տվիչ սահմանին ջերմաստիճանի փոփոխման նվազագույն արժեքը (ΔT_{Amin}) ևս աճում է: Այդ պարամետրերի, ինչպես նաև դրանց տարբերության ($\Delta T_{\text{Amax}} - \Delta T_{\text{Amin}}$)՝ յուրաքանչյուր ֆոտոնի կլանման արդյունքում ստացված ազդանշանի կախվածությունը ֆոտոնի համարից բերված են Նկար 7-ում:



Նկար 7. ΔT_{Amax} , ΔT_{Amin} և $\Delta T_{\text{Amax}} - \Delta T_{\text{Amin}}$ պարամետրերի կախվածությունը կլանված ֆոտոնի համարից 0.005 պվ ժամանակային հապաղման դեպքում [19]:

$\Delta T_{\text{Amax}} - \Delta T_{\text{Amin}}$ պարամետրը արագ հասնում է հագեցման և ունի 10 մԿ-ից բարձր արժեք, որը երկու կարգով բարձր է ֆոնային արժեքից, ուստի $\text{SiO}_2/\text{W}/\text{FeSb}_2/\text{W}$ քառաշերտ զգայուն տարրի կիրառմամբ հնարավոր է գրանցել 5 ֆվ ժամանակային հապաղումով ՋՄՖԴ-ի զգայուն տարրում կլանվող ֆոտոնները, ինչը համարժեք է 2×10^{14} Հգ հաշվարկի արագության:


Բարակ թաղանթներ և բազմաշերտ կառուցվածքներ

Իրականացվել են LaB_6 և SiO_2 բարակ թաղանթների փոշենստեցում էլեկտրոնաճառագայթային եղանակով և հատկությունների ուսումնասիրում: Փոշենստեցումը կատարվել է ՎՈԻ-1Ա սարքի միջոցով 10×10 մմ² մակերեսով Al_2O_3 , ZrO_2 , Si, AlN, W տակդիրների, որոշ թաղանթների, ինչպես նաև $\text{W}/\text{CeB}_6/\text{W}$ բազմաշերտ կառուցվածքների վրա:

Իրականացվել է LaB_6 թաղանթների փոշենստեցում տարբեր պայմաններում [20]: Թաղանթների մակերեսի անհարթությունը (R_a) հետազոտվել է Ambios Technology XP-1 պրոֆիլաչափի միջոցով: ZrO_2 , Al_2O_3 , Si տակդիրների վրա փոշենստեցված թաղանթները ստացվել են բավականին հարթ ($R_a \approx 2$ նմ), իսկ W տակդիրի վրա փոշենստեցված թաղանթները խորդոբորդ են ($R_a \approx 300$ նմ): Թաղանթների տարրային բաղադրության և միկրոկառուցվածքի ուսումնասիրությունը իրականացվել է VEGA TS 5130 MM TESCAN տեսածրող էլեկտրոնային մանրադիտակով, որը համալրված է Oxford INCA Energy 300 ռենտգենյան միկրովերլուծության սարքով: Թաղանթների մակերևույթի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ թաղանթները ունեն բազմաբյուրեղային կառուցվածք և կազմված են միջինում 200 նմ չափի բյուրեղներից: Թաղանթների անդրադարձման գործակիցների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ալիքի երկարությունների 400-800 նմ տիրույթում դրանք ունեն 20%-ից ցածր անդրադարձում, իսկ 1200-1600 նմ տիրույթում անդրադարձումը 50%-ից բարձր է: Այսպիսով՝ այս թաղանթները արդյունավետ չեն լինի հեռահաղորդակցական համակարգերում կիրառվող ՄՖԴ-ում:


Էլեկտրոնաճառագայթային փոշենստեցման եղանակով սինթեզվել են նաև SiO_2 թաղանթներ [21]: Ստացված բոլոր թաղանթներն ունեն հարթ մակերևույթ: Չափվել են թաղանթների հաստությունը, անհարթությունը և անդրադարձման գործակիցը: Թաղանթների անդրադարձման գործակիցը կախված է տակդիրի նյութից և կախված չէ անհարթությունից, քանի որ R_a -ի անգամ առավելագույն արժեքը փոքր է դիտարկված ալիքների երկարությունից: W և LaB_6 -ի վրա փոշենստեցված թաղանթների անդրադարձման գործակիցը մեծ է 50%-ից: Այսպիսով՝ այս նյութերի համար SiO_2 չի հանդիսանում արդյունավետ հակաանդրադարձնող շերտ ԻԿ տիրույթի ճառագայթների համար:

Al_2O_3 և AlN տակդիրների վրա փոշենստեցված թաղանթների անդրադարձման սպեկտրերը 1000-2000 նմ ալիքի երկարությունների համար բերված են նկար 8-ում: Ինչպես երևում է նկարից, ամբողջ տիրույթում թաղանթների անդրադարձման գործակիցը փոքր է 10%-ից: Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ Al_2O_3 , AlN , և SiO_2 -ից կազմված շերտը կարող է փոքրացնել ԻԿ տիրույթի ճառագայթների անդրադարձումը և հանդես գալ որպես հակաանդրադարձնող շերտ:



Նկար 8. SiO_2 թաղանթների անդրադարձման սպեկտրերը. (Al_2O_3 տակդիր՝ 1 – SiO_1a_2 , 2 – SiO_2a_3 , 3 – SiO_3a_3 և AlN տակդիր՝ 4 – SiO_2b_3) [21]:

Սինթեզվել են CeB_6 բարակ թաղանթներ, որոնց ջերմաէլեկտրական հատկությունները չեն զիջում ծավալային նմուշների հատկություններին: Մասնավորապես ստացվել են 9.4 ջերմաստիճանում 120 մկՎ/Կ Ջեյքեյի գործակից ունեցող CeB_6 թաղանթներ: Էլեկտրոնաճառագայթային եղանակով ստացվել են ՋՄՖԴ-ի երկշերտ և քառաշերտ զգայուն տարրի նախատիպեր, որոնք բերված են նկար 9-ում: SiO_2 հակաանդրադարձնող շերտով, W կլանիչով և ջերմատարով, CeB_6 տվիչով զգայուն տարրի նախատիպերը փոշենստեցված են 1 սմ² մակերեսով Al_2O_3 տակդիրների վրա:



Նկար 9. ՋՄՖԴ-ի զգայուն տարրի երկշերտ և քառաշերտ կառուցվածքներ:

Եզրակացություն

Մոդելավորման արդյունքներից կարող ենք եզրակացնել, որ ջերմաէլեկտրական դետեկտորը ունակ է գրանցելու 0.8 – 4 էՎ էներգիայով միակի ֆոտոններ, ապահովելու բարձր արդյունավետություն և գիգահերցերի հասնող հաշվարկի արագություն, ինչպես նաև՝ հաշվելու միաժամանակ կամ ազդանշանի տևողությունից փոքր ժամանակային հապաղումով կլանված ֆոտոնների քանակը: Փոփոխելով զգայուն տարրում կիրառվող նյութերը և շերտերի չափերը՝ կարելի է փոփոխել դետեկտորի աշխատանքային ջերմաստիճանը, կիրառման սպեկտրալ տիրույթը և հիմնական բնութագրերը՝ մթնային հաշվարկ, արագագործություն, արդյունավետություն:

Ամփոփելով ներկայացված արդյունքները՝ կարելի է անել հետևյալ եզրակացությունը: Ստեղծվել է ամուր հիմք՝ նոր սերնդի միաֆոտոն դետեկտորների փորձարարական նմուշների նախագծման և իրականացման համար: Զգայուն տարրի պարզ կառուցվածքը բազմատարր սովիչների ստեղծման նախադրյալ է: Այդպիսի բնութագրերով դետեկտորը պահանջված է գիտության տարբեր ոլորտներում և կարող է ունենալ բազմաթիվ կիրառություններ:

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-1C088 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

Գրականության ցանկ

1. Hadfield R.H., Single-photon Detectors for Optical Quantum Information Applications, *Nature Photonics*, 2009, **3**, 696.
2. Yamashita T., Miki S., Terai H., Recent Progress and Application of Superconducting Nanowire Single-photon Detectors, *IEICE Trans. Electron.*, 2017, **E100-C** (3), 274.
3. Renema J.J., Wang Q., Gaudio R., et al. Position-Dependent Local Detection Efficiency in a Nanowire Superconducting Single-Photon Detector, *Nano Lett.*, 2015, **15** (7), 4541.
4. D. Van Vechten, K. Wood, G. Fritz, et al., Imaging Detectors Based on Anisotropic Thermoelectricity, *Nucl. Instrum. Methods Phys. Res.*, 2000, **444**(1-2), 42.
5. Gulian A., Wood K., VanVechten D., et al. Current Developmental Status of Thermoelectric (QVD) Detectors, *Nucl. Instrum. Methods Phys. Res.*, 2004, **520** (1-3), 36.
6. Kuzanyan A.S., Nikoghosyan V.R., Kuzanyan A.A., CeB₆ Sensor for Thermoelectric Single-Photon Detector, *Sensors & Transducers*, 2015, **191** (8), 57.
7. Kuzanyan A.A., Nikoghosyan V.R., Kuzanyan A.S., Ultra-fast Sensor for Single-photon Detection in a Wide Range of the Electromagnetic Spectrum, *Sensors & Transducers*, 2016, **207** (12), 21.
8. Kuzanyan A.A., Nikoghosyan V.R., Kuzanyan A.S. An Ultra-fast Thermoelectric Sensor for Single-photon Detection in Wide Range of the Electromagnetic Spectrum, *Proc. of SPIE*, 2017, **10229**, 102290P.
9. Zhang W.J., You L.X., Li H., et al., NbN superconducting nanowire single photon detector with efficiency over 90% at 1550 nm wavelength operational at compact cryocooler temperature, *Sci. China-Phys. Mech. Astron.*, 2017, **60**, 120314.
10. Kuzanyan A.S., Kuzanyan A.A., Nikoghosyan V.R. Three-layer detection pixel of single-photon thermoelectric detector based on rare-earth hexaborides, *J. Contemp. Phys.*, 2018, **53**(4), 338.
11. Kuzanyan A.S., Kuzanyan A.A., Gurin V.N., Volkov M.P., Nikoghosyan V.R. High-Efficiency Thermoelectric Single-Photon Detector Based on Lanthanum and Cerium Hexaborides, *Semiconductors*, 2019, **53**(5), 682.
12. Kuzanyan A.A., Kuzanyan A.S., Nikoghosyan V.R. Four-Layer Detection Pixel of Single-Photon Thermoelectric Detector, *J Contemp. Phys.*, 2019, **54**(2), 236.
13. Kuzanyan A.A., Kuzanyan A.S., Nikoghosyan V.R. A high-performance thermoelectric single-photon detector for telecom wavelengths, *Proc. of SPIE*, 2019, **11027**, 110270K.
14. Kuzanyan A.A., Nikoghosyan V.R., Kuzanyan A. S. Modeling and Simulation of Ultrafast and Highly Efficient Single Photon Detection from Infrared to Ultraviolet, *IEEE Sens. J.*, 2020, **20**(6), 3040.
15. Արմեն Կուզանյան, Աստղիկ Կուզանյան, Վահան Նիկողոսյան, «Ջերմաէլեկտրական դետեկտորի բազմաշերտ տվիչ», ՀՀ Արտոնագիր №3230, ՄԱԴ (IPC): G01 J5/00, 2019.06.20.
16. Кузанын А.А. Полупроводниковый сенсор термоэлектрического однофотонного детектора для регистрации излучения ближнего ИК диапазона, *ФТП*, 2021, **55**(4), 336.
17. Kuzanyan A.A., Nikoghosyan V.R., Kuzanyan A.S. Simulation of Heat Propagation Processes Taking Place in the Detection Pixel of TSPD, *IEEE Sens. J.*, 2020, **20**(21), 12776.
18. Kuzanyan A.A., Nikoghosyan V.R., Kuzanyan A.S. More than one photon detection using four--layer thermoelectric singlephoton detector, *Proc. of SPIE*, 2020, **11354**, 1135428.
19. Kuzanyan A.A., Nikoghosyan V.R., Kuzanyan A.S. Counting of photons absorbed simultaneously or with time delay in the detection pixel of thermoelectric single-photon detector. *J. Mod. Opt.*, In press.
20. Kuzanyan A.A., Kuzanyan A.S., Petrosyan S.I., Kuzanyan V.S., Badalyan G.R. Electron Beam Deposition of Lanthanum Hexaboride Films for Usage as Anti-Reflective Coating, *J Contemp.Phys.*, 2020, **55**(2), 164.
21. Kuzanyan A.A., Petrosyan S.I., Kuzanyan A.S., Badalyan G.R. The Use of Silicon Dioxide Films as Anti-Reflective Coating of Thermoelectric Single-Photon Detector, *J Contemp. Phys.*, 2020, **55**(4)365.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ
МЕЖДУНАРОДНЫЙ НАУЧНО-ОБРАЗОВАТЕЛЬНЫЙ ЦЕНТР
INTERNATIONAL SCIENTIFIC-EDUCATIONAL CENTER

«ՀԻՄՆԱՐԱՐ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ.
ԱՐԴԻԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ»
ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

31 մայիսի, 2022

•

«ФУНДАМЕНТАЛЬНЫЕ И ПРИКЛАДНЫЕ НАУЧНЫЕ ИССЛЕДОВАНИЯ:
ТЕКУЩИЕ ПРОБЛЕМЫ И ДОСТИЖЕНИЯ»
СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ
МЕЖДУНАРОДНАЯ КОНФЕРЕНЦИЯ

31 мая, 2022

•

"FUNDAMENTAL AND APPLIED RESEARCH. CURRENT ISSUES AND ACHIEVEMENTS"
COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES
INTERNATIONAL CONFERENCE

31 May, 2022

Թողաթը՝ օֆսեր
Չափսը՝ 60X84/8
Ծավալը՝ 36 պայմ. տպ. մամուլ
Տպագրության եղանակը՝ օֆսեր
Տպաքանակը՝ 150

Տպագրվել է «Տիր» հրատարակչության տպագրատանը
Հասցեն՝ Երևան, Ա. Միկոյան փող., 2/2
Էլ.փոստ՝ tirpublishinghouse@gmail.com
Հեռ. (+374 94) 50 99 00